33
97

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Երուանդ Լալայեանից.

0183 27/ш 29

2010

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

# ԲՆԱՇԽԱՐՀԻԿ

## ԲԱՌԱՐԱՆ



ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ա — Ը

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1902

Публичная Библиотека

31130-4.2

14227-58

# ԱԶԴ

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ մէջ կը նկարագրուին. Ա. — Մեր բոլոր նահանգները, գաւառները, քաղաքները, աւանները, գիւղերը, լեռները, դաշտերը, լճերը, վանքերը, և այլն նշանաւոր և յիշատակաց արժանաւոր տեղուանք: — Բ. – Յատուկ խնամքով ազգային աշխարհագրական պատմութիւնն, ինչպէս նաև հնախօսութիւնն, իրենց բաժինն ունին գործոյս մէջ, և իւրաքանչիւր նահանգաց, գաւառաց և քաղաքաց բերոց վրայ լիովին տեղեկութիւն կը տրուի: — Գ. – Մեր գաղթավայրերն ևս կը մտնեն Բառարանիս մէջ և ըստ կարելւոյն երկրագնդոյս վրայ գտնուող այն ամէն քաղաքներն՝ յորս բնակած և յիշատակ մը թողած է հայութիւնն, և կամ տակաւին կը բնակի: — Դ. – Զանազան ձեռագրաց և շինուածոց յիշատակարանաց մէջ յիշուած աշխարհագրական անուններէն այն ամէնը՝ որ կրնան հետաքրքրական ըլլալ՝ կը ջանանք դուրս չթողուլ: — Ե. – Կը յիշատակենք նաև այն ամէն այլազգաբնակ գիւղերն, յորս կը գտնուին ինչ ինչ յիշատակարանք և բերկորք հայրենի հնութեանց: — Զ. – Նշանաւոր անուանց շատերու տուգարանութիւնն ալ յառաջ կը բերենք, և ոմանց դիմաց ըստ տեղւոյն կը նշանակենք օտար ազգաց անուանակոչութիւնն՝ իրենց յատուկ գրերով: — Է. – Ի սորև այն անուններուն, որոց վրայ աւելի ընդարձակօրէն գրած են ուրիշ ազգային և օտարազգի հեղինակներ, և կամ տուած են օգտակար տեղեկութիւններ առանձին գրքրու կամ թերթերու մէջ, կը նշանակենք համառօտագրութեամբ նոյն գիրքն կամ թերթն և գլուխն կամ էջն:

Բնաշխարհիկ Բառարանի այս երրորդ պրակն հրապարակ հանած ժամանակ, կը փութանք յայտնելու մեր խորին շնորհակալութիւնները այն ամենայն ազգային բանասէրներու, լրագրաց և հանդէսներու յարգելի խմբագիրներուն՝ որոնք բարեյօժար կամօք փութացին թէ առանձին նամակներով խրախուսել զմեզ և թէ տպագրութեամբ գրախօսականներ կամ ազդեր հրատարակել:

Որովհետև շատեր փափաքեցան գիտնալ թէ քանի պրակաց մէջ պիտի ամփոփուի ամբողջ Բառարանս, գիրենք գոհացնելու համար միջին հաշուով մը միայն կրնանք ըսել, թէ կարելի է լինի 10էն 12 քսանթերթեան պրակ:

Ամէն դասակարգի անձանց դիւրամատչելի ընելու համար Բնաշխարհիկ Բառարանը, որոշած ենք շարունակաբար քսանական թերթերէ ձեւացած պրակներով հրատարակել զայն. և փոխանակ ամբողջ գործին բաժնեգինը մէկ անգամով կանխաւ գանձելու, ամէն անգամ երբ նոր պրակի մը հրատարակուիլն իմանան՝ այն ժամանակ թող բարեհաճին բաժանորդք ղրկել նոյն պրակին բաժնեգինը:

Միևնոյն ժամանակ կը փութանք ծանուցանելու Բնաշխարհի սիրով տաչորող ամէն Հայու, թէ քիչ ժամանակի մէջ ունեցանք բազմաթիւ բաժանորդներ, որք օր աւուր բազմանալու վրայ են. ուստի Բնաշխարհիկ Բառարանը ունենալ փափաքողք փութալու են օգուտ քաղել այժմեան բարեյաջող պարագայէն, պրակ պրակ գնելով Բնաշխարհիկ Բառարանը, վասն զի, հակառակ պարագային կարելի է որ սպառին տպագրուած օրինակներն:

Բնաշխարհիկ Բառարանի երրորդ պրակի հետ կը ղրկենք մեր բոլոր բաժանորդներուն և փափաքողաց, նոյն բառարանի առաջին և երկրորդ պրակներու վրայ ազգային թերթերու մէջ հրատարակուած զանազան գրութիւններու հաւաքածոյ մը: Կը փութանք յայտնելու նաև յարգոյ հասարակութեան և ի մասնաւորի գրագիտաց դասուն, որ բառարանիս կատարելութեան

համար հարկաւոր ամենայն միջոց և ջանք մեր կողմանէ անպակաս են, և կը խնդրենք որ իրենք ևս ազնուօրէն ջանան շարունակել մեզ աջակցելու, ղրկելով մեզ արժանաւոր վայրերու լուսանկարներ, անծանօթ տեղերու նկարագրութիւններ, մասնական կամ ընդհանուր վիճակագրական տեղեկութիւններ, և այլն: Առ այս հրապարակաւ կը կրկնենք մեր խորին և կանխիկ շնորհակալութիւնները:

Բնաշխարհիկ Բառարանի տպագրուած օրինակներու մեծագոյն մասն թէև սպառած է, սակայն շատերու խնդրանաց համեմատ, գինը միշտ նոյն կը մնայ. իւրաքանչիւր պրակ կ'արժէ զուտ 3 ֆր. (1,20 րուբլի = 60 սենթ), ճանապարհի ծախքը մեր վրայ: Այն անձանց, որ կարենան մէկ անգամէն տասը օրինակ գնել, մէկ օրինակ նուէր կը ղրկուի:

Այս գիրքը ունենալ փափաքողներ, փութալու են այս տարին չաւարտած, և օրինակները բոլորովին չսպառած, դիմելու մեր հետեւեալ հասցէին.

Direction de l'Imprimerie Arménienne St. LAZARE - VENISE (ITALIE)

# ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԹԵՐԹԵՐԸ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ ՎՐԱՅ

Վենետիկ... անուն մը որ նոյնքան քաղցր ու անուշ կը հնչէ մեր ականջներուն, որքան Բնաշխարհին նուիրական ու յիշատակելի վայր մը: Ինչո՞ւ այսչափ կապուած Հայ սրտին հետ: Հոն ոչ Հայկ ազատութեան առաջին մարտը մղեց. ոչ Տիգրան մը կամ Լեւոն մը բազմեց, և ոչ ալ Վարդան մ'ինկաւ: Սակայն հոն ծնաւ Հայութեան ներկան: Դար մը առաջ երբ Մխիթար Սեբաստացի իր ոտքը Վենետիկ կոխեց, այն օր Հայկական վերածնութեան սկիզբը դրուեցաւ:

Հայ տպագրութիւնը եթէ Ս. Ղազարի մէջ չը ծնաւ, սակայն հոն կեանք ունեցաւ:

Դար մ'առաջ մտէք Հայաստան ու Հայ գաղութիւն փնտռեցէք հո՛ն՝ Ոսկեղինի դարէն հետըզհետէ ծլած ու ծաղկած մատենագիրները փոշիներու մէջ կը փտէին, իսկ հայ միտքը որ ընդունակ էր վերածնութեան, թանձր քօղին ետեւ ծածկուած կը մնար: Վերածնութեան այդ հսկայ գործին առաջին քայլը Վենետիկ առաւ:

Ոմանք կանգ առնելով Վենետիկի գրական բուրաստանին առաջ, Զամչեան, Ինճիճեան, Հիւրմիւզ, Բագրատունի, Ալիշան հսկայ անուններէն վերջ Վենետիկի ներկան ողբալի կացութեան մէջ կը գտնեն:...

Վենետիկ ալ նշանակելի երկ մը չի արտադրեր, ահա, այն խուլ գանգատը որ վերջերս շարունակ կուղղուէր Ս. Ղազարի բազմօգուտ տպարանի հասցէին.

Ու այս խոկմանց մէջ սեղանիս վրայ գտայ «Բնաշխարհիկ Բառարան»ը (Ա. պրակ). Ս. Ղազարի էն վերջին հրատարակութիւնը:

«Բառարան» Բանաստեղծներ չեն պատրաստեր: Խուլ գրասենեակի, առանձնութեան, յարատեւ և մեղուաջան աշխատասիրութեան արդիւնք է բառարան, զի նա կը կազմուի ճշգրիտ իրականութիւններէ: Բնաշխարհիկ Բառարանը արժանի է ամեն գնահատութեան, որուն հեղինակը քրտնաջան աշխատութեան հետ, ցոյց կուտայ և հաւաքողի սուր ընդունակութիւն:

Նախ հեղինակն թող խօսի՝ «Ո՛րչափ տխուր, ո՛րչափ և ողբալի մեր բնաշխարհի ներկայ վիճակը, այնքան սիրելի, այնքան և ցանկալի իւր տարակաց որդեկաց համար իրենց հարց և նախնեաց անմահ յիշատակներն, զորս ներկայ բառարանիս մէջ փափաքեցանք և ջանացինք ի մի ամփոփել:...

Եթէ մեր ջանից ու փափաքանաց և հառաչակաց զգացման համապատասխան երկ մը վկայուի առաջիկայ ծանր աշխատութիւնս ի Բանասիրաց՝ մենք զմեզ երջանիկ պիտի համարինք»:

Ուրեմն հեղինակին ջանքն է «Բառգրքի» մը մէջ հաւաքել Հայրենի աշխարհին նահանգն ու գաւառ, քաղաքն ու աւան, շէն ու գիւղ, լեռ, դաշտ, գետ, վանք, ու վերջապէս բնաշխարհին ամէն անկիւն պիտի խօսի հոն, պատմական յիշատակներով համեմած:

Ներկայ պրակը որ կը վերջանայ ծովային Կիլիկիոյ Անամուռ գաւառով՝ (ի հնումն հռչակաւոր հրուանդան և մեծ ու շէն քաղաք), կատարեալ յաջողութիւն կը խոստանայ այս կարեւոր ձեռնարկին:

Հեղինակ իր այս աշխատութիւն կատարելու համար ձեռքի տակ ունեցած է Բնաշխարհի մասին հրատարակուած թէ հայերէն և թէ եւրոպական լեզուներով գրեթէ բոլոր հրատարակութիւնները ու անոնցմէ խնամով օգտուել ու դասաւորել գիտցած է:...

Բնաշխարհիկ Բառարանի Ա. Պրակ կը բաղկանայ 20 տպագրական թերթերէ. լաւ թուղթի վրայ, և մաքուր տպագրութեամբ:

Ամէն անոնք որոնք կը հետաքրքրուին բնաշխարհով, ու կուզեն իրենց չգիտցած անուններու մասին տեղեկութիւններ ստանալ «Բնաշխարհիկ Բառարան» ունենալու են:

ՋԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ, 1900 Թ. 22:

* * *

Պատկերազարդ Բնաշխարհիկ Բառարանի երկրորդ պրակը հեւ ի հեւ թղթատելէ ետքը սքանչացած մնացի: Ճիշտն ըսելով, առաջին պրակը տեսած չեմ, բայց ներկայս թէ՛ առաջնոյն և թէ՛ յետիններուն վրայ կարող է նպաստաւոր գաղափար տալ մեզի:

Վենետկոյ Մխիթարեան Վեր. Հարք իրենց այն ստուար գործերով յաջողեցան մեզի ապացուցանելու որ իրենք ալ՝ եւրոպական տպարանատէրներու պէս՝ կրնան, համեստ գումարի մը փոխարէն, ազգը հարստացնել թէ՛ պարունակութեամբ, թէ՛ թղթոյն ազնուութեամբ և թէ՛ պատկերներուն գեղեցկութեամբ ճոխ հրատարակութիւններով:

Այս երկրորդ պրակը, որ 160 երկսիւն էջերէ կը բաղկանայ, Անանուռ բառին շարունակութեամբ կ՚սկսի և Արտաշատի վրայ տեղեկութիւնները չ՚վերջացուցած կը վերջանայ: Այդ 160 էջերուն իւրաքանչիւր պարբերութիւնը, և նոյն իսկ իւրաքանչիւր բառը մէկ մէկ նորութիւն կամ մէյ մէկ վերյուշում կը ներկայացնէ Հայկական սրտերու: Մանաւանդ գաւառացիք, անոնք որ երկայն տարիներէ ի վեր պանդխտած են օտար աշխարհ, յուզեալ սրտով և արտօսրակաթ աչքերով պիտի կարդան իրենց մանկական զբօսավայրերու նկարագրութիւնը, աչքերուն առջև տեսնելով այն վայրերէն շատերուն պատկերները: Այսօր ալեզարդ ծնողներ՝ իրենց սենեկէն առանց դուրս ելլելու՝ պիտի կրնան վերստին այցելել այն ուխտատեղիները, ուր կը վազէին պաշտելի միամտութեամբ և հաւատացեալի արտաքուղխ ջերմեռանդութեամբ կեանքի այլեայլ պարագաներու մէջ: Երիտասարդներն ալ, այն աւերակաց կոյտերուն մէջ՝ զոր յստակօրէն պատկերացած պիտի գտնեն այն պրակին մէջ, թերևս պիտի կրնան որոշել և ճանչնալ ծառի կոճղ մը, կիսաւեր կամար մը, հայկական ամրոցի մաս մը, ժայռ մը, որ իրենց սիրտերը պիտի թրթռացնէ անմոռանալի անցեալի մը յուշով:

Պրակիս մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի են Անի քաղաքին և աւերակաց վրայ հմտալից տեղեկութիւնք, որոնք 30 էջ գրաւած են 30 պատկերներով:

**Աշտարակ**, **Անկիւրիա** (Էնգարէ), **Աստրախան**, **Արմաւիր** լափուելիք գրութիւններ են: Անգղիոյ և Հայոց մէջ եղած յարաբերութիւնք ալ իրենց շահեկանութիւնն ունին:

Անկարելի է պրակիս պարունակութեան վրայ մանրամասն տեղեկացնել ընթերցողը, կը բաւականանամ միայն յայտնելով այն կարծիքը, թէ գործոյս ամբողջութիւնով ամբողջ մեր հայրենիքը պիտի ունենանք մեր յարկին տակ:

ԱՐՇԱԼՈՅՍ, 1900 Թ. 128:

* * *

Բազմավէպ սկսած է նաև հրատարակել Բնաշխարհիկ Բառարան խորագրին տակ սքանչելի աշխատասիրութիւն մը զոր կը սարքէ Հ. Սուքիաս Էփրիկեան: Անունէն կրնան գուշակել «Բիւրակն»ի ընթերցողները թէ ինչ է այս բառարանին նիւթն ու նպատակը: Հանդիսարանի Հոկտ. համարի մէջ կը խօսի Ամասիոյ վրայ, բազմակողմանի ծանօթութիւններով ի վեր կը հանէ պատմական, աշխարհագրական, տեղագրական, նկարագրական, երկրագործական, արուեստական և վաճառականական կարևորութիւնը, վիճակագրական տախտակներով:

ԲԻՒՐԱԿՆ, 1898 Թ. 37:

* * *

Un savant Mékhitariste, le P. S. Epriguian, vient de publier, à Venise, le premier volume d'un magnifique ouvrage, intitulé «Dictionnaire illustré de la mère-patrie». D'un prix modique de 3 fr, ce beau livre mérite d'être lu par tout Arménien, comme par tout étranger qui s'intéresse à la géographie, à l'histoire, à l'archéologie et à l'art arméniens.

L'ARMÉNIE, 1890 N°. 137.

* * *

Առջևնիս ունինք այս կարևոր բառարանի առաջին քառաթերթեան պրակն, որ կը հասնի մինչև ԱՆԱՄՈՌ անունը, զարդարուած ընտիր պատկերներով և այլազան արձանագրութեամբք. գործ մը՝ որուն նմանը չէր տեսնուած դեռ մեր մէջ, ի բաց առնելով Մխիթար աբբահօր և Ն. Ճիվանեանի Յատուկ անուանց բառարաններն, որոնք, — պէտք է խոստովանիլ, — որքան ալ առաջնութեան պատիւը վայլեն՝ չեն կրնար հաւասարիլ Վեր. Հ. Էփրիկեանի երկասիրութեան: Գործին այսքան կարևորութիւն ստանալուն գաղտնիքն հոն է որ՝ Վեր. Հեղինակը կրցած է օգտուիլ ազգային և օտար ամէն կարգի հրատարակութիւններէն:... Վերջապէս գործ մը՝ զոր կրնանք յանձնարարել ամէն կարգի կարդացողներու, յայտնելով նաև թէ մեզի չափ գոհ պիտի մնան նաև ամէնքն ալ:

ԲԱՆԱՍԷՐ, 1899 էջ 345

* * *

Հայաստանի աշխարհագրական բառարանի այս երկրորդ պրակն ալ հրատարակուած է որ կը բաղկանայ 161–320 երեսներէն և կը հասնի մինչև «Աշտիշատ». զարդարուած է 91 պատկերներով: Այս պրակի մէջ կը գտնուին վիճակագրական, կրթական և այլ ընդարձակ տեղեկութիւններ Ատրպատականի, Անիի (բազմաթիւ պատկերներով), Ատանայի, Արաբկիրի, Արճէշի, Արղընի Մադէնի, Անկիւրիայի, Աշտիշատի, Անգղիայի-Լոնտոնի և Մանչեսթըրի հայ գաղութները—Աստրախանի և այլ բազմաթիւ քաղաքնե-

րի վրայ որոնք կամ մեր հայրենի երկրին կը վերաբերին և կամ հայ գաղթականներ կը բնակին կամ բնակած են այն տեղեր։

Աւելորդ է ըսել որ այս կարեւոր և հսկայ աշխատութիւն–արդիւնք մանրազնին և երկար խուզարկութիւնների և ուսումնասիրութիւններ — շատ հետաքրքրական ու շահեկան է ամէն Հայի համար, ինչպէս և ամէն անոնց համար որոնք Հայերի և Հայաստանի մասին կը հետաքրքրուին։

ԱՐՄԷՆԻԱ, ԺԶ. Թ. 5։

∴

Հ. Եփրիկեանի այս աշխատութիւնը արժանի է առանձին ուշադրութեան։ «Բնաշխարհիկ Բառարան»—դա աշխարհագրական անունների մի հարուստ ժողովածու է։ Մինչեւ այժմ հրատարակվել են այդ գործի առաջին եւ երկրորդ հատորները, որոնք միասին կազմում են 320 մեծադիր, երկու սիւնակից բաղկացած երեսներ։ Այդ հատորների մէջ դեռ չէ վերջացել Ա. տառը. այս հանգամանքը արդէն ցոյց է տալիս, թէ որքան ստուար ու պատկառելի պիտի լինի ամբողջ աշխատութիւնը։ Մի աշխատութիւն, որ յիշեցնում է Վենետիկի այն ժամանակները, երբ ակադեմիական հաստատուն հրատարակութիւններ էին լոյս տեսնում։

«Բնաշխարհիկ Բառարան» ասելով չը պէտք է հասկանալ այն տեղերի բառարանը, որոնք Հայաստանում են գտնվում։ Ոչ. բառարանի մէջ մտնում են եւ այն բոլոր տեղերը, ուր հայը ոտք է դրել իր դարաւոր թափառումների ժամանակ։ Այսպէս, դուք այս բառարանում գտնում էք եւ «Անգլիա» բառը։ Այդտեղ Մեծ Բրիտանիայի մանրամասն կամ համառօտ տեղագրութիւնը չէք գտնում դուք, այլ տեղեկութիւններ այն մասին, թէ հայերը Անգլիայում երբ են եղել, ինչ վաճառականութիւն էին անում, ինչ անուններ են թողել եւ այլն։ — Ահա թէ որքան լայն ծրագիր է վերցրել Հ. Եփրիկեան։

Գալով հայաբնակ տեղերի նկարագրութեան, մենք այստեղ տեսնում ենք նոյն իսկ աննշան գիւղերի անուններ, ի հարկէ, այն անունները, որոնք կարող էին յայտնի լինել Վենետիկում նստած հայ վարդապետին։ Հինն ու նորը, աւերակ ու կանգուն վանքը, մի խօսքով այն ամենը, ինչ աշխարհագրական տեղ է ներկայացնում եւ թողել է անուն, մտել է «Բնաշխարհիկ Բառարանի» մէջ։ Ինչ կասկած, որ բոլոր տեղերի մասին Հ. Եփրիկեանը չունի լիակատար տեղեկութիւններ։ Այդպիսի բան չէ էլ կարելի պահանջել։ Ուստի եւ անխուսափելի է պատահել Բառարանի մէջ այսպիսի բացատրութիւններ։ «Աբնիս–գիւղ. Ախալքալաքի, 18 տուն բնակչօք»։ «Ադ–Դաշ–գիւղ Ճակատք (Այրարատ) գաւառի մէջ»։ Բայց դրա փոխարէն այն տեղերը, որոնք յայտնի են, ունեն հարուստ տեղեկութիւններ, նկարագրված են շատ մանրամասն կերպով, որքան այդ հնարաւոր է մի բառարանում։ Այսպէս, Անին գրաւում է 30 երես, Ախալցխան – 8 երես, Ախալքալաքը — 6 երես, Ալէքսանդրօպօլը — 6 երես։ Նկարագրութիւնների մէջ չէ մոռացված անցեալը. իսկ ներկան շատ տեղերում լուսաբանված է նաեւ վիճակագրական տեղեկութիւններով։ Այս վերջին տեղեկութիւնները առատ են մանաւանդ ռուսաց Հայաստանում գտնվող տեղերի նկարագրութեան մէջ. հեղինակը ձեռքի տակ ունեցել է Ռուսաստանում լոյս տեսած պաշտօնական վիճակագրութիւնները։

Բառարանի մի մեծ առաւելութիւնն էլ այն է, որ նա պատկերազարդ է։ Պատկերների կողմից Հ. Եփրիկեանը շատ նպաստաւոր պայմանների մէջ է գտնվում. Ս. Ղազարի միաբանները վաղուց են սկսել պատկերազարդ տեղագրութիւններ տալ. բաւական է յիշել Հ. Ալիշանի «Այրարատ», «Սիսուան», «Սիսական», «Շիրակ» պատկերազարդ գործերը։ Ուրեմն բաւականաչափ պատրաստ պատկերներ կան Հ. Եփրիկեանի տրամադրութեան տակ։ Եւ Բառարանի պատկերները մեծ մասամբ հին են, արդէն մի քանի անգամ տպված։

Այժմ խօսենք այս գեղեցիկ գործի պակասութիւնների մասին։ Առաջին պակասութիւնն այն է, որ, ինչպէս իմանում ենք մեզ գրած նամակից, Բառարանը տպվում է միայն 500 օրինակ եւ այդ քանակութեան կէսը արդէն վաճառված է, այնպէս որ գիրքը շուտով պիտի սպառվի։ Երկրորդ պակասութիւնն այն է, որ Բառարանը մաս–մաս նախ տպագրվում է Բազմավէպում» եւ ապա արտատպվում։ «Բազմավէպը» փոքրիկ ամսագիր է եւ չէ կարող մեծ կտորներ տպել։ Մայիսի համարում տպված է բառարանից միայն 5 երես եւ դեռ Գ. տառը չէ վերջացել։ Այս հաշւով քանի՞ տարի պիտի ձգձգվի բառարանի ամբողջ տպագրութիւնը։ Ցանկալի կը լինէր, որ Ս. Ղազարի վանքը վերացնէր այս մեծ անյարմարութիւնը։

Հ. Եփրիկեանը իր այս գեղեցիկ եւ պատուաբեր գործը գլուխ հանելու համար կարօտ է մեր հասարակութեան աջակցութեան։ Թող չը կարծեն թէ դրամական օգնութիւն հասցնելու հրաւէր ենք կարդում։ Ս. Ղազարի վանքը, ունենալով շատ հաստատ եկամուտներ, շարունակում է իր հրատարակչական գործունէութիւնը առանց լալկան մուրացկանութեան դիմելու։ Ներկայ դէպքում պահանջվում է բարոյական աջակցութիւն։ Ահա ինչպէս։

Թիւրքաց եւ Ռուսաց Հայաստանում կան շատ տեղեր, որոնց նկարագրութիւնները հրատարակված չեն, բայց որոնք պէտք է մտնեն Բառարանների մէջ։ Ուստի Հ. Եփրիկեան մի շրջաբերական նամակով դիմում է բոլոր գրասէր հայերին, որ նրանք օգնեն իրան։...

«Բնաշխարհիկ Բառարանի» պէս բովանդակութեամբ եւ արտաքինով գեղեցիկ մի գիրքը կարող է պատուաւոր տեղ բռնել իւրաքանչիւր, նոյն իսկ խստապահանջ հայի սեղանի վրայ։ Խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այդ գիրքը, մանաւանդ որ գինն էլ շատ մատչելի է. ամէն մի հատոր արժէ 1 րուբլի 20 կոպէկ։ Կարելի է ձեռք բերել եւ Թիֆլիսի գրավաճառանոցներում։

Լ.

ՄՇԱԿ, 1091 Թ. 111։

# ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
# ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

## Ա

ԱԲԱՆԴ. — *Գաւառ Սիւնեաց աշխարհի, Աղահէճք, Ծղուկ և Բաղք գաւառաց մէջտեղ։ Տես* ՀԱԲԱՆԴ։

ԱԲԱՍ. — *Գիւղ 20 տուն բնակչօք, Այրարատայ Բագրեւանդ գաւառի Խալի–Եազի վիճակի մէջ, Շեխան գետի աջ կողմը։*

ԱԲԱՍԱՁՈՐ. — *Ձորահովիտ Այրարատայ Նիգ գաւառի Բջնոյ վիճակի մէջ. համանուն գիւղ մը կը յիշուի յարձանս Հաղարծնոյ, զոր Վրաց Գորգի թագաւորն նուիրած է նոյն վանուց։ Կիրակոս պատմիչն ալ նոյնը կը հաստատէ ըսելով, թէ «... եւ (Գորգի Վրաց թագաւորն) եկեղեցւոյն, ձեռնագրաւ իւրով զերկու գիւղսն՝ զԱբասաձոր և զՏանձուտն». կը յաւելու ի վերջ նոյն գլխուն, թէ կար և բով մի յԱբասաձոր։ Այդ բովը առատ պղինձ պարունակելուն համար, ժամանակ անցնելէ վերջ ձորահովիտը կոչուեր է Պղնձահանքի ձոր, և այժմ կը կոչուի Միսխանեայի ձոր։ Այս հովտէն վազող Զանգի (Հրազդան) գետի մէկ ճիւղն՝ հաւանական է որ ի հնումն կը կոչուէր Աբասաձորի ջուր ու յետոյ փոխուած Պղնձահանքի ջուր, և այժմ Միսխանեայի ջուր։ Այս ձորի մօտ է Արտաւազդայ Ապարանք կոչուած վանքը։ Տես ի կարգին։ Տեղւոյս բովէն շատ ժամանակէ ի վեր պղնձահանութիւնը դադարեր է, այժմ սկսած են նոյն տեղերէն մարմար քար հանել։ Ոմանք սխալմամբ Աբասաձորը կը դնեն յԱրցախ։ — Կիր. պատմ.* ԺԲ։ *Հ. Հայ. 343։ Հնախ. Հայ. հատ. Ա. 182։ Սմբատեան. Գեղարքունի, 184, 346, 364։*

ԱԲԱՍԱՇԷՆ. — *Սիւնեաց Վայոց ձոր գաւառի Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցւոյ՝ 1296ին գրուած արձանագրութեան մը մէջ յիշուի անունս։ — Սիսական, 196։*

ԱԲԱՍ ԹՈՒՄԱՆ. *Տես* ԱՊԱՍ ԹՈՒՄԱՆ

ԱԲԱՍ–ԿԷՕԼ *կամ* ԱՊԱՍ–ԿԷՕԼ. — *Լճակ Այրարատայ Ծակատք գաւառի մէջ, որոյ մօտ կայ համանուն հայաբնակ գիւղ մը, որոյ բնակիչք են 44 տուն Հայ և 4 տուն Թուրք։ Հայք ունին Ս. Սարգիս եկեղեցի մը։ Լճակի ջուրն կը գործածեն դաշտերը ոռոգելու։ Գիւղիս հարաւային և հիւսիսային կողմերն կառուցած են Ռուսաց պահակատուներ։ Ասոր ճամբուն վրայ գտնուած է (1859) ընտիր ածխահանք, շնորհիւ Մկրտիչ Պէյի Ռէյիզեան։ — Այրարատ, 110։ Այրտ. Ամսագիր. 1870, էջ 273։ Հայկունի. Բագրեւանդ, 365։*

ԱԲԴԸԼԱ–ՍԱՐ *կամ* ԱՊՏԻԼ–ԱՍԱՐ. — *Հրաբղխային լեռ Սիւնեաց Գեղաքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հարաւային կողմը. բարձր 8753'։ Լեռս այսպէս կոչուած է նահատակի մ'անուամբ, որոյ գերեզմանը կը գտնուի վրան և ուխտատեղի է։ — Սիսական, 26։ Տիգրանեան Գ. 340։*

ԱԲԵԼԵԱՆՔ, ԱԲԵՂԵԱՆՔ *կամ* ԱԲԵՂԷՆՔ. — *Արշակունեաց ժամանակ նախարարութիւն և գաւառ մ'էր Այրարատայ, այժմեան Սուրբին Բասենի արեւելեան մասին մէջ։ Ի գիրս նախնեաց դժուար է գտնել ասոր անուամբ քաղաք ինչ կամ գիւղ, և հազիւ երբեք յիշուած է գաւառն։ Վաղարշակ Արշակունին, ըստ պատմելոյ Խորենացւոյ, կը կարգէ «զԳարեգին ոմն ի վերայ կուսից և զԱբեղ Սպասարար և Գահաւոր, և շէնս պարգեւէ նոցա, յորոց անուն և կոչին ասպէս նախարարութիւնքն Աբեղէն և Գաբեղէն». ասկէ կը յայտնուի թէ գաւառս իր անունն առած է համանուն նախարարութեան Աբել նահապետի անունէն։ Աբեղէնք սահմանակից լինելով Գաբեղենից և միեւնոյն ժամանակի մէջ ձեւացած, գրեթէ շատ անգամ միասին կը յիշուին ի պատմութեան. բայց նախարարական տոհմիս անունն՝ Զ. դարէն ետեւ չի յիշուիր, մինչդեռ Գաբեղեանք կը տեւեն մինչեւ Թ-րդ դար։ Ս. Սահակայ Գահնամակի մէջ կրկին իշխանք կամ գահակալք կը յիշուին, անգամ մը՝ ԽԵ. Աբեղենից տէր, ապա ԼԶ. Այլ Աբեղեանն, կը յիշուին նաեւ Մեծին Ներսէսի Գահնամակի մէջ՝ ՁԵ, Աբեղուենք։ Աշխարհագումար բանակի մէջ Գաբեղենից և Հաւնունեաց նման՝ 300 էր նաեւ Աբեղենից զօրաբաժինը։ Բ դարու սկիզբը Աբեղ անուն նահապետ մը կը յիշուի այս տոհմի, «այր շոյտ և շղոմարար և սուտակապաս»։ Քաջին Վարդանայ ժամանակ Աբեղենից Տէր էր Գադրիկ։ Դար մը վերջը Ներսէս Բ' ժամանակ, Դուինայ ժողովքի մէջ վերջին անգամ մ'ալ կը յիշուի տոհմիս իշխան Գրիգոր Աբեղեան։ — Սուրբին Բասենի այս արեւելեան մասը՝ արեւմտեանէն աւելի ընդարձակ է, և կը սահմանուի հիւսիս-արեւելեան կողմէն Սողանլու լեռներով, և անոնց շարունակութեամբ Գասպաք բէփէ, Գափլու դաղ, և այլ լեռներով կը բաժնուի Վանանդ և Գաբեղէնք գաւառներէն. հարաւային կողմը կ'ինկնայ Հաւնունիք և արեւմտակողմը՝ Սուրբին Բասեն։ Գաւառիս մէջէն կ'անցնի Երասխը, յորում կը թափին շատ մը վտակներ, որոնց անունները չեն յիշուիր բաց ի մէկ քանիէն։ Երկիրը թէեւ փոքր բարձրութիւններով քիչ մը ալեձեւ է, բայց կրնայ աւելի դաշտային համարուիլ, վասն զի չունի նշանաւոր բարձր լեռներ։ Գլխաւոր տեղն է Մժնկերտ հին բերդաւանը, որոյ նկարագիրը, ինչպէս նաեւ գաւառիս զանազան գիւղերը կը դրուին իրենց կարգին։ — Խոր. պատմ. Բ. Է. Կ։ Խոր. աշխ. 610։ Ղազար փարպ. 126, 167։ Ստ. Հն. Հայ. հտ. Բ. 154։ Այրարատ 37–44։*

ԱԲԵՂՆԵՐ. — *Լեռ Վասպուրականի Անձեւացեաց գաւառի մէջ, Հոգւոց վանքի մօտ։ 1648ին մեծ վնասներ տուող երկրաշարժով խորտակեցաւ, երբ մարդք տակը մնացին, դիմացը գտնուած ձորէն վազող և զանազան ջրաղացներ դարձընող գետոյն ընթացքն ալ խափանուեցաւ. — Ջամչեան Պամ. հտ. Գ. 627։ Նոր Հայ, 157։*

ԱԲԵՂՈՒՆԻՔ. *Տես* ԱԲԵԼԵԱՆՔ։

ԱԲԼԱՀ. — *Գիւղ Արցախի Ջրաբերդ (հն. Մեծկուանք) գաւառի, Գետաշէնի հիւսիսային կողմը, ձորի մէջ։ Բնակչութիւն է 200, որոնց մէկ մասը գաղթած էՀաթերքէ և ուրիշ տեղերէ։ Երկիրն ջրարբի նարգինաւէտ, օդն բարեխառն, ջուրն քաղցրահամ։ Ունի հայակաց եկեղեցի մը Ս. Մինաս, կառուցուած 6 սիւներու վրայ. երկայնութիւնն 18 մեթր 85 սանթիմ., լայնութիւն 10 մեթր 30 սանթիմ.։ Եկեղեցիս անկիւնի վրայ գրուած երեք գրչագիր աւետարան. առաջինը գրուած է Հայոց ՋԺԲ (= 146[illegible]) թուին, Վան քաղաքի մէջ. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Վարդան զօրավարին։ Եպիսկոպոս մը գնելով այս՝ Պօղոսի անուանով մէկէն, նուիրած Էջմիածնի. թէ ինչպէս հոս բերուեր է չգիտցուիր։ Երկրորդն ունի անհաւատալի թուական մը ՐՃՁԴ (= 834). Մարկոսի աւետարանէն վերջ կայ ապականեալ լեզուով պատմական յիշատակարան մը, կը յիշուին Կինեփանոց ձորեր և սարեր։ Երրորդին գրութեան ժամանակն անյայտ է։ — Ս. Քինանէս ուխտատեղի մ'է գիւղիս հիւսիսակողմը՝ բարձր սարի վրայ, ուր կայ խաչարձան մը, և մօտը՝ հացի և մեծամեծ կաղնի ծառ։ Հին ժամանակ խաչարձանի վրայ կայ եղեր մատուռ, որ վաղուց փլած է։ — Արցախ, 267–9։*

ԱԲԿԱՎԱՆՔ. — *Յիշուի Սիւնեաց Արեւիք գաւառի մէջ։*

ԱՐՆԱԳԵՂ. *Տես* ԱՓՆԱԳԵՂ։

ԱՐՆԻԱ. — *Գիւղ Ախալքալաքի, 18 տուն բնակչօք։*

ԱԲՐԱՀԱՄՈՒ ՎԱՆՔ (Ս.) *կամ* Ս. ԱԲՐԱՀԱՄՈՒՆՔ. — *Վաստուրականի (Երուանդունիք) Հայոց ձորի գաւառի մէջ, Վանայ լճի արեւելեան կողմը, Խէքուց վանքէն երկու ժամ հեռու դէպ ի հիւսիս կ'իյնայ, Դեւանգեանց աշակերտի Աբրահամու խոստովանողի անապատ։ Յայսմաւուրաց մէջ գեկտ. 20ին կը յիշուի հետեւեալը. «Գնացեալ (Ս. Աբրահամ) գաղարեաց ի գաւառն Հայոց ձոր». և վերջը, «Թաղեցին զմարմին Աբրահամու յիւրում անապատին. և կոչի տեղին՝ Սուրբ Աբրահամուշէնք, մինչեւ ցայսօր ժամանակի»։ Աբրահամ խոստովանողի վրայ կը ճառէ նաեւ ադուն Եղիշէ։ Աբրահամ մենակեցիս մեռնելէն ետքը՝ այս կողմի բարեպաշտ քրիստոնեայք միաբան տատ յանուն Ս. Աստուածածնի փոքրիկ մենաստան մը կը շինեն, որոյ հիւսիսակողմը՝ տաճարի կից՝ կ'ամփոփեն երանելոյն նշխարներն և վրան մատուռիկ մը կը կառուցանեն։ Վանքն այժմ աւերակ է և կիսակործան տեսուր գրից մէջ, արձանագրութիւն ամենեւին չունի. տարին անգամ մը Համբարձման տօնին կը թափին հոս բազմաթիւ ուխտաւորք, նոյն օրը կու գայ նաեւ Խէքուց վանքի վանահայրը և կը պատարագէ։ — Տեղագրութիւն 280։ Պոտ. Նոր Հայ. 53։ Միրախորեան, Նկար. ուղեւորութիւն, մասն Ա. 164–7։*

ԱԲՐԱՀԱՄԵԱՆՔ. — *Արշակ Թագաւորի և որդւոյն մեծին Ներսէսի ժամանակ տոհմի մը անուն էր. 100 հոգւով մասնակցեցան աշխարհագումար՝ բանակին։*

ԱԲՈՒԼ Լ. *և* Գղ. *Տես* ԱՊՈՒԼ։

ԱԲՈՒՍԵԹ. — *Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի Խալի–Եազի վիճակի մէջ, Շեխեան գետի հարաւային եզերաց մօտ. բաղկացած 10ի չափ քրդաց տներէ։ Գիւղս ունի շատ ազգային հնութիւններ և գերեզմանաքարեր, որոց արձանագրութիւնք մաշած են։ Գիւղացի քուրդ մը տանը հիմերը փորելով գտած է շատ հարստութիւն, ուրիշներ ալ նոյն օրինակին հետեւելով գտած են փոխանակ ոսկի՝ գերեզմանաքարեր, խաչարձաններ, կաւէ անօթներ. վերջին տարիներս գտած են նաեւ 3 հատ հին զանգակներ անընթեռնլի արձանագրութեամբք։ Նշանաւոր է դէպ ի արեւմտեան հարաւ բարձրացած քարալերան մը վրայ կառուցուած հին ամրոցն, որ ունի արտաքին և ներքին կրկին պարիսպներ. արտաքնոյն մեծ մասը փլած և պատած է բլրոյն հիւսիսային երեսը։ Բերդս թէեւ մեծաւ մասամբ կործանուած է, բայց դեռ կը նշմարուին իւր ընդարձակ մթերանոցներն, նետ արձակելու պատուհաններ, որթատաշ քարերէ գրանց և պատուհանաց եզերքներ, ջրամբարներ, և այլն։ — Հայկունի, Բագրեւանդ, 85–9։*

ԱԳ–ԱՀՄԷՏ. — *Այս անուամբ երկու թրքաբնակ գիւղ ունի Այրարատ. մին Ճակատք գաւառի Սուրմառի վիճակին մէջ. միւսն Շարուրայ մէջ։*

ԱԳ–ԱՊԱՏ. — *Վիճակ Իզմիտի նահանգին Գանտէրէ գաւառի մէջ։ Բն. 6, 288, յորոց Հայք 900, և ունին 1 դպրոց 45 աշակերտօք։*

ԱԳԱՐԱԿ. — *Անուն բազմաթիւ գիւղից մեր աշխարհի զանազան գաւառաց մէջ։*

*Այրարատ նահանգն ունի չորս հատ։ — Առաջինն կը կոչուի նաեւ Ագրակ և Էգրէկ, և կ'իյնայ Շիրակայ մէջ, Տեկոռէն կէս ժամ հեռու դէպ ի արեւմուտք։ Ունի չափաւոր մեծութեամբ խաչաձեւ և գմբեթաւոր եկեղեցի մը, որոյ կից է հիւսիսային կողմէն ուրիշ քառակուսի եկեղեցի մը, երկայն 15 մեթր և լայն $5\frac{1}{2}$. երկրորդ եկեղեցւոյս բաց ի պատերէն ամենայն ինչ կործանուած է։ Գմբեթաւոր և կանգուն (թիւ 1) եկեղեցւոյ վրայ կայ արձանագրութիւն* ՆԾԵ *(= 1006) թուականաւ, բայց հիմնարկութիւնն կը թուի դեռ աւելի հին։ — Երկրորդն՝ Ճակատք գաւառի Կողբ վիճակի մէջ, համանուն գետակի ձախ կողմը. այժմ թրքաբնակ է. կ'ենթադրուի որ ի հնումն մեծ շէն մը եղած ըլլայ։ — Երրորդն է, Արագածոտն գաւառի Անբերդ վիճակի մէջ. բնակիչքն թուրք են, ունին ընդարձակ անդաստաններ։ — Չորրորդն, Մազազ (Գառնի) գաւառին մէջ, որ ըստ Սիմոն կաթողիկոսի՝ Այրի Վանաց կալուածներէն մին էր։ — Տեղագրութիւն 214։ Այրարատ 112, 119, 158, 334, 349։*

*— Սիւնեաց մէջ վեց հատ. մին՝ յԱրեւիք,*

կործանմանի հիւսիսային և փարախ լերան հարաւակողմը․ մօտերը կը գտնուի կապարահանք։ Միւսներն են Բաղք, Ճահուկ, Խոզ, Հարանդ և Վայոց ձոր գաւառաց մէջ, որոց վրայ նշանաւոր գիտելիք չկայ։ Այս գիւղերէն ոմանք՝ ըստ հին ցուցակաց հարկատու եղած են Սիւնեաց եկեղեցւոյն։ — Սիսական, 98, 255, 274, 302, 481, 505։

— Զորրորդ Հայոց Ծոփք գաւառի, այժմեան Չմշկածագ նոր վիճակի մէջ ալ կայ Ագարակ գիւղ մը, որոյ բնակիչք խառն են Հայք և Քուրդք։ Հայք ունին գեղի ծայրը հնագոյն եկեղեցի մը, որոյ մօտէն կը բղխեն սառնորակ, ջինջ և առատ ջրոց երկու ակունք, որոց միայն Ակնչիշուր կ'ըսեն, ականջացաւը բուժելուն համար։ Ուրիշ աղբիւր մ'ալ կայ գեղէն վար, զոր Դողի աղբիւր կը կոչեն. որոյ ջրով կը լուացուին ջերմ ունեցողներն և կը բժշկուին։ Գեղս ունի սքանչելի դիրք, ընդարձակ գերեզմանատուն, հրապուրիչ տեսարաններ, երկիրն ալ բերրի է։ Ի հնումն հարիւրաւոր տներէ բաղկացած հայաբնակ մեծ գիւղ մ'էր աս, որ այժմ գրեթէ բոլորովին օտարացած է։ Գիւղիս մօտ է Կարմիր վանք, խեղճ դրից մէջ։ — Տես ի կարգին։ — Թորոս. Աղբ. 113–4։

— Բարձր Հայոց Եկեղեաց (Երզնկա) գաւառի մէջ եւս կայ Մեծ Ագարակ հայաբնակ գիւղ մը, բն. 400. ուրիշ մ'ալ Հոռոմ Ագարակ։

— Գուգարաց Տաշիր գաւառն եւս ունի Ագարակ անուամբ գիւղ մը Լոռւոյ ձորոյն եզերքը, որոյ երկիրը բերրի է։ Բնակիչք ամբողջ հայ են գրեթէ 600հոգի։ Գիւղի մօտ է ճգնաւորի մը մենարանը, որոյ առջեւէն քաղցրահամ ջրոյ վտակ մը կը վազէ և ջրաղացներ կը դարձընէ։ Կ'աւանդուի՝ թէ վտակս բղխած է սուրբ ճգնաւորին աղօթիւք։ — Ջալալեանց. Ճանապարհորդութիւն, մասն Ա. 125։

— Համանուն գիւղեր կան նաեւ Ծորոփոր և Զորոփոր գաւառաց մէջ. ինչպէս նաեւ Տայոց Պարտիզացփոր (Օլթի) գաւառին մէջ, և այլուր։ Տես ՁԻԹՏԼԻԿ։ — Վերոյիշեալ գիւղերու ոմանց մօտէն կ'անցնին Ագարակ անուամբ գետակներ, որոց վրայ յիշատակութեան արժանի բան չկայ։

ԱԳԱՐԱԿԱՑ ԲԵՐԴ. — Հին ժամանակ ամրոց մ'էր Կործէից Ճահուկ գաւառի մէջ։

ԱԳԱՐԱԿԻԿ. — Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ։



1. Ագարակ գիւղի եկեղեցին։

ԱԳԱՐԱԿԻ ՋՈՐ. — Այժմ կը կոչուի Այեար կամ Ագեար․ գալարագեղ այգիներով և բազմաթիւ սօսենիներով զարդարուած գիւղս ըստ նոր բաժանման կ'ինկնայ Արփա գետոյն ձախակողմը, Երեւան նահանգի Դարալագեզ վիճակի մէջ. իսկ ի հնումն Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, և Նորավանից ստացուածքներէն մին էր։ Բնակիչք ամբողջ հայ են 257հոգի։ Սիւնեաց աթոռոյն աւերմանէն վերջ (ԺԲ դարու վերջին տարինե-

րը), Նորավանքի մէջ եպիսկոպոսական աթոռ հաստատուեցաւ և նստաւ Տէր Սահմանոս շնորհազարդն. սա նուէր առաւ Եղակուզ Աթաբէկէն սոյն այս գիւղս: Տէր Սարգիս եպիսկոպոսի ժամանակ Ագարակի ձոր գիւղը վանքէն յափշտակուած ըլլալով, հայկական ՈԿ (=1211) թուին Մեծն Լիպարիտ շատ աղաչանքով Ամիր սպասալար Զաքարիայէն կը խնդրէ և ետ կ՚առնու. Զաքարիան ալ հետեւեալ խօսքերը կը գրէ իր ձեռքով. «Ես մեղուցեալ ծառայս Քրիստոսի Զաքարէ Ամիր սպասալար, որդի Մեծին Սարգսի, Հայոց և Վրաց սպարապետի, դարձուցի զԱգարակի ձոր գիւղն ի Նորավանս, աղաւ յամենայն Հարկաց, և խնդրեցի ի Տէր Սարգսէ առաջնորդէ սուրբ ուխտին՝ ի տարումն ինձ Ժ օր պատարագ, զոր պարտին անխափան կատարել և յետ մեր մի՛ որ իշխեսցէ ի մերոց կամ յօտարաց յափշտակել զայս գիւղս ի սուրբ եկեղեցւոյն». և այլն: — Սիսական 185—6, 203—5:

ԱԳԱՐԱԿՈՒ, ՀԱԳԱՐՈՒ կամ ԱՂԱՒՆՈՑ ԳԵՏ. Թ. Հաքարա—չայ. — Զանազան գետակներէ կը ձեւանայ Սիւնեաց Աղահէճք գաւառի մէջ. գլխաւոր ճիւղերն կամ օժանդակքն են, Հոչանց և Աղ—օղլան: Կ՚անցնի Հաբանդ գաւառէն և Քաշունիքի մէջ Որոտան գետոյն հետ խառնուելով կը թափի յԵրասխ:

ԱԳԱՐԼՈՒ, ՀԱՔԻՐԼՈՒ. — Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր (Զանկէզուր) գաւառի մէջ:

ԱԳԲՈՒՆԱՐ. — Գիւղ և վանք Այրարատայ Վանանդ գաւառի մէջ:

ԱԳԲՈՒՆՂԱՐ. — Գիւղ Բարձր Հայոց Դարանաղի (Կամախ) գաւառի, Վերին Կեղիի մէջ. բամբակի մշակութիւն ունի:

ԱԳ կամ ԱՔ—ԳԱԼԷ (Սպիտակ Բերդ). — Բերդաւոր գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի արեւմտեան կողմը ցամաքակղզւոյ մը վրայ. ունի 30էն աւելի տներ: Նշանաւոր և յիշատակաց արժանի են շուրջը ցրուած հայկական հին աւերակներ: — Սիսական 40: Տիւդոշա, Գ. 312:

— կամ ԳՈՒԼԷ. — Բերդ ծովային Կիլիկիոյ (Թիւ 2), Լամոսի հարաւային կողմը, բաղկացած է կրկին կոփածոյ քարակերտ շէնքերէ: Հին անունն յայտնի չէ, և այժմ ամայի դրից մէջ կը գտնուի. նոր ուղեւորաց զննութիւնք թերեւս ժամանակաւ աւելի ընդարձակ տեղեկութիւն տան մեզ աստ նկատմամբ: — Սիսուան, 347: — Աղ—դուղէ անուամբ կան նաեւ ուրիշ քանի մը աննշան գիւղեր յայլ և այլ գաւառս:

ԱԳ—ԴԱՅԱ — Այսպէս կոչուի Կիլիկիոյ Սեւ Լերանց մէկ մասը:

ԱԳ—ԳԻԼԻՍԷ (Սպիտակ Եկեղեցի). — Գիւղ Այրարատայ Աբեղեան (Ներքին Բասեն) գաւառի մէջ. ամայի մենաստան մ՚ունի, որ 1570էն յիշատակարանի մը մէջ յիշուած Ճերման Վանքն կը կարծուի:

— Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ: Բնակիչք ըստ 1873 տարւոյ աշխարհագրին՝ էին 416 հոգի ամբողջ հայ, այժմ են 528:

— Թրքաբնակ գիւղ Այրարատայ Ուրծ Գաւառի մէջ, Սեւ (Գարա կէօլ) լճակի եզերքը. ասա կը նշմարուին հին եկեղեցւոյ աւերակներ և գերեզմանք:

— Թաթարաբնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառին մէջ Շողուագայ արեւելեան հարաւային կողմը: Գմբեթաւոր եկեղեցի մը և բնակարանաց աւերակներ ունի: Եկեղեցւոյ արձանագիրք անվերծանելի են, բաց ի խաչքարի մը վրայինէն, որ կը յայտնէ Գաւիթ եպիսկոպոս մը նորոգող ի թուին Հայոց ՌԿ (=1611): — Սիւնեաց Վայոց ձոր և Սոդք գաւառաց մէջ ևս կան ուրիշ Աղ—գիլիսէ գիւղեր, որք այժմ հայաբնակ չեն, բայց հայկական հին յիշատակարաններ ունին:

ԱԳ ԴԱՇ. — Քարաբլուր Այրարատայ Վանանդ գաւառի մէջ:

— Գիւղ Ճակատք (Այրարատ) գաւառի մէջ:

ԱԳ—ԽԱՉԻ. — Վիճակ իգմիտի Աստապատ գաւառի մէջ, ունի գրեթէ 48 գիւղ, բնակչաց թիւն է 7,448, հայք 1,100:

ԱԳ ԽԱՐ. — Գիւղ Այրարատայ Վանանդ գաւառի մէջ, ունի հին խաչքարերով գերեզմաններ:

ԱԳ ԽՕԳՈՒՇ. — Գիւղ Սիւնեաց Սոդք գաւառի հիւսիսային արեւելեան անկեան մէջ, Համանուն լերան ստորոտը:

ԱԳ ԹԷՓԷ. — *Գիւղ Խարխառունեաց գաւառի մէջ, Սիփան լերան հիւսիսային կողմը։*

— *Ուրիշ մը Տիգրանակերտի արեւելեան հարաւային կողմը։*

— *Երկու լեռ կայ այս անուամբ, մին Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ և միւսն Այրարատայ Արագածոտն և Արշարունեաց գաւառաց մէջտեղ։*

ԱԳԸՍ. — *Գիւղ Զարանճաքի (Տէրսիմ), բնակիչք հայ և քուրդ։*

ԱԳ ԽԱՅԱ ԿԱՄ ԽԱՅԱԼԻ. Թ. خايالى. — *Գարուս սնիգրնեբը 20 տունէ ձեւացած հայաբնակ գիւղ մ՚էր Խարբերդի հիւսիսային կողմը։ Հայք այս տեղէն գրուելով այժմ օտարազգիք կը բնակին։ Գիւղս իւր անունն առած է Ագ խայա լեռնէն, որուն ստորոտը շինուած է։ Այդ լեռնէն տեսակ մը հող կ՚ելնէ որուն թաթարները ձաղտրրղան անունը կու տան, և կը գործածեն մուշտակներ ճերմկցնելու։ Լերան վրայ Օզա կոչուած հողաբլուրն պեղելով գտած են կամարաշէն գերեզման և մարդկան ոսկրոտիք ի հնուց մնացած։ — Ճնպրի. ի Լեհաստան, 259։*

ԱԳ ԿԷՕԼ (*Սպիտակ լիճ*). — *Փոքրիկ լճակ Այրարատայ Կոգովիտ գաւառի արեւելեան հարաւային կողմերը Արտազայ սահմանին մէջ։*

— *Համանուն լիճ մ՚ալ կայ Լեռնային Կիլիկիոյ (Գարամանիա) մէջ, Էրէկլիի մօտ։*

ԱԳ ՀԱՄԶԱԼԻ. — *Մեծ գիւղ Այրարատայ Մազազ—Ոստան գաւառի մէջ, բնակիչք 100 տունէն աւելի հայ և թուրք։*



2. Ագ-Թուխ (Սալմաստ գիւղ)։

ԱԳ–ՀԻՍԱՐ. Տես ԱԳՇԷՀՐ։

ԱԳՃԱ ԳԱԼԷ. Թ. آغچه قلعه. — *Կը համարուի փոքրիկ վիճակ մը Այրարատայ Գա-*

բեղէնք գաւառի արեւելեան մասին։ Նոյն վիճակի կամ Կէչուանայ մէջ կը գտնուի համանուն գիւղ մը Պայամ գետի ձախակողմը։ — Ագձա գալէ բերդ մը կ'իյնայ Գարեգենից գաւառի հարաւային ծայրը, Տիրակայ սահմանաց մօտ՝ Պուղաթէփէ լերան ըստորոտը եւ կը կարծուի, թէ այս բերդի անուամբ կոչուեր է համանուն վիճակին։

— կամ ԱՂՋԱՂԱԼԱՅ. — Այժմեան անուն հին Երուանդակերտի, Այրարատայ Արշարունեաց գաւառին մէջ։ Առաջին անգամ Առաքել պատմիչ կը յիշէ անունս. «Երուանդակերտն՝ որ այժմ ասի Աղջաղալայ»։ Եւ իրմէ առած կը յիշեն ի վերջոյ նաեւ այլ մատենագիրք։ Տես ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ։ — Առաքել



3. Բարդուղիմէոս Առաքելոյն հանգստեան վէմը։

պատմ. Դ, 36. Է, 80։ Զամչեան Պատմ. Հտ. Գ, 544։

— ՎԵՐԻՆ ԵՒ ՍՏՈՐԻՆ. — Գիւղք Արագածոտն (Այրարատ) գաւառի Թալին վիճակի մէջ։ Ստորին Ագճագալէի մօտ է Գարագալէ բերդը։

— Խօշապայ մէջ գրեթէ 4 ժամ հոգուց վանքէն հեռու լերան վրայ համանուն բերդի մը աւերակներ կային, որ դարուս սկիզբը բոլորովին քանդուեցաւ։ Պեղմանց և հետազօտութեանց կարօտ վայր մը կը թուի։

— Գիւղ Վանանդայ Ջարիշատ վիճակի մէջ։ Նոյն անուամբ գիւղեր կան նաեւ ուրիշ մի քանի գաւառաց մէջ, որոց վրայ հետաքրքրական տեղեկութիւնք չըլլալով զանց կ'ընենք։

ԱԳՃԱ–ԳՇԼԱԳ. — *Մեծ և Այգեւէտ գիւղ Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, Երեւանի հարաւային արեւելեան կողմը ։ — Ուրիշ մ'ալ Մազազ–Ոստան գաւառի մէջ։*

ԱԳՃԱՏԱՂ. — *Լերինք Մելիաժնոյ և Ջէյթունի մէջտեղ, որոց մէջ կը բնակին 130էն աւելի քրդաց գիւղեր։ — Մշակ Բ. 18։*

ԱԳՃԱ կամ ԱԳՃԱԹԷՆՏ. *Տես* ԱԽՏԱ։



4. *Ագուլիս։*

ԱԳՃԱԹԷՆՏ. — *Թրքաբնակ գիւղ Սիւնեաց Ագահէճք գաւառի մէջ։ Բն. 139։ Տես* ԱՏՉԱՐ։

ԱԳՃԷ. *Տես* ԱԽՏԱ։

ԱԳՃԷՇԷՀՐ. — *Գիւղ Լեռնային Կիլիկիոյ (Գարամանիա) մէջ, Ագ կէօլ լճի հարաւային կողմը։*

ԱԳՃԷՊԷԼ (*Սպիտակ լեռ*). — *Տուրուբերանի Հարք գաւառին մէջ, Խնուսայ Հերթ գիւղի մօտ լեռ մ'է, որուն ստորոտէն մայիսի սկիզբը կը բղխէ սկանակիտ աղբիւր, և կը ձևացընէ բաւական մեծ լճակ մը։ 40 օր կ'աճի, 40 օր այնպէս կը մնայ և 40 օրուան մէջ ալ երթալով կը նուազի և անհետ կ'ըլլայ։*

ԱԳ ՄԷՋՐԷ. — *Լեռ Տայոց Պարտիզացփոր գաւառի հարաւային կողմը։ Տես* ՄԵԾՐԱՑ *Լ. (Սօղանլու)։*

ԱԳՄԷՋԻԴ *կամ* ԱԳՄԷՍՋԻԴ. *Տես* ՍԻՄՖԷՐՈՓՈԼ։

ԱԳՇԱՐ, ԱԳ *կամ* ԱՂ ՇԷՀՐ (*Սպիտակ քաղաք*). — *Ագաւազանօք կոչուած է նաև Աշխար և Ագշարապատ. հին ատեն կամ թէ բնիմ դարուս սկիզբները գլխաւոր քաղաք էր համանուն գաւառին Շապին Գարահիսար (Փոքր Հայք) նահանգին մէջ, այժմ դարձած է աւան մը։ Իր անուամբ կը կոչուի Ագշարօվա (Ագշարի դաշտ) զիմացը տարածուած լայնածաւալ և գեղեցիկ դաշտն։ Մեր պատմիչներէն սոյն քաղաքս կը յիշէ Թովմաս Մեծոփեցին։*

ԱԳՇԷՀՐ. — *Քաղաք Ղօնիա նահանգի համանուն ձկնաշատ լճի հարաւակողմը, ունի երկաթուղւոյ կայարան։ Քաղաքիս հայք բաղդատմամբ այլ ազգաց սակաւաթիւ են, ունին եկեղեցի և դպրոց։ Ըստ Վ. Քինէի համանուն գաւառն ունի 2 վիճակ, 86 գիւղ և 39,811 բնակիչ։*

— *կամ* ԱԳՀԻՍԱՐ (*Սպիտակ բերդ*). — *Իզմիտի նահանգի Կէյվէ գաւառին մէջ, Սաքարիա գետոյն ձախ կողմը շատ հին քաղաք մ'է, որ երկրաշարժէ կործանուելով, տակաւին ունի հին շինուածոց հրաշալի մնացորդներ։ Բնակիչք են 1,438 հոգի, յորոց 456ը հայ։ Վերջին դէպքերէն հայք կորուստ ունեցան 50 անձ և 15,000 ոսկի։ Համանուն վիճակն ունի 11,626բն. յորոց 2,100ը կը համարուին հայք և ունին 4 դպրոց 200 աշակերտօք։ Վիճակիս գլխաւոր վաճառքի նիւթն է համով պանիրն որ տարին 100,000 հոխայ (128,295 քիլօ) կը հանեն ի վաճառ։*

— *Այս անուամբ ուրիշ գաւառ մ'ալ կայ Իզմիրի նահանգի մէջ, որոյ տարածութիւնն է 1,469 քառակուսի հազարամեթր. ունի 58 գիւղ և 31,746 բնակիչք։ Գաւառիս գլխաւոր քաղաքն կը կոչուի նոյն անուամբ, բն. 12,000 յորոց 882ը հայ են և ունին եկեղեցի մը և երկու դպրոց տղայոց և աղջկանց։*

ԱԳՈՐԻ. — *Գիւղ Գուգարաց Ձորոփոր գաւառի մէջ, որոյ մօտ կը տեսնուին ապարանից աւերակներ։*

ԱԳՈՒԼԻՍ *կամ* ԱԳՈՒԼԻՔ. *Գղ.* AKOULIS. *Ռ.* Акулисъ. — *Ստուգաբանուի ըստ ոմանց Այգինեկով լի, շատ այգիներ ունենալուն համար՝ և ըստ տեղական աւանդութեան, իբր թէ Ս. Բարդուղիմէոս գիշեր մը բարձրակարկառ քարի մը մօտ (թ. 3) ննջելով, աչքերը կը բանայ առաւօտեան լուսոյն, անոր համար նոյն տեղը կոչուեր է Ակն ի լոյս, յորմէ աղաւաղած կը համարին Ագուլիս։ Այդ տեղը և վէմը տակաւին կայ, և տեղացիք կը պատուեն ճրագներ վառելով։ Բայց այս երկին ստուգաբանութիւնք եւս գոհացուցիչ չեն. ԺԱ դարու սկիզբը Սարգիս կաթողիկոսի կոնդակի մէջ գրուած է ր տառի յաւելուածով Արգուլիք. նոյնպէս կը գրէ նաև Զաքարիա գիտնական վարդապետն ԺԷ դարու կէսին՝ Աստուածաշնչի մը յիշատակարանին մէջ։*

— *Երկրորդ վիճակ Սիւնեաց Գողթն գաւառի, կը սահմանուի նեղ և փոքրիկ ձորակով մը, արեւելեան կողմն է Որդուատ և արեւմտեանը Տրունիք։ Վիճակիս՝ թէեւ ըստ հին բաժանման բազմաթիւ գիւղեր չունէր, բայց ըստ նոր բաժանման ունի բաւական թուով Հայոց և այլազգեաց գիւղեր ինչպէս կը տեսնուի հետագայ վիճակագիր տախտակի մէջ։ Խօշլի լեռնէն վտակ մը, (Ագուլիս Գ.) կը բղխէ և հալած ձեանց ջրերով ստուարանալով կ'անցնի իր միջէն, և երբեմն մեծ վնասներ ալ կու տայ. բայց ամառը այնչափ կը նուազի որ մինչեւ Երասխ չի հասնիր։ Շրջապատուած է ձորեզերեայ լեռներով, որք ձմեռը խա-*

փանելով արեւու ճառագայթից ծաւալումը՝ ցուրտը կը սաստկացընեն և մինչև գարունը տաշ չերթայ՝ սառնամանիք չեն հալիր։ Իսկ ընդհակառակն ամառն ալ լերինք լերկ ըլլալով, ճառագայթները սաստիկ կը ցոլանան պատճառելով խիստ տաք և տօթ։ Ամրան ջրոց նուազութիւնը կը լնուն շատ մը տատարուղի աղբիւրներ, և երկրին այգիները, ըեց բանասէրն Պ. Սարգիս Սարգսեանց, և հրատարակեց գիրք մը երկու մասէ բաղկացած, 1883ին ի Մոսկվա։ Վիճակն՝ բառ այժմեան աշխարհագրականբաժանման՝ կ'ինկնայ Երեւան նահանգի Նախիջեւան գաւառի մէջ։

— Վերին Ագուլիս. — Առաջին քաղաքաւան համանուն հին վիճակի, փառա-



5. Ագուլիս։

թթենիք, տեսակ տեսակ պտուղներն և պտտուական մեղրն կը մնացընեն ձմրան խառութիւնը։ Բնակիչք՝ բարեկամ են և քաջարիք և կրնան համարուիլ հարազատագոյն սերունդք Գողթնեաց, որք իրենք զիրենք կը կոչեն Զօկ կամ Զոկ, և իրարու մէջ կը խօսին յատուկ բարբառով մը, որ կը կոչուի զոկերէն, բայց այլոց հետ կը խօսին նաև գաւառ հայերէն։ Այս բարբառը ուսումնասի- կերտի հարաւակողմը. յետ Որդուատայ գխաւոր չէն Գողթն գաւառի, որ օր աւուր հսկայաքայլ կը յառաջադիմէ և ի բնակչաց կը կոչուի փոքրիկ Փարիզ։ Կառուցուած է ժայռոտ լերան մը ստորոտը և աստիճանաբար բարձրէն դէպ ի ձորը կը տարածուի (թ 4 և 5), և գեղատեսիլ պարտէզներով և այգիներով կը հասնի մինչև հին Դաշտ գիւղը, որ այժմ կը կոչուի Ստորին Ագուլիս։ Բաժնուած

է եօթն թաղերու, ունի երկայարկ և երբեմն եռայարկ կանոնաւոր տներ, յորոց ոմանք ունին մէկ մէկ պարտէզ խնամքով զարդարուած, ուր կ'աճին որթք, թթենիք, լիմոնք, նռնենիք, թզենիք, վարդենիք և զանազան տեսակ ծաղկունք։ Վաճառանոցները լի են ամէն տեսակ եւրոպական և տաճկական նիւթերով. կան մետաքսի գործարաններ,

ղաքակիրթ բնակչաց ազնիւ հիւրասիրութիւնը, մեծ ցաւով մեկնած է աստի։ Նա կ'ըսէ. «Հանճարեղաց կեդրոն մը կրնայ համարուիլ (Ագուլիս)՝ աշխատաւէր, լուսաւորեալ և հարուստ ժողովրդեան»։

Ագուլիսի սկզբնական պատմութիւնն մեզ աւանդած չեն պատմիչք, բայց յայտնի է որ ԺԷ դարու սկիզբը բաւական բազմամարդ

## ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԳՈՒԼԻՍ ՎԻՃԱԿԻ 1893 ՏԱՐԻՈՅ

| ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | | ՕՏԱՐՔ | ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | | ՕՏԱՐՔ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Տուն | Հոգի | Հոգի | | Տուն | Հոգի | Հոգի |
| Ագուլիս Վերին Քաղաք | 201 | 1670 | 593 | ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ | 639 | 5433 | 5154 |
| Ագուլիս Ստորին | 110 | 996 | — | Նուրգուտ | — | — | 215 |
| Ազա Վերին | 125 | 795 | 40 | Ունուս | — | — | 186 |
| Ազա Ստորին | 19 | 108 | 198 | Ուսթուփի | — | — | 742 |
| Ալեապու | 58 | 547 | — | Ուրումիս | 51 | 577 | — |
| Ազրի | — | — | 79 | Ձինանաք | 85 | 965 | 17 |
| Անապատ | — | — | 58 | Պիլեւ | — | — | 769 |
| Անդամէջ Վերին | — | — | 261 | Սող | — | — | 7 |
| Անդամէջ Ստորին | 21 | 146 | 178 | Սունդաթան-գիւղ | — | — | 77 |
| Բաղմաղի | — | — | 45 | Վայուեր | — | — | 141 |
| Բուհրուս | — | — | 140 | Վանանդ | — | — | 791 |
| Բուստ | 52 | 633 | 630 | Վարակերտ (փառա·) | 60 | 568 | 103 |
| Դարեա Մելիք | — | — | 44 | Տեանիս (Տրունիս) | — | — | 428 |
| Դեղասր | 15 | 75 | 89 | Տէր | 71 | 478 | — |
| Եայճի | — | — | 1563 | Տիլլեաղ | — | — | 64 |
| Լիւավայի-Սուլթան-գիւղ | — | — | 42 | Տիվա (Տիւի) | — | — | 424 |
| Խանագա | — | — | 194 | Տիւկլին | — | — | 247 |
| Խիւտավերտի-Բէկ-գիւղ | — | — | 60 | Տիւկլին-գիւղ | — | — | 33 |
| Խուրս | — | — | 61 | Տնակերտ | 66 | 527 | — |
| Կարճաւան | 58 | 473 | — | Տոթի | — | — | 1510 |
| Հիւսէյն-Ալի-Բէկ-գիւղ | — | — | 51 | Փառակա | 53 | 739 | 94 |
| Ճեաֆէր-խան-գիւղ | — | — | 56 | Քալանթար-գիւղ | — | — | 33 |
| Միրզէ-Հասան-գիւղ | — | — | 31 | Քաղաքիկ | 57 | 514 | — |
| Միրզէ-Ճեաֆէր-գիւղ | — | — | 18 | Քեանդէ | — | — | 213 |
| Նասիրապատ | 22 | 230 | 141 | Քեարիմ-Գուլի-գիւղ | — | — | 229 |
| Նուճատէ | — | — | 297 | Քէլթամ | — | — | 128 |
| Նուանուս | — | — | 273 | Քիլիտ | — | — | 289 |
| ԳՈՒՄԱՐՆ | 639 | 5433 | 5154 | ԲՈՎԱՆԴԱԿ ԳՈՒՄԱՐՆ | 1042 | 9399 | 11898 |

100էն աւելի արուեստանոցներ, յորս նշանաւոր են կտաւագործք և առագործք։ Գովութեան արժանի են հասարակաց ընթերցարանը և երկսեռ դպրոցներն, որոց յառաջադիմութեան համար ամենայն հոգ և խնամք կ'ընեն տեղւոյս բարերարք։ Քաղաքիս վրայ մեծ գովեստով կը խօսի գաղղիացի տիկինն Շանթր, որ անձամբ տեսնելով և վայելելով բնութեան գեղեցկութեան հետ՝ քա-

քաղաք մ'էր, և Ղափանեցւոց պատմութեան մէջ կը յիշուի 10,000 տուն բնակչօք որ չափազանց կ'երեւնայ, սակայն Նալեանն ալ կ'ըսէ. «Այս գիւղաքաղաք Ագուլիս երբեմն ունէր 8,000 տուն Հայ, այժմ հազիւ թէ կայ 1,000»։ Շատ մը պատերազմներ, այլազգեաց յարձակմունք և աւերածութիւնք, միով բանիւ՝ բազմազիմի աղէտք և տառապանք զանազան ժամանակաց մէջ, պատճառ

եղած են քաղաքիս բնակչաց նուազութեան։ Այժմեան պետութեան շնորհիւ բնակիչք հանգիստ վիճակ մ՚ունին, և ըստ 1893ի աշխարհագրին կը համարուին 1263 հոգի, յորոց ոչինչ թիւ մը կը կազմեն այլազգիք և նիւթապէս եւս խեղճ գիրք մ՚ունին։ Քաղաքիս հին ժամանակ ունեցած մեծութեան և շքեղութեան վկայք են՝ դեռ մինչեւ օրս համարիլ Ս. Թովմայի կամ Ագուլեաց վանքը, (Թ. 6) որ ըստ աւանդութեան հաստատուած է Ս. Բարդուղիմէոսէն, ուր թաղուած է իր Կումսի աշակերտը, այդ պատճառաւ վերջէն եղած է եպիսկոպոսական աթոռ Գողթն գաւառի, որ և հին Հայաստանի նախագահ եպիսկոպոսարաններէն մին էր։ Վանքիս առաջին շինութեան վրայ տեղեկութիւն չունինք ոչ



6. Ս. Թովմայի վանք Ագուլեաց։

կանգուն մնացած եկեղեցիք և մատուռք, որոց թիւր կը հասնի 12ի։ Ժէ դարու կիսուն Առաքել վարդապետը և ԺԸի առաջին կիսուն Աբրահամ կաթողիկոսը՝ գլխաւորաբար չորս եկեղեցի կը դնեն յԱգուլիս, Ս. Թովմայի վանքէն զատ, որք նորոգուեցան Մովսէս և Փիլիպպոս կաթողիկոսաց ժամանակ։ Եկեղեցեաց գլուխ և առաջին կրնանք մեր մատենագիրներէն և ոչ յարձանագրութեանց, վասն զի մէջը գտնուած արձանագրութիւնք բոլոր նորոգութեան ժամանակին կը վերաբերին։ Հնագոյն արձանագրութիւնն է 1694 թուին, որ փորագրուած է եկեղեցւոյ մեծ դրան ճակատը, նոյն տեղը քանդակուած է նաեւ Ս. Թովմաս, որ ձեռքը կը մխէ Փրկչին տիգախոց կողը։ Այս արձա-

*նաւորութիւնը կ՚աւանդէ Ս. Բարդողիմէոսէն վերջ Ս. Լուսաւորչի գալուստը և նոյն միածակին զանազան գիւղեր սեփականելը ։*

Բարդուղիմէոս ի Հայս եկեալ,
Զտուն Տեառն նախ աստ հիմնարկեալ,
Սուրբ Թովմայի առաքելոյն անուն կոչեալ.
կումսի անուն զիւր աշակերտն
Տեսուչ տեղւոյս զնա եդեալ.
Որ եւ ըզտուն Գողթ գաւառիս
ի նա յանձնեալ ըզհօտն ընտրեալ,
Մեծ Ագուլիս եւ Դաշտ գովեալ,
Ցղնա, Ոսմիս սըմա յանձնեալ.
Բուստ, փառակա եւըս տըվեալ.
Բուհրուտ, Տեւի անքակ եդեալ.
Եւ Շրջու ընդ Մասրեւան,
Աղահեցիկ ցանկ հաստատեալ.
Դաստակ, վանանդ կցորդ եղեալ.
Տրունիս, Տնակերտ միաբանեալ,
Օրովանիս եւ Քաղաքիկ
Եւ անապատն Հանդամիջաց,
վեռն?, Գետցիկ եւ Գեղերեցիկ,
Նունիս, յՈրդվատ Բաժին կարգեալ։
Սուրբըն Գրիգոր յորժամ եկեալ՝
ի Առաքելոյն նոմոս տեսեալ,
Ձեռագրով զայն հաստատեալ.
Եւ նզովիւք ամրափակեալ.
Ցամի Տեառն Գ.Ճ եւ հինգ հասեալ
Լուսաւորչին պատճէն գրեալ
Արժան գրիս որ աստ եդեալ։

*Այս գաղափարուած գրոց յիշատակարանաց մէջ՝ իբրեւ հնագոյն՝ ծանօթ է Նարեկացւոյ աղօթագիրք մը, գրուած 1375ին Վարդան անունով անձէ մը, որ այժմ կը պահուի Էջմիածնի մատենադարանի մէջ. իսկ 1424ին ալ Տաթեւացւոյ հարցմանց գիրք մը, յեպիսկոպոսութեան Տեառն Տէրունականի՝ որ սուրբ և երանեալ կոչուած է։ Երկրորդ գրքիս յիշատակարանն կը յայտնէ նոյն ժամանակի վանքի միաբաններէն զոմանս, հանդերձ իրենց պաշտօններով, ինչպէս՝ Յակոբ ամենահզեւոր հայր և վարժապետ, Յակոբ արեղայ, Բարսեղ չնորհալի գրագիր, Յոհաննէս եկեղեցպան, Ստեփանոս հայր վանացն, Սատան և Մկրտիչ աշխատաւոր եղբարք, Ֆասուխ մնտեսս, և այլն։ Գրիչն՝ Մատթէոս վարդապետ կը յիշէ նաեւ ժամանակին քաղաքական անցքերէն, և կը յայտնէ թէ այն ատեն Ագուլիսի տանուտէրներն էին Աղա Գէորգ, Ըռայիս՝ Սահր Բէկ, և տանուտէր՝ Էդիկշայ։ Նոյն տարիները (1436) գրուած է հաւ նաեւ Ս. Թէոդորոս զօրավարի պատմութիւնը, որոյ գրիչն է ոմն Յովհաննէս վարդապետ։ Այս թուականէս վերջ գրեթէ*



7. Խաչքարնդակ Ս. Թովմայի վանուց։

*200 տարի անծանօթ և անյիշատակ կը մնայ մենաստանս մինչեւ 1636 թուականը, յորում կը վերականգնի Մովսէս կաթողիկոսի աշակերտ Խաչատուր առաջնորդի ձեռամբ, որոյ համար կ՚ըսեն. «Նորոգեաց ի*

հիմնից զաւրը ուխտս Թովմայի, բարձրաբերձ կամարակապ և գմբեթաձեւ զաւրը եկեղեցին, և քարձր պարսպով և չորեքանկիւնի խուցերով և մռշղբախներով (խոհանոցք) զարդարեցաւ, և բազում նեղութեամբ և չարչարանօք շինեցաւ»: Բայց եկեղեցւոյ նորոգութեան արձանագրութիւնք կը նշանակեն 1694 տարին, ինչպէս է նաեւ խաչքանդակի մը (Թ. 7)



8. Եկեղեցի Ս. Թովմայի վանաց:

վրայինը, ուր փորագրուած է Խաչատուր անունը, բայց կամ ուրիշ Խաչատուր է այդ և կամ թուականը վերջը գրուած է Ռեռփիխս անուամբ մէկէ մը: Հաւանական եւս է կարծել՝ թէ 1679ին Արարատայ մեծ երկրաշարժին ժամանակ խախտած ըլլայ նաեւ մենաստանս և վերջը 1694ին վերստին շինուած: Դեռ կանգուն են վանքիս ամուր պարիսպներն, որք քառակուսի կը շրջապատեն. հիւսիսային արեւմտեան անկիւնն է կամարակապ քարաշէն առաջնորդարանը. միաբանից սենեակները կ՚ինկնան հիւսիսային և արեւելեան կողմերը, խոհանոցն և տնտեստանն՝ արեւելեան հիւսիսային անկիւնը, ուր կայ նաեւ ինքնաբուղխ պատուական ջուր. հարաւային արեւմտեան կողմն է ամբարանոցը, որոյ վրայ ի յետոյ կառուցուած է 150–200 մանկանց վարժարան: Վանքի մայր կամ աւագ դուռն է արեւմտակողման պարսպի վրայ, որ ճիշդ եկեղեցւոյ արեւմտեան դրան կը նայի: Եկեղեցին (Թ. 8) կառուցուած է պարսպին մէջտեղը, ընդարձակ քառակուսի ձեւով, չափաւոր բարձրութեամբ: Մէջտեղէն չորս սաւար սեանց վրայ կը

բարձրանայ վայելուչ կամարիկէն, իսկ երեք ուրիշ փոքրիկ կաթողիկէներ եւ իբրեւ զանգակատուն կը բարձրանան եկեղեցւոյ երեք դրանց վրայ, չորս զանգակօք։ Մէջը կայ մարմարեայ զարդարուն խորան մը՝ ձեռակերտ պարսիկ արուեստագիտի։ Բաց ի մեր յիշածներէն, դրանց վրայ կան նաեւ քանի մը ուրիշ արձանագրութիւնք, յորս կը յիշուին զանազան բարերարաց անուանք, որք օգնած են եկեղեցւոյ վերաշինութեան։ Վանացս մօտ հիւսիսային կողմը՝ կայ փոքրիկ հին պարսպապատ մատուռ մը Ս. Բարդուղիմէոսի կոչման թեամբ։ Ս. Յովհաննէս (թ. 9) լերան ստորոտը անհարթ քարերէ շինուած, ճակատն և գմբէթն ալ ադիւսով, զանգակատունը փայտայարկ, նշանաւոր է զարդարուն ճարտարապետութեան (թ. 10), շինուած՝ փայտի զանազան մանր կտորներէ խառն ստուարով և փղոսկրով. համառօտ արձանագրութիւն մ՚ալ ունի շինել տուողին, 1682 թուականաւ։ Միւս եկեղեցիք և մատուռնք կը կոչուին. Ամենափրկիչ, Ս. Աստուածածին փոքր, Ս. Մինաս, Ս. Ստեփաննոս, Ս. Յակոբ Ալփեան, Ս. Հնձանեաց Լոյս, Ս. Յակոբ Մծբնայ։



9. Ս. Յովհաննէս եկեղեցի։

աշակերտի անուամբ, որ հոն թաղուած կը համարուի և ուխտատեղի է։

Այժմ Ագուլիսի գլխաւոր եկեղեցին է Ս. Քրիստափոր, որ կը յիշուի ի գիրս, Ս. Թովմայի վանաց վերաշինութենէն յառաջ. ասոր մօտ հաստատուած է աղջկանց վարժարանը։ Եկեղեցիներէն՝ Ս. Աստուածածին կամ Անապատ կոչուածը՝ քաղաքէն քիչ մը դուրս է, գեղապատուարճ դիրք, ուր զբօսավայր է Ագուլեցւոց. իսկ Ս. Սիմէոն կամ Շմաւոն՝ քաղաքին մէջ է, որոյ մօտ կը կարծուի թէ կատարման եղած ըլլայ. եկեղեցւոյս մէջ կը գտնուին խաչքարեր համառօտ արձանագրու-

Առաքել պատմիչ, Մոկացի Պօղոս վարդապետի վարուց մէջ, որ անապատական կենաց նորոգողներէն մին էր, կ՚ըսէ թէ նորա Ագուլիս քարոզած ատենը ԺԷ դարու սկիզբը Ս. Թադէոս առաքելոյն անուամբ եկեղեցի մը կար դուռը գոց զոր ոչ ոք կրցեր էր բանալ. և այս Պօղոս վարդապետը այցապաշտօն ընելով և երկրորդ օրը (կիրակի) զանրացեք, երբ անգամ դրան կը զարնէ, դուռը ինքնիրեն կը բացուի և բոլոր ժողովուրդը ներս մանելով ժամերգութիւն և հանդիսաւոր պատարագ կը կատարեն։

Տօնակատարութիւն Ագուլեաց վերնագրով

յօդուած մը հրատարակուած է Ճաքաղի 1862 տարւոյ 85–88 էջից մէջ, յորում լաւ կը տեսնուի եռանդուն Ագուլեցւոց, հոգեւորական հանդէսից մեծ կարեւորութիւն տալն։ Մանրամասնաբար նկարագրուած է 1861 տարւոյ օգոստոսի մէջ Ս. Աստուածածնի վերափոխման տօնին կատարուած մեծաշուք թափօրն։

Յիշելու արժանի է նաեւ միակամար գեղեցկագիր կամուրջը (թ. 11), շինուած 1713ին, երկու կողմը հայերէն և թուրքերէն արձանագրութիւններով, յորս նշանակուած են

յուլթիւնը սաստիկ ողբերգուած, անպատմելի քաջութեամբք ամենայն ճիգն կը թափէր օտարաց լծէն ազատելու համար, Ագուլեցիք այդ միջոցին իրենց անձնական շահերուն և օգտին հետեւելով, իրենց քաղաքագլուխ Մելիք Մուսիի հետ, կը դաւաճանեն Դաւիթ բէկը և կը սպաննեն նորա աջակից Մելիք Փարսադանը։ 1751ին (հմտ. 12) Ատրպատականի կողմնակալ Ազատ խանը մօտենալով քաղաքիս, բնակիչներէն պատգամաւորներով կը խնդրէ իր զօրաց համար պաշար և 100,000 դահեկան, բայց երբ քանի մը



10. Ս. Յովհաննէս եկեղեցւոյ դուռը։

շինութեան համար նպաստողաց անուանք։

Քաղաքիս շուկան կ'ինկնայ հին և մեծ գերեզմանատան մէկ մասին վրայ, միւս մասն ալ հասարակաց պարտէզ բրած են, փոխադրելով տապանաքարերը, եկեղեցեաց նորոգութեան և շինութեան գործածելու համար։

Պարսից թագաւորաց խնամարկութեամբ ԺԶ–ԺԷ դարուց մէջ շատ բարգաւաճած է վաճառականութեամբ, բայց միեւնոյն ժամանակ երկու թշնամի տէրութեանց պատերազմներէն ոչ սակաւ վնասներ ալ կրեր է։ Դաւիթ բէկի պատմութեան մէջ տխուր էջ մ'ունի. մինչդեռ Սիւնեաց աշխարհի հա-

անգամ Ագուլեցիք կը մերժեն խանի այս պահանջը, Ազատ խանը կը յարձակի կագած զօրքերով քաղաքին վրայ. բնակչաց մէկ մասը կը ջարդուի, մաս մ'ալ գերի կը տարուի։ Ժամանակակից մէկը մանրամասն կը նկարագրէ այս վերջին աղետալի դէպքն, զոր հրատարակած է Մեծ. Հ. Ղ. Ալիշան՝ Սիսականի 331–3 էջից մէջ. նոյնը հրատարակուած է նաեւ Մասիս շաբաթաթերթի 1886 տարւոյ 729–30 էջից մէջ։ Ազատ խանի յարձակումէն վերջ շատ կ'անշքանայ Ագուլիս, և անգութ սրոյ հարուածներէն ազատուող բնակչաց մէկ մասն կը գաղթէ ի

Հնդիկս և այլ երկիրներ, մանաւանդ ի Կ. Պօլիս, ուր ձեռք կը զարնէ իրեն բնածին վաճառականական արուեստին։

Երբ դադարեցան հակառակամարտ զահերաց խռովութիւնք, քաղաքս վերստին սկսաւ զարգանալ իւր արուեստներով և վաճառականութեամբ, մանաւանդ ներկայ պետութեան ժամանակ։ Գլխաւոր վաճառքինիւթն է մետաքսն. ընտիր են թթենիք, որոց մէկ տեսակը՝ որ Բեղաւեայ կը կոչուի, դեղնագոյն քաղցր պտուղներ ունի, զոր կը չորցնեն ձմեռուան համար. ուրիշ տեսակ մ'ալ Ջաւ կոչուածը, որ այնչափ քաղցր չէ՝ կը



11. Կամուրջ Ագուլիսի։

գործածեն ցքւոյ համար։ Մետաքսէն զատ կը վաճառեն նաեւ բուրդ, բամբակ, կտաւ և մեղր։ Հին ատեն Ագուլեցիք ոչ միայն Ռուսիոյ վաճառաշահ քաղաքները՝ այլ և Եւրոպիոյ զանազան կողմերը կը ճամբորդէին, յորոց ոչ սակաւք եկած են մինչև ի Վենետիկ։ Այժմ եւս Ռուսիայէն զատ՝ ի Պարսկաստան, Հնդկաստան, Հոլանտա, Անգղիա, Գաղղիա՝ կը գտնուին Ագուլեցիներ, որք կը պարապին յանձնակատարութեամբ և վաճառականութեամբ։ Ագուլեցին՝ սովոր է առ նուազն 7 տարի պանդխտութեան մէջ մնալ, և յետոյ հարըս-տացած կը վերադառնայ իր բնավայրն, իր տունը շէնցնելու և վաստակոց պտուղն վայելելու։

— Ստորին Ագուլիս. — Գրեթէ երկու մղոն վերին Ագուլիսէն դէպ ի հարաւ կ'ինկնար գարուս սկիզբը՝ Դաշտ գիւղը, զոր 1820–5 տարիներու մէջ, Հայերը գնելով Պարսից թագաժառանգ Աբբաս Միրզայէն՝ կոչեցին Ներքին կամ Ստորին Ագուլիս։ Բնակիչք ամբողջ Հայք են 110 տուն, իբր 1000 հոգի։ Ունին երեք եկեղեցի, Ս. Երրորդութիւն, Ս. Սարգիս և Ս. Մինաս։

Ագուլեաց նկարագրութիւնը աւարտել վերջ, յիշենք նաեւ 1884 տարւոյ մայիս 21ին պատահած աղետալի արկածը։ Նախ, ձուաչափ մեծութեամբ կարկուտ կու գայ և ապա սաստիկ անձրեւ՝ որ առաջ կը բերէ սարսափելի հեղեղ մը, որով բոլոր այգիները փճանալէ զատ գրեթէ 70 տուն փլատուեցան, 44 հոգի մեռան, և ամբողջ Ագուլիսը աղմամ և տիղմ լեցուեցաւ։ Եղած վնասը համարուեցաւ 500,000 ռուբլի։ Ողբալով գրեցին ժամանակին լրագիրներէն՝ Արձագանք, Նոր Դար, և մանաւանդ Մշակ (թ. 58. ԺԳ. տարի) մանրամասն նկարագիրը հրատարակեց Խ. Մալումեանցի նամակով։



1006 / Ձ9451
1427-ՄԳ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան Публичная Библиотека

*Զանազան քաղաքաց մէջ մեռնելոց համար հանգանակութիւնք եղան, և փութացին վերանորոգել և կարգաւորել զայն։ Քաղաքիս այս արկածէն քիչ օր վերջը վախճանեցաւ աղջկանց և տղայոց վարժարանաց հիմնարկու և բարերար* Աւետիս Տէր Մկրտչեան *93 տարեկան։*

— *Սիսական 323–337։ Առաքել պատ. 216, 247, 346, և այլն։ Չամչեան Պատմ. հտ. Գ, 854։ Ագուլեցոց Բարբառը Մ. Ա. 4–15։ փորձ. Բ. բ. 363–367։ Տիկ. Շանթր. Բազմավէպ ամսագր. հտ. ԾԲ (1894), 533–539։*

ԱԳ–ՉԱՅ (*Սպիտակ գետ*). Թ. اقچای. — *Վտակ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ. կը բղխէ Գարախաչ լեռնէն և Էլլի–ալէք գետակի հետ միանալով կը թափի յԱրփա։ Տես* ՏՂՄՈՒՏ։

ԱԳՁԷ ՏԱՂ. — *Լեռ և գաւառ Մալաթիոյ նահանգին մէջ. բն. 37,850, յորոց 2,000ը Հայ են։*

ԱԳ–ՊԱՇ *կամ* ԱՂ–ԲԱՇ, վերին և Ստորին. — *Անուն երկին գիւղից Այրարատայ (Երեւանի նհնգ.) Ռստան գաւառի մէջ. առաջինն կ'իյնայ Ասորի Դըռնէն փարսախ մը հեռու. բն. 85 հոգի Թ. իսկ երկրորդն զուտ հայաբնակ է 486 հոգւով, 94 տան բաժնուած։ Հրաշալի է դիրքն, Գառնի գետոյն աջակողմը. երկիրը արգաւանդ է և կը բերէ ձմերուկ, սեխ, ցորեն, կորեկ, բամբակ, կնճիթ, մանաւանդ ազնիւ տեսակ բրինձ և այլ ընդեղէններ։ — Մշակ, Զ. 83։*

ԱԳՊԱՊԱ. — *Լեռ Այրարատայ Վանանդ (Կարս) գաւառի մէջ, բարձր 2050մ։*

ԱԳՊՈՒԼԱԳ. — *Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի, 22 վերստ Ալեքսանդրապոլէն հեռու, դէպի արեւելեան հարաւ. բնակիչք ամբողջ Հայ են 967 հոգի, բաժնուած 98 տան։ Համանուն վիճակն ունի 30,861 բն. յորոց 26,164ը Հայ են։*

*Այս անուամբ ուրիշ չորս հայաբնակ գիւղեր կան այժմեան Գանձակ և Բագու նահանգաց և Շուշի գաւառի մէջ, որոց իւրաքանչիւրի բնակչաց թիւն է 130 էն 400 հոգի։ Կան նաև այս անուամբ քանի մը այլազգաբնակ գիւղեր։ Տես* ԱՂԲՈՒԼԱՂ և ԿԱՊՈՅՏ Գ։

ԱԳՈՒԱԽԱՑ ՔԱՐ. — *Վասպուրականի Անձեւացեաց գաւառի մէջ, Հոգւոց վանքի մօտ, կանգուար լերանց մէկ մասը կը համարուի, զոր յիշէ Խորենացին Տիրամօր պատկերի պատմութեան մէջ։ Ամրան առատ ջրոց առուակներ կը հոսին այս լեռնէն և կ'երթան կը խառնուին Տիգրիսի հետ։ Տես* ԴԱՐԲՆԱՑ ՔԱՐ։

ԱԳՈՒԱԽԻ ԳԵՐԵԶՄԱՆ. *Տես* ԾԻԾԱՌՆԱՎԱՆՔ։

ԱԳՈՒԱԽՈՒՑ ԲՈՅՆ. Յ. Χοράκεων φωλία. — *Դաշտային Կիլիկիոյ մէջ, Անարզաբա քաղաքի մօտ լերանց հովիտ մ'է։ Յոհան Ալեքս Պերփեռուժեն կայսրը՝ 1137ին, Անարզաբայի և Պարոն Լեւոնի բոլոր երկիրներուն տիրելէ և անոր ընտանիքն ի Կ. Պոլիս գերի ղրկելէ վերջ, այս հովտիս մէջ որսորդութիւն ըրած ժամանակ, ինչպէս կ'ըսէ պատմիչն. «Իբրև եդ զդեղեալ նետն յաղեղն՝ և քարշեալ ի լի, խոկոյն խոցեաց սըլաքն, և պատառեաց զձախու ձեռն. և ի զօրութենէ դեղոյն մահանայր»։ — Սիսուան, 240։*

ԱԳ ՍԷՐԱՅ. — *Վիճակ Ղոնիա նահանգի Նիկտէ գաւառին մէջ, ունի 160 գիւղ զանազան ազգերէ։*

ԱԳ ՍՈՒ (*Սպիտակ ջուր*). — *Այս անուամբ երկու գետակներ ունի Այրարատ, մին՝ Գարեգինից և միւսն՝ Ուրծ գաւառի մէջ, Վեդի գետոյն օժանդակներէն է մին։ Տես* ԱԳ ՕՂԼԱՆ։

ԱԳ ՏԱՂ (*Սպիտակ լեռ*). — *Լեռ Այրարատայ Ռստան և Ուրծ գաւառաց մէջտեղ. նշանաւոր է* Փօզպուռուն *կատարը, բարձր 4410'։ Համանուն ուրիշ լեռ մ'ալ կ'իյնայ Կոգովիտ գաւառի մէջ, Գայլատուայ (Պալըգ կէօլ) լճակի հարաւային կողմը, բարձր 11,000'։ Տես* ԳԵՂ։

ԱԳ ՏԱՂ ՄԱՏԷՆ. — *Գաւառ Անկիւրիոյ նահանգին մէջ. ունի 1 վիճակ, 170 գիւղ և 32,942 բնակիչ, յորոց 5,000ը Հայ են և ունին 2 եկեղեցի և 4 դպրոց 350 աշակերտօք։ Գաւառիս գլխաւոր քաղաքն կը կոչուի նոյն անուամբ և կ'իյնայ Եօզղաթէն գրեթէ 75 հազարամեթր դէպի հարաւային արեւելք։ Նշանաւոր է գաւառիս մէջ* Ագ տաղ *լեռը, որ ունի արծաթահանք բայց 20 տա-*

րի է որ այդ բոլոր անգործութեան դատապարտուած է, որդիքն եղած ծախքերը չըգոցելուն պատճառաւ։

ԱԳ ՏԷՎԷԼԷՐ (Սպիտակ ուղտեր). — Լեռ Այրարատայ Վանանդ գաւառի հարաւային կողմը, բարձր 2,874$^{մ}$ ։

ԱԳ ՏԷՐԷ (Սպիտակ ձոր). — Գիւղ Գանձակ նահանգի Շուշի գաւառի մէջ։ Բն. 124 հոգի Հայ։ — Սիւնեաց Վայոց ձոր (Զանգեզուր) գաւառի մէջ եւ, Սուլեմայ աջ կողմը կայ այս անուամբ այլազգեաց գիւղ մը։

ԱԳՐԱ. — Հռչակաւոր քաղաք անգղիական Հնդկաստանի Պենկալայի գաւառին մէջ, բն. 170,000։ Այժմ թէև չկան քաղաքս Հայեր, բայց ի հնումն կային բաւական թուով՝ որք 1652 թուին կառուցած են մինչև անգամ եկեղեցի մը, որ Հնդկաստանի Հայոց եկեղեցիներէն հնագոյնն է, կան նաև ազգային ննջեցելոց տապանաքարինք։

ԱԳՐԱԿ. — Լեռ Այրարատայ (Բասեն), Գարեղենից հիւսիս արեւմտեան կողմը, Տայոց սահմանածայրը. բարձր 2693$^{մ}$ ։

— Ինչպէս Ագարակ նոյնպէս և Ագրակ անուամբ շատ գիւղեր կան Հայոց երկրի զանազան կողմերը. երեք հատ Տուրուբերան նահանգի Ներքին Պուլանըք, Խոյթ, և Խլաթ նոր վիճակաց մէջ։ Մէկ հատ յԵրզնկա, ուրիշ մը Ակն գաւառի մէջ, և այլուր։

ԱԳՐՃԿՈՅՍ. — Այսպէս կը յիշէ (Բ. բ.) այս անուամբ դաստակերտ մը Այրարատայ Արշարունեաց գաւառին մէջ. շինուած Սմբատ Խոստովանողէն 836 թուին։

ԱԳՓԱՐԱ. — Հայաբնակ գիւղ այժմեան Երեւանու նահանգի (Նոր Պայազիտ) մէջ, բն. 607։

ԱԳ–ՔԷՆՏ. — Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, այժմեան Տարալագեզ վիճակի մէջ, բն. 546 հոգի Թ. Գիւղս ստացուածք է Շուշեցի Պ. Գէորգ Թառումեանցի՝ որ գնած է Քեալպ–ալի պարսիկ խանէն։ Քիչ տարիներ առաջ գետնի տակէն գտնուեցան եկեղեցւոյ աւերակներ, որուն քարերը այլազգի բնակիչք գործածեցին իրենց շինուածոց։ — Սիսական, 163։ Տես ԿԻՐԱԿՈՍԻԿ։



12. Բեւեռարձան Աքեմենեանի։

— կամ ԱՂ–ՔԷՆՏ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց այժմեան Զանգեզուր գաւառի մէջ բն. 365 հոգի։ Նոյնանուն (Սպիտակ Շէն) ուրիշ գիւղ մ'ալ կայ Գանձակ նահանգի Շուշի գաւառի մէջ, բն. 385, ամբողջ Հայ։

ԱԳ ՔԷՐՓԻ կամ ՔԷՕՓՐԻ։ — Գիւղ Բըրգաց Սիւնեաց՝ այժմեան Զանգեզուր գաւառի մէջ, բն. 490 հոգի։ Ուրիշ մ'ալ՝ Գուգարաց այժմեան Փորչալու վիճակին մէջ, բն. 400 հոգի Հայ։

ԱԳՔԻՐՄԱՆ. Տես ԱԽՔԻՐՄԱՆ։

ԱԳ ՕՂԼԱՆ կամ ԱԳ ՍՈՒ. — Հագարու

գետոյն ձախակողմեան գլխաւոր օժանդակներէն մին, Սիւնեաց Ագահէճք գաւառի մէջ։ Երկրորդ անուամբ կան նաև ուրիշ քանի մը վտակներ, զանազան կողմեր։

ԱԴԱ. Տես ԱՏԱ ԹԷՓԷ։

ԱԴԱԼԻԱ. Տես ԱՏԱԼԻԱ։

ԱԴԱՄԱԿԵՐՏ. Տես ՀԱԴԱՄԱԿԵՐՏ։

ԱԴԱՄԱՆՑ ՔԱՐ. — Վասպուրականի Տոսպ գաւառի, Լէզք գիւղի մօտ քարաբլուր մ'է. չի գիտցուիր այսպէս կոչուելուն պատճառը։

ԱԴԱՄԽԱՆ. — Ծառերով և պարտէզներով զարդարուած գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառին մէջ, Երանոս գիւղի հարաւային կողմը։ Բնակիչք ամբողջ Հայ են 804 հոգի, բաժնուած 86 տան. ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը, որոյ հարաւային պատի կից խաչքարի մը վրայ կայ համառօտ արձանագրութիւն մը ՋՂԳ (= 1544) թուականաւ։ Գերեզմանատունն ունի արձանագրութիւններով տապանաքարեր։ Գիւղիս արեւմտեան հիւսիսային կողմը կայ Ս. Սարգիս անունով աւերակ եկեղեցի մը առանց արձանագրութեանց։ Ագամխանի մօտերը Սմբատեան Մեսրոպ արքեպիսկոպոսը 1863ին գտաւ 7 տողով բեւեռաձեւ արձանագրութիւն մը (Թ. 12), և նոյն տարին հրատարակեց Մոսկուայի Համբաւաբերի Ռուսական ամսաթերթի մէջ։ Նոյնը հրատարակեց և մեկնեց Մորգան. լուսանկարեց Կովկասու Հնախօսական Ընկերութիւն և Պ. Սէյս մեկնեց նոյն լուսանկարի վրայէն. առր վրայ ուրիշ գրողներ ևս եղան։ Բեւեռաձեւ արձանագրութեանց ընթերցողներէն ոմանք, պատմական և աշխարհագրական հետաքրքրական տեղեկութիւններ կը գտնեն արձանագրութեանս բովանդակութեան մէջ։ — Սիսական, 53։ Գեղարքունիք, 507–8, 760։

ԱԴԴԱԽ կամ ԱԹԱԽ. — Ցայմաւուրաց մէջ յիշուի այս անուամբ քաղաք մը Բարձր Հայոց Դերջան գաւառի մէջ։ Տես ԱԹԹԱԽ։

ԱԴԻՇ. Տես ԱՏԻՇ։

ԱԴՐԻԱՆԱ. Տես ԱՅԱՍ։

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. Տես ԷՏԻՐՆԷ։

ԱԶԱ, Վերին և Ներքին. — Սիւնեաց Գողթն գաւառի, այժմեան Ագուլիսի վիճակին մէջ են այս իրարու շատ մօտ, երկին գիւղերը, կիլեան գետի եղերքը։ Ներքին Ազայի բնակիչք խառն են Հայ և Թուրք, ընդամենը 306 հոգի։ Իսկ Վերին Ազան զուտ հայաբնակ է 795 հոգւով, բաժնուած 129 տան։ Երկու գիւղերն ալ ունին մէկ մէկ եկեղեցի, բայց նշանաւոր բան մը չունին և խեղճ վիճակի մէջ են։ Բնակիչք երկրագործութեամբ կ'զբաղին, լեզունին խիստ աղաւաղեալ է, մտաւորական կարողութիւննին տկար, բնութեամբ ծոյլ և զանդաղ են, գինի և օղի խիստ շատ կը սիրեն։ Օդը մաքուր և առողջարար է։ Փայտի նուազութեան կամ թէ ըսեմ աղքատութեան պատճառաւ կը վառեն աթար։ Ազայի մէջ աղբիւր չկայ և գետի ջուրը կը գործածեն։ Վերին Ազայի և մերձակայ Տէր գիւղի մէջտեղ, կիլեան գետի վրայ ձգուած է հնդակամար քարաշէն կամուրջ մը, ծախիւք հանգուցեալ Ագուլեցի Աւետիս Տէր Մկրտչեանի։ Այստեղ կայ շիրիմ մը (Թ. 13), որոյ ձեւն և ճարտարապետութիւնն չեն թուիր հայկական։ — Սիսական 346։ Մշակ, Ը. 50։ Փորձ, Բ. բ. 359։

ԱԶԱԴ. — Ամայի գիւղ Այրարատայ Վանանդ (Կարս) գաւառի մէջ, Գանլու գիւղի արեւմտեան և Իւչաէրէ լերան հիւսային կողմը։ Գիւղիս մօտ կայ աղբիւր մը որ ուխտատեղի է Հայոց. կ'ըսեն թէ հոն Ս. Թադէոս առաքելոյն անուամբ վանք մը եղած է և աւերակներն ալ կը ցուցընեն. իսկ աղբիւրը կը վազէ միայն օգոստոսի սկիզբէն մինչև սեպտեմբերի վերջը։ — Այրարատ, 78։

ԱԶԱՑԻ ՇԷՆ կամ ՆՈՐԱՇԷՆ. — Գիւղ Ագուանից Գարդման գաւառի մէջ, կառուցուած սարահարթի վրայ. օդն և ջուրը պատուական, երկիրն արգաւանդ։ Այժմեան բնակչաց նախնիք գաղթած են Խաչեն գաւառի Տաշ–պուլաղ, Առաջաձոր, Խնձորստան և Վարանդայի Նախջուանիկ և Հզորդի գիւղերէն։ Ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին, որ կիսով չափ փայտաշէն է, յորում պահուի Արցախէն բերուած Ս. Լուսաւորչի մասունքը, զետեղուած արծաթեայ ականազարդ խաչի մը մէջ։ Բնակչաց թիւն է գրեթէ 700 հոգի, ամբողջ Հայ, բաժնուած 83 տան։ — Աղուանք, 207։

ԱԶԱԽ կամ ԱԶԱԳ. Թ. ازاق. Գղ. Azof. — Հին ժամանակ վաճառականութեամբ ծաղկած նշանաւոր և ամուր քաղաք Տոն գե-

տին բերանը. որուն գրեթէ 700 տարի առաջ տիրեցին Ճենովացիք, յետոյ Թաթարք, Օսմանցիք, Ղազախք և հուսկ ուրեմն Ռուսք: Այժմ բնակչաց թիւն է 25,000 զանազան ազգերէ: Ի հնումն քաղաքիս մէջ բազմաթիւ էին վաճառական Հայք, որք ունէին նաև եկեղեցի մը Ս. Գրիգորի անուամբ: Հայ տիկին մը Աֆեռաի՝ դուստր Նախարոշենի 1341–2 թուին երկու սոմ (իտ. sommo) դրամով աւետարան մը կը գնէ և կ'ընծայէ «ի Ս. Գրիգոր յԱզախ քաղաքի եկեղեցին,....»: 1715 թուին քաղաքիս մէջ նա-



13. Շիրիմ Ազատի մէջ:

հատակուեցաւ յայլազգեաց, Գողթն գաւառի Բուհրուտ գիւղէն գեղեցկադէմ պատանին Ս. Սահակ, որոյ նահատակութեան պատմութիւնն հրատարակուած է Սիսականի տեղագրութեան 528–30 էջից մէջ:

ԱԶԱԳ կամ ԱԶԱՓ. — Գիւղ Այրարատայ Սաարին Բասեն գաւառի մէջ, Երասխայ ռժանդակ հանդէպ Ազապ–Սու գետակի վրայ, Արտադ գիւղի արևմտեան կողմը: 1829–30 թուին գիւղիս բնակչաց մէկ մասը գաղթեց ի Ռուսիա: Ռուսաց վերջին պատերազմէն յետոյ, տեղւոյս Հայերը առաջնորդութեամբ Թ. Տիգրանեանի, իրենց համազգի Լազարէֆ զօրավարի կարնէն դառնալու ժամանակ (16–26 յունիս, 1878), մեծ ընդունելութիւն ըրին: — Այրարատ, 32:

ԱԶԱՏ. — Հին գիւղ Վայոց ձոր (Սիւնիք) գաւառի մէջ, որուն համար Օրպէլեան Սմբատ իշխանը Նորավանից արձանագրութեան մէջ կ'ըսէ. «Տուաք զԱզատ գիւղն՝ իւր ամէն սահմանովն, շրջակայ լերամբ և դաշտով, սկսեալ ի բարձր գլխաւոր սարէն որ Քոռոակախաղաց կոչի՝ մինչ ի յերեւումն Հողոցմոց և Ճաւաձոր և ի գլուխն Ակռուոյ»: — Սիսական, 177:

— Հին և անուանի գետ Այրարատայ Մազազ–Բասան գաւառի մէջ, որ միջին դարէն ի վեր կը կոչուի Գառնոյ ջուր անուամբ: Գառնոյ ձորոյ ջրաշատ լեռներէ բազմաթիւ վտակներ և աղբիւրներ օձապտոյտ ճամբաներով կը սահին կը թափին գետոյս մէջ: Հանրածանօթ Հ. Ալիշանը գետոյս համար կ'ըսէ. «Թէպէտ և սիւնք և տաշք գետոյն յանձուկս և ի դժուարին վայրս զօղեալք են և աշխատութեամբ իմն գերծանի, բայց ինքն կոչի Ազատ, ոչ գիտեմ վասն արքունի ստանի՞ն մատուակութեանն՝ եթէ յայլ ինչ սակս, այլ հարկ է թէ նշանական ինչ ունիցի պատճառ»: Ցետայ կը յիշէ հին աշխարհագիր մը, որ գետո

յիշած տաճն կը կրկնէ անունն ու կ'ըսէ. «Եւ արդարեւ Ազատ». և այս աշխարհագրօրէն կը նկարագրէ. «Որոյ ակունք բղխեն ի Գեօղ լեռնէ, ի ռախուրակ (սաճաւոր կամ դարուվար) տեղւոյ. որ իջանելով ընդ Գուբին՝ արբուցանէ զամենայն Ոստանն Հայոց, և անցեալ ընդ հարաւ՝ անկանի յԵրասխ»։ Գետոյս գլխաւոր վտակներէն կամ օժանդակներէն մին՝ կը բղխէ Մազազ—Ոստան գաւառի Հիւսիսային արեւելեան կողմէն, որ Գեղայ (Նալթէփէ) լեռնէն իջնելով՝ ձորակի մը մէջէն կ'անցնի Գեղարդայ վանից արեւմտեան կողմէն և կը հոսի ուղիղ դէպի Գառնի. ուրիշ մը՝ արեւելեան հարաւային կողմէն կ'անցնի Պայպուրթ գիւղէն եւ Գառնիի քով կը թափի յԱզատ։ Գետս Գառնիէն անցնելով՝ քանի առաջ կ'երթայ այնչափ աւելի կ'ընդարձակի և գետի կերպարանք առնելով Ազպաշ և Ազճա—Գշլաղ գիւղերու մէջտեղ՝ ձորէն դաշտ կ'ելնէ և կ'իջնէ դէպի արեւմտեան հարաւ ու Զիլխանլու գիւղի մօտ կը թափի յԵրասխ։ Ազպաշի մօտերէն, դաշտի մէջ, Ազատ կը բաժնուի բազմաթիւ առուակներու, որոնք ամբան կը ցամքին։

Մ. Խորենացի Խոսրով Բ՛ի համար կ'ըսէ. «Անտառ մի առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակի»։ Իսկ Բուզանդ աւելի մանրամասն կը նկարագրէ այդ անտառի ընդարձակութիւնն և դիրքը։ Վարդան աշխարհագիրն ալ կը հաստատէ թէ՝ «Ազատ գետ՝ Գառնոյ ջուրն է»։ Պատմագիր մեր Հ. Չամչեան՝ Խորենացւոյ և Ասողկայ խօսքերն ի մի ձուլելով կ'ըսէ. «Սա (Արտաւազդ Բ) կամեցաւ յաւուր միում գնալ յորս վարազուց և ցռուց առ Մասիս լերամբ. և հասեալ ի գետն Ազատ որ և Մեծամօր կոչի, էանց ընդ կամուրջն Արտաշատու»։ Բայց որովհետև մեր հին աշխարհագիրք Ազատ և Մեծամօր տարանձին գետեր կը յիշեն, ուստի և մեզ հաւանական է կարծելն թէ Ազատ գետը չէր կոչուեր միեւնոյն ժամանակ նաև Մեծամօր, այլ իրմէ բաժնուած ճիւղերէն մին, որ կ'անցնէր Արտաշատի մօտէն, և մերձակայ դաշտն ալ իր անուամբ կը կոչուէր Մեծամօրի դաշտ։

փրկչական 600 թուին, երբ Օշականցի Հայ Մօրիկ կայսրն Բիւզանդիոնի, մեր աշխարհը Պարսից և Յունաց մէջ բաժնեց, այդ երկու տէրութեանց սահմանը կը կտրէր սոյն այս Ազատ գետը, ինչպէս կը վկայէ Յովհան կաթողիկոս. «Վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր»։ Գետոյս ձախակողմը դէպի հարաւ և արեւելք տակաւին կ'երեւին անտառային ծառեր։ — Խորենացի, Գ. Ը։ Բուզանդ, Գ. Ը։ Չամչեան Պատմ. հտ. Ա. 352, Բ. 937։ Յովհան կաթ. ԺԷ։ Ասողիկ, Ե. 53։ Հնախ. Հայ. Ա. 148–9։ Այրարատ, 6, 331–32։ Ս. Մարքէն, հտ. Ա. 40–41։

— ԳԻՐԱՆ. — Սրբոյն Վահանայ Գողթնեցւոյ ժամանակ, այսպէս կը կոչուէր Սիւնեաց Գողթն գաւառի հին Բատաձոր ընդարձակ և երկայն հովիտը, որ այժմ կոչուի Պելեւ։

— ՄԱՍԻՍ. — Այս մակդիրով կը կոչուի Մասիս Գողթան երգոց մէջ, երբ Խորենացին պատմելով Արտաւազդ թագաւորի աշխարհին վհի մը մէջ ինկնալն և անհետ ըլլալն, նոյն երգիչներու խօսքերն ի մէջ կը բերէ, որք կ'ըսէին թէ Արտաւազդայ գլուխն եկաւ իր հօր Արտաշէս Բ՛ի անէծքը, որ մահուան ժամանակ ըսաւ. «Եթէ դու յորս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս, անդ կացցես և զլոյս մի տեսցես»։

Մեծն Տիգրան երբ Մարաց յաղթեց, Մասիս լերան շրջակաները բնակեցուց անոնց գերիները, յորս կային ոչ սակաւ ազնուականք և թագաւորազունք. և որովհետեւ մեր լեզուով Ազատ կը կոչուէին արքայազունք և ազնուականք, ուստի և Գողթան բանաստեղծները, այս մականուամբ կոչեցին նաև այդ ազնուականաց բնակութեան վայրերը։ Թովմա արծրունին ևս կը յիշէ այս մականունը (Դ. 11). «Ընդդէմ նայելով լերանց Այրարատեան Ազատն Մասեաց, որ Արտաւազդն Արտաշէսեան քարավիժեալ»։ Շնորհալին ալ վիպաց մէջ նոյն Արտաւազդայ համար կ'ըսէ.

Քաջաց տանն զնա կալեալ,
ՅԱզատ Մասեաց լերին տարեալ։

Տես ՄԱՍԻՍ։ — Խորեն. պատմ. Բ. ԿԱ։ Հնախ. Հայ. հտ. Ա. 61։

— ՔԱՂԱՔ. — *Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ հին քաղաք մ՚էր, այժմեան Նոր-Պայազիտ քաղաքէն 7 վերստ հեռու դէպի հիւսիս, Հայրավանքի մօտ, ծովեզերքի վրայ։ Տանց, պանդոկաց, կրպակներու, կարաւանատներու և այլ շինուածոց աճայլին աւերակներ տարածուած են դաշտի երեսը։ Այս քաղաքի ո՞րբ և որո՞ւ ձեռքով հիմնուած ըլլալն անծանօթ է, և հետազօտութեան ու քննութեան կարօտ։ Աւերակաց մէջ դեռ կը տեսնուին եկեղեցիներու հետքեր և արձանագրութիւններ ունեցող խաչարձաններ և տապանաքարեր։ Սիմէոն կաթողիկոս կը յիշէ 1766 թուին* Ազատ Քաղաք *անուամբ գիւղ մը Հայրավանից վիճակներէն, որ նոյն ժամանակ չէն է եղեր։ Մասեաց Աղաւնի ամսագիրը (1858, էջ 59–63) քաղաքիս համար կը գրէ. «Կոթ գիւղաքաղաքն է տեղին Կնիք անուանեալ քաղաքին, զոր յետ Վասակայ՝ իշխանք Սիւնեաց շինեցին փոխանակ* Ազատ Քաղաքին. *զոր աւերեալ էին ուխտապահ նախարարք Հայոց, վասն լինելոյ անդ ատրուշանի կրակի»։*

— *Սոյն գաւառի մէջ ևս Կեօտաքպուլաղ գիւղի հարաւակողմը 4–5 վերստ հեռաւորութեամբ կան աւերակներ, որոնց տեղացիք* Ազատ Քաղաք *կ՚անուանեն։ — Սիսական, 40, 66։ Գեղարքունի, 33, 438–47։*

ԱՁԱՏԱԿ *կամ* ԱՁԱՏԵԿ. — *Մեծ և գեղեցկադիր գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, Մարտիրոսի ձորահովտի մէջ, Բոռ գիւղի արեւմտեան հարաւային կողմը, վտակի մը ազբեր քով։ Բնակիչք ամբողջ Հայ են 755 հոգի, բաժնուած 75 տան։ Գաղթած են Պարսից բաժնէն. ունին եկեղեցի մը Ս. Ստեփաննոս Նախավկայի անուամբ, հանդերձ նոր (1677) արձանագրութիւններով։ — Սիսական, 178։*

ԱՁԱՓ. *Տես* ԱՁԱՊ։

ԱՁԷՐՊԷՅՃԱՆ. *Տես* ԱՏՐՊԱՏԱԿԱՆ։

ԱՁԻՁԻԷ. — *Գլխաւոր քաղաք համանուն գաւառին, Սեբաստիոյ նահանգին մէջ. բն. 1,600 յորոց 400ը Հայ են։ Ամբողջ գաւառին մէջ կան գրեթէ 3,000 Հայ։*

— *Կան նաև ուրիշ Ազիզիէ գաւառներ, յորս սակաւաթիւ են Հայք։*

ԱՁԻՐ. — *Նոր գաւառ Կիլիկիոյ, Ադանայի նահանգին մէջ։*

ԱՁԴՈՐ, ԱԾԴՈՐ *կամ* ԱՍԿՈՒՐԷԹ. Վ. Ածխուէրի. Թ. ازغور. Ռ. Ацхуръ. — *Վաղեմի բերդաքաղաք Տայոց* Ազորդ *գաւառի, այժմ գլխաւոր քաղաք կամ լաւ ևս աւան համանուն վիճակին (Թ. 14). կ՚ինկնայ Ախալցխայի հիւսիսային արեւելեան կողմը, 20 վերստ հեռաւորութեամբ։ Կառուցուած է Կուր գետոյն աջակողմը, բարձր և պաշտպանութեան յարմար և միանգամայն գեղեցիկ դիրքով։ Նշանաւոր է ժայռի վրայ կառուցուած ամուր բերդը, որ զանազան ժամանակաց մէջ, շատ անգամ դիմադրած է թշնամեաց ուժերուն. տակաւին կը տեսնուին ատամնաձեւ վերջացած պարիսպքն, հին շէնքերու մնացորդներ, վրացերէն արձանագրութեանց բեկորներ և գետէն վեր ջուր տանելու համար քարուկիր ճամբայ մը։ Բերդաքաղաքս ոչ միայն օտար այլ և մեր պատմիչներէն կը յիշուի Ժ. դարու սկիզբը,* Ասկուրէթ *կամ* Սակուրէթ *կոչմամբ. այն ժամանակները, ըստ Յոհան կաթողիկոսի, հոս եկաւ ապաւինելու մեր Բագրատունի քաջ թագաւորն Աշոտ Երկաթ, իր Աբաս եղբօրը և 250 կտրիճներու հետ, և յարձակելով թշնամեաց վրայ, հալածեց և կոտորեց եւ դարձուց երկու դաւաճան Գնունի եղբարք և 4000 մարդ։ Նոյն դարու վերջերը Տայոց Դաւիթ կիւրապաղատը, այս քաղաքս Ափխազաց Բագարատ թագաւորէն առնելով, ընծայեց մեր Սմբատ Տիեզերակալ թագաւորին, ի փոխարէն իրեն բրած օգնութեան։*

*Շատ անուանի է տեղւոյս Տիրամօր ուխտատեղին. ըստ աւանդութեան Վրաց, Անդրէաս Առաքեալը հոս բերած է Ս. Աստուածածնի պատկեր մը, և հրաշքներ ու բժշկութիւններ ընելով՝ տեղւոյս կռատունը կործաներ, և եկեղեցի մը շինելով, պատկերը հոն դրեր է։ Կ՚ըսեն նաև, թէ մինչև Հերակլ կայսրն իսկ ուխտի գալով հոս, և քակելով հին եկեղեցին (Վր. Ծուշկ—Էկլեսիա) նոր, մեծ և փառաւոր եկեղեցի մը շիներ է, որ և ժամանակ մը Վրաստանի Սամցխէ գաւառի երկոտասան եպիսկոպոսանիստ աթոռներէն մին էր։ Եկեղեցիս երեքտասաներորդ դարու վերջերը՝ մեծ երկրաշարժէ մը*

կործանուելով, կ'ըսեն, գմբէթն իջեր և հովանիի պէս ծածկեր է սուրբ պատկերը։ Վերստին կանգներ են եկեղեցին և շատ անգամներ անդւոյս իշխողք՝ ծանր ծանր գնով ախտական և հրաշագործ պատկերս գերութենէ կամ գողութենէ դարձուցեր են իր տեղը, մինչև ԺԶ դարու վերջը։ Յետոյ այլազգեաց ձեռքը անցնելով քաղաքս, եկեղեցին կործանուեր է, պատկերն ալ այժմ կը գտնուի Գելաթի վանքին մէջ։ Կիսակործան եկեղեցւոյս աւերակաց վրայ կը տեսնուին ճարտարապետութեան և նկարչութեան գեղեցիկ նշաններ. բայց արձանագրութեանց ամենևին հետք մը չկայ։ Պրոսէ՝ քաղաքս այցելած ժամանակ, տեսած է եկեղեցւոյս քարերէն գիր և ցան գործածուած շատ տներու պատերու մէջ։

Վրաց Հերակլ թագաւորը 1770ին Ռուսաց նիզակակցութեամբ յաղթեց Թրքաց՝ քաղաքիս պարսպաց տակ։ 1828ին երբ Ռուսք Ախալցխայի առին, Ազգորն ալ իր շրջակայքով անոր վիճակներէն մին եղաւ։ Ղրիմու պատերազմի ժամանակ, ահաւոր պատերազմի տեսարան մը բացուած էր նաև հոս. օսմանեան բանակն յարձակելով Ռուսաց վրայ, չկարողացաւ դիմադրել և շատ կորուստով յաղթուած ետ դարձաւ։ Այժմ (1893) բերդաքաղաքիս Հայ բնակիչք, որոց թիւն է 305 հոգի, կը զբաղին վաճառականութեամբ. միւս բնակիչք Վրացի են 1272 հոգի։ Բոլոր Ազգորի վիճակի մէջ գտնուած Հայոց թիւն է 1818 հոգի, բաժնուած 178 տան։ Իսկ ընդհանուր Հայ, Վրացի, Թուրք, և ուրիշ ազգաց թիւն՝ կը հասնի 14,303 հոգւոյ, բաժնուած 1709 տան։ — Նշմարք Հայկ. Ա. Պր. 13—4։ Սո. Հ. Հայ. 336—7։ Չամչեան Պատմ. հտ. Բ. 870։ Ս. Մարթէն, հտ. Ա. 84։ Պրոսէ, Բ. Պր. 117—18։ *Le Tour du Monde*, XLVII, 404։

ԱԶՆԱԲԵՐԴ. — Լեռ Սիւնեաց Արևիք և Գողթն գաւառաց մէջ. 8900' բարձրութեամբ, ուսկից կը բղխէ Գետամայ ջուրը։

— Սիւնեաց Նախիջեւան գաւառի Խոզ վիճակի մէջ, համանուն գետակի երկու վըտակաց միանալու տեղը գիւղ մ'է, որուն այլազգիք Ազնապուրտ կ'ըսեն։ Հայկական անունը և հարաւակողմը ցրուած աւերակները կը ցուցընեն թէ հին ժամանակ անուանի բերդաւոր աւան մը եղած է, թէ և այս մասին մեր պատմչաց մօտ ամենևին յիշատակութեան մը չենք հանդիպիր։

Ճենովայի Հայոց Ս. Բարդուղիմէոս եկեղեցւոյն մէջ, հետևեալ սխալագիր դամբա-



14. Ազդոր։

նական արձանագրութիւնն կայ 1687 տարւոյն, յորմէ կը հասկցուի՝ թէ այս գիւղը նոյն ժամանակ կը պատկանէր Գողթն գաւառի.

Այս է տապան Հայրապետին՝
Որ է որդի Անանիային.
Սա յերկրէն է Գողթան տանին.
Եւ ի գեղջէ Ըզնայբերթին. և այլն։

Ազնաբերդի բնակչաց մեծամասնութիւնն կը կազմեն Հայք 1162 հոգի. բաժնուած 94 տան. իսկ այլազգիք են միայն 188 հոգի։

ԱԶՆԱՄԻՐ. — Ամայի գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի Բստաձոր (Պէլեւ) վիճակի մէջ։

ԱԶՆՈՒԱՁՈՐ. — Աղձնիք Նահանգի հին

գաւառներէն մին ։ Այժմ ծանօթ է աւելի Կիւզէլ Տէրէ անուամբ, որ Բաղէշի հիւսիսային արեւելեան կողմը, $3^{1}/_{2}$ ժամ հեռաւորութեամբ գեղեցիկ և ընդարձակ դաշտ մ՚է։ Այս դաշտի մէջ կան առ առաւելն իրարմէ $2^{1}/_{2}$ ժամ հեռաւորութեամբ 11 Հայ և 4 Քիւրդ գեղեր։ Գաւառակիս բնակիչք խիստ խեղճ վիճակ մ՚ունին. ոչ միայն աղքատութեան մէջ են այլ և աղքատութեան և անխիղճ հարստահարութեանց տակ ընկճուած։

— Այս անուամբ ձորակ մը կայ Սիւնեաց Գեղարքունի գաւառի Կոթայ վիճակին մէջ։ Անուանս թարգմանութեամբ յայլազգեաց Կիւզէլ Տէրէ կը կոչուի ձորոյս մէջէն անցնող գետակն, որոյ մէկ ճիւղն կը բղխէ համանուն Կիւզէլ Տէրէ (Ագնոշանոր) լեռնէն ։ Տես ԿԻՒԶԷԼ ՏԷՐԷ։

ԱԶՈՐԴ կամ ԱԶՈՐԴԱՓՈՐ. — Տայոց աշխարհի հին գաւառներէն մին, որոյ կը համապատասխանեն այժմ Նարիման և Թորթում։

ԱԶՈՒԽ. — Գիւղ Արցախի Փանծկանք գաւառի, ձորահովտի մը մէջ. բնակչաց մէկ մասը գաղթած է Ղարատաղէն։ Օդը ամրան տօթագին է, բայց ջուրն պատուական ։ Ունին եկեղեցի մը քարուկիր՝ Ս. Աստուածածին, որոյ երկայնութիւնն է 14 մետր 70 հազրմ. և լայնութիւնն 8 մետր 17 հազրմ։ Գիւղս ունի 140 տուն և 810 բն։

ԱԶՈՒՇԷՆ (Ազատաշէն). — Կարնոյ գիւղերէն մին. բնակիչք Թուրք են 15—20 տուն։

ԱԶՏՐՎԱՆՑ. — Գիւղ Տայոց Ասեացփոր գաւառի, այժմեան Բերդագրակ վիճակի մէջ. որոյ Հայ բնակիչք դարուս սկիզբը տաճկացան։

ԱԶՐՈՒՆ. Տես ԱՐԶՆ։

ԱԹԱԽ. Տես ԱԴԽԱԽ։

ԱԹԱՆ. — Գիւղ Գուգարաց, այժմեան Լօռի գաւառի մէջ, բն. 193, ամբողջ Հայ։

ԱԹԱՆԱԳԻՆԵԱՑ Վ. Տես ԱՆԹԱՆԵԱ։

ԱԹԱՆԱՆՑ. — Գիւղ Վասպուրականի, Վանայ ծովակի արեւելեան կողմը, Արտամետի և Ոստանայ մէջտեղերը։ Բնակիչք ամբողջ Հայ են գրեթէ 50 տուն. ունին հին եկեղեցի մը։ Գիւղիս հարաւային արեւելակողմն ձորակի մը մէջ, Աւեր վանք կոչուած աւերակ մը կայ, ուր կը տեսնուին եկեղեցւոյ հիմունք և 3—4 տապանաքարինք, որոց արձանագրութիւնք անընթեռնլի են։

ԱԹԷՆՔ. Գղ. ATHÈNES. — Մայրաքաղաք Յունաստանի (Թ. 15). ի հնումն կեդրոն ըլլալով արուեստից և գիտութեանց շատ հռչակաւոր եղած է։ Պատմութիւնն մեզ կը յայտնէ թէ շատ Հայկազունք Դ-Ե դարէն սկսեալ ինչպէս ուրիշ քաղաքներ, նոյնպէս և Աթէնք գալով, ուսմանց և գիտութեանց մէջ կը զարգանային։ Նշանաւոր է Գրիգորի աստուածա-



15. Աթէնք։

բանի Բարսղի մահուան արձանականին քսաներորդ ճառի մէջ բսածն, թէ ինչպէս Բարսղէն առաջ Աթէնք եկած Հայկազուններէն ոմանք կը վիճէին ընդ նմա։ Նոյնը կերպով մը կը յիշէ նաև Վանական վարդապետը. «Օրէն էր ուսանել յԱթէնս լաւ կալով և ի հնազանդութեան. այլ զմերայն ամբաստանեն՝ թէ սակաւ ուսանին, և խօսելով երկար գիմանան։ Զայս Աստուածաբանն հռչակեցոյց ի Բարսղի արձանականն»։ Հռչակաւոր համգիտացած է ի ճարտասանութեան, չորրորդ դարու մէջ Պրոյերեսիոս կամ Պարոյր Հայկազն, որ ըստ վկայութեան Եւնաբիոսի, այնչափ անուանի եղաւ, որ ինչուան արձանն ալ կանգնեցին Հռովմայ մէջ, մականուն

*տալով իրեն Թագաւոր ձարտասանութեան։ Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ աշակերտներէն ալ շատեր եկած են յԱթէնս, յորս ամենէն աւելի անուն հանած է Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն։*

*Աթէնքի բնակչաց թիւն է 115,000։ Քաղաքիս և Պիրէոնի մէջ գտնուած Հայոց թիւն է 150, բաժնուած 30 ընտանեաց։ Վերջին դէպքերէն առաջ հոս կային հազիւ 50–60 հոգի Հայ։ Քիչ մը ժամանակ հոս տպուեցաւ Հնչակ թերթը, այժմ ևս կը տպուի Միութիւն ամսաթերթը։*

*Քաղաքիս Հայերը չունին ոչ եկեղեցի և ոչ քահանայ, նիւթապէս ալ աղքատ են և հազիւ ապրուստնին կը ճարեն։*

ԱԹԹԱԽ. — *Ստեփանոս Ասողիկ իր ժամանակ Չորրորդ Հայոց մէջ պատահած երկրաշարժին վրայ գրած տաղին (Գ. ԼԶ), յիշէ նաև անունս հետևեալ կերպով. «Խարխալեալ Ճապաղջուր բերդին Գիլաթայ,* Աթթախայ *և Ամթայ, և ամենայն քարուկիր գեղեցկաշէն եկեղեցեաց և ապարանից»։*

ԱԹ–ԹԱՃ (*Քարաճի*). — *Ամայի գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Այրիճէ գետակի եզերքը. այսպէս կոչուած է, անշուշտ գետեզերքը, Արղըլապարի ստորոտը գտնուած քարէ ձիարձանի համար։ — Տ. Աշտիքեան Ն. 39։*

ԱԹԽՈՅՔ. — *Գիւղս կը յիշուի Սիւնեաց (Բաղք) եկեղեցւոյ հարկատուաց հին ցուցակի մէջ։*

ԱԹԴԷՔ. — *Սիւնեաց եկեղեցւոյ հարկատու գիւղ, Ծղուկ գաւառի մէջ (Հին ցուցակ)։*

ԱԹՄԱ. — *Թրքաբնակ գիւղ Ակն գաւառի մէջ։ Այս անուամբ վանք մը Հայ հոռոմոց, յիշուի* ՌԼԱ (*= 1582*) *թուին գրուած ժամագրքի մը յիշատակարանին մէջ։*

ԱԹՇԻ. — *փայտակարանի հին գաւառներէն մին։*

ԱԹՈՌԻԿ. — *Գիւղատեղի Գուգարաց, Հաղբատայ քով, Կայան բերդի գլխոց, Պղնձահանքի սահմանին մէջ։ Ասոր մօտ բլրակի մը վրայ կառուցուած է* Անդրէի *զօրավարի մենարանը, որ այժմ բոլորովին խարխլած է։ Մենարանիս վրայ հետևեալը կը գրէ Կիրակոս* (ԽԱ). *«Առեալ զայս գիր հաւանութեան իմաստնոյն Վարդանայ՝ առաքէ առ կաթուղիկոսն Կոստանդին ի Կլայն Հռոմկլայն. և ինքն եկեալ ի Կայենոյ մենարանն իւր, զոր Ս.* Անդրէ *կոչէին՝ հանդէպ անառիկ բերդին Կայենոյ, և անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա վարդապետական բանին»։*

*Սոյն այս Վարդան վարդապետը վանքս մէջ խաղաղական մահուամբ կը վախճանի, որուն վրայ կանգնուած են հոյաձև խաչքար և փորագրուած են մահուան թուականը* ՉԻԲ (*= 1273*)*։ Այստեղէն դէպի ձորակը տարածուած կը տեսնուին Աթոռիկ գիւղի տխուր աւերակները։ — Արարատ Ամսագիր, Ի. 306–7։*

ԱԺԳԱԿ. — *Սիւնեաց եկեղեցւոյ հարկատու հին գիւղերէն մին (Հին ցուցակ)։*

ԱԺԴԱՆԱԿԱՆ. — Ար. اجدنقان (*Էժտանեքան*). — *Անունս ծանօթ է մեզ Խորենացւոյ պատմութենէն. Աժդահակայ սպանմանէն վերջ, Տիգրան Հայկազն Մարաց գերիները մէկ մասին ալ բնակութեան վայր սահմանեց այստեղէն սկսեալ մինչև Նախճաւան. «Իսկ ի միւս կողմանէ գետոյն զբալոր դաշտն, որոյ գլուխն* Աժդանական, *մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանայ»։ Խորենացւոյ սոյն յիշատակութենէն դժուար պիտի ըլլար ստուգել, թէ որ նահանգի և ինչ գաւառի մէջ կ'իյնար* Աժդանական, *եթէ արաբացի պատմիչն Իւն Խալլիլ, չյիշէր, թէ Թրքաց ԺԲ՞րդ դարու մեծ աշխարհակալ Սալահէտտինի հայրն՝ ծնած էր* յԷճտանէքան *կամ ըստ մեզ* Աժդանական, *որ աւան կամ արուարձան մ'էր Դուինայ, Այրարատայ Մազազ–Ոստան գաւառի մէջ։ — Խոր. պատմ. Ա. Լ. Այրարատ, 414։*

ԱԺՏԷՐԽԱՆ. *Տես* ԱՍՏՐԱԽԱՆ։

ԱԼԱԳԱՐԱ. — *Գիւղ Այրարատայ Ծաղկոտն (Բայազիտ) գաւառի մէջ։*

ԱԼԱԳԻԼԻՍԱ. — *Գիւղ Յունաց 20 տունէ ձևացած, Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Սեփ լերան ստորոտը վտակի մը մօտ։*

ԱԼԱ ԳԻԼԻՍԷ. — *Գիւղ Սեբաստիոյ՝ արևելեան կողմ, բնակիչք Հայ 700 հոգի. ունին եկեղեցի մը՝ Ս. Մինաս և երկսեռ վարժարան մը՝ Նարեկեան։*

— *կամ* ԱԼԱՃԱ ԳԻԼԻՍԷ. — *Գիւղ Սարին Բասենի (Այրարատ) մէջ, Արասոյ գե-*

տոյն եզերքը. այսպէս կոչուած է, հին օրուցան եկեղեցւոյն կարմիր ու ճերմակ գոյներով քարերուն համար։ Եկեղեցիս որ վերջին (1878) պատերազմի ժամանակ քիչ մը աւրուեցաւ, այժմ դարձած է Քրդաց մարագ։ — Այրարատ, 33։

ԱԼԱԳԻԼ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շարուր (Տարալաղըզ) գաւառի մէջ. բն. 665։

ԱԼԱԶԱՆ. — Գետ Աղուանից, ձախակողմեան օժանդակ Կուրայ։

ԱԼԱԿԵԱԶ կամ ԵՂԵԳԵԱՑ ԳԵՏ. — Գետակ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։ Տես ԵՂԵԳԻՔ։

ԱԼԱԿԷԶ. Տես ԱՐԱԳԱԾ։

ԱԼԱԿԷՕԶ–ՄԱԶՐԱ. — Գիւղ Սիւնեաց, այժմեան Նախիջեւան գաւառի մէջ. բնակիչք 372 հոգի, բաժնուած 65 տան։

ԱԼԱԿԷՕԼ. Տես ԱԼԼԱՀԿԷՕԼ։

ԱԼԱՀԻԶԱՆ, ԱՐԱՀԵԶ. — Գիւղ Տայոց աշխարհի մէջ, հայրենիք Գիտ կաթողիկոսի։

ԱԼԱՃԱ. — Այս անուամբ երկու լեռ կայ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ։ Մեծ–Ալաճան կ'ինկնայ Անւոյ արեւմտեան կողմը, և բարձր է 2098մ, իսկ փոքր–Ալաճան կ'ինկնայ Տիկորի հիւսիսային կողմը։

— կամ ԱԼԱՃԱԼԸ. — Ըստ Վ. Լանկլուայի գիւղ Լեռնային Կիլիկիոյ, յորում կայ բիւզանդական եկեղեցւոյ մը (Թ. 16) չքնաղ մնացորդներ։ Մերձաւոր լերան քարաժայռի վրայ, տեսած է նոյն ուղեւորը արձանաքանդակ մը (Թ. 17), խորհրդական նշանագրերով. որ խիստ հին ժամանակի և անծանօթ ազգի կը վերաբերի։ — Սիսուան, 134։ — Այս անուամբ Թրքաբնակ գիւղ մ'ալ կայ Կարնոյ մօտ։ Տես ԱՐՁՈՅ ԱՌԻՃ։

ԱԼԱՃԱԽԱՆ. — Բերդագիւղ և նահիէ Սեբաստիոյ կուսակալութեան մէջ։

ԱԼԱՄԱՆ կամ ԱԼԷՄ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ, Ալաճա լերան հարաւային ստորոտը, գեղեցիկ դիրք ունի. այժմ Ալէմ կը կոչուի և բնակիչքն են Պարսիկք։ Գիւղիս մէջ է աշխարհիս ամենահին եկեղեցին, շինուած



16. Աւերակ եկեղեցի Ալաճայի մէջ։

Քրիստոսի 636–7 թուականին, ինչպէս կը ցուցընէ եկեղեցւոյ ճակատին վրայի մեծատառ արձանագրութիւնը։ Մեծութեամբ չափաւոր է, քառաթև և գմբեթաւոր։ Ս. Անանէի անուամբ կը կոչուի եղեր եկեղեցիս ինչպէս յայտ է դրան վրայի արձանագրութեննէն, զոր գրած է Աշոտ Ողորմածի դուստրն Սոփի թագուհին Հայոց և Վրաց։ — Շիրակ, 125։

ԱԼԱՄԵՆՑ ԳՈՄԵՐ. — *Հայաբնակ գիւղ Արցախի Վարանդա գաւառի մէջ. բն. 186, բաժնուած 32 տան։ Հոս ծնուած է բանաստեղծ Պետրոս Մատաթեանցը, անոր համար գիւղս կը կոչուի նաև Մատաթ–քէնտ։*

ԱԼԱՄԵՔ. — *Փոքրիկ գիւղ Բաղէշի հիւսիսային կողմը, Ռահվայի մէջ։ Գիւղիս անուամբ Աշամենց խան իջեւան մը կայ, Դատվան տանող ճանապարհի վրայ։*

ԱԼԱՄԼՈՒ. — *Լեռ Սիւնեաց Բաղք գաւառի մէջ։*

ԱԼԱՄՈՆԻԿ. — *Հայաբնակ գիւղ Շապին Գարահիսարու։ Տես* ԱԼԱՄԱՆԵԱԿ։

ԱԼԱՅԱ. Հն. ԿՈՐԱԿԵՍԻՈՆ. Գղ. ALAYA, Թ. آلايا, Լտ. CORACESIUM, Յն. Κορακήσιον. — *Ծովային Կիլիկիոյ գեղեցկադիր և ամուր քաղաքաց մին է աս, անուանի հնութեամբն, կառուցուած համանուն հրուանդանի վրայ (Թ. 18)։ Հին պատմութեան մէջ ծանօթ է* Կորակեսիոն *անուամբ։ Պոֆորթ գեղեցիկ կերպով կը նկարագրէ քաղաքս, ընական ամրոց մը համարելով իր անառիկ և պատսպարեալ դիրքը, որոյ բազմաթիւ կիսակործան աշտարակներն և պարիսպները ապացոյց են, թէ հին իշխեցողք եւ ջանացած են իրենց անմատչելի ապաստանարան յարդարել զայն։ Բարձրը, լեռան վրայ, հռչակաւոր Դիոդոր Տրիփոն՝ ծովահէնից պետը, կառուցանել տուած էր ամրոց մը, իր աւարը և կողոպուտը հոն ապահովելու համար։ Լեռան շուրջը տեղ տեղ դեռ կը նշմարուին Պոմպէոսէն կործանուած այդ ամրոցի մնացորդները։*



17 · *Արձանաքանդակ Ալանյի մօտ։*

*Մեծին Լեւոնի թագաւորութեան ժամանակ՝* Կալոնոռոս *անուամբ կը յիշուի բերդաքաղաքս,* Սիր Ատամայ աշխարհի *մէջ։* Սիր Ատանը *կամ* Ատոմը *Լեւոնի Պայլն, դաստիարակ էր նաև իր պայազատին, Զապէլ բամբշան։ Սիր Ատանը դեռ չվախճանած, իր թոռն կամ որդին* Կիւռ Վարդը *դըրած էր տէր* Կալոնոռոսի. *Լեւոնի ու Սիր Ատանի մահէն վերջ, դեռ Հեթումի արքայական գահը չբարձրացած, մինչ խռովութեան մէջ էր իշխանութիւնը, յարմար ժամանակ գտնելով Իկոնիոնի նոր սուլտանն Ալայէտտին, յափշտակեց զայն։ Ահա հետեւեալ կերպով կը պատմէ մեզ Սմբատ պատմիչ. « Էառ (Ալայէտտին)* յԱտոմայ *թոռնէն՝ ի* Կիւռ Վարդէն՝ *զբերդն* Կալոնոռոս, *և զգաւառ նորա ի կնութիւն՝ յուր կամաց, և վասն քրիստոնէութեանն՝ չհանգեաւ ի հետն՝ աղջիկն »։ Ալայէտտինի բերդիս տիրելէն վերջ, իր անուան առաջին երկու վանկերու հնչմամբ կոչուեր է* Ալայա։

*Թէ Երբ սեփականութիւն դարձած է Հայոց բերդաքաղաքս, հանդերձ իր շրջակայ գաւառաւ, պատմութիւնն անստոյգ կը թողու, ինչպէս նաև այս մասին տիրող Սիր Ատանայ ինչ ազգի վերաբերիլն։ Եւրոպացի հայագէտներէն ոմանք թէև կը համարին որ ըլլայ փռանկ ոմն (Ադամ) խաչակրութեամբ այս կողմերն եկած, բայց մեր Կիրակոս պատմչի վկայութենէն թէ՝ « էր Հոռոմ դաւանութեամբ » կը յայտնուի, որ ոչ լատին էր և ոչ յոյն, այլ նոյն ժամանակի յունադէս հայերէն։ Իւր* Ատամ *անունն ալ ծագեալ է անշուշտ յանուանէններէն, զի ինչ-*

պէս վերը տեսանք, Սմբատ պատմիչ ուղիղ հայկական անուամբ զինքը կ'անուանէ Ալաոմ ։

Ըստ կարծեաց ոմանց, հաւանական է որ Սիր Աստմի նախնիք՝ Աստմեանները, Ռուբինեաններէն առաջ կը տիրէին այս կողմանց, հպատակելով յոյն կայսերաց, ինչպէս էին նաև Ապլղարիպեանք Տարսոնի մէջ ։ Սեներքերիմ արծրունւոյ այն պայազատներն էին անշուշտ Աստմայ նախնիք, որք յետ Վասպուրականէն գաղթելու ի Սեբաստիա, ընդունեցան Յունաց դաւանութիւնը, և այս կողմերը գալով, փոխանակ իրենց սիրելի Վանին և Բզնունեաց ծովակի կապուտակ ալեաց, այս կարկառակոյտ գագաթներէն կը դիտէին համատարած Միջերկրականին տարածքը. և ինչպիսի՛ մտածութեամբք ։

Իպն Պաթութա արաբացի անուանի աշխարհագիր ուղևորը, 1340ին տեսնելով քաղաքս, աշխարհիս գեղեցկագոյն մասն կը համարի և բնակչաց հետեւեալ ածականները կը յատկացընէ. կայտառ, գեղեցիկ, մաքրազգեստ, բարեբարոյ, հիւրասէր, և այլն ։ Կը յայտնէ թէ նոյն ժամանակ քաղաքս գլխաւոր վաճառքի նիւթն էր փայտը, և թէ բազմաթիւ նաւեր կու գային տատ Աղեքսանդրիայէն, Գահիրէէն և յԱսորւոց ։ ԺԳ դարուն և անկէց առաջ ալ, Ալայայի նաւահանգիստ միշտ յաճախած են իտալացի վաճառականաց նաւեր, յորս նշանաւոր են Վենետկեցիք, Ճենովացիք և Լոմպարտացիք, կու գային նաև Կաղալանք և Մայոլիկացիք Սպանիոյ ։ Ջանազան իտալական անուամբք կոչուած է բերդաքաղաքս և իւր մերձակայ վայրերէն ոմանք մինչև ԺԵ դար, և անշուշտ առ ժամանակ մի տիրած են սոքա այս կողմերուն ։ Իտալացիք իրենց բոլոր ուժը թափեցին 1471–3ին միջոց, ուզելով գրաւել ծովային Կիլիկիան, և Գարամանցիները զօրացընել ընդդէմ Օսմանեանց. բայց երբ վերջինքս Պարսից յաղթեցին, այն ժամանակ եա քաշուեցան ։ Կէտիկ–Ահմէտ փաշան (1471ին) եկաւ քաղաքիս վրայ, Իկոնիոնի սուլտանաց պայազատ Կըրճ–Արսլանը, որ կ'իշխէր քաղաքին անձնատուր ըլլալով, տարուեցաւ Օսմանեանց սուլտանին ։ Նոյն ժամանակ գերի տարուեցան ի Կ. Պոլիս նաև Կիպրոսի Յակոբ թագաւորէն, քաղաքին պաշտպանութեան համար ղրկուած երեք հարիւր բադիստրաւորները ։

Ինչպէս ըսինք, քաղաքիս դիրքը սքանչելի է և նկարչական (թ. 19, 20), տները նարօրինակ զրիւք իրարմէ վեր կը բարձրանան




18 · Ալայա քաղաքի յատակածը և ծրուանգածը ։

մինչև քարաժայռի գագաթը, ծովու երեսէն բարձր 117 մետր ։ Ժայռի ստորոտը, ծովու եզերքը, կայ բաւական մեծկակ այր մը. աւանդութիւնը կ'ըսէ, թէ այրիս մէջ Կիլիկեան ծովահէնք, կը պահէին իրենց գանձը, և նոյն տեղը գրամ ևս կը հատանէին. զննութեան կարօտ այս այրը կարելի է մանել նաւակով մը ։ Անտմուրի կողմը նայող ժայռի վըրայ, կայ երեսուն տարի, որ յայտնուեցան Աստղկան մեհենի մը մնացորդները ի ձեռն Աստրիացի հնախօս Մորովաքի կոմսին, որ նոյն աստուածուհւոյն արձան մը, գաղտագողի նոյն տեղէն փոխադրած է ի Վիեննա ։

Քաղաքս որ այժմ մերձաւորապէս ունի

*5000 բնակիչք Թուրք և Յոյն, երկթաղով կ'ընդարձակի և կը տարածուի դէպ ի հարաւ դաշտի մէջ, ուր կան գեղեցիկ և մեծ պարտէզներ, զարդարուած՝ նարնջի, կիտրոնի և արմաւի ծառերով և այգիներով։ Շինուածոց մէջ չկայ նշանաւոր ինչ, փողոցներն նեղ են և ծուռումուռ։ Ալայա զուրկ է ըմպելի ջրոյ աղբիւրներէ, ուստի թէ՛ խմելու և թէ այլ պիտոյից համար կը գործածեն ջրամբարներու ջուր։ Թուրքերն ունին 32 մզկիթ մեծ և փոքր և 10 դպրոց 250 աշակերտօք. իսկ Յոյնք 5 եկեղեցի և 2 դպրոց 100 աշակերտօք։ Նաւահանգստի մօտ կայ լայնակող ութանկիւնի աշտարակ մը Գզըլ—գուլէ անուամբ, 30 մետր տրամագծով և 30 մետր բարձրութեամբ (Թ. 21)։ Քաղաքիս նաւահանգիստը բաւական բանուկ է. Անգղիոյ, Աւստրա—Հունգարիոյ, Յունաց և Օսմանեանց վաճառքի նաւեր կը յաճախեն տատ. տարւոյն մէջ միջին հաշուով կը*




Պատկ. 19. Ալայա։

մանեն 126 շուկնաւ և 565 տապարատանաւ ։

Համանուն վիճակն ունի 37,000 բն. և 136 գիւղ. օդը բարեխառն է, երկիրը արգաւանդ։ Երկրին բերքերէն կը յիշուի ի Բժշկարանս մեր. «Մօզ, կամ Բիլա, միրգ մի է որ յԱլայոյ գայ». իսկ նոր բուսաբանք կը յիշեն քաղաքին սահմանաց մէջ հետեւեալքն. Որթ արեւելեան (Vitis Orientalis), Ճիլենի տեսակներ (Silene Oreades, S. Heldreichij), Կորնգան երկայնածաղիկ (Cerastium macranthum), Թանկան կամ Իշկաթնուկ նեղատերեւ (Lathyrus stenophyllus), Գետնանոճ ալպեան (Chamæpeuce alpini), Եզնագի նրբապտուղ (Verbascum stenocarpum), Փիլիպէա սնդապարծին (Pilipæa axyloba), և այլն։ — Սիսուան, 341–6։ Վ. Բինէ, Ասիական Թուրքիա. հտ. Ա. 867–70։ Կիլիկիա, 259։



20 · Ալաւերդի վանքը ։

ԱԼԱՆԿԷԶ. — Շղթայք լերանց Սինեաց

աշխարհի, որք Գեղամայ ծովակի հարաւային կողմէն գրեթէ անընդհատ կ'երկննան մինչև Երասխ, և Սիւնիքը կը բաժնեն Վասպուրականէն։

ԱԼԱՆԱՑ ԴՈՒՌՆ. — Այսպէս կը կոչուէր այս դուռը Ճորայ Պահակի և Կասբից դրան հետ։ Տես ԴԱՐԵԱԼ։

ԱԼԱՆՔ. — Սարմատացւոց ազգերէն մին են, որք ի հնումն կը բնակէին Վրաստանի հիւսիսային կողմը, Կովկաս լերան մօտերը.



21 · Ալայա, բերդը և աշտարակը։

ի հնումն, Ալանաց երկրի հարաւակողմը կովկաս լերանց այժմեան Դարեալի կիրճը. շատ անգամ այս դռնէն կամ կրճէն կ'արշաւէին հիւսիսային ազգերը ի Վրաստան և ի Հայաստան։ Երբեմն շփոթած են ոմանք, ի Թուրքաց կը կոչուէին Լեկզի կամ Լեզգի Թաթարք։ Մեր Արտաշէս Բ աշխարհաշէն թագաւորի ժամանակ, Ալանք իրենց հետ միաբանած հիւսիսային Լեռնական ազգերը և Վրաց աշխարհի արևելեան մասին տի-

բերելով կու գան բանակ կը դնեն Կուր գետի եզերքը ։ Նոյն միջոցին Արտաշէս ալ բազմաթիւ զօրքերով կը հասնի և բանակ կը դնէ գետի հարաւային եզերքը ։ Երբ Ալանաց թագաւորի որդին Հայոց քաջերէն գերի կը բռնուի, կ'ստիպուին Ալանք հաշտութիւն խնդրել. Արտաշէս իրեն կնութեան կ'առնու Ալանաց Սաթենիկ օրիորդն, և այսպէսով խաղաղութեան դաշն կը հաստատուի երկու դրացի ազգաց մէջ ։

Սաթենիկան հայրը մեռնելով՝ երբ բռնաւոր մը կը թագաւորէ Ալանաց, Արտաշէս կը ղրկէ իր քաջ սպարապետը Սմբատ, որ բռնաւորը վանելով կը թագաւորեցնէ Սաթենիկան եղբայրը, և հակառակորդաց երկիրն աւերելով բազմաթիւ գերիներ կը բերէ յԱրտաշատ ։ Այդ գերիները թագաւորի հրամանաւ բնակեցան Մասեաց հարաւային արեւելեան կողմը, Շաւարշական գաւառի մէջ. և որովհետեւ այդ գերեաց կամ գաղթականաց բնիկ աշխարհն կը կոչուէր Արկազ կամ Արտազ, այդ պատճառաւ ի յիշատակ իրենց հին հայրենեաց, նոյն անուամբ կոչուեցաւ նաև երկրորդ հայրենեաց բնակավայրը, որ Վասպուրականի գաւառներէն մին էր ։

Խորենացին մանրամասն Ալանաց և Հայոց վերաբերութիւնք պատմելէ զատ, կը գովէ այս ազգը իբրև քաջ աղեղնաւորք և հզօր պատերազմողներ ։ Երբեմն Ալանք կոչուած են նաև Աղուանք, իրարու մօտ լինելնուն պատճառաւ ։ — Խոր. պատմ. Բ. ԽԹ. Ծ. ԾԲ ։

ԱԼԱՇԿԵՐՏ. Գզ. ALACHGUERD. Թ. الشكرد. Ռ. Алашкертъ. — Հին Վաղարշակերտ քերթաքաղաքի անուան աղաւաղութիւնն է, որ Այրարատայ Բագրեւանդ (Պայազիտ) գաւառի այժմեան վիճակներէն մին կը կազմէ. սահմանքն են Ար.էն Գարա–Քիլիսէ և Տիատին, Արմ.էն Կարնոյ գաւառը, Հր.էն Ան-թաք և Հս.էն Շահկօլ լերինք կամ Ռուսաց սահմանը ։ Վիճակս ունի ընդարձակ, բերրի և ջրարբի դաշտ մը. գլխաւոր բերքերն են ցորեան, գարի, կտաւատ, կորեկ, և զանազան տեսակ բանջարեղէններ ։ Երկիրը առատ խոտ ունենալով, կը սնուցանեն գոմէշ, ոչխար, այծ, եզ, կով. բայց տրոց խիստ ծանրութեան պատճառաւ, ժողովուրդը միշտ աղքատութեան մէջ կը մնայ ։ Ըստ այժմեան բաժանման՝ ունի 115 գիւղ, 2,637 տուն և 20,111 բնակիչ, հետեւեալ կերպով բաժնուած.

| | | |
|---|---|---|
| Մահմէտականք . | 13,873 | հոգի |
| Հայ-լուսաւորչականք . | 3,207 | » |
| Հայ-կաթոլիկք . | 2,754 | » |
| Հայ-բողոքականք . | 99 | » |
| Այլեւայլք . . | 178 | » |
| Գումարն | 20,111 | հոգի ։ |

Ամբողջ վիճակին մէջ կան 10 նախակրթական վարժարաններ, յորոց չորսը կը վերաբերին Հայոց ։

Այսպիսի արգաւանդ և ազգային յիշատակօք լի վիճակի մը մէջ, Հայոց թուոյն նուազութեան գլխաւոր պատճառներն են, անվերջ հարստահարութիւնք և կենաց և գոյքի անապահովութիւնն, որով ստիպուեր են զանազան ժամանակաց մէջ (1829, 1878) գաղթել դէպի ուրիշ կողմեր. ինչպէս յայտնի է ամենուն, նոյնպիսի գաղթականութեանց շարժառիթներ պակաս չեղան նաև վերջին տարիներս ։

### ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԼԱՇԿԵՐՏ
### ՎԻՃԱԿԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԻՑ

| ԱՆՈՒՆՔ ԳԻՒՂԻՑ | 1880 Տուն | 1880 Հոգի | 1893 Տուն |
|---|---|---|---|
| Թոփրագ-գալէ (Ալաշկ.) | 108 | 739 | 130 |
| Մոլլա Սիւլէյման . . | 83 | 822 | 135 |
| Խաչլու . . . . . . | 65 | 396 | 110 |
| Ամատ . . . . . . | 66 | 641 | 113 |
| Աչգալէ կամ Աշխալի . | 9 | 96 | 14 |
| Հաճի Սաֆար . . . . | 2 | 17 | 2 |
| Ֆէրան . . . . . . | 4 | 31 | 4 |
| Ղայաբէկ . . . . . . | 15 | 165 | 30 |
| Երիցու կամ Իրիցու գիւղ . | 33 | 248 | 35 |
| Բլուր (Եիւթիւթափէ) . . | 69 | 451 | 76 |
| Զըլկանի կամ Ջլկահնի . | 34 | 254 | 60 |
| Խասսուր . . . . . | 73 | 665 | 112 |
| Ջետկան կամ Ջէյտիխան. | 32 | 275 | 30 |
| Խոչեան. . . . . . | 11 | 107 | 25 |
| ԳՈՒՄԱՐՆ . . . | 604 | 4907 | 876 |

Վիճակիս մէջ գտնուած Հայաբնակ գիւղից այս կրկին 1880 և 1893 տարիներու վիճակագրութեանց մէջ, կը տեսնուի աչագին

*տարբերութիւն. որով յայտնի կ'երևի, թէ օր աւուր բնակիչք կը բազմանան. իսկ եթէ ըղձացեալ կատարեալ խաղաղութիւնն տիրէ այս կողմերը, կ'ենթադրուի թէ այն ժամանակ դեռ աւելի պիտի բազմանան։*

Ալաշկերտ *անունը շատ անգամ պատմիչներէն յատկացուած է ամբողջ Բագրեւանդ գաւառին, որ այժմ բաժնուած է չորս միճակներու։ Այժմ միճակին գլխաւոր աւանն կը կոչուի* Թօփրագ-գալէ (*Հողաբերդ*), *որ և աւելի ճշգութեամբ կը կոչուի նաև* Ալաշկերտ։ *Աս կը համարուի բուն հին* Վաղարշակերտը *կամ* Վալաշկերտը, *զոր կառուցած է Բ դարու վերջերը, Արտաշէս Բի որդին, Վաղարշ Արշակունի թագաւորը։ Դիրքն բարձր է գրեթէ 5950 ոտք, համանուն դաշտի հիւսիսային եզրէն դէպ ի Ծաղկօղ բարձրանալու սկսած վայրը։ Արեւմտեան կողմը տարածուած դաշտն և շուրջը պատած լեռնաշղթայք, մէկ հայեացքով քաղաքաւանէն դիտողի աչաց հրապուրիչ տեսարան մը կը ներկայացընեն։ Ս. Սուքիասանց վարդապետաց՝ Սրբոց Ոսկեանց, հին վկայաբանութեան մէջ կը յիշուի աւանս հետեւեալ կերպով. «Ի տեղին շինեալ* աւան մեծ *ի թագաւորէն Վաղարշայ, անդ զօրքի իւր բնակեցուցանէր, սակս տեղւոյն բարեխառնութեան,* Վաղարշակերտ *յանուն իւր կոչեցեալ»։ Անտարակոյս, թագաւորաշէն աւանս թէ գեղեցիկ դիրքը և թէ հանդէմներովը կը մրցէր Բագաւանայ հետ. Ս. Սուքիասանց ճգնութեան և նահատակութեան սրբանուէր վայրաց մօտ ըլլալով, մեծապէս պայծառացաւ Ս. Գրիգորի և Տրդատայ ժամանակ։ Եօթներորդ դարու կիսուն Ներսէս Շինող կաթողիկոսը, իբրև ուխտական երեւելի վայրերէն մին, սատ շինել տուաւ հոյակապ եկեղեցի մը Ս. Աստուածածնի նուիրելով։ Տասներորդ դարու սկիզբը քաղաքս Բագրատունի թագաւորաց ձեռքն էր. նոյն ժամանակները զուր տեղը պաշարուելով Յուսուփ ոստիկանէն և Վասպուրականի Գագիկ Արծրունի թագաւորէն, բնակչաց անվեհեր քաջութեամբ, ստիպուեցան թշնամիք մեծ ամօթով պաշարումը վերցընել։ Գրեթէ միշտ երագաստահ ժամանակի զանազան շրջանաց մէջ, հետ զհետէ ինչպէս քաղաքս, նոյնպէս և միճակս, յետ իր սեփհական տեարց ձեռաց յափշտակուելու, դարձած է տիրապետութիւն օտար իշխողաց, որոց այժմեան յաջորդք կը համարուին, այս կողմերը ցրուած քուրդ ազգաբնակութիւնք։ Տեղւոյս օդոյ բարեխառնութիւնն, թէ և շատ կը գովուի, սակայն բոլորովին զերծ մնացած չէ Ալաշկերտ՝ մահտարաժամի անգութ ճիրաններէն։ Այս նկատմամբ Ս. Թաթլոյ կենսագիրը կը պատմէ հետեւեալը, որ հանդիպած է ԺԴ դարու վերջերը. «Ի Վաղարշակերտ քաղաք մահտարաժամ սաստկացաւ, և մեծ տագնապ պատուհասի հասոյց, զի արագ սպանանէր, քան զմի օր և զերկուս ոչ ներէր այլ աւելի. և պատճառ մահուն այս էր, ղաւարտ փոքրիկ նման խաղողոյ ծիրանագոյն»։ Կը շարունակէ խօսքը ըսելով, թէ այս հիւանդութենէն ազատուելու համար ուրիշ միջոց չգտան, բայց եթէ ուխտի երթալով Ս. Թաթլոյ և Վարոսի գերեզմանաց և ամբողջ գիշերը հսկումն և ջերմեռանդութիւն ընելով։*

*Ձմեռը սաստիկ է այստեղ. հոկտեմբերի մէջ կը սկսի ձիւնն իւր սպիտակ վերարկուով ծածկել լերանց գագաթները. նոյեմբերի սկիզբը կը սփռուի նաև դաշտի մէջ, և 7 ամսուան համար, ամբողջ Ալաշկերտի դաշտի գիւղերու բնակիչք կ'ամփոփուին բանտուիլ իրենց տանց մէջ։ Ջերմաչափը դեկտեմբերի մէջ զրօյէն մինչ 8° խոնարհ կը ցուցընէ և յունուարի մէջ դեռ աւելի կը խոնարհի մինչև 16°–18°։ Երբեմն սաստիկ հովը յառաջ կը բերէ ահաւոր բուքը, որ շատ անգամ ճանապարհորդները շնչարգել ընելով կը խեղդէ։ Իսկ ամառն հրաշալի և անպատում է, յորում բնակիչք իրենց երկրագործական ըզբաղմունքներէն զատ ունին նաև զանազան հանդիսից և զուարճութեանց օրեր։*

*Այժմ հին Վաղարշակերտի շքեղութիւնն և փարթամութիւնն, բաց ի բնական դիրքէն, բոլորովին ոչնչացած են, և միայն ողբալի ու տխուր աւերակաց կոյտեր մնացած են աստ և անդ ցիր և ցան։ Քաղաքաւանն բաղկացած է հազիւ 700 տներէ, յորոց 130ը միայն հայ են, մնացեալք մեծաւ մասամբ քուրդ. 150 տան չափ ալ՝ 1877ին պատերազմէն վերջը Կարսէն, կաղ-*

գաւառէն և Պայազիտէն զատուած Թուրքեր։ Իր հիւսիս արեւմտեան կողմը բարձրացած կրէ և կրաքարէ կազմուած բլրան գագաթը, կը տեսնուին հինաւուրց պարիսպք, հիւսուած՝ որձաքարով և կրով։ Քսան տարի առաջ, պարսպի շուրջը կային մեծու մասամբ կանգուն՝ տասնի չափ աշտարակներ, զորս 15–20 տարիներէ ի վեր կը քանդեն այլազգիք, քարերը վար գլորելով, նոր շինութեանց գործածելու համար։ Այդ քանդումներէն յայտնուեցան այլեւայլ գաղտնի ներքնուղիներ, որք հաղորդակցութիւն ունէին բերդի զանազան մասանց հետ։ Բերդս ունի կրկին մուտք, մին արեւելեան կողմը, դժուարագնաց ճանապարհով մը, հետեւակաց համար. երկրորդն արեւմտեան կողմը, որուն ճանապարհը բաւական հանդիստ է և սայլեր ալ կրնան երթալ։ Պարսպի ներքին կողմը կայ սալայատակ ձուաձեւ տափարակ մը և կիսաւեր որմերու մնացորդք։ 1860–76 թուականներուն, բաց էր բերդիս գլխաւոր ներքնուղին, և մէջը ճրագով մտնելով, բաւական տեղ առաջ կ'երթային. ներսը տեսած են կարծր ժայռի վրայ կոփուած սանդուխներ։ Վերջին քանդմանց ժամանակ, քննութեան կարօտ այդ ներքնուղւոյ բերանը, բոլորովին գոցուած է աւերակաց բեկորներով։ Դարուս սկիզբները (1820–25), տակաւին շէն էր այս բերդը. այժմեան բէկերու նախնիք՝ ունէին հոս պալատ, բանտ, դատաստանարան, կախարան, դահճատուն, ձիանոց, պահականոց, և այլն։

Ալաշկերտի այժմեան շուկայէն բաւական բարձր, բերդի հարաւային ստորոտը կ'երեւին հին շուկայի հետքերը, որ ըստ աւանդութեան՝ 1,500 կրպակ կը պարունակէր. այդ աւերակաց մէջէն վերջին տարիներս գտնուած են արծաթէ դրամներ։ Նոր շուկան՝ որ հինէն գրեթէ 1 հազարամետր վար և նոյնչափ ալ դաշտի եզերքէն դէպ ի վեր, արեւելեան հարաւ հակեալ գիրքի մը վրայ կ'ինկնայ, ձեւացած է երկու փողոցներու վրայ շարուած, մէկ գանով նեղ և մօտ 100 կրպակներէ։ Աւանս կանոնաւոր շէնքեր չունի, հազիւ վերջերս շինած են քանի մը բաւական ձեւաւոր կրպակներ. կան նաեւ ոչինչ թուով սրբատաշ քարով կառուցուած շէնքեր, որոց քարերը կամ շատ հեռուէն բերած են և կամ բերդի, գերեզմանատան, հին վանքի և այլ աւերակներէ հանած. վասն զի աստ քարահանք չի գտնուիր և եղածներն ալ խիստ փխրուն են։ Կարսէն կը բերեն հոս ոգելից ըմպելիքներ, իսկ Խարբերդէն՝ ընտիր կարմիր գինի և օղի. բայց տեղւոյս օղին լաւագոյն է, կը պատրաստեն չամիչէ։ Կտաւեղէնք ընդհանրապէս Բաղէշէն կը բերեն, ինչպէս նաեւ խաղող, չամիչ, կաղին, ընկոյզ, պաստեղ, տանձ, խնձոր և պատուական նուռ։ Աստ տարուան մէջ միջին հաշուով առուտուր կ'ընեն.

| | | | |
|---|---|---|---|
| Կտաւավաճառք | 5,000 | ոսմ. | ոսկւոյ։ |
| Մանրավաճառք | 1,000 | » | » |
| Գինեվաճառք | 1,000 | » | » |
| Ծխավաճառք | 2,000 | » | » |
| Նպարավաճառք | 1,000 | » | » |
| Համագումարն | 10,000 | ոսմ. | ոսկի։ |

1879–90 թուականներուն տեղւոյս վաճառականութիւնն բոլորովին Հայոց ձեռքն էր, իսկ այժմ խիստ ինկած վիճակի մէջ է։ Տեղւոյս աւերակները, ջրմուղները, բնակչաց աւանդութիւնն և այլ հանգամանքներ կը հաստատեն, թէ աս է բուն հին Վաղարշակերտը. աւերակաց հետքերէն կը մակաբերուի որ ժամանակաւ մօտաւորապէս 10,000 տուն եղած ըլլան այստեղ։ Բերդէն կէս ժամ հեռու դէպ ի արեւելեան հիւսիս և յարեւմուտս, մինչեւ Խանըումի աղբիւրի մօտ, կը նշմարուին հնութեանց մնացորդներ, և աղբիւրի մօտ քիչ մը բարձրը կան մեծ շինութեանց աւերակներ Աերրեեր անուամբ, որ ըստ աւանդութեան, հին ժամանակ քաղաքասնի ամբարանոցն եղած է։

Ալաշկերտի աւերակ և շէն թաղօրայք են. Պէյամե, Սորանեցոց, Փերակճոց, Գարաղի, Տարաղաճի, Թանեոոշր եախոմագեեր, Ճրաքըշեեր, Շեերոշ կամ Գետի, Ջքոյի, Տոշքեերոշ, Բերդի տկի, Միրանեի, և այլն։ Աւանիս եկեղեցին թէ եւ ըստ հնոյն կը կոչուի Ս. Աստուածածնի անուամբ, բայց խիստ խեղճ դրից մէջ կը գտնուի. երկար ժամանակի ընթացից մէջ կ'երեւի հինն բոլորովին աւերակ դառնալով, ի յետոյ շինուեր է ներկայն, որ հազիւ 100 տարուան հնութիւն ունի, փայտեայ ծածքով, նոյնպէս տան-

*երկու փայտեայ սեանց վրայ, փլելու երկիւղէն մարդ չի համարձակիր ներս մտնելու։ Կը պատմեն թէ քանի մը անգամ այրած է. փասքեւիչի պատերազմի ժամանակ, Թուրքերը մէջը ռազմամթերք և թնդանօթներ զետեղած էին. վերջին անգամ 1889 թուին, ռամազանի գիշերն քրդերը դարձեալ հրդեհեցին և մաս մ՚ալ այրեցաւ։ Եկեղեցիէն 20 վայրկեան հեռու դէպ ի արեւելեան հիւսիս, կը գտնուի գերեզմանատունը. այս երկրի մէջ մնացած անընդհատ պատերազմներն, վնաս հասուցած են նոյն իսկ աւանիս գերեզմանատան. ի բաց տարուած են շինութեանց համար հին և ընտիր տապանաքարերը, իսկ մնացածներն աննշան են։ Գերեզմանատանը միջէն անցնող ճանապարհի վրայ, հին եկեղեցւոյ մը հիման քարերը կ՚երեւին. կ՚ըսուի թէ՝ այդ ըլլայ հռչակաւոր և հրաշագործ Ս. Կիրակոսի վանքը։ Այս եկեղեցւոյ հարաւակողմը կայ առատաբուղխ սառ ջրոյ պատուական աղբիւր մը. շատ անգամ ամրան՝ այս աղբիւրէն էշերով ջուր կը տանին յաւանն։ Համբարձման և զարնան կիրակի ու տօնի օրեր ժողովրդեան համար զբօսավայր մը դարձած է տեղս։ Աղբիւրէս քիչ մը վեր կը գտնուի քարակոյտ մը որ Կոյս Խանումի նշխարաց տեղն է. 1730—35 թուականներուն մէջ այս կողմերը անտանելի չարչարանօք նահատակուած է երանուհին Կոյս Խանում, որոյ վրայ Բազմավիպի 1859 տարւոյ հատորի 70 էջին մէջ՝ տաղ մը հրատարակուած է. «Տաղ ի վկայուհի Ս. Խանում նահատակ ի Թափրագ—գալէ» վերնագրով։*

*Քաղաքաւանիս հիւսիս արեւմտեան կողմը, ամենէն բարձր դիրքի վրայ շինուած է քրդերու աղօթատունը, որոյ դրան վրայ կայ ընդարձակ յիշատակարան արաբական տառերով։ Գրեթէ 160 տարուան այս շէնքը, կառուցուած է սրբատաշ քարերով և լաւ ճաշակով։ Այդ քարերը բերուած են մաս մը Ալիգանայ վանքէն, մաս մ՚ալ Ջէօընկայ Ս. Լուսաւորչի վանքէն և գերեզմանատներէ, ափսոս որ հայկական հին յիշատակարանք բոլորն ալ սրբած են կամ որմի մէջ հիւսած։*

*Տեղւոյս հին և բազմամարդ Վաղարշակերտը ըլլալուն ապացոյց են նաեւ հեռու սարերէ մեծ և կարծր փողրակներով բազմաթիւ աղբիւրներ քաղաքս բերելը. այդ աղբիւրներու գլխաւորն կը համարուի Ճահկոլ կամ ըստ ոմանց Ճահեօլ լերանց աղբիւրն. միւսներն են Այվազ աղի, Գերեզմններու, Ճմճըմի, Սեղընքարի, Խաղլաճ ձորի, Ամեռ Հանոյի, Ճոռիկ, Բալոյի, Կաւընցի, Փաշի, Ցախիքներու և Խանըմի աղբիւրներ։ Այս աղբիւրներէն շատերն այժմ անգործածելի են, և գործածելիներէն շատերն ալ աւանէն հեռու։ 1750ին տեղւոյս կառավարութիւնն աշխատած է Ճահկէօլի աղբիւրի քովէն ուրիշ նոր ջրուղի մը շինել՝ աւանը ջուր բերելու համար, բայց չէ յաջողած։ Քրդերը այդ հին աղբիւրներու ազուգաները գետնի տակէն հանելով և աւանս բերելով, ոչինչ գնով կը վաճառեն և գնողներն ալ իբրեւ ջրորդան կը գործածեն տանիքներու վրայ։ — Ճգնաւորի տեղ կը կոչուի Ալաշկերտէն մէկ հազարամետր հեռու արեւմտեան կողմը, ժայռի մէջ փորուած աղօթատեղի մը, որ քարայրի ձեւ ունի։ Իսկ Ս. Սարգիս անուամբ ուխտատեղի մ՚ալ կայ բերդի արեւմտեան հարուն, որուն համար աւանդութիւնը կ՚ըսէ, թէ ժամանակաւ բերդս պաշարուելով բռնաւոր թագաւորէ մը, Սարգիս անուամբ զօրավար մը յանձնուած է թագաւորին, որ միջի ժողովուրդը ազատուի։ Բայց երբ թագաւորն չարաչար կը տանջէ զՍարգիս, բերդի ժողովուրդն այս տեսնելով, կը սկսին ուժով դիմադրել և զթշնամին վանել։ Կ՚ըսեն նաեւ, թէ Ս. Ոսկեանց ընկերներէն եղած է Սարգիս, որ իր ընկերաց ի Սուկաւէտ նահատակուած ժամուն, խոյս տուած է և բռնաւորն վրայ հասնելով, սպաննուած է այստեղ։*

*Ալաշկերտի ձեռագրաց մէջ, իբրեւ նշանաւոր կը յիշուի հին Կարմիր Աւետարան մը, որ կոչուի նաեւ «Դաւթի տան Աւետարան». գրուած է մագաղաթի վրայ, զայն տեսնողն չէ կարողացած օրինակել հին յիշատակարանը. ունի արծաթապատ կողեր և զարդարուած է պատկերներով։ — Այրարատ, 535—6։ Բագրեւանդ, 46—74։ Ջամչեան Պատմ. հտ. Բ. 752—3։ Ս. Մարքեն, հտ. Ա. 124—6։ Ստ. Հ. Հայ. 405—6։ Ալողիկ, Գ. Դ, և Գ. ԼԸ։ Լատին. Գ։ Ցռճան. կար. Խէ։ Ասքել, էջ 35, 53։ Ն. Հայ. 116—19։*

Պտկ. Ն. Հայ. 47 ։ Տեղգր. Հայս. 221—22 ։ Վ. Բիճէ, հտ. Ա. 237—38 ։

ԱԼԱՉԱԼՈՒ կամ ԱԼԻՉԱԼՈՒ. Հն. ԿԹԱՆՈՑ. — Այս անուամբ երկու գիւղ ունի Սիւնեաց Գեղարքունի գաւառն, Գեղամայ ծովակի հարաւային կողմը, հին Վանեվան ձորոյն մէջ, համանուն գետակի եզերաց վրայ ։ Վերին Ալաչալուն ունի 84 տուն Թաթար բնակիչ. իսկ Ստորին Ալաչալուն որ աւելի ծովակին մօտ է և կը համապատասխանէ Ստորին Կթանոցի ունի 1060 Հայ բնակիչ, բաժնուած 120 տան ։ Այս կրկին գիւղերու մէջտեղ կայ Բիչիւէ խարապա (Աւեր եկեղեցի) կոչուած հին գիւղատեղի մը, որ կը կարծուի լինել հին Վերին Կթանոցը, յորում կը տեսնուի բոլորաձև, գեղեցկաշէն սրբատաշ քարէ, ութանկինի եկեղեցի մը, կիսակործան վիճակի մէջ ։ Ստորին Ալաչալու և Գօյանը Գաան գիւղերէն դէպ ի ծովակը երկնցած է փոքր լեռնագօտւոյ մը հրուանդանը ։ Այդ հրուանդանի վրայ է Օձաքերդը, որ ի հնուց մնացած և քարուքանդ եղած բերդատեղի մ'է, որոյ ծովահայեաց կողմը, ժայռի վրայ կայ 19 տողէ ձևացած բևեռաձև արձանագրութիւն մը (Թ. 22) ։



22. Բևեռարձան Ալաչալուի ։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱԼԱՉԱԼՈՒԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՍՏ Պ. Մ. ՆԻԿՈԼՍԿԻԻ

1. Խաղդիացւոց աստուածոյն... Բուսա,
2. Սարդուրիի որդի, ես այս նահանգները,
3. ամրութիւնները, որոնք են վիճակ քաղաքին Բարուաշտուլի.
4. երկիրն Ագահունի (Ապահունիք), երկիրն Ուելիգա, երկիրն Կումերուհի,
5. երկիրն Շերիկուքինի (Շիրակ), չորս թագաւորներու նահանգները որ կը կոչուին երկիր Լայինի,
6. երկիրն Ուլեմինի, երկիրն Շամատուանի (Ամատունի), երկիր Տէրիուիչաինի,

7. երկիրն Ուիշուախինի (Ուշտունի), երկիրն Զուախինի, երկիրն Ակուանի (Աղուանք), երկիրն Ամանինի,
8. երկիրն Իրկիմախինի, երկիրն Ելախինի, երկիրն Ելիէլաուախինի
9. երկիրն Այիդամանիունի, երկիրն Գուրիախինի, երկիրն Ալզիրանի (Արզն)
10. երկիրն Գիրուախինի, երկիրն Մելախին երկիրն Ուշեդուինի
11. երկիրն Ատազախինի (Արտազ), Երիախինի (Երեւան), երկիրն Ազամերունինի,
12. տասնուինը թագաւորներուն երկիրները, որք կը կոչուին երկիր... Իգուախինի.
13. Հարկատու ըրի ամենը 23 թագաւորներու ամրութիւններն եւ նուաճեցի.
14. մարդիկները, կանայքն ի Բիայնա (Վան) երկիրը եւ տարի այս տարի.
15. եւ Ուսուա նուրադեցի մարդկան ապարանքները . . . . .
16. մարդկանց երկիրները. . . . . . . . . .
17. Տէիշբա չաստուածին կործանուած այս տաճարը եւ նուրադեցի . .
18. Տէիշբա չաստուածին կործանուած ապարանքները եւ նուրադեցի . .
19. (Այս տողը ծովակի ալիքներէն մաշուած է և անընթեռնլի):

*Առաջին անգամ օրինակեց և հրատարակեց արձանագրութիւնս Միսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեան, Մոսկուայի Համբաւաբեր Ռուսիոյ Հայոց ամսագրի մէջ 1863 թուին: Նա օրինակած է 19 տող և 20րդ տող մ'ալ կը համարի ալիքներու չփմամբ ջնջուած: Նոյնը օրինակեցին և մեկնելով հրատարակեցին նաև ուրիշներ. բայց ամենէն աւելի լաւ յաջողեցան Ռուսիոյ Կայսերական Հնագիտական Ընկերութեան անդամ Պ. Մ. Նիկոլսկի և իւր ճանապարհորդական ընկերն Պ. Ա. Իվանովսկի: — Գեղարքունի, 553, 560, 753–60:* Նիկոլսկի, *Բեւեռագիր արձանագրութիւններ Ռուսաց Հայաստանում, թրգմ. Գ. Խ. Յովհաննիսեանց. տպ. Վենետիկ, Ս. Ղազար. 1897, էջ 56–61: Հանդէս Ամսօրեայ, 1894. 67–71: Արձագանք, 1894, թ. 6, 7:*

ԱԼԱԳԱԾ *կամ* ԱՐԵԳԻՆ. — *Հայաբնակ գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունի արեւելեան հարաւային կողմը, 5 ժամ հեռաւորութեամբ: Ռուբինեանց ժամանակ նշանաւոր էր գիւղս: Արեգնի վանքի մէջ էր կապանի արքեպիսկոպոսական աթոռը: Մեծին Լեւոնի թագաւոր օծուելու հանդիսին ներկայ եղող 14 եպիսկոպոսներէն, կարգաւ երկրորդ կը յիշուի տեղւոյս Գրիգորիս արքեպիսկոպոսը: Բնակիչք քաջ են և ճարպիկ. Զէյթունի կռիւներուն միշտ մասնակցած են, և շատ անգամ առաջին յարձակողն իրենք եղած: Բաղկացած է 300 տներէ, որք ցրուած են Շամպէկ կոչուած բարձր բլուրի արեւելք, հարաւ և հարաւային արեւմտեան կողից վրայ, մինչև Ճիհան գետի եզերքները: Գիւղիս արեւելեան կողմը կատարուած է Զէյթունի (1862) նշանաւոր և պատմական պատերազմի առաջին ճակատամարտը:*

ԱԼԱԳԱԶԱՆ. *Տես* ԱՆԴՐԷԱՍԵԱՆՔ:

ԱԼԱՍՏԱՆ. — *Գիւղ Հայ–կաթոլիկաց, Ջաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ, Վարձիանու հիւսիսային կողմը, գետակի մը մօտ: Բնակիչք 1334 հոգի, բաժնուած 184 տան: Գիւղիս Ս. Աստուածածնի քարաշէն եկեղեցին կառուցուած է 1863ին:*

ԱԼԱՏԱՂ. *Տես* ԾԱՂԿԷՈՑ Լ. *և* ԱԼԼԱՀ ՏԱՂ:

ԱԼԱՏԻՆ. — *Փոքր գիւղ Հայոց և Քրդաց Մշոյ դաշտի մէջ, Մեղտիի մօտ:*

ԱԼԱՐ *կամ* ԱԼԱՐԱ. — *Աւան ծովային Կիլիկիոյ, համանուն գետակի աջակողմը, որոյ մօտ կան քառակուսի հին շինուածքի մը աւերակները: Սեպաձև քարաբլրի մը վերայ, խրոխտ կերպով կեցած է համանուն բերդն Ալարա–գալեսի կոչուած այժմ ի Թուրքաց և Սմբատ պատմչէն Ալարոյ Բերդ, որուն կը տիրէր Լևոն թագաւորի լիճ պարոններէն մին՝ Մանուղատայ Միխայէլ իշխանը: Շատ գեղեցիկ և բարեբեր են աւանիս սահմանները, ուր կան հարուստ դաշտեր բամբակի, ծխախոտի, կնջիթի և բրնձի. կ'աճին նաև արմաւենիք, ձիթենիք, կաղնիք, գափնիք, գափնեվարդ, և այլն. այս կողմերը կը գտնուին նաև կինճք: Աւանիս մէջ 1845 տարւոյ հոկտ. 19ին, գիշերեց գաղղիացի կոմսն Փուրթալէս: — Սիսուան, 310:*

ԱԼԱԽԱՆ. *Տես* ԱԼԵԽԱՆ:

ԱԼԱԽՍ. *Տես* ԱԼԷՈԽՍ:

ԱԼԱՓԱՐՍ. *Հն.* ԱՅԼԱԲԵՐԻՑ ԳԻՒՂ. — *Գիւղ Այրարատայ Կոտայք (Նոր Պայազիտ) գաւառի հիւսիսային կողմը և Բջնոյ հարաւակողմը կէս փարսախ հեռաւորութեամբ. որոյ արեւմտեան կողմէն քիչ մը հեռուէն կը վազէ Հրազդան գետը: Գիւղիս բնակիչք որ*

*1830ին Մակուէն գաղթեր են այստեղ, այժմ կը համարուին 1923 հոգի, բաժնուած 257 տան։ Գիւղս հին ժամանակ եւ Հայաբնակ եղած է, որոյ ապացոյց են հին խաչաձեւ եկեղեցւոյ մնացորդներն. սակայն արձանագրութիւնք բոլորովին խանգարուած են, և միայն կը նշմարուի ՅԾ թուական մը, որ է Քրիստոսի 901 թուականը, և Գրիգոր իշխան ամն, զոր Շահխաթունեան կը համարի Սիւնեաց Գարուս Վասակ իշխանի որդին։ 1857 թուին կառուցած են Ս. Վարդանայ զօրավարի անուամբ եկեղեցի մը, հնոյն մօտ, ուր ուխտի գալով շրջակայ գիւղերու բնակիչք, ամէն տարի հանդէսներ կը կատարեն։ Եկեղեցւոյս մէջ կան զանազան սրբազան հնութիւնք, որք են. ա. մասունք նշխարաց Թադէոսի Առաքելոյն. բ. մասունք Մերկեռիոսի զինուորին. գ. Ս. Նշան կոչուած, փայտեայ նուրբ փորագրուած խաչ, խաչելութեան և Աստուածածնի պատկերներով. դ. սեւագոյն քար մը, շրջապատուած արծաթեայ խաչով, զոր հետերնին բերած են Մակուէն, և կը համարին Ս. Վարդանայ արեամբ ներկուած։ Կայ նաև ձեռագիր աւետարան մը, գրուած խորտակաց գիւղի մէջ, ՋԺԳ (= 1464) թուին։ Սրբատաշ քարով նոր եկեղեցի մ'ալ սկսան շինել Աղափարցիք 1893ին Ս. Աստուածածնի անուամբ։*

*Գիւղիս արեւելեան կողմը կայ մեծ աղբիւր մը, որոյ ջուրը կը գործածեն գիւղացիք դաշտերուն և այլ պիտոյից, այս աղբիւրի անուամբ անշուշտ,* Ալ-Աղբերից *կամ* Ալլաբերից գիւղ, *կոչուած է գիւղս երբեմն, զանազանելու համար* Աղբերից *կամ այժմեան Գետամբրիս գիւղէն։*

*Ժ՞ դարու սկիզբը այս գիւղէն Հայոց կաթողիկոս եղաւ Տէր* Մուշէ։ *Տես* ՆՈՎԱՅԱ ՆԻԿՈԼԱՅԵՒԿԱ. — *Այրարատ, 286։ Գեղարքունի, 300—305։*

ԱԼԲԱՌՈՒՏ. — *Այս անուամբ քանի մը Թաթարաց գիւղեր կան Գանձակ նահանգին մէջ։*

— *Գիւղ Հայոց՝ Բագու նահանգի Շամախու գաւառի մէջ. բն. 336, բաժնուած 46 տան։ Նոյն գաւառի մէջ համանուն երկու գիւղ ալ ունին Թաթարք։*

ԱԼԲԵՐԴ. — *Ասողիկ (Բ. Զ.) կը յիշէ բերդս ուրիշ ամրոցներու հետ, երբ Թէոփիլոս կայսեր (829) համար կ'ըսէ. «Սա ի խաղաղն իւր յարեւելս կոյս ի սահմանս Հայոց՝ առնու զԾմնոյ բերդն Հայոց, զԱսաղին, և զՄեծկերտ, և* զԱլբերդ *ի գաւառին Գեղամայ»։ Գեղարքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հարաւային կողմը այժմեան Ղարանլըխ գիւղի մօտ արեւմտակողմը, դեռ կը նշմարուին այս բերդի աւերակներն, և տեղացիք տակաւին նոյն* Ալբերդ *անունը կու տան։ Այս աւերակաց հարաւային կողմը մատուռ մը կայ Ս. Մամաս կոչուած, յորում կը պահուին խաչքարինք։ Տեղական աւանդութիւնը կ'ըսէ թէ՝ Մեծին Ներսեսի հետ Կեսարիա գացող Սիւնեաց իշխաններն, հետերնին բերելով Մամաս ճգնաւորի մասունքը, նախ այս մատրան մէջ դրած են զայն, և ապա տարած են ի Վայոց ձոր՝ Քարագլուխ գիւղէն մէկ վերստ հեռու, տափարակ տեղ մը ամփոփելով, վրան վանք մը շիներ են* Մամասայ վանք, *որ կայ այժմ քայքայուած վիճակի մէջ։ Գեղարքունի, 539։*

— *Այս անուամբ Քրդաց գիւղ մը կայ Աղձնեաց մէջ, Բաղէշի արեւելեան կողմը, յորում կան քանի մը տուն Հայ։*

ԱԼԵԱՂՈՒ *կամ* ՂԱՄԵԱՆԻ. *Հն.* ՈՂՈՃԻ. — *Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի, հին Բաստձոր և այժմեան Ագուլիս վիճակի մէջ. բն. 347 ամբողջ Հայ, բաժնուած 38 տան։ Գիւղիս մօտ կայ Թթուաջուր հանքային աղբիւր։*

ԱԼԵՒԱՆ. — *Փայտակարանի գաւառներէն մին։*

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ, ԳԻՒՄՐԻ *կամ Հն.* ԿՈՒՄԱՅՐԻ. *Գղ.* ALEXANDRAPOL. Ռ. Александраполь. — *Գլխաւոր քաղաք համանուն գաւառի, Շիրակայ (Այրարատ) արեւելեան մասին մէջ. արեւմտեան կողմէն երկու վերստ հեռաւորութեամբ խոխոջալով դէպ ի հարաւ կը վազէ Ախուրեանը. հարաւային արեւելեան կողմն է Երեւանը 125 հազարամետր հեռու, և 65 հզրմ. դէպ ի հարաւային արեւմուտք կ'ինկնայ Կարսը։ Քաղաքիս հիւսիս—արեւմտեան կողմերը դեռ կը տեսնուին հին և խարխուլ տանց մնացորդներ, նախնի* Կումայրի *կամ* Գիւմրի *գիւղին։*

*Արտաւազդ Մամիկոնեանը, 771 թուին*

*Արաբացւոց հարստահարութեանէն նեղուելով, Նախարարաց ոմանց հետ միաբանելով, և Դըւնի մէջ իր զօրաց մեծ պատրաստութիւն տեսնելէ վերջ, «... հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի, և սպանանէր զհրա-*



23. Ալեքսանդրապոլ։

*մանատար հարկին։ Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով. գնայր ի կողմանս Վրաց աշխարհին...»։ Յ. Խօջայեանց, չգիտեմ ինչ հիմամբ գիւղիս անուան հետեւեալ ստուգաբանութիւնը կ'ընէ. «Գիւմրի բառը կրճատուած է Գումարի բառից, որովհետեւ սա եղած է զօրաց գումարման տեղ Գագիկ արքայի ժամանակ, որ նստում էր Անի քաղաքումը»։ Գիւմրին ժամանակի զանազան շրջանաց մէջ փոփոխակի Հայերէն անցած է Պարսից, Վրաց, Թրքաց ձեռքը. Յորում 1828ին վերջնական կերպով տիրեցին Ռուսք հանդերձ իրեն շրջականներով։ 1830ին Կարնէն, Կարսէն, Պայազիտէն և Բաղէշէն*

Ռուսաց բաժինը գաղթող Հայ ժողովրդոց մէկ մասը, տեղւոյս դրից յարմարութիւնն տեսնելով՝ այստեղ ընտրեց իրեն երկրորդ հայրենիք, և հզօր պետութեան թևարկութեամբ, փողոցներու և թաղերու բաժնելով հին Գիւմրիի մօտ գտնուած դաշտը, քիչ ժամանակի մէջ սկսաւ շէննալ և քաղաքի կերպարանք առնուլ. և երբ 1836ին, գրեթէ 1 վերստ քաղաքէն հեռու դէպ ի արեւմուտք, հանդիսով հիմն ձգեցին ամուր բերդին Կարսի և Օսմանցւոց զօրութեան դէմ կենալու համար, դեռ աւելի բարգաւաճեցաւ, և անկից վերջ Ռուսաց կայսրուհւոյն անուամբ կոչուեցաւ Ալեքսանդրապոլ։ Քաղաքս (Թ. 23) իւր այժմեան արտաքին դիրքով, գեղեցկութեամբ, կանոնաւոր փողոցներով, բաւական փառաւոր շէնքերով, բազմամարդութեամբ, որ աւուր բարգաւաճող վաճառականութեամբ՝ մանաւանդ նոր երկաթուղւոյ շնորհիւ, Կովկասու առաջնակարգ և Հայաշատ քաղաքներէն մին կրնայ համարուիլ։ Իւր շինութեանց աւելի գեղեցկութիւն և հրապուրիչ տեսք տուողքն են կարմիր և սեւ փխրուն քարերը, զորս կը հանեն շրջականներէն։ Մասնաւորաբար Խաչքար և Ղանլիձա գիւղերն անուանի են իրենց սեւ քարով. իսկ Դերպենտ, Ղօնախղրան և Ջաջուռ՝ կարմիր քարի կողմանէ։ Շինութեանց փայտ ընդհանրապէս կը բերեն Ախալցխայի և Բորժոմի անտառներէն և Սողանլուէն. փայտի նուազութեան և թանկութեան պատճառաւ, շատ տներ աթար կը վառեն։ Շէնքերու կտուրները սովորաբար տափարակ են. իսկ փողոցները սալայատակ չըլլալով, հողմոտ օրեր շատ անգամ ստիպուած են քաղաքացիք փոշւոյ մեծ քանակութիւն կլլել։ Քաղաքս ծովու մակերեւութէն բարձր է 1548м. օդը աշնան վերջը և ձմեռը սաստիկ ցուրտ է և ձիւնաբեր, գարունը անձրեւոտ և ամառը բարեխառն է և զուարթ մինչեւ աշնան սկիզբը։ Ունի առատահոս և պատուական աղբիւրներ և բազմաթիւ ջրհորներ։ Երբեմն անձրեւաց սաստիկ յորդութեամբ՝ մեծ վնասներ կրած է քաղաքս, և ի մասնաւորի 1862 և 1878 թուականներուն։ Այսպիսի վնասներու դի-



24. Սահմանախաչ Գիւմրիի մօտ։

մացն տանելու նպատակաւ, շինած են կամարակապ երկայն ջրանցքներ։ Հողն արգաւանդ է, շատ ընտիր և առատ է ցորենն, գարին և հաճարը, առատ է նաեւ ձէթը։ Քաղաքիս հարաւային կողմը են բանջարանոցները, յորս կը բուսնին անհամար պիտոյից կարեւոր եղածները. ինչպէս սոխ, տարգոն, մաղադանոս, համեմ, վարունգ,

 ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ

դդում, մեծագլուխ կաղամբ, սոխպղին, բազուկ, և այլն։ Սովորաբար այս կողմերը կը տնկին ուռենի և բարտի, իսկ պտղատու ծառերէն գլխաւորաբար խնձորենի, ծիրանենի և բալենի միայն կը յաջողին պտուղ տալու, և ասոր պատճառն է երկրի բարձրութիւնն և օդոյ ցրտութիւնը։ Սակայն երբեք չի զրկուիր պտղէ, իր ժամանակին առատութեամբ կը բերեն Երեւանու ընտիր խաղողն և ձմերուկ և Ախալցխայի հոտաւէտ խնձորն, տանձը և այլ տեսակ պտուղներ։

Ալեքսանդրապօլը անպարիսպ է, տարածուած դաշտի վրայ, որոյ արեւելեան հարաւային կողմէն կ'երևի Արագածի յափշտակիչ գեղեցիկ կատարը. արեւմտեան կողմը երկայն ծառուղի մը կայ, որ կը շարունակուի մինչեւ բերդը։ Այս բերդը, դարուս զինուորական նշանաւոր շէնքերէն մին կարելի է համարել, թէ՛ ամրութեամբը և թէ ճարտարապետական կառուցմամբը։ Ընդարձակութեամբն ևս անուանի է. ունի զինուց մթերանոցներ, ամբարանոց և գրեթէ 16,000 հոգւոյ բնակարան, մեծ բանտ մը, առանձին հիւանդանոց, շատ գեղանափոր և կամարակապ տեղեր և բերդապահ զօրավարի համար յատուկ պալատ։ Ասոնցմէ զատ ունի խաչաձեւ, գեղեցիկ եկեղեցի մը լայնանիստ գմբեթով, շինուած 1853ին Նիկողայոս Ա. կայսեր հրամանաւ, և հիւսիսային կողմը Կարմիր կոչուած աշտարակ մը։ Մէկ խօսքով բերդս իւր այս ամենայն հանգամանօք, շրջապատի մարտկոցներով և խոր ու լայն խրամներով կրնար երկար ժամանակ դիմադրել թշնամեաց ուժերուն, եթէ Կարսի նուաճմանէն վերջ իւր կարեւորութիւնն չկորուսանէր. այժմ իբրեւ պահեստատուն կը ծառայէ։

Վերջին նոր վիճակագրի համեմատ Ալեքսանդրապօլի բնակիչք հետեւեալ կերպով կը բաժնուին

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հայք . | . 3,651 | տուն | 22,921 | հոգի |
| Մահմէտականք . | 89 | » | 881 | » |
| Յոյնք և Ռուսք . | 75 | » | 386 | » |
| Այլեւայլք . | 10 | » | 42 | » |
| Գումարն | 3,825 | տուն | 24,230 | հոգի։ |

Այս ցուցակէն կը տեսնուի թէ քաղաքիս բնակչաց մեծամասնութիւնն կը կազմեն Հայք. ինչպէս պիտի տեսնենք վերջը, նոյն համեմատութեամբ են նաեւ համանուն գաւառի մէջ։ Ալեքսանդրապօլի երկայն և կամարակապ շուկայն նշանաւոր է. որուն երկու կողմը կան կրպակներ և մէջտեղը հրապարակ. թէ՛ արուեստները և թէ վաճառականութիւնը, գլխաւորաբար Հայոց ձեռքն է։ Օտարականաց և ուխտաւորաց համար կան քանի չափ պանդոկներ, և քանի մը հոյակապ բաղնիքներ։

Բերդի եկեղեցիէն զատ, հոս կան ուրիշ վեց եկեղեցիներ, մին Յունաց՝ որք հայախօս են, և հետեւեալ հինգը Հայոց. ա. Ամենափրկիչ, քաղաքի կեդրոնը, շինուած է 1859–1873 տարիներու մէջ, Անւոյ կաթուղիկէին ձեւով, որ իր մեծութեամբն ու փառաւորութեամբ Ալեքսանդրապօլցի Հայոց ջերմեռանդութեան ճշմարիտ պարծանքն է։ Պ. Գեղամեանց եկեղեցւոյս համար կ'ըսէ. «... եթէ գոթական ճարտարապետութեամբ շինուած լինէր, միշտ կարող էր մրցել Վիեննայի Ս. Ստեփանոս եկեղեցւոյն հետ, մանաւանդ սորա և նորա դիրքն զարմանալի նմանողութիւն ունին»։ Հրաշակերտ եկեղեցւոյս համար 100,000 ռուբլիէ աւելի ծախք եղած է. բաց այտի, միշտ կարգաւ ձրիաբար աշխատած են քաղաքի արուեստաւորները։ Ամենափրկչի կը վերաբերին մօտը շինուած միակարգ և գեղեցիկ կրպակները։ բ. Ս. Աստուածածին, որ Կովկասի Հայոց համար նշանաւոր ուխտատեղի է իւր մէջ պահուող Եօթն Վիրաց կամ Խոցից կոչուած հրաշագործ հին պատկերովը։ Աւանդութիւնը Ս. Ղուկաս աւետարանչէն նկարուած կը համարի այդ պատկերը, որ ի Հայս բերուած է Գրիգոր Մագիստրոսէն և երկար ժամանակ մնացած Հասանղալէի Բասենու կամ Կարմիր Վանքի մէջ. իսկ քաղաքս բերած են իրենց հետ Բասենցի Հայ գաղթականք։ Եկեղեցւոյս հիւսիսային կողմը են ուխտաւորաց յատուկ սենեակները, որոց մէջ գրեթէ միշտ լի են բազմաթիւ ուխտաւորներ, և մանաւանդ Վերափոխման տօնին։ Իւրաքանչիւր տարի ուխտաւորաց և բարեպաշտից նուիրատուութիւններէ ձեւացած գումարէն կը նպաստեն Ալեքսանդրապօլի և Հառիճոյ հոգեւոր ուսումնարաններուն։ գ.

Ս. Նշան, կառուցուած է Հանգուցեալ Իշխան Ղահրաման Արղութեանի ծախիւք։ դ. Ս. Գէորգ։ ե. Ս. Աստուածածին, Հայ կաթոլիկաց (50 տնուոր), շինուած և օծուած



25. Աւերակ եկեղեցի Ալեքսանդրապոլի մօտ։

է 1843–1855 տարիներու մէջ, Ջանիւք Անանիկեանց Աղեքսանդր Վարդապետի Արարատով։ Այս եկեղեցիներու սպասաւորող քահանայից թիւը կը հասնի գրեթէ երեսունի։

Հայոց վիճակային հոգեւոր ուսումնարանէն զատ, արժանայիշատակ Աղեքսանդր Վ. Արարատովի ժամանակ ուրիշ հոգեւոր դպրոց մ'ալ ունէին քաղաքիս Հայ–կաթոլիկները, ուր տարրական ուսմունքներ կը սորվէին 20ի չափ փոքր մանուկներ, և գրեթէ նոյնչափ թուով ալ, շրջակայ գեղերէն եկած դպիրներ քահանայութեան կը պատրաստուէին, որոց ուսմանց շրջանը կը տեւէր եօթը տարի։ Ալեքսանդրապօլը ունի նաև

# ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ

## ԳԱԻԱՌԻ 27 ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

| ԱՆՈՒԱՆՔ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ | ՀԱՅՔ | | | | ՕՏԱՐՔ | | Տունք | Ընդամէնը երկ. սեռ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Լուս. | | Կաթ. | | Ռուս. ՑՂ. Թ. Ք. Դխ. | | | |
| | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | | |
| 1 Ջաջուռ (7 գ.) . . . | 3221 | 3127 | — | — | — | — | 724 | 6348 |
| 2 Քեաֆթարլու (9 գ.) . | 3290 | 3020 | 521 | 447 | — | — | 837 | 7278 |
| 3 Քեալթախճի (5 գ.) . | 2311 | 2087 | — | — | — | — | 459 | 4398 |
| 4 Քէփէնէկ (5 գ.) . . | 1555 | 1504 | — | — | 53 | 36 | 404 | 3148 |
| 5 Միրաք (9 գ.) . . . | — | — | — | — | 1857 | 1477 | 380 | 3334 |
| 6 Հաճի Խալիլ (14 գ.) . | 2669 | 2412 | — | — | 676 | 598 | 720 | 6355 |
| 7 Ալիխան (6 գ.) . . | 917 | 897 | — | — | — | — | 196 | 1814 |
| 8 Եաստղուլ (9 գ.) . . | 2958 | 2756 | — | — | — | — | 664 | 5714 |
| 9 Իլլի Գարագիլիսէ (9 գ.) | 2418 | 2224 | 37 | 28 | 89 | 78 | 544 | 4874 |
| 10 Գզըլղօչ (12 գ.) . . | 1428 | 1280 | 872 | 800 | — | — | 498 | 4380 |
| 11 Փոքր Գարագիլիսէ (7 գ.) | 2856 | 2762 | 863 | 735 | 104 | 92 | 933 | 7413 |
| 12 Ղփչաղ [Հառիճ] (6 գ.) | 3259 | 2878 | — | — | — | — | 742 | 6137 |
| 13 Մօլլա Կէօքճէ (6 գ.) . | 2057 | 1859 | 625 | 621 | 4 | — | 610 | 5166 |
| 14 Սէօկիւտլիւ (5 գ.) . | 2552 | 2231 | — | — | — | — | 551 | 4783 |
| 15 Թաւշան–Ղըշլաղ (13 գ.) | 4600 | 4073 | — | — | — | — | 1132 | 8673 |
| 16 Հոռոմ (8 գ.) . . . | 3086 | 2797 | — | — | — | — | 761 | 5883 |
| 17 Համամլի (3 գ.) . . | 2025 | 1714 | — | — | — | — | 415 | 3739 |
| 18 Մեծ Բէկքէնտ (5 գ.). | 3044 | 2333 | — | — | — | — | 556 | 5377 |
| 19 Պօղկքէնտ (1 գ.) . . | 877 | 696 | — | — | — | — | 157 | 1573 |
| 20 Վարդնաւ (3 գ.) . . | 1379 | 1264 | — | — | — | — | 256 | 2643 |
| 21 Վոսկրէսէնոկա (1 գ.). | — | — | — | — | 226 | 227 | 78 | 453 |
| 22 Մեծ Գարագիլիսէ (1 գ.) | 1420 | 1266 | — | — | — | — | 380 | 2686 |
| 23 Ղըշլաղ (2 գ.) . . . | 815 | 691 | — | — | — | — | 161 | 1506 |
| 24 Նիքիթինոյ (1 գ.) . . | — | — | — | — | 257 | 247 | 66 | 504 |
| 25 Սարալ (10 գ.) . . | 858 | 743 | — | — | 1685 | 1387 | 567 | 4673 |
| 26 Սիխմատէն (1 գ.) . | — | — | — | — | 119 | 105 | 38 | 224 |
| 27 Եաղուպլի (3 գ.) . . | 907 | 968 | — | — | 293 | 257 | 251 | 2425 |
| Գումարն . . . . | 50502 | 45583 | 2918 | 2631 | 5363 | 4504 | 13080 | 111501 |

գաւառական մեծ վարժարան մը Հայ, յոյն, լատին և ռուս լեզուներու։ Հայոց ունեցած ուրիշ 10էն աւելի ուսումնարաններէն յիշենք գլխաւորները. Արութեան, և Սահականուշեան՝ օրիորդաց համար։ Քաղաքիս օդոյ և ջրոյ պարզութեան և մաքրութեան շնորհիւ, տղայոց մտքերն շատ արթուն և յիշողութիւննին սուր է, և եթէ դեռ աւելի խնամք տարուի ուսումնարանաց բարգաւաճման և բազմացուցման, քիչ ժամանակի մէջ հսկայաքայլ պիտի յառաջադիմէ, ոչ միայն վաճառականական այլ և գրական ասպարիզի մէջ։ Ուսումնասիրութիւնն արդէն բաւական արծարծուած է նոյն իսկ հասարակաց դասակարգի մէջ, կրպակաւորք իրենց պարապոյ ժամերը կ'անցընեն լրագրաց ընթերցմամբ. քաղաքիս սրճատուններն կրնան համարուիլ մէկ մէկ հասարակաց ընթերցարան։ Ռուսիոյ և Եւրոպայի զանազան քաղաքաց մէջ կան Ալեքսանդրապոլցի ուսանողներ։ Քաղաքս թէ և ունի մէկ երկու տպարաններ, սակայն ցարդ մէկը ձեռնարկած չէ հրատարակելու օրագիր կամ ամսաթերթ մը։ Քաղաքացւոց գիտնական դասակարգն լաւ կ'ընէր, եթէ այսպիսի կարեւոր գործի մը սկիզբն առնէր. մանաւանդ որ Ալեքսանդրապոլը ունի բաւական թուով անձինք չափաւոր թերթի մը նիւթ տալու համար։

— Ձէրքէզի-ծոր. Ալեքսանդրապոլի արեւմտեան կողմը բերդի մօտ է ձորակս, որ մեծ զբօսավայր է քաղաքացւոց։ Այս ձորակի մէջէն կ'անցնի գետակ մը որոյ եզերքները կը զարդարեն բարտիներ և ուռենիներ. այստեղ կան աւազաններ, պաղ ջրոյ աղբիւրներ, փայտեայ և քարէ նստարաններ, ճեմելիքներ և մի քանի ուտեստեղինաց և ըմպելեաց տնակներ։ 1867 թուին տեղւոյս զինուորական աշխատաւոր գունդը, ջրի ճամբայ բանալու համար ձորակս պեղած ատեն, գետնի տակէն յայտնուեցաւ աւերակ եկեղեցեակ մը, երեք մատուռներով (Թ. 25). այս մատրանց միոյն վրայ գտեր են հայկական «Թվ. ՄԵ» (756) թուականը։ Յայտնուեր են նաեւ եօթը գերեզմաններ, որոց միոյն վրայ հայատառ արձանագրութիւն կայ մաշուած և դժուարընթեռնլի վիճակի մէջ։

— Քաղաքիս անուամբ կոչուող գաւառն, Երեւանու նահանգի եօթը մասերէն մին է, և կը համապատասխանէ հին Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին։ Սահմանքն են Արմ. էն Արփա և Ախուրեան գետերը, Ար. էն Արագածոտն գաւառի Արագած, Նոր Ակմէտ, Գարախաչ, Աղլաղան, Գոշ Թէփէսի կամ Թէրզի Դըշլա լերինք, Հր. էր Արագածոտն գաւառը և Հս. էն Գուգարաց աշխարհի Խօքիզ, Մատարէփէ, Լէճի, և այլ լերինք։ Ունի չորս վիճակ, 27 հասարակութիւն և 161 գիւղ։

Ալեքսանդրապոլի գաւառի բնակչաց հետ գումարելով համանուն քաղաքի բնակիչներու թիւն, ընդհանուր գումարն կը լինի 135731 քն. յորոց 124555ը Հայ են։ Գաւառիս տարածութիւնն կը համարուի 3760 քառակուսի հազարամետր. հիւսիսային մասը լեռնային է և ջրաշատ, իսկ հարաւային կողմը դաշտային է և սակաւաջուր, և քանի մը լեռնաբլուրներէ զատ բարձր լեռ չունի։ Գետակներն են Խօրթիշլիշ, Ագչայ, Եղի տէրէ, Գարանիկա (Կարկաչ), Սօուզ պուլաղ, և այլն։ Լեռներէն յիշենք Մէփ 2450մ, Կամխուտ 2107մ, Շիշքէփէ 2287մ, Գզըլ տաղ 1803մ։ — Ղեւոնդ պատմ. Լ.Գ. 136։ Կոստանդ Հ. Աշխ. 1862. 226–234։ Արարատ Ամսագիր, 1870. 312–15, 344–47։ Փորձ, Գ. դ. 56–80։ Շիրակ, 154–55։

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏՏԱ, ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱԿ կամ ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ. Գղ. ALEXANDRETTE. Թ. اسكندرونه . — Ծովեզերեայ վաճառաշահ գլխաւոր քաղաք համանուն գաւառակի (Ծով. Կիլիկիա), որ կը վերաբերի Հալէպի վիլայէթին։ Կառուցուած է Ամանոս լերանց ստորոտը, հին Հայոց ծոցի և այժմեան համանուն կամ Իսկէնտէրունի ծոցի (Թ. 26) խորը, աջ ափանց վրայ։ Ունի 160 հազարամետր երկայնութեամբ կառաց ճանապարհ մինչև Հալէպ քաղաքը։ Շուրջը կան 800 պարտէզ և 200ի մօտ այգիներ։ Գաւառակի բնակիչք են 24,000, իսկ քաղաքը միայն՝ 7,000 հոգի, կէսէն աւելի քրիստոնեայ, Հայ, Յոյն, և այլն։ Գրեթէ երեսուն տարի առաջ Ալեքսանդրեակը իր ճահճային և վատառողջ օդոյն պատճառաւ, հազիւ 3–400 հոգի պարունակող աւան մ'էր, որ կը տիրէր շարունակ ջերմախտը։ Բայց այժմ,

ձեռք առած առողջապահական ջանքերու և միջոցներու շնորհիւ թէ և բաւական բարեփոխուած է, սակայն հարկ կը լինի դարձեալ, ժողովրդեան բարեկեցիկ դասուն, ամրան մէջ



26· Ալեքսանդրէթ կամ Հայոց ծոց:

3–4 ամիս հեռանալ քաղաքէն և բնակիլ 15 հզրմ. հեռու Պէյլանի լեռնային և զըւարճալի ամարանոցները:

Երբ Ալեքսանդրեակէն Հալէպ և անտի մինչև Պարսկային ծոցը, երկաթուղի հաստատելու յոյսը կատարուի, այն ժամանակ քաղաքս մեծապէս պիտի բարգաւաճի:

Քաղաքիս ջուրը, որ Փուճար պաշը կոչուած աղբիւրէ մը կը հոսէ, մաքուր է և քաղցրահամ: Իսկէնտէրուն առ այժմ երկրագործական և արհեստական արտադրութիւն չունի, միայն մօտ տարիներս քաղա-

քէն հեռու դէպ ի հարաւ ծովեզերեայ Պապավ ատանի մօտ Ճինկեան քեօյ գիւղի մէջ գտնուեցաւ քարիւղի հոր, որոյ շահագործման արտօնութիւնը տրուած է Ամէա Նեձարի անուն էֆէնտիին, 75 տարուան պայմանաժամով։

Իսկէնտէրունի նաւահանգիստը շատ ընդարձակ է և կարող է ընդունել մեծամեծ նաւատորմիղներ. դիրքն ապահով է և լաւ պատսպարուած և քիչ աշխատութեամբ կարելի է դարձնել պատուական նաւամատոյց մը։ Միջերկրական ծովի արեւելեան եզերաց վրայ գտնուած նաւահանգիստներու մէջ Պերութէն վերջ սա է նշանաւորագոյնն, և հոս կը համբարուին Տիարպէքիրի, Հալէպի և ամբողջ Միջագետաց ներածութեան և արտածութեան վերաբերեալ վաճառականական նիւթերն։ Քաղաքիս հետ տասն և հինգ




28. Հին դրամ Ալեքսանդրեկի։

օրեայ կանոնաւոր երթեւեկութիւն հաստատած են հետեւեալ շոգենաւային ընկերութիւնները. Գաղղիական Մեսաժըրի Մարիթիմ, Ռուսական շոգենաւային ընկ., Օսմանեան Խտարէի Մախսուսէ, Աւստրիական Լոյտ, Եգիպտական Խտտիվիյէ. կան նաև ոչ կանոնաւոր, բայց յաճախակի երթեւեկող շոգենաւներ, ինչպէս գաղղիական Ֆապէր, անգղիական Պէյս, Մօս, Լէյլանտ, և այլն։

1890 տարւոյ մարտ 1էն մինչև 1891ի փետր. 28ը այս նաւահանգիստը յաճախեր են.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Անգղիական | . | 69 | շոգենաւ, | 1 | առագաստանաւ |
| Գաղղիական | . | 65 | » | — | » |
| Եգիպտական | . | 55 | » | — | » |
| Օսմանեան | . | 51 | » | 215 | » |
| Ռուսական | . | 24 | » | — | » |
| Իտալ. Աւստ. Խառլ. Յուն. և Սամոս կղ. | | 12 | » | 25 | » |
| Գումարն. | . | 274 | » | 241 | » |

Նաւահանգստէս արտահանուած գլխաւոր ապրանքներն են. բուրդ, ձեռագործներ, արմտիք, արջառ և ոչխար, գխոր, մատուտակի արմատ, պիստակ, նուշ, չամիչ, մորթ, մետաքսի բոժոժ, չրանուանծ պղինձ, բամբակ, խէժ, կնճութ, շինելափայտ, ծխախոտ, այծի մազ, մեղրամոմ, և այլն։

Այս նիւթերն տարուած են հետեւեալ երկիրները.

| | | |
|---|---|---|
| Թուրքիա . . . | 8, 556, 590 | ֆր. վաճառք |
| Եգիպտոս . . . | 4, 892, 450 | » » |
| Գաղղիա . . . | 4, 547, 445 | » » |
| Անգղիա . . . | 2, 060, 325 | » » |
| Իտալիա . . . | 1, 749, 655 | » » |
| Ամերիկա . . . | 884, 250 | » » |
| Աւստրիա . . . | 287, 110 | » » |
| Յունաստան . . | 99, 600 | » » |
| Զանազան երկիրներ . | 1, 285, 550 | » » |
| Համագումարն. . . . | 24, 157, 975 | ֆր. վաճառք։ |

Իսկ ներմուծուած գլխաւոր ապրանքներն են, ձեռագործ և բամբակեղէն, գեղօրայք, ասուեղէն, լեղակ, մետաքսեղէն, կաշի, շաքար, բանուած պղինձ, քարիւղ, երկաթեղէնք, սուրճ, կապար, անագ, զինկ, բրինձ, գինի, ալքօլ, թղթեղէն, գիրք, որդան կարմիր, ապակեղէնք, կաժուած մետաքս, պըղպեղ, և այլն։

Այս նիւթերը բերած են հետեւեալ երկիրներէն.

| | | |
|---|---|---|
| Անգղիայէ . . | 22, 517, 230 | ֆր. վաճառք |
| Գաղղիայէ . . | 7, 185, 440 | » » |
| Թուրքիայէ . . | 6, 179, 975 | » » |
| Աւստրիայէ . . | 3, 805, 370 | » » |
| Եգիպտոսէ . . | 1, 901, 440 | » » |
| Իտալիայէ . . | 902, 965 | » » |
| Ռուսիայէ . . | 700, 450 | » » |
| Զանազան երկիրներէ. | 429, 200 | » » |
| Համագումարն . . . | 43, 622, 070 | ֆր. վաճառք։ |

Որով նոյն տարւան մէջ եղած է

| | | |
|---|---|---|
| Ներածութիւն . . | 43, 622, 070 | ֆրանկայ |
| Արտածութիւն . . | 24, 157, 975 | » |
| Գումարն . . | 67, 780, 045 | ֆր։ |

Իսկ միջին հաշուով կը լինի

| | | |
|---|---|---|
| Ներածութիւն . . | 39, 913, 720 | ֆրանկայ |
| Արտածութիւն . . | 63, 652, 471 | » |
| Գումարն . . | 63, 566, 191 | ֆր։ |

Ընդհանրապէս կ'ընդունուի թէ Իսկէնտէրունը հիմնած է մեծն Աղեքսանդր, Դարեհի դէմ ըրած մեծ յաղթութեան յիշատակին, և ուրիշ համանուն քաղաքներէն որոշելու համար հին ատեն կը կոչէին Աղեքսանդրիա առ Իսսաւ 'Αλεξάνδρια ἡ'κατ' Ἴσσον, կամ

Աղեքսանդրիա Կիլիկիոյ 'Αλεξάνδρια Κιλικίας. Միջին դարու մէջ կոչուեցաւ նաև Փոքր Աղեքսանդրիա, Alexandria Minor, Աղեքսանդրեօլա, Alexandriola, և ի վերջոյ՝ ինչպէս նաև այժմ Աղեքսանդրետտա, Alexandretta, կամ Աղեքսանդրեակ։

Քաղաքս դէպ ի հարաւ հինգ մղոն հեռաւորութեամբ կը գտնուէր Փիւնիկեցւոց երեւելի Միւրիանդոս քաղաքը։ Նոյնպէս քառորդ ժամու հեռաւորութեան վրայ կը գտնուի Աղեքսանդրեատայի բաղմանկիւնի բերդը, որուն միայն հիմքը կը տեսնուին։

այժմ եւ օր աւուր կ'ընդարձակի։ Կան բաւական քարաշէն վայելուչ բնակարաններ, եւրոպական գրեթէ բոլոր տէրութիւնները ունին հիւպատոսարան, նոյնպէս Ամերիկոյ Միացեալ Նահանգները։ Տեղւոյս Հայք ունին դպրոց և եկեղեցի և առանձին առաջնորդ. զբաղած են վաճառականութեամբ և յանձնակատարութեամբ։ Քաղաքիս մէջ կան 41 վաճառանոցք, 300 կրպակ, 14 իջեւան, 11 փուռ, 2 գինետուն և 13 ճաշարան։ Կարմեղական միանձունք հոս ունին եկեղեցի մը, Հրէայք ժողովարան, և Թուրքերն ալ մըզ-



28. Աղեքսանդրեակ քաղաքի մէկ մասը։

Խաչակրաց առաջին գալստեան ժամանակ 1097 թուին, Տանգրի տիրեց քաղաքիս. որուն տեղացի Հայերը և Թուրքերը ընծաներ բերին։ Որոշ չգիտենք, բայց շատ հաւանական է թէ Աղեքսանդրեակը բաւական ժամանակ մնաց Հայոց ձեռքը։ Եգիպտացիք Այասը աւերելէ վերջ, նուաճեր էին նաև այս նաւահանգիստը, բայց 1347 ին Հայերը Կոստանդին Դ թագաւորի ժամանակ, Հռոդոսի ասպետաց օգնութեամբ, անգամ մը եւ ազատեցին զայն թշնամեաց ձեռքէն։

1823 ին երկրաշարժէն մեծապէս վնասուեցաւ, բայց վերջը շէնցաւ (Թ. 27), և կիթ մը։ — Սիսուան, 417–18։ Կիլիկիա, 229–239։ Վ. Բիճէ, Բ. 201–208։

ԱՂԷԹԼՈՒ. — Հայաբնակ գիւղ այժմեան Երեւանու նահանգի Սուրմալու գաւառին մէջ, 694 բնակչօք։

ԱՂԷԼՈՒԱ կամ ԱՂԻԼՈՒ. — Գիւղ Սիւնեաց (Զանգեզուր) Ծղուկ գաւառի մէջ, Սալվարտ լերան ստորոտը, համանուն վտակի մօտ։ Ունի Ս. Գէորգ հին և փոքրիկ եկեղեցի մը։ Բնակիչք 1828ին գաղթած են Պարսկաստանէն. 362 հոգի, բաժնուած 79 տան։ Սովորական գիւղական աշխատութիւններէ և խաշնարածութենէ զատ, այս

գիւղացիք, նաեւ աղ կը ստանին Նախիջեւանէն Շաշի։

— ԴԱՇՏ. — Այս դաշտը կը յիշէ Մատթէոս Ուռհայեցի (ԾԶ), Զօրրորդ Հայոց Հանձիթ (Խարբերդ) գաւառի մէջ, ուր քաջն Թոռնիկ տէրն Սասնոյ և որդին Մուշեղայ, Փիլարտոսի յաղթեց, և շատ աւարաւ դարձաւ ի Սասուն։

ԱԼԷՄ. Տես ԱԼԱՄԱՆ։

ԱԼԷՅԵԱՆ ԴԱՇՏ. Յն. Ἀλήϊον πεδίον. Լտ. Campus Alejus. Թ. Զուխուր Օվա (Խորադաշտ). — Հարթ դաշտավայր Կիլիկիոյ, գրեթէ 1500 քառակուսի մղոն տարածութեամբ, Ջահան և Սարոս գետոց միջավայրը։ Ի հնուց սկսեալ միշտ գովուած է այս պարարտ և արգասաբեր երկիրը, ինչպէս ազգային հին տեղագրող մ'ալ կ'ըսէ. «Է ամենաբեր հանգոյն երկրին Յորդանանու»։ Ոմանք ալ Եգիպտոսի Նեղոսէն ոռոգուած բերրի դաշտերուն կը նմանցնեն, վասն զի Նեղոսի նման Կիլիկիոյ գետերն ևս արգասաբեր աղմով կը պարարտացնեն երկիրը։ Դաշտիս բազմատեսակ բերոց անուանք պիտի յիշենք Կիլիկիոյ նկարագրին մէջ։

ԱԼԷՈՒՍ կամ ԱԼԱՒՍ. — Գետ Լեռնային Կիլիկիոյ, աջակողմեան օժանդակ Սարոսի, Հաճնէն վար։

ԱԼԸՆՃԱ. Տես ԵՐՆՋԱԿ։

ԱԼԹԸՆ ՀԻՒՍԷԻՆ. — Գիւղ Հայոց Վերին Կեղիի մէջ, որոյ մօտէն կը հոսի վտակ մը որ կը խառնուի Օրօրի հետ։ — Նոյն գաւառի մէջ համանուն գիւղ մ'ալ ունին Քուրդք, որոց մօտ կը գտնուի աղի հանք։

ԱԼԽԱՊԱՏ. — Հայաբնակ գիւղ Երեւանու Նախիջեւան գաւառի մէջ. բն. 410, բաժնուած 76 տան։ Ալխապատցիք 1828ին գաղթած են Պարսկաստանէն, և վերանորոգած աւերակ վիճակի մէջ գտնուած այս գիւղը։ Գիւղս ունի յորդահոս միակ աղբիւր (քահրեզ) մը, որ կը դարձնէ երկու երեք ջրաղացներ և կ'ոռոգէ այգիները և դաշտերը։ Ալխապատցիք ժիր երկրագործներ են, ունին այգիներ և պարտէզներ. ոմանք ալ Նախիջեւանի մէջ խանութ և տուտուր ունին։

ԱԼԽԲԷԿԼՈՒ. — Գիւղ Հայոց՝ Երեւան նահանգի (Արագածոտն), Վաղարշապատու վիճակին մէջ. բն. 338, բաժնուած 92 տան. ունին Ս. Լուսաւորչի անուամբ եկեղեցի մը։

ԱԼԽԲՈՒԴԱՐ. — Գիւղ Տիգրանակերտէն մէկ ժամ հեռաւորութեամբ Տիգրիսի արեւմըտեան կողմը. ունի պատուական ջրոյ ակն, որ ջրաղացներ կը դարձնէ։ Բնակիչք խառն են. Հայք, Թուրք և Քիլտանցիք։ Կան երկու եկեղեցիք, մին Հայոց, Ս. Աստուածածին, և միւսն Քիլտանեաց Մար Քրիաքոս (Ս. Կիրակոս)։

ԱԼԽԲՈՒՆԱՐ. — Փոքրիկ գիւղ Հայոց՝ Տիգրանակերտէն կէս ժամ հեռու. ունի պատուական ջուր փայտս առւյի, որ մինչև քաղաք տարած են։ Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։

ԱԼԽ–ԳԶԸԼ. Տես ԱԿՈՌԻ ՆՈՐ։

ԱԼԽԽԱՆ. — Գիւղ Ալեքսանդրապօլի գաւառի։ Համանուն հասարակութիւնն ձևացած է հետևեալ գիւղերէն, որոց բնակիչք ամբողջ Հայ են։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ալխխան . . . | 34 | տուն, | 346 | բն. |
| Պաշգեղ Բ. . . | 24 | » | 250 | » |
| Գարաքիլիսէ Գ. | 34 | » | 332 | » |
| Քէֆլու . . . | 36 | » | 285 | » |
| Սամուրլի . . | 25 | » | 239 | » |
| Սարիար Փոքր . | 42 | » | 362 | » |
| Գումարն . . | 195 | տուն, | 1814 | բն։ |

ԱԼԽԴԱՄԱՐ կամ ԱԼԽԹԷՄԷՐԼԻՒ. — Հայաբնակ գիւղ Երեւանու (Ճակատք) Սուրմալուի գաւառի մէջ, 1045 բնակչօք, բաժնուած 126 տան։

ԱԼԽ–ԴԸՌԸԽ կամ ԱԼԽ–ԴԸՌԱԽ. Հն. ԽԱՉԱՁՈՐ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի (Նոր Պայազիտ) գաւառի, Կոթայ վիճակի մէջ։ Բնակիչք 1830ին գաղթած են Բագրեւանդայ Ս. Յովհաննու վանքի (Ուչ–քիլիսա) գիւղէն. այժմ կը համարուին 1049 հոգի, բաժնուած 121 տան։ Ունին Ս. Պետրոսի և Պօղոսի եկեղեցի մը, որոյ շուրջը կան խաչքարեր և գերեզմաններ։ Գիւղիս արեւմտեան կողմի ձորակի մէջ քարածայռերու վրայ կան խաչանշաններ, ոմանք հին արձանագրութիւններով։ Իսկ արեւելեան կողմը հասարակաց ճանապարհի վրայ կայ խաչքար մը ՉԺԹ (= 1270) թուականի արձանագրութեամբ։ — Ս. Հովհաննէ, Ալի Դըռախի արեւմտեան կողմը պարսպապատ և կոփածոյ քարերով կառուցուած վանք մ'է, այժմ քայքայուած. այս

կողմը կայ նաև աւերակ գիւղատեղի մը։

— Ձօրաւոր Խաչ, այսպէս կը կոչուի, մեր վերը յիշած ձորակի մէջ գտնուած խաչարձաններէն մեծագոյնը, որուն ամէն տարի ուխտի կ'երթան շրջակայ գիւղերու բնակիչք Ս. Խաչի տօներուն։

Մեր նախնեաց բարեպաշտութեան նշանակ այս սրբազան նշաններէն զատ, գիւղիս մօտ կ'երևին կարծես արհեստական բլուրներ, որոց մէջ կը գտնուին հին թրծեալ աղիւսներ՝ զարդարուած զանազան նկարներով. պեղման և ուսումնական քննութեանց կարօտ են այս վայրերը։ — Գեղարքունի, 543–545։

ԱԼԻԳՈՒԼԻ–ՔԷՆՏ. — Այս անուամբ երկու գիւղ կայ Սիւնեաց Զանկեազոր այժմեան գաւառի մէջ, մին ունի 883 բն. ամբողջ Հայ. իսկ միւսն 643 Հայ և 175 Թաթար բնակիչք։

ԱԼԻՃԱՆ. — Գիւղ Երևանու Սուրմարի (Ճակատք) գաւառի մէջ, Երասխայ մօտ։ Բն. 666, բաժնուած 87 տան, ամբողջ Հայ։

— Գիւղ Հայոց Մշոյ դաշտին մէջ, բն. գրեթէ 800, բաժնուած 70 տան։ Կան նաև մէկ քանի տուն Քրդեր, որք շատ կը նեղեն գիւղացիս։

ԱԼԻՆՃԱ. — Տես ԵՐՆՋԱԿ։

ԱԼԻՇԷՐ. — Լեռ Կիլիկիոյ Մարաշի և Ալպիստանի մէջտեղ, Զէյթունի արևելեան կողմը։ Համանուն գիւղ մ'ալ կայ մօտերը, Խումա գետակին ձախակողմը Հայ և Թուրք բնակչօք, որոց թիւը 1000էն աւելի է։

ԱԼԻՋԱԼՈՒ. Տես ԱԼԱՋԱԼՈՒ։

ԱԼԻՍ կամ ԱԼԻԻՍ. Գղ. HALYS. Թ. قیزل ایرمق (Կարմիր Գետ). — Հռչակաւոր և մեծ գետ փոքր Հայոց. կը ձևանայ երկու վտակներէ, յորոց մին կը բղխէ Քէօսէ տաղի կոչուած լերան ստորոտէն և միւս մեծագոյնը՝ Գըզըլ տաղը (Կարմիր լեռ) ըսուած լերան ստորոտէն։ Կարմիր լերան հողը կարմիր ըլլալով, գետոյս ջուրն ալ կարմրագոյն է, և այդ պատճառաւ ի Թրքաց կը կոչուի Գըզըլ ըրմաք։ Գետս ոչ միայն նշանաւոր է իր բնական աշխարհագրական դիրքը, այլ և հին ժամանակները մեծ դեր կատարած է՝ իբրև քաղաքական սահման, զանազան ազգաց և ժողովրդոց։ Եփրատէն աւելի երկար ժամանակ Ալիս բաժանիչ սահմանագիծ եղած է Արևմտից և Արևելից. հոն կ'աւարտէին հելլէնական ժողովրդոց տիրապետութիւնք և յունական արուեստներն. անտի կը սկսէին արամէական լեզուներն և ասորական արուեստներն։ Բղխած տեղէն ուղղուելով դէպ ի Հր.—Ամ., կ'ոռոգէ նախ Զարա (1360մ), ապա Սեբաստիա (1250մ), և ընդունելով շատ մը մանր օժանդակներ կ'ընդարձակի և կը մտնէ Անկիւրիոյ կուսակալութեան մէջ։ Նոյն ուղղութեամբ առաջ կ'երթայ՝ տալով նշանաւոր պտոյտներու՝ մինչև Եարապուզուն, Կայսէրիէն ոչ այնչափ հեռու, և անտի մինչև նշանաւոր հովիտն Իւրկիւպ. բայց հոն Խոձա տաղ լերան շղթաներէն արգիլուելով կը դառնայ դէպ ի Հս.—Ամ., յետոյ դէպ ի Հս., և ի վերջոյ դէպ ի Հս.—Ար., ձևացնելով մեծկակ աղեղ մը, որուն լարին երկայնութիւնը Հս.էն Հր. 250 հազարամետրէն աւելի է։ Պաֆրա գիւղաքաղաքի վերի ծայրէն անցնելով քիչ մ'ալ առաջ կերթայ և կը թափի Սեւ ծով։

Իր բոլորակ ընթացից երկայնութիւնը կը համարուի 1000 հազարամետր։ Խորենացին կրկին անգամ կը յիշէ գետս, ծայրը ս տառի յաւելմամբ, Արտաշիսի տիեզերակալութիւններն պատմած ժամանակ. «... չեւ ընդ Ալիւս գետ անցեալ, զլիւդականն սատակեաց զզօրս, և կալաւ զԿրիւսոս»։ և «Կրիւսոս անցեալ ընդ Ալիւս գետ քակեցէ զիշխանութիւնս»։ Գետոյս վրայ ձգուած կամուրջներէն նշանաւոր են ա. Եաղըլը կէօզ (Միակամար), որ Կայսերիէն երեք ժամ հեռու կ'իյնայ, և մէկ կամար ունենալուն այսպէս կը կոչուի, որուն երկայնութիւնն է 160 ոտք, և ջրի երեսէն բարձր է 115 ոտք, և լայնքն է 5 քայլ։ բ. Սեբաստիոյ մօտ՝ Էյրի քէօփրիւ (Ծուռ կամուրջ), շինել տուած է, ըստ աւանդութեան, Սենեքերիմ թագաւորի աղջիկը, մեծամեծ կոփածոյ քարերով և 12 կամարներով։ Գետին զօրութենէն չվնասուելու համար, գիտմամբ ճարտարապետը ծուռ շինած ըլլալով, անունը դրեր են Ծուռ կամուրջ։ գ. Քէսիկ կամ Գըզըլ կամուրջն ալ շինուած է նոյնպէս մեծահատոր քարերով, ունի վեց կամար։ Ուրիշ

*կամուրջ մ'ալ ունի Ալիս 14 կամարներով, զոր կառուցած է Կեսարացի Գրիգոր ճարտարապետ մը, գրեթէ երկու դար առաջ: Ն. Հայաստան, 30: Տեղ. Սեբաստիոյ, 135–139: Խոր. Պատ. Բ. ժգ: Վ. Քինէ, Ա. 639–640: Վ. Ֆլորիվալ. Բառգիրք պատմ. և աշխարհ. 13:*

ԱԼԻՏԱՂԸ. — *Երկգագաթ լեռ Առաջին Հայոց, էրճիէշ լերան և Կեսարիոյ կամ Ղայսէրիի մէջտեղ: Վրան կայ աւերակ մենաստան մը* Ս. Կարապետի, *որ կը կոչուի նաև* Ս. Բարսղի *անուամբ, ուր երբեմն ճգներ է նոյն սուրբ հայրապետը: Այժմ անշէն և ամայի վիճակի մէջ է: Ամէն տարի Համբարձման ուխտի կ'երթան Հայք և Յոյնք: Եկեղեցւոյն խորանին տակ քառակուսի կանգնաչափ դուռ մը կայ, ուսկից մտնելով, մինչև մէկ ժամուան ճամբայ առաջ կ'երթան, և կ'աւանդեն թէ այդ ըլլայ սուրբ Բարսղի ճգնութեան այրը: Ն. Հայաստան, 311:*

ԱԼԻՐ, ԱԼՈՒՐ կամ ԱՅԼՈՒՐ. — *Գեղեցկադիր գիւղ Վասպուրականի Տոսպ գաւառի, Վանայ ծովակի արևելեան և Մարմէտի հիւսիսային կողմը, Կոտուց անապատի դիմացը: Գիւղիս անուանակոչութեան համար կ'աւանդեն, թէ Թադէոս առաքեալը հոս գալով և շրջակայից զուարճալի վիճակը տեսնելով ըսած է.* Այլ ո՞ւր *երթամք. և անկից գիւղիս անունը մնացած է* Այլուր *որ վերջը ռամկէն փոխուեցաւ* Ալուր: *Ունի ընդարձակ արտեր և պտղատու ծառոց պարտէզներ, և Ս. Աստուածածնի անշուք վանք մը: Ուրիշ վանք մ'ալ ունի գիւղս բարձր դիրք, որ կը կոչուի Ալըրոց կամ Ալիւրոց Ս. Գէորգ, այս երկրորդ վանքի մէջ կը նստի գիւղի առաջնորդը: 1640ին երկրաշարժէն Վանայ շրջակայքը կործանուած վանքերուն մէջ Դաւրիժեցին կը յիշէ նաև Ալերու վանք: Ալիւր գիւղը ունի երկսեռ վարժարան, մօտաւորապէս ամառը 40 աշակերտօք և ձմեռը 200: Գիւղիս տանց թիւը կը հասնի՝ 250ի: Այս գիւղէն էր 1655ին նահատակուող Սիրուն անուն երիտասարդը: — Դաւր. 542–3:*

ԱԼԻՔԷՄԷՐԼԻ. *Տես* ԱԼԻՂԱՄԱՐ:

ԱԼԻՔԷՕՋԱԿ. — *Գիւղ Երևանու նահանգին մէջ (Նիգ), Վաղարշապատէն 70 վերստ հեռու, Ամպարլու վտակի մօտ, Արագածու բլուրներու արևելեան ստոտց ստորոտքը, յորոց կը բղխեն սառնորակ ջրոց աղբիւրներ: Բնակիչք ամբողջ Հայ են 1412 հոգի, բաժնուած 163 տան: Գիւղիս եկեղեցին նուիրուած է Ս. Խաչի:*

ԱԼԻՔԼՊՕՆ. — *Գիւղ Հայոց՝ Մշոյ դաշտի մէջ. բն. 650, բաժնուած 50–5 տան, յորոց քանի մը տուն Քուրդ են:*

ԱԼԼԱՀ-ԿԷՕԼ *կամ* ԱԼԱԿԷՕԼ. — *Այսպէս կը կոչուի Սիւնեաց Սողք գաւառի մէջ, Իրաբու մօտ գտնուած և շատերը առուակներով միացած տասնի չափ լճակներէն մեծագոյնը: Համանուն վտակ մը կը վազէ այս լճէն, որ դէպ ի հիւսիս առաջ երթալով, և Մաքենոցաց վանքի մօտէն անցնելով, անունը կը փոխէ և կը կոչուի Մաքենոցաց գետ: — Նոյնպէս այս անուամբ քանի մը լճակներ կան Զանկեզուր (Ծղուկ) գաւառի մէջ:*

— ԵԱՐՄԻՆ-ՊԱՇԻ. — *Հրաբղխային շիջեալ լեռ Սիւնեաց Սողք գաւառի մէջ, վերոյիշեալ լճի մօտ:*

ԱԼԼԱՀՎԷՐՏԻ. — *Գիւղ Յունաց և Հայոց՝ Գուգարաց Զորափոր (Փօչալու) գաւառի մէջ. բն. 1167, բաժնուած 245 տան: — Համանուն հասարակութիւնն ձևացած է եօթը գիւղերէ, որոց բնակիչք մեծաւ մասամբ Յոյն են:*

ԱԼԼԱՀ *կամ* ԱԼԱՏԱՂ. — *Լեռնադօտի Կիլիկիոյ, որ Պուլղար տաղի արևելեան սպառուածքէն սկսած կը ձգուի դէպ ի հիւսիսային արևելք: Ասոր ամենաբարձր գագաթը կը կոչուի Ափիշ քար:*

— *Համանուն բարձր լեռ մ'ալ կայ Բասենոյ մէջ, որուն ստորոտները կան զանազան Թրքաց գիւղեր:*

ԱԼԽԱԹԵԱՆ. *Տես* ԱԽԼԱԹԵԱՆ:

ԱԼԿԷԹ. — *Գետակ Փօչալու գաւառի մէջ, աջակողմեան օժանդակ Կուրայ: Սոյն գետակիս ձորակն կը կոչուի* Ալկէթաձոր:

ԱԼԿԻ. *Տես* ԱԿԻԼ:

ԱԼՀԱՐԱԿ. — *Լճակ Արցախի Ջրաբերդ գաւառի մէջ, Երիվանքէն մղոն մը հեռու, Թուրքերէն կը կոչուի Գէօք–կէօլ. շրջապատուած է անտառախիտ լեռներով: 1140ին Գանձակայ մեծ շարժին ժամանակ Ալհարակ անուամբ լեռ մը կործանուելով ձևացուցեր*

է այս լճակս, որ երկու մասի բաժնուած է, և վերին մասը կը կոչուի «Ըստծու ծով» այսինքն, Աստուծոյ ծով։ Լճակէս այժմ կ՚որսան երեք տեսակ ձուկ։ — Կիրակոս, 66։

ԱԼՂՄՈՒԼՔ. — Հայաբնակ գիւղ Դավրիժու (Ատրպատական) գաւառի մէջ, բն. 216, բաժնուած 36 տուն. ունին 1 եկեղեցի և 1 դպրոց։

ԱԼՂՈՒԼԻ. — Արցախի Հարճլանք գաւառի մէջ, մնացած է միայն այս Հայաբնակ գիւղն։ Բնակիչք ընիկ են, օդն, կլիման և ջուրը պատուական. եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին։ Բն. 458, բաժնուած 74 տուն։

ԱԼՃԱՊՕՆՃՈՒԽ կամ ԱՆՃԱՊՕՆՃՈՒԽ. — Ծաղկաւէտ և ջրարբի լեռ Բասենու, Խոսրովերան գիւղի մօտ։

ԱԼՃԱԽԱՋ. Տես ԱՐԾԿԷ։

ԱԼՄԱԼԸ. — Խասկալէն երեք ժամ հեռաւորութեամբ, արեւելեան կողմը, բարձր բլրի մը վրայ հաստատուած Հայոց գիւղ մ՚է (Նիկոմիդիա), բնակիչք 200էն աւելի են, և ունին Ս. Կարապետ փառաւոր եկեղեցի մը և ազգային դպրոց։ Ժողովուրդը մեծաւ մասամբ հողագործ է և շերամապահ։

ԱԼՄՇԿԱ. — Փոքրիկ գիւղ Հայոց, Բաբերդի վիճակին մէջ։

ԱԼՆՈՑԻ ՎԱՆՔ. — Գրոց յիշատակարաններէ ծանօթ է անունս, որ վանք մը եղած կը թուի Խաղտեաց մէջ։

ԱԼՈՒԷՆ. — Այս անուամբ կը յիշուին հովայ տեղիք Աղուանից Թագաւորին, Պարտաւի մօտ։

ԱԼՈԽՍ. — Կիլիկիոյ նոր վիճակի մը անուն, Ադանայի վիլայէթի մէջ։

ԱԼՊԱՂ. Տես ԱՂԲԱԿ։

ԱԼՊԻՍՏԱՆ կամ ԱՊԼԱՍՏԱՆ. — Քաղաքաւան համանուն գաւառի, Մարաշի արեւելեան հիւսիսային կողմը, 69 հզր. հեռաւորութեամբ։ Ամբողջ գաւառն ունի 135 գիւղ և 45,000 բնակիչ, որոնց 3000ը Հայ են, որք կը բնակին քաղաքաւանի մէջ։ Ալպիստանը կառուցուած է Բիւրտ լերան ստորոտը։ Ջահան գետը կը բղխէ մերձակայ արեւմտեան լեռներէն, և քաղաքիս մօտ երկու ճիւղի բաժնուելով իր մէջը կ՚առնու Ալպիստանը, և յետոյ նորէն կը միանայ։ Բազմաթիւ պտղատու ծառեր և արգասաւոր դաշտեր կը շրջապատեն քաղաքս։ Մեր պատմիչները չեն յայտներ, թէ տիրած ըլլան տեղւոյս Հայք։ Լեւոն Մեծը 1205ին յարձակեր է բերդի վրայ, սակայն չէ յաջողած տիրելու։ Բայց համանուն գաւառի տասը բերդերէն շատերը, եղած է ժամանակ, որ ենթարկուեր են Հայոց իշխանութեան։ Ալպիստանի մօտ է Խչմէ անուն ջերմուկը։ Այս գաւառի մէջ կան ամենահին ժամանակաց պատմութեան հետքեր։ — Կիլիկիա, 349–351։

ԱԼՎԱՈՒԽՆՃ. — Մշոյ դաշտի մէջ Հայոց գիւղ. ունի գրեթէ 1000 բն. և 110 տուն։

ԱԼՎԱՐ. — Հին գիւղ վերին Բասենի (Այրարատ), Հասանղալէի հարաւային կողմը, Աղբերականց դաշտի մէջ, ուր 488 թուին հետամուտ լինելով Մամիկոնեան քաջին Վահանայ, բանակած էր Պարսից Միհրանեան Շապուհ զօրավարը։ 1354ին Իտալիոյ Պիզ կամ Փիզա քաղաքի մէջ, Ալվարցի Թորոս աբեղայ մը, օրինակած է Ս. Պատարագի մեկնութեան թարգմանութիւն մը, որ այժմ պահուի Վիեննայի կայսերական գրատան մէջ։ 1664ին Մկրտիչ ոմն երէց Կարնէն գիւղս գալով, ստորագրութեամբ Ոսկերիչ Միրաքայ և այլոց, կը գնէ աւետարան մը։ Այս գիւղը գիշերօթեցին 1830 տարւոյ յունիս 22ին Սմիթ և Տուայթ ամերիկացի քարոզիչները, մինչ տեղւոյս 16 տուն Հայ բնակիչք Ռուսաց բաժինը գաղթելու կը պատրաստուէին։

ԱԼՔԱՆՍԱ. — Գետակ Ատրպատականի, աջակողմեան օժանդակ Երասխայ։

ԱԽԱ. — Երբեմն բազմաբնակ աւան Հայոց վերին Բասենի (Այրարատ) մէջ, Ծիրանեաց լերան արեւմտեան ստորոտը, Երասխայ ձախակողմեան օժանդակ վտակի մը աջ կողմը։ Այժմ բնակչաց մեծամասնութիւնն կը կազմեն Թուրքերը։

ԱԽԱԼԿՈՐԻ (Նոր կորի). — Գիւղ Տփխիսու նահանգի, Տուշէթ գաւառի մէջ. բն. 573 Հայ և 60 Վրացի։

ԱԽԱԼՇԷՆ. — Գուգարաց մէջ կան այս անուամբ Վրացւոց քանի մը գիւղեր։

ԱԽԱԼՍՈՓԵԼԻ. — Գիւղ Կորի (Տփխիս) գաւառի մէջ, բն. 382, Հայ և Վրացի։

ԱԽԱԼՏԱԳԱ։ — *Գիւղ Տփխիսու Գորի գաւառի մէջ, բն. 201, Հայ, և 282 Վրացի։*

ԱԽԱԼՑԽԱ *կամ* ԱԽԼՑԽԱ (*Նոր բերդ*). Գղ. AKHALTZIKH. Թ. خسخه. Ռ. Ахалцихъ. Վ. ახალი ციხე. — *Գլխաւոր ընդգաքաղաք համանուն գաւառի. նշանաւոր հնութեամբն, նկարչական յերանգամէջ գեղեցիկ դիրքովն և պատմական բազմաթիւ դէպքերովն։ Ըստ ազգային և օտար բանասիրաց, հին ժամանակները Ախալցխայի գաւառի մէջ նախ բնակած է Ս. Գրոց մէջ յիշուած Յաբեթի Մոսոք թոռն, յորմէ սերած են Մեսխք ըսուած կովկասեան ժողովուրդք, որոց երկիրն կ'ենկնար Հայոց, Վրաց և Եգերաց մէջտեղ։ Ինչպէս կ'երեւի առաջին անգամ Վրացիք տիրելով իրենց այս սահմանակից երկրի, անուաներ են զայն* Սա–Մցխէ (*Երկիր Մեսխաց*), *և գլխաւոր քաղաքն ալ* Ախալի ցիխէ (*Նոր բերդ*)։ *Վարդան աշխարհագիր յետ ըսելու թէ «Սամցխէ Ախլցխա է», կը յաւելու նաեւ «Իշխանաց երկիրն է». և յիրաւի եղաւ ժամանակ մը, որ Ախալցխան ազատ իշխաններով կառավարուեցաւ, և նոյն ատեն կոչուեցաւ ի Հայոց Իշխանաց երկիր։*

*Ըստ բնական աշխարհագրական բաժանման՝ Ախալցխան իր գաւառով, յատուկ մասն համարուած է Հայաստանի։ Մեր աշխարհակալ թագաւորաց ժամանակ, երբեմն բոլորովին Հայոց ձեռքը մնացած է, և երբեմն ալ հարկատու կամ հպատակ եղած։ Կը համապատասխանէ Տայոց լեռնոտ նահանգի Ճակք գաւառի։*

*Շատ պատերազմներ և աղետալի տեսարաններ ունեցած է Ախալցխան, զանազան ժամանակներ, և իր բնակչաց քաջութիւնն միշտ գովուած է, և առած մ'ալ յառաջացած, թէ «Մէկ Ղարսեցի երեք Երեւանցի կ'արժէ, և երկու Ղարսեցի մէկ Ախալցխացի»։*

*ԺԳ–րդ դարու մէջ, Թաթարաց արշաւանաց ժամանակ, երբ Վրաց տէրութիւնն խիստ տկարացած էր, Ախալցխայի՝ ինչպէս նաեւ Ախալքալաքի բնակիչք անկախութեան կը ձգտին և ինքնագլուխ կ'ուզեն կառավարել իրենց երկիրը։ Այդ ազատութեան և անկախութեան մեծապէս կը նպաստէ քաղաքիս անառիկ դիրքն և տեղացւոց անվեհեր քաջութիւնն, որով ԺԴ դարու առաջին կիսուն մէջ, Վրաց Գէորգ թագաւորն ստիպուեցաւ ազատ և անկախ համարել Ախալցխան և Ախալքալաքը՝ իրենց գաւառովը և առաջին Աթաբէկ (Հայրիշխան) եղաւ Սարգիս անունով մէկը, և այնուհետեւ այս երկիրն փոխանակ Սա–Մցխէ կոչուելու, կոչուեցաւ Սա–Աթաբէկ (Երկիր Աթաբէկաց կամ ըստ մեզ Իշխանաց երկիր)։*

*1414* (ՊԿԳ) *թուին Իւանէ Աթաբէկի ժամանակ, Ախալցխայի մէջ պանդխտութեամբ բնակող Պարսիկները Հայոց և Վրաց հետ կռուելով և թշնամանալով, գաղտուկ քաղաքէն ելնելով կ'երթան Բագրեւանդայ Վաղարշակերտ քաղաքը, և Յուսուփ ամիրային գանգատելով կը գրգռեն գինել Տայոց աշխարհի վրայ, և առաջնորդելով ամիրայի զօրաց կու գան մինչեւ Ախալցխա, և նենգութեամբ քաղաքը կը մատնեն անօրինաց ձեռքը։ Առաքել Դաւրիժեցին ալ կը յիշէ* ՊՂԳ (= *1444*) *թուին Ջահնշահի քաղաքիս վրայ յարձակիլն և բնակիչները գերի տանիլը։ Իսկ 1484ին Մողոլաց անիշխանութեան ժամանակ, Եաղուպ խանը, յետ Ջաւախքը աւերելու կու գայ կը պաշարէ Ախալցխան։*

*Մինչեւ 1463 թուականը աթաբէկները կը հպատակէին Վրաց թագաւորներէն, այդ տարին Կուարկուարէ աթաբէկը ինքզինքը բոլորովին անկախ ըրաւ։ Զուր տեղ Վրաց թագաւորներն աշխատեցան հպատակեցնել աթաբէկները, որով և առիթ եղան ոչ սակաւ արիւնահեղութեանց և պատերազմաց։ 1547ին երբ Թուրքերը սկսան յառաջ խաղալ Ճորոխի և Կուրայ հովտաց մէջ, Շահ–Թահմազ–Խանը օգնութեան եկաւ նոյն ժամանակ իշխող Քէյխոսրով աթաբէկին։ 1553էն 1580, այս երկրի մէջ շարունակաբար անպակաս եղան պատերազմք, կոտորածք և աւերմունք։ Կռիւն դեռ աւելի սաստկացաւ երբ Կուարկուարէ և Մանուչար դիւցազունք՝ յաջորդեցին իրենց Քէյխոսրով հօրը։ Աւանդութիւնը շատ բաներ կը պատմէ այս կրկին քաջաց՝ եօթը տարիներու մէջ ընդդէմ Թրքաց մղած յաղթող պատերազմներու վրայ. բայց ափսոս որ իրենց քաջութիւնն միայն քանի մը տարի ուշացուց*

իրենց կործանումը. և ինչ կարող էին ընել ամբողջ Օսմանեան բանակին դէմ։ Վերջապէս 1579ին Թուրքերը Ախալցխայի տիրեցին. նոյն տարին Կուարկուարէ և իր եղբայրն Մանուչար Կ. Պոլիս երթալով, պատուով ընդունուեցան։ Մանուչարի կարգէ դուրս քաջութիւններն և անձնական ձիրքերը, իրեն ձգած էին Թրքաց զարմանքը. այդ պատճառաւ, սուլտանը զինքը իւր հայրենիքը դարձուց, և փաշայութեան տիտղոս տուաւ։

Սակայն ինչպէս կ'երեւի, շուտ զղջացին Թուրքերը, Մանուչարի այս կերպով տեսակ մը անկախութիւն տուելուն, և փորձեցին իրեն վնասել, բայց չյաջողեցան։ 1587ին խաղաղութիւն հաստատուեցաւ, և Ախլցխան Թրքաց ձեռքէն ելաւ, և Մանուչար իշխեց այնուհետեւ մինչեւ 1614 թուականը, և մեռնելով յաջորդ թողուց իր համանուն որդին Մանուչար։

Մուրատ Դ 1625ին պաշարել տուաւ Ախալցխան՝ Սէֆէր փաշայի ձեռքով, և յետ 23 աւուրց բնակիչք կամովին անձնատուր եղան։ Այնուհետեւ ձեւացաւ Ախալցխայի փաշայութիւնը, և առաջին փաշան եղաւ Սէֆէր, որուն ապա յաջորդեցին իրեն սերունդքը։

Ռուսները պաշարեցին Ախալցխան 1810ին Թարմազով զօրավարի ձեռքով, և տիրեցին յետ աճաւոր պատերազմաց՝ տասնեւութ տարի վերջը, Փասքեւիչի ձեռքով։

Այդ միջոցին (1828), Ախալցխան՝ Ասիական Տաճկաստանի ամուր և հարուստ քաղաքներէն մին էր. վաճառականութիւնը, որ մեծաւ մասամբ Հայոց ձեռքն էր, շատ բանուկ էր, յարաբերութիւն ունէր Երեւանու, Թիֆլիզու, Տրապիզոնի և Կարնոյ հետ։



29. Ախալցխա, հին քաղաքի և բերդի տեսարանը։

Բաց ի բերդերէն, շրջապատ ամուր պարիսպ մ'ունէր աշտարակազարդ։

Ադրիանուպօլսոյ դաշնադրութեամբ՝ երբ Ախալցխան ուրիշ երկիրներու հետ բոլորովին Ռուսաց տրուեցաւ և կարինը վերստին Թրքաց ձեռքն մնաց, կարնեցի բազմաթիւ Հայեր՝ իրենց գաղթավայր ընտրեցին Ախալցխա քաղաքը, և յետ բազում վշտաց և ճանապարհի նեղութեանց, 1830 թուին եկան հասան իրենց ընտրած երկրորդ հայրենիքը։

Յետ պատերազմին բոլոր քաղաքը աւ-

րուած կործանուած վիճակի մէջ կը գտնուէր, որով նոր գաղթականաց համար հարկ էր նոր քաղաք մը հիմնել. այդ պատճառաւ բաւական ժամանակ վրաններու տակ բնակեցան, և տէրութենէն բաշխուեցաւ դրամ, ցորեան, արուեստաւորաց համար, մետաքս, բամբակ, երկաթ, և զանազան նիւթեր և գործիքներ։ 1832 տարւոյ գարնան սկիզբը, սկսաւ այժմեան նոր քաղաքի շինութիւնն։

1833 թուին եղած աշխարհագրէ մը կը քաղենք Ախալցխայի բնակչաց և տանց հետեւեալ թիւերը.

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԲՆԻԿՔ | | | | |
| Հայ-կաթ. | 385 | տուն | 623 | արք |
| Հայ-լուս. | 26 | » | 64 | » |
| Վրացիք | 44 | » | 94 | » |
| Հրեայք | 117 | » | 327 | » |
| Մահմէտականք | 24 | » | 42 | » |
| ՆՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՔ | | | | |
| Հայ-լուս. | 1542 | » | 4001 | » |
| Հայ-կաթ. | 130 | » | 296 | » |
| Գումարն | 2268 | տուն | 5447 | արք։ |

Այս թիւերէն կ'երեւին, որ պատերազմէն առաջ, քաղաքիս բնակչաց մեծամասնութիւնն կը կազմէին Հայ-կաթոլիկները։ Մեծին Մխիթարայ Աբբայի աշակերտն Հ. Յակոբոս Վ. Բուզայեան՝ 1728ին քաղաքս քարոզած ժամանակ, իրեն ունկնդիր եղած են մինչեւ 2000 հոգի. նա հոս հաստատած է զանազան եկեղեցական հանդէսներ, ինչպէս Ռոնլուայ, Թաղումն Քրիստոսի, և այլն։ Նոյն տարին (1728) մինչ ահաւոր համաճարակ ժանտախտը, անհամար մարդիկ մահուան կը մատնէր, Հ. Բուզայեանի խորհրդով շատ ընտանիքներ լեռը կը փախչին և կ'ազատին, իսկ ագահութեան կամ չքաւորութեան պատճառաւ քաղաքը մնացողները՝ գրեթէ ամբողջ կը մեռնին։

Ախալցխան այժմ ձեւացած է երկու մասերէ. հին քաղաքը (Ռապատ) կառուցուած է Կուրայ օժանդակ և երբեմն Ախալցխա և այժմ Փոցխով կոչուած գետոյն ձախակողմը, քանի մը ալէձեւ բլուրներու վրայ. ճիշդ արեւելեան քաղաքաց նմանութիւն ունի, նեղ ծամածուռ փողոցներով, փոքր փայտաշէն կամ կոշտ քարաշէն և երբեմն նաեւ գետնափոր տներով (Թ. 29)։

Գետեզերքէն դէպ ի վեր բարձրացող, խորտուբորտ, ահեղատեսիլ և մեծու մասամբ հրաբխային պորփիւրէ ձեւացած բարձանց վրայ, դեռ կը տեսնուին հին բերդի ատամնաձեւ վերջացած պարիսպներն, և խորաձորից մէջ կիսակործան հին դրանց կամարակապներն։ 1828ին պատերազմէն վերջ կործանուեցան բոլոր մզկիթներն և բերդի մօտ գտնուած տներն։ Մզկիթներու մէջ ամէնէն նշանաւորն բերդի մէջ կառուցուածն էր, որ արդարեւ ճարտարապետութեան գլուխ գործոց մը կրնայ համարուիլ։ Բերդի շինութեան ժամանակն անծանօթ է, յոմանց կը համարուի Թամար թագուհիէն շինուած. իսկ մզկիթն կառուցուած է, հին աթաբէկաց սերունդ Ահմէտ փաշայէն, իտալացի ճարտարապետի մը ձեռքով։ Կանոնաւոր խորանարդի մը վրայ բարձրացած է կիսաբոլոր 49 ոտք տրամագծով կապարապատ գմբէթն. ձեւով ճիշդ նման է Կ. Պոլսի Ս. Սոփիայի, պատուհանները զարդարուած գունաւոր ապակիներով, որոց նկարներն կը ներկայացընէին Ղուրանի զանազան խօսքերը։ Գաւիթն եւս գեղեցիկ է, երեք փոքրիկ գմբէթներ բարձրացած են երկաթաքարէ սեանց վրայ, որոց խարիսխներն և գլուխներն պղընձաձոյլ են։ Գաւթի մէջ կայ հայկական խաչարձան մը, հազիւ քանի մը գիր ընթեռնլի արձանագրութեամբ։ Բերդի հարաւային դրան վրայ քանդակուած տաճկական արձանագրութենէն կը յայտնուի, որ բերդս նորոգուեր է 1707ին. իսկ մզկիթի շինութեան համար ալ, որ կառուցուած է 1752ին, ուրիշ արձանագրութիւն մը կայ գաւթի դրան վրայ։ Նշանաւոր էր նաեւ բերդի մինարէն 130 ոտք բարձրութեամբ, սրբատաշ քարէ, զոր Ռուսք կործանեցին։ Բերդէն իբրեւ 10 վերստ հեռաւորութենէ, մեծածախ ջրմուղով, վերոյիշեալ Ահմէտ փաշան բերել տուաւ ջուր՝ մինչեւ մզկիթի գաւիթը։ Պատերազմի ժամանակ մզկիթն շատ չվնասուեցաւ և Ռուսք, քանի մը նորոգութիւններ և փոփոխութիւններ ընելով՝ եկեղեցւոյ վերածեցին զայն։

Փոցխով գետի վրայ ձգուած փայտեայ կամուրջ մը կը միացընէ հին քաղաքը նորի (Պլաճ) հետ, ուր կան բաւական թուով նոր շինուած պալատներ, գեղեցիկ և ճաշակաւոր

*տներ, հարիւրաւոր կրպակներ, կարդաւորեալ փողոցներ, սրբատաշ քարէ եկեղեցիներ, բազմաթիւ աղբիւրներ, կարաւանատներ, բաղնիքներ, վարժարաններ, հասարակաց պարտէզ, և այլն։*

*Երկար ժամանակ Վրաց հետ խառն ապրելով քաղաքիս բնիկ Հայ—կաթոլիկները, և մոռնալով իրենց մայրենի լեզուն, այժմ մեծաւ մասամբ վրացերէն կը խօսին, թէ և իրենց եկեղեցիներու մէջ միշտ հայերէն կը կատարուին ժամերգութիւնք և այլ աստուածային պաշտամունք։ Վերջին հրատարակուած Կովկասի ազգաբնակութեանց աշխարհացոյցի մէջ, մեծ սխալմամբ և կամ չգիտեմ ինչ դիտմամբ, քաղաքիս Հայ—կաթոլիկաց թիւն գրած են միայն 739 հոգի, և բոլոր վրախօս Հայ—կաթոլիկները խառնած են Վրացիներու հետ կամ յիշած են Հռովմէական—կաթոլիկ անուամբ։*

*Մշակը 1883 տարւոյ 70 թուոյն մէջ, պաշտօնական հրատարակութենէ հանելով, հրատարակած է Անդրկովկասի Հայ-կաթոլիկաց թիւն, յորմէ կը քաղենք քաղաքիս Հայ—կաթոլիկաց իւրաքանչիւր եկեղեցւոյ ունեցած ծխականներու հետեւեալ թիւերը.*

| | | | |
|---|---|---|---|
| Ս. Մկրտիչ | եկեղեցի | 1180 | ծխականներ |
| Ս. Խաչ | » | 748 | » |
| Ս. Աստուածածին | » | 740 | » |
| Ս. Խաչ Երեւման | » | 708 | » |
| | Գումարն | 3376 | ծխականներ։ |

*Այս թիւերն կը վերաբերին 1882 տարւոյ, իսկ եթէ առաջ գալով հաշուենք նաև 17 տարուան մէջ աւելցած անձանց թիւերը, պիտի տեսնենք որ Ախալցխա քաղաքի Հայ—կաթոլիկները 4000ի կը մօտենան։*

*Քաղաքս Կովկասի Հայ—կաթոլիկաց կեդրոնավայրն է, և իր հոգեւոր կառավարութենէն կախումն ունին Ախալքալաքի, Լոռւոյ և Ալեքսանդրապօլի վիճակներն. իսկ հոգեւոր կառավարութիւնն՝ քանի որ Կովկասը չունի առանձին Հայ—կաթոլիկ եպիսկոպոս, վերաբերութիւն ունի Սարաթովի լատին եպիսկոպոսէն։ Այժմ ինչպէս ամբողջ Կովկասը, նոյնպէս և քաղաքիս Հայ—կաթոլիկներն տխուր վիճակի մէջ կը գտնուին։*

*Կարնէն գաղթող Հայ—կաթոլիկներն առաջ բնակեցան հին քաղաքի մէջ, իրենց կրօնակից վրախօս Հայերու հետ, և չուզեցին տէրութեան առաջարկած հողի վրայ նոր եկեղեցի շինել, բաւականանալով արդէն եղած ազգային կաթոլիկ եկեղեցիներով։ Բայց քիչ ատենէն, տեղացի վրախօս Հայ—կաթոլիկաց ցուցած հակակրութենէն և անհիւրասիրութենէն կը ստիպուին նոր քաղաքի մէջ հիմնել այժմեան Ս. Աստուածածնի Վերափոխման եկեղեցին 1833—34 թուականներու մէջ, և մեր Վանաց միաբան, և գաղթականաց առաջնորդ բազմարդիւն Հ. Եփրեմ Վ. Սէթեան կատարեց հիմնարկութեան օրհնութիւնը, Ախալցխայի ուրիշ բնիկ քահանայից հետ «առաջի պայազատ աւագանւոյ տեղւոյն՝ իշխանացն Ռուսաց և առաջի բազմամբոխ ժողովոյ համօրէն քաղաքին յամենայն ազգաց»։ Եկեղեցւոյս մօտ կառուցուած Վերափոխման ուսումնարանի վրայ հետե-*



30. Երեւման Ս. Խաչի եկեղեցին։

ւեալը կը կարդանք 1882 տարւոյ Մշակի 181 թուոյն մէջ. «Ս. Վերափոխման ուսումնարանի ամենածաղկած ժամանակն էր, երբ Հայր Սէթեանցը, դասատու էր այս ուսումնարանում. այդ ժամանակ դաս դաս մանկտիք անխտիր թէ Լուսաւորչական և թէ Հայ–կաթոլիկ դիմում էին Հայր Սէթեանցի մօտ և յագեցնում իրանց ծարաւը։ Երջանկայիշատակ Հայր Սէթեանցը տիւ և գիշեր աշխատում էր իր աշակերտաց և ուսումնարանի առաջադիմութեան վրայ։ Հայր Սէթեանցը և Հայր Եսային առաջինը եղան, որ սերմանեցին Ախալցխայում լուսաւորութեան և ուսումնասիրութեան գաղափարի սերմը՝ ամեն Հայ անհատի սրտում. նոցա աշակերտներից է և մեր Ալ. Արարատեանը։

— Մեռաւ Հայր Սէթեանցը, նորա հետ մեր ուսումնարանը ընկաւ մի անբուժելի հիւանդութեան մէջ, որովհետև Վենետիկից էլ չեկան մեզ վարդապետներ»։ Հ. Սէթեանցի յիշատակն դեռ վառ է քաղաքիս բնակչաց սրտերու մէջ. նորա գերեզմանն է եկեղեցիէն դուրս անմիջապէս աւագ խորանի ետեւը, հանդերձ յատուկ քանդակազարդ տապանաքարով, և ախտատեղի եղած է, «և որպէս սրբոյ տանին զհողն ի շիրմէն վասն ախտաժետաց, և առնեն լինի բժշկութիւն»։ Եկեղեցւոյ մօտ կան նաև մի քանի ուրիշ վարդապետաց և քահանայից գերեզմաններ, արձանագրութիւններ ունեցող տապանաքարերով։

Վերափոխման եկեղեցին շինուած է համակ սրբատաշ քարէ, ունի նաև խաչակիր զանգակատուն շինուած 1843ին։ Հ. Սէթեանցէն վերջ Հայ–կաթոլիկաց ուսումնարանը մնաց տիրացուներու ձեռք, և քանի մը տարի ալ փակ. միայն Տ. Սիմոն Ճահինեանցի ժամանակ, Միսաք Խօջախեղեանց ուսուցչի ձեռքով քիչ մը յառաջադիմեց։ 1875 թուին հին քաղաքէն մի քանի վրախօս Հայ–կաթոլիկներ՝ նոր քաղաքը բնակութիւն հաստատելով, կը յաջողին վրախօս քահանայ մը ունենալ Վերափոխման եկեղեցւոյ մէջ, որ և ժամանակ մը հայերէն Աւետարանէ վերջ՝ կը կարդար նոյնը վրացերէն, որով երկար ժամանակ ոչ սակաւ կռիւներու առիթ եղաւ Հայ և վրախօս կաթոլիկներու մէջ։ Ի վերջոյ Հայք, որ ջերմ պաշտպան էն ազգային ծիսից և աւանդութեանց, յաղթող կը հանդիսանան, և Վրաց լեզուն եկեղեցւոյ մէջ գործածութիւնը տէրութենէն կ՚արգիլուի։

Հին քաղաքի մէջ եղած Հայ–կաթոլիկաց եկեղեցիներէ Ս. Նշան կամ Երեւման Ս. Խաչ (թ. 30), կառուցուած է բարձր բլրան վրայ, Հայոց միջին դարու եկեղեցեաց ձեւով, ոչ այնչափ սրածայր կաթողիկէիւ, որ բաւական հնութեան նշան է։ 1828ին պատերազմի ժամանակ, Ռուսաց յարձակմունքը կ՚ուղղուի եկեղեցւոյս վրայ, ուր անկարգելի կռիւ մը տեղի կ՚ունենայ։ Զանազան ժամանակաց մէջ նորոգուած է եկեղեցիս, սակայն Տիւպուա յոյժ արտառոց (baroque) կը գտնէ այդ վերանորոգութիւնքը, որովհետեւ որմոց մէջ պէտք եղած տեղերը՝ փոխանակ նոր սրբատաշ քարեր գործածելու, ագուցած են շուրջը գտնուած տապանաքարեր կամ խաչարձաններ, հանդերձ կիսաւեր արձանագրութեամբք։ Գ. Գրասէ ընդօրինակած և հրատարակած է այդ արձանագրութիւններէն մի քանին, որք կը վերաբերին Ջ (= 1451), ՋԳ (= 1454), ՋԻԴ (= 1475) և ՋԽ (= 1491) թուականներուն։ Նշանաւոր է եկեղեցւոյս գերեզմանատունը, հին ոճով խոյակերպ տապանաքարերով, յորս կայ նաև ՊՀԵ (= 1426) թուականաւ արձանագիր։ Սպիտակ կճեայ քար մը նոյն գերեզմանատան մէջ կը ծածկէ Հայ–կաթոլիկ Պետրոս Ցոլաքօղլիչ Պէժանով քաջազնի նշխարները, որ 1828 տարւոյն օգոստոս 15ին յարձակման պահուն՝ քաջութեամբ ինկաւ։ Իւր դիւցազնական արդիւնքն ճանչցաւ Ախալցխայի ժողովուրդն, և երկու գեղեցիկ արձանագրութեամբք ռուսերէն և վրացերէն, զարդարեց նորա տապանաքարը։ Ս. Խաչի վերջին նորոգութիւնն եղած է 1866ին, Ազնաւուրեան եղբարց արդեամբք։

Ս. Աստուածածին, որ կառուցուած է 1356 թուին Ս. Խաչէն քիչ մը անդին վար, ամենեւին եկեղեցւոյ նմանութիւն չունի, այլ սովորական տուն մ'է նորոգուած 1442ին։ Արեւելեան որմի վրայ կան երկու արձանագրութիւնք, որոց միոյն մէջ յիշուի կառուցանող եկեղեցւոյս Աբրահամ աբեղայ, և երկրորդին

մէջ ունի Շարադղադ նորոգող։ — Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյ մէջ քարի մը վրայ, որ աւանդատան դրան իբրեւ բարաւոր կը ծառայէ, կայ հայկական ՉԽԷ (= 1298) թուականը առանց այլ յիշատակութեան. ուրիշ չորս խաչքանդակներով զարդարուած քարի մը վրայ ալ կը կարդացուի 1511 թուականը։ Եկեղեցւոյս անմիջապէս մօտ կը տեսնուի մեծ խաչարձանի մը քարէ խարիսխն, վրաց եկեղեցական տառերով գեղեցիկ արձանագրութեամբ, բայց առանց թուականի։ Գէորգ Բեկուրեան, եկեղեցւոյս շինութեան թուականը կը դնէ 1750։ Նոյն անձը կ'ըսէ թէ՝ Հայ-կաթոլիկաց երկրորդ Ս. Խաչ քարաշէն եկեղեցին, կառուցուած է 1691 թուին, արդեամբ Մեփիսեան եղբարց։

Կարնեցի բազմաթիւ Հայ գաղթականաց գալստեամբ քաղաքիս բնակչաց մեծամասնութիւնն կազմեցին Հայք (լուսաւորչ.) որոց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը մեծ արդիւնք ունի, իր բազմադիմի ազգասիրական գործերով։ Կարապետ արքեպիսկոպոսի ժամանակ շինուեցան Ս. Փրկիչ, Ս. Ստեփաննոս և Ս. Լուսաւորիչ եկեղեցիները։ Ս. Լուսաւորչի եկեղեցին նախապէս տաճկական մզկիթ մ'էր, ուր Կարապետեան ուսումնարանը շինուելէ առաջ, կը հաւաքուէին Հայ մանկտիք, ազգային լեզուն և կրօնագիտութիւն սորվելու համար։ Ս. Փրկիչ՝ որ քաղաքիս Հայոց Մայր եկեղեցին կը համարուի, շինուեցաւ 1835–37 թուականներուն, և մէջը զետեղուեցան օսմանեան երկրէն բերուած վանքերու և եկեղեցիներու անօթները, զարդերը, որոց մասունքները և զգեստները։ 1875ին կազմուած ցուցակ մը այդ սպասուց և մասունքներու գումարն կը հանէր 486 կտորի, որոց մէջ արծաթէ շինուած էին 111 խաչ և Սրբոց մասունքներ, 7 սկիհ, 17 սաղաւարտ, 6 բուրվառ, 3 զոյգ քշոցներ, 9 զոյգ մեծ և փոքր աշտանակներ, 2 կանթեղ, 10 գօտի, 7 մաննատուփ և մեռոնատուփ, 13 վակաս, 5 գաւազան, 62 արծաթապատ աւետարան, 13 եպիսկոպոսական թագ՝ երկուքը բաւական թանկագին, մէկ կոնք և ջրաման, 25 հոխայ 203 դրամ (4 փութ 5 ֆ.) ջարդուած արծաթեղէնք։ Կարապետ արքեպիսկոպոսը, ժամանակին կալուածոց անժանութենէն օգուտ քաղելով, չնչին գներով գնեց շատ տներ, խանութներ և զանազան գիւղեր, որոց մի մասը, Գէորգ արքեպիսկոպոս Տէր-Դաւթեանի գնած ուրիշ կալուածոց հետ, մնացին Ս. Փրկիչ եկեղեցւոյն։ Ս. Վարդանանց գմբեթաւոր եկեղեցին սկսաւ կառուցուիլ Մարտայ թաղի մօտ Ս. Նշան կոչուած տեղւոյն վրայ՝ 1862ին, արդեամբք և ծախիւք ազգասէր և բարեպաշտ իշխան Մահտեսի Վարդան Վարդանեանցի։ Ս. Նշան կ'ինկնայ քաղաքի հարաւակողմը բարձր քարաժայռի վրայ. այսպէս կոչուելուն առոյգ պատճառն չգիտեմ, մի՛ գուցէ Վարդան աշխարհագրի, «... անդ (յԱխալցխա) է օծեալ խաչն սուրբ հայրապետին Ներսիսի, որ այժմ Մաճառաց տափ», յիշած սուրբ խաչն՝ ժամանակաւ այդ տեղ պահուած լինի։

Ախալցխան ունի քաղաքական վարժարան և արուեստանոց. Հայոց ուսումնարաններէն գլխաւորն է Կարապետեանը, տղայոց համար, կառուցուած վերոյիշեալ Կ. արքեպիսկոպոսի ժամանակ 1842–44 տարիներու մէջ, որ իր եկամուտներով, Տփխիսի Ներսիսեան ուսումնարանէն վերջ առաջինը կը համարուի, իսկ օրիորդաց ուսումնարաններէն նշանաւորն է, Եղիսաբէթեանը, զոր կառոյց, նոր յաջորդարանի հետ, Պարգեւ Սուքիաս եպիսկոպոսը անխոնջ ջանիւք, որ Ախալցխացւոց համար միշտ անմոռանալի անձ մը եղած է։ Միւս ուսումնարաններն են Վարդանեան, Ռափայէլեան, Մեծատունեան, Ս. Ստեփանեան, Նոր Արշալոյս, և այլն։

Ալեքսանդրապոլի նման քաղաքս ալ տակաւին չունի իր մէջ տպուող ազգային օրագիր կամ ամսաթերթ մը. թէ և 1885ին, սկսան տպուիլ Պ. Մկրտիչ Ղալէմքարեանի տպարանը Մանկավարժանոց ամսագրի Բ տարեշրջանի պրակները, սակայն շարունակութիւն չունեցան։

Ախալցխայի Կարնեցի ազգային գաղթականաց յաջորդք, մեծաւ մասամբ անխախտ պահած են իրենց հին սովորութիւնք։ Արանց և կանանց զգեստուց տարազներն, ժամանակի յառաջանալուն հետ, սկսած են











31–35. *Տարազք Ախալցխայի և Ախալքալաքի Հայ կանանց.*

*Բնաշխ. Բառարան, էջ* 59։

փոփոխութիւններ կրել. բայց տակաւին մեծամասնութիւն կը կազմեն հին տարազներ գործածողները, մանաւանդ կանանց դասուն մէջ։ Տիկին Շանթր քաղաքս այցելելով (1890), իր ուղեգրութեան մէջ կը գրէ հետեւեալը. «Ոչ ինչ այնքան վայելչագեղ է ինձ համար, որքան Ախալցխայի Հայ կանանց տարազը։ Գործածուած պաստառներու գեղեցկութիւնը, զգեստուց հիանալի պարզութիւնը, գոհարեղինաց ճաշակաւոր հարըստութիւնը, այնպիսի յարմար և ներդաշնակ ամբողջութիւն մը կը կազմեն, որ այս յիրաւի նշանաւոր կանանց կերպարանքին աւելի փայլ մը կ'ընծայեն»։

Ռուսները բերդի եկեղեցիէն զատ, նոր քաղաքի մէջ եկեղեցւոյ վերածած են նաեւ տուն մը, ուր ամէն կիրակի ու տօնի օրեր կը յաճախէ զինուորութիւնը իր հոգեւոր պարտքերն կատարելու։ Վրացիք ալ ունին իրենց յատուկ եկեղեցի հին քաղաքի մէջ։

Քաղաքիս Հրեայք որ 2545 հոգի կը համարուին, կը բնակին առանձին թաղի մէջ, դէպ ի հին քաղաքը բարձրացող ճանապարհի աջակողմը։ Կը համարին որ Երուսաղեմի գրմանէն վերջ, իրենք հաստատուած ըլլան այստեղ։ Ունին երկու քարաշէն և երկաթապատ կանանչ ներկուած տանիքներով ժողովարաններ, որոց միոյն մէջ, խնամքով գլաններու վրայ փաթթուած կը պահուին խիստ հին թալմուշտներ։ Բնակարանք շատ խեղճ են և զուրկ Հայոց տանց յատուկ մաքրութենէն։ Կը խօսին թէ վրացերէն և թէ հայերէն, մայրերնին առհասարակ չէկ են և աչքերնին կապոյտ և ոմանց կանաչագոյն։ Մէջերնին կան ինչպէս հարուստ վաճառականներ, նոյնպէս և փողոցները պատող մանրավաճառներ և հնոտիներ գնողներ։

Նոր քաղաքի մէջ գրեթէ ամէն տուն ունի իր պարտէզն, զարդարուած՝ խնձորի, տանձի, դեղձի, բալի, ճանճուղի, ծիրանի, սալորի, թթի և այլ տեսակ պտղատու ծառերով. կան նաեւ բանջարանոցներ, ուր ամէն տեսակ կանաչեղէններ կը բուսնին։

Ախալցխայի բնակչաց թիւն է 16,116, յորոց 12–13000 են Հայք, իսկ մնացեալք Հրէայ, Վրացի և ոչինչ թուով Ռուս, Լեհ, Յոյն, և այլն։ Արհեստները, ոսկերչութիւն, կօշկակարութիւն, դարբնութիւն, և այլն, գլխաւորաբար Հայոց ձեռքն է. իւրաքանչիւր արհեստի զբաղողաց կրպակներն կառուցուած են միմեանց մօտ. արհեստաւորներն ունին իրենց յատուկ դրօշներն, զորս կը գործածեն հանդիսաւոր օրեր։ Վաճառականութեան և առեւտուրի նուազութեան պատճառաւ, շատեր թողած են քաղաքս և ուրիշ քաղաքներ գացած իրենց ապրուստ ճարելու։ Երբ իրագործուի Բորժոմէն Ախալցխա երկաթուղւոյ շարունակելու ծրագիրն, այն ժամանակ մեծապէս պիտի յառաջադիմէ քաղաքս, և իր արգաւանդ երկրի արդիւնաբերութիւնք դիւրաւ զրկելով ուրիշ կողմեր՝ պիտի ճոխանայ հարստութեամբ, և այնուհետեւ միայն պիտի դադրին, առեւտուրի նուազութեան նկատմամբ ժողովրդեան ըրած մշտական գանգատները։

Քաղաքս Ռուսաց ձեռքն անցնելէ վերջ, ազատ մնաց հին ժամանակներն ունեցած ժանտախտի ահաւոր կոտորածներէն. թէպէտ երբեմն կը պատահին ուրիշ հիւանդութիւններ, սակայն ժանտախտի քով ոչինչ նշանակութիւն չունին։ Առողջապահութեան կանոնաց համեմատ գերեզմանոցներն շինուած են քաղաքէն հեռու. և եթէ փողոցներու, և Մարտայ չայ գետակի, որ նոր քաղաքի մէջէն կ'անցնի, մաքրութեան աւելի հոգողութիւն լինի, այն ժամանակ հիւանդութիւնք բոլորովին կ'անհետանան։

Տեղւոյս կլիմայն բարեխառն է, ձմեռն չափաւոր ցուրտ. ամրան բնակչաց մէկ մասն կ'երթայ յԱպասթուման, հանքային ջրերու բաղանեաց և մէկ մասն ալ յՈւրավէլ, ուր կայ նաեւ պատուական առողջարար սառ երկաթաջուր։ 1833 թուին քաղաքիս մօտ Կուր գետի քովերը նորանշան անձրեւ մը եկաւ, մանանայի նման, զոր աղքատ, նոր գաղթող ժողովուրդը Եգիպտացւոց նման ժողվեց, հաց շինեց և կերաւ։

Մշակ ժողովրդական օրաթերթը, հրատարակած է իր համարներու մէջ Ախալցխայի վրայ, երբեմն Աւ. Աօ. և երբեմն Ա. Ա. և այլ ստորագրութեամբք, ոչ սակաւ օգտակար թղթակցութիւններ, վաճառականական, արհեստական, ուսումնական և այլ կարեւոր հարցերու նկատմամբ։

— Համանուն գաւառն Տփխիսի նահանգի հօթը բաժանմունքներէն մին է. ունի կայլիանի, Ածղորի և Ուրավելի վիճակներն, 12 հասարակութիւն և 185 գիւղ։ Ամբողջ գաւառի տարածութիւնն կը համարուի 2656 քառ. հաղրմ. և բն. 42,675, որոց մեծամասնութիւն կը կազմեն Վրացիք և Մահմէտականք։ Գաւառս իւր աշխարհագրական

մը, որոնց մէջ կան կ'ըսեն, որք 19էն մինչև 24 լիտր կաթ տուողներ. անոնց ընտիր կարագը կը զրկուի նաև Տփխիս և Քութայիս։ Անտառային բաժնի բնակիչք լեռնցիներու նման առողջակազմ են և բաւական հարուստ. կը մատակարարեն շինութեան փայտեղէն նիւթերը և վառելիք (փայտ և ածուխ), իրենց երկրագործութեան ար-

## ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԽԱԼՑԽԱՅԻ

### ԳԱՒԱՌԻ 12 ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

| ԱՆՈՒԱՆՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ | ՀԱՅՔ | | | | ՕՏԱՐՔ | | Տունք | Ընդամենը երկ. սեռ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Լուս. | | Կաթ. | | Ուղղ. վր. հ. թ. | | | |
| | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | | |
| 1 Ադիկեօն (27 գ.) . . | — | — | 22 | 21 | 2758 | 2427 | 663 | 5228 |
| 2 Վալէ (13 գ.) . . . | 310 | 276 | 1176 | 1141 | 851 | 729 | 476 | 4483 |
| 3 Վարխան (19 գ.) . . | — | — | — | — | 2192 | 1918 | 599 | 4110 |
| 4 Ուտէ (18 գ.) . . . | — | — | 839 | 702 | 1444 | 1177 | 598 | 4162 |
| 5 Ածղոր (17 գ.) . . | 139 | 151 | 12 | 12 | 2784 | 2448 | 737 | 5546 |
| 6 Խոումալա (11 գ.) . | 317 | 334 | — | — | 1557 | 1435 | 369 | 3643 |
| 7 Քլտէ (21 գ.) . . . | 438 | 424 | — | — | 2245 | 2007 | 608 | 5114 |
| 8 Վալէ Բ. (4 գ.) . . | 186 | 183 | — | — | 147 | 130 | 69 | 646 |
| 9 Խոումալա Բ. (4 գ.) . | — | — | — | — | 442 | 397 | 92 | 839 |
| 10 Լէպլիս (29 գ.) . . . | — | — | 14 | 23 | 2564 | 2227 | 480 | 4828 |
| 11 Քլտէ Բ. (3 գ.) . . | 48 | 45 | — | — | 54 | 55 | 29 | 202 |
| 12 Ուրավէլ (29 գ.) . . | — | — | — | — | 2047 | 1827 | 389 | 3834 |
| Գումարն . . . . . | 1438 | 1413 | 2063 | 1899 | 19085 | 16777 | 5109 | 42675 |

գիրքով բաժնուած է զանազան լեռնային, անտառային, դաշտային և ձորային մասերու։ Լեռնային և սարահարթ մասանց բնակիչները կը պարապին անասնապահութեամբ. նոքա կը մատակարարեն Ախալցխայի իւղը, պանիրը, բուրդը և մորթեղու կենդանիներ։ Կովերը նշանաւոր են իրենց առատ կաթո-

ղեանց մէկ մասն կը վաճառեն քաղաքը, ինչպէս ցորեն, գարի և այլ ընդեղէն, զորս կը սերմանեն անտառի բաց տեղերը և սառրանները։ կան նաև քանի մը գիւղեր, որք ունին իրենց առանձնայատուկ պարապմունքները։ Սազէլ, Մեծ և փոքր Պամաճ, Ծուղրութ և մի քանի այլ գիւղերու մէջ տա-

*րածուած է մեղուապահութիւնը, մանաւանդ Պամաճի մեղրը, իր լաւ յատկութիւններով ամբողջ գաւառի մեղրերէն գերազանցն է։ Ծուղրութի մէջ կայ քարահանք, որ տեղէն կը բերեն քաղաքի շինութեանց համար սրբատաշ և անտաշ կարծր քարեր։ Ծղտափլա և Մոխրէք գիւղերու մէջտեղ կայ ալապասդրի հանք։ Նշանաւոր է Սաղէլի և Պամաճի շողգամը։ Դաշտային մասը խիստ փոքր տարածութիւն կազմելով, քաղաքացւոց համար ալիւր և ցորեն կը բերեն գլխաւորաբար Շիրակէն։ Պարտէզներու կողմանէ կը գերազանցեն Կոպլիանի գիւղերը, որոց մրգերը թէ առատ են և թէ տեսակաց ընտիր յատկութիւններով կը մրցին ուրիշ գիւղերու հետ, մանաւանդ Ուդէլի և Ազկիեոնի չաճապմա խնձորը և շաւագիր տանձը։ Սաղէլ, Ազ և Գրէլ գիւղերը ամէն տարի կը պատրաստեն մօտ 5000 ցախաւել, զորս կը ղրկեն Ախալքալաք և Ալեքսանդրապօլ։ Ջորային մասանց մէջ կը մշակեն մեծագլուխ կաղամբ, խոշոր, փխրուն և դիմացկուն (կարտոֆիլ) գետնախնձոր և ճակնդեղի զանազան տեսակներ. ամենէն աւելի ընտիր են Սուխլիս կամ Սուֆլիս գիւղի վարունգը, գետնախնձորը, ստեպղինը, ճակնդեղը, և Վալէի դդումը ու կաղամբը։ Տափարակ տեղեր 20 տարի առաջ փորձած են (առաջին անգամ Սեբաստացի հայ մը) նաև ծխախոտի մշակութիւն, և տարուէ տարի աստիճանաբար տարածուեր է այդ շահաբեր տնկագործութիւնը. գլխաւոր դաշտերն են Ասպինծայի հասարակութեան մէջ. ամենէն աւելի ընտիր ծխախոտ կու տան Ասպինծա, Մեծ և Փոքր Օշորայ և Տօլօշ գիւղերը։ Լեռնային մասանց մէջ քիչ քանակութեամբ կը հաւաքեն նաև լուծաղիկ, որ գեղեցիկ և խոշոր է։ Գաւառի օդը նպաստաւոր է և թթենիներն առատ, շերամապահութեան համար. արդէն տարիներ առաջ սկսած են այդ շահեկան աշխատութեան և երթալով կը տարածուի։ Ախալցխայի լերանց վրայէն ժողոված է Պ. Տիւպուա 1833 տարւոյ օգոստ. 24ին 58 տեսակ բոյսեր։ — Մշակ 1882, Թ. 187. 1887, Թ. 68։ Տիւպուա, Բ. 256–292։ Պրոսէ, Բ. Պր. 139–149։* Le Tour du Monde, XLVII, 406–413. LXIV, 182–3։ *Նշմարք Հայկ. Ա. Պր. 12։ Ն. Հայ. 120–5։ Ս. Մարքեն, Ա. 14. 77. Բ. 427։ Ջամչեան Պատմ. հտ. Գ. 458։ Պատմ. Գավրիժեցւոյ, 85, 628։ Մասեաց Աղաւնի, 1862, 175–6։*

ԱԽԱԼՔԱԼԱՔ *կամ* ԱԽԼՔԷԼԷՔ (*Նոր քաղաք*)· Գղ. AKHALKALAKI. Թ. آخل كلك · Պրսկ. سپید شهر (*Սպիտակ քաղաք*). Ռ. Ахалкалаки. Վ. ახალი ქალაქი. — *Գլխաւոր բերդաքաղաք համանուն գաւառի, որ կը համապատասխանէ Գուգարաց հին Ջաւախք գաւառի։ Ախալցխայի հարաւային արևելեան կողմը 55 հզրմ. հեռու, և Տփխիսու արևմտեան հարաւակողմը 117 հզրմ. հեռաւորութեամբ։ Թափարաւան և Ղըրխ–պուլաղ (Քառասուն աղբիւր) գետերն որ իրարու հետ միանալով Ախալքալաքէն քիչ հեռու կը կոչուին Ախալքալաքի գետ, կը ձևացնեն 1690մ բարձր թերակղզի մը, որոյ վրայ կառուցուած է Ախալքալաքը և իւր բերդը։ Հարաւային հիւսիսային և արևմտեան կողմերը կան միջակ խորութեամբ ձորեր, իսկ արևելեան կողմը ընդարձակ դաշտ է, որ երկնալով կը միանայ Շիրակայ լայնածաւալ դաշտի հետ։*

*Հին քաղաքը որ շինուած է եղեր բերդի հիւսիսային կողմի զառիվայրերու վրայ, այժմ բոլորովին աւերակ է։ Կիսակործան պարսպի մնացորդներէն կը տեսնուի որ հին Ախալքալաքը պարսպապատ է եղեր, և միայն արևմտեան ձորերու մէջ և արևելեան կողմը բացուած ճանապարհներով հաղորդակցութիւն է ունեցեր գաւառի հետ։ Արևելեան պարսպի դրան վրայ, մինչև ցարդ դեռ մնացած է վրացերէն Մեսրոպեան հին տառերով համառօտ արձանագրութիւն մը։ Աւերակաց մէջ այժմ նշմարելի են երկու եկեղեցիներ, հացի հորեր, ստորերկրեայ ճանապարհներ, զանազան տանց որմեր. հողի տակ ծածկուած կը մնան դեռ ուրիշ շատ բաներ։ 1882ին արքունական մեծ շէնքի մը համար, այս աւերակներէն քարեր հանելու ժամանակ, հանդիպեր են քառակլիր պատի մը. շարունակելով փորել՝ գտած են սրբատաշ քարերով շինուած սալայատակ, քանի մը գերեզմաններ, խաչքարեր, քարէ աշտանակ մը, եկեղեցւոյ դրան քարէ բա-*

*բաւոր մը, հազիւ ընթեռնլի Ջ (= 1451) թուականաւ, և այլն։ Գտնուած քարերու շատերը ծածկուած են եղեր հայերէն ԺԳ, ԺԴ և ԺԵ դարերու վերաբերող արձանագրութիւններով։*

*Տասներորդ դարու մէջ երբ Գուգարքի մէկ մասն կ'իյնայ Հայոց Կիւրիկեան թագաւորաց ձեռքը, Ջաւախք գաւառը կ'անցնի Վրաց իշխանութեան ներքոյ։ Վրաց Բագրատ Գ թագաւորը (980–1014) կը հիմնէ Ախալքալաքը առանց բերդի, և իր թոռը Բագրատ Դ (1027–1072) 1045 թուին Լիպարիտ Օրբելեանի հետ ունեցած պատերազմի ժամանակ կը կառուցանէ բերդը։ Ասոր թագաւորութեան ժամանակ ՇԺԳ (= 1064) թուին, ըստ պատմելոյ Մատթէոսի Ուռհայեցւոյ. «Յարուցեալ սուլտանն (Ալփասլան) ահագին բազմութեամբ իւրով մտաւ յաշխարհն Վրաց, . . . և իջեալ բանակեցաւ ի գաւառն որ կոչի Ջաւախս, և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն որ կոչի Ախալ, և ուժգին զօրութեամբ առաւ Ախալքաղաքն, և աճապարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և զկին անողորմ, և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ, և լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն, և գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտացն որ ոչ գոյ թիւ»։ Վարդան ևս կը յիշէ հետեւեալ կերպով, թէ ինչպէս Հայոց թագաւորութեան Անիէն վերնալէն վերջ, Տուղրիլի հօրեղբօրորդին Ալփասլան, «... եկն դարձեալ հարիւր հազարաւ, և առ զնոր քաղաք, զոր Վիրք Ախալ—քալաք ասեն»։*

*ԺԳրդ դարու մէջ քաղաքս Ախալցխայի հետ սկսաւ անկախութեան ձկտիլ և ԺԴրդ դարու առաջին կիսուն սկսաւ աթաբէկներով կառավարուիլ։ 1484ին մողոլաց Եաղուպ շահը Ախալքալաքը պաշարելով կ'առնու, բնակիչները գերի կը տանի և քաղաքը կ'այրէ։ 1637ին Ախալքալաքը, իր շրջականերովը Թրքաց տիրապետութեան կ'ենթարկուի և կը սկսի բէկերով կառավարուիլ։ 1772ին Կախեթու Հերակլէս և Իմերէթի Սողոմոն թագաւորներն կը պաշարեն քաղաքս, և քիչ կը մնայ որ տիրեն, բայց Սողոմոն թագաւորը ժանտախտէ բռնուելով, պաշարումը կը վերցնեն։ 1807ին Ռուսք, Գուդովիչ զօրավարի առաջնորդութեամբ, կը պաշարեն քաղաքս, չեն կարողանար տիրել, 2000էն աւելի զինուոր կ'իյնան բերդի պարսպաց տակ և 3 թնդանօթ կ'անցնին Թրքաց ձեռքը։ 1810ին (սեպտ. 4), դարձեալ Ռուսները Փաւլուչչի զնդապետի հետ, գիշերանց յարձակելով՝ մեծ ջարդ կու տան Թրքաց և շատ աւար կ'առնուն։ Իսկ 1811ին (դեկտ. 7), անպատմելի նեղութիւններով, Գաթրալեվսքիի առաջնորդութեամբ անցնելով Թրիալէթու լեռներէն, գիշերով կը յարձակին Ախալքալաքի վրայ, մեծ շփոթութիւն կը ձգեն Թրքաց մէջ և բերդին կը տիրեն։ Թուրքերը թողլով 16 թնդանօթ և 2 դրօշակ կը փախչին, բայց հաշտութենէ վերջ, դարձեալ իրենց ձեռքը կը մնայ քաղաքս մինչև 1828 թուականը։ Նոյն տարւոյ յուլիս 23ին, Ռուսք Փասքեվիչի առաջնորդութեամբ յարձակելով բերդի վրայ, յետ արիւնահեղ պատերազմի կը տիրեն, ձեռք ձգելով 14 թընդանօթ և 13 դրօշակ։ Ադրիանուպոլսի դաշնագրութեամբ (1829, սեպտ. 29), բոլորովին Ռուսաց ձեռքն անցաւ Ախալքալաքը։*

*Մեղ ծանօթ ազգային տապանաքարերու անձանագրութիւններէն յայտնի է թէ Հայք բնակած են այստեղ ԺԳրդ դարէն սկսեալ. անշուշտ անկէց առաջ ալ կային քաղաքիս մէջ Հայեր, բայց զայդ հաւաստող յիշատակարաններ, դէթ առ ժամս կը պակսին։ ԺԳրդ դարու մէջ Անիէն Ախալքալաքի վրայով Լեհաստան և Մոլտաւիա գաղթող Հայոց ամենշատն մէկ մասը մնաց քաղաքս, որոնք բնիկ հին Ախալքալաքցի ազգակցաց հետ, գաղթած են ի վերջոյ Գութայիս, Տփխիս, Ռուսիոյ ուրիշ զանազան քաղաքներ և մինչև Մոսկուա։ Վերջին 1828ին պատերազմի ժամանակ, Ախալքալաքի բնակիչք փախչելով և ցրուելով զանազան կողմեր, քաղաքը բոլորովին ամայացաւ. պատերազմէն վերջ ևս քաղաքացիներու մէկ մասն վերադառնալով, հաստատուեցաւ Խոսփիա գիւղը։*

*Մինչդեռ 1829ին Կարնէն և մասամբ Արտահանի գաւառէն եկած Հայ գաղթա-*

*կանները, Ախալքալաքի գաւառի մէջ կը հիմնեն գրեթէ 50 գիւղ, քաղաքը կը մնայ տակաւին աւերակ և ամայի վիճակի մէջ, մինչև 1831ին Ախալցխայէն մի քանի Հայեր գալով, բերդի հարաւային կողմը կը կառուցանեն որճատուն, փուռ և քանի մը բնակարաններ։ Այնուհետև հետզհետէ ուրիշներ ևս գալով բնակութիւն կը հաստատեն, և կ'սկսի ձևանալ փոքրիկ գիւղ մը։ Երեսուն տարուան ընթացից մէջ (1860), Ախալքալաքի բնակչաց թիւն կը բարձրանայ 2180 հոգւոյ, և 1874ին կ'ունենայ 2967 բնակիչ։ Նոյն տարին Ախալքալաքը կը լինի Գ. կարգի գաւառական քաղաք, իսկ 1890ին կը դառնայ գաւառական Բ. կարգի քաղաք, և 1896ին կ'ստանայ քաղաքային պարզ ինքնավարութիւն ։*

*1893ին հրատարակուած վիճակագրի համեմատ, քաղաքիս բնակիչք կը կազմեն հետևեալ ազգերը*

| | | |
|---|---|---|
| Հայք (լուս. և կաթ.) | 4084 | հոգի |
| Ռուսք . . . | 57 | » |
| Հրեայք . . . | 53 | » |
| Վրացիք . . . | 45 | » |
| Յոյնք . . . | 40 | » |
| Այլևայլք . . . | 24 | » |
| Գումարն | 4303 | հոգի։ |

*Ախալքալաքը (Թ. 36) ունի եօթը բաւական լայն և կանոնաւոր փողոցներ, որոնք կը կտրուին ուրիշ վեց, աւելի կարճ փողոցներով։ Այս փողոցներէն բաց ի միոյն, միւսները խճուղի չունին, ուստի և սաստիկ ցեխն և փոշին պակաս չեն։ Տները ընդհանրապէս քարաշէն են, ցած, միյարկանի և գրեթէ բոլորն ալ արտաքուստ սպիտակացուցած ։ Արևելեան կողմը կառուցուած են մեծ և փոքր երկյարկանի զօրանոցներ։ Քաղաքիս Հայ-կաթոլիկները յոյժ սակաւաթիւ լինելով չունին ոչ եկեղեցի և ոչ մատուռ, իսկ Հայ-լուսաւորչականք, ունին Ս. Խաչի եկեղեցի, զոր 1856ին կառուցած է Պ. Կարապետ Եաղուբեան՝ գլխաւորապէս իւր և մասամբ հասարակութեան դրամով։ Եկեղեցիս անշուք է և առանց գմբէթի, հասարակ շէնքերէն կը տարբերի միայն զանգակատունովը։ Ս. Խաչի գաւթի մէջ են Հայոց եկեղեցական ծխական Ս. Մեսրոպեան տղայոց՝ և Ս. Սանդխտեան օրիորդաց երկդասեան դպրոցները։ Ս. Մեսրոպեան դպրոցը հիմնուած է 1836ին Կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ և ծախքով. շինութիւնն հին է և անյարմար. աշակերտաց թիւն է 140–160։ Սանդխտեան ուսումնարանը բացուած է 1870ին, Ախալցխայի նախկին յաջորդ Գեր. Սուքիաս վարդապետի (այժմ եպիսկոպոս) յորդորմամբ և այլոց օգնութեամբ. տղայոց դպրոցէն պատնիշով մը զատուած բաւական յարմարաւոր շինութիւն է, աշակերտուհեաց թիւն է 150–180։ Այս դպրոցներէն զատ Ախալքալաքը ունի նաև քաղաքական ուսումնարան, բացուած 1889ին։ Նոր կառուցուած վայելուչ շէնք մ'է, որուն վրայ քաղաքը ծախսեր է 15,200 ր. 18 կոպէկ. աշակերտաց թիւն է 130–140։ Ունի նաև գիւղատնտեսական նոր դպրոց։ Քաղաքիս մէջ 1880 թուի մայիս 24ին Հայք բացին, Ս. Սանդխտեան դպրոցի կից գրադարան–ընթերցարան մը, որ բաժնուած է երկու մասի, արականաց և իգականաց։ Այդ գրադարան–ընթերցարանը այժմ ունի մօտ 1500 օրինակ Հայերէն և ռուսերէն գրքեր, և տարին կ'ընդունի նաև նոյն լեզուներով 21է աւելի պարբերական թերթեր։ Օրիորդաց դպրոցի ընդարձակ դահլիճի մէջ տարուան մէջ զանազան անգամներ, թատրոնական ներկայացումներ կը տրուին, և գոյացած արդիւնքը կը յատկացնեն, ո՛ և է բարեգործական նպատակի մը։*

*Քաղաքիս հիւսիսային ծայրը, կը գտնուի պարսպապատ Ռուսաց եկեղեցին, որ կառուցուած է Ալէքսանդրապօլցի Պ. Ստեփանոս Ընանիկեանցի աշխատութեամբ և ըստ բաւականի նիւթական օժանդակութեամբ, որով և արժանացած է առաջին քաղաքական ատիճան ստանալու։ Իսկ հարաւային կողմն ալ ընդարձակ պարսպապատ տարածութիւն մը, յատկացուցած են Հայոց եկեղեցւոյ համար, զոր պէտք է կառուցանեն տեղացի արժանայիշատակ Գրիգոր Կիրակոսեանի ժառանգները։ Ախալքալաքը ունի նաև հասարակաց պարտէզ մը 1880 թուին ձևացուած, որ ճաղերով շրջապատուած է, և ունի հա-*

վանոց մը. այգիք կամ աւազան չունի, մէջը տնկուած սակաւաթիւ ծառերը, կը ջրեն ջրհորի ջրով։

Ախալքալաքցիները բարքով ու վարքով և սովորութիւններով շատ չեն տարբերիր Ախալցխացիներէն, ինչպէս նաև զգեստից տարազներով համանման են, նա մանաւանդ կանանց զասը։

Քաղաքիս Վրացի բնակիչք կը պարապին երկրագործութեամբ, իսկ Յոյները արհեստագործութեամբ և քարտաշութեամբ։ Այս երկու ազգերն ալ կրօնիւ յունադաւան են և ունին եկեղեցի մը։ Հրեայք կը պարապին վաճառականութեամբ։ Հայոց ձեռքն է քաղաքիս գրեթէ բոլոր արհեստները, որոց գլխաւորներն են ոսկերչութիւն, կաշէգործութիւն, հիւսնութիւն, դարբնութիւն, ներկարարութիւն, և այլն։

Քաղաքացւոց զլխաւոր ըզբօսավայրերն են երկու կողմի ձորերն։ Արեւելեան կողմը կայ փոքրիկ և կիսաւեր մատուռ մը, զոր Վանք կ'անուանեն, և մօտը նշմարւող աւերակներէն կ'երևի որ այդ տեղ կան եղեր նաև ուրիշ շինութիւններ։ Նոյն տեղը կայ սառն ջրոյ աւազան մը, որոյ մէջ տենդով բռնուողները կը լուացուին և իբր կը բժշկուին։ Վանքի հանդէպ, գետի աջ կողմը կայ ուրիշ մատրան մը մնացորդներ, և քանի մը այրեր, յորոց մին կը կոչուի Ճգնաւորի այր։ Այս ձորի աւերակները արձանագրութեանց բեկորներ անգամ չունին։ Ուշադրութեան արժանի են այստեղ անձրևի զօրեղ ներգործութենէն, երկար ժամանակաց մէջ, ժայռերու մէջ մնացած կարծր քարերու առած զանազան գեղեցիկ ձևերը։ Ախալքալաքի արևմտեան ձորն ալ նոյնպէս զբօսավայր է. Դըրխապուլաղ գետակը կ'անցնի նորա միջէն, իւր ձախ կողմէն ընդունելով մի քանի սառն և քաղցրահամ աղբիւրներ։ Գետակի երկու կողմը կան բանջարանոցներ, ունենի և բարակի բազմաթիւ ծառեր, որոց ստուերներու տակ ժողովուրդը կը զբօնու և կերուխում կ'ընէ։

Քաղաքիս ջուրը կը մատակարարեն ձորերու մէջ բղխող 4 պատուական աղբիւրներ. կան նաև մի քանի ջրհորներ, որոց ջուրը չեր խմեր։

— Համանուն գաւառն Տփխիսու նահանգին կը պատկանի, և ունի 10 հասարակութիւն, 110 գիւղ և 59496 բնակիչ, որոյ վրայ աւելցնելով նաև քաղաքի բնակչաց թիւն, գումարն կը լինի 63799 բն. որոց 50467ը ազգաւ Հայ են։



36. Ախալքալաք։

Սահմանքն են Հս.էն Բորժոմի հասարակութիւնը Թաւ-Քոբելի, Զաւեղ, և այլ լեռներով։ Ա.մ.էն Ախալցխայի գաւառը՝ Կուր գետով։ Հր.էն Արտահանի գաւառը Խոզապինի լճով, Կեօք-տաղի լեռնաշղթայով, Իւշ-Թեփելէր, Օրթուլ-տաղ լեռներով և Ալեքսանդրապօլի գաւառի Մատաքէփէի սարերով։ Ար.էն Գարախաչ, Մոկրիա, Տաւաղրաճ, լերանց շղթաներով, Մարսեվի ձորով, Իշաճ-տաղ, Ղոյուշճ-տաղ, փիքեր, Տէլի-տաղ, և այլ լեռնաշղթայիւք։ Գաւառիս տարածութիւնն է՝ 2392 քառակուսի վերստէն աւելի։ Ունի արևմուտքէն դէպի արեւելք առ

տիձանաբար բարձրացող, 650 քառ. վերստ մակերեւոյթով դաշտավայր մը, որ միջին հաշուով ծովու երեսէն բարձր է 6000 ոտնաչափ. այս դաշտավայրը կը բաժնուի երկու մասանց՝ որք և կը կոչուին Գարեղայի և Ջրեշուշ դաշտավայրք։ Գլխաւոր լեռներն են Մեծ և փոքր Աշոցք, Կոտորեսի, Սամսար, Ղարադուզէյ, և այլն։ Այս լեռներէն ոմանք մինչև դարուս կէսը ծածկուած էին անտառներով, բայց 1853 տարւոյ պատերազմի և Դուխոբուռներու գաղթականութեան ժամանակ անխնայ կտրուելով, բոլորովին ամայացան, և այժմ միայն մնացածներ կան։ Լեռներն յիշենք Թափարաւան, Տուշման-կէօլ, Խոզապին, Թափիսցխուրը, Խոնչայի։

Այս լեռներէն կը բղխեն գլխաւոր գրեթէ բոլոր գետերը և վտակները, որոց շատերը կը կոչուին նոյն անունով։ Կլիման բաւական առողջարար է, և այդ՝ շնորհիւ իր բարձր դրից և առատ ջրերուն։ Ձմեռը թէպէտ ցուրտը չափաւոր է, բայց չափազանց ձիւն կու գայ։ Ցերեկուան բարեխառնութիւնն գրեթէ միշտ 0° կը լինի և քիչ անգամ 3°ի կ'իջնայ. իսկ գիշերը մինչև 10° կը ցածնայ, և հազիւ երբեք 13°էն ցած։ Սակայն կան դեռ աւելի ցուրտ կողմեր, ուր օդոյ բարեխառնութիւնն կ'իջնէ մինչև 20–30°։ Ամբողջ գարնան և ամռան մէկ մասը, շարունակ անպակաս են այս գաւառի մէջ տեղատարափ անձրևներն, որով և բուսականութիւնն խիստ կը կրէ, և որովհետև ամռան առաւօտներն ալ սաստիկ ցուրտ հովեր կը փչեն, դաշտերու բոյսերը կարճ կը մնան։ Այս դաշտավայրի բուսականութեան մեծ

## ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

### ԳԱՒԱՌԻ 10 ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

| ԱՆՈՒԱՆՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ | ՀԱՅՔ | | | | ՕՏԱՐՔ | | Տունք | Ընդհանուր երկ. սեռ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Լուս. | | Կաթ. | | Ռուս. Ցն. վ. չ. Դուխ. Մոլ. | | | |
| | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | | |
| 1 Արագովա (13 գ.) | 2871 | 2562 | 759 | 715 | 139 | 114 | 818 | 7160 |
| 2 Բարալէթ (23 գ.) | 4218 | 3788 | — | — | 815 | 705 | 1014 | 9526 |
| 3 Վարեւան (9 գ.) | 1081 | 1007 | 1860 | 1683 | 586 | 509 | 768 | 6726 |
| 4 Տիլիսքա (9 գ.) | 1565 | 1445 | — | — | 865 | 823 | 519 | 4628 |
| 5 Խրթըզ (11 գ.) | 13 | 12 | — | — | 1510 | 7282 | 417 | 2817 |
| 6 Վաչիան (11 գ.) | 3879 | 3405 | — | — | 293 | 256 | 851 | 7833 |
| 7 Գարել (8 գ.) | — | — | — | — | 3322 | 3326 | 829 | 6646 |
| 8 Կարծախ (10 գ.) | 1092 | 950 | — | — | 1054 | 877 | 441 | 3973 |
| 9 Սաթխա (8 գ.) | 2813 | 2609 | — | — | 321 | 260 | 656 | 6003 |
| 10 Էշտիա (8 գ.) | 922 | 849 | 1165 | 1044 | 76 | 57 | 496 | 4114 |
| Գումարն | 18454 | 16626 | 3784 | 3442 | 8981 | 8209 | 6809 | 59496 |

վնաս տուողներէն մէկն ալ է կարկուտն, որ առէպ կը պատահի և գրեթէ միջին հաշուով, տարին 200,000 րուբլիի կը հասնի այդ վնասն։

րի, կտաւատ, գետնախնձոր (կարտոֆիլ)։ Բանջարանոցներու մէջ կը բուսնին աւելուկ, բազուկ, ռեհան, տարգուն, ծեթրան, կաւէմ, կաղամբ, համեմ, մաղադանոս, սամիթ,

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՒԱՌԻ ԳԼԽԱՒՈՐ ՈՒԽՏԱՏԵՂԻՔ

| ԱՆՈՒԱՆՔ ՈՒԽՏԱՏԵՂԵԱՑ | ՈՒՐ ԳՏՆՈՒԻԼՆ ԵՒ Ի՞ՆՉ ԼԻՆԵԼԸ | ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆՑ ՕՐԸ ԵՒ ԱՐԴԵԱՆՑ ՈՒՄ ՊԱՏԿԱՆԻԼԸ |
|---|---|---|
| 1 Ս. ԳՐԻԳՈՐ ԱՒԵՏՈՒԱՆ. | Կուռնաշէթ գիւղի եկեղեցւոյ մէջ, ձեռագիր հին աւետարան մ'է։ | Աստուածածնին. արդիւնքը կը պատկանի Ախալքալաքի Հայոց դպրոցին։ |
| 2 Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ. . . | Գանձայի մօտ, լերան մը գագաթը։ | Համբարձման։ |
| 3 Ս. ԳԷՈՐԳ . . . . | Սուլդայի մէջ, Սրճէ-սարէ վրայ, հաստարակ խաչարձան մ'է։ | Աշխարհամատրան կիւրակին։ |
| 4 Ս. ԳԷՈՐԳ կամ ՕՂԼԱՆ ՎԷՐԱՆ . . . . | Կարծախի մէջ, Կէօքտաղի լանջին, ժայռերու մէջ. ուխտի կ'երթան ամուլ կանայք։ | Աստուածածնի և Վարդավառի երկուշաբթի օրերը։ |
| 5 ՃԳՆԱՒՈՐԻ ՎԱՆՔԸ. . | Ախալքալաքի ձորի մէջ, գետի մօտ, փոքրիկ մատուռ է։ | Մայիս 7ին։ |
| 6 ՏԱՒՇԱՆ ԹԷՓԷԻ ՍՈՒՐԲԸ. | Ախալքալաքի Տաւշան-թէփէ բլրի գագաթան վրայ։ | Ս. Գէորգայ տօնին։ |
| 7 ԼՈՒՍԱՒՈՐԻՉ . . . | Վաչիանի մօտ Լուսաւորիչ կոչուած լերան լանջին։ | Կիւրակի օրեր։ Գարնան կիւրակի օրեր։ |
| 8 Ս. ԹԷՈԴՈՐՈՍ . . . | Թաքչայի ձորակի մէջ, աւերակ մատուռ։ | |
| 9 Ս. ԽԱՉԱՏՈՒՐ . . . | Ապուլ լերան լանջին։ | Գարնան կիւրակի օրեր։ |
| 10 Ս. ՅԱԿՈՎԲ . . . . | Գոմէշի մէջ, խաչարձան։ | Կիւրակի օրեր։ |
| 11 Ս. ԳԷՈՐԳ . . . . | Գոմ գիւղի մէջ, Խաչէ-սարէ վրայ՝ խաչարձան։ | Կիւրակի օրեր։ |
| 12 Ս. ՄԻՆԱՍ . . . . | Արագովա գիւղը, բլրակի վրայ խաչարձան։ | Կիւրակի օրեր։ |
| 13 Ս. ՍԱՐԳԻՍ. . . . | Արագովա գիւղի բերդի պարսպի մէջ։ | Զատկին։ |
| 14 ԱՂՔԱՏ ՍՈՒՐԲ. . . | Փոքր Արագևայի մէջ։ | Կիւրակի օրեր։ |
| 15 ՕԽՏՆ ԱԽՊԱՐ . . . | Բզաւէտ գիւղի քահանայի տան մէջ եօթը աւետարան։ | Կիւրակի օրեր, արդիւնքը քահանային է։ |
| 16 ՓՈՔՐԻԿ ԱՒԵՏՈՒԱՆ. . | Դիֆիլ գիւղը, քահանայի տանը մէջ, Վենետիկ տպուած, հին փոքրադիր աւետարան մը։ | Կիւրակի օրեր, շահը քահանային է։ |
| 17 Ս. ԱՒԵՏՈՒԱՆ . . . | Ճանճղա գիւղը, գիւղացիի մը տան մէջ։ | Կիւրակի օրեր, վաստակը տանտիրոջն է։ |
| 18 ԽԱՉԱՐՁԱՆՆԵՐ. . . | Բզաւէտի մէջ, մին գիւղի արեւելեան կողմը, միւսը Ապուլի ճանապարհի վրայ։ | Կիւրակի օրեր, և Ապուլ երթալու ժամանակ։ |
| 19 Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ. ԾՄԻՆՏԱ ԵՕԱՆԷ . . . . | Բարալէթի արեւելեան հիւսիսային կողմը 2 վերստ հեռաւորութեամբ. քառանկիւնի քար մ'է, դրուած երկու քարէ պատուանդաններու վրայ, ծայրը կայ քարէ խաչ։ | Համբարձման. թէև Վրացւոց ձեռքն է ուխտատեղիս, սակայն Հայք ևս խուռն բազմութեամբ ուխտի կուգան։ Արդիւնքն Բարալէթու Վրաց եկեղեցւոյն է։ |
| 20 ՍԻՐԿ ԱՒԵՐԱԿԻ ՄԱՏՈՒՌ. . . . . | Սիրկ աւերակ գիւղի մէջ, գետի ափը, փոքրիկ մատուռ մ'է. դրան մօտ դրուած է խաչքար մը, որուն վրայ քանդակուած են երկու մարդ, ձեռքերնին մէկ մէկ խաչ բռնած։ | Կիւրակի օրեր։ |
| 21 Ս. ՍՏԵՓԱՆՈՍ . . . | Բարալէթ գիւղի մէջ։ | Կիւրակի օրեր։ |

Ախալքալաքի գաւառն զուրկ է անտառներէ, սակայն ունի հարուստ արօտատեղիներ։ Արտերու մէջ կը ցանեն ցորեան, գա-

սոխ, սխտոր, վարունգ, և այլն։ Բայց այս բոյսերու մէջ ամենէն նշանաւորն է Կեռնտուու և Վաչիանու շաղգամը, որ մեծ քա-

նակութեամբ կը դրկեն Ալեքսանդրապոլ վաճառելու։ Դաշտաց մէջ կը գտնուին հետևեալ ծաղիկներէն. անթառամ, այրի ծաղիկ, աւելի ծաղիկ, դաւի ծաղիկ, դեղին ծաղիկ կամ ծուծք, լորի աչք, լուի ծաղիկ, խաշխաշ, խնկածաղիկ, խորտ մորտ, կակաչ, կոլծուծ, կուժկոտրուկ, հինա, ձնծաղիկ, մանուշակ, մեխակ, նարուզ, նուզլու, շանբերան, սպիտակունք, տուղտ, քրքում, օշօշ, և այլն։

Կանանչներէն և խոտերէն նշանաւոր են. տաուլա, տառ, աւել, բաթաթուկ, բողկուկ, գառխոտ, գիլու փաթիկ, գնձմնձուկ, գոմէշ կոտրուկ, գոմշի անկաճ, դաղձ, թել բանջար, խելար խրխնտուկ, կաթնխոտ, կծմրնծուկ, կոճղեղ, կոպուխ, կովճակտուկ, սիպեխ, և այլն։ Խրթզու ձորի և մարգատանի մէջ կ'աճին թթենի, ընկուզենի, կեռասենի, խնձորենի, տանձենի։ Այստեղ կայ նաև ծխախոտի մշակութիւն։

Մշակի 1882 տարւոյ 220 թուի Ախալցխայէն գրուած նամակի մը մէջ հրատարակուած է հետևեալը Ախալքալաքի գիւղերու և բնակչաց վրայ. «Երբ անցնում ես գիւղից գիւղ, լսում ես Հայոց բարբառը ամենի բերանից, ժողովրդական երգերը, որ կալելիս է երգում գիւղացին, իր որդոց և ընտանեաց հետ։ Այստեղ ամեն ամիս ժողովուրդը ստեղծագործում է երգեր, հանելուկներ, հեքեաթներ, և այլն։ Ցաւով սրտի պէտք է ասել, որ մեր բանասէրները չեն հետաքրքրվում այս գաւառով, որտեղ գտնված է Հայոց այն տարրը, որ ընդունակ է տոկուն աշխատութեան, և որի վրա անփոփոխ մնացել են Հայի ամեն առանձնայատկութիւնները, և ինքնուրոյնութիւնները»։ Մշակի նամակագրի յայտնած փափաքն գոհելի արգեամբ կատարեց Պ. Ե. Լալայեան, գաւառիս վրայ ընդարձակ տեղեկութիւններ հրատարակելով, Ջաւախք վերնագրով գրքի մէջ, որ տպուած է ի Տփխիս, 1897ին։ Այդ գրուածքի մէջ կը խօսուի երկրի, բնակչաց, տնտեսական դրութեան, ժողովրդի լուսաւորութեան, Հայ գիւղացւոց բնակարաններու, զգեստուց, զարդուց, ընտանեկան բարուց, և այլ կարևոր և շահեկան նիւթոց վրայ։ Ախալքալաքի գաւառը ունի բազմաթիւ ուխտատեղիներ, գրեթէ ամէն մի գեղեցիկ լեռան գագաթը, ամէն մի ջրառատ և սիզաւէտ դաշտ, ուխտատեղի է. գարունը, ամառը և աշունը, զանազան որոշեալ օրեր ուխտի կ'երթայ բարեպաշտ ժողովուրդը։

Այդ ուխտատեղեաց դէթ գլխաւորները կարևոր համարեցանք յիշել առանձին տախտակի մէջ։ — Մշակ, 1882, թ. 188, 220։ Փորձ, Գ. ժբ. 109–118։ Կառնեկ, 1862. 220–224։ Ոսկանյեցի, 175։ Սամուէլ, 112։ Վարդան, 101։ Ն. Հայ. 127։

ԱԽԱՑԽԱՆՔ ԱԽԱՑԵՆՔ, կամ ԱԽԱՑԻՆՔ. — Ըստ հին ցուցակի, հարկատու գիւղ Սիւնեաց եկեղեցւոյ, Գեղարքունեաց գաւառի մէջ։ Յովհաննէս կաթողիկոս (Գլ. Կ.), պատմելով Աշոտ Բ թագաւորի առաջին յարձակումն Գարդմանաց Սահակ իշխանի վրայ կ'ըսէ. «... երկաքանչիւրք նոքա զօրաժողով լինէին ի մարտ ընդ միմեանս պատրաստեալ, և այնուհետև հասեալք ի մի վայր ի գեօղն Ախայեանս, ճակատս տուեալ մարտակաց ընդդէմ միմեանց պատրաստէին»։

ԱԽԱՆԻ Վ. Տես ԹԱՆԱՀԱՏԻ Վ.։

ԱԽԱՇԷՆ. — Քրդաբնակ գիւղ Արտահանու, 12 տուն բնակչօք։ Հայաստան գիւղիս մէջ, անշուշտ ժամանակաւ կը բնակէին Հայք։

ԱԽԱՎԱՆԱՑ, ԱԽԱՎԱՆՍ կամ ԱԽԱՎԱՆՔ. — Վանայ ծովակի հարաւային եզերաց վրայ, Աղթամարայ Ջրհանն կամ Դրախտունն է, ուր կը գտնուի կաթողիկոսի գրաւ վեհարանը։ «Որքա՛ն նազելի կը ճեմէ ու կը բազմի Ախավանցն այս եզերաց վրայ։ Ջաղացքներ կը բանին անդադար, ջրեր կը կարկաչեն որոտալից, ծառերը բարձրացած են յուռթի տերևալից, պտուղներ ի կախ և ի սփիւռս ի գրախտին, կլօրն ու ձմերուկ հասունացած են....»։ Համով Հոտով, 45։ 1899 տարւոյ Բիւրակն լրագրի 197–200 էջերու մէջ հրատարակուած սիրային աւանդավէպ մը կը յայտնէ ինչպէս Աղթամարայ նոյնպէս և Ախավանս անուանց ծագումն, սակայն գիւղիս անուան ճիշդ ստուգաբանութիւնն քննութեան կը կարօտի։

ԱԽԴԱԼԱ. Տես ԱԽՏԱԼԻ։

ԱԽԵՆԻՔ. — Հին գիւղ Սիւնեաց Սոդք գաւառի։

ԱԽԸՌ ՏԱՂԸ. *Տես* ԱՄԱՆՈՍ։

ԱԽԹԱ *կամ* ԱԹԽԱ. *Տես* ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ Վ.

ԱԽԹԱՄԱՐ. *Տես* ԱՂԹԱՄԱՐ։

ԱԽԻՋԱ. — *Գիւղ Թրքաց, Արտանուշի վիճակին մէջ, 28 տուն բնակչօք։*

ԱԽԻԼՈՒ. — *Փոքրիկ գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, որոյ մօտ կայ հին կարաւանատուն։*

ԱԽԻՍ. *Տես* ԱՂՍ։

ԱԽԼԱԹ. *Տես* ԽԼԱԹ։

ԱԽԼԱԹԵԱՆ *կամ* ԱԼԽԱԹԵԱՆ. — *Գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի, ընկած է դաշտավայրի մը մէջ, որոյ արեւմտեան կողմէն կը հոսի Այրի գետը, եւ արեւելեան հիւսիսէն Ղարա-սու վտակը, որ գիւղէս վար կը խառնուի առաջնոյն հետ։ Ախլաթեանի արեւելեան կողմը բարձրացած են Եալլիճու, Շղթայի Պատպատի եւ Գափրլու լեռները, իսկ արեւմտեան կողմը Լատ լեռը։ Բնակիչք 1088 հոգի, բաժնուած 111 տուն։ Եկեղեցին Ս. Սարգիս՝ աղքատին, փողոցները ծուռ ու մուռ, տները հողաշէն։ Գերեզմանատան մէջ կան երկու փոքրիկ եւ խեղճ մատուռ։ 1896 տարւոյ երկրաշարժէն բաւական վնասուեցաւ գիւղս, եւ իր մէջ բղխող հանքային ջուրն, երկրի ճեղքուելովը ցրուեր է եւ այժմ աննշան մնացած։ — Սիսական, 77։*

ԱԽԼՑԽԱ. *Տես* ԱԽԱԼՑԽԱ։

ԱԽԽԱՋ. — *Փոքրիկ գիւղ Սիւնեաց Ճահուկ գաւառի մէջ, տափի մը եզերքը, հին Խոտատունիքի արեւելեան հարաւային կողմը, փարախ մը հեռաւորութեամբ։ Բնակիչք են 30 տուն, կէսը Հայ եւ կէսը Թաթար. մօտը կայ հին եկեղեցի մը։ Ստեփանոս պատմչի յիշած Աղբերախաչն ըլլայ թերեւս այժմեան Ախխաջը։*

ԱԽՃԱ *կամ* ԱԳՃԱԳԱԼԷ. — *Գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի, Վաղարշապատու դաշտի մէջ, ունի Ս. Գէորգ կամ Ս. Փրկիչ եկեղեցի մը։ Գիւղիս մէջ 1647 տարւոյ նոյեմբեր 10ին գիշերօթեց գաղղիացի ուղեւորն Պուլէյ-Լըկուզ, որ եւ հրատարակած է փոքրիկ բերդի պատկերն (Թ. 37)։*

ԱԽՃԻԲԵՐ *կամ* ԱՂՋԻՊԻՐ. — *Սիւնեաց Սոդք գաւառի մէջ, 50 տնով այլազգաբնակ գիւղ մ'է։*

ԱԽՆԷՆ. — *Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի։*

ԱԽՆՋԻ. — *Օժանդակ վտակ, Արցախի Ցաւուշ գետակի։*

ԱԽՇԱՐ *կամ* ԱՇԽԱՐՕՎԱ. *Տես* ԱԳՇԱՐ։

ԱԽՈՌ. — *Հայաբնակ գիւղ Խարբերդի, 36 տուն բնակչօք. ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը։*

ԱԽՈՌԱՏՈՒՆ. — *Հին գիւղ Սիւնեաց Սոդք գաւառի։*

ԱԽՈՌՃԻԿ *կամ* ԱԽՈՌՃՈՅ. — *Գիւղ Այրարատայ, Վերին Բասենի մէջ։*

ԱԽՈՌՆԵՐ. — *Գիւղ Արդնոյ Մառէնի, որ թէ եւ այժմ Քրդաբնակ է, բայց ունի աւերակ եկեղեցի։*

ԱԽՈՒՐԱ *կամ* ԱԽՈՒՐԻ. — *Վտակ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ. հարաւային օժանդակ Արփա գետոյն։* *Տես* ԱԿՈՌԻ։



37. *Ագճագալէ, ըստ Լըկուզի։*

ԱԽՈՒՐԵԱՆ, ԱՀՈՒՐԱՑ, *կամ* ԱԽՈՐԷՆ. Գղ. AKHOURIAN. Թ. اربه چای (*Արփա-չայ*). — *Հին գետ Այրարատայ, հզօրագոյն օժանդակ Երասխայ։ Կը սկզբնաւորի Շիրակ գաւառի հիւսիսային ծայրէն, Գուգարաց սահմանակից Արփա լճէն, եւ ի Թրքաց նոյն անուամբ կը կոչուի Արփա-չայ (Գարսգետ)։ Նախ կը վազէ արեւելքէ արեւմուտք, հիւսիսային կողմէն ընդունելով Գուգարաց եւ Տայոց լերանց կողերէն հոսող բոլոր վտակները. Խօրրիշլիւ եւ Շիշքեփէ լերանց մէջտեղ խառնուելով Խօրրիշլիւ գետակի հետ, Շիշթէփէի ջերմուկի մօտէն կը շեղի դէպ ի հարաւ, եւ տեղ տեղ քիչ մը պտոյտներ ընելով, գրեթէ նոյն ուղ-*

զուլթեամբ առաջ կ'երթայ մինչև Երասխ, Շիրակ գաւառը բաժնելով երկու գլխաւոր մասանց՝ արեւելեան և արեւմտեան։ Ոչ միայն այժմեան Արփա—չայը, այլ և Կարուց գետոյ (Ղարս—չայ) գէթ մեծամասնութիւնը, այն է՝ Կարս քաղաքէն վերջը, մինչև Արփա—չայի խառնուրդն, հաւանականապէս ի հնումն կը կոչուէին Ախուրեան (Թ. 38)։ Խորենացւոյ աշխարհագրութեան ճոխ օրինակ մը նոյնը կը հաստատէ ըսելով. «Վանանդ և Շիրակ ի հիւսիսոյ (Երասխայ), յորոց եկեալ գետն Ախուրեան հանդերձ Մեծագետովն՝ ...»։



38· Ղարսի ձորը և Ախուրեան գետը։

... Վանանդայ Կարուց քաղաքի մէջէն անցնող Ախուրեանը կը խառնուի Շիրակայ Ախուրեանի հետ արեւմտեան կողմէն, Աստեղանիէն քիչ մը վար, ձեւացնելով Թերակղզեակ մը։ Գետոյս արեւմտեան միւս օ-

ժանգակներն են. Շիրակաւանը, Տօրէկէլի կամ Գարախանէ գետն, և Տեկորոյ գետակը. իսկ արեւելեան կողմէն չունի նշանաւոր օժանդակներ, այլ Գզըլխօչ լեռնէն իջած վտակներն, Իլլի տէրէ, Կարկաչան, և ուրիշներ։

Նշանաւոր էր գետս ի հնումն իւր եզերաց վրայ կառուցուած քաղաքներով և վանքերով, որոց բազմաց այժմ հազիւ տխուր հետքերն կը նշմարուին։ Իւր արեւելեան կամ ձախ կողմը կ՚ինկնան Մարմաշէն և Ալեքսանդրապօլ, իսկ արեւմտեան կամ աջ կողմը Հոռոմոսի վանք, Անի, Մրեն, Բագարան, և այլն։

Բագրատունեաց մայրաքաղաքին Անւոյ շէն եղած ժամանակ, գետոյս վրայ ձգուած էին մի քանի կամուրջներ, յորոց երկուքի տեղերը ցարդ կը տեսնուին և միայն երկու կողմի գլուխներն են (Թ. 39), և կործանուած կամարի մնացորդէն, միակամար եղած կը թուի։ Մատթէոս Ուռհայեցի (ՀԴ), սուրբ միւռոնին համար կ՚ըսէ, թէ Պետրոս կաթողիկոսը «... պահեաց ի յԱհուրեան գետն երկաթի ամանօք իբրև լիտր չորս հարիւր, վասն զի մի զուցէ անկանիցի ի ձեռս Հոռոմոց. (որ) կայ պահեալ մինչև ցայսօր ժամանակի. ի գեչերի արարեալ զայս՝ մերձ ի դուռն քաղաքին Անւոյ»։ Երուանդ Բ «... շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան,...»։ Արշարունեաց գաւառի մէջ, աջ կողմը թողլով հին Երուանդականց աւերակները, կը թափի յԵրասխ։ Ջորերու մէջ (Թ. 40) ահաւոր երեւոյթ մը կ՚առնու Ախուրեան, փրփրադէզ ալեօք ջրվէժանման խոխոջելով արագավազ կ՚ընթանայ, իւր վրայ դարձնելով ուղեւորի ուշքն, ակամայ կը զբաղցնէ անցելոյն փառաւոր յիշատակօք, և ներկայի կիսակործան շինուածոց ողբալի մնացորդօք, ի սուգ և ի թախիծ կը համակէ զսիրտն ազգասէր։ — Շիրակ, 2։ Այրարատ, 4–5։ Խոր. պատմ. Բ. ԼԹ, Խ. ԽԶ։



36. Կամուրջ Անւոյ Ախուրեանի վրայ։

ԱԽՋԱՆ. — Գիւղ Մշոյ դաշտի մէջ։

ԱԽՍԱԽ ԹԱՈՒՋ. — Ամայի գիւղ Սիւնեաց Արեգունիք վիճակի մէջ։

ԱԽՎԷՅԻՍ. — Գիւղ Հայոց, Այրարատայ Ճակատք գաւառի, Բլուր և Իկտիր մեծ գիւղերու մէջտեղ. բն. 942, բաժնուած 126 տան։

ԱԽՏԱ. — Այս անուամբ, իրարմէ գրեթէ 7 վերստ հեռու, երկու գիւղեր կան Այրարատայ Վարաժնունիք (Նոր Պայազիտ)

գաւառի մէջ ։ Վերին Ալխտա, ունի 150 տուն Հայ բնակիչ, և հին ու անշուք եկեղեցի մը Ս. Աստուածածնի ։ Հարաւային կողմը կը վազէ պատուական յորդառատ աղբիւր մը, որոյ վրայ գիւղացիք շինած են մատուռ, և կը պատուեն իբրև ուխտատեղի Ս. Յակոբայ աղբիւր անունով ։ Ստորին Ալխտա, ձևացած է Ներքին Թաղէ, որոյ բնակիչք են 55 տուն Մալական, և Վերին Թաղէ, որ ունի 206 տուն Հայոց ։ Այս գիւղը մերձակայ ուրիշ գիւղերու բաղդատմամբ, մեծ ճանապարհի վրայ գտնուելուն համար, ամենէն նշանաւորն է թէ՛ շէնքերովը և թէ բարեկեցութեամբը ։ Եկեղեցին կը կոչուի Ս. Խաչ, կառուցուած է 1864ին, որմունքն և կամարակապ տանիքն քարուկիր, իսկ սեղանն սրբատաշ քարով ։ — Գեղարքունի, 340—1 ։ Փորձ, Բ. գ. 199 ։

— Սիւնեաց Վայոց ձոր գաւառն ես ունի այս անուամբ երկու գիւղ, որք կը թուին հին ցուցակի մէջ մէկ անուամբ յիշուած Ալխտաքոյնքը ։ Վերին Ալխտա շրջապատուած է լեռներով և ձորերով. այժմ այլազգաբնակ է, բայց հայկական յիշատակարաններէ զուրկ չէ ։ Ձորերէն միոյն մէջ, բարձր քարաժայռի վրայ կը տեսնուի աւերակ եկեղեցի մը, և քարերու վրայ քանդակուած զանազան ձեւերով խաչեր ։ Եկեղեցւոյն հարաւային որմոյն կից է, բարձր մահարձան մը, ծայրը Տիրամօր պատկերաւ և Յիսուս գիրկը ։ Մահարձանի արձանագրութիւնք եղծուած են, մերձաբնակ Պարսիկները, կը համարին որ այդտեղ թաղուած ըլլայ սրբազան անձ մը, որուն վրայ գիշեր ժամանակ լոյս տեսնելով, կը պատուեն եղեր զոհերով և պատարագօք ։ Մօտերը կան նաև ուրիշ խաչքարեր, կանգնուած Պռօշի իշխանութեան ժամանակ, հանդերձ համառօտ արձանագրութեամբք ։ Ստորին Ալխտա, որ Վերին Ալ-



40· Ձոր Ախուրեան գետոյ ։

տայէ 3 փարսախ հեռու է, ունի փոքրիկ քարաշէն հին մատուռ մը, դրան վրայ կայ խաչվէմ և արձանագրութիւն ։ Մատրան արեւմտակողմը կը բարձրանայ չքնաղակերտ մահարձան մը, քսան և հինգ կանգուն բարձրութեամբ և տասն կանգուն լայն. գագաթը կայ խաչվէմ ։ Երկու շղթայակապ ահեղատեսիլ առիւծներու քանդակներ ես կան նոյն մահարձանի վրայ, և ՉԺԲ (=1263) թուականաւ արձանագրութիւն ։ Մատրան մօտ կայ սրբատաշէն եկեղեցի կամ ժամատուն մը, 16 կանգուն երկայնութեամբ և 10 կանգուն լայնութեամբ, կառուցուած կո-

*փածոյ հաստատակ քարերէ, չորս մայնլչաղէր սեանց վրայ։ — Ջալալ. Բ. 204–5։ Սիսական, 175։*

— *կամ* ԱԳՃԷ. — *Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Սինէկ լերան արեւմտեան հիւսիսակողմը՝ մինչև Ջամչէ երկրնցած շղթայի վրայ՝ ահեղատեսիլ կիրճ մ'է. անկից դէպ ի հիւսիսային արեւելք, Թուսաց սահմանին մէջ կայ հովտավայր մը տասնի չափ Եզիտիներու գիւղերով։ Նոյն լերանց շղթայի հարաւային արեւմտակողմը քիչ մը խոնարհ, կ'ինկնայ* Ալխտա *հովտավայրը, յորում համանուն կամ* Ալխտի *Ջրբոյն աջ և ձախ կողմերն կան հինգ իրարու մօտ քրդական գիւղեր, որք ծանօթ են* Ալխտի գիւղեր *անուամբ. ընդամէնը 50 տուն բնակիչք ունին, ամէնքն ալ աղքատ վիճակի մէջ։ Վերոյիշեալ կիրճն Այրարատեան դաշտէն Բագրեւանդ մտնելու դուռ մ'է, այդտեղէն կը մտնէին կողբայ աղը ի Բագրեւանդ, և թերեւս ասոր համար կոչուած է* Ալխտա *կամ* Ալ–տապ։ *Նոյնպէս Ախտայի ձորն կարելի է համարել Ասողկայ պատմութեան մէջ յիշուած* Աղտից ձորը. *«Որք (զորս կիւրապաղատին Դաւթի) յառաջ երթեալ ի յեռաճ Մոշկաշ, ի* ձորն Աղտից՝ *պահէին զառաջս պարսիկ զօրուն, կարծելով նախ ի Բագրեւանդ մտանել»։ Որչափ որ այժմեան Ախտայի ձորը Սուկաւէտէն 12 ժամ հեռու՝ դէպ ի արեւելք կ'ինկնայ, սակայն նոյն լերանց շղթայի շարունակութեան վրայ գտնուելուն, պատմիչն ի յեռաճ Մոշկաշ դրած է, և կամ հին ժամանակ Սուկաւ կամ Ջրբաշխ կը կոչուէին Սուկաւէտէն յարեւելս ձգուած ամբողջ շղթայն։ — Ասողիկ, Գ.* ԽԱ։ *Բագրեւանդ, 271–2։*

ԱԽՏԱԼԻ *կամ* ԱԽԴԱԼԱ. — *Գիւղ Գուգարաց Ջորոփոր (Փօռչալու) գաւառի, ձորի մէջ Լալվարու սարոտը, Ճօճկանէն երկու ժամ հեռու՝ արեւմտեան հարաւային կողմը։ Կ'ըսուի թէ վարդապետ մը գիւղս անիծելով, բնակիչք ախտաւորուեցան և սկսան հետ զհետէ մեռնիլ, և անկից կոչուեցաւ* Ախտալի։ *Այժմ բնակիչք Յոյն են, մէկ երկու Հայ ևս կան։ Նշանաւոր է գիւղիս մօտ Աստուածամօր ուխտը, հօյակապ երկնանման կաթուղիկէով և չքնաղ քանդակներով։ Այստեղ կը համարուի որ երբեմն եղած ըլլայ եպիսկոպոսարան, բայց որոշ յայտնի չէ Հայո՞ց թէ Յունաց։ Եկեղեցին արձանագրութիւն չունի, միայն մօտը գտնուած մատրան մը փոքրիկ խաչին վրայ կայ հայկական ՈՂԳ (= 1244) թուականաւ արձանագրութիւն մը։ — Ջալալ Ա. 85։*

ԱԽՏԱԽԱՆԱ. — *Հայաբնակ գիւղ Սիւնեաց այժմեան Ջանկեզոր գաւառի մէջ. բն. 279, բաժնուած 26 տուն։*

ԱԽՏԻ. — *Բաւական մեծ գետակ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, կը ձեւանայ երկու ճիւղերէ. մին կը բղխէ Ջամչէ լերան կողերէն, կ'իջնայ դէպ ի հարաւ Մերկեզերի կամ Դիզ–աշանայ անուամբ, և գետ դաշտն չհասած՝ պտոյտներ կ'ընէ. իսկ երկրորդ ճիւղն կը կոչուի Ախտի կամ Ճէմի–Ջարոյի ջուր, որ Ախտի և Սինէկ լեռներէն չորս ժամու չափ յարեւմուտս կը խոնարհի, անցնելով Ախտա գիւղերէն կու գայ մինչև Ճէմի–Ջարոյ, ճանապարհին ընդունելով այլ եւ այլ օժանդակներ։ Յետոյ կը դառնայ արեւմտեան հարաւ, ու* $2^1/_2$–3 *ժամ վազելէ վերջ՝ Տաշփի գիւղէն վար կը միանայ Մերկեզերի հետ։ Այնուհետեւ Տաշլի անուամբ կ'երկարի դաշտի մէջ դէպ ի հարաւ, Սոտրին Տաշփի, Երանոս գիւղերու և Գարաքիլիսէի արեւմուտքէն անցնելով կը խառնուի Քօրի հետ, և ապա կը թափի ի Մուրատ։ — Բագրեւանդ, 28։*

— ՍԱՐ. — *Լեռ Այրարատայ Բագրեւանդ գաւառի, Սինէկ լերանց արեւմտեան հիւսիսային՝ և Ջամչէի արեւելեան հարաւային կողմը. կը նայի Ալաշկերտի դաշտի վրայ և կը սկզբնաւորէ այժմեան Ախտա կամ հին Աղտից ձորը։*

ԱԽՐՋԷՄԱՆ. — *Խնուսի (Տուրուբերան) հարաւային մասի մէջ, դրախտանման ընդարձակ մարգագետին. կ'ոռոգուի Ս. Դանիէլ գետակով։*

ԱԽՔԻՐՄԱՆ *կամ* ԱՔԵՐՄԱՆ. Գզ. AKKERMAN. — *Ծովահայեաց բերդաքաղաք Ռուսիոյ Պեսարաբիոյ գաւառին, Տնեսթեր գետոյն բերանը։ Բնակիչք են 45000, Ռուս, Հայ, Յոյն և Հրէայ։ Քաղաքիս Հայք, որ բաւական հին ժամանակներէ ի վեր կը բնակին աստ, ունին քարաշէն եկեղեցի մը։*

Հեռևեալ յիշատակարանին մէջ երեք տաճարները կը յիշուին այստեղ. «Վերստին նորոգեալ գրեցաւ ցանկ գանձարանիս թվին ՌՃԳՁ ի ծովահայեաց քաղաքն Ախքիրման, ի դուռն Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Օգսենդին, և Սուրբ Յովհաննու աւետարանչին երից սրբոց տաճարաց»։ — Ճնցքն. ի Լեհաստան, 216–7։

ԱԾԱՆԵԱՑ ՋՈՐ. — Կը յիշէ Թ. Արծրունին.... «գնացեալ ի Ջորն Ածանայ ի խորնդիր փախստէից». կը կարծուի որ գտնուի Վասպուրականի նահանգի Ռշտունեաց գաւառին մօտերը։

ԱԾԳԼՈՐ. Տես ԱԶԳԼՈՐ։

ԱԾՈԲԻ. — Վանք Սիւնեաց նահանգի. գիւղն և որ գաւառի մէջ գտնուիլն անծանօթ։

ԱԾՈՒԳ. Տես ԴԱԼԱՐԻՍ։

ԱԾՊՏԵՐ. — Ագշարօվայի դաշտի մէջ (Շապին Գարահիսար) կան Վերի և Վարի Ածպտեր անունով երկու գիւղ Հայոց, որոց մօտ է Երկոտասան Առաքելոց վանքը։ Վերջին դէպքերու ժամանակ մեծապէս վնասուեցան այս գիւղերը։

ԱԿԱՄՓՍԻՍ. Լտ. ACAMPSIS. — Յունական անուն Ճորոխ գետոյ՝ զոր յիշեն Պլինէոս և Արրիանոս։ Ղևոնդ պատմիչ կը յայտնէ գետոյս բղխած տեղն և ուր թափուիլն հետևեալ խօսքերով. «... եւ ինքեանք անցեալ ընդ գետն Ակամփսիս, որ ի Տայոց բղխեալ՝ երթայ զհիւսիսով արեւմտից, անցանելով ընդ Եգեր՝ մտանէ ի Պոնտոս»։ — Հնախ. Հայ. Ա. 150։ Ղեւոնդ, 168։

ԱԿԱՆԱ. — Կը յիշէ անանուն Կիրակոս պատմիչ (207), կը թուի թէ առանձին գաւառ մը կամ վիճակ մ'էր Խաչենոյ կամ Արցախի սահմանաց մէջ։ — Այս անունով քաղաք մ'ալ կար Արցախի Մեծկուանեաց գաւառի մէջ, որուն մօտ Թարթառայ կամ Տրտուական գետոյն եզերքը, մայրեաց մենարանաց մէջ, առժամանակ մը կեցաւ Ս. Մեսրոպ, և երկար ժամանակ իր աշակերտաց մէկ մասը, ուր և նահատակուեցան Հոնաց զօրքերէն, որոց մարմինները և զգեստները մերձակայ բլրան վրայ սփռուած մնալով, գիշերը աստղի նման փայլեցան և այդ պատճառաւ բլուրն կոչուեցաւ Աստեղաբլուր։ — Պտկ. Ն. Հայ. 89։

— Գիւղ Հայոց Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի, Բարալէթի հասարակութեան մէջ. բն. 409, բաժնուած 51 տան։

ԱԿԱՆԵԱՑ ԼԵԱՌՆ. — Կը յիշէ Յովհան կաթողիկոսը, Յուսուփայ վրայ գրած ժամանակ, թէ սա Ընձեւացեաց երկրէն ելնելէն վերջ, «Զուէ գնայ ընդ կողմն Լերինն Ականեաց, ի գաւառն Աղբակոյ»։

ԱԿԱՆԻՍ ԴԱՇՏ. — Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Վանանդէն եկող Ախուրեանի երկու կողմերը տարածուած դաշտավայր մ'է։ Եօթներորդ դարու մէջ, երբ Պարսիկները Մօրկայ կայսեր սպանման վրէժխնդիր լինելու համար զինեցին Յունաց վրայ, որք դադարած էին ի Շիրակաւան, Յոյները գետէն անցնելով ի Դաշտն Ականիս խայստալին։

ԱԿԱՆՑ. — Հին գիւղ Վասպուրականի Արճիշահովիտ գաւառի՝ դաշտի մէջ, Կարճոյ ճանապարհին վրայ, Վանէն 99 հզրմ. հեռու հիւսիսային կողմը։ Երբ անցեալում հռչակաւոր և ներկայիս ողբալի Արճիշոյ բերդն և քաղաքն, Վանայ ծովակի տատանմամբ սկսան ընկղմիլ ջրոյ մէջ, Արճիշոյ հովտի գիւղերէն ամենէն աւելի յարմար և կեդրոնատեղի ըլլալով Ականց՝ դարձաւ գաւառագլուխ։

Բնակիչք կը բաժնուին հետևեալ կերպով.

| | | |
|---|---|---|
| Հայք (լուս. և կաթ.) | 1490 | հոգի |
| Մահմէտականք | 629 | » |
| Հրեայք | 60 | » |
| Գումարն | 2179 | հոգի։ |

Հայք ունին երկու եկեղեցի, մին Ս. Թադէոս Առաքեալ և միւսն Ս. Գէորգ, որ ժամանակաւ վանք եղած է, և 224 տարիներէ ի վեր նորոգմամբ եկեղեցւոյ ձևի վերածուած։ Աւանդութեամբ կ'ըսեն, թէ եկեղեցւոյս խորանը շատ հին է, Առաքելոց ժամանակէն մնացած։ Ականցիք ընդհանրապէս ամէնքը երկրագործ են, վաճառականութիւնն թողած են Վանեցւոց և Բաղիշեցւոց ձեռքը։ Գիւղաքաղաքիս հին պատմութեան նկատմամբ թէ և կը պակսին գրաւոր տեղեկութիւնք, սակայն ընիկ ծերունիք և ականջալուր նոյն սերունդք կը

պատմեն շատ դէպքեր։ Ականցի ամենաճոխ և փառաւոր ժամանակէն այժմ կան միայն 4–5 տուն Հայք, իսկ մնացեալքն վերջը եկած են զանազան կողմերէ։ Ասոր մօտ՝ երկու հզրմ. դէպի արեւելք կը գտնուի բլուր մը, որ ունի կրաքարի հանք 3 հզրմ. երկայնութեամբ և գրեթէ 300 մետր լայնութեամբ։ Բլրան գագաթը կը վերջանայ բաւական ընդարձակ սարահարթով մը, ծածկուած ըստ Պ. Թոխմախեանի Իրիչատի բերդի՝ և ըստ Վ. Քինէի Զերնակ (Zernak) քաղաքի աւերակներով։

— ԱՆԱՊԱՏ կամ ԱԿՆԵՐ ՎԱՆՔ. — Հռչակաւոր վանք և գիւղ Լեռնային Կիլիկիոյ, Ցախուտ գաւառի մէջ։ Հայ թագաւորաց սրտից յոյժ սիրելի վայր մը դարձած կը գտնենք Ակներ։ Լեւոն Ա թագաւորը, իր տէրութեան մէջ կարգած վանքերէն ամենէն աւելի կը սիրէր այս վանքը, ինչպէս կը վկայէ Կիրակոս պատմիչը. «Յորոց մի է ի վանորէիցն զոր կարգեաց նա՝ Հռչակաւոռն Ակներ կոչեցեալ վանք. որ մինչև ցարդ ևս վարի՝ նովին կարգաւորութեամբ զոր նոյն կարգեաց, զամենայն աւուրս շաբաթուն պահօք կատարել, այլ միայն լուծանել ձկամբ զշաբաթ և զկիրակէն»։ Իսկ Վահրամ պատմիչ կ'ըսէ.

«Զականաւոր ուխտըն կազմեալ
Որոյ՝ Ակներ անուն ձայնեալ»։

Նոյն Լեւոն թագաւորը երբ վախճանեցաւ, գերեզմանը ընտրելու համար շատ վէճեր տեղի ունեցան. վասն զի ոմանք կ'ուզէին ի Սիս՝ թագաւորանիստ քաղաքը թաղել, և այլք, ըստ պատմչին «... Ի վանքն որ կոչի Ակներ, զի յոյժ սիրէր նա զայն վանքն՝ վասն բարիոք կարգաւորութեան նոցա, և հաճոյական աղօթից...»։ Իսկ ոմանք ալ պատշաճ չհամարեցան այստեղ թաղել, «զի եզր էր տեղին այն», այսինքն թշնամեաց սահմանին մօտ՝ և որովհետև շատ թշնամիներ ունէր, վախցան որ չ'ըլլայ թէ այլազգիք վրէժխնդրութեան ոգւով մարմինը հանեն և այրեն։ Վերջապէս ամէնքը միաբան որոշեցին և մարմինը թաղեցին ի Սիս, իսկ «ըղսիրտն և զփորն տարան ի վանքն Ակներ»։

Կարծես սեփական շնորհք մ'ունեցեր է Ակներ առ ինքն ձգելու մեծահոգի սրտեր և մխիթարելու զայնս, իրենց տառապանաց վիճակի մէջ։ Լեւոնի յաջորդն և փեսայն Հեթում Ա, իր երկարամեայ և բազմարկած թագաւորութենէն վերջ, երբ լսեց բանակին անակնկալ պարտութիւնը, մեծ որդւոյն մահը և անդրանկան գերութիւնը, սաստիկ տրտմութենէն բեկած սիրտը սփոփելու համար «... եկն ի սուրբ և ի գերահռչակ ուխտն միանձանց, ի յԱկանց անապատն. և աստ մխիթարեալ սակաւ մի ի միեղէն եղբարց սուրբ ուխտին, կեցեալ աւուրս ինչ, մինչ եկաւ Թուրքն յերկիրս»։ Յետոյ կամաւոր հրաժեշտ տուաւ Հեթում աշխարհի, իր արքայաշուք ծիրանւոյն վրայ առնելով միանձնական սեւ սքեմ և կրօնաւորական Մակար անուամբ սրբութեամբ ապրելով այստեղ, վախճանեցաւ 1270 տարւոյ հոկտ. 28ին. իսկ մարմինն փոխադրուեցաւ Դրազարկու վանքը։ Հայրենեաց անդորրութեան համար Հալէպի բանտի մէջ մեռած Պաղտին մարաջախտի մարմինն ալ 1336ին փոխադրուեցաւ յԱկներ։

Վանացս եկեղեցիք, Մեծին Լեւոնի ժամանակէն կը յիշուին Ս. Աստուածածին և Ս. Առաքեալք։

Ոչ սակաւ նշանաւոր վարդապետներ ունեցեր է Ակներ, որոնք շարադրած կամ թարգմանած են զանազան տեսակ գրքեր։ Այս մասին փափաքողք կարող են գտնել ընդարձակ տեղեկութիւն Սիսուանայ տեղագրութեան 153–6 և 535 էջից մէջ։ Կիլիկիոյ ուրիշ վանքերու նման Ակներ ևս այժմ ամայի և աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ — Կիրակոս, 77, 94։

ԱԿԱՆՔ. — Գետակ Սիւնեաց՝ Սողից գետահովտին մէջ։ Ի հնումն համանուն գիւղ մ'ալ եղած կը թուի նոյն կողմերը։ — Նոյն անուամբ գիւղեր կային նաև Աղահեճք և Ծղուկ (Այլախ) գաւառաց մէջ։

— կամ ԱԿԱՆՑ. — Այս անուամբ գիւղ մը կը յիշատակուի Շիրակայ արեւմտեան մասին մէջ. անշուշտ Ականց ջուր կոչուած վտակին քով, զոր Մխիթար վանահայրը դարձուց բերաւ Հոռոմոսի վանքը։

ԱԿԱՐԴՈՆ. — Հին գիւղ Սիւնեաց Հաբանդ գաւառի մէջ։

ԱԿԷ. — Վասպուրականի հին գաւառ-

ներէն մին, որուն այժմ կը համապատասխանէ պարսկահայաստանի Մակուայ վիճակի մէկ մասը։ Վաղարշակ Թագաւորի ժամանակ այս գաւառի մէջ բնակող տոհմն կը կոչուէր Ակէացիք։

ԱԿՂ, ԱԿԻՂ կամ ԷԿԻՂ. Հն. ԱՆԳԵՂ. Գղ. AKIL, EKIL. Թ. اكيل. Ասոր. ܐܓܠ (Ագեղ) կամ ܐܢܓܠ (Անգեղ). — Ի հնումն անուանի բերդաքաղաք Անգեղտան (Չորրորդ Հայք) գաւառի մէջ, որոյ հին Անգեղ անունն ժամանակի շրջանաց մէջ փոփոխուեր եղեր է նախ Անգել, ապա Ագել, ի վերջոյ Ակիլ և հուսկ ուրեմն Ակլ կամ Էկիլ։ Ըստ այժմեան աշխարհագրական բաժանման կ'իյնայ Տիգրանակերտի կուսակալութեան Արղանայ գաւառի մէջ։ Տակաւին կանգուն է լերան գագաթը կառուցուած քարափոր հինաւուրց բերդը, որ ունի երկու միակտուր քարէ բուրգեր և ջրհոր կամ գուբ մը լերան ծայրէն մինչև վարը փորուած, որոյ յատակը կայ քարաշէն աւազան, ուր կը հաւաքուի Տիգրիս գետոյն մղուած ջուրը։ Պաշարման ժամանակ ջուր առնելու համար դիւրութեամբ, առանց թշնամւոյն տեսնուելու, բազմաթիւ աստիճաններով կ'իջնուի այդ գբոյն յատակը. հոն բացուած ծերպէ մը կարելի է տեսնել նաև Տիգրիսի եզերքը։ Բերդէն վար արևելակողմը լայն ձոր մը կայ, որուն երկու կողմերը կ'երևուին բազմաթիւ վիմափոր փոքր սենեակներ կամ այրեր, որոնք կը կարծուին թէ ժամանակաւ եղած ըլլան երևելի արանց շիրիմներ։ Ձորոյն ծայրը կայ նոյնպէս վիմափոր տեղ մը, յորում կը տեսնուին եկեղեցւոյ խորանաց կամ մեհենի բագնաց սեւցած քարեր։ Այս ամէնը տեսագաց վրայ հիացումն, սարսափ և հետաքրքրութիւն կ'ազդեն և վկայք են միանգամայն թէ ի հնումն այս տեղ կային շատ շինութիւնք և բնակութիւնք։

Մեր պատմիչներէն Բիւզանդ, կրկին անգամ կը յիշէ Ակլայ բերդը իւր հին անուամբ. «Եւ գային (զօրք Պարսից) պաշարկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդան, որ է յԱնգեղ տանն գաւառի. զի անդ էին բազում Հայոց Թագաւորացն (խմա և թագաւորազնեայցն) գերեզմանք շիրմացն արանցն արշակունեաց». բաց ի շիրիմներէն կը յայտնէ նաև թէ, «Բազում գանձք մթերեալ ամբարեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ»։ Վերյիշեալ Պարսից զօրքերը բերդը պաշարելով. «ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, թողուին և գնային։» Տիրանայ և իւր որդի Արշակ Թագաւորաց ժամանակ Դրաստամատ ներքինին «Լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին»։

Ակլ բերդի ետևէն խոր ժայռերու միջով կ'անցնի Տիգրիս և կ'երթայ դէպ ի Տիգրանակերտ, և իւր երկու կողմերն տարածուած են այգեստանք։

Բերդաւանիս Հայք կը համարուին 200 տուն, և ունին մէկ եկեղեցի Ս. Նշան, որ ուխտատեղի է միանգամայն, և ինչպէս կը գրէ Սրուանձտեանց, մէջը կայ երկաթէ մեծ խաչ մը, իբր հարիւր պատառներով պատատուած, կոթը միայն կը համբուրեն. կ'աւանդեն թէ այն տաշտին մասն է, յոր Տիրամայրն զՄանուկն Յիսուս կը լուար։ Կոլճուկէն բերուած է աստ։

— Համանուն վիճակն ունի խաղող և պատուական գինի և պտուղ։ Տիգրանակերտի կուսակալութեան փայտը ասկէ կը տանին Տիգրիսի վրայով Քալաք կոչուած լաստով։ Ակլայ մօտ գտնուած Հայաբնակ գիւղերն են.

Փիրան. ունի 1 եկեղեցի Ս. Աստուածածին և 42 տուն Հայոց։

Հրէդան. 1 եկեղեցի Ս. Աստուածածին. տունք Հայոց 42։

Թիլ Բաղդատ. տունք Հայոց 45։

Հօփիկ. 1 եկեղեցի Ս. Գէորգ. տունք Հայոց 15։ — Ն. Հայ. 223–24։ Թորոս Աղբար, 181–183։ Բիւզանդ, 142, 206։

— Գեր. Սրուանձտեանցի հետ մենք ևս շփոթելով, Ակլին Ակիլի հետ նոյն պիտի համարէինք, սակայն քննութեամբ ստուգեցինք որ բոլորովին տարբեր քաղաքի մը անունն է. ուստի ի կարգին նկարագրած չլինելով այդ քաղաքը, հարկ կը համարինք համառօտիւ յիշել աստ։

Ակլի կ'իյնայ Մոկանց աշխարհի կողմերը՝ ըստ Յայսմաւուրաց հոն հասնելով Հոփսիմեան սուրբ կուսանք, աղօթքով ախտ-

արար ջուրը որբեցին ։ Խորենացին ևս կը յիշէ անունս երբ Արտաշէս Բ՛ մեծ խնամակալին Սմբատայ համար կը գրէ թէ «Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱկկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն» ։ — Խոր. պատմ. 132։

ԱԿԼԱՆԼՈՒ. — Երկու փոքրիկ գիւղ, Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ ։ Վերին Ակլանլու ունի Ս. Աստուածածնի եկեղեցի մը, իսկ Ներքին Ակլանլուի եկեղեցին նուիրուած է Ս. Լուսաւորչի։

ԱԿՆ կամ ԷԿԻՆ. Գղ. EGHIN. Թ. اكين.
— Գեղեցկագիր և աւելի իր անցեալովը քան ներկայ վիճակով հռչակաւոր քաղաք փոքր Հայոց, որ նեղ ձորակի մը մէջ, Եփրատայ աջ կողմէն ամփիթէատրոնաձև աստիճանաբար կը բարձրանայ բարձրակատար լերան մը կողը (Թ. 41), գրեթէ մէկ հզրմ. բարձրութեամբ և երեք հզրմ. երկայնութեամբ։ Ճարտար գրիչ ազգային այցելու մը իր խօսքերն Ակնայ ուղղելով հետևեալ նկարագիրն կ'ընէ. «Միթէ կ'արժե՞ս դու, մեծահամբաւ քաղաքդ, այնքան նեղութիւններ կրել տալ քեզ այցելու եկողին։ Արդարև երբ ճնշուած՝ քարերէ, խորերէ, վախերէ, քրտնաթաթախ և արիւնաշաղախ եկուջներէ, յանկարծ կը տեսնես Ակն՝ ձորակի գագաթէն, այնքան շքեղ շէնքերով և գեղեցկազարդ ծառաստանկերով, կարծես արքայութիւն մի է այն. իջնալ պէտք է մինչև կիրճին խոր յատակը, և երկրպագելով Եփրատի թագաւորութեան պատուանդանին, ապա անցնիլ կամուրջով մը, յայնժամ կը տեսնես թէ այդ արքայութեան հանգիստ կարծած քաղաքդ՝ քանի՜ դժուարին և անելանելի տապար մ'է, ինչպէս մարդ պատէն կամ պարսպէն ի վեր ընթանայ. քարերու մէջ ենք, քար կը կոխենք, քարերն ի վեր կ'ելնենք, եթէ մխիթարութիւն մը կայ՝ քարաշար սանդուխներն են, խոխոջացող առատ ջրեր, և ծառոց ու բուսոց կանանչ սաղարթներ, որ տարածուելով փողոցներու պատերէն դուրս՝ գեղեցկութիւն մը սփռած են»։

Կառուցուած է Ակն միջավայրի մը վրայ, իր հարաւային արևելեան կողմը կ'ինկնայ Խարբերդ 95 հզրմ. հեռաւորութեամբ, հիւսիսային արևելեան կողմը Երզնկա 100 հզրմ. հեռու, 35 հզրմ. դէպ ի հարաւ Արաբկիր, և 97 հզրմ. նոյնպէս դէպ ի հարաւ Մալաթիա. իսկ Զմշկածագ հեռու է 14 ժամ և Տիվրիկ 12. իրեն մօտ են նաև Քէմախ (հն. Անի ամրոցն) և Կիւմիւշ-Մատէն (հն. Կապան) աւանները։ Միայն հայկական տոկունութիւնն և ճիգն կարող էին այսպիսի ապառաժուտ քարային մեծ անտառի մը մէջ, Եփրատայ մեծափառ խոխոջանքէն և անդնդապարար խաղացքէն և այլ բազմադիմի առաւելութիւններէն ձգուած՝ հիմնել քաղաքս ։ Մարդկային ձեռքն աջակցելով բնութեան՝ այնքան բազմազան և գեղազուարճ զարդարուած է Ակն, որոյ նմանը դժուար է գտնել մեր Բնաշխարհի ուրիշ կողմերը։ Աւելի Վասպուրականի քան Անւոյ գաղթականք են Ակնեցիք, բայց կարելի է հաւանական համարել նաև այն կարծիքն, թէ Վասպուրականի գաղթականաց վրայ, ի վերջոյ աւելցած ըլլայ մաս մը ևս ողբացեալ Անւոյ բնակչաց։

Քաղաքիս Ակն անուան ստուգաբանութիւնն հետաքրքրական է, և հետևեալ կերպով կ'աւանդուի։ Անւոյ կործանմանէն վերջ, նորա Հայ բնակչաց հարուստ և կարևոր մէկ մասը, նոր հայրենեաց մը ի խնդիր ելած, կու գայ կը հասնի Ակնայ ձորը, Անի ամրոցի նեղ կապանէն անցնելով, և պատահելով այս ձորի մէջ լեռնէն հոսող առատ ջրոյ մը, կը ցանկայ գտնել նորա Ակն, և երբ կը յաջողի, կը հիմնէ անդ քաղաքն, որ ջրոյն ական անուամբ կը կոչուի Ակն։ Առատաբուղխ ջրոյ այս աղբիւրն, որ վերին թաղի հիւսիսային կողմը, մեծ մզկիթի վերև ապառաժի մը ներքևէն կը հոսի իբր 1 կամ $1^1/_2$ կանգուն տրամագծով, բնութեան ամենագեղեցիկ տեսարանաց մին կ'ընծայէ։ Բղխած տեղն մեծամեծ ապառաժներով շրջապատուած աւազան մը կը կազմէ, ուսկից առուակներու բաժնուելով, մէկ մասն ջրաղացներ դարձնելու, պարտէզներ ջրելու կը ծառայէ, և մէկ մասն ալ խողովակներով կը բաժնուի, փողոցներու մէջ գտնուած հասարակաց և կամ տանց մէջ մասնաւորաց աղբիւրներու։ Այս ջուրն գարնան կ'առատանայ, և մէկ հզրմ. բարձրութենէն մինչև

Եփրատ գետը կը գահավիժէ ահեղագոչ որոտմամբ, խլացուցիչ շառաչմամբ, և ալիտակափրփուր։ Այս ամենատատ, վճիտ և զով ջրէն զատ, կան նաև ուրիշ ջրեր, ինչպէս Կարճ–աղբիւրի, Ակճ--ձողի կամ Ակճ–գովի, Խանակի, Բերդի–աղբիւրի, Խճկաճորի, և այլն։ Քաղաքիս ձորերն են Մեծ ձոր, Զրիկ կամ Ճորիկ, Պզտիկ կամ Տափակ և Արեգի ձոր՝ որոյ ջուրն հեռուներէն կու գայ, Զոխ–մարի (Ճոխ–մայր) և Գուչանի ջուրց հետ միանալով ջրաղացներ կը դարձնէ, կարասեաց ամենանուրբ ճարտարապործութենէն մինչև փողոցներու յետին անպիտան քարն, խիճն ու աւազն մանաւոր հոգածութեամբ և յատուկ աշխատութեամբ և ծախքով կարգաւորուած և զետեղուած են։ Քարայերան մը ատապարի զառիվայր կողին վրայ արուեստական թումբեր կանգնելով հարթ կամ նուազ հակեալ մակերևոյթ սանդծել՝ փոխադրելով անդ ի հեռուստ հող և աւազ պարտէզի կամ որթատունկի վերածելու համար զայն, ամէն երկրի բնակչաց



41 · Ակն քաղաքի տեսարանը ։

պարտէզներ կը ջրէ և կը թափի յԵփրատ։ Ակնայ լերանցամէջ և միանգամայն բարձր դիրքն, բնականաբար իրեն կը պարգևեն առողջարար օդ, ամրան զով և ախորժելի և ձմեռն նուազ ցուրտ, զինքը շրջապատող բարձր լերանց շնորհիւ ազատ է նաև տօթագին խորշակէ։

Ակնեցիք ամենայն միջոց ի գործ դնելով կրցած են նուաճել բնութեան անհամբոյր և խոժոռ կորդատամնները, զի սկսած տանց արեգակնակներէն, պատշգամներէն և կահհամար սովորական գործ մը չէ գէթ Ակնոյ այս կողմերու մէջ, զի կը պահանջէ նիւթական կամ տնտեսական կարողութեան լծորդուած բարեկեցութեան ճաշակ և զգացում, յորում Ակնեցւոց աստիճանը գերազանցապէս կը փայլի։ Մարդ պատկառանք կ՚զգայ քաղաքիս փողոցներէն անցած ատեն, երբ ի յուշ ածէ, թէ օսմ. վեհապետաց և նախարարաց պետական ծառայութեանց մէջ երբեմն այնքան փայլող հռչակաւոր ամիրայից հայրենեաց մէջ գտնուի, ուր կը նշմարուին

նոցա փառաց և մեծութեան կանգուն և խոնարհեալ բազմագունակ նշխարներ և յիշատակարաններ։

Մէկն Ակնայ նկարչական գեղեցիկ դրից վրայ գաղափար մ'առնելու համար, պէտք է բարձրագոյն տան մը վրայ կանգնած դիտէ այն երևոյթը խառնեալ տներէ, եկեղեցիներէ, մզկիթներէ, ծառերէ, պարտէզներէ, որթատունկերէ, ջաղացքներէ, այլ և այլ արուեստաւորաց գործատներէ՝ և այլն, որք աննման բայց զուգադէպ ներդաշնակութեամբ իրարու լծորդուած, հրապուրիչ տեսարան մը, կամ թէ բնաւ գեղափայլ և գեղագուարթ ովասիս մը կը ներկայացնեն դիտողի աչաց։

Ոչ միայն պատուական տասն ջրերը, այլ և անշուշտ տեղւոյս բնական ամուր դիրքն դիտելով նախկին հիմնարկողք Ակնայ, որսորդներէ հալածուած թռչնոց նման՝ ապաստանած են այս անմերձենալի և անառիկ քարերուն։ Քաղաքս իւր արևելեան և արևմտեան ամենանեղ և դժուարակոխ կապաններն բանելով կարող է արգելուլ ամէն յարձակմունք, իսկ հիւսիսէն և հարաւէն գրեթէ բացարձակ անհնարին է մտնել անոր լեռներու երեսէն։ Նշանակութեան արժանի է Ակնայ ձորոյն մէջ արձագանգի սաստկութիւնն. փոքրիկ ատրճանակի մը պայթումն անգամ այնպիսի ահաւոր գոռում գոչում կը պատճառէ, որոյ հաւասարը գուցէ հարիւրաւոր թնդանօթներու միահաղոյն պայթմունք չեն կարող առաջ բերել լայնածաւալ դաշտերու մէջ։ Ահաւոր և սարսափելի է նաև երկնից որոտման գոռումը, որ կը թուի աշխարհի բոլոր լեռնակոյտերու մի և նոյն ժամու մէջ փլուզման ահեղ ձայնը։

Քաղաքիս և մօտակայ գիւղօրէից տները մեծաւ մասամբ երկայարկ և եռայարկ են, կան նաև քառայարկ ապարանքի պէս տներ։ Վերի յարկերը ընդհանրապէս փայտաշէն են, իսկ ստորին յարկերը քարաշէն։ Վերին թաղի և Թաշ—տիպիի տներն շինուած են իրարու վրայ, և միայն տանիքն կը ծառայէ իբրև ճանապարհ կամ հրապարակ միասին։ Բաց ի Վերին և Թաշ—տիպիի թաղերէն, միւս բոլոր թաղերն ալ փոքր ի շատէ զարդարուած են պարտէզներով, յորս կը գտնուին թութ, սալոր, խաղող, խնձոր, տանձ, ընկոյզ, և այլ տեսակ պտուղներ և բանջարեղէնք։ Եփրատ գետը որ անցնելով Երզնկայի մօտէն և Կամախէն կու գայ կ'անցնի քաղաքիս ճիշդ ստորատէն, ունի իւր բազմաթիւ օգուտներն. հետը կը բերէ շինութեանց և վառելու փայտեր, և կ'ընծայէ զանազան տեսակ շիշէկ, մող, վազ, թեփիկ, շաղփուղ, ցոփկ, տափակ—բերան և այլ անուններով ձկներ։ Քալակով կամ տիկալաստով ալ՝ ուղևորութիւն և ապրանաց փոխադրութիւն կ'ընեն, հոսանքն ի վար միայն։ Ակնայ առջևը՝ գետոյս վրայ ձգուած կամուրջն, որոյ երկու կողմը քարէ որմեր՝ և մէջ տեղերն փայտաշէն են, ՌՃՂԸ թուին, սուրբ Յակոբայ բարեկենդանի շաբաթ օրը այրելով, տեղացիք վերստին շինած են զայն։

1880 տարւոյ վիճակագրութեան մը համեմատ, քաղաքիս Հայոց թիւն է 5442, իսկ Թրքաց 4286։ Հայք ունին երկու եկեղեցի Ս. Աստուածածին, Վերին թաղի մէջ, որ 40 տարի առաջ ի հիմանէ վերստին կառուցաւ քարուկիր և սրճագարդ, որուն վրայ գրեթէ 5–6000 ոսկի ծախք եղած է. Ս. Գէորգ, Վարի թաղի մէջ, 1874–76 տարիներու մէջ այս ալ վերստին կառուցուած է գմբէթաւոր և աւելի ճարտարարուեստ։ Գերեզմանատունը Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն վերի կողմէն սկսելով մինչև լերան ստորոտը և դէպ ի հարաւ կը տարածուի, պարիսպ չունի, և ամէն ընտանեաց համար փոքր և ցած որմերով բաժնուած զատ զատ մասեր կան։ Ի հնումն կայ եղեր աստ նաև Ս. Յովհաննու ոսկեբերանի եկեղեցի մը, որ ՌՃԳ թուին Եղիական պահոց մէջ այրեր է, ըստ յիշատակարանաց Յայսմաւուրաց։ Վարի թաղին մէջ է Ներսիսեան վարժարանը և Վերի թաղի մէջ Նարեկեանը, իսկ Արեգի թաղի մէջ կայ Հայկազեան ծաղկոց. աշակերտաց թիւն կը հասնի 400ի և աշակերտուհեաց 140ի։ Քաղաքս ունեցեր է նաև զանազան կրթական ընկերութիւններ, ինչպէս «Ազգասիրական ընկ.», «Ուսումնասիրական ընկ», «Արամեան ընկ.», «Ուսումնական միութիւն», որոց ոմանք ոչնչացան։ Թուրքերն ևս ունի իրենց դպրոցները, և հինգ մզկիթ, յորոց մին, որ կը

գանուի Վերին թաղի հիւսիսային կողմը, կ'ըսեն, թէ հին ժամանակ եկեղեցի է եղեր։

Ընդհանրապէս Ակնեցիք, գիւղաբնակներն անգամ, քաղաքացւոյ կեանք կը վարեն, երկրագործութիւնը գրեթէ բոլորովին մէջերնէն վերցած է, արդէն մշակութեան յարմար հողեր ալ կը պակսին։ Այս պատճառաւ թէ գիւղացիք և թէ քաղաքացիք կը դիմեն յօտարութիւն, անդ վաստակելու և ի հայրենիս վայելելու։ Առած մը կ'ըսէ թէ՝ «Ակնցու երկու ոտքէն կաղն մինչև Հնդկաստան հասեր է, մէկ ոտքէն՝ մինչև Չինումաչին»։ Ինչպէս ծիծեռնակը, որ իւր բոյնը կը շինէ քարի մը կող, և ինքն արագ արագ կը սլանայ յայս և յայն կոյս որդ և կուտ կը կրէ իւր ձագուց, նոյնպէս և Ակնցին շարունակ կ'երթայ կու գայ, կը բերէ, կ'սպառէ, և նորէն կը վերադառնայ։ Կան նաև ոչ սակաւ Ակնցիներ աշխարհիս զանազան կողմերը, որք գաղթականութեամբ հաստատուած են, և իրենց գործն և առուտուրն կարգի դրած։

Ակնայ արհեստաւորք՝ ոստայնանկ, կօշկակար, դարբին, պղնձագործ և կլայեկող, ոսկերիչ, ներկարար, խաղախորդ և սեղանաւոր, ընդհանրապէս Հայ են։ Վաճառականաց, մրգավաճառաց, գեղագործաց, և ժամագործաց մեծագոյն մասն ալ Հայ են. իսկ մսավաճառաց, սրճապրաց, հիւսնոց կէսը Հայ են և կէսը Թուրք. հացագործաց ալ մէկ մասը Հայ, և մաս մ'ալ Թուրք և Կիւմիւշ–խանէցի պանդուխտ Յոյներ։

Ազգային գործոց և քաղաքակրթութեան մէջ, յոյժ զարգացած և յառաջադիմած էր Ակն, ի գործ դնելով Սահմանադրութիւնն՝ ունէր իւր բոլոր պաշտօնական մարմինները, Երեսփոխանական ժողովէն սկսեալ մինչև Թաղական խորհուրդներն և Հոգաբարձութիւնք, ամենայն ինչ ի կարգի էին։

Կամարկապ և Ապուչեխ թէպէտ ըստ պաշտօնական վիճակագրութեանց առանձին գիւղեր են, սակայն իրենց մերձաւորութեամբն կրնան համարուիլ մէկ մէկ թաղ կամ արուարձան, յորս կը տիրէ մի և նոյն քաղաքակրթութիւնն, բնաւոր ճաշակն, և այլ ամենայն ինչ որ յատուկ է Ակնայ։

Քաղաքս իւր շրջակայ Հայոց գիւղերով, բաւական չէին անդադար ի հնուց ի վեր կրած հարստահարութիւնքն, վերջին ահաւորագոյն հարուած մը ունեցաւ 1896 տարւոյ սեպտեմբերի մէջ։ Հայոց Վերին թաղի տներու մեծագոյն մասն հրոյ ճարակ եղան։ Ընդհանուր անձանց կորուստն ըստ լրագրաց համարուեցաւ 2000 հոգի։ Ամենայն անասելի խժդժութիւնք ի գործ դրուեցան, Հայոց կրկին եկեղեցիք այրուեցան և երիցունք սպանուեցան։ Նոյն թշուառութիւնն պիտի գար քաղաքիս վրայ 1895ին, եթէ Հայք 1500 լիրա փրկանք չտային։ Այս դէպքէն վերջ, հարուստ Ակնի ողջ մնացած ժողովուրդն բոլորովին յետին աստիճանի աղքատացաւ և մինչև անգամ չոր հացի կարօտ մնաց։

Ակնայ առաջնորդ եղած է ժամանակաւ և նորա նկարագիրն իր Թորոս Աղբօր 243–48 էջից մէջ հրատարակած հանգ. Գարեգին եպ. Սրուանձտեանց։ Պ. Յ. Կ. Ճանիկեան բնիկ Ակնցի, 1895ին Տփխիսու Հայոց Հրատարակչական Ընկերութեան միջոցով հրատարակեց Հնութիւնք Ակնայ վերնագրով բաւական ստուար հատոր մը, յորում մանրամասն կը խօսի քաղաքիս և շրջակայից հին և նոր պատմութեան և տեղագրութեան վրայ։ Տեղեկութիւն կու տայ նաև ազգային զանազան սովորութեանց, բարուց, գաւառաբարբառի և տեղական երգերու վրայ։ Պ. Մարկոս Նաթանեան, 1885 տարւոյ Մասիսի 870–72 և 917–19 էջից մէջ, հրատարակեց քաղաքիս ճոխ նկարագիրն, զոր մասամբ մը համառօտելով հրատարակեց նաև Պ. Ս. Գուլամիրեանց Արաքսի Բ գրքի 33–37 էջից մէջ։ Ներկայ նկարագիրս քաղուածք մ'է վերոյիշեալներու մանաւանդ Նաթանեանի գրութեան։

— Համանուն գաւառակի կամ վիճակի սահմանքն են Հս.էն Սեբաստիոյ և Կարնոյ կուսակալութիւնները, Ար.էն Տէրսիմի գաւառը, Հր.էն Արաբկիրի վիճակը և Ամ.էն Սեբաստիոյ կուսակալութիւնը։ Նորագոյն վիճակագրութիւն մը չունենալով, առանձին տախտակի մը մէջ կը դնեմք 1880ին կատարուած մարդահամար մը։ Բազմաթիւ գիւղեր, որոց այժմեան անուանակոչութիւնք իսկ կը յայտնեն թէ ժամանակաւ Հայոց եղած են, այժմ Թրքաբնակ են, թշնամեաց

սուրն և հուր և բազմազիմի խժդժութիւնք ստիպեր են նոցա Հայ բնակչաց կրօնափոխ և միանգամայն լեզուափոխ լինելու։ Վիճակիս մէջ կան նաև քանի մը գիւղեր, որոց բնակիչք Հայհռոմք կը կոչուին։ Ասոնք լեզուաւ և սովորութեամբք Հայ են, թէպէտ և ազգին անգին ճանապարհորդաց մարդիկ գիտեն նաև յունարէն։ Կարևոր կը համարիմ տունք երեկիք եկեալք ի գաւառէն Ակնայ։ Ազգ սոցա յայտնի իմն երևի սերեալ յազգէս Հայոց, և կրօնիւ դարձեալ ապա առ Յոյնս, և ոչ սերեալ ի Յունաց, և զլեզուն փոխեալ ի Հայկականն. այսպէս դնէ և Մխիթար Ապարանցին ի գիրս իւր յամի տեառն 1410, զոր ունիմք առ մեզ և կոչէ զնոսա ծաթ Հայեր։ "Եւ ոմանք կոչեն ծաթ Հայեր,

ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱԿՆԱՅ ՎԻՃԱԿԻ

| ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | | ՕՏԱՐՔ | ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | | ՕՏԱՐՔ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Լուս. | Բողոք. | | | Լուս. | Բողոք. | |
| Ակն քաղաք | 5442 | — | 4286 | ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ | 8060 | 526 | 10588 |
| Ապուշեխ | 1066 | — | 958 | Փեաղան | — | — | 210 |
| Կամարկապ | 1153 | — | 242 | Ուռեկ | — | — | 342 |
| Կարուչլա | 204 | — | 154 | Աւերակ | — | — | 78 |
| Բակեր | — | — | 636 | Եաղուպլու | — | — | 214 |
| Արկու | — | — | 494 | Բաղըշաշ | — | — | 186 |
| Հարենգնոց | — | — | 752 | Պախճա | — | — | 42 |
| Ազրակ Հարենգնոցի | — | — | 638 | Չէօփլէր | — | — | 104 |
| Քինափր | — | — | 118 | Թաւուզ | — | — | 170 |
| Ապարանք և Զալթը | — | — | 350 | Խասա | — | — | 250 |
| Նարվեր | 191 | — | 76 | Հըզատար | — | — | 352 |
| Տիլլու | — | — | 20 | Բոշպէկ | — | — | 106 |
| Աղըլ | — | — | 58 | Սանախոսի | — | — | 48 |
| Պըրգմըշէն | — | — | 152 | Կաղերան | — | — | 112 |
| Կաշոյ | — | — | 346 | Գամըշկան | — | — | 118 |
| Վանք | — | 180 | 54 | Բաշադի | — | — | 110 |
| Զորակ | 16 | 134 | 66 | Ոսպատ | — | — | 102 |
| Ճրգու | — | 158 | 116 | Արասօր | — | — | 152 |
| Ազարակ Ճրգուի | — | — | 100 | Աթմա | — | — | 142 |
| Միջին գեղ | — | — | 126 | Լիճք | 307 | — | 256 |
| Ազորիկ | — | — | 122 | Սերկեւիլ | — | — | 464 |
| Սալահլու | — | — | 158 | Սանարգ | — | — | 114 |
| Վան գեղ | — | — | 96 | Սարը Չիչէկ | — | — | — |
| Մուշեղկան | 8 | 54 | 152 | Բինկայ | 874 | — | 60 |
| Կէճէկի | — | — | 448 | | | | |
| ԳՈՒՄԱՐՆ | 8060 | 526 | 10588 | ԲՈՎԱՆԴԱԿ ԳՈՒՄԱՐՆ | 9441 | 526 | 14280 |

տատ ի մէջ բերել Հ. Ինճիճեանի Հայհոռոմոց վրայ գրածն. «Յառաջագոյն անխտիր անուին և տային Հայոց զդստերս ի կնութիւն, այլ այժմ յաւուրս սուլթան Համիտի նոր քարոզիչք Յունաց առաքեալք առ նոսա ընդ նզովիւք պատուիրեցին չառնուլ և չտալ զդստերս իւրեանց ի կնութիւն Հայոց։ Գտանին ի Հայհռոմոց ի Կ. Պօլիս քաղաքի որ լեզուով գրով և ազգաւ են Հայք. բայց դաւանութեամբ և ամենայն օրինօք են Յոյնք, և ամենայն կերպիւ հնազանդ նոցա,,։ Վասն այնորիկ կոչէ զնոսա ծայթս, զի յայնմ ժամանակի դնէ զնոսա միաբանս ընդ ծայթ Յունաց ոմանց՝ որք զհետ երթային աղանդոյ Անդրէասայ ուրումն եպիսկոպոսի Կեսարու։ Հաստատեն զայս նախ առաջին

պատմագիրք մեր յառաջ քան զՄխիթար Այպարանցին, որք գրեն թէ ի մէջն անդ ԺԱ դարուն ի ժամանակս Կոստանդին կայսեր Տուկիծ կամ Տուքաս կոչեցելոյ, նոյնպէս յետ անդ ԺԲ դարու ի ժամանակս Բ Մաշակայ կայսեր, սաստիկ իմն բռնադատութիւն եղև Հայոց բնակելոց ի կողմանս Սեբաստիոյ կամ Սեւաստոյ առ ի դարձուցանել զՀայս ոչ միայն հաւատով, այլ և ծխիւ ի կրօնս Յունաց»։

Վիճակիս մէջ վաճառականութիւնն այնչափ զարգացած չէ. ցորեն, ոչխար, պանիր, իւղ և այլն, շրջակայ գաւառներէն կը բերեն. իսկ զգեստեղէններ, շաքար, սուրճ, օճառ, թղթեղէնք, գրենք, երկաթ և այլ մետաղեղէնք մեծաւ մասամբ Կ. Պոլսէն և Հալէպէն։ 1871էն սկսեալ մուտ գործած է այս կողմերը Հայոց մէջ նաև բողոքականութիւնն, որոց թիւն տակաւին 100ը անցած չէ։ Վերջին տխուր դիպաց ժամանակ Ակնայ Հայոց գիւղերն ալ զերծ չմնացին, 1000էն աւելի աներ կողոպտուեցան և շատերն ալ այրուեցան։ — Ս. Երեւումն կամ Ս. Փրկիչ Վանք. Ակնէն 6 ժամ հեռու դէպ ի հիւսիս Զեօփլէր Թրքաց գիւղի վերևը բարձրաւանդակի մը վրայ կառուցուած է մենաստանս, որոյ աջ կողմը կը գտնուի Գոհանեան լեռը. ունի առողջարար օդ և պատուական ջուր։ Աւանդութիւնը կ'ըսէ, թէ սուրբ Եւստաթէոսի կամ Ապլակիտասի զօրավարին յիշատակին շինուած է վանքս Բ դարու մէջ, ուր Ս. Խաչն երևցեր է սրբոյն եղջերուի մը գլխուն վրայ։ Աստ այժմ կայ եկեղեցի մը, քանի մը սենեակներ, փուռ, ախոռ և այլն։ Քիչ մը վերև կը գտնուի Երևման մատուռն, որոյ շէնքն եկեղեցիէն աւելի հին է։ Ակնայ առաջնորդն է միանգամայն վանացս վանահայր, բայց բաց ի մի քանի մշակներէ և սպասաւորներէ ուրիշ վանական կամ միաբան չի գտնուիր։ Վանքս ունի երկու ձեռագիր աւետարան, և եկեղեցական զգեստներ և անօթներ, որոց մեծագոյն մասը ապահովութեան համար փոխադրուած են քաղաքը։ — Արակայի կամ Գրիգոր Նարեկացւոյ Վանք. Տես ԱՐԱԿԱ։ Վիճակիս միւս ուխտատեղիներն են Ս. Կոզմոս և Դամիանոս Կարուշլայի մէջ. Անմահուրիչն, գետեզերքը Մեծ ձորի մօտ. Ս. Յակոբ, Թաշ-տիպիի վերևն լերան ստորոտը մեծ վէմ մի է. Ս. Թադէոս, Ակնայ գերեզմանատան մէջ, ուր երբեմն ժամերգութիւն ալ կը կատարուի. Ս. Լուսաւորիչ, Արեգի թաղի վերևը, պարսպապատ, խորան մ'ունի, գիւտ նշխարաց տօնին պատարագ կը մատուցուի. Ս. Սարգիս, Վանք գիւղի Հայհոռոմոց եկեղեցւոյն կից մատուռ մ'է. Լուսաղբիւր, քաղաքին դիմաց Ցնծալենց պարտէզներուն վերը։ Բաց ի այս ուխտատեղիներէն, ուխտի կ'երթան նաև Երուսաղէմ, աշնան ճամբայ կ'ելնեն, ձմեռն հոն կ'անցընեն և Զատկէն վերջ կը վերադառնան։ Ոմանք ալ՝ մանաւորապար արք, կ'երթան Մշոյ սուրբ Կարապետին։ — Նոր Հայ. 301–309։ Վ. Քինէ, Բ 362–366։

— Հին գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի մէջ։

ԱԿՆԴԱՇՏԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Վ. — Վանք Վասպուրականի Բզնունիք (Համուկ) գաւառի մէջ, Վանայ արեւմտեան հարաւային կողմը. կը կոչուի նաև Խուռուսամնդոսի վանք, որուն համար կ'ըսուի, թէ այս վանքի մէջ բնակած ըլլայ։ Մօտը կը բղխէ յորդահոս աղբիւր մը, որոյ ջուրը շատ ջրաղացներ դարձնելէ վերջ, կ'երթայ կը խառնուի Տիգրիսի հետ։ Ն. Հայ. 145։

ԱԿՆԵՐ. — Գիւղ Մանազկերտ գաւառի, Արածանւոյ ձախ կողմը. բնակիչք 30 տուն Հայ և Քուրդ խառն։

— ՎԱՆՔ. Տես ԱԿԱՆՑ ԱՆԱՊԱՏ։

ԱԿՈՇ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, զոր՝ ըստ արձանագրին, ՉԸ (=1259) թուին Սահիմանոս ումն արհիեպիսկոպոս, նուիրած է Ս. Սիոն անապատի։

ԱԿՈՌԻ կամ ԱՐԿՈՒՌԻ. Գղ. AGORHI կամ ARKOURI. — Հին և գեղեցկադիր մեծ աւանագիւղ մ'էր Այրարատայ Մասեացոտն գաւառի մէջ, Մեծ Մասիսի հիւսիսային կողմի ահաւոր Վըհի եզերքը, գրեթէ 5000 ոտք բարձրութեան վրայ։ Գիւղիս անուան հետ կապուած են մեր պատմութեան վերաբերեալ շատ յիշատակներ, աւանդութիւններ և նոյն իսկ առասպելներ։ Ըստ տեղական աւանդութեան Նոյ նահապետը տապանէն ելնելէ վերջ այստեղ տնկած է որթոյ ուռ և այսպէս կոչուեր է Արկ-ուռի անունն, սակայն մեր բոլոր հնագոյն մատենագիրք միշտ

կը գրեն Ակոռի։ Այս աւանդութեան համեմատ աւանս լինելու էր, յետ ջրհեղեղի, աշխարհիս ամենահին գիւղը։ Ակոռի չէն էր մինչև 1840ին մեծ շարժը. բնակիչք՝ որոց թիւը 1500ը կ'անցնէր, կը զբաղէին այգեգործութեամբ, և ընտիր ու գովուած էր միշտ իրենց գինին. ունէին նաև ցորենոյ և գարւոյ արտեր, խնձորի, տանձի, գամոնի, կեռասի, ծիրանի, դեղձի, ընկուզի և այլ զանազան տեսակ պտղատու ծառերով զարդարուած պարտէզներ։ Այդ պարտէզները կ'ոռոգէին բազմաթիւ առուակներով, և



42․ Արտաւազդ կը գահավիժի Ակոռւոյ վիհը։

ժամանակ կ'ըլլար որ գրեթէ կը սպառէր Գինոյ գետոյն ջուրը։

Մեր պատմիչներէն առաջին անգամ կը յիշէ գիւղս Ղազար Փարպեցին Երդ դարու վերջերը, երբ Հայոց զօրագունդը, քաջին Վահանայ եղբօր՝ երանելոյն Վասակայ առաջնորդութեամբ խոյս տալով Պարսից մարզպանէն. «Եւ եկեալ չուեալք բանակեցան ի գեօղն Մասեաց, որում անուն էր Ակոռի»։ Այստեղ փառաւոր յաղթութիւն մ'ըրին Հայք ընդդէմ մոխրապաշտ ազգին Պարսից զոր նկարագրէ Ղազար, և Սիմէոն Ապարանեցի իր Վիպասանութեան մէջ հետեւեալ կերպով կը համառօտէ.

«Նախ յԱրկուռի պատերազմեալ՝ զՊարսիկս որոց հա-
(րակ տային.
Երեք հարիւր զօրականք՝ զեօթն հազարս կոտորեցին.
Որպէս երբեմն Գեդէոն զբիւրս բիւրոց այլասեռին»։

Այս յաղթութիւնը քանի մը խաբեբաներ ուզելով սուտ հանել, գուժկան գացին ի Դուին և ըսին թէ, «. . . ամենայն զօրքն Հայոց ի լանջակողմանս Արկոռոյ տապաստ անկեալ դիակնացան»։ Ութերորդ դարու սկիզբն ալ (702ին), Հայք զգուշելով Արաբացիներէն՝ ապստամբեցան, և երկու հազար անձէ բաղկացած խմբով մը, Վասպուրականի կողմերէն եկան հասան «ի մեծ աւանն Ակոռի». որոց վրայ Նախճաւանէն գալով յարձակեցան մօտ 8000 Արաբացիներ, բայց Հայք փութով Ակոռիէն իջնելով, Երասխէն անցան և Վարդանակերտ աւանի

*մէջ գիծնամին կատարեցին։ Դարձեալ գրեթէ 240 տարի վերջը, երբ Արաբացի բռնաւորը նեղը ձգեց մեր Աշոտ Բագրատունի թագաւորը, Գագիկ Արծրունին իր զօրքերով եկաւ բանակեցաւ այս կողմերը «առ լերամբ Գինեայ կոչեցեալ բլեր». ուր մեծ յաղթութիւն մ'ըրին Հայք և թշնամեաց կողմէն գրեթէ 8000 հոգի ինկան և մնացածներէն շատերն ալ գերի տարուեցան։*

*Ակոռին ունի նաև խաղաղական և սրբազան յիշատակներ, յորոց մին է Յայսմաւուրաց պատմած, մեր Ս. Թարգմանչաց աշակերտ, Խաչատուր անուն վարդապետի մը տեսիլքը, որ աստուածային Յայտնութեան տօնին հանդիպեցաւ «... ի գեօղն Ակոռի, որ առաջարանի Արկ-ուռի, յՈտն Աւաղ Մասեաց. վասն զի յելանելն Նոյի ի տապանէն և յիջանելն ի լեռնէն, անդ անկեալ այգի, և անուանեաց զտեղին Արկ-ուռի»։ Տեսլեան մէջ երեցողն էր նոյն գիւղէն նոր վախճանող մէկը, որ կ'ըսէր. «Ես տանուտէր էի գեղջիս Ակոռւոյ, և է անուն իմ Ղազար. ունիմ և որդի մի Դաւիթ անուն. որոյ՝ ի մեռանելն իմում թողեալ եմ նմա չէն տուն, լի ամենայն բարեօք, և արծաթ վեց հազար դահեկան. և նա բնաւ ոչ յիշեաց զիս ողորմութեամբ ի տուրս աղքատաց և քահանայից. վասն այնորիկ կամ տխուր և տրտում»։ Այս տեսիլքը պատմելով Խաչատուր, Ղազարայ որդին Դաւիթ, իր անհոգութեան մեղքը կը խոստովանի, և շատ ողջակէզներ ընելով զհայրը կը գոհացնէ։*

*Չմոռնանք յիշելու սա նաև այն առասպելական աւանդութիւնը, որ կը համարի թէ Արտաշիսեան գոռոզ Արտաւազդը, որսորդութեան համար Գինոյ գետոյն մօտերը գացած ժամանակ, յանկարծ բարձրէն կը գահավիժի (թ. 42), մեզ ծանօթ Ակոռւոյ ահաւոր Վիհի յատակը, և կը կատարուի իր հօր անէծքը. «Անդ կացցես և զլոյս մի տեսցես»։ Այս դէպքէն մեր նախնի ռամիկ ժողովրդոց մէջ տարածուած էր այն հանրածանօթ աւանդութիւնը, թէ Արտաւազդ արգիլուած է հոն այրի մը մէջ, կապուած երկաթի շղթաներով, որ դեռ դուրս պիտի գայ աշխարհս տակն ու վրայ ընելու, եթէ Հայոց դարբինները, չծեծեն անդադար իրենց երկաթի սալերը. այս աւանդութիւնն տակաւին ուրեք ուրեք մնացած է ժողովրդեան մէջ, և դարբինները կիրակի և տօնի օրեր անգամ, նախապաշարմունքով լեցուած, անհրաժեշտ հարկ կը համարին, քանի մը անգամ ծեծելու իրենց սալերը։*

*Տիպուա բաց ի Ս. Յակոբայ վանքի եկեղեցիէն, յատուկ եկեղեցի մ'ալ կը յիշէ Ակոռւոյ, զոր կ'անուանէ նաև Առաքելոց վանք։ Ակոռեցի Անաստաս կաթողիկոսը որ Ներսէս Գ' սենեկապետն էր, և նոյն հայրապետի հալածանաց պատճառաւ ի Տայս գտնուած ժամանակ վերակացու էր Դունայ հրաշակերտ եկեղեցւոյ շինութեան, այն ինչ բարձրացաւ ի գահն հայրապետական, 660-7 տարիներու մէջ, ինչպէս կը պատմէ Ասողիկ, «... զեկեղեցին Ակոռւոյ վայելուչ շինեաց»։ Ոչ թէ միայն եկեղեցի, այլ նաև կղերականաց բնակարան, միաբանից մենաստան և աղքատաց ալ հիւրանոց շինեց նոյն տեղը, որոց վրայ ճոխ կերպով տեղեկութիւն կու տայ Յովհան կաթողիկոսը. «Շինէ զպայծառապաճոյճ եկեղեցին ի հայրենի բնակութեանն իւրում, ի վանս գաւառակերտին Ակոռւոյ, կացուցեալ զնա յարդարեալ քահանայական ուխտի միաբանից և այլոց ևս կղերց եկեղեցւոյ, ի պաշտօն աստուածային խորանին, և ի տածողութիւն հանգստեան հիւրոց և անանկաց և աղքատաց»։ Նոյնը համառօտիւ կը յիշէ Վարդան ըսելով. «Շինէ զեկեղեցին Ակոռւոյ, եղբայրանոց յօրինեալ և հիւրանոց»։ Այս երկու պատմչաց խօսքերը, մինչև ցարդ եղան շատեր, որ յատկացուցին Ս. Յակոբայ վանքին, մինչդեռ այն վանքին կառուցումը Ակոռւոյ Առաքելոց վանքէն վերջն է և Ս. Յակոբայ եկեղեցին իր փոքրութեամբն աւելի մատրան մը կը նմանէր և չէր կարելի զայն պայծառապաճոյճ եկեղեցի անուանել։ Եւրոպացի ճանապարհորդք ժէ դարու մէջ Ս. Անդրէաս և Մատթէոս առաքելոց անուամբ ևս կը կոչեն Ակոռւոյ եկեղեցին։ Տիպուա Հելուեացին հրատարակելով եկեղեցւոյս սիւներէն միայն վերնախարիսխը (թ. 43), որուն վրայ կանգնեաց կամ կանգնեցաւ բառի տառերը կը նշմարուին, և յատակագիծը (թ. 44), կը դնէ*

նաև մեծութեան չափերը և կը համարի թէ Էրդ դարու մէջ շինուած ըլլայ, որ ճիշդ կը համապատասխանէ Անաստաս կաթողիկոսի կառուցածին։ Եկեղեցւոյս ներսը լուսաւորուած էր կաթուղիկէով մը՝ որոյ ներքին տրամագիծն հաւասար էր 15 ոտքի։ Երկայնութիւնն էր 54 ոտք և լայնութիւնը 30. ամբողջութիւնը շինուած էր սեւագոյն խանձաքարէ։ Սիւներէն միոյն վրայ արձանագրուած էր, Աշոտ Գի որդի Գագիկ Ա. Թագաւորի հրովարտակի մը



43. Ակոռւոյ եկեղեցւոյն սիւներէն մին։

պատճէնը, որով Ակոռին ազատ կ՚ըլլէր ի հարկաց։ Եկեղեցւոյս կառուցուելէն վերջը, դարաւոր ժամանակաց մէջ, չորս կողմի հողն այնչափ բարձրացեր էր, որ Տիպուայի այցելած ատեն, կողմնակի դռները կիսով չափ թաղուած էին հողի մէջ։ Նոյնպէս ծածկուած էին երկրի մէջ բազմաթիւ գերեզմանաքարեր, յորոց մին ունէր հայկական ՆԴ (= 955) թուականաւ արձանագրութիւն մը Սահակ անունով անձի մը, որ աղօթք կը խնդրէ իր հոգւոյն փրկութեան համար։

Ակոռեցիք համարելով որ Նոյ առաջին անգամ ողջակէզ մատուցած ըլլայ եկեղեցւոյս տեղւոյն վրայ, յատուկ ջերմեռանդութեամբ կը պատուէին զայն, մանաւանդ որ հոն դրած էին Ս. Մատթէոս Աւետարանչի գագաթն և Անդրէասայ նշխարները։ 1647ին աստ գրուած աւետարանի մը գրիչը կը յայտնէ, թէ Ակոռին թեմ էր Խորվիրապի, բայց չի գիտցուիր քաղաքական խռովութեանց թէ երկրին սասանութեան համար ժամանակը անբարի կը կոչէ ըսելով, թէ «յամէն օր երերման կու կենանք»։ Ըստ յիշելոյն Զաքարիա սարկաւագի (Բ. 165), Երեւանայ սասանութեան ժամանակ աւանիս մէջ՝ իբրև նշանաւոր տեղ, կը նստէր այլազգի կողմնակալ մը, Սուշրաճ տիտղոսով։



44. Ակոռւոյ եկեղեցւոյն յատակագիծը։

Ակոռին վերջին շարժէն կործանուելէն առաջ, ունէր ըստ ոմանց 300 և ըստ այլոց 200 Հայոց տներ, բոլորը քարաշէն, և անձանց թիւն էր գրեթէ 1600, վարձկան Քրդերէն զատ։ 1840 տարին մեր ազգային պատմագրութեան մէջ տխուր պատկեր մը կը ներկայացնէ նկատմամբ Ակոռւոյ և շրջակայից։ Նոյն տարւոյ յուլիս 2ին, ըստ նոր տոմարի, Մասեաց Վրէժի խառնարանին յանկարծական բորբոքումն և վերափչումը, տխրահռչակ աւանագիւղս իր բնակիչներովը, ծածկեց, վերցուց, թաղեց, աներեւոյթ ըրաւ ժայռերու և լաւաներու կոյտերու տակ։ Այս

տխուր դէպքը Ակոռւոյ մերձաւորնակ ականատես մէկը, հետեւեալ կերպով կը նկարագրէ. «Եղև անկարծ պատառումն, որ է ճուզ Մասեաց լեռնէն եղեալ՝ կրակախառն եւ քամի զարմանատեսիլ. որպէս ծծումբ այրէր, և բարձրանայր ի վեր Մասիս՝ բոլոր նոյն վանքովն (Ս. Յակովբայ), և ի նմին եղեալ միաբանք, վարդապետք և Պետրոս յաջորդն վանից. այս ամենայն բովանդակ բարձրացաւ ընդ քամուն, և անկեալ ի վերայ գեղին՝ երկու բաժին եղև. եւ կրկին այն սև քամին առեալ Մասիսու սառնամանիք պուզն և ձիւնն խառն կրակով, անկեալ ի վերայ գիւղին կորուս զամենեսեան. Թիւն աւելի քան 1500 անձինք բնակիչք գիւղին այնր, արք և կանայք կամ ծերք և տղայք. բաց ի սոցանէ 600 տաճիկ Քուրթ անձինք՝ իւրեանց չատրովն, եւ ոչխարքն 2000էն աւելի, որ այս նմանապէս կորեան. միայն եօթն անձինք ի բնակչէն Ակուռոյ գերծան, այն որ յայգիսն էին և կամ յայլ տեղի. այլ եւ յայտնի երկու անձինք նոյն կրակէն գերծան. զի տեսանելն (դէմք) նոցա իբր պարուլթով այրած. որ հրամանաւն Աստուծոյ ողջացան գեղով, որք են Մկրտիչ և Թադէոս անուանքն։ Դարձեալ եւ նոյն կրակախառն քամին եկեալ՝ գեղի պարտիզացն վառեալ եղեալ ծառքն՝ բոլորովին հանեալ յերեսս երկրի ծառոց արմատքն. զի այնպէս աւերեալ (էր) որ այժմ տեսողքն կարծեն՝ թէ բնաւ տեղիքս այս ոչ է եղեալ շինութիւն։ Եւ յետ նորա 14ին (26 ն. տ.) օրն յուլիսի կրկին եղև գետնաշարժ մեծ. կիրակի գիշեր ի հաւախօսի ժամուն՝ շարժեալ երկիր, բազում աւերութիւն եղև Բեւանայ գաւառն՝ Սուրմէլի գիւղին. և այն օրն մինչ ի 12 անգամ շարժ եղև։ Յետ նորա զենին բազում մատաղ՝ որ տէր Աստուած այց առնէ»։ Ահաւոր երկրաշարժէս ազատող Քուրդ մը, 1858ին կը պատմէր Ժիլ անուն Ռուս բանաստեղծին թէ գիշերը հեռուն լերան վրայէն լսելով ահեղ գղրդումը, երկրորդ օրը փութացեր է յԱկոռի տեսնել իր տունը, և գտեր է միայն քարերու դիզուածներ, որոց տակ թաղուած էին իր որդիքը և բոլոր ունեցածը։ Ասոր նման 114 հոգի եւ գեղէն դուրս գտնուելով, գերծ մնացին հասարակաց հարուածէն, և գալով զտան իրենց գիւղը իբրև տխուր և ամայի գերեզման մը, և ամենևին շէնքի մը կամ կենդանութեան նշան չգտան։

Այս դէպքէն գրեթէ երեք տարի վերջ, Վագնէր երկրաբանը, կողմանցս քննութեան գալով, հետեւեալը կը գրէր. «Ակոռի գեղին ալ և ոչ ամենափոքր նշմարանքը կը մնար, եթէ յափշտակասէր քիւրտերը դժբախտութիւնը լսելուն պէս՝ բան գողնալու համար, քանի մը տեղեր շատ մը եկած ճամբայ բացած չըլլային։ Զանազան տեղեր՝ ուր քարերն ու հողերը շատ ծանր չըլլալով՝ շէնքերը բոլորովին փլուցած չեն, ծակեր ու խոռոչներ կը տեսնուէին, յորոց դուրս ցցուած են ասդին անդին տուներու յարկի գերանները։ Մենք դուրս գիշերները բացօթեայ եղած տեղնիս՝ այս գերանները կը վառէինք։ Իրիկուն մը տեսայ որ ինծի հետ մէկտեղ եկող Հայերուն մէկը վերջին աստիճանի տխուր դէմքով գերան մը կրակը կը դնէր. Ասիկա իմ տանս մէկ գերանն է, ըսաւ դժբախտ մարդը ու աչքերն արցունքով լեցուեցան։ Իւր տանէն 23 հոգի կորսուեր էր, կին, զաւակներ ու թոռունք. ինքը ունեւոր ու երջանիկ է եղեր, բայց այժմ իր ծերութեան ատեն, միայնակ մնացած էր ու ամենադառն աղքատութեան մէջ կը տառապէր»։ Այսպէս ահա Հայաստանեայց հնագոյն և անուանի աւաններէն մին Նափոլիի, Փոմփէի և Հերքուլան քաղաքաց պէս թաղուեցաւ կորսուեցաւ քարերու, հողերու և լաւաներու տակ, և չգիտենք եւ, թէ պիտի գա՞յ արդեօք օր մը և կամ հնարաւոր պիտի լինի՞, որ դէթ վերոյիշեալ քաղաքաց նման, պեղումներով դուրս բերուին անյայտացած և թաղուած հնութիւններն և յիշատակարաններ։

Ս. Յակովբայ Վանքը եւ Աղբիւրը. — Նոյեան տապանի Մասիսի կատարը հանգչելուն ստուգութեան մեծագոյն փաստ մ՚ալ կը համարուի, Ս. Յակովբայ Մծբնայ հայրապետի, նոյն տապանի փայտերուն ի խնդիր ելնելն։ Մասիսը բաւական հին ժամանակներէ սկսեալ, իր ստորին կողին վրայ ունեցեր էր մինչև 1840 թուականը, վերոյիշեալ հայրապետի անուամբ հռչակաւոր աղբիւր մը և վանք։ Առաջին անգամ հին

Հարանց վարուց մէջ կը պատմուի, թէ ինչպէս սրբակրօն ծեր մը կը բնակէր Մասիս լերան ստորոտը, Ս. Յակոբայ աղբիւր կոչուած տեղը, որուն գալով մեղաւոր իշխան մը, յետ խոստովանութեան և ապաշխարութեան իր մեղքերուն քաւելու, կը փափաքի բնակիլ ծերուն մօտ և սրբութեամբ իր օրերն անցընել, սակայն ծերն խորհուրդ կու տայ միաբանակեցաց վանքերէն մին երթալ, «... ի Սուկաւ կամ ի Սուրբ Ոսկի կամ յԵրաշխաւորն կամ ի Մաքենոցն»։ Աստի կ'երևի թէ, Ըդ դարուն մէջ, յորում ծաղկեցաւ Մաքենոցաց վանքը, այստեղ տակաւին կառուցուած չէր Ս. Յակոբայ վանքը։ Գաղղիացի ուղևորն Պուլէյ Լըկուզ 1647ին Պարսկաստան գացած ժամանակ Երևանէն անցնելով և Մասիս լեռը նկարագրելով, մեզ կը ներկայացնէ նաև անոր պատկերը (Թ. 45), որուն ստորոտը նկարած է զՍուրբն Յակոբ զաւազան ի ձեռին ծնրադիր, զոր անգիտութեամբ կը համարի Հայոց վարդապետներէն մին։ Աւանդութիւնը կը համարի, թէ Ս. Յակոբայ վանքը շինուած էր ճիշդ այն տեղ, ուր նա յոգնած ննջեց, և հրաշիւք հրեշտակի ձեռքէն ընդունեցաւ տապանի փայտը։ Փոքրիկ մենաստանիս գիրքը Ակոռիէն աւելի վեր էր, գրեթէ 5992 ոտք բարձրութեան վրայ, Աւագ Մասիսի հիւսիսային արևելեան ստորոտը Գինայ գետակին աջ կողմը, և շրջապատուած էր սակաւաթառ պարտէզով մը, ինչպէս կը տեսնուի Փարրոթի հրատարակած պատկերի մէջ (Թ. 46)։ Մենաստանի կեդրոնն էր փոքրագոյն խաչաձև և գմբեթաւոր եկեղեցին, որոյ չորս կողմը կային քանի մը բնակարաններ և խրճիթներ միաբանից։ Եկեղեցեակը կառուցուած էր լերան սեաւ խանձաքարերէն, որմոց մէջ կային խաչանշան քանդակներ, և պատուհանաց մօտ ոչ սակաւ արձանագրութիւնք, յորոց հնար էր որոշել շինութեան ժամանակը, եթէ ազգային ուղեոր մը ժամանակին ընդօրինակած լինէր։ Դարձեալ շնորհակալ լինինք Տիպուայի, որ այդ արձանագրութեանց ոմանց գէթ գաղղիական թարգմանութիւնն մեզ հասուց, որք գրուած են ԺԳ դարու մէջ և ԺԴի սկիզբը։ Ձի (= 1271) թուին Մխիթար ոմն և իր կինն Թամար կը նուիրեն վանացս իրենց բոլոր ստացուածքները, և միաբանները կը խոստանան չորս պատարագ Տեառնընդառաջի տօնին։ Սմբատ անունով մէկն ալ ՉԻԳ (= 1274) թուին կու տայ Զոլա (Zola) և Զիպի (Zibi) երկիրներուն վեցերորդ մասն, և ի փոխարէն կը մատուցուի տարին չորս պատարագ, երկուքը իրեն և երկուքը ամուսնոյն համար։ Հնագոյն արձանագրութիւն մ'ալ կը ծանուցանէ, թէ Ղփչախ անունով մէկուն որդին, որ ծառայ է եղեր Սարգսի ուրումն, գալով ի վանս ընդուներ է քրիստոնական սուրբ կրօնքը։ Բազմաթիւ յիշատակաց խաչքարերով ծեփուած են եղեր եկեղեցւոյ արտաքին որմերը, յորոց մին ՉԾԲ (= 1303) թուականաւ ի յիշատակ Հասանայ. ուրիշ մը ի յիշատակ Յովհաննու, և այլն։

Վանքիս մէջ կը պահուէր Նոյեան տապանի փայտի կտորն և Ս. Յակոբայ մէկ




45. Մասեաց լեռները, ըստ Պուլէյ Լըկուզի։

1. Հանգիստ տապանին. — 2. Ձիւն. — 3. Մառախուղ. — 4. Արարատեան լեռները. — 5. Ս. Յակոբ Մծբնայ. — 6. Որբայն հետ խօսող ձայն. — 7. Որթ Մասեաց։

մասն, որոնք շղթայով մը միացած, այժմ կը պահուին յԷջմիածին։ Վանահայրերէն մեզ ծանօթ են երկու վերջինները, մին ծերունի Կարապետ վարդապետը, զոր 1829ին Փարրոթ գերմանացին մեր Գ. Խաչատուր Աբովեանի հետ առաջին անգամ Մասիսի կատարը բարձրացած ատեն տեսած էր, և հետևեալ նկարագիրը թողած. «Աշխատասէր և զուարթ ծերունի մ'էր սա, որ գերեզմանը առաջուց փորել և օրհնել տուած էր, թէպէտ ժամանակին Պարսիկներէն շատ տառապանք կը կրէր, բայց միշտ Նոյի լերան պահապան կը կենար»։ Երկրորդն՝ Պետրոս վարդապետը, որ իր միաբաններովը Մա-



46. Ս. Յակոբայ վանքը։

սիսի մարգարէական մասերուն ամենէն բարձր տեղը բարեպաշտութեամբ կ'ապրէր, դժբախտ դէպքին զոհ գնաց։ Պօղոս Մանուկով անուամբ մէկը հետևեալ կերպով կը նկարագրէ ահաւոր շարժը. «Եղև ահագին շարժումն ահագին գղրդմամբ. և կայր ի վերայ գիւղին (Ակոռւոյ) վանք մի գեղեցիկ յանուն Սրբոյն Յակոբայ. և իւր հրաշալի Աղբիւրն, որ յերկրէ յերկիր տանէին զՋուրն, որ բազում հրաշս առնէր. և վանքն յետ աղբիւրին բարձրացաւ մինչ ի լեառն Մասիս և անկաւ ի վերայ գիւղին...»։

Հրաշագործ աղբիւրը՝ որ անճառականն ես կոչուած է յոմանց, կը գտնուէր վանքէն քիչ մը վեր դէպ ի արևելք, ահաւոր վհին եզերքը։ Ըստ աւանդութեան բղխած է Սրբոյն աղօթքով կամ արտասուօքը, որ յետոյ մատրան ձևով պարսպապատուելով, մեծ ուխտատեղի դարձաւ. Ջուրը ամաններով կը տանէին հեռաւոր տեղեր և կը սրսկէին այն դաշտերու վրայ ուր մարախները կը փռուէին, և մէկէն կ'իջնային հոն խմբովին մարախակեր թռչուններ, որոնք ասկէն կը կոչուին Ս. Յակոբայ Դուշ (թռչուն)։ Վենետաց տարեգրաց մէջ կը պատմուի, թէ 1473ին Կիպրոսի Յակոբ թագաւորը, երկու Հայեր ղրկեր է ի Մասիս այն այս հրաշագործ մարախահալած ջրէն իր երկիրը բերելու համար։ Երկրաշարժէն վերջ աղբիւրս փոխեց իր ընթացքն, և լեռնէն զուրս նետուած քարերու ու հողերու մէջէն սկսաւ բղխել։

— Այրարատ, 470–474։ Ղազար, 376։ Ն. Հայ. 260։ Պտկ. Ն. Հայ. 69–71։ Ղևոնդ, 24։ Թ. Արծրունի, 338։ Յ. Կաթողիկոս, 116։ Վարդան, 70։ Վարք Հարանց, 485–7։ Հնախօս. Հայ. Ա. 71, 274. Գ. 14, 15։ Ստ. Հին Հայ. 445։ Հիւսուսածք, Գ. 151։ Բիւզանդիոն, 1897, թ. 344։ Տիւպուա, Գ. 465–78։ Փարրոթ, Բ. 126, և այլն։ Վակներ, 78–96։

— Գիւղ Գուգարաց Տաշիր գաւառի Լօռի վիճակին մէջ, 45 տուն բնակչօք։

մ՚է, որ այժմ կը կոչուի Ախուրի գիւղի անուամբ, որոյ բնակիչք են Թաթարք 51 տուն։ Տես ԱԽՈՒՐԱ և ՆՈՐ ԱԿՈՌԻ։

ԱԿՈԽՈՒ. — Գիւղ Տփղիսու նահանգի Թելաւ գաւառի մէջ. բնակիչք 1512, մեծագոյն մասը Վրացի, կան նաև սակաւաթիւ Հայեր։

ԱԿՈՒԱՎԱՐ. — Անուն Տաթեւու վանաց արտավարներէն մին, Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ։

ԱԿՈՒՓԻ. — Վանայ բերդէն դէպ յարեւելս նայելով այգեստանեայց հիւսիսակողմը փոքրիկ լեռնագօտի մը կայ, որոյ արեւելեան գլուխը կ՚ըսուի Զըմզըմի մաղարայ, արեւմտեան ծայրը Ակուփի, և մէջտեղը Մըհերի դուռն։ Զըմզըմի մաղարան ընդարձակ քարայր մ՚է, որուն մէջ մարդիկ կ՚երթային շրջելու, և ուր ձայնը զըմփ զըմփ արձագանք կուտար։ Կառավարութեան հրամանով արգիլուած է թէ՛ այս և թէ Վանայ ուրիշ հնադարեան քարայրներու մուտքը, որովհետեւ հետաքրքրութեամբ և կամ հարստանալու դիտմամբ շատեր ներս մտնելով այլ եւս չեն վերադարձած։ Ժամանակաւ այս այրի ներսը գացող անձի մը պատմութենէն կը տեղեկանանք, որ խորը գետնի զանազան կողմերը տանող ճանապարհներ կան եղեր և տեղ տեղ քարափոր և քանդակազարդ սենեակներ, որոնք լինելու են անշուշտ, Խորենացւոյ պատմած Շամիրամաշէն ստորերկրեայ ապարանքները։ Անգլիացի հնագէտն Պ. Սմիթն և ապա Պ. Բըլէյթին, լերանս բերդաձեւ գագաթն և ուրիշ կողմեր պեղումներ ընել տալով, գտան ոչ սակաւ հնութիւններ, ինչպէս քարէ աւազաններ, պղնձէ վահաններու կտորներ, արոյրէ ձուլուած եզան գլուխներ, փղոսկրեայ կիսարձան մը, պղնձէ ամանեղէններ, ձեւաւոր և խորհրդաւոր շէնքեր, դիտարանի կամ զբօսանաց համար, ընդունելութեանց սրահներ, և այլ ուրիշ շատ շէնքերու աւերակներ, որոց վրայ նայելով մարդ ժամանակին ճարտարապետութեան վրայ կ՚սքանչանայ։ Բայց տեղացիք ևս գտեր են դեռ աւելի նշանաւոր առարկաներ. ոսկեղէն և արծաթեղէն զանազան զարդեր, արոյրէ ոսկեջրած արձաններ և ծաղկեայ բազկաթոռներու մասեր, երկաթէ սլաքներ։ 1856ին յայտնուած է փոս մը, մէջը լեցուն մօտ 500 հատ զանազան մեծութեամբ ջրամաններ կամ փարչեր։ Դեռ ուրիշ անթիւ յարգի հնութիւններ կը գտնեն այդ տեղերէն շինութեան համար քար հանող մշակներ, բայց ափսոս որ այդպիսի հնութիւններ չեն պահուիր յատուկ տեղական թանգարանի մը մէջ, և մերթ անգէտ անձանց ձեռքով կը փճացուին, ինչպէս օրինակ, 1880 թուականին, մշակ մը կը գտնէ բեւեռագրերով ծածկուած ձուլուած բազկաթոռ մը և կը վաճառէ քաղաքացիի մը, և սա դարբնին կը յանձնէ անգին հնութիւնը, իր սայլի անիւներուն գործածելու համար։

Զըմզըմի լեռը կը ձեւանայ կարգ մը ժայռերէ, որոց կրաքարը նոյն նիւթէն կը թուի ինչ որ է Վանայ միջնաբերդինը. ժայռերը բարձրացած են կիսաբոլոր՝ որոց մէջտեղը, քան մեր գետնէն բարձր, կարծր քարի վրայ, որ ի մէնջ Ակուփի քար կը կոչուի, քանդակուած է քառանկիւնի տափարակ դուռն մի, 5 մետր բարձրութեամբ և 2մ. լայնութեամբ (թ. 47). այս դրան վրայ կան սեպաձեւ արձանագրութիւնք, ըստ ոմանց մինչև 95 տող բովանդակութեամբ, որոց ստորին տողերը, աւերդապաշտներէ ջնջուած են։ Սորա երկու կողմը կան ներսատրանք և 25–30 հարիւրորդամետր լայնութեամբ սանդղոց աստիճանք, գրեթէ բոլորը միակտուր քարաժայռէն։ Տեղացիք զայս կոչեն Մհեր–Գափուսու կամ աւելի սովորական Մհեր կամ Միհրայ դուռն, և զանազան առասպելներ կը պատմեն սոր նրկատմամբ։ Մհեր անունով դաժան և չարաբարոյ հրէշ մը կայ եղեր, որ իր աշխարհաւեր չարութիւնը, մեր երկրի մէջ եւ աւելի չտարածելու համար, վերնասատ հրամանով մը ինքն և իր ձին կը փակուին Ակուփի դրան ներսը, ուր ձախրի ֆալակ կը դառնայ, այսինքն աշխարհի մարդկանց կամ երկրագնդին ճախրը, անիւ։ Մհերը շարունակ անոր վրայ կը նայի. երբ այդ անիւը դադարի, այն օր Մհեր կատաղի զօրութեամբ և մոլեգին ձին հեծած դուրս պիտի ելնէ այս դռնէն և աշխարհ ամենայն տակն ու վրայ պիտի ընէ։ Այս առասպելն

խիստ նման է Խորենացւոյ Արտաւազդայ վրայ գրած աւանդելաբանութեանը։ Դարձեալ կ'ըսեն, թէ ամէն տարի Համբարձման գիշերը երկինք գետին գիրար կը համբուրեն. և այդ րոպէին Մհերի դուռը կը բացուի. ով որ արթուն մնացեր և այդ վայրկեանը տեսեր, ինչ որ սիրտն ուզեր, այնպէս եղեր է։ Եւ որովհետեւ Մհերի դուռն բաց է այն րոպէին, ով որ ներս մտնէ, որքան ոսկի ուզէ կ'առնէ դուրս կ'ելնէ, վասն զի հոն աշխարհի ոսկին կուտուած է։ Բանի մի մարդիկ փորձեր են, և ագահ լինելով շատ վերցընելու համար ուշացեր, դուռը գոցուեր, ներսը մնացեր են։

Կը կոչուի նաև Ջոպան—Գափուսու, Հովուի դուռն, իբր թէ, հովիւ մի ննջելով այս դրան տակ, երազ կը տեսնէ, յորում բարի հոգի մի կը յայտնէ իրեն այդ կախարդեալ դուռը բանալու գաղտնիքը։ Գաղտնիքն էր քանի մի խորհրդաւոր բառեր արտասանել, որք քանդակուած էին դրան վրայ. Հազիւ արթնցած հովիւն կ'արտասանէ մագական բառերը, մէկէն դուռն կը բացուի կռնակի վրայ, առջևն հանելով ոսկւով և ադամանդով լի քարայր մի։ Երբ ներս կը մտնէ դուռը կը գոցուի, նա կը փութայ մախաղը լեցընել թանկագին աւարով. կը կրկնէ մագական բառերը, դուռը կը հնազանդի իր հրամանին և թոյլ կու տայ դուրս ելնելու։ Մինչ արագութեամբ տուն կը տանի գտած գանձերը, կը տեսնէ որ արտորանքի ժամանակ ցուպը մոռցեր է։ Եկած ճամբով շուտով ետ կը դառնայ. երրորդ անգամ մի և դուռը կը բացուի, բայց երբ գաւազանը գտած այրէն կ'ուզէ դուրս ելնել, յիշողութիւնը կը պակսի. չի կրնար յիշել մագական խօսքերը, կը մնայ ներսը, և դեռ



47․ Ակոռիի ժայռերը և արձանագրութիւնը։

կ'ապրի քարայրի մէջ փակուած. ուսկից երբեմն կը լսուին իր ողբոց ձայները։

Դրանս արձանագրութիւնը երկագիր սեպակէն է, զոր օրինակեց և հրատարակեց Շուլց (Թ. ԺԷ)։ Դարձեալ օրինակեց Լէյէրտ. կաղապարեց Տէյրօլ. հրատարակեց և մեկնեց Մորտման (Թ. Գ)։

Ակոռին նշանաւոր է ոչ միայն իր հնութիւններովը, այլ և հրաշալի դիրքովը, և գեղագուարճ տեսարաններովը։ — Այս անուամբ Հայոց գիւղ կամ հանգրուան մի կայ, լերանս մօտ՝ այգեստանեայց կողմը, որ յայլազգեաց կը կոչուի Աք—Բէօփրիւ։ —

*Արծիւ Վասպ. 1858, 272–275։ Գրոց Բրոց, 132–35, 137–183։ Հաւնով Հոտով, 60–61։ Journal Asiatique, 1840, N. 52, 300–309։ Մշակ, 1881, Թ. 119։*

ԱԿՍԻԳՈՄՍ *կամ* Ս. ՅՈՀԱՆ. — *Վանք Այրարատայ Բասէն գաւառի մէջ Ծիրանեաց լերան ստորոտը, զոր հետեւեալ կերպով յիշէ Ասողիկ (Գ. Թ) ժրդ դարու վերջերը. «Սա (Յովհաննէս խաչակիր վարդապետ) մեռաւ ի մոլեալ ազգէն Վրաց սրով. և թաղեցաւ ի վանս որ* Ակսիգոմս *ասի, ի Բասէն գաւառի, և այժմ* Ս. Յոհան՝ *առ ստորոտով լերինն Ծիրանեաց»։*

ԱԿՐՈՒԽԱԶ. *Տես* ԾՂՈՒԿ։

ԱՀԱԿՃԻ *կամ* ԱՂԱՔԻՉԻՔ. — *Գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի Թալին (Սարտարապատ) վիճակի մէջ։ Բնակիչք 290, բաժնուած 33 տուն, Հայք և Թաթարք խառն։*

ԱՀԱՎԱՆՔ. — *Իբրև ազարակ Աղթամարայ յիշէ Թ. Արծրունի (258)։*

ԱՀԱՐ *կամ* ԱՀԷՐ. — *Վասպուրականի արեւելակողման հին Գառնի գաւառի մէջ կ'ինկնայ քաղաքս, Երասխայ օժանդակ համանուն գետոյն վրայ, որոյ անուամբ կը կոչուի նաև գաւառն։ Քաղաքիս բնակիչք կը համարուին 700 տուն։ Չորս կողմը ունի սեխենեաց պարտէզներ և պտղատու ծառեր, գլխաւոր բերքն են արմտիք։ Օդը ցրտին է. ջուրը ագուգաներով Էշքէնիրի լեռնէն կ'իջնէ ի քաղաքն։*

ԱՀԱՐՈՆ. *Տես* ԱՀՐՕՆՔ։

ԱՀԱԽԿԱՆԻՑ *կամ* ԱՀԵԽԱԿԱՆԻՑ ԳԻՒՂ. — *Թ. Արծրունի (էջ 241), հետեւեալ կերպով կը յիշէ գիւղս Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ, Զորոյ վանքի մօտ. «... գանձայր Աշոտ ընդ միւս եւս ամրականն ընդ ստոգերծ քարանձաւի, ի յարեւելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեղջն* Կոխպանից, *հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ, զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեղջն* Ահեւականից, *ի կատարածի լուսաւորութեանն Հայոց. քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեւահանի»։*

ԱՀԵՐՄՈՆԻ Վ. *Տես* ՀԵՐՄՈՆԻ Վ։

ԱՀՄԱՆԿԱՆ. — *Լեռ Սիւնեաց Գեղարքունի գաւառին, Գեղամայ ծովակի արեւմըտեան և Իւչթէփէլէրի հարաւային կողմը։ Ի Թուրքաց կոչուի Գաւճըր Կէօլ (Արեան լիճ), փոքրիկ լճակի մը անուամբ, որ կը գտնուի լերանս ստորոտը։*

ԱՀՆԻՋՕՐԱՎԱՐ. — *Գիւղ Հայոց, այժմեան Լոռուայ վիճակի մէջ. բնակիչք 154, բաժնուած 17 տան։*

ԱՀՐԷՎԱՆ. — *Գիւղ Սալմաստի՝ զոր Ռաֆֆի կը համարի հին Զարեհաւան քաղաքի տեղը։*

ԱՀՐՕՆՔ. — *Գիւղ Տուրուբերանի այժմեան Խութի վիճակի մէջ, Սասնոյ արեւմտակողմը. բնակիչք գրեթէ 200 տուն զուտ Հայք։*

ԱՂԱԲՈՅ ՎԱՆՔ. — *Յիշուի Սիւնեաց Գեղարքունի գաւառի հին Վանեվանի արձանագրութեանց մէջ։*

ԱՂԱԴԻՐ. — *Գիւղ Բարձր Հայոց Դերջան կամ հին Մաղահոնիք գաւառի մէջ։*

ԱՂԱՋՕՐ *կամ* ԱՂԱՍՈՐ. — *Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, գիւղ Հայոց. բն. 170 բաժնուած 32 տուն, յորոց երկու տուն Թաթարք։ Գիւղիս արեւելեան ծայրը կը գտնուի Կարճաղբիւր կոչուած ջուր մը, որ յատկութիւն ունի կանանց կաթը շատցնելու. շատ կողմերէ կուգան այս ջրոյս կանայք, և նպատակնուն հասած կը վերադառնան։*

ԱՂԱԹՄԱՐԱԹ. *Տես* ԾՂՈՒԿ։

ԱՂԱ–ԼԻՄԱՆ *կամ* ԱԳ–ԼԻՄԱՆ. — *Կիսաբոլոր ծոց (Թ. 48) Ծովային Կիլիկիոյ, որ այժմ կը ծառայէ իբրև նաւահանգիստ Սելեւկիոյ, յորմէ հեռու է գրեթէ ինը մղոն։ Արեւմտեան եզերքը կը գտնուի Թուրքաց Աղա–Լիման իսկէլէսի գիւղը, որոյ հիւսիսային կողմը կը տեսնուի փոքրիկ, կիսաւեր, անկանոն ուղղանկիւնի բերդ մը. ստուար են պարիսպները և անկիւնները կան մէկ մէկ աշտարակ։ Սելեւկիան չկառուցուած, հոս էր հին Հոլմի կամ Հոլմիա քաղաքը, բայց Սելեւկիան կառուցուելէ վերջ, Հոլմիացիք հոն փոխադրուեցան։ ԺԷ դարու ըսկիզբը Միջերկրականի հինից շատնալովը, շատ անգամ անոնց հետ կը պատերազմէին Իտալացւոց նաւերը. 1612ին Մալթայի ասպետները և Թոսքանացիք անոնց ետեւէն ինկնալով Կով կղզւոյն տիրեցին։ Իտալա-*

ցւոց դէմ դրկուեցաւ Օսմանեան Մուհամմէտ Էօքիւզ կամ Տամառ ծովապետը։ Պատերազմի մը մէջ յելուզակները բռնելով քաղաքէն Ֆիօրենցացիներ սպաննեցին և գրաւածները շարեցին Աղա—Լիմանի բերդի պարսպաց վրայ։ Թօսքանացի Կօզմայ դուքսը սաստիկ բարկացած, դրկեց պատերազմական վեց նաւեր, Ս. Ստեփանոսի կարգէն քաղաքէն զինուոր և ուրիշ զօրքեր, որոնց հետ միանալով նաև այլևայլ ազգերէ ոչ սակաւ ինքնակամ զինուորներ, 1613ին եկան յարձակմամբ բերդին տիրեցին, 240 քրիստոնեայ գերիներ ազատեցին, և գերեցին 300 հոգի և ութ նաւ՝ երկուքը պատերազմական։ Ափսոս որ չգիտենք, թէ այժմ աւերակներով լի Աղա—Լիմանը և իր շրջակայքը ի՛նչ վիճակի մէջ էին, մեր Կիլի-




48. Աղա–Լիման 1/15,000։

կեան թագաւորաց և իշխողաց ժամանակ։ — Սիսուան, 326–327։

ԱՂԱԽԵՐԴ. Տես ՀԱԲԱՆԴ։

ԱՂԱՀԵՑԻԿ. Տես ԱԳՈՒԼԻՍ։

ԱՂԱՀԷՃՔ. — Բաւական ընդարձակ և բնութեան հանգամանաց համեմատ գեղեցկադիր գաւառ մ'է Սիւնեաց աշխարհի արեւելեան հիւսիսային կողմը. Հիւսիսէն և արեւմուտքէն կը սահմանուի Ծարայ և Ծրղկոյ լեռներով, արեւելքէն Արցախ նահանգով և հարաւէն Հաբանդ գաւառով։ Թէ՛ պատմական և թէ տեղագրական ծանօթութիւնք խիստ նուազ են գաւառիս վրայ։ Երկիրը ջրաշատ է, գլխաւոր գետն կը կոչուի Աղաւնոյ կամ Հագարու (եւ Ագարակու), և ունի զանազան օժանդակներ, ինչպէս Ագարա, Մուշենշի, Նարուշան չայ, Հո-

չանց կամ Հօչաս, Դօրանլըխ, Ինձերէմ, Ագ—օղլան։ Այս գետոց և վտակաց պատճառաւ Աղահէճք ունի շատ ձորեր, և իրեն գրացի Արցախի նման գրեթէ ամէն տեղ անտառախիտ է։

Անյայտ է գաւառիս Աղանէճք կամ Աղանէջ անուան ծագումը, և որովհետեւ իր մեծ գետն Աղաւնոյ՝ գրուած կը գտնենք նաև Աղուանից, հաւանական է կարծելն, որ երկիրն ալ այն բնութիւն ունենալուն՝ այսպէս կոչուած լինի, և կամ գրացի Աղուանից կարծուած Աղուէ նահապետին անուամբը։

Գաւառիս հին անուան ծագման պէս, անծանօթ են մեզ նաև իր երկրորդական Քաշաթաղ կամ Քշտաղք և Խոժոռաբերդ անուանց ծագումը։ Սիւնեաց պատմիչը, իր աշխարհի գաւառաց վրայ տեղեկութիւն տուած ժամանակ գաւառիս համար կ'ըսէ. «Հինգերորդ Աղահէջ գաւառ, որ այժմ կոչի Քաշաթաղ և Խոժոռաբերդ»։ Ինճիճեան այս վերջի անուններն կը համարի յառաջ եկու բերդերու, զի պատմիչն ևս քիչ վերջը բերդերու կարգին մէջ կը յիշէ Քաշէ թաղուց բերդ և Խոժոռաբերդ։ Ուրիշ գաւառաց պէս, չի յիշուիր և ոչ իշխան կամ տէր Աղահէճոյ. զուրկ է գաւառս նաև քաղաքական դէպքերէ, և տակէ կը կարծուի թէ հին ժամանակներէ ի վեր, Սիւնեաց իշխաններու ձեռքէն ելնելով անցած ըլլայ Աղուանից իշխանութեան ներքև, և կամ մանաւանդ այլազգեաց բռնաբարութեան տակ, որք փճացուցին աւերեցին գաւառիս վայելչագեղ ձորահովտաց մէջ գտնուած հին ազգային յիշատակները։ Պատմութեան մէջ կը յիշուի, թէ ինչպէս Վլիթ արաբացի ոստիկանի որդին փառզոս, 847 թուականին Գանձակայ կողմերէն գալով «... յաշխարհն Սիւնեաց գերի վարեալ զԲաղացն սահմանն՝ գայ իջանէ յԱղանէջ գաւառ, յաւան մի Արքունագետ կոչեցեալ. իսկոյն հրամայէ այրել զեկեղեցին՝ որ Սրբոյն Գրիգորոյ էր անուանեալ. և յայնժամ զօրութիւն աստուածային հասեալ, հեծեալ մի ի ձի ճերմակ՝ ճեպով ելանէ յեկեղեցւոյն արտաքս, ակն յայտնի ամենեցուն ընթացեալ ի բանակն, շփոթեալ զայրն անօրէն հանդերձ զօրօքն իւրովք ի փախուստ դարձուցանէր ընդ սարն՝ որ կոչի Եղջերիս։ Եւ անդ հողմն պնդակ մրրկեալ շրջապատէ զնոսա. և միայն ի ձի ապաստան փախուցեալք զերծան։ Իսկ կալանաւորքն և աւարք ի լերանց վերայ կորեան. իսկ գերեալքն մնացին խաղաղութեամբ փառս տալով Աստուծոյ»։ Կաղանկատուացի, (Գ. Ի)։

Սիւնեաց եկեղեցւոյն հարկատուաց ցուցակին մէջ յիշուած գաւառիս յատուկ գիւղերն են հետեւեալք, հանդերձ իրենց տրից բաժնովը.

| | |
|---|---|
| Աւժէն . . . . . | 10 |
| Անէժ . . . . . | 12 |
| Տանձուտ . . . . | 7 |
| Հացեաց աղբիւր . . . | 12 |
| Քեղաձոր . . . . | 40 |
| Հակ . . . . . | 15 |
| Արտանգետ . . . . | 12 |
| Մեղի . . . . . | 12 |
| Ականք . . . . . | 8 |
| Արուականն . . . . | 6 |
| Մշենի . . . . . | 6 |
| Քաշաթաղք . . . . | 6 |
| Վերին Շէն . . . . | 6 |
| Ջիասար . . . . | 6 |
| Մատրակերտ . . . . | 6 |
| Մինի . . . . . | 6 |
| Հունչաք . . . . | 12 |
| Մարգք . . . . . | 10 |
| Պոխոչոխ . . . . | 10 |
| Սուրբ Գէորգ . . . | 8 |
| Լսորք . . . . . | 8 |
| Ագարակու գետ . . . | 10 |
| Շապոկլի . . . . | 7 |
| Կարկասան . . . . | 6 |
| Պախախոնիք . . . . | 12 |
| Մոշենք . . . . . | 10 |
| Որբոքոյ քար . . . . | 8 |
| Արահուծ . . . . | 6 |
| Ծիծառնու վանք . . . | 10 |
| Կատոհոլինք . . . . | 12 |
| Հայելեակ . . . . | 6 |
| Մախուլն . . . . | 10 |
| Խրու . . . . . | 8 |
| Ծորացիք . . . . | 10 |
| Խախծիք . . . . | 12 |
| Վժնաբերդ . . . . | 12 |
| Հայրի . . . . . | 8 |
| Անուշաւան . . . . | 12 |
| Սղտառ . . . . | 6 |
| Շամբթայ . . . . | 8 |
| Արքոյ . . . . . | 6 |
| Վասակակերտ . . . | 12 |
| Ասորոկ . . . . . | 10 |

*վերջին ցուցակաց մէջ կը յիշուին նաև հեռեւեալները Քաշաթաղի և Խոժառաբերդի մէջ.*

Սթունիք
Աղուէսահագի
Եզնագոմեր
Փուլ
Սպիտակաջուր
Քարագլուխ
Ծրուական
Խոզնավար
Հալաքս

*Այս հին գիւղերէն շատերուն և ոչ իսկ տեղերն յայտնի են, շատերն ալ աղաւաղեալ հնչմամբ և գրութեամբ կը յիշուին այժմ. կան նաև քանի մը Թրքանուն գիւղեր, ինչպէս Գաշլու, Ագձաքէնտ, Եաղըղուզասմ, Ղուչձի, են։ Գաւառս թէ և ունի բաւական լեռներ, սակայն շատերը գրեթէ 6000 ոտք բարձրութիւն ունին, և քիչերը կ'անցնին 7000 ոտքը։ Աղահէճք ունի գլխաւորաբար երեք ձորահովիտներ, որք կը կոչուին* Զորահովիտ Հօչանց, Զորահովիտք Ագարու, *և* Զորահովիտ Բուն Ագարու *կամ* Հագարու։ *Այս գեղազուարճ հովտաց մէջ գտնուող նշանաւոր և յիշելու արժանաւոր գիւղերու և վանքերու վրայ կը խօսուի ի կարգին։ — Սիսական, 265–271։*

ԱՂԱՀԻ. *Տես* ԾՂՈՒԿ։

ԱՂԱՀՈՐԴ. — *Գիւղ Սիւնեաց Բաղք (Ջանկեզուր) գաւառի, Վժանիս և Ագարակ գիւղերու մէջտեղ. բն. 700, բաժնուած 67 տան, ամբողջ Հայ։*

ԱՂԱՂ. — *Տուրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ, Վանայ ծովակի արեւմտեան եզերաց վրայ 18–20 տուն բնակչօք Հայոց գիւղ մ'է։ Գրեթէ քառասուն տարիներէ ի վեր գիւղիս բնակիչք դարձած են Բողոքական։*

ԱՂԱՂԲԻՒՐ. — *Աղային հանքաջուր, Այրարատայ հին Գաբեղէնք գաւառի արեւելակողմը, Երասխայ մօտ գտնուող Պոշլանըք կոչուած գետաձորակի մէջ։*

ԱՂԱՃԱՐԻ ՋՈՒՐ. *Տես* ՁԷՅԹՈՒՆ։

ԱՂԱՃԳԱԼԷ. *Տես* ԱՃԳԱԼԱ։

ԱՂԱՆՋ. *Տես* ԾՂՈՒԿ։

ԱՂԱՊԱՏՐՈՒՇ. *Տես* ԵՂԻՊԱՏՐՈՒՇ։

ԱՂԱՍԱՐ *կամ* ԱՂԱՍԷՐ. — *Գիւղ Թորթումի, այժմ Թրքաբնակ։*

ԱՂԱՍՏԵԻ. *Տես* ԱՂՍՏԵԻ։

ԱՂԱ–ՏԷՏԷ. — *Այրարատայ Վանանդ (Կարս) գաւառի Բէռնա և Զարմաչու գիւղերու մէջտեղ կը բարձրանան այս անուամբ կրկին լեռնաբլուրներ, որոց միոյն վրայ կան գերեզմաններ, վանքի աւերակներ և սպարապ Հայոց գերեզմանատուն և Լուսաղբիւր մը։*

ԱՂԱՒԵՐ. — *Թրքաբնակ գիւղ Կարնոյ։ Համանուն Թաթարաբնակ գիւղ մ'ալ կայ ի Սիւրմէլի (Երեւան), 41 տուն բնակչօք։*

ԱՂԱՒՆԱՁՈՐ. *Տես* ԸՂՆԱՁՈՐ։

ԱՂԱՒՆԱՏՈՒՆ. — *Գիւղ Հայոց, Այրարատայ Արագածոտն (Էջմիածին) գաւառի մէջ. բն. 635, բաժնուած 104 տան։ Եկեղեցին նուիրուած է Ս. Գէորգայ։ Համանուն հասարակութիւնն ունի 7 գիւղ, 541 տուն և 3509 բնակիչ։*

ԱՂԱՒՆՈՑ ԳԵՏ. *Տես* ԱԳԱՐԱԿՈՒ Գ.։

ԱՂԱՔԻՉԻՔ. — *Գիւղ Հայոց և Թաթարաց, Այրարատայ Արագածոտն գաւառի այժմեան Թալինի հասարակութեան մէջ. բն. 209, բաժնուած 33 տան։*

ԱՂԲԱԳ. *Տես* ԱՂԲԱԿ։

ԱՂԲԱԹԱՆԻՑ ԳԻՒՂ. — *Հին գիւղ Վասպուրականի Ռշտունեաց գաւառի մէջ։ Կը յիշեն գիւղս Յովհաննէս կաթողիկոսը և Ասողիկ, յայտնելով թէ աստ էր Աբրահամ Ա. կաթողիկոսը։*

ԱՂԲԱԿ, ՄԵԾ ԱՂԲԱԳ *կամ* ՍԷՐ ԱԼՊԱՂ. *Գղ.* AGHPAG *կամ* ELBACK. — *Վասպուրականի հին գաւառներէն մին, որ այժմ ևս Վանայ գաւառներէն կամ վիճակներէն մին կը ձեւացընէ։ Սահմանքն են Հս.էն Մահմուտի գաւառը և Պարսկաստան, Ար.էն Պարսկաստան, Հր.էն Կէվէռ գաւառը և Ամ.էն Նորդուզ և Մամուրէթ–իւլ–Համիդ գաւառները։ Դիրքը դաշտային է, ունի նաև բարձր ու ցած խառնուէտ լեռներ. ջուրը առատ, կան քանի մը ձկնաշատ վտակներ։ Օդը ձմեռը սաստիկ ցուրտ կ'ընէ և շատ ձիւն կու գայ, իսկ ամառը բարեխառն է։ Հողը բերրի է, կը տնուցանէ ընտիր ոչխար, կով, եզն և գոմէշ։ Գաւառիս Սօրատէր գիւղի մօտ կաւճի բլուր մը կայ։ Գաւառագլուխն է* Պաշգալէ *աւանը, Վանէն 18 ժամ հեռու։*

Ագրակու արեւելակողմը կը բնակին Շամբոքցի բռուած Քուրդ Հաշիրէթ, որք կը համարուին 5–550 տուն. արեւմտակողմը Տէվանցիք 100–120 տուն, հարաւակողմը Արտօսցիք 1000 տուն և հիւսիսային կողմը Շկակ կոչուածներն 600 տան չափ։ Այս Քրդաց մեծամասնութիւնն կը բնակին սովորաբար լերանց ձորաբերաններն և կամ միջավայրերը, իսկ սակաւաթիւ մաս մ՚ալ, որք հայերէն ևս կը խօսին, կը բնակին դաշտի վրայ։ Ընդհանրապէս կորովի, ուժեղ և յաղթանդամ են կողմանցս բնակիչք, Հայք կ՚զբաղին երկրագործութեամբ և Քուրդք խաշնարածութեամբ։ Կանայք կը գործեն ճարտարութեամբ այլ և այլ գոյներով գինացկուն գորգեր և բնաիր շալ։

Արմէնիայի մէջ կը կարդանք, թէ Ագրակցիք «Հայաստանի ամենէն աւելի նահապետական սովորոյթն և կեանքը պահող բնակիչներէն են. գոգա թէ՛ ընկերական և թէ՛ ընտանեկան յարաբերութիւնք հնութիւնը կը պատկերացունեն. պանդուխտներ չունին, իրենց թարմ և առողջ երիտասարդներ, մեծ քաղաքաց մէջ բեռանց ներքեւ, ապականեալ կեանքի մը մէջ չեն մաշիր. նահապետական պարզութիւն և հիւրասիրութիւն կը տիրէ բնտանիքի մէջ որ սովորաբար բազմաթիւ անդամներէ կը բաղկանայ»։

Գաւառիս գիւղերու թիւն Հայ տեղեկագրող մը (1884ին) կը համարի 80, և բն. 20000, յորոց 10000ը Հայ, և մնացածն Քուրդ, Ասորի և Հրեայ։ Իսկ Վ. Քինէ ամբողջ բնակչաց թիւն կը դնէ 42870, հետեւեալ կերպով բաժնուած.

| | | | |
|---|---|---|---|
| Մահմէտականք | Թուրք . . 5690 | | 28270 բն. |
| | Քուրդք . 22580 | | |
| Քրիստոնեայք | Հայք . . 3000 | | 13000 » |
| | Ասորիք, են. 10000 | | |
| Հրեայք . . . . . . . . . | | | 1600 » |
| | Գումարն . . . | | 42870 բն։ |

Գաւառիս մէջն է Ս. Բարթուղիմէոսի հայակապ վանքը, որուն նկարագիրը կ՚ընենք ի կարգին. կան նաև ուրիշ վանքերու, բերդերու և ապարանքներու աւերակներ, շինուած Արծրունեաց հարստութեան ժամանակ։ Ագրակայ մէջ էր նաև հին Ս. Խաչի վանքը Օսի գիւղի մէջ, ուր կը թաղուէին Արծրունի իշխանազանց գիւկունք։ Արծրունեաց Հաղամակերտ անուն Ոստանն ալ այս գաւառի մէջ կը դնէ Թ. Արծրունին։

Ագրակ սահմանակից լինելով Պարսկաստանի, շարունակ առեւտրով յարաբերութեան մէջ է Սալմաստի հետ։ Ինչպէս մեր անցեալ պատմութեան շատ էջերու մէջ, նոյնպէս և վերջերս, դէռ աւելի տխուր և աննկարագրելի դէպքերու տեսարան մը դարձած է Ագրակ։ — Ստ. Հին Հայ. 206–208։ Նկար. ուղեւորութիւն, Բ. 54–56։ Համով Հոտով, 84–85։ Մշակ, Ա. 27, 29. Գ. 20։ Վ. Քինէ, Բ. 731–737։ Արմէնիա, 37։

— ՓՈՔՐ. — կորճէք նահանգի գաւառներէն մին, յորում սակայն կը յիշէ Թ. Արծրունին Սրինգ և Ջղմար երեւելի ամրոցները. «Բայց կին նմա յաղէ Աժդահակայ բնակէ յամուրան Ջղմար և Սրինգ ի գաւառին փոքր Աղբագ, և անուն կնոջն Ջայլմար՝ որ և զամուրն յիւր անուն անուանէ»։ Այս գաւառ կը համապատասխանէ այժմեան Ջուլամերկ գաւառի։ — Ստ. Հին Հայ. 148–149։

ԱՂԲԵՆԻՍ. — Գիւղ Տարօնոյ, Վարդենիս գիւղի մօտ՝ հարաւային կողմը։

ԱՂԲԵՐԱԿԱՆՑ ԴԱՇՏ. — Այրարատայ (Վերին Բասեն) մէջ բաւական ընդարձակ դաշտ, Հասանղալէի հարաւակողմը. այսպէս կոչուելուն պատճառն է, Երասխայ աղբերաց սոյն դաշտիս միջէն անցնիլը։ Մեծին Վահանայ Մամիկոնեանի քաջագործութեանց ժամանակ, իւր թշնամիք եկան այս կողմերը Դու գեղին մօտ բանակեցան «ի Դաշտին Աղբերականց՝ զոր Արժարաղբիւրսն կոչեն»։ — Ղազար, 446։

ԱՂԲԵՐԱՁՈՐ. Տես ՍՈԴՔ։

ԱՂԲԵՐԻՍ. — Ագարակ՝ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, Նորավանից կալուածներէն մին։

ԱՂԲԵՐԻՑ Գ. Տես ԳԵԱՄՐԻՍ։

ԱՂԲԵՐԿԱՑ ՀՈՂ. — Ցիշուի Վայոց ձորի (Սիւնիք) Ս. Սիոն անապատի արձանագրութեան մը մէջ, զոր Քօքօր ոմն գնելով նուիրեր է նոյն վանաց։

ԱՂԲԵՐԿԱՑ կամ Ս. ԱՂԲՐԻԿ ՎԱՆՔ. — Տուրուբերանի հին Խութ գաւառի և այժմեան Համանուն գաւառակի մէջ, Բռնաշէն աւանի մօտ՝ հիւսիսային կողմը կ'իյնայ թէ՛ հին ժամանակները և թէ այժմ նշանաւոր ուխտատեղի դարձած մենաստանս: Աւանդութիւնը կը համարի, թէ վանքս եկեղեցին շինուած է Ս. Թադէոս առաքեալէն, և ներքին անհարթ ու տձև կամարները, և ամբողջ շինութիւնն իսկ իր անարուեստ ճարտարապետութեամբն կը ցուցնէ թէ խիստ նախկին ժամանակաց կը վերաբերի: Թադէոս առաքեալը քարոզութեամբ այս կողմերս գալով, և գաւառապետ Բռնիկ իշխանի որդին բժշկելով, և զինքն քրիստոնեայ դարձընելով, կը խնդրէ անկէ կառուցանել Աստուծոյ տաճար մը: Բռնիկ իշխանը, որոյ բերդի աւերակները տակաւին կը տեսնուին վանացս մերձակայ լերանց միոյն գագաթը, կ'ուզէ ոչ միայն քարէ այլ ոսկեձոյլ և արծաթաձոյլ յօրինել զայն, բայց յետոյ առաքելոյն խրատով քարաշէն կը կառուցանէ: Ժամանակ անցնելէ վերջ կը կառուցուի հին տաճարի կից ուրիշ վայելչաձև և գմբէթաւոր եկեղեցի մը, որուն շինութիւնը Ս. Լուսաւորչի կու տան: Այս եկեղեցին ներքին դռնով մը կը հաղորդի առաքելաշէն եկեղեցւոյն հետ, և ուրիշ դռնով մ՚ալ հին եկեղեցիէն կը մտնուի մատրան կամ տաճարի մը մէջ: Մատրանս խորանի տակն է Ս. Թադէոսի սքանչելաբուխ աղբիւրն, որուն անուամբ Ս. Աղբրիկ կոչուեցաւ վանքը: Աղբիւրիս ջուրը ստորերկրեայ ճանապարհով կը հոսի վանքէն դուրս գտնուած ուրիշ աղբեր մը մէջ՝ յորմէ ըմպելով ամէն մարդ կը հրաշանայ, իբրև հիւանդութենէ յանկարծակի բժշկուած, վասն զի աննման է թէ՛ քաղցրութեամբը և թէ թեթևութեամբը: Կ'ըսեն թէ աղբիւրիս մէջ ձգած ըլլայ Ս. Թադէոս Քրիստոսի բեւեռներէն մին, և այդ պատճառաւ միայն ըմպելու կը գործածեն և սրբաջուր կ'անուանեն, կաթիլ մը անգամ գետին թափելու կը խղճեն: Մենաստանիս մէջ կայ նաև Գործեյյարոյց մականուանուած սուրբ Նշան մը. որուն համար կ'ըսեն, թէ Մանազկերտի գաւառապետին որդին ընտանեաց անզգուշութեամբը թոնիրը իյնալով և այրելով կը դառնայ գործելի կամ ածուխ, և յետոյ այս սուրբ Նշանի զօրութեամբ մանուկը կենդանանալով, հայրը բոլոր Մանազկերտը վանացս թեմ կ'ընէ: Այս բոլոր պատմութիւնք ընդարձակ գրուած են մենաստանիս հին կոնդակի մէջ, յորոց համառօտած է Հ. Ներսէս: Այն ինչ մամլոյ տակ կը մնար վանացս նկարագրութիւնը (1899), լրագիրք սկսան ծանուցանել, թէ Ս. Աղբրիկը կողոպտեր են այլազգիք, և վանահայրը և ուրիշ մէջը գտնուողները սպաններ — Տեղագրութիւն 238–239:

ԱՂԲԵՐԻ. — Համդրուան Այրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ:

ԱՂԲԵՐ ՋՈՐ կամ ԱՂԲՐՋՈՐ. — Թորթումի գիւղերէն մին, այժմ բնակիչք Թուրք են, 75 տուն:

ԱՂԲԵՐՑ ՎԱՆՔ. Տես ԳԱՑԼԵՋՈՐ:

ԱՂԲԵՐՔ կամ ԱՂԲԵՐՑ Գ. Տես ԱԼԱՓԱՐՍ:

ԱՂԲԻ. — Գիւղ Սասնոյ, 35 տուն Հայ բնակչօք:

ԱՂԲՆ կամ ԱՂԲԻՆ. — Յիշուի Սիւնեաց պատմչէն (157), իբրև շէն Սիւնեաց Ծղուկ կամ Բաղք գաւառի մէջ:

ԱՂԲՆԱԳԵՂ. — Այրարատայ Շիրակ գաւառի մէջ գտնուող Հոռոմոսի վանաց յիշատակարանաց մէջ կը յիշուի գիւղս:

ԱՂԲՈՒԼԱՂ կամ ԱԳՊՈՒԼԱԳ. — Գիւղ Տփղիսու հարաւ–արեւմտեան կողմը 52½ վերստ հեռու, բաւական բարձր և գեղեցիկ տեսարաններ ունեցող դրից վրայ: Օդը բարեխառն է, ջուրն պատուական: Բնակչաց թիւն է 376, բաժնուած 61 տուն. մեծամասնութիւնն Վրացիք են, կան նաև Հայեր, որոց ձեռքն են գրեթէ բոլոր արհեստները և առեւտուրը:

— Լեռ Բագրեւանդայ, Զաւլէ և Պօղ–Թէփէ լերանց միջավայրը, Ամաս գիւղէն 4½ ժամ դէպի հիւսիս, Ջրարաշխի շրթային վրայ գեղեցիկ գիրք մ'ունի, վճիտ և քաղցրահամ աղբերակունք: Հիւսիսային արեւելեան և հիւսիս. — արեւմտեան կողմերէն հոսող ջրերն կը ձեւացնեն խորանգուն ձորակներ, յորոց մին իրաւամբ Վիշապաձոր անուն տուած է, որ բառ ժողովրդեան Վաղկօր չուր կ'ըսուի: Լեռս հարաւային կողմէն առատ ջուր կու տայ Կալոյի

ձորին, որ միանալով Զամչէն իջած ջրին՝ առաջ կ'երթայ մինչև Շեռեան։ — Բագրեւանդ, 12։

ԱՂԲՐԻԿ. — Սակաւաբնակ գիւղ Թորթումի։ Տես ԱՂԲԵՐԿԱՑ Վ.։

ԱՂԳՈՄ. — Գիւղ Այրարատայ Վանանդ գաւառի Զարիշատայ վիճակին մէջ։

ԱՂԴԱՒ. Տես ՃԱՀՈՒԿ։

ԱՂԵԱՒ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. Տես ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. Տես ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏՏԱ և ԵԳԻՊՏՈՍ։

ԱՂՁԸ ԱՁԸԿ. — Գիւղ Այրարատայ Վանանդ գաւառի Զարիշատայ վիճակին մէջ, բնակիչք 26 տուն։ Նոյն անուամբ երկու Քրդաց գիւղեր ալ կան Կաղզուանայ վիճակին մէջ։

ԱՂՁԸՊԷՕՅԽԻԿ կամ ԱԼԱՎԷՐՏԻ. — Լեռ Գուգարաց Տաշիր գաւառի արեւելեան հիւսիսային ծայրը. բարձր 5460 ոտք։

ԱՂԷՕՐԷՆ. — Գիւղ Կարնոյ, բնակիչք 84, Թուրք և Քուրդ։

ԱՂԸԼ. — Այլազգաբնակ գիւղ Ակնի։

ԱՂԸՆ. — Հայաբնակ գիւղ Արաբկերի, ունի Ս. Աստուածածնի եկեղեցի մը և 230 բնակիչ։

ԱՂԸՆՍԻ կամ ԱՂԸՆՋԻԿ. — Գիւղ Խարբերդի, բնակիչք 60 տուն Հայ են և քանի մը տուն ալ Թուրք։ Հայք ունին Ս. Կարապետ եկեղեցի մը։

ԱՂԸՐ կամ ԱՀԸՌ ՏԱՂ. Տես ՄԱՍԻՍ։

ԱՂԹԱՐՈՅՆՔ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՂԹԱՄԱՐ կամ ԱԽԹԱՄԱՐ. Գղ. AGHTHAMAR. Թ. اختمار. — Վանայ ծովակի կղզիներէն հռչակաւորն է սա (Յ. 49), որ ծովու երեսէն բարձր է գրեթէ 5528 ոտնաչափ կամ 1685մ. և կ'ինկնայ 38° 22′ 00″ լայնութեան և 60° 38′ 00″



49. Աղթամար կղզւոյն տեսարանը։

ԱՂՁԻ կամ ԱՂՁՈՑ. — Զգիտեմ իբրև գի՞ւղ թէ իբր լեռ յիշուի Վասպուրականի հին Աղէ գաւառի կողմերը։

ԱՂՁԻՊԻՐ. — Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի, այժմ այլազգաբնակ է. ունի կիսաւեր վանք մը, յորում կայ ՉՃԼԷ (=1288) թուականաւ հայկական արձանագրութիւն մը։ Տես ԱԽՃԻԲԵՐ։

ԱՂՁՈՒՆԻՔ. — Գիւղ Հայոց և Քրդաց Չարսանճագի (Չորրորդ Հայք)։ Հայք են 60 հոգի և ունին Ս. Սարգիս եկեղեցի մը, իսկ Քրդաց թիւն է 150։

ԱՂԷԿԻ. — Հին գիւղ Գուգարաց Տաշիր (Լոռի) գաւառի մէջ, որ այժմ բոլորովին աւերակ է։

երկայնութեան մէջ։ Սահմանքն են Ար.էն և Հր.էն արեւելեան և հարաւային ծովափունքը, Ամ.էն Առտէր կղզին և Հս.—Ար.էն գրեթէ 18 մղոն հեռու է կտուցը։ Աղթամար, ըստ Տէյրօլի հեռու է Վանայ Աւանց գիւղի նաւահանգստէն $2^1/_2$ ժամ կամ 4 հազարամետր և Ախավանքէն մէկ ժամ։ Հայ տեղագիրք կղզիս փոքր կը համարին Կտուց և Լիմ կղզիներէն և մեծ քան զԱռտէր. տարածութիւնը կը համարուի մօտաւորապէս 15—16 քառակուսի հազարամետր։

Աղթամարայ խոժոռ ժայռերն և անառիկ դիրքն դիտելով հնագոյն նախնիք մեր, զինքը սահմաներ են իբրև ամրոց ընդդէմ յարձակմանց թշնամեաց։ Մեր պատմիչներէն գլխաւորաբար Թ. Արծրունին է, որ նախաբար կը խօսի կղզւոյս վրայ, սակայն իր

արքունական զօրքերէն 6150 վարձուոր ար-հեստաւորներ, շատ տարիներ շարունակ աշ-խատեցան, ընդարձակեցին կղզին ահաւոր ամբարտակներով և ապա շրջապատեցին



Աղթամար · Ս. Խաչ եկեղեցի

թանձր պարսպով և բուրգերով ու աշտա-րակներով զարդարեցին: Կառուցին նաև մեծ աշխատութեամբ գեղեցիկ նաւահանգիստ մը, կղզւոյ մէջ բարձրացան բերդեր, պալատներ, մեծամեծ ամբարանոցներ, շտեմարաններ, զինարաններ, ևն: Աւերիչ ժամանակը և ծո-վակի ջրերու բարձրանալովը, Գագկայ հրա-շակերտ շինուածոց մեծամասնութիւնն անհետ եղած է, և այժմ իբրև յիշատակ անցելոյն, գլխաւոր[illegible]ար կանգուն մնացած է քանդա-կօքն [illegible]շակաւոր Ս. Խաչի տաճարը (Թ. 50[illegible]ագկայ հրամանաւ և ձեռնտուութեամբ 9[illegible]–921 թուականաց մէջ կառուցուեցաւ [illegible]շակապանծ եկեղեցիս, որոյ քաջ արուես-

*տագէտ ճարտարապետն Մանուէլ՝ ջանաց իր բոլոր ճիգը թափել, մինչև իր օրերը մեր աշխարհը գտնուած տաճարներէն ամենէն շքեղը և ամենէն հոյակապը կառուցանելու համար։ Խաչաձև է տաճարս և անսիւն, հրաշալի և բարձրակառոյց է կաթողիկէն. արտաքին որմունք զարդարուած սրբոց պատկերաց, կենդանեաց և բուսոց քանդակներով։ Կանխաւ ճոխ էր եկեղեցիս պատկերներով և արծաթի զարդերով. այլ ժամանակ առ ժամանակ ենթակայ ըլլալով աւարառութեանց անշքացեր է, և քանդակներէն շատերը վնասուած են բիրտ և կործանիչ ձեռքերէ։ Տաճարիս կոփածոյ քարերը բերուած են Բաղիշու Կոտոմ գիւղէն. Հարաւային դրան վրան կայ Թագաւորի աղօթատեղին, որուն հին մուտքը կամ սանդուխները ծածկուած են. կիսեղծ է նաև հարաւային որմոյն վրայի հին արձանագրութիւնը. զանգակատունը և ժամատունը նորաշէն են։ Ըստ կոնդակի վանացս, 921 թուին մեծահանդէս նաւակատիք կատարուեցաւ Ս. Խաչի, և նոյն օրէն ձեռնադրուեցաւ Աղթամարայ թեմին առաջին կաթողիկոս Տէր Եղիշէ արքեպիսկոպոսը, ազգակից Գագկայ։ Այս կաթողիկոսութիւնը յաջորդաբար շարունակուելով հասաւ մինչև 1895 թուականը, յորում վախճանելով Խաչատուր կաթողիկոսը, այլ և այլ պատճառներով, մինչև ցարդ պարապ մնացած է աթոռն, կառավարուելով տեղապահէ մը։ Ոմանք կղզւոյս կաթողիկոսութեան հաստատութեան սկիզբը, հետևեալ կերպով կը պատմեն. Վասպուրականի եպիսկոպոսներն Գրիգոր Գ. կաթողիկոսին հակաթոռ ընտրեցին Դաւիթ (Թոռնիկեան) Աղթամարայ արքեպիսկոպոսը։ Եւ երբ ազգային ժողովքի մէջ Գրիգոր օրինաւոր կաթողիկոս ճանչցուեցաւ, Դաւիթ Աղթամար կղզւոյն վրայ ինքնագլուխ կաթողիկոսութիւն մը հաստատեց (1113)։*

*Աղթամարայ վանքը (Թ. 51) շրջապատուած է պարիսպներով և չորս կողմերը ունի մէկ մէկ դուռ, հարաւայինը՝ որ գըլխաւոր դուռն է, կը նայի դէպի Ոշտունեաց աշխարհը։ Լայն և ընդարձակ գաւթի մէջ կանգնած է վերոյիշեալ Ս. Խաչի փառաւոր տաճարը, դէպի արևելք է գեղեցկաշէն վեհարանը, արևմուտք միաբանից և ուխտաւորաց երկյարկանի բնակարանները, հարաւ՝ վարժարան, իսկ դէպի հիւսիս գերեզմանատունը, յորում կան նաև կաթողիկոսաց ոմանց շիրիմներ, հանդերձ խաչքարերով և արձանագրութեամբք։ Ի հնումն բազմաթիւ միաբաններ ունեցող Աղթամարայ վանքը, այժմ հազիւ ունի 15 վարդապետ, 4–5 սարկաւագ և վարժարան մը 20–25 աշակերտներով։ Ունի բաւական ընդարձակ թեմ մը, և վերջին տխուր դէպքերէն առաջ, ունէր տարեկան մօտ 50, 000 րուբլի եկամուտ։ Թեմերը կը կազմեն Վասպուրականի հարաւային գաւառները, Երուանդունիք (Հայոց ձոր), Ոշտունիք (Գաւաշ–Կարճկան), Ջերմաձոր (Շատախ), Անձևացիք (Նորդուզ), Մոկք, Կորճայք և Խիզան մինչև Տիգրանակերտ։ Աղթամարայ վերջին Խաչատուր կաթողիկոսը մեռնելու ժամանակ, կտակած է գրեթէ 10, 000 րուբլիի գումար մը, Աղթամարայ մէջ կանոնաւոր ուսումնարան մը պահելու նպատակաւ։*

*Թ. Արծրունին կ՚ըսէ, թէ կղզին մշակուեցաւ պտղատու և անպտուղ ծառերով և գոյնզգոյն ծաղիկներով զարդարուեցաւ, որոնք կ՚ոռոգուէին ազբերակով մը։ Սակայն այժմ Աղթամարը տարբեր կերպով կը ներկայանայ ականատեսներու։ Վանքի պարսպէն դուրս կայ նորատունկ խաղողի որթատունկ մը և սակաւ ծառեր և ջրհոր մը որ կը մատակարարէ ամբողջ վանքի ջուրը։ Իսկ կղզւոյն արևմտեան ծայրը ձորակի մէջ, կայ փոքրիկ սիրուն անտառ մը, նուշի, պտղի, պղինջի, սոճի, և ընկոյզի ծառերով. բոլորովին ցածր ծովակի եզերքը, բարձրացած է երկայնահասակ և հաստաբոյն հնադարեան ընկուզի ծառ մը։ Անտառի մէջ և կղզւոյ շուրջը կան զանազան թռչուններ, ինչպէս արագիլ, աղաւնի, ծիծեռնակ, խէծխէծ, ձըկնկուլ, վայրի բադ, արօրիկ, եւ ագռաւներ։ Աղթամարայ ամենաբարձր կատարը, որ անտառի ճիշդ արևելեան կողմը, կը բարձրանայ, կը կոչուի Բարձր–քար, սև ժայռէ, երկճիւղ գագաթով հրուանդան մի է, հիմքը ծովակի անդնդոց մէջ հաստատուած։ Կղզւոյս հարաւային ծայրը քարակտուր ժայռ*

մէկ մասը երկար ժամանակի մէջ, անընդհատ ծովակի ջուրց բախմամբ զատուեր է ցամաքէն և ձևացեր մի փոքրիկ կղզեակ, այնպէս որ ջրերը ցածնալու պահուն ցամաքն կ'երևի և առանց նաւակի ալ կ'երթցուի այդ կղզեակը։ Այդտեղ քարաժայռի վրայ դեռ կ'երևին հինաւուրց ամրոցի մը աւերակ մնացորդք. անդ է նաև Արծրունի Թամար թագուհւոյ աղօթատեղին, և յիշատակաց արժանի պատմաբան Ցովհաննէս Դրասխանակերտցւոյ շիրիմը։ Արծրունեաց ճոխութեան ժամանակ երբ քաղաքի կերպարանք ունէր Աղթամար, իր մէջ կային տասնեակ մը եկեղեցիներ և մատուռներ, յորոց միայն տակաւին մի քանին ամայի և անշէն։ Եկեղեցւոյս մէջ իբրև հնութիւն նշանաւոր է, Ս. Խաչի տաճարի բակը գրուած գործագոյն և երկանաքարի ձևով տաշուած, երկու ոտք տրամագծով և մէկ ոտք բարձրութեամբ վէմ մը, որոյ երկու երեսներն ծածկուած են բեւեռաձեւ արձանագրութեամբք (Թ. 52)։ Պ. Կ. Ց. Պասմաճեանի մեկնութենէն կ'երևի որ Մենուաշէն շինուած ջրմուղի մը յիշատակարանն է, և հաւանական է որ Գագկայ Արծրունւոյ ժամանակ շինութեանց քարերու հետ բերուած ըլլայ ի կղզին, և այժմեան կլոր ձեւն ալ վերջը տրուած կը թուի։ Արձանագրութիւնս օրինակած և հրատարակած են Շուլց (Թ. Ի և ԻԱ) և Հ. Ներսէս (Թ. Ը և Է)։ Նոյնը օրինակած են նաև Լէյէրտ և Տէյրօլ. Մորտման հրատարակեց և մեկնեց (Թ. Թ և Ժ), մեկնեց նաև Սէյս։ Աղթամար ունի նաև իւր դրուի տուշմը, այսպէս կը կոչուի իր հարաւակողմը դիմացը ցամաքի վրայ, Ախավանքի մէջ կառուցուած տուն մը, որոյ մէջ են վանքի ամբարանոցներն, ախոռները, մըշակաց և հովիւներու բնակարանները. այդտեղ կան նաև կաթողիկոսի համար յատուկ շինուած քանի մը սենեակներ։ Ամէն տարի անպակաս են Աղթամարայ ուխտաւորները։ — *Journal Asiatique*, N°.



51 · Աղթամարի վանքը։

52, 313։ Տեղագրութիւնք 175–178։ Ստ. Հին Հայ. 172–178։ Նոր Հայ. 151–2։ Պտկ. Նոր Հայ. 52–53։ Արարատ, 1897, 51–61. 1898, 69–79։ Կայծեր, Բ. 570–590։ Եւ այլն։

ԱՂԹԱՄԱՐԱՑ ԾՈՎ. Տես ՎԱՆԱՑ ԾՈՎ։

ԱՂԹԱՆՑ – ՓՈՍ. — *Գուգարաց աշխարհի մէջ, Հաղբատայ հռչակաւոր վանքի մօտ արեւելեան կողմն կը գտնուի այս տեղս, որուն համար աւանդապահ ծերունիք կը պատմեն, թէ ԺԳ դարու սկիզբը Ասիոյ մեծ բռնակալն Լանկ–Թամուր շատ աշխարհներ աւերելէ վերջ մտաւ ի Հայաստան և շատ արիւնահեղութիւններ ընելով քեանս մահուան պատրաստելով՝ և ուզելով միայն զինուորութեամբ պահել կենսատու սուրբ խաչն, զայն բռնած Թափորով ելան բռնակալին դիմացը, որպէս զի համոզեն զինքը և իւր գթութիւնը խնդրեն: Լանկ–Թամուր, այս Թափորն տեսնելով և զարհուրելով սուրբ Նշանի աններեւոյթ հրաշքէն, ճիշդ այս Աղթանց–փոս տեղէն աճապարելով բոլոր զօր-*

Թ. Ի.

Թ. ԻԱ.



52. *Աղթամարայ բեւեռաձեւ արձանագրութիւնը ըստ Շուլցի:*

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆՈՑՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՍՏ Գ. Կ. Ց. ՊԱՍՄԱՃԵԱՆԻ

Թ. Ի. «... *Ախիունեիկաշ քաղաքն... Երինուիշի երկիրն... Մենուաշին մայրաքաղաքին մէջ... մեկնեցայ քաղաքէն?... Այիդուշի երկիրն... արձանագրութիւնն... Ջրմուղն շինեցի... զօրութեամբ եղած... այս Ջրմուղն շինեցի... Մենուաշ ես...*»:

Թ. ԻԱ. «*Խաղտեաց իշխանք, այս արձանագրութիւնն՝ Իշպուինեան Մենուաշը փորել տուաւ: Խաղտեան աստուածոց զօրութեամբն Մենուաշն Իշպուինեան.. ...*»:

*կործանեց բազմաթիւ քաղաքներ և գիւղեր, և ետքը հասաւ Լոռնային ճանապարհով մինչև Հաղբատայ սահմանը Խաչի–Դուռ կոչուած գիւղը, և անկէց ալ դիմելով Հաղբատայ վանքի վրայ, ետքը հասաւ մինչև* Աղթանց–Փոս *ըսուած տեղը: Հաղբատայ բոլոր բնակիչք և վանքի կուսակրօն միաբանք, աղօթելով առ Աստուած, և զին- քերով սկսաւ փախչիլ: Այն օրէն մնացեր է տեղւոյս անունը* Աղթանց–փոս, *այսինքն յաղթանաց կամ յաղթութեանց փոս: — Տեղ. Հաղբատայ, 98:*

ԱՂԻ, ԱՑԼԻ *կամ* ԿՈԽՈԽՃԱՆ. — *Պարսկահայոց հին գաւառներէն մին է, զոր յիշէ Խորենացին: Թովմա Արծրունին ալ կը յիշէ գաւառս (292). «Գուրգէն ելեալ զհետ նորա*

հազար արամբք, վառեալ ի զէն և յառապազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ»։ Ստ. Հին Հայ. 152։

— Այս անուամբ գիւղ մը կը յիշէ Թովմա Մեծոբեցին յԱրճէշ (47). «Զաղաթա պարոն մի ի Բերդէն Բանենու եկն 400 մարդով ի գիւղն Աղի»։ Ուրիշ տեղ մ'ալ (92–93) կը յիշէ թէ քանի հոգի գերի տարաւ նոյն Զաղաթան «եւ 27 գերի ի գեղջէն Աղոյ»։ Զաղաթայի աւարառութեանց և գերեվարութեանց ժամանակ կը յիշուի «Գորգի մելիքն Աղոյ տանուտէրն». որ ուրիշ Արծկէի և Արճիշոյ տանուտերաց հետ գնաց առ բռնաւոր Սքանդարն, անոր բարկութիւնը շիջուցանելու համար։

ԱՂԻ ԾՈՎ. Տես ՎԱՆԱՅ ԾՈՎ։

ԱՂԻՆ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի Արեւելեան մասին մէջ, Գըրըգ—քիլիսէ լերանց մօտ, Ախուրեանի ձախ կողմը մէկ վերստ հեռու։ Գիւղիս անմիջապէս մերձաւոր սարը կը կոչուի Աղինի սար։ Բնակիչք ամբողջ Հայ 108 տուն, գաղթած են Կարսի, Ալաշկերտի, Խնուսի և Սեբաստիոյ կողմերէն։ Եկեղեցին նուիրուած է Ս. Յակոբայ, խիստ հին, խարխուլ և վտանգաւոր վիճակի մէջ։

ԱՂԻՈՎԻՏ, ԱՂԻՈՑՈՎԻՏ կամ ԱՂՈՀՈՎԻՏ. — Հին գաւառ Տուրուբերանի, որ կը համապատասխանէ այժմեան Սարըստ և Բաղնոց վիճակաց։ Գաւառիս մէջ Արշակունեաց հարստութեան ժամանակ կը բնակէին արքայազունք. Խորենացին կը գրէ Արտաւազդայ համար, թէ «Ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառին Աղիովտի և Առբերանոյ թողլով ի նոսա զմասն արքունի՝ որ ի շէնս այնմ գաւառաց»։ Արտաւազդ Բ և հալածեց և այս գաւառի մէջ բնակեցուց արքայորդիքը. «Հալածէ յԱյրարատայ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտոյ և Առբերանոյ, ...». նոյնպէս կ'ընէ նաև Տիրան։ Վարդանայ հետեւեալ խօսքերէն կ'երեւի, թէ Աղիովիտ ժամանակ մը սեպհական գաւառ է եղեր Գնունեաց. «Առ սա (այսինքն առ Աշոտ Բագրատունի Մսակեր) բողոք կալեալ ազգին Գնունեաց՝ թափել զնոսա յիսմայելացւոց, որոյ երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազգն ախին իւրեանց, տանի բնակեցուցանէ ի Տայս»։ Գաւառիս մէջ էր հին նշանաւոր Զարիշատ քաղաքը։ Այս անուամբ, կամ Աղաւխս և Աղովիտ անուամբ գաւառ մ'ալ կը յիշուի Վասպուրականի մէջ, սակայն ինչ որ կ'երեւի, նոյն այս Տուրուբերանի գաւառն է, որ սահմանակից լինելով Վասպուրականի, երբեմն յատկացուած է անոր։ — Խոր. պատմ. Բ. ԻԲ, ԿԱ, ԿԲ, ԼՆ։ Վարդան, 32, 77։ Ստ. Հին Հայ. 124–128. Հնախօս. Հայ. Բ. 303–4։

ԱՂԻՈՐՍՔ. — Հետեւեալ տողից մէջ իբրև քաղաք Ապահունեաց կը յիշէ Բուզանդ (51). «Այլ յերկրին Ապահունեաց, յոտին մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսասցուք. տեղւոյն՝ որում անուն կոչի Աղիորսք»։ Աստ յիշուած Մասիսն չէ Այրարատայ միջինը, այլ լինելու է Վանայ ծովակի հիւսիսային կողմը բարձրացող Սիփան—Մասիք մեծ և գեղեցիկ լեռը։

ԱՂԻՍ. Տես ԱՂՑՔ։

ԱՂԻՏՈՒ կամ ԱՂՈՒՏԻ. — Հին գիւղ Հայոց, Սիւնեաց Ծղուկ (Սիսիան) գաւառի, Ործի և Որոտնայ վանքի մէջտեղ, Բարկուշատի ձորոյն ձախ լանջի վրայ։ Գիւղս զարդարուած է ծառերով. բնակիչք այժմ բոլոր Թաթարք են 1162 հոգի։ Տակաւին Աղուտիի կեդրոնը կ'երեւին հին եկեղեցւոյ մը աւերակները, որոց մօտ գերեզմանատան մէջ կան հայկական արձանագրութեամբք տապանաքարեր։ Ստեփ. Օրբէլեան (Գլ. ԺԱ) կը պատմէ Սիւնեաց նախապահութեան համար, թէ «Ընդ Ործ և Աղիտու սաստիկ հակառակութիւն եղեւ. իսկ հնագխակք Աղիտուացեաց զՈրծնեցեացն հաստատեցին ի վրաց աշխարհէն լինել պանդուխտ և նժդեհ յամենայն Սիւնեաց։ Եւ դարձեալ՝ Շաքւոյ և Աղիտուայ հրամայեցաւ զկնի Շաղատայ զնախադասութեան ունել զվեհագոյնն զերկրորդականն պատիւ»։

ԱՂԻԽՆ. Տես ԱՌԻԽԾ։

ԱՂԻԽՍՈՅ ԱԳԱՐԱԿ. — Բարձր Հայոց Մանանաղի գաւառի մէջ գիւղ մ'էր, զոր կաշէ գիւղին հետ յիշէ Լաստիվերացի (Գլ. ԻԳ) իբրև կալուած երկու Թոնդրակեցւոց

*աղանդոյն հետեւող կանանց ։ Այս երկու գիւղերու բոլոր բնակիչները միաբանեցան այդ կանանց աղանդոյն ։*

ԱՂԼԱԽԱՆ. — *Լեռ Գուգարաց Տաշիր գաւառի արեւմտեան ծայրը և Ալոց լերանց հարաւակողմը. բարձր 9400 ոտք։*

ԱՂԿԷՕԼ. — *Վասպուրականի Երուանդունիք գաւառի վերին Խօշապ միճակի մէջ՝ Սալախանա գիւղի արեւմտակողմը, Հայոց գիւղ մ'է, որ 95 տարիներէ ի վեր ամայացած է և որոյ աւերակաց վրայ կը տիրապետեն այժմ քանի մը տուն Քրդեր։*

*Գիւղիս անունն ծագած է իր համանուն լճակէն Աղի լճակ , որ բաւական ընդարձակ է. հովիւք երբեմն այն լճակէ, իբրև աղի ջրէ, կը խմցնեն իրենց ոչխարաց։ Վանայ ծովակի նման այս լճակէս ալ կարելի է աղ ստանալ, եթէ իր եզերաց վրայ շինուին բորակի ածուներ։*

ԱՂԿԻ. — *Փոքրիկ գիւղ Թրքաց, Բարձր Հայոց Եկեղեաց գաւառի արեւմտակողմը. Հայոց Կարմրի գիւղի մօտ։*

ԱՂԿՈՒՆԾ *կամ* ԱՂԿՈՒՆՁ. — *Գիւղս յիշուի Այրարատայ Արագածոտն գաւառի (Կարբի Պասար) Սաղմոսավանից արձանագրութեան մը մէջ։*

ԱՂՁՆ. *Տես* ԱՐՁՆ,

ԱՂՁՆԻՔ. Գ.գ. AGHTZNIK. — *Մեծ Հայոց տասն և հինգ նահանգներէն երրորդն, որ կը կոչուի նաև երբեմն* Արձն՝ *իր առաջին և նշանաւոր գաւառին անուամբ։ Օտարազգի մատենագիրներէն՝ ի հնումն նահանգս կոչուած է* Արքսանի *կամ* Արզանինի, *երբեմն ալ կը կոչուի* Կողմն Ասորեստանի։ *Հետեւեալ տողից մէջ այսպէս կը կոչէ Խորենացին (Գ. Զ և Է) Աղձնեաց Բակուր բդեշխին երկիրը. «Առաքեաց զՄանաճիհր հարաւային զօրօք, և զկիլիկեցի զօրս ընդ նմա* զԿողմամբ Ասորեստանի... *ճակատս տուեալ ընդ Բակուր բդեշխին՝ սատակէ զնա և զզօրս նորա»։ Յայտնի է թէ պատերազմը Ասորեստանի մէջ չեղաւ, այլ Աղձնեաց աշխարհը, վասն զի Բակուր հոն տիրապետած էր։ Ուրիշ տեղ մ'ալ (Ա. ԻԳ), Աղձնեաց Սասուն գաւառի մէջ գտնուող Սիմ լերան համար կ'ըսէ, թէ կը գտնուի Ասորեստանի կողմերը։ Աշխարհագրոս ալ (650) Աղձնեաց բդեշխը կամ սահմանակալը այս անուամբ կը կոչէ «...անոյր ընդ իւր (Տրդատ)... զչորեսին զահերէցն իւրոյ տաճարին, որ Բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, երկրորդ սահմանակալն՝* յԱսորեստանեայց կողմանէն»։ *Այսպէս կոչուեցաւ անշուշտ Ասորեստանի սահմանակից ըլլալուն համար և կամ Ասորեստանեայց Սենեքերիմ թագաւորին Սանասար որդւոյն հոս բնակելուն և հոս բազմանալուն համար, որոնք անշուշտ կը պահէին նաև իրենց յատուկ լեզուն և սովորոյթքն։*

*Նահանգս կ'իյնայ Հայաստանի արեւմտեան հարաւակողմը, Չորրորդ Հայոց, Տուրուբերան և Մոկք նահանգաց և Ասորեստանի միջավայրը ։ Տիգրիսն կ'անցնի իւր միջէն, ունի նաև Թուխ գետը որ կը թափի Բզնունեաց ծովը, և ուրիշ վտակներ ։ Լեռներէն գլխաւորները կը յիշուին Սիմ, Տօրոս, Խոյթ, Անդովկ, Խուշփ, Տարքուշ։*

*Աղձնիք ըստ հին աշխարհագրական բաժանման ունի հետեւեալ տասն գաւառները, որոց դիմաց չափաւոր ստուգութեամբ, կը դնենք այժմեան նոր գաւառները կամ վիճակները։*

### ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՂՁՆԵԱՑ

| ՀԻՆ ԳԱՒԱՌՔ | ՆՈՐ ՎԻՃԱԿՔ |
|---|---|
| Ա. ԱՐՁՆ ԿԱՄ ԱՐԶՆ | ԽԱՐԶԱՆ |
| Բ. ՆՓՐԿԵՐՏ | ՄԻԱՖԱՐՂԻՆ |
| Գ. ՔԵՂ | ԽԱՐԶԱՆ. ԽԶՈՒ |
| Դ. ԿԵԹԻԿ | ՏԻԱՐՊԷՔԻՐ ? |
| Ե. ՏԱՏԻԿ | ՏԱՏԻԿ |
| Զ. ԱԶՆՈՒԱԶՈՐ | ԿԻՒԶԷԼՏԷՐԷ |
| Է. ԽԵՐՀԵԹՔ (ՍԵՐԽԵԹՔ) | ՍՂԵՐԴ |
| Ը. ԳԶԵՂ | ԽԻԶԱՆ |
| Թ. ՍԱԼՆԱԶՈՐ | ԲԱՂԷՇ |
| Ժ. ՍԱՍՈՒՆՔ | ՍԱՍՈՒՆ |

*Աղձնեաց մօտերը կամ մէջը կը յիշուի Երկարաճանք կոչուած բլուրը, և Երկարաճառաց ձոր. Բուզանդ (Գ. Ժ) կ'անուանէ «...Լեառն Երկարաճառաց և Կաղապաճառաց»։ Այս երկաթահանքը սահմանակից էր Վասպուրականի Ռշտունեաց գաւառի։ Խորենացին նահանգիս բերդաց մէջ կը յիշէ Երկաթ, զոր անշուշտ կը հանէին վերոյիշեալ լեռնէն։ Բերքերէն կը յիշուին նաև նաւթ և*

 ԱՂՁՆԻՔ

գղթոր. իսկ Թաչնոց մէջէն Դեղակ կամ Դեղհակ։

Ըստ Խորենացւոյ (Ա. ԻԳ) Թէպէտ այս նահանգը նախ մեր Սկայորդի նահապետը տուաւ Սենեքերիմայ Սանասար որդւոյն, որոյ յաջորդք բազմանալով «լցին զՍիմն անուանեալ լեառն», բայց վերջը, ինչպէս կը պատմէ Թ. Արծրունին (55), Մեծն Տիգրան ժառանգութիւն տուաւ Արծրունեաց տոհմին։ Վաղարշակ Ա հոս բդեշխութիւն հաստատեց, որուն համար Խորենացին (Գ. Ը) հետեւեալը կը գրէ, նշանակելով նաև անոր սահմանը. «Եւ զՃարաշան ի տանէ Սանասարայ հաստատէ բդեշխ մեծ և կուսակալ յարեւմտից հարաւոյ, յեզեր սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, զաւառս պարգեւելով զԱրձն, որ շուրջ զնովաւ, և զլեառն Տօրոս և զՍիմ, և զԿղեսուրն ամենայն»։ Տրդատ Թագաւորը Աղձնեաց բդեշխը իրեն ութ իշխաններէն մին ըրաւ, որոնք 400 իշխանաց գլուխ էին։ Մեր պատմիչներէն զանազան տիտղոսներով կը կոչուի նահանգիս իշխանը, ինչպէս Բդեշխ, Կուսակալ, Սահմանակալ, Մեծ Իշխան Աղձնեաց, Գահերէց կամ Բարձերէց արքունի տաճարին. կոչուած է նաև Բդեշխ մեծ և անգամ մ'ալ ի Բիւզանդայ Թագաւոր։ Այս երեւելի բդեշխութիւնս Դ-րդ դարուն մէջ մեզմէ ապստամբեցաւ, կամ ըստ Բուզանդայ (Գ. Թ) «Հատաւ յերկրէն իշխանութեան Հայոց», որուն պատճառը կը դնէ Խորենացին (Գ. Դ) այսպէս. «Բանզի ի վախճանել երանելւոյն Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր՝ որ բդեշխն Աղձնեաց անուանէր՝ տեսեալ զՍանատրուկ Թագաւորեալ ի Փայտակարան, զնոյն և ինքն խորհեցաւ, թէպէտ ոչ Թագաւորել՝ զի ոչ էր Արշակունի, այլ տիրագլուխ կամեցաւ լինել. ճեղքեալ ի միաբանութենէ Հայոց՝ ձեռն ետ յՈրմիզդ Պարսից արքայն»։ Նոյն ժամանակ Խոսրով Բ Հայոց Թագաւորը, բազմաթիւ զօրքերով պատերազմի ղրկեց Կորդուաց, Ծոփաց, Սիւնեաց, Հաշտենից և Բասենոյ իշխանները, որք արշաւելով Աղձնեաց աշխարհի վրայ «... առ հասարակ ընդ սուր հանին զամենայն, և սպանին զբդեաշխն, եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ»։ Այնուհետեւ Վաղինակ Սիւնին դրուեցաւ բդեշխ նահանգիս, բայց քիչ վերջը Խեշա Բակուրի որդին, որ կոտորածէն զերծած փախած էր Հայոց Վաչէ զօրավարի քով, տիրեց իւր հայրենի ժառանգութեան և այսպէս զատուած մնաց Աղձնիք Հայոց տէրութենէն։ Խոսրով Բ այս բաժանման վրայ ալ փոյթ չըրաւ, որուն համար Խորենացին կ'ըսէ. «Այլ և ոչ վասն հատուածելոյ կողմանց (Փայտակարանի և Աղձնեաց) հակառակեցաւ ինչ յետ միոյ նուագի, զոր ի յունականացն կրեցին զօրաց. այլ ի կամս Թողեալ զարքայն Պարսից՝ խաղաղութիւն ընդ նմա առնէ, բաւական համարեալ՝ մնացելոց սահմանացն տիրել»։ Խոսրով Բի յաջորդ Բ Տիրանայ ժամանակ, Բուզանդայ խօսքերէն (Գ. ԺԴ) կը Թուի, Թէ դարձեալ Հայոց իշխանութեան տակ անցաւ, վասն զի կ'ըսէ. «... ածին առ Թագաւորն Տիրան, ի գաւառն Աղձնեաց ի Բնաւէջ յաւանն»։ Նոյնպէս Հայոց իշխանութեան տակ էր Տիրանայ յաջորդ Արշակ Բի ժամանակ, վասն զի նոյն ինքն Բուզանդ (Գ. Ի) կը գրէ Արշակայ համար. «Զուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն»։ Սոյն այս Արշակ Թագաւորի ժամանակ նորէն ապստամբեցաւ նահանգս. «Եւ զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջի արքային Պարսից Շապհոյ, և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչեն. զրունս դնէին, և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց»։ Բուզանդ, Գ. Ն։ Պապ Թագաւորին Մուշեղ սպարապետը, վերստին տիրելով Աղձնեաց, հարկատու ըրաւ։ Բուզանդ, Ե. ԺԶ։

Այսպէս սակ սակ պատահած ապստամբութեանց պատճառաւ է՝ որ Աղձնիք օտարազգի մատենագիրներէն մասն չի համարուիր մեր աշխարհի. Եղիշէի գրոց մէջ անգամ (18) օտար աշխարհաց հետ կը յիշատակուի, իբրև զատուած առանձին երկիր մը. «Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱղուանից և ի Լփնաց, ի Ծօդէից և ի Կորդուաց, յԱղձնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց....»։ Նահանգիս առան-

ձին եպիսկոպոս կը յիշուի Ըրդ գաւառ մէջ Սիոն անուամբ մէկը, որ վերջը կաթողիկոս եղաւ։ — Սո. Հին Հայ, 62–87։ Հնախ. Հայ. Բ. 130. և ն։

ԱՂՃԱՄԵԼԻՔ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Հարք (Խնուս) գաւառի մէջ. բն. 350։

ԱՂՃԱՆ. — Գիւղ Հայոց Տուրուբերանի (Տարօն), Մշոյ դաշտի մէջ, գրեթէ 1000 բնակիչ ունի, յորոց ոչինչ թիւ մը Քուրդք են։

ԱՂՃԱՎԷՐԱՆ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց, Վանայ մօտ։

ԱՂՃԱՔԷՆՏ. — Այս անուամբ կրկին Հայոց գիւղեր կան Գանձակի մէջ։ Վերին Աղճաքէնտ ունի 1017 բնակիչ, բաժնուած 108 տան։ Ստորին Աղճաքէնտ ունի 942 բն. բաժնուած 117 տան։ Երզնկա ևս ունի նոյնանուն փոքրիկ գիւղ մը։

ԱՂՄԷՋՐԷ. — Գիւղ Հայոց Ջարասանճակի, բն. 30 տուն. ունին Քառասուն Մանկանց եկեղեցի մը։

ԱՂՄՂՈՒՍ կամ ՅԱՂՄՂՈՒՍ. — Գիւղ Մոկաց (Վան), ունի քարուկիր Ս. Աստուածածնի եկեղեցի մը. բնակիչք սակաւաթիւ են։

ԱՂՆԱԹԱՍ. Տես ԲԱՂՔ։

ԱՂՆՃՈՑ ԲԵՐԴ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՂՈՊԷՆ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, կը յիշուի Սիւնեաց եկեղեցւոյ հարկատուաց ցուցակի մէջ։ Հ. Ալիշան, Զորակ Աղոպէնայ կ'անուանէ նոյն գաւառի մէջ գտնուող Եղեգնա գետակի հովիտը։

ԱՂՈՋՐԻԿ. Տես ՀԱԲԱՆԴ։

ԱՂՈՎԻՏ. Տես ԱՂԽՈՎԻՏ։

ԱՂՈՐԻ կամ ԱՂՕՐԻ. — Իբրեւ աշխարհ և գաւառ կը յիշուի Լաստիվերացիէն (4, 82). «Թագաւորն (Վասիլ կայսր) անցեալ յաշխարհն Աղօրի՝ մերձ յամուրն որ Հաշամիջն կոչի, երեկօթս առնէ»։ Դարձեալ Լիպարտի խանէ որդւոյն համար կ'ըսէ. «Որում տուեալ էին ի պարգեւի տեղիս բնակութեան զմեծ աւանն Երիզայ ի գաւառն Հաշտենից, և որ շուրջ զնովաւ գաւառակերաք, սա իբրև լուաւ զայն՝ թէ թագաւորութիւնն (Յունաց) յերկուս բաժանեալ է, գնաց և խարանօք էառ զամուրն Եղանց բերդ կոչեցեալ, և արարեալ զայն ընդ իւրով ձեռամբ, դառնայ անդրէն ի գաւառն Աղօրի և յամուրն որ կոչի Հաւաձիչ,...»։

ԱՂՈՐԻԿ. Տես ԱԿՆ։

ԱՂՈՒ. — Յիշուի լեռ Տուրուբերանի Աղխովիտ գաւառի մէջ, Արճիշու մօտ։ Տես ՃԱՀՈՒԿ

ԱՂՈՒԱՆԴՈՒՈՏ կամ ԱՂԱՆԴՈՒՈՏ. — Վասպուրականի հին գաւառներէն մին։

ԱՂՈՒԱՆԻՑ ԲԵՐԴ. — Տուրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ կը յիշէ զայս Թովմա Մեծոփեցին հետեւեալ տողերով (83). «Իսկ Սքանդար որ նստաւ թագաւոր ի Թավրէզ շահստանին յ874 թուականին՝ եկեալ զօրօք իւրովք ի վերայ Խլաթայ, և առեալ զերկիրն զամենայն՝ նստաւ ի վերայ բերդին Աղուանից։.... սուր եդեալ ի վերայ քրիստոնէիցն՝ 150 ոգի սպանին ի ժողովրդեանէն որ անդ կային և 60 հոգի.. գերեալ եաուն ի Ծղակայ և յԱղուանից,..»։

ԱՂՈՒԱՆՔ, ԱՂԲԱՆԻԱ կամ ԱՇԽԱՐՀ ԱՌԱՆԱՅ. — Քաղաքական տեսակէտով յետ Հայոց և Վրաց երրորդ անուանի ազգն և աշխարհն է, որոյ սկզբնական պատմութիւնն թաղուած է խորին մթութեան մէջ։ Մեր աշխարհի սահմանակից լինելով, մեր պատմութեան մէջ աւելի ծանօթ է, և երբեմն իւր սահմանաց ընդարձակած ժամանակ, մեր Ուտի և Արցախ նահանգներն իւր մասն կազմած ըլլալնուն, աւելի շփումն և առնչութիւն ունեցած է Հայոց հետ, այդ պատճառաւ կարեւոր կը համարիմք, իր նկատմամբ ցարդ ծանօթ տեղեկութիւնք համառօտիւ ամփոփել աստ։ Իւր վերջին սահմանքն համարուած են Ար.էն կասպից ծովը, Հս.էն Դարբանդէն մինչև Ալազան երկընցած հին պարիսպը, Արմ.էն Ալազան և Խրամ գետակները և Հր.էն կայենի լեռները, ամբողջ Գարդման, Գանձակ և Արցախ և Երասխի ձախ ափերն։ Այս սահմանաց մէջ տարածուած երկիրը մեր մատենագիրներէն կոչուած է Աղուանք կամ Աշխարհ Առանայ, ի Վրաց՝ Ռանի, Յոյներէն՝ Ալպանիա, Պարսիկներէն՝ Առան կամ Առանշահ, Արաբներէն՝ Ռան և յԵւրոպացւոց Ալբանիա։ Երկիրը ընդհանրապէս լեռնային է, Կովկաս լերանց շղթաներն տարածուած են իւր մէջ ձեւացնելով բազմաթիւ սարաւանդներ, ան-

գընդախոր ձորեր և ձորակներ. Կովկասէն վերջ նշանաւոր բարձրութիւնք ունի Արցախի լեռնաշղթան, որոյ բարձրագոյն գագաթներն են Մռաւ, Արուշբուշն, Քիրս, Դիզափայտ, են։ Լեռնաշղթայէս երկնցած են բազմաճիւղ լեռնազօտիներ Արցախի, Գանձակի և Գարդմանի գաւառի կողմերն, որք տեղ տեղ կը կազմեն աճարկու վիհեր, սարսափելի կիրճեր, զարհուրելի անցքեր, օձապտոյտ ձորակներ, լերկ ապառաժներ հազար ու մէկ տեսակ ձևերով։ Այս կրկին անուանի և բարձրակատար լեռնաշղթաներէ զատ կան նաև ուրիշ փոքր լեռնազօտիներ։ Գետերէն ամենամեծն է Կուր՝ որ աջ կողմէն կ՚ընդունի Խրամ, Զորագետ, Աղստեւ, Հասան, Տաւուշ, Զակամ, Շամքոր, Բանանց, Գանձակ, Կուրակ, Սեւ (Կարա-չայ), Տրտու (Թարթար), Խաչէն և Գարգար գետակները. իսկ ձախ կողմէն՝ Ալազան, Կախաւան, Արչկան, Դուրկան, Կոկիսոն (Կեօք-չայ)՝ Գարդման, Սպիտակ և Փիր-սամր գետակները։ Երկրորդ գետն է Երասխ՝ որ Կուրի հետ միանալով կը թափի Կասպից ծովը։ Կովկաս լերանց հիւսիսային և արեւելեան լանջերէն կը բղխեն և Գարբանդէն մինչև Բագու՝ կը թափին Կասպից ծովը հետեւեալ գետերը. Րուբաս, փոքր Սամուր, Մեծ Սամուր, Գուսար, Ղուբա, Աղ-չայ, Ղարա-չայ, Զաղանուղ, Վալվալա, Շաբրան, Գուշչի, Կիլճին, Արա, Արրար, Սուղայիդ։

Գլխաւոր դաշտերն կը կոչուին Գարգարացւոց կամ Արցախի դաշտ, Աղուանից դաշտ, Վատնեան դաշտ և Զարդուշի դաշտ. կան նաև դաշտակներ, յորոց նշանաւորն է Սարուշա կոչուածն։ Աղուանք նշանաւոր է իւր անտառներով որք տարածուած են Արցախի, Գանձակի, Գարդմանի, Ղազախի և Սևորդեաց մեծ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերու վրայ. նոյնպէս ընդհանրապէս Կովկասեան մեծ լեռնաշղթան սառցաններէն մինչև կէսն ծածկուած է անտառներով, կան նաև անտառներ Կուր գետի աջ և ձախ ափանց վրայ։ Այս անտառաց մէջ կան կաղնի, ընկուզի, հաճարի, թեղի, լայնատերեւի, տխկի, կաղնենի, հացի, բոխի, ճգանի, լորենի, ողնի, կեչի, գենի (գիհի), ցրդնի, մայր ճռ-տանձի, ճռ-խնձորի, մոխրի տանձի, տկողնի (արքայակաղնի), գկոի (զղեարի), ծաի տանձի, սալորի, լկրթնի, թքենի, և այլ տեսակ ծառեր։ Վերոյիշեալ անտառաց մէջ առատ են որսալու կենդանիներ, ինչպէս են քօշ, եղջերու, եղնորթ, կինճ. մացառուտներու մէջ՝ նապաստակ, փասեան, կաքաւ, սալամ, մոշահաւ, և դաշտաց մէջ՝ այծեամն, կատակ հաւ, լորամարգի, հաւփալ, աղաւնի և տատրակ։ Գազաններէն և գիշակեր թռչուններէն կան առիւծ, վագր, յովազ, ինձ, արջ, գայլ, լուսեամն, աքիս, աղուէս, չաղալ, սեւականջ, արծիւ, անգղ, գառնաբարձ, լաչին, բազէ, ուրուր, ցին, հողմահար, ճայ, ձկնկուլ, ղուշ, բու, ագռաւ, կաչաղակ, են։ Ընտանի կենդանիներէն կան գոմէշ, եզն, կով, ուղտ, ոչխար, այծ, ձի, ջորի, աւանակ։ Ունի ակւոյ, արծաթի, կապարի, պղնձի և ծծմբոյ հանքեր, յստանաքարեր, քարահանքեր, աղահանքեր և ծծմբային ջերմուկներ։ Գլխաւորաբար Աղուանից մէջ սար տեղ կը յիշուին նաւթի աղբիւրներ. ամենէն նշանաւորն է Բագուի հիւսիսային կողմը Բալախանի կոչուած տեղւոյ նաւթահորերը, ուսկից նաւթը կը հանեն շոգեշարժ մեքենաներով։ Վաճառականութեան գլխաւոր նիւթերն են առատ ցորեն, գարի, լուբիա, բակլայ, սոխ, սխտոր, գետնախնձոր, ստեպղին, բողկ, ճակնդեղ, տանձ, խնձոր, չիր, դեղձ, թուզ, խաղող, գինի, օղի, սերկեւիլ, նուռն, զղեար, ընկոյզ, արքայակաղին, շագանակ, խունկ, վարունգ, սեխ, ձմերուկ, մեղր, ձուկն, ձկնահաւկիթ, ձկնապուխտ, սումաղ, կով, եզն, գոմէշ, ոչխար, այծ, ձի, ջորի, ուղտ, բոժոժ, մետաքս, բամբակ, բուրդ, ընկուզի կոճղ, կաշիներ, մորթեր և շատ նաւթ։

Աշխարհիս աշխարհագրական դրից և բերոց փոքր ի շատէ ծանօթանալէ վերջ, ակնարկ մ՚ալ տանք, իր պատմութեան և բնակչաց վրայ։ Աղուանից ազգը ծագած կը համարուի մեր Հայկազն Սիսակ նահապետէն, որ իւր հօր Գեղամայ երկիրները ժառանգելէն և իւր անուամբ այն աշխարհը Սիսական կամ Սիւնիք կոչելէ վերջ, ընդարձակեց իւր երկիրն մինչև Հունարակերտ քաղաքը։ Սիսակ իւր քաղցր և անուշ բնաւորութեան

*համար կը կոչուէր նաև* Աղու, *և կը կարծուի թէ այդ պատճառաւ իւր տիրած աշխարհի այս մասն կոչուած ըլլայ* Աղուանք։ *Նահապետիս սերունդք բազմանալով և լեցուելով Կուրայ և Սևանայ միջատեղ եղած տարածութեան վրայ, յետոյ դեռ ընդարձակեցին իրենց երկիրը, տիրելով սահմանակից Մովկանայ և Հերայ երկիրներուն։*

*Մօտաւորապէս 1828 տարի Քրիստոսէ առաջ՝ Հայկազն Արամ նահապետը կը նուաճէ արևելեան կողմերը, ուր էր նաև Աղուանից երկիրը, և նուաճուած ցեղերու վրայ իշխաններ կը կարգէ Սիսական ցեղէն (Խոր. պատմ. Ա. ԻԴ.)։ Վեցերորդ դարու մէջ, նոյնպէս Քրիստոսէ առաջ, Տիգրան Ա Հայկազնեան, Մարաց Աժդահակայ դէմ պատերազմելու համար իւր զօրաց հետ կը տանի նաև Վրաց և Աղուանից ընտիր զօրքերը։ Ասոր կը հետևի, թէ Աղուանք հպատակ էին Հայոց Արամի օրէն, և թէ ունէին ընտիր, կտրիճ զօրքեր։ Վաղարշակ թագաւորը Սիսակայ ցեղէն քաջ և անուանի Առանը կը կարգէ կուսակալ Աղուանից։ Կաղանկատուացին այս նկատմամբ ընդարձակելով Խորենացւոյ խօսքերը կը գրէ (5—7). «Վաղարշակ արքայ Հայոց, որ ի կարգել իւրում զհիւսիսայինսն՝ կոչեաց զմայրենի եկամուտ ազգս (Կազրք, Լփնիք, Ճիղբք, Մազքութք), որ ի դաշտէն հիւսիսոյ կամ որ զատորոտով Կովկասու, կամ որ ի հովիտս և ի խորաձորս զհարաւով մինչև ցմուտս դաշտին։ Պատուէր առնէր՝ զաւազակութիւն և զմարդադաւութիւն թողուլ և հարկաց արքունի հնազանդ կալ։ Ապա կարգեաց նոցա առաջնորդս և վերակացուս, յորոց գլխաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յաբեթական ծննդոց կարգի հրամանաւ Վաղարշակայ՝ Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից»։ Նոյն պատմիչը խօսքը առաջ տանելով, Սիսակայ յատուկ Աղու մակդիրը, կը յատկացնէ Առանայ. ընդհակառակն Առանայ իշխանութեան ժամանակ Աղուանքը կոչուեցաւ* Առան կամ աշխարհ Առանայ։ *Մեր միջին Տիգրանայ նիզակակից էր Աղուանից Վարազ անուն իշխանը, որ էր անշուշտ Առանայ սերունդներէն մին։ Հայոց նիզակակից եղան Աղուանք Արտաւազդ և Երուանդ թագաւորաց ժամանակ։ Տրդատ թագաւորի ժամանակ, Աղուանից Ուռնայր թագաւորը Հայաստան գալով կը մկրտուի Սուրբ Լուսաւորչէն և բոլոր ազգն ալ իւր հետ կը դառնայ քրիստոնէութեան։ Բայց աշխարհիս քրիստոնէութեան առաջին քարոզիչ կը համարուի Թադէոս առաքելոյն աշակերտներէն մին Եղիշէ, որ նախ քարոզեց Ջողա մայրաքաղաքի մէջ, և յետոյ ի Սահառ և ապա Նուխիի մօտ գտնուած Գիս գիւղաւանը, ուր կառուցանելով Աղուանից առաջին եկեղեցին, մատոյց սուրբ Պատարագը։ Զարդունի դաշտէն անցած ժամանակ, ուր կուռքերու շատ զոհարաններ կային, հոն կապաշտներէն նահատակուեցաւ, և մարմինն ալ մահապարտներու գուբը նետուեցաւ, ուսկից շատ տարիներէ վերջը հրաշքով գտնուեցաւ։ Վաչէ թագաւորի ժամանակ Աղուանք Գրիգոր Լուսաւորչի թոռը զսուրբն Գրիգորիս իրենց կաթողիկոս ուզեցին, որ վեց տարի 342—348 կատարեց իւր բարձր պաշտօնը, և նահատակուեցաւ ի Մազքթաց։ Չորրորդ դարէն մինչև դարուս սկիզբը տևեց Աղուանից կաթողիկոսութիւնն. այդ կաթողիկոսները ընդհանրապէս օծում առած են Հայոց ընդհանուր կաթողիկոսներէն։ Աղուանից աշխարհը ունեցեր է գլխաւոր հինգ թագաւորական կամ իշխանական հարստութիւններ, որք են* Ա. Առանշահիկք, Բ. Միհրականք, Գ. Առան–Սիւնիք, Դ. Թագաւորք Դարբանդայ, Ե. Բագրատունի Կորիկեան Թագաւորք։ *Աշխարհս շարունակ ենթակայ է եղած ճնշման, սրածութեան, արիւնհեղութեան, սովի և գերեվարութեան. հիւսիսէն հարաւ և հարաւէն հիւսիս անցուդարձի միակ ճանապարհն կամ դուռն լինելով, շատ անգամ ոտնակոխ եղած է բռնաւորաց հրոսակներէն, մանաւանդ քրիստոնէութիւնը ընդունելէ վերջ։ Փրկչական Ա դարու մէջ Ալանները միացած բոլոր լեռնականներու հետ՝ Դարբանդի դռնէն կը խուժեն Աղուանից երկիրը, և միայն Արտաշէսի հուժկու սուրը յետ մղելով բարբարոսները, կը տանի յաղթութեան փառքը։ Բ դարուն նոյն դռնէն արշաւելով, Խազրաց և Բասլաց միաբանեալ զօրքը երբ մարախի նման ծած-*

*կած էին Ազուանքը, կը հանի մեր Վաղարշ թագաւորը և կոտորելով ու հալածելով զթշնամին երկիրը կ'ազատէ։ Գ դարուն ևս Մեծն Տրդատ մինչև իրենց բնակած լեռները կը հալածէ աւերիչ լեռնականները և երկիրը կը խաղաղացնէ. (Խոր. Բ. ԿԵ. ՁԵ)։ Ե դարու մէջ Ազուանքը Պարսից իշխանութեան ներքեւ ինկնալով, երկիրը կ'աւերի, եկեղեցիք կը քանդուին, շատեր կը նահատակուին, և շատեր ևս ակամայ կ'ընդունին հրապաշտութիւնը։ Կաղանկատուացին (73—8. 104—192. եռ.) կը պատմէ, թէ ինչպէս այնուհետև մինչև Ը-րդ դար թշուառ երկիրը կ'ենթարկուի կեղեքման, գերեվարութեան, կողոպտման. եկեղեցիները և մատենք հրոյ ճարակ կը դառնան և անթիւ մարդիկ կը նահատակուին։ Ը-րդ դարու մէջ երկիրը Արաբացւոց տիրապետութիւն գառնալով, որոյ և տանջանաց զօրութեամբ, շատերուն ընդունել կու տան մահմետականութիւնը. իսկ Բուղայի ժամանակ, համարեա աւերման կը ներկուի բոլոր երկիրը։ Ժ դարուն Ազուանք կ'անցնի Սելճուկեանց ձեռքը. ԺԲ դարուն Թաթարաց և ԺԳ դարու մէջ Լանկ—Թամուրի և Ջհան—Շահի արշաւանաց վայր կը դառնայ։ Զանց կ'ընեմք յիշատակել այդ ժամանակամիջոցին պատահած տխուր դէպքերը. ցանկացողք կարող են կարդալ Մով. Կաղ., Յովհ. Կաթ., Կիր. Գանձ. և Թ. Մեծոփեցւոյ պատմութիւններն։ ԺԸ դարերու մէջ Օսմանցւոց և Պարսից պատերազմավայր դառնալով աշխարհս, բնակիչք կրկին սրերու մէջ կը մընան և մեծամեծ վնասներ կ'ունենան։ Նոյն ԺԸ դարու մէջ Նատր—Շահը կը կործանէ Շամախի քաղաքը և շատ գիւղեր կ'ամայացընէ և մօտ 700000 Հայ և Վրացի գերիներ կը տանի Պարսկաստան։ 1712 և 1722 թուականներուն Լէզկիները և Խազիրները, խժդժութիւններ և կոտորածներ ընելէ վերջ, բազմաթիւ Հայեր ալ գերի կը տանին իրենց երկիրը (Եսայ. կաթ. 23—26 և 35—40)։ 1796—1826 թուականներուն Ազուանից երկրի մէջ կը կատարուին ռուս—պարսկական պատերազմներն, և վերջապէս ողբալի և բազմարկած երկիրս կ'անցնի Ռուսաց տիրապետութեան ներքև։*

*Ազուանից երկրի գաւառները՝ բնութեան բնական սահմաններով բաժնուած են երեք գլխաւոր մասերու* Ստորին, Վերին և Միջին։ Ստորին *գաւառները ամբողջապէս դաշտային են և կ'ինկնան Կուր գետի ձախ ափանց և Պօղ—տաղ լեռնաշղթայի մէջ, Կասպից ծովեզերքէ կողմէն մինչև Քանդակ գիւղը։* Վերին *գաւառները ընկած են Պօղ—տաղի և Կովկասեան ամենաբարձր լեռնաշղթայի շարունակութեան մէջ, Շամախու արեւելեան կողմէն մինչև Ալազան։* Միջին *գաւառներն ընկած են Պօղ—տաղ լերան շղթաներու մէջ։*

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

### ՑՈՒՑԱԿ ԱՂՈՒԱՆԻՑ

### ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ

| ՀԻՆ ԳԱՒԱՌՔ | ՆՈՐ ԳԱՒԱՌՔ |
|---|---|
| ***Ստորին գաւառներ*** | |
| Ա. ՀԵՋԱՐ, ՀԱՄԲԱՍԻ, ՀԵՃԱՐԻ | .... ՂՈՇՈՒՆ |
| Բ. ՔԱՂԱ, ՔԱՂԱԴԱՇՏ, ՔԱՂԱԵԱՏ, ՇՐՈՒԱՆ | .... ԲԱՐԿՈՒՇԱՏ |
| Գ. ՀԱԲԱՆԴ, ՀԱԲԱՆՔ ԱՂԲԵՐԴ, ԱՂ—ՏԱՇ | .... ԱՐԱՇ |
| ***Վերին գաւառներ*** | |
| Դ. ՈՍՏԱՆԻ, ՈՍՏԱՆ, ՀԱՇՈՒ, ՇԱՄԱԽԻ | .... ԿԱՊՐԻՍՏԱՆ |
| Ե. ՄԱՐԶՊԱՆԵԱՆ, ԳԱՐԴՄԱՆ, ԴԱՍԱՆ | .... ԳԻՐԴԻՄԱՆ *կամ* .... ԼԱՀԻՃ |
| Զ. ԲԵԽ, ԲԵԹ ԿՈԿԻՍՈՆ | .... ԿԷՕՔ—ՉԱՅ |
| Է. ԳԵՂԱՒՈՒ, ԳԵՂԱՈՒԷ ԿԱՊԱՂԱԿ | .... ՂԱՊԱԼԱ |
| Ը. ՇԱՔԷ, ՇԱՔԷ—ՈՍՏԱՆ, ՇԱՔԻ | .... ՆՈՒԽԻ |
| Թ. ԿԱՄԲԵՃԽԱՆ ԿԱՄԲԷՃԱՆ, ԿԱՊԻՃԱՆ, ՃԱՐ | .... ՋԱՔԱԹԱԼԱ |
| Ժ. ԲԱՂԱՍԱԿԱՆ, ՃԱՐՈՑ ԲԵԼԱՔԱՆ | .... ԲԱԼԱՔԱՆ |
| ***Միջին Գաւառներ*** | |
| ԺԱ. ԽՈՂՄԱՂ, ՀՈՂՄԱՂ, ՀՈՂԻ, ԴԱՇՏԱԿ | .... ԱՐԱՇԻ |
| ԺԲ. ԽԵՆԻ | .... ԽԵՆԻ |

Սուրբն Մեսրոպ հինգերորդ դարու մէջ մեր և վրաց գրերը գտնելէ վերջ, անցաւ Աղուանից երկիրը անոնց Արսվաղէն կամ Եսվաղէն Թագաւորին ու Երեմիա եպիսկոպոսին քով, որոց հաւանութեամբ հնարեց նաև անոնց ալխազուր և կոտրատած լեզուին գրերը։ Աղուանից լեզուն նոյն էր Գարգարացւոց, Ուտէացւոց և այն կողմերը բնակող մի քանի ժողովրդոց լեզուներու հետ, որոց Ս. Մեսրոպ քարոզեց քրիստոնէութիւնը և միևնոյն ժամանակ հարկադրուեցաւ իրենց հայերէնէ եղած, բայց մերձակայ ազգաց շփմամբ բոլորովին այլափոխուած լեզուին համար նոր նշանագրեր հնարել։ Աղուանից մատենագրութիւնն այրեցաւ Ջ՞ դարու մէջ խազրաց ձեռքով (Մովս. կաղ. 10 և 91)։ Գաղղիացին Ե. Պորէ իւր Հայաստանի ուղեւորութեան մէջ կ'ըսէ, թէ Էջմիածնի ձեռագրաց մատենադարանին գրքերէն միոյն կողքին մէջ գտեր է Աղուանից այբուբէնը, որոնց ձեւերը, ինչպէս կ'երևի գաղափարուած օրինակէն, շատ նման են մեր նոտրագիր տառերուն։ Այս լեզուիս իբրև ճաշակ մը հասած է ձեռքերնիս համառօտ քերականութիւն մը, զոր յօրինած է Տաշպուլաղցի Հայրապետ Ատիխանեան անունով դպիր մը։

Աղուանից երկիրը ունի ի հնուց մնացած բազմաթիւ բերդեր, որոց վրայ համառօտ տեղեկութիւն կը տրուի իւրաքանչիւր գաւառի նկարագրութեան մէջ։ Այժմ Աղուանից ազգի մնացորդք կը համարուին Նուխի գաւառի Նիժ, Վարդաշէն, Սուլթան Նուխի և այլ գիւղերու մէջ բնակող այն Հայերն որք Ուտիացիք կը կոչուին և կը խօսին ուտիերէն։ Նոյնպէս աղուանից մնացորդք են Շամախւոյ Մատրասա գիւղի 500 տունէ աւելի Հայերն, և Ղուբայի գաւառի Խաչմաս և Քիլվար գիւղերու 150 տունէ աւելի Հայ բնակիչք։ — Բարխուդարեանց՝ Աղուանք, 42–302։ Ալիշան՝ Աղուանք, ձեռագիր. 357–387։ Սմբատեանց՝ Նկարագիր Շամախւոյ թեմի, 191–254։ Մ. Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից. Հտ. Ա և Բ, տպ, փարիզ 1860։ Եւ այլն։

ԱՂՈՒԶՈՒՄ. — Հայաբնակ գիւղ Արարատայ, այժմեան Շորէկէլ գաւառի մէջ. բնակիչք 256, բաժնուած 35 տան։

ԱՂՈՒԷ կամ ԱՂԱՍԷՐ. — Ուտի նահանգի հին գաւառներէն մին։

ԱՂՈՒԷՍԱՀԱԳԻ. Տես ԱՂԱՀԷՃՔ։

ԱՂՈՒԽՍԱՇԷՆԻ ՋՈՒՐ. — Եղիսաբեթուպօլի նահանգի մէջ աջակողմեան օժանդակ գետակ Շամքորի։ Գետակիս անունն ծագած է անշուշտ Աղուխաշէն անուն գիւղէ մը, որոյ վրայ տեղեկութիւնք կը պակսին։ Աղուխաշէնի ջրի ձախ եզրի վրայ կը գտնուի եօթն եկեղեցի կոչուած տեղը։ Այդ եկեղեցի ըսուածները բարձր և գրեթէ անմատչելի ուղղահայեաց ժայռի մէջ փորուած խուցեր են, որոց մէջ, ինչպէս կը հաւատացնեն, հին ժամանակները պատերազմէ հալածուածները պատսպարան կ'որոնէին։ Կը պատմեն նաև, թէ այդ եօթն եկեղեցիներէն ոմանք կը պարունակեն գանագան իրեր։ Այս եկեղեցիներէն միայն միոյն մէջ յաջողելով մտնել պարոն մը, չէ գտած ո՛չ հնութիւն մը և ոչ այլ ինչ. միւս վեց եկեղեցիք անմատչելի են, և չի գիտցուիր թէ կա՞յ արդեօք գոցա մէջ մեր նախնեաց պատմութեան վրայ նոր լոյս սփռող յիշատակներ։ — Մշակ, ԺԲ. 129։

ԱՂՈՒՄԲՐՈՒ։ — Հին գիւղ Գուգարաց Դմանիք կամ Քուիշափոր (Պօռչալու) վիճակի մէջ։

ԱՂՈՒՆ կամ ՑԱՂՈՒՆ. Տես ՑԱՂԻՆ։

ԱՂՈՒՇԷՆ. — Գիւղ Թորթումայ գետոյն աջակողմը Օսէգ և Ազորդ գիւղերու մէջտեղ։

ԱՂՈՒՈՑ ՎԱՆՔ կամ ԱՂՎԱՆՔ. Տես ԱՐԵՒԻՔ։

ԱՂՈՒՏ. Տես ԼՈՌԻ։

ԱՂՈՒՏԻ. Տես ԱՂԻՏՈՒ։

ԱՂՊԻԼԱՔԷՆՏ. — Գիւղ Գանձակու Նուխի գաւառի մէջ. բնակիչք 778, ամբողջ Հայ։

ԱՂՋԿԱՑ ԲԵՐԴ (Թ. Ղզղալա). — Ուտիի Աղուէ գաւառի մէջ, համանուն գիւղի հիւսիսակողմը կը բարձրանայ լեռ մը, որոյ արեւելեան և հարաւային կողերը զառիվայրեր են, իսկ հիւսիսային և արեւմտեան կողմերն, սարսափելի ուղղահայեաց բարձր ժայռեր։ Այս լերան վրայ կը գտնուի Աղջկայ բերդը, այժմ աւերակ վիճակի մէջ։ ինչպէս կ'երեւի մնացորդներէն, հաստ

պարիսպ մը և խոր ու լայն խրամ մը կը շրջապատեն եղեր լեռ՝ որոյ գագաթը նոյնպէս կ'երևի պարիսպ մը, որ անշուշտ կը շրջապատէր միջնաբերդը։ Բերդին արևմտեան լանջին վրայ կան երեք աւազաններ. գտնուած փողրանքներէն կը յայտնուի, որ ջուրը բերուած է եղեր Փլեկի սարէն։ Միջնաբերդի մէջ կան ստորերկրեայ շինութիւններ։ Հիանալի է տեսարանը, հիւսիսային կողմը, մէկ վերստ հեռու ցցուած է Քարին–կտուր սարը, արևմտակողմը Մեծ Նաճատակի և Առաջքար, իսկ հարաւային կողմը Փոքր Նաճատակի և Փլեկի սարերը, արևելեան կողմն ալ տարածուած է ընդարձակ դաշտավայր մը։ — Արցախ, 135։ Վարանդա, 51։

ԱՂՋՈՑ ՎԱՆՔ. — Ի հնումն հռչակաւոր վանք Այրարատայ Մազազ–Ոստան գաւառի, Գառնոյ ձորի վիճակի մէջ, Այրի վանքի հարաւային արևելեան կողմը։ Վանքս մօտ կար նաև համանուն Աղջոց գիւղ մը, ուսկից էր ԺԶ դարու մէջ Մելքիսեդ կաթողիկոսը։ Հաւանական կ'երևի թէ աւելի գիւղն վանքէն քան թէ վանքն գիւղէն առած ըլլայ նոյն անունը, որ ոչ նշանակէ մթութիւն աղջ կամ աղջամուղջ, այլ ծագած է աղջիկ բառէն, վասն զի Հռիփսիմեան կուսանաց ընկերներէն ոմանք այս կողմերը եկած բնակած են, որոց հետ կը յիշուին նաև երեք քահանաներ։ Յայսմաւուրք կը յիշեն նաև այդ քահանայից միայն Ստեփանոս անունը. «որոյ անդ կեցեալ կատարեցաւ ի Քրիստոս, և թաղեցաւ ի տեղւոջն. և յետոյ Սուրբն Գրիգոր ազդմամբ հրեշտակաց եկեալ, արարին ըզտեղին վանք միաբանակեցաց, որ մինչև ցայժմ կոչի Աղջոց վանք. և զանունն ես ուսաւ ի հրեշտակէ՝ Ստեփանոս գոլ. վասն որոյ ասի Աղջոց վանաց Ս. Ստեփանոս»։ Կը թուի թէ սրբոյս նշխարները վերջը բաժնած են այլ և այլ տեղեր, վասն զի Վարդան աշխարհագիրը և այլք՝ առանձին կը յիշեն «զԱՋ Ս. Ստեփանոս քահանային»։ Ասա գրեն յետոյ Ս. Արիստակիսի ԱՋր և նաև ուրիշ սրբութիւններ, ինչպէս կը տեսնուի 1442 թուին յիշատակարանէ մը, ուր կ'աւանդուի նաև վանքս եկեղեցեաց անունները. «...ի Զորս Քեղոյ, ի Վանքս Աղջոց, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Ս. Կարապետին, և Ս. Ստեփանոս նախատակին և Ս. Աջոյս և Թրի Ս. Նշանին և Ս. Խաչին և Թեւաւոր Ս. Գրիգորին, և այլ բազմահաւաք Սրբոցս որ աստ կան հաւաքեալ»։ Վանքս սրբութիւններէն գըլխաւորները երկու Աջերը, ԺԷ դարու ըսկիզբը Մելքիսեդ կաթողիկոսը, իրենց թանկագին պահարաններովը «Բերեալ եդ ի գրաւ առ այլազգի մահմէտականս, և առեալ զրամ ես պարտատուացն»։ Նոյն ժամանակները վանքս առաջնորդ էր ոմն Միքայէլ եպիսկոպոս, որ և ի Լեհս գրկուած կաթողիկոսական կոնդակին ստորագրած է այսպէս. «Ես Միքայէլ առաջնորդ սուրբ ուխտիս Աղջկուց վանացն, որ է Նահատակ Ս. Ստեփաննոս քահանային. վկայ եմ այս բանիս և նամակիս»։ Մեծն Վարդան վարդապետ, Վիրապի վանաց մէջ սկսած Դանիէլ մարգարէի մեկնութիւնը, հոս աւարտեց 1268ին, «յառաջնորդութեան Երեմիայ գովելի ասպնջականի և գոհանալի եղբարց»։ Երևանու մեծ շարժին ժամանակ վանքս ալ վնասուեցաւ, սակայն անծանօթ է մեզ թէ որուն ձեռքով նորոգեցաւ. վասն զի անկէց վերջ ԺԸ դարու սկիզբը կը յիշուի իբրև վանք և առաջնորդն էր Մովսէս անունով մէկը։ Մինչև դարուս կէսն ալ Սիմէոն կաթողիկոսի Ջամբռ (281) գրոց մէջ կը յիշուի իբրև շէն և վիճակներն էին Ճարդաւն, Մեծ և փոքր Գղան. սակայն այժմեան գրութեան վրայ տեղեկութիւնք կը պակսին։ — Այրարատ, 352–354։

ԱՂՋՐԻԿ. — Գիւղ Բարձր Հայոց, այժմեան Թորթումայ վիճակին մէջ։

ԱՂՋՐՏԱՓ. — Յիշուի անունս Վայոց ձորի (Սիւնիք) Ս. Սիոն անապատի արձանագրութեանց մէջ։

ԱՂՍ կամ ԱԽՍ. — Այլազգաբնակ գիւղ Այրարատայ Ուրծ և Արած (Վեդի–Պասար) գաւառի մէջ։

ԱՂՍԻՆ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց, Վանայ Մահմտան վիճակի մէջ։

ԱՂՍՏԵՒ, ԱՂԱՍՏԵՒ կամ ԱՂՍՏԱՖԱ. — Հին Ուտի Նահանգի այժմեան Ղազախի գաւառի մէջ մեծ և անուանի գետ, որ իր ըսկիզբը կ'առնու Բամբակի լեռներէն։ Իր աջ կողմէն հետզհետէ կ'ընդունի գլխաւորապէս

Տիլիժանի կամ Պղնձահանք, Թարս—չայ և Քարավանսարա վտակները. իսկ ձախ կողմէն Ջուխտակ—Վանքի, Պօղոս—քիլիսէի, Մրճաձորի, Հաչաքրի, Ոսկեպարի և Ներքին Աղստևի վտակներ և ջրեր։ Հրաշալի է Աղստաֆայի հովիտը. երկու կողմէն արձանացած հրաբխային լեռներու շղթաներն, գալարագեղ բուսականութիւնն, ընդարձակ և թաւ անտառներն և բազմաթիւ առատաբուղխ վտակաց խոխոջքն, անմոռանալի յիշատակ կը թողուն ուղևորի մտաց մէջ։

Ասողիկ (272) Ժ.րդ դարու մէջ կը յիշէ այս անուամբ գաւառ մը, երբ Ա. Գագկայ համար կ'ըսէ. «Եւ ընդ Գագ բերդ անցանելով եկ նա ի գաւառն Աղստեւ»։ Անշուշտ կը կազմէր Ղազախ գաւառի հիւսիսային արևելեան մասը, բայց ստոյգ յայտնի չէ թէ մինչև ո՞ւր կը տարածուէր։ Գաւառիս մէջ գտնուող մի քանի հին վանքերը և գիւղերը կը տեսնենք ի կարգին։

Աղստաֆա անուամբ թաթարաբնակ (16 տուն) գիւղ մը կայ այժմ համանուն գետի եզերքը, որ է երկաթուղւոյ կայարան։

ԱՂՎԱՆԻՍ. — Գիւղ Հայոց Շապին Գարահիսարի, 80 տուն բնակչօք։

ԱՂՎԱՆՔ. Տես ԱՐԵԽԻՔ։

ԱՂՎԷՐԱՆ. — Քրդաբնակ գիւղ Խնուսայ։ Գիւղիս մօտ այնքան յորդահոս է Երասխ՝ որ բաղերն անգամ չեն իշխեր մէջը մտնել և երբեմն սայլորդներ անցած տեղեննին վտանգած են։

ԱՂՏԱԽ. Տես ԴԵՂԹԱՓ։

ԱՂՏԱՂՏ. — Այլազգաբնակ գիւղ Կարնոյ հարաւակողմը. ջերմուկ ունի։

ԱՂՏԱՄ. — Այս անուամբ թաթարաբնակ գիւղ մը կայ Գանձակու Շուշի գաւառի մէջ։ Ուրիշ մ'ալ կայ քրդաբնակ՝ Կաղզուանու (Կարս) վիճակին մէջ։

ԱՂՏԱՆ. — Կրկին հայաբնակ գիւղեր կան Գանձակու Ղազախ գաւառի մէջ։ Աղստան Վերին ունի 1127 բնակիչք, բաժնուած 90 տան, և Ներքին Աղստան՝ 20 տուն, 200 բնակչօք։

ԱՂ-ՏԱՃ. — Գիւղաքաղաք Աղուանից Արաշ գաւառի մէջ, Դուրկաճ գետակի աջ կողմը։ Համարուած է Արաշի գաւառագլուխը, ուր կան հեռագրատուն, նամակատուն, արքունի դատարան, գաւառապետ, են։ Այգիներով և պարտէզներով ամբողջ ծածկուած է գիւղաքաղաքս. ամրան օդը ծանր է և անպակաս են դողի և ջերմի հիւանդութիւնք։ Տեղւոյս բնակչաց մեծամասնութիւնն մահմետական են. կան նաև Արցախէն, Գանձակէն, Շաքիէն և Շամախէն եկած շատ Հայեր, որք կ'զբաղին վաճառականութեամբ, դերձակութեամբ, հիւսնութեամբ, սեղանաւորութեամբ, կօշկակարութեամբ և այլ արհեստներով և արքունի պաշտօններով։ Գիւղաքաղաքս նշանաւոր է վաճառականութեամբ. Աղուանից երկրի բոլոր բերքերն և շատ կենդանիներ ուրիշ քաղաքներէ աւելի աստ կը վաճառուին։ Շէնքերու մէջէն ընդհանրապէս նշանաւորները Հայոց կը վերաբերին, որք թէև եկեղեցի չունին, բայց հանգուցեալ Պ. Կարապետ Գանջեցեանց կտակած է այդ նպատակին համար 10000 րուբլի։ — Աղուանք, 283–4։

ԱՂՏԱՐԱ. Տես ԱԳ ՏԷՐԷ։

ԱՂՏԱՌ. Տես ԱՂԱՀԷՃՔ։

ԱՂՏԻՍ կամ ԱՂՏԻ. Տես ԱԽՏԱ։

ԱՂՏԻՑ ՁՈՐ. Տես ԱԽՏԱ։

ԱՂՏՔ կամ ԹՈԽՁ ՀԻՍԱՐ. — Գիւղ Սեբաստիայէն 6 ժամ հեռու։ Բնակիչք 1700 ամբողջ Հայ, ունին Ս. Կարապետ քարաշէն եկեղեցի մը և Հրեշտակապետեան վարժարան մը, 200 աշակերտօք։

ԱՂՐԻ կամ ԱՑՐԻ–ՁԱՅ. — Գետակ Սիւնեաց, Այրարատայ Ուրծ և Արած գաւառի սահմանածայրը. կը բղխէ Արխաշան լեռնէն և կը թափի Գեղամայ ծովակը։ — Տես ԱԳՈՒԼԻՍ։

ԱՂՐԻ ՏԱՂԻ. Տես ՄԱՍԻՍ։

ԱՂՑՔ, ԱՂՁՔ կամ ԱՂԻՍ. — Հին գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, զիրքն ես կը յիշէ Բուզանդ (Դ. ԻԴ), «... յամուր ի գիւղն՝ որ Աղձքն անուանեն, յԱյրարատ գաւառին, որ կայն ի խինձս, ի գոգս, ի ծոցս, յանձուկս, ի դժուարս լերինն մեծի՝ զոր Արագածն կոչեն»։ Չորրորդ դարու կիսէն վերջը, երբ Պարսից Շապուհ թագաւորի զօրավարները չկարողացան բռնել մեր Արշակ թագաւորը, մեծ վրէժխնդրութեամբ Դարանաղիի Անոյ ամրոցի գանձուց հետ իրենց աշխարհը կը գերէին

նաև մեր Թագաւորաց ոսկորները, զորս յետոյ նախարարները տանելով, «Թաղեցին յաւանին Աղցս, որ յաւուր Արագած կոչեցեալ լերին» (Խոր. Բ. Խէ)։ Գիւղիս արեւելակողմը կան մեծ եկեղեցւոյ մը աւերակներ, և անոր մօտ դէպ ի հիւսիս՝ կամարայարկ, մանր քարերէ հիւսուած և փոքր ու ցած դռնով մատուռ մը։ Հիւսիսային որմոյն վրայ քանդակուած է բազկատարած մարդ մը՝ վրան յարձակող երկու առիւծներու մէջտեղ. իսկ հարաւային որմոյն վրայ ալ քանդակուած են աղուէս, թռչուն, ծաղիկներ, որսորդ, և այլն։ Այժմեան Աղցի այլազգի բնակիչք (36 տուն), լուսամուտի տեղ մեծով բացած են երկու ծակեր՝ և կը պատուեն այս մատուռը իբրև սրբավայր մը։ Կան նաև հողի տակ ուրիշ շինուածոց մնացորդներ, սալայատակներ և խաչարձաններ։ Արեւմտակողմը կը գտնուի հին գերեզմանատունը, յորում կան մաս մը կանգուն և մաս մը տապալած խաչքարեր։

Աղցք գիւղը ընծայեց Զ[րդ] դարուն Եզր Կաթողիկոս, որ կաթողիկոս եղաւ (615–623), և նորոգ շինելով Վաղարշապատու սուրբ Հռիփսիմեանց վկայարանը, քերողօրէն երգեց հանրածանօթ և գեղեցիկ շարականն Անձինք նուիրեալք։ Աբրահամ Ա կաթողիկոսի ժամանակ՝ 606 թուին, կը յիշուի Միքայէլ անունով մէկը վանացերէց Աղցից։ ԺԵ դարու սկիզբը, այս գիւղէս կը յիշուի Ղլուան կամ Աղլուան ամն սերած Հայոց ազատներէն, որ Լէնկթիմուրի Եօմէր թոռնէն ստիպուած, ուրացաւ իր կրօնքը, բայց ի վերջոյ երբ երկիրը խաղաղեցաւ, ինքն ալ զղջացած սրբեց ուրացութեան կեղտը։ — Այրարատ, 147–8։

ԱՂԽՈՅՈՎԻՏ. Տես ԱՂԽՈՎԻՏ։

ԱՂՓԱՐԱ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Նիգ (Նոր Պայազիտ) գաւառի մէջ. մղոն մը Մաքրավանքէն հեռու, դէպ ի հարաւ գետեզերքի մօտ։ Բնակիչք 607, բաժնուած 70 տան. ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը։

ԱՂՔԶՈՐ. — Գիւղ Բաղիշոյ արեւելեան կողմը Կիւզէլտէրէ (Ագնուաց–ձոր) գաւառի մէջ։ Բնակիչք 10 տուն Հայք և 20 տուն Քիւրդք։

ԱՂՕՆՔ. — Այս անունով Վերին և Ստորին կրկին գիւղեր նշանակուած են Բաբերդի հարաւային արեւելակողմը։ Այժմեան վիճակին և բնակչաց նկատմամբ տեղեկութիւնք կը պակսին։

ԱՂՕՐԷՆ. — Թրքաբնակ գիւղ Կարնոյ արեւմտակողմը, Իլիճայի մօտ։

ԱՂՕՐԻ. Տես ԱՂՈՐԻ։

ԱՃԱՆԱՆ կամ ԱՃԷՆ. — Հին գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի. յիշուի Սիւնեաց եկեղեցւոյ հարկատուաց ցանկի մէջ։ Գիւղիս անունով իբրև առանձին վիճակ Աճանան կոչուեր է Բաղաց արեւմտեան մասը։ Տես ԲԱՂՔ։

ԱՃԱՐԱ. — Վերին և Ստորին Աճարա անունով կրկին վիճակներ կան Տայոց սահմանակից, համանուն գետոյն երկու կողմերը։ Այս վիճակաց բնակիչք ամբողջ մահմետական են, մեծաւ մասամբ Վրացիներէն դարձած, և բնութեամբ արիւնարբու են և աւազակ։ Աճարացիներու միահամուռ թիւն է 30000։

ԱՃԷՄԻՇ. Տես ԷՕՃԷՄԻՇ։

ԱՃԷՄԼԻ կամ ԱՃԷՄ–ՕՂԼՈՒ. — Հայաբնակ գիւղ դաշտային Կիլիկիոյ։

ԱՃԻՋՈՒՐ. Տես ԱՐՋԱՋՈՐ։

ԱՃԻՇԷՆ կամ ԱՃԻԲԷՆՏ. — Գիւղ Հայոց, Գանձակու այժմեան երկրորդ վիճակի մէջ, 40 տուն բնակչօք։

ԱՃԻ–ՉԱՅ. — Գետ Այրարատայ Ճակատք գաւառի արեւելակողմը, որոյ օժանդակն է Զիչէկ։

ԱՃՄԱՆՈՒԿ. — Գիւղ Քրդաց Մշոյ դաշտի մէջ։

ԱՄԱՂՈՒ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, համանուն ձորի մէջ, Արփայի օժանդակ վտակի մը ձախակողմը՝ հարթ և բարձրագիր դաշտի վրայ։ Միջին դարու նշանաւոր գիւղս որ Սիւնեաց Աթոռոյն հարկ կու տար 10 բեռ, այժմ անշքացած է և ունի միայն 30 տուն մահմետականներ։ Գրեթէ 40 տարի առաջ կային այստեղ Վանցի և Ալաշկերտցի գաղթական Հայեր, որք նորոգելով հաստատ քարէ շինուած աւերակ եկեղեցին, խառն կը բնակէին Թաթարաց հետ, բայց 1856–1860 թուականներուն բոլորովին ցրուեցան Տարալագեզի Ենկիճէ

և Այար հայարնակ գիւղերը։ Գիւղիս առջև կը տարածուի բաւական ընդարձակ և ջրարբի դաշտ մը, ուր կը ցանեն այժմեան Ամաղուեցիք ցորեն, գարի և կորեկ։ — Հին Ամաղու կը կոչուի այժմ Նորավանքի հարաւակողմի ժայռի գլուխը գտնուող հին Տխարք գիւղը, որ աւերակ է։

այգիներով, որոց փոխարէն այժմ կան ծիրանի ծառեր։

ԱՄԱՂՈՒԱՑ ՆՈՐԱՎԱՆՔ. — Ամաղու գիւղէն երկու երեք վերստ հեռու, խոր ձորի մէջ, բարձր հարթավայրի մը վրայ դեռ կանգնած են երեքն հոյակապ վանացս տխրատեսիլ աւերակներն (թ. 53)։ Պատմութիւնն



53. Ամաղուայ Նորավանից ընդհանուր տեսքը։

ԱՄԱՂՈՒ ՁՈՐ կամ ԱՄԱՂՈՒԱՁՈՐ. — Անձուկ ձորակ Վայոց ձորի, որ Կնիշիկայ ձորոյ գրեթէ զուգահեռական կ'երկննայ հարաւէ դէպի հիւսիս։ Հռչակաւոր էին ի հնումն ձորոյս մէջ Նորավանքը, Հրաշկաբերդը և Արփա գիւղն, ուր նստաւ Օրբէլեան իշխաններէն զառազագոյն Տարսայիճը։ Ձորս և Ամաղու գիւղի դաշտը ի հնումն ծածկուած էին

մեզ կ'աւանդէ, թէ այժմեան աւերակ եկեղեցիներու և շինութիւններու կառուցուելէն շատ ժամանակներ առաջ՝ Ամաղուայ նեղ և անձուկ ձորակի մէջ՝ պատշաճաւոր տեղ մը շինուած էր կրաշաղախ քարերով Սուրբ Կարապետ անուամբ եկեղեցի մը, որ խիստ սքանչելագործ, ահարկու և անուանի էր մերձակայ սահմանաց բնակչաց համար։ Ասոր

մօտ կը բղխէր քաղցրահամ աղբիւր մը, և ամբողջ ձորը զարդարուած էր այգիներով և մրգաբեր ծառերով։ Նոյն ձորի մէջ ի բաց բացուած կաշկառուտին կար նաև ուրիշ եկեղեցի մը Ս. Փոկաս Հայրապետի անուամբ, որոյ բեմի տակէն կը բղխէր ծծմբախառն բժշկական աղբիւր։ Հնագոյն աւանդութիւններէ կ'երևի, որ այդ տեղ բերուած և գրուած է Ս. Փոկաս Հայրապետի նշխարը, յորմէ և տեղւոյն անունն ալ կոչուեր է Փոկաս։ Այս երկու եկեղեցիներն իրենց բժշկարար աղբիւրներով իբրև ուխտատեղի մեծ հռչակ հանած էին Վայոց ձորի ժողովրդոց մէջ։ Ս. Փոկաս Հայրապետի եկեղեցւոյ տեղն և դիրքն թէև ստոյգ չի գիտցուիր, սակայն հաւանական է ենթադրել, թէ այժմեան Նորավանից մօտ հասարակ քարէ, կրաշաղախ և կամարակապ շինուած մատրան տեղն ըլլայ, որուն մէջ կը բղխէ տակաւին բժշկարար ջրոյ աղբիւր մը։ Այս մատուռն չունի ոչ յիշատակարան և ոչ արձանագրութիւն, և Քաջբերունին դրան սեմի փայտեայ գերանէն կը հետևցնէ թէ հին շինութիւն չէ, որով անշուշտ ի վերջոյ բարեպաշտ ժողովուրդն հին և քայքայուած եկեղեցւոյն յիշատակին կառուցած է զայն։ Իսկ Ս. Կարապետի եկեղեցին պատմչի խօսքերէն կ'երևի որ կը գտնուէր ճիշդ Նորավանից մէջ։ Ամաղուայ ձորի հռչակն դեռ աւելի տարածուեցաւ, երբ Բաղաց թագաւորութեան վերջանալէ և իշխանական տոհմի և աշխարհի աւերելէն յետոյ, նոյն իշխանական տան վերջին տարաբաղդ անդամներէն մին՝ Յովհաննու վանաց Յովհաննէս եպիսկոպոսը, Համասնեան Հասանայ որդին, յետ սատ անդ շրջելու, հայկական ՇԾԴ (= 1105) թուին եկաւ Վայոց ձոր գաւառը, «... և կամեցաւ բնակել ի խորաձոր Անապատին Նորավանից, մերձ անառիկ գղեկին Հրասեկայ բերդոյն, առ հիազօր և մեծաքանչ եկեղեցւոյն Սրբոյ Կարապետին». (Օրբելեան, ԿԴ, ԿԵ)։ Նոյն օրէն սկսաւ Նորավանքը դառնալ կրօնաւորաց և ճգնազգեցիկ արանց մենաստան, Յովհաննէս եպիսկոպոսը հեռացուց այն տեղէն աշխարհական մարդիկ, տէրունի նշաններ կանգնեց վանքի շուրջը, որպէս զի կանայք և լկտի մարդիկ չանցնին։ Եկեղեցւոյ և վանքի հաստատութեան համար, սահմանակից Գանձակեցի և Տփարբեցի գիւղացիներէն հողեր և անդաստաններ առաւ։ Մերձակայ Հրասեկայ գղեկի պարսիկ բերդապահը չարամտութեամբ կամեցաւ որսալ և սպաննել վերոյիշեալ Յովհաննէս եպիսկոպոսը և աւերել կրօնաւորաց նորահաստատ վանքը, սակայն եռանդուն եպիսկոպոսը հմուտ լինելով Պարսից լեզուին և հագուստը պարսկական ձևի վերածելով գնաց Սպահան սուլտանի քով և բժշկելով նորա մահամերձ որդին՝ ստացաւ ի ժառանգութիւն Նորավանից Հրասեկայ և Անապատայ բերդերն և 12 ագարակ։ Շատ տարիներ առաքինօրէն Նորավանից առաջնորդութիւն և հովուութիւն ընելով Յովհաննէս եպիսկոպոսը, վախճանեցաւ սրբութեամբ ՈԴ (=1155) թուին և թաղուեցաւ նոյն վանքի մէջ, որուն գերեզմանէն, ըստ պատմչին՝ անթիւ հրաշքներ կ'ըլլային։ Այս թաղուեցաւ նաև 1168ին Սիւնեաց Մեղրցի Գրիգոր եպիսկոպոսը։ Յետոյ Մեղրեցւոյ որդին Տէր Ստեփանոս շնորհազարդ եպիսկոպոսը, որ Ամարէկէն Փախրըլմեհի (Քրիստոսաէր) կոչուեցաւ, ԺԲ դարու երրորդ քառորդին եկաւ բնակեցաւ Նորավանից մէջ, և հոն հաստատելով թեմական աթոռ, փոխանակ Սիւնեաց աւերեալ աթոռոյն, հրովարտակներով և ընծայաբերութիւններով աւելի ապահովեց վանքի ներկան ու ապագան և Հայոց Գրիգորիս կաթողիկոսի շրջաբերական թղթով՝ շրջակայ գաւառները Նորավանից ասոր ուխտի վիճակ սեփականեց։ Տէր Ստեփանոս վախճանեցաւ Արփա գիւղը 1216ին և մարմինը թաղուեցաւ ի Նորավանս։ Կանխաւ արդէն ձեռնադրուած էր յաջորդն, իր քրոջ որդի Տէր Սարգիս եպիսկոպոսը, որ հակառակութեան հանդիպեցաւ Տաթևի վանքի Յովհաննէս եպիսկոպոսէն, որուն վիճակած ըլլալով նոյն աթոռը՝ կը պահանջէր իր թեմի բոլոր վիճակներն։ Խաղաղասէր Սարգիս եպիսկոպոսը զգուշանալով խռովութիւններէ, կը համաձայնի և կու տայ Տաթևի բոլոր վիճակներն. Նորավանից աթոռոյն համար միայն կ'առնու Վայոց ձորի գաւառը, Ճահուկը և Նախիջևանը։ Յետոյ Հայոց Տէր Կոստանդին կաթողիկոսին երթալով, շրջա-

*բերական թուղթ կ'առնու Նորավանից վերայիշեալ նոր գաւառաց համար, որպէս զի հաստատուն վիճակներ ըլլան և մէկը չհամարձակի զայնս յափշտակելու։*

*Նոյն ժամանակները Ս. Կարապետի հին և խարխուլ եկեղեցին չէր գոհացներ Նորավանից եպիսկոպոսական աթոռն, որով կարապետ և Ս. Նախավկայ անուամբ կը յիշուի յարձանս։ Նորակառոյց սուրբ տաճարի նաւակատիքը կատարեցին փրկչական 1223 թուականին շքեղապանծ հանդիսով, ուր ներկայ էին եպիսկոպոսներ, վարդապետներ, գահագլուխ իշխաններ, տանուտէրներ, և այլն։ Հանդիսին ներկայ էր նաև Բուպակ*



54. Նորավանից Ժամատունը և Օրպելեանց Դամբարանը։

*և հարկ էր հիմնովին վերանորոգել զայն։ Վայոց ձորի իշխանաց իշխան Լիպարիտ Օրպելեանի և վանացս Սարգիս եպիսկոպոսի խորհրդակցութեամբ, հայկական ՈԿԵ (= 1216) թուին հիմնարկուեցաւ, և մեծ աշխատութեամբ և անչափ ծախսք, եօթը տարուան մէջ աւարտեցաւ հրաշակերտ և գեղեցկայարմար եկեղեցին՝ որ կրկին՝ Ս. մեծ իշխանը, Լիպարիտ Օրպելեանի աները՝ և Աթաբէկ Իւանէի նշանաւոր գործակալը, որ նուիրեց վանքին իր սեփական Աղբերիս գիւղը իր սահմաններով, և վանքի միաբանք սահմանեցին տարին տասը պատարագ Վարդավառի տօնին նորա մօր հոգւոյն համար։ Նոյն ժամանակ, վանքէս յափշտակուած Ագարակի ձոր գիւղն ալ, Լի-*

 ԱՄԱՂՈՒԱՅ ՆՈՐԱՎԱՆՔ

*պարիսպ խնդրանօք՝ Զաքարէ սպասալարը կը վերադարձնէ Նորավանքին։ Լիպարիտ իշխանը զարդարեց նորաշէն եկեղեցին սպասներով, գոյքերով և ժառանգութիւններով, և ինքն քանի մը տարի վերջը միջօրեայ հասակի մէջ յանկարծադէպ նետէ հարուածելով Բորոտնոյ բերդին դիմացը, կը վախճանի Գողոշակի վանքը, և յետոյ մարմինը կը բերեն կը թաղեն Նորավանքի եկեղեցւոյն մէջ։ Տէր Սարգիս եպիսկոպոսն վանացս վրայ մեծ արդիւնք ցոյց տալէ վերջ, գնաց Երուսաղէմ և անկէ դրկեց Ս. Ստեփաննոս Նախավկայի աջը Նորավանքի համար, և ինքը հոն կնքեց մահկանացուն մարտիրոսական մահուամբ։ Ս. Կարապետի եկեղեցին գետնէն չորս ոտքնան բարձր կամարակապ է և ամբողջապէս շինուած որթատաշ կարմիր քարէ չորս որմնակից վայելչաձև սիւներու վրայ. փառապանծ կաթուղիկէն 1840 թուի շարժէն արդէն գրկուած լինելով, բարեպաշտ ուխտաւորաց աշխատութեամբ այժմ ծածկուած է փայտով և հողով։ Պատուհանք չորս են և դուռն մի՝ արևմտակողմը։ Բացի աւագ խորանէն ունի ութ խորաններ, երկու երկու իրարու վրայ շինուած, ընդմէն և դրան աջ և ձախ կողմերը։ Տաճարիս որմոց վրայ կան արձանագրութիւնք զանազան նուիրատուութեանց վերաբերեալ։ Ս. Կարապետի կամ Նախավկայի եկեղեցւոյ դիմաց, Լիպարիտ որդի Սմբատ իշխանը, Ստեփաննոս եպիսկոպոսի ժամանակ, կառուցանել տուաւ չքնաղաշէն ժամատունը կամ Աղօթարանը (Թ. 54), ընդարձակ և քառանկիւնի, ամրացած ութ որմնակից բոլորիկ սիւներու վրայ, որոց կամարներն միանալով առաստաղի հետ, երդիկը կը կազմեն լուսամուտ մը։ Ունի երկու դուռն, հարաւայինը՝ այժմ ծածկուած է քարակոյտներով և արևմտեանը կը գործածուի։ Որմերու վրայ կան երեք լուսամուտներ, որոց իւրաքանչիւրը, խաչագլուխ և ճարտար գրուագօք քանդակուած բարակ միջասիւներով բաժնուած են երկուքի։ Հիւսիսային կամարի տակ քանդակուած է կարծեօք Սմբատ իշխանի կամ Օրբելեանց ուրիշ քաջի մը պատկերը, որ արագաշարժ ձիու վրայ նստած, գլուխը եանկիւնի սաղաւարտ դրած, ձեռքը բռնած կեռ սուրը կ'իջեցնէ կատաղի վագրի կամ առիւծի մը գլխուն։ Արևմտեան դրան վերի լուսամուտի վերը և վարը կան քանդակագործ պատկերներ. մին Տիրամայրը գահի վրայ նստած և Յիսուս ի գրկին, գլխուն վրայ իջած է աղաւնակերպ Սուրբ Հոգին և աջ ու ձախ կողմերը երկու ծերունիներ, և ՈՀ (= 1221) թուականաւ արձանագրութիւն մը։ Միւս պատկերը կը ներկայացնէ զՀայր Աստուած հինաւուրց կերպարանքով և լայն հանդերձներով. ձախ ձեռքով բռնած է Ադամայ գլուխը և աջովը կը խաչակնքէ. այս արձանին աջ կողմը քանդակուած է Քրիստոսի խաչելութիւնը՝ Աստուածածնի և Մագդաղենացւոյ հետ, և ձախ կողմը Հրեշտակ. երկրորդ քանդակապատկերս ալ ունի արձանագրութիւն։ Ներքը որմերու վրայ կան բազմաթիւ արձանագրութիւնք, յորս կը յիշուին Սմբատ իշխանի վանացս նուիրած գեղերն Աշէշ, Աճապատ, Ազատ, և մի քանի այգիներ Ակոռի, Արփա, Ամաղու, Ջուռայ, Հողոցիմ, Ծաղկաձոր գիւղերու մէջ։ Ժամատան յատակը ծածկուած է կարգ կարգ տապանաքարերով, յորս ամփոփուած են Օրբելեանց ցեղի նշանաւոր անձանց և հոգևորականաց նշխարները։ Վանացս ականատես և մանրազննին նկարագրող Քաջբերունին, ամբողջ 27 տապան կը գնէ և երեք կարգի կը բաժնէ զայն, արևմտեան դրան մօտէն սկսելով և հարաւէն դէպի հիւսիս համբելով։ Յիշենք կարգաւ այդ շիրմաց մէջ հանգչողաց գէթ անուանք և թուականք, սկսելով առաջին կարգի տապանաքարերէն* Ա. Առաքել եպիսկոպոս, ՌԻ (= *1571*)։ *Բ և Գ քարերն արձանագրութիւն չունին*։ Դ. Ստեփաննոս եպիսկոպոս, ՉԾԲ (= *1303*)։ Ե. Առաքել Յովհաննէս, ՉՀԳ (= *1324*)։ *Զ. Արձանագրութիւն չունի։ Երկրորդ կարգի մէջ* Ա. Իվանէ մանուկ, ՉԽԳ (= *1294*)։ Բ. Ուլուս պատանի։ *Գ. Արձանագրութիւն չունի*։ Դ. Սամուէլ մանուկ։ Ե. Կայանէ։ Զ. Նաթել տիկին։ Է. Պարոն Նաթել, *1313*։ *Երրորդ կարգի մէջ* Ա. Սարգիս Եպիսկոպոս, ՉԽԷ (= *1298*)։ Բ. Գրիգոր Եպիսկոպոս, ՉԾԴ (= *1305*)։ Գ Ստեփաննոս Եպիսկոպոս,

ՉԹ (= *1260*)։ Դ. Յովհաննէս Եպիսկոպոս...։ Ե. Ասփահ տիկին։ Զ. Փախրադուլա քաջն։ Է. Իվանէ որդի Լիպարտի։ Ը. Այխկում իշխանաց իշխան։ Թ. Աւրիորդ Թամթիկին։ Ժ. Պարոն Թաղենց։ *ԺԱ և ԺԲ անգիր են և ջախջախուած։ Սմբատ Իշխանը Գամրիժու մէջ մեռնելով 1273 թուին*

*սեանց վրայ. սա այժմ ծանօթ է Գամբարան անուամբ։ Ընի փոքրիկ բեմ և սեղանի վրայ կան երեք որմնափակ սիւներ, որոց խորաքանդակին վրայ քանդակուած են խորհրդաւոր բերանաբաց և լեզուաբձակ օձեր։ Հիւսիսային որմոյն արտաքին անթուական արձանագրութիւնն կը յայտնէ, որ գամբա-*



55. *Բուրթել իշխանի կառուցած երկյարկ եկեղեցին։*

*մարմինը մեծ հանդիսով կը բերեն 'ի Նորավանս. ուր իր Տարսայիճ եղբայրն կը շինէ ըստ պատմչին յատուկ «տունն տապանի, և եկեղեցի յանուն Սրբոյն Գրիգորի, և անդ փոխէ զեղբայր իւր Սմբատ» (Օրբել. պատ. ԿԶ)։ Այս եկեղեցին կից է Ս. Կարապետի հիւսիսային որմոյն, կառուցուած է սրբատաշ քարով կամարակապ և չորս որմնայար*

*րանիս շինութիւնը յանձնած էր Տարսայիճ Սիրանէս անուն վարդապետի մը, և տարին վարուճ սպիտակ Հարկ յաւելցուած է եղեր Հալէձոր գիւղի։ Նոյն որմոյն ներքին կողմը կան զանազան ընծայաբերութեանց վերաբերեալ երկու արձանագրութիւնք, մին Մինայ խաթունի, միւսը Դափնից Գրիգորի և իր կնոջ Աւփայի։ Արեւմտեան դրան*

*վերեւ դեռ մնացած է Տարսայիճ իշխանի համառօտ արձանագրութիւնը եւ շինութեան թուականը* **ՉԻԴ** ( = *1275* )։ *Գաւթառանիս մէջ թաղուած են յետ Սմբատայ Օրպելեանց հօյակապ եւ հռչականուն իշխանաց եւ իշխանուհեաց մարմինք։ Բեմին դիմացը յատակը ծածկուած է երկու կարգ քանդակազարդ տապանաքարերով, թուով տասն եւ մէկ, որոց երեքը արձանագիր չունին, իսկ միւսները հնութեան կարգաւ հետեւեալք են* Ա․ Սմբատ իշխան, ՉԻԲ ( = *1273* )։ Բ․ Տարսայիճ իշխան, ՉԼԸ ( = *1289*)։ Գ․ Փախրադաւլ որդի Տարսայիճի, ՉԽԵ ( = *1296* )։ Դ․ Մինայ խաթուն արքայունի, ՉԽԷ ( = *1298* )։ Ե․ Էլիկում որդի Տարսայիճի, ՉԽԹ ( = *1300* )։ Զ․ Թամթա խաթուն մայր Բուրթելի, ՉԿԱ ( = *1312* )։ Է․ Սմբատ մանուկ որդի Բուրթելի։ Ը․ Բուղդա երիտասարդ եղբայր Բուրթելի, ՉԿԷ ( = *1318* )։ **Թէ՛** *ժամատան եւ թէ գաւթարանիս տապանաքարերու արձանագրութիւնք, յորոց միայն անուանք եւ թուականք քաղեցինք, իրենց համառօտութեամբն, լեզուի մաքրութեամբ, ազդու խօսքերով, յոյժ հռչակաւոր են, եւ Հայաստանի բոլոր տապանատանց մէջ չեն գտնուիր սոցա նմանը եւ ոչ իսկ հռչակաւոր Հոռոմոսի, Հաղբատայ, Սանահնի, Տարօնոյ եւ այլ վանքերու մէջ։ Գաւթարանէն գրեթէ քան հինգ քայլ հեռու դէպ ի հարաւ, վանացս կիսակործան պարսպի մէջ է Բուրթել իշխանի հայկական* **ՉՁԸ** ( = *1339* ) *թուին կառուցած հօյակապ եւ ճարտարարուեստ երկյարկ եկեղեցին* ( *Թ. 55* )։ *Եկեղեցւոյս անունն յայտնի չէ, բայց կը կարծուի թէ նուիրուած ըլլայ Ս. Աստուածածնի։ Ամբողջ շէնքը կառուցուած է միայն մէկ տեսակ բաց դեղին սրբատաշ քարէ. թէ՛ ներքին եւ թէ վերին յարկերն ունին մէկ մէկ դուռն արեւմտեան պատի վրայ, գեղեցկաքանդակ հիանալի շրջանակներով։ Ներքնայարկի դրան վերը* ( *Թ. 56* ), *կիսաբոլոր կամարագոյն քարի վրայ քանդակուած է Ս. Աստուածածին՝ Յիսուս գիրկը, նստած աթոռի վրայ, գլխուն վրայ բարձրաքանդակ գրուած է Մայր Աստուծոյ, եւ աջ ու ձախ կողմերը կեցած*



56․ *Բուրթել իշխանի կառուցած եկեղեցւոյն դրան քանդակը։*

են Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետները, որոց անուանք եւ գրուած են բարձրաքանդակ։ Այս քանդակապատկերէն քիչ մի վեր քանդակուած է հրաշալի տառերով **ՉՁԸ** (= *1339*), որ կը ցուցընէ եկեղեցւոյ շինութեան տարին։ Երեք կամ չորս աստիճաններով կը մտնուին եկեղեցւոյ ներքին յարկը, որոյ կամարակապ առաստաղը կանգնած է չորս որմնափակ սիւներու վրայ. չունի ոչ բեմ և ոչ խորան, այլ պատճա-



57․ Բուրթել իշխանի կառուցած եկեղեցւոյն վերնայարկը։

ռաւ կը կարծուի որ գամբարան եղած ըլ-
լայ, որովհետև յատակը ծածկուած է գե-
րեզմանաքարերով՝ որք թուական չունին ։
Առաստաղի չորս անկիւնները քանդակներ
կան, մին է Յիսուսի կիսարձանը, միւսներն
են ցուլ, առիւծ և արծիւ ։ Ներքնայարկի
դրան աջ և ձախ կողմերէն կը բարձրանան
քարէ նեղ աստիճաններ, որք թուով 13
զոյգ են, և մէկ ծայրով միայն ամրացած
են պատի մէջ ։ Ասոնք կը միանան երկրորդ
յարկի դրան առջև և կը կազմեն անոր
մուտքը և ելքը ։ Վերնայարկի (Թ. 57)
դրան շրջանակը աւելի գեղեցկանկար է.
վերը կիսաբոլորի մէջ քանդակուած է Փրկչի
պատկերը, որ ձախ ձեռքով բռնած է աւե-
տարան և աջով կը տեառնագրէ, ներքևը
գրուած է Յիսուս Քրիստոս. երկու կողմերը
կանգնած են Պետրոս և Պօղոս առաքեալ-
ները իրենց անուններով. կան նաև երկու
սրաթռիչ բազէներ կամ արծիւներ, որք կի-
սաբոլորի վերի անկիւնները կեցած իրար
կը նային ։ Իսկ փրկչական պատկերէն վեր
բարձրաքանդակ տառերով գրուած է Բուր-
թել իշխանաց իշխանի յիշատակարանը, ե-
րեք միմեանց կից սրբատաշ քարերու վրայ,
բայց ափսոս որ միջին քարն արդէն ինկած
է գետին և միւսներն ալ ենթակայ են նոյն
վիճակին ։ Մանրազրուագ հիւսիսային լուսա-
մուտի մօտ ես քանդակուած է Քրիստոսի
պատկերը վերնոյն նման աւետարանով և խա-
չակնքելով, և երկու կողմերն կան հրեշ-
տակներ ։ Տաճարիս գմբէթը որ անշուշտ սաս-

րին մասանց նման հրաշակերտ էր, 1840ին
շարժէն կործանուեր է, որոյ մնացորդք,
ճակատէն և որմերէն փլած քարերու հետ
թափուած են խառն ի խուռն թէ՛ վերնայար-
կի յատակը և թէ գետինը ։ Այդ մնացորդաց
մէջ կը տեսնուին քանդակազարդ սեանց
կտորներ, յորոց կը մակաբերուի թէ գմբէթն
սիւնազարդ եղած ըլլայ. կան նաև դուրսը և
ներսը գերեկաց մէջ՝ ոչ սակաւ քանդակուած
քարեր և խաչարձաններ, որոց վրայ կը
փայլի ժամանակին ճարտարութիւնն ։ Վեր-
նայարկի ներսը կամարակապ է և աւագ
խորանի երկու կողմը կան փոքրիկ խորան-
ներ նուրբ և գեղեցիկ որմնափակ սիւներով
բաժնուած ։ Աւագ խորանի կամարի վրայ
քանդակուած է Քրիստոս չորեքկերպեան



58. Բուրթել իշխանի ծաղկազիր անունը ։

աթոռի վրայ, երկու հրեշտակաց մէջտեղը.
իսկ պատուհանէն քիչ մը վեր է խորհըր-
դական Աղաւնին, որոյ երկու կողմերը ծաղ-
կահիւս գեղեցիկ տառերով գրուած է Հոգին
Սուրբ ։ Եկեղեցւոյս ներքնայարկի արև-
ելեան լուսամուտի ներքևը արտաքուստ մէկ
աղի մէջ, ծաղկազարդ զրուագներով ճար-
տարօրէն քանդակուած է Բուրթել իշխա-
նաց իշխան (Թ. 58) ։

Բաց ի վերոյիշեալ շինութեան որմերու
վրայ գտնուած յիշատակարաններէն, վանացս
մէջ կան սատ անդ ցրուած նաև ուրիշ ար-
ձանագրութիւնք և խաչարձանք այլ և այլ դա-
րերաց և նուիրատուաց ։ 1256ին Տա-
լյս անունով մէկը նուիրեր է իր ձեռա-
տունկ այգին. ուրիշ մը՝ թուական չկայ ,

Հազարի և ամուսինն Մելիք՝ ընծայեր է Զուռայ գիւղէն այգի մը։ Մահուան ոմն իշխան, նուիրեր է իր սեփական Նրքոյն բերդը, և այգիով տուն մը Ալփայի մէջ։ Ամիրա և իր եղբայրը Աղթամարեանք, ընծայեած են մէկ մէկ այգի Արփա գիւղէն։ Սիւնեաց պատմիչ Ստեփաննոս եպիսկոպոս Օրպելեանը, որ վանացս եօթներորդ առաջնորդն եղած է՝ և յետ բազմարդիւն կենացն թաղուած է փրկչական 1503 թուին ժամատան մէջ, նուիրած է Արատաշէն գիւղը և Ս. Սահակ փողանձանքի մէջ, իր հայրենարամին Հրասեկայ բերդը, Արատես գիւղը, Զուռայ գիւղը, զոր 21000 դրամով գներ է իր Ջալալ եղբօրմէն, և այլն։ Դեռ ուրիշներ ևս նուիրեր են այգիներ և գիւղեր. այս նուիրատուաց յիշատակարանք կը հանդին մինչև ԺԴ դարու սկիզբը։

Վանացս պարսպէն դուրս աւերակներու մէջ դեռ մնացած է փոքրիկ կամարակապ սենեակ մը, որ կը կոչուի Հիւրատուն։ Ներքը հարաւային որմոյն վրայի անթուական արձանագրութենէ կը հասկցուի՝ որ Տարսայիճի հրամանաւ շինել տուած է հիւրատունս Սարգիս եպիսկոպոս վանացս առաջնորդը. զանազան գիւղերու և այգիներու մուտքն ալ յատկացուած է եղեր այս հիւրընկալ տան։ Վանացս պատմութիւնն Ստեփաննոս Օրպելեանի յաջորդ Յովհաննէս եպիսկոպոսէն վերջ, որ մեռած է 1224ին, մեզ համար թաղուած է մթութեան մէջ, բայց 1569 և 1571 թուականներուն տապանաքարերու արձանագրութիւններէն կը յայտնուի՝ որ Նորավանքս տակաւին շարունակեր է իր ընթացքը և եղեր են իր մէջ եպիսկոպոսներ և միաբաններ։ Ինչ որ կ'երեւի 1840ին երկրաշարժէն վերջ բոլորովին ամայի և անտէր մնացեր է, որ Թուրքերը 1857 թուէն առաջ և յետոյ ոչխարանոց դարձուցեր են հռչակաւոր մենաստանս։ Այժմ Ամաղու գիւղի հետ սեփական ստացուածք է վանքս Երեւանցի Գ. Ստեփաննոս Եղիազարեանի ժառանգներուն։ Երբեմն հռչակաւոր մենաստանն՝ որ ամէն տարի բազմաթիւ ուխտաւորներ և մեծ հանդէսներ կ'ունենար, այժմ միայն Վարդավառին կու գան սակաւ ուխտաւորներ, մեծ մօր կանայք Տարալազըվի Արփա, Կնիշիկ և Խաչիկ գիւղերէն և Ճարուրի Ոսկիա Նորաշէն գիւղէն. կը մատուցուի Ս. Պատարագ, կ'աղօթեն և մատաղ կ'ընեն։ Տես ՆՈՐԱՎԱՆՔ։ — Սիսական, 184–203։ Ջալալեանց, Բ. 170–183։ Քաջբերունի, Արարատ ամսագիր, 1889 և 1890 տարիները։ Եւ այլն։

ԱՄԱՑՔ. — Վիճակ կամ բերդաքաղաք Դաշտային Կիլիկիոյ, զոր Յովհան Պերփեռուժէն կայսրը՝ Ա. Լեւոնի գերութեան ժամանակ ուրիշ քաղաքաց և բերդերու հետ նուաճեց։

ԱՄԱՆ կամ ԱՄԱՆՈՍ. Լտ. AMANUS. Յն. 'Aμανός. — Լերինք Կիլիկիոյ արեւելեան հարաւակողմը, որք կը բաժնեն Ասորիքը Կիլիկիայէն և փոքր Հայքէն։ Միջին դարուց մէջ թէ՛ յոյներ և թէ մեր ազգէն Սեաւ Լերինք կ'անուանէին, իսկ այժմ ամբողջ շղթան կը կոչուի Էլմա-տաղի, և հիւսիսային կողմը երկնցած մասը, քրիստոնեայ լեռնցի բնակչաց բազմութեան պատճառաւ Կեավուր-տաղի։ Լերանս գագաթները Անտիտորոսէն աւելի բարձր են և կը հասնին մինչև 7000 ոտնաչափ բարձրութեան։ Բազմաթիւ գետակներ լերանս ճիւղերէն իջնելով կ'առնեն հին Ճկեր և Հռոսոս գաւառները և կը թափին Հայոց ծոցը։ Լերանս ջրերէն և բարձրութիւններէն աւելի նշանաւոր են կիրճերը կամ նեղուցները, յորոց գլխաւորաբար մէկ կամ երկուքը կը համարուին նշանաւոր, Անցք կամ Դրունք կոչուելով։ Յիշենք միայն լերանցս մէջ նշանաւոր հին քարաշէն և կամարակապ Ամանոսեան Դրունք ը (թ. 59), որ այժմ ի Թրքաց զանազան անուններով կը կոչուի Սեաւ կամ Երկաթի դուռն (Գարա գափու, Տէմիր գափու) և Գուրտ—գուլագ (Գայլականջ), մերձակայ համանուն հանդրուանի անուամբ։

Այս ի բնէ ամրացեալ լերանց ամայի խաղաղութեան մէջ գրեթէ քրիստոնէութեան Կիլիկիոյ մէջ մուտ գտնելէն ի վեր՝ առանձնացած էին բազմութիւնք կրօնաւորաց և անապատականաց՝ այլ և այլ ազգերէ, որոց մէջ գլխաւորք էին Հայք, Ասորիք և Յոյնք, ինչպէս յետոյ իբրև միացան նաև Վրացիք

և Լատինք Խաչակրաց ժամանակ։ Զանազան անգամ այս անցքն և օգտակար ժողովուրդն, որք իրենց օրական ապրուստը ճարելու համար՝ իրենց աշօթից և սուրբ խոկրեմն ըստ Ուռհայեցւոյն (223). «..բազում անձինք ի որդոց կրօնաւորացն մատնեցան ի բերան սրոյ և յայրումն հրոյ, և եղեն կերակուր գազանաց և թռչնոց, և ոչ ժամա-



59. Ամանոսեան դուռը։

մանց ժամերէն դուրս, երկրագործութեան կ'զբաղէին, ենթակայ եղան հարստահարութեանց, կեղեքմանց և կոտորածի՝ բարբարոս իշխողաց և ասպատակաց նոյն տեղւոյն և շրջակայ կողմանց. որոց հրամանաւ երնեցին ծածկել հողով, վասն զի ճիացին անթաղք մինչև յաւիտեան. և անթիւ վանորեայք և գեղք այրեցան հրով»։ Այս անթիւ վանքերէն, որք յետոյ վերստին շինուեցան և չէնցան, հազիւ թէ սա և անդ ցիրուցան

սփռուած՝ պատմչաց քով կը գտնուի տասնի մը չափ անուններ կամ դոյզն յիշատակութիւն, այն ալ՝ աւելի ԺԲ դարու մէջ, որք են Պառ—Լանոյ (Դրախտ Աստուծոյ), Արիգի, հռչակաւոր Շուղր անապատը, յորմէ անբաժան են նուիրական յիշատակք Գրիգորիսի Փոքր Վկայասէրի և իւր եղբօր՝ Ներսիսի Շնորհալւոյ, ինչպէս նաև Ներսիսի Լամբրոնացւոյ. դարձեալ Բարսեղանց անապատ, Վանդկուն, Մաշկեւոր կամ Մաշկաւոր, որ ոչ միայն մենաստան, այլ և թեմական եպիսկոպոսանիստ աթոռ էր, ուր ծաղկեցաւ նշանաւոր վարդապետն Բարսեղ, Մարկոսի Աւետարանին մեկնիչը. Քարաշիթաւ կամ Քարաշիթու վանք, տեղի վարժութեան Սարգսի՝ կաթողիկեայց թղթոց մեկնչի, Շափիրին մենաստան, ուր վարժեցաւ և գրեց Իգնատիոս վարդապետ իւր ոսկեղինիկ մեկնութիւնն Ղուկասու Աւետարանին, Պաղակ—ծիակ վանք, և հուսկ ուրեմն Ս. Գէորգ՝ Լատին Բենեդիկտեան կրօնաւորաց և Ս. Սարգիս՝ Կիստերսեան միանձանց։ — Սիսուան, 403–410։ Բազմավէպ, ԽԳ. 397–398։

ԱՄԱՌԱՇԷՆ. — Կը յիշէ գիւղս Օրբելեան, Սիսնեաց Երնջակ գաւառի մէջ։

ԱՄԱՌՆԱՄԱՏԱԿԻ ՋՈՒՐ. — Յիշուի անունս Այրի վանաց 1200 թուականաւ արձանագրութեան մը մէջ։

ԱՄԱՍԻԱ. — Երբեմն հռչակաւոր քաղաք Պոնտոսի Երկրորդ Հայոց սահմանին մօտ, և այժմ գլխաւոր քաղաք համանուն գաւառի։ Կ'իյնայ 33° 32' արեւելեան երկայնութեան և 40° 39' հիւսիսային լայնութեան մէջ, 72 հզրմ. Եւդոկիայէն և 147 հզրմ. Սեբաստիայէն հեռու, գրեթէ նոյն ուղղութեան վրայ։ Հաղորդակցութիւն ունի այս կրկին քաղաքաց և Սեւ ծովու հետ՝ Սամսոնէն Խարբերդ եղած կառագնաց ճանապարհով։ Քաղաքս բարձր է ծովու մակերեւութէն 405մ. և կը տարածուի արեւմուտքէ արեւելք, սեղմուած յուռթի բուսականութեամբ զարդարուած հովտի մը մէջ, զոր կը կազմեն Քաշէ—տաղի և Ջախալի (թ. 60) լերինք։

Քսան և հինգ դարերէ ի վեր ծանօթ Ամասիան, այն սակաւագիւտ քաղաքներէն է, որ կրցած են իրենց անունը երկար ժամանակ պահել անփոփոխ։ Ըստ պատմութեան և աւանդութեան հիմնուած է Մեծին Աղեքսանդրի Ամասիս անուն հօրեղբօրէն։ Շատ ժամանակ անցնելէ վերջ, մեր Մեծին Տիգրանայ քեռայրն Միհրդատ, որ իւր աներէն կողմնապետ դրուած էր Մաժակ քաղաքին մէջ, կու գայ կը գրաւէ Ամասիան և այսպիսով կ'անցնի Հայոց իշխանութեան ներքեւ։ Միհրդատ քաղաքս ընդարձակելով արքունիքը կառոյց գետին հիւսիսային կողմը քարայեռնակին ստորոտը, և Շամիրամայ նման շինել տուաւ նաեւ քարակոփ շիրիմներ, սանդխաձեւ ճանապարհներ և գանձուց քարայրներ։ Ըստ պատմչին, այդ քարայրները գանձերով լեցնելով՝ բաւական տարիներ տիրեց Միհրդատ մինչեւ Պոմպէոսի գալուստը, որ պատերազմելով յաղթեց և քաղաքիս տիրեց։ Երբ Պոնտոսը հռովմէական գաւառ դարձաւ, Ամասիա անոր մետրապոլիսն կամ մայրաքաղաքն անուանուեցաւ. մեր հին պատմագրի համեմատ, այդ ժամանակ քաղաքս «... լի էր ամենայն չարեօք և պաշտամամբք սատանայի, մինչեւ ի կենարար քարոզութիւն առաքելոցն՝ յորում բազումք հաւատացին ի Տէր»։ Յետ ոչ սակաւ ժամանակաց դարձաւ Տրապիզոնի Յունաց տէրութեան գլխաւոր քաղաքներէն մին. և ապա կոմնենեանց ձեռքէն անցաւ Սելճուկեանց։ Տրապիզոնի Յունաց տէրութեան ամբողջական կործանումէն 65 տարի վերջը, 1397 թուականէն ի վեր Ամասիա դարձած է օսմանեան տէրութեան անուանի քաղաքներէն մին։

Պայազիտ Ելտըրըմի ժամանակ Լէնկ Թիմուր եօթը ամիս քաղաքս պաշարեց և ամուր դրից պատճառաւ չկարենալով տիրել, յարձակեցաւ մերձակայ գիւղերու վրայ և բոլոր բնակիչները սրէ անցուց։ 1472ին Ամասիա վերստին վտանգի մէջ ինկաւ Ուզուն—Հասանէն, բայց Մահմէտ Բ' որդին Մուսթաֆա, որ տեղւոյն իշխողն էր, զօրեղ յարձակմամբ մը թշնամեաց բանակը ցրուելով քաղաքը ազատեց։

Իրիս (Եէշիլ Ըրմաք) գետը քաղաքիս միջէն անցնելով, կը բաժնէ զայն կրկին մասանց. երեւելի շէնքեր, եկեղեցիներ, մզկիթ-

*ներ, շուկայն, և այլն, կառուցուած են գետոյն հարաւային կողմը, իսկ հիւսիսային կողմի շէնքերէն նշանաւոր են Ջիլա պէյի վայելուչ շինած կառավարութեան պալատը և հասարակաց ժամացոյցի աշտարակն։ Իրիսի վրայ տեղ տեղ քարաշէն և փայտեայ կամուրջներ ձգուած են, որոնք կը միացնեն քաղաքին երկու մասերը։ Գետս՝ որ Ամասիոյ մեծ գեղեցկութիւն և նկարչական տեսարաններ կ'ընծայէ նաև առատ ձկունք, ունի նաև իւր վնասները. գարնան և աշնան անձրևաց յաճախութեամբ ջուրը բարձրանալով կ'ողողէ մերձակայ պարտէզները, փողոցները և տները, տարուան մէջ քանի մը անձ ալ մէջը կը խեղդուին։ Պարտէզք և այգեստանք հրաշալի տեսարաններով կը տարածուին գետոյս երկու կողմերն, որոց ջուր կը մատակարարուի Իրիսի վրայ հաստատուած ջրաբաշխական դոլլակիր անիւներով։ Գետոյս վրայ կառուցուած են բաւական թուով ջաղացքներ, որոց մէջ ամենէն գեղազանցն է գերմանացի Պ. Մէցինը, որ ունի նաև մետաքսի թել հանելու և ոլորելու ընդարձակ գործարան։ Գիտական դարուս լուսաւորութիւնն և զարգացումն եթէ մուտք գործեն յԱրևելս, թէ՛ Ամասիա և թէ իւր նման ուրիշ քաղաքներ, շատ օգուտներ կրնան քաղել իրենց միջէն անցնող գետերէն։*

*Փողոցները ընդհանրապէս ծուռ ու մուռ են, անկանոն ու նեղ, միայն Սամայիտի թաղը քիչ մը լայն է՝ բայց դառ ի վեր։ Ունի շատ աղբիւրներ, որք թէպէտ ոչ այնչափ պաղ, բայց թեթև և համեղ ջուր ունին, և կը կոչուին Աճեմալի, Թեմեկլէր, Սօվուք բունար, Քալէ բունար. բայց տեղ տեղ կը խմեն նաև գետի ջուրը։ Քաղաքիս բնակչութիւն կը համարուի 30000, մերձաւորապէս բաժնուած հետևեալ կերպով.*

| | |
|---|---|
| Մահմէտականք սիւննիք . . | 13500 |
| » շիիք . . . | 6500 |
| Հայք լուսաւորչականք . . . | 9760 |
| » կաթոլիկք . . . . | 240 |
| Գումարն .... | 30000 |

*Հայոց եկեղեցիք երեք են ա. Ս. Նիկողայոս՝ ուր է առաջնորդարանը. բ. Ս. Յակոբ՝ գրեթէ առաջնոյն կից, կառուցուած ՌՄՂ (= 1841) թուին, աւելի ընդարձակ է և փառաւոր. գ. Ս. Աստուածածին՝ Սամայիտի թաղը բարձրագիր և գեղեցկաշէն, կառուցուած ՌՄԾԳ (= 1804) թուին, որոյ ներքին որմունք, սիւներն և առաստաղը նկարուած են սրբազան պատկերներով։ Այս եկեղեցիներն ունին գեղեցիկ դրիւք և բաւական ընդարձակ խաչքարներ, ծառեր և սենեակներ. իւրաքանչիւր բակի մէջ կան երկսեռ ծաղկոցներ։*

*Մզկիթներու մէջ ամենէն շքեղն և հոյակապն է Սուլթան Պայազիտ՝ Իրիսի եզերքը, կրկին մինարէով, կճեայ սիւներով, արտաքին նկարներով և քանդակներով, մանաւանդ ընդարձակ հրապարակովը և գեղեցիկ դիրքովը. բակին մէջ կան մեծամեծ նոճի ծառեր և մէկ կողմը ընդարձակ վարժարան մը։ Նշանաւոր է նաև մանաւանդ հնութեամբը Կեօք մետրէսէ ըսուած մզկիթը՝ քաղաքին արևմտակողմը, զոր ոմանք կը համարին թէ ժամանակաւ եկեղեցի եղած ըլլայ. ունի խոր գմբէթ և դրսի դրան քով մեծ մ'ալ աւերակ։ Թէպէտ այժմ անգործածելի է, սակայն Թուրքերը մեծապէս կը պատուեն այս տեղս, որ իրենց կանանց համար ուխտատեղի դարձած է. վասն զի ներսը դրան մօտ ձախակողմը քարէ կամարաշէն գետնափոր տեղւոյ մը մէջ փայտէ դագաղներով կը պահուին երկու մեռելոց անփուտ մարմինք և երրորդի մը ոսկորները՝ զորս ամէն մտնողաց ծնրադրութեամբ և աղօթիւք կը ցուցնեն, բայց չի գիտցուիր թէ որոց են այդ մարմինները։ Կէօք մէտրէսէի դիմացն է Գլիճ Ասլանի փառաւոր մահարձանը՝ սև կճեայ կափարիչով և արձանագրութեամբ. ասոր մօտ կան նաև ուրիշ շիրիմներ, զորս կը համարին թէ ըլլայ անոր կնոջը և որդւոց։ Թիմարխանէ կամ Յիմարանոց անուամբ սիւնազարդ նշանաւոր աւերակ մը կայ կառավարութեան պալատին դիմացը, Իրիսի հարաւակողմը, որոյ դրան շրջանակը զարդարուած է արաբական մանր քանդակներով և վրան կայ արձանագրութիւն. ներսը կանգուն մնացած սենեակներն արքունի ամբարանոց ըրած են։ Ըստ աւանդութեան, այս է եղեր ժամանակաւ Ռէայ մօրն չաստուա-*

ծոց մեհեանը, զոր հրձիգ ըրաւ Ս. Թէոդորոս զինուորը։ Շինուածոց մէջ նշանաւոր են նաև բազմաթիւ երեւելի Թրքաց տները և Զախալի լերան կողմի հովանոցները (քէօշք)։ Բաւական մաքուր, վրան գոց և ձեւաւոր է քաղաքիս շուկայն, որուն մէկ մասը 1885ին կրակով մը այրեցաւ։ Թաշխանը՝ ուր է մաքսատունը և վաճառականաց սենեակներ, բոլոր շուկային մէջ միակ քարաշէն և նշանաւոր կերտուածն համարուած է։ Պէզէստէնը՝ որուն վրայ գմբէթիք կը խօսին նախկին ուղեւորք, անգործածելի է և աւերակաց կարգն անցած։ Գեր. Սրուանձտեանց քաղաքիս Հայոց դպրոցաց վրայ դժգոհութեամբ կը գրէ, և կը յիշէ 1 ուսումնարան Ներսիսեան. 1 երկսեռ վարժարան Մեսրոպեան, 3 ծաղկոց մանկանց և 2 ծաղկոց աղջկանց։ Թէև Ամասիոյ գաւառին օդը բարեխառն է, սակայն քաղաքս խոր ձորամէջ լինելով՝ ամառը սաստիկ տաք կ'ընէ և յաճախ տենդի հիւանդութիւն կը տիրէ, այս պատճառաւ բնակչաց մեծամասնութիւնը կը ստիպուի բնակիլ գեղազուարճ պարտէզներու և այգիներու մէջ։ Ջերմաչափը ամառը շուքի մէջ կը բարձրանայ մինչև + 38° հարիւրամասն, և ձմեռը կ'իջնայ մինչև − 10° հարիւրամասն. այս բարձրագոյն և ստորին աստիճաններէն զատ, շատ անգամ կողմանցս կլիմայն փոփոխութիւններ կ'ունենայ, որուն պատճառն են շրջակայ բարձր լեռները։

Ամասիոյ մէջ տեղական պիտոյից համար ամէն տեսակ արհեստներ կը գտնուին, որոնք ընդհանրապէս Հայոց ձեռքն են։ Ճարտարարուեստից, բերոց և բանուկ վաճառականութեան վրայ որովհետև պիտի խօսինք համանուն գաւառի նկարագրութեան մէջ, այժմ անցնինք ակնարկ մ'ալ տալ հնադարեան մի քանի մնացորդաց վրայ, որք իբրև յուշարարք հնոյն Ամասիոյ մնացած են մինչև ցարդ և տեսողաց վրայ հիացումն կ'ազդեն։ Քալէ—տաղի որ բարձրացած է քաղաքի հիւսիսակողմը, իւր գագաթան վրայ կը կրէ հնաշէն բերդի և պարսպաց աւերակները. ինչ որ կը տեսնուին աւերակներէն, բերդս զուրկ է մեծագործութենէ, և չենք կարող հաւաստեաւ ըսել, թէ Միհրդատէն շինուած ըլլայ։ Աւելի աչքի ինկնող և նշանաւոր է բերդի մէջ շինուած ջրամբարը՝ զոր տեղացիք Ճիլանպոլու կ'անուանեն։ Խաւարնակի կամ ու ի շեղ կամարաձեւ ստորերկրեայ ուղի մ'է սանդուխներով, որ գրեթէ ժամ մը կը տեւէ և կ'իջնայ մինչև քաղաքի արեւելեան հիւսիսէն հոսող Թէրսախան գետը։ Ըստ ոմանց այդ ճանապարհով պաշարման ժամանակ ջուր կ'առնէին, և ըստ այլոց գաղտուղի մը համարուած է։ Ճիլանպոլուի մուտքի դիմացն է յանցաւորաց գուբը՝ որ Ամասիա զնտանը անուամբ ծանօթ է ամէնուն. խորութիւնն է վեց կամ եօթը մետր, ուր կ'իջեցնէին չուանով յանցաւորը և վրան քառակուսի խուփով կը գոցէին։ Գրեթէ 35 տարի առաջ վերջիշեալ բերդը շէն էր. բերդապահ քաղէլի անուանեալ բնակիչք հոն կը բնակէին և ազատ էին ամէն տեսակ հարկատուութենէ և զօրք տալէ։ Բերդի արտաքին դրան մօտ սենեկի մը վերնատան մէջ ամփոփուած կը պահուէին հին զրահներ և նետեր, տեսակ տեսակ ձեւերով սաղաւարտներ, լանջապանակներ, շղթայաշար զրահներ, ձիոց գլխանոցներ, և այլն. ամէնքն ալ երկաթէ, որոց և ոչ մին մնացեր է այժմ. Զիյա պէյ անունով Միւթասարիֆը՝ որ երեւելի է իւր բազմաթիւ բարեկարգութիւններով և շինութիւններով, այս հնութեանց կարեւորագոյն մասը ղրկած է ի Կ. Պոլիս։ Բերդին մէջ կան մի քանի Թուրքերէն արձանագրութիւնք. կան նաև յունարէն արձանագրութիւններ, զորս քաղաքի ուրիշ մասանց մէջ գտնուածներու հետ հրատարակած է Հ. Ներսէս Սարգիսեան։

Նոյն լերան քաղաքի կողմը նայող երեսի վրայ կրկնակամար և քառակուսի դռներով փորուած քարայրներ կան, և ժայռերու վրայ փորուած սանդուխներ, այդ քարայրները ելնելու և իջնալու համար։ Այսպիսի քարայրներ և սանդուխներ կան նաև քաղաքի հարաւային, արեւելեան և արեւմտեան կողմերու ժայռերուն վրայ։ Այս քարայրներէն եթէ ոչ ամէնքը՝ գէթ մեծամասնութիւնը, մնացորդք են անշուշտ մեզ արդէն ծանօթ Միհրդատայ գանձուց համար փորած քարայրներուն։ Գիտնականներէն եղան շատեր, որք այս քարայրներուն և Պերսեպոլսի թա-

պատրական շիրմաց մէջ մեծ նմանութիւն գտնելով, համարեցան որ եղած ըլլան ժամանակաւ Մարաց թագաւորաց գերեզմանք։ Գալէ—տաղիի մէկ կողին վրայ ալ դէպ յարեւելս կայ գեղեցիկ Թէքքէ (վանք) մը, շի-



60 · Ամասիա քաղաքի ընդհանուր տեսարանը։

նուած Շիրվանզատէ Բիւշաի փաշայէն, որ Սուլթան Ազիզի օրով Կ. Պոլսի մէջ մեծ եպարքոս էր, բնիկ Ամասիացի, որոյ ծնողք Շիրվանէն (Ազուանք) գաղթած եկած են եղեր հոս։ Յիշեալ եպարքոսի ծնողաց մարմինք կ'ամփոփուին այն Թէքքէի մէջ, ուր Թուրք աղօթողաց և այցելուաց համար շինուած են կանոնաւոր սենեակներ. ամբողջ շէնքը պարսպապատ է, ներսը ծառազարդ, դիրքը հովասուն և բարձրադիտակ։

Յոյժ նշանաւոր է քաղաքին արեւելակողմը Այնալը մաղարա քարայրը՝ որ ձևով նման է միւսներուն, բայց ներսը և մասամբ մ'ալ դուրսը ապակէքով ծեփուած ըլլալով, այնքան փայլուն է եղեր որ դրսի բոլոր առարկաները իբրև ի հայելւոյ ցոլացմամբ կը տեսնուէին եղեր. այժմ խաւարամած է և

*ծուխով սեւցած։ Կը պատմեն թէ փաշա մը ձիով դիմացէն անցած ատեն, ձին խրտչեր և զինքը գետին զարկեր է, այս պատճառաւ նոյն փաշան յարդ վառել տալով, թանձր ծխով սեւցուցեր է։ Այրիս մէջ ըստ հին ուղեւորաց կան եղեր շատ նկարէն պատկերներ, ինչպէս նաեւ կամարին վրայ դեռ կը նշմարուին երկտասան Առաքելոց պատկերները, և դրսէն ալ ճակտին վրայ յունարէն արձանագրութիւն մը։ Կը կարծուի թէ այրս կանխաւ եղած ըլլայ գանձատուն կամ մեհեան և քրիստոնէութեան ժամանակ եկեղեցւոյ փոխուած։ Տրապիզոնի թագաւորաց ատեն քաղաքս կար Յունաց հռչակաւոր եպիսկոպոսարան. Հայք ևս ունին եպիսկոպոսարան, որոց Առաջնորդական տեղապահ է այժմ Նիկողայոս Վր. Ֆրանկիւլեան։ Քաղաքս հայրենիք է Ստրաբոն մեծ աշխարհագրին, և քրիստոնէութեան առաջին դարուց մէջ մեզ ընծայեց զսուրբ Թէոդորոս զինուորը։*

Ուխտատեղիք. — *Այնալը մաղարայի դիմացը գետոյն միւս կողմն է Ամասիոյ Բասիլիոս եպիսկոպոսին գերեզմանը, զոր յիշէ Խորենացին (Բ. ՁԸ). առաջ այստեղ եկեղեցի է եղեր, իսկ այժմ կայ միայն քարակոյտ մը։ Քաղաքիս Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ պահուած ձեռագիր Յայսմաւուրքի մէջ կը յիշուի, թէ սուլթան Մուրատի ժամանակ Խըտըր անունով փաշա մը քակելով ուխտատեղւոյս եկեղեցւոյ մնացած հիմունքը, յայտնուեր են Ս. Բասիլիոսի նշխարները խորանին տակը, զոր վերստին ծածկելով նոյն տեղը պահած են։ Ս. Յովհաննէս, քաղաքէն ժամ մը հեռու քարայր մ'է և միջէն ջուր կը բղխի, ուր կը յաճախեն տենդի ախտացեալները. այստեղէն գտած են Ս. Յովհաննու կարապետի գլուխը։ Խանի անունով ուխտատեղի մըն ալ կայ Մարզուանու և Ամասիոյ մէջտեղ, որուն համար կ'ըսեն, թէ Ս. Թէոդորոսի սպաննած վիշապին գերեզմանն է։*

*Վերյիշեալ Ս. Յովհաննու աղբիւրէն ժամ մը հեռու զարմանաց արժանի է Միհրդատայ ջրանցքը որ լայն առու մ'է՝ կռանահարուած ապառաժ լերան երեսը մարդաչափ բարձրութեամբ. երկայնութիւնը կը տեւէ կէս ժամէ աւելի, և այժմ աւերակաց կարգն համարուած է, զոր Թուրքերը Ֆեհրատ եափուսու կը կոչեն։*

*Համանուն* ԱՄԱՍԻԱ *գաւառն կ'իյնայ Սեբաստիոյ նահանգին հիւսիս—արեւմտեան կողմը, Գըզըլ—ըրմաք գետոյն, Քասթամոնիի, Տրապիզոնի և Անկիւրիոյ նահանգաց և Եւդոկիա գաւառի մէջտեղ։ Ամբողջական տարածութիւնն է 29450 քռ. հզմ։ Կը բաժնուի 8 վիճակաց, և ունի 1201 գիւղեր։ Գաւառիս բնակչաց թիւն է 259600, բաժնուած հետեւեալ կերպով.*

| | |
|---|---|
| Մահմէտականք սիւննիք . . | 132000 |
| » շիիք . . | 66000 |
| Հայք լուսաւորչականք . . | 44000 |
| » բողոքականք . . . | 5500 |
| » կաթոլիկք . . . | 1100 |
| Յոյնք . . . . . | 11000 |
| Գումարն . . . . | 259600 |

Երկրագործութիւն. — *Օսմանեան Ասիոյ ամէնէն աւելի արգասաբեր երկիրն է Ամասիոյ գաւառն։ Բուսական ամէն տեսակ բերքեր առատութեամբ առաջ կու գան. շնորհիւ լեռներէն հոսող Գըզըլ—ըրմաք և Եէշիլ—ըրմաք գետոց օժանդակ բազմաթիւ գետակներու՝ երկիրն չորութենէ ազատ է։ Նշանաւոր են ցորենն, ափիոնն, կանեփն, պամբան. առատութեամբ կը մշակուին ամէն տեսակ պտուղներ, գլխաւորապէս Ամասիոյ հովտին և քաղաքին հռչակուած պարտիզաց մէջ։ Անզուգական և հատուէտ խնձորներն, տանձն և սերկեւիլն և սալորն մեծ քանակութեամբ կը ղրկուին Կ. Պոլիս։ Առանց ուզելու երկարել մեր խօսքն ուրիշ պտղոց և բերոց վրայ, կը դնեմք աստ միջին հաշուով, գաւառիս տարեկան բերքերու ցանկն և քանակն։*

| | | |
|---|---|---|
| Ցորեն . . . . | 35 000 000 | հոխայ |
| Գարի . . . . | 15 000 000 | » |
| Հաճար . . . . | 5 000 000 | » |
| Վարսակ . . . . | 95 000 | » |
| Եգիպտացորեն . . . | 50 000 | » |
| Կորեակ . . . . | 1 000 000 | » |
| Բրինձ . . . . | 250 000 | » |
| Բակլայ . . . . | 67 500 | » |
| Փոխադրելի գումար . | 56 462 500 | հոխայ |

| | | |
|---|---|---|
| Փոխադրեալ գումար . | 56 462 500 | հոխայ |
| Լուբիա . . . . | 1 150 000 | » |
| Ոսպ . . . . . | 900 000 | » |
| Սիսեռ . . . . | 1 500 000 | » |
| Պամիա . . . . | 975 000 | » |
| Խաղող . . . . | 4 000 000 | » |
| Խնձոր և տանձ . . . | 10 000 000 | » |
| Զանազան պտուղներ . . | 11 000 000 | » |
| Գազի խէժ . . . | 31 500 | » |
| Մեղրապ (սալէպ) . . | 10 000 | » |
| Դեղին հունտ (Graine jaune). | 150 000 | » |
| Ծխախոտ . . . . | 60 000 | » |
| Անիսոն . . . . | 800 | » |
| Ափիոն . . : . | 2 500 | » |
| Խաշխաշի հունտ . . . | 100 000 | » |
| Մոմ . . . . . | 7 000 | » |
| Մեղր . . . . . | 1 000 | » |
| Պրօն (Թիֆթիկ) . . . | 34 000 | » |
| Նուշ . . . . . | 1 000 000 | » |
| Չոր խաղող կամ Չամիչ . . | 600 000 | » |
| Գինի . . . . . | 15 00 000 | » |
| Ռուպ (պէքմէզ) . . . | 2 400 000 | » |
| Գումարն . . . . | 91 884 300 | հոխայ |

կամ մերձաւորապէս 106 միլիոն հազարագրամ։

Տարուան մէջ միջին հաշուով կենդանիներէն առաջ կու գան

| | | |
|---|---|---|
| Եզ և կով . . | 20 000 | գլուխ |
| Ձի . . . | 10 000 | » |
| Էշ . . . | 4 000 | » |
| Ոչխար և այծ . | 171 630 | » |
| Գումարն . . . . | 205 630 | գլուխ կենդանի։ |

Արուեստական արտադրութիւնք. — Գաւառիս գլխաւոր արուեստներէն մին է ոստայնանկութիւնը։ Այս արհեստը որ բոլորովին տնական է, գլխաւորաբար Ամասիա քաղաքին մէջ 2500 արհեստաւորներ ձեռքով կ'աշխատին, և Մարզուանի մէջ գրեթէ 3000 կանայք և աղջիկունք իրենց տանց մէջ կ'աշխատին։ Գործածներն են 9 կանգուն երկայն պաստառներ, ճերմակ, կարմիր և կապոյտ գծերով՝ զորս կը վաճառեն Անկիւրիոյ նահանգին մէջ։

Արուեստներու երկրորդ ճիւղ մ'ալ է ալիւրի վաճառականութիւն, որ 38 տարիներէ ի վեր մնած է այս կողմերս զուիցերացի Պ. Քրուկի ձեռքով։ Առաջին տարիները թէպէտ այնչափ ընդունելութիւն չգտաւ այս արուեստը, սակայն 15 տարի է որ շատ ծաւալ առած է և այժմ Ամասիա և իր շրջակայքը տարին 150000 պարկ ալիւր կը հանեն։ Մեծամասնութիւնն կը սպառի ի Սամսոն, Պաֆրա, Չարշամպա. 30000 պարկ ամէն տարի կը ղրկուի Սև ծովու այլ և այլ նաւահանգիստները։ Շերամաբուծութիւնն ժամանակաւ յոյժ ծաղկած էր յԱմասիա և տարին գրեթէ 7էն 800000 հազարագրամ խոզակ կ'ելնէր։ Շերամի հիւանդութեան սկսելէն վերջ, այս արուեստը շատ ինկաւ, և տարեկան բերքն իջաւ 30000 հազարագրամի։ Բայց յորմէ հետէ մուտ գործած է փասթէօրի դրութեամբ ձուաբերութիւնը, վերստին սկսաւ բարգաւաճիլ և 1890ին ունեցան 80000 հազարագրամ, և այժմ դեռ աւելի շատցած է։ Մեծ օգտակարութեամբ նորոգ հաստատուած են Ամասիոյ մէջ նաև երկու գաւարան։

Գաւառիս մէջ կան զանազան տեղեր հանքային ջրեր, և տեղ տեղ ալ երկաթի, պղնձոյ և արծաթախառն կապարի հանքեր, որոց երկուքն շահագործած է տէրութիւնը։ Ունի կաղնիի և փիճի գեղեցիկ անտառներ Լաթիհի շրջակայքը։ Թաֆշան–տաղի բարձանց վրայ Մարզուանու, Հաճի–քէօյի և Ղավզայի վիճակաց մէջ ևս նոյն տեսակ ծառոց անտառներ կան, ինչպէս նաև Աք–տաղի վրայ։ Այս անտառները լի են կենդանիներով և թռչուններով. Նապաստակները այնչափ շատ են լեռներէն միոյն վրայ, որ իրենց անուամբ նոյն լեռը կոչուեր է Թաֆշան–տաղ (Նապաստակաց լեռ)։ Կան նաև եղջերուներ և կինճերու երամակներ. արջն ևս սակաւագիւտ չէ, գայլ, աղուէս, լուսան, սամոյր, սամսար ևս կը գտնուին։ Պակաս չեն կաքաւներու խմբեր, փասիան, կոցար, սագ, վայրի բադ, արօս և ուրիշ որսի մանր թռչուններ։

Վաճառականութիւն. — Ամասիա գտնուելով Պաղտատի մեծ ճանապարհի վրայ, միշտ նշանաւոր եղած է իր բանուկ վաճառականութեամբը, մանաւանդ երբ ցամաքային ճանապարհով կ'երթեւեկէին ի Կ. Պօլիս. այժմ ևս Պաղտատէն ալլին գտնուած քաղաքաց վաճառքներն և մարդիկ այս գծով

կ'իջնեն ի Սամսոն, որ գաւառիս վաճառականական շարժման գլխաւոր և միակ նաւահանգիստն է։ Այժմ գաւառս միջին հաշուով տարին վաճառքներ կը ղրկէ և կ'ընդունի, հետևեալ ցուցակաց համեմատ.

### ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

| ԱՆՈՒԱՆՔ ՎԱՃԱՌԱՑ | ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ կամ կշիռ | ԱՐԺԷՔՆ ֆրանքով |
|---|---|---|
| Ցորեն . . . | 25000 տկաչփ. | 250000 |
| Գարի . . . | 20000 » | 160000 |
| Ալիւր . . . | 100000 պարկ | 1540000 |
| Սիսեռ . . . | 700000 հզրգր. | 105000 |
| Գեղին հունտ . | 1879 » | 1725 |
| Ափիոն . . . | 500 » | 18000 |
| Խաշխաշի հունտ . | 20000 » | 10000 |
| Գազի խէժ . . | 23960 » | 43125 |
| Մեղրապ . . | 1704 » | 3680 |
| Պտուղներ . . | 20658000 » | 2300000 |
| Կանաչեղէնք . . | 600000 » | 70000 |
| Խաղող . . . | 100000 » | 35000 |
| Կարագ . . . | 40000 » | 46000 |
| Մոմ . . . | 3556 » | 5980 |
| Մեղր . . . | 400 » | 1200 |
| Բուրդ . . . | 140000 » | 100000 |
| Պրոն (թիֆթիկ) . | 29000 » | 52000 |
| Ճրագու (Suif) . | 30000 » | 17000 |
| Գինի . . . | 100000 » | 30000 |
| Ռուփ . . . | 1000000 » | 250000 |
| Ոչխար . . . | ? » | 100000 |
| Ձի . . . | ? » | 15000 |
| Այծու Մորթ . | 40000 կտոր | 65000 |
| Կովու » . | ? » | 30000 |
| Եզան » . | ? » | 60000 |
| Ոչխարի » . | 40000 » | 72000 |
| Գառան » . | ? » | 50000 |
| Նապաստակի » . | 8000 » | 2960 |
| Ջրշան » . | 40 » | 1000 |
| Սամսարի » . | 400 » | 630 |
| Սամոյրի » . | 500 » | 4500 |
| Աղուէսու » . | 1500 » | 34500 |
| Շինութեան փայտ . | ? » | 10000 |
| Գորգեր . . . | ? » | 150000 |
| | Գումարն .... | 5732300 |

Գաւառիս գլխաւոր գետերն են Գըզըլ-ըրմաք, Թոզանլը-սու և Չէքէրէք-չայ, որոց միախառնումը կը ձևանայ Եէշիլ-ըրմաք կամ Ամասիոյ գետը. միւս գետերն են Թէրսախան, Տէլի-չայ, Աք-սու, և այլն։ Լեռներէն յիշենք Քէմէր-տաղ, Աք-տաղ, Ալպալ, Պէլ-տաղ, Ֆէքրատ-տաղ, Չաքալլար-տաղի, Քալէ-տաղի, և այլն։

Ծանօթ դէպքերու ժամանակ թէ՛ Ամասիա քաղաքի և թէ գաւառին մէջ Հայք կորուստ ունեցան 1000է աւելի անձինք, տուներնին աւրեցին, ջրաղացներ քանդեցին, և այլ ամէն տեսակ խժդժութիւնք ի գործ դրին։ — Սոփերք, ԺԶ. 55–63։ Թորոս Աղբար,

### ՆԵՐՄՈՒԾՈՒԹԻՒՆ

| ԱՆՈՒԱՆՔ ՎԱՃԱՌԱՑ | ՎԱՃԱՌՈՂ ՏԵՂԵՐԸ | ԱՐԺԷՔՆ ֆրանքով |
|---|---|---|
| Բրինձ . . | Թոսիա—Պոյապատ | 66132 |
| Օճառ . . . | Այնթապ—Անտիոք . | 43125 |
| Լեղակ . . | Մարսիլիա . . | 15000 |
| Երկաթ . . | Շուէտ—Ռուսիա . | 104100 |
| Անագ . . . | Մարսիլիա . . | 7027 |
| Ձէթ . . . | Քիլիս—Մեթիլինէ . | 6210 |
| Քարիւղ . . | Պաթում . . | 64400 |
| Մոմ . . . | Մարսիլիա . . | 2760 |
| Ապակեղէն . . | Գերմանիա . . | 12175 |
| Անէլինի ներկ . | Մարսիլիա . . | 2900 |
| Նրբարեւեռ . . | Փարիզ . . . | 10350 |
| Շաքար . . | Թրիեսթ-Մարսիլիա | 49162 |
| Սուրճ . . . | Մարսիլիա . . | 74520 |
| Բամբակ . . | Ադանա—Խարբերդ . | 147200 |
| Լուցկի . . | Թրիեսթ . . | 42000 |
| Թուղթ . . | » | 42000 |
| Մանր երկաթեղէնք | Գերմանիա . . | 11000 |
| Հնդիկ պաստառք . | Մէնչըսթըր-Օտեսա. | 200000 |
| Քալիքօթ կտաւ . | » » | 50000 |
| Զուխայ . . | Գերմանիա-Ռուսիա | 35000 |
| Ֆէս . . . | Թրիեսթ . . | 16000 |
| Կարմրիտ . . | Մարսիլիա . . | 15000 |
| Եղն . . . | Կարս—Կարին. . | 25000 |
| Ռում . . . | Աւստրիա-Ամերիկա | 4200 |
| Ալքոլ . . . | Աւստրիա . . | 1610 |
| Գանեւակ . . | Մարսիլիա . . | 3000 |
| Օղի . . . | Զանազան տեղերէ. | 13500 |
| | Գումարն .... | 1063371 |

39–67։ Ճնպրհ. ի Բարերդն, 5–8։ Տեղագրութիւնք, 54–58։ Քաղաքական աշխարհ. 553։ Վ. Քինէ, Ա. 738–756։

ԱՄԱՍԿՈՆԻ. — Տոհմի մը անուն, յիշուի զօրաբաժնին մէջ։

ԱՄԱՍՐԻԱ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ։

ԱՄԱՍՐՈՅ ՎԱՆՔ. — Այս անուամբ վանք յիշուի ի Սիւնիս, գիրքն և տեղն անյայտ։

ԱՄԱՏ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի, Կաղոյ և Ախտա գետոց մէջտեղ, Երեցու գիւղի մօտ՝ հիւսիսակողմը։ Բնակիչք են 113 տուն ամբողջ Հայ, ունին փոքրիկ փայտաշէն եկեղեցի մը և ուսումնարան։ Գիւղացւոց վիճակն խիստ դառն

է և աղբատին, գրեթէ 70–80 երիտասարդներ պանդխտութեան մէջ կը հեծեն։ Գիւղէս քառորդ ժամ հեռու դէպ ի հիւսիս ձորակի մը եզրը Նորեղուշ անուամբ ծառաստան մը կայ, որ ուխտատեղի է. իսկ արեւելեան կողմը բարձր գիրքի վրայ կայ խաչքար մը, որուն տեղացիք Սասմանա կամ Ցասմանա խաչ կ'ըսեն։ Ասկէց դէպի արեւելեան հիւսիս, Քերխանի ձորի սարոտը կայ գիւղի մը աւերակ. հոս գտնուած են տապանաքարեր, խաչքարեր, և քարէ նշխարքի տիպ մը՝ վրան փորագրուած Քրիստոսի խաչելութիւնը և խաչի քառաթեւերու մէջի անկիւնները նուրբ տառերով գրուած՝ Յս–Քս Հացն–Կենաց։ Գիւղէս գրեթէ 1½ ժամ հեռու, հիւսիսային կողմը, բարձրացած է լեռ մը, որոյ գագաթն կառուցուած է անշան բերդ մը։ Այս լեռը արդէն բերդի ձեւին, մանաւանդ տեղեր ևս շրջապատուած են պարիսպներով՝ յորս կան քարայրներ։ Ըստ ժողովրդեան աւանդութեան, սա միշտ ժողովրդեան ապաստանարան եղած է և կը կոչուի Ամատայ բերդ։ Ամատայ շրջակայքն կը գտնուին Կըձմբիկ, Գեռուկ Մաքաւա, Զար և Ֆերան քրդաբնակ գիւղերն։ Ամատայ բնակիչներէն իբրև հին և հարուստ գերդաստան կը յիշուի Գանախեան ցեղն. ուրիշ մ'ալ Ամատայ Մելիքի տունը, վերջնոյս գլխաւորներէն Մելիք և Օհան աղաները և իրենց որդիքը 1894ին բանտարկուեցան։ — Բազբեւանց, 129–131։

ԱՄԱՏԱ. Տես ԱՄԵՏԻԱ։

ԱՄԱՏՈՒՆԻՔ. Տես ԱՐԱԳԱԾՈՏՆ։

ԱՄԱՐԱՍ կամ ԱՄԱՐԷՆ. — Նշանաւոր վանք Արցախի Վարանդա գաւառի, Շուշիէն 45 վերստ հեռու, Մուղանի դաշտի մէջ, ուր Լուսաւորչի և Խազեզի սարերը կը ձեւացնեն գեղեցիկ հովիտ մը, որոյ միջով կը հոսի Ամարասու վտակ, սկիզբն առնելով շրջակայ գիւղերու աղբիւրներէն։ Հին ժամանակները հոս կայ եղեր գիւղ մը, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչը հիմնարկեր և իր թոռն Գրիգորիս՝ աւարտեր և օծեր է եկեղեցի մը։ Ս. Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի նահատակութենէ վերջ, աշակերտները հաւաքելով անոր նշխարները, բերեր ամփոփեր են այս եկեղեցւոյ մէջ։ Այնուհետեւ Ամարաս գիւղն դարձեր է նախ եպիսկոպոսանիստ, և ապա Աղուանից կաթողիկոսներու աթոռանիստ։

Հինգերորդ դարու վերջերը Աղուանից Վաչական Գ թագաւորը փնտռել տալով եկեղեցւոյս արեւելեան կողմը 489ին կը գտնէ Ս. Գրիգորիսի մարմինը, և նորէն ամփոփելով, շուտով գերեզմանին վրայ մատուռ մը շինել կու տայ։ Ժամանակ անցնելէ վերջ Վաչական շինել կու տայ նաև հոյակապ տաճար մը որբոյն անուամբ, և նշխարները դնելով միակտուր քարէ տապանի մէջ կը պահէ ծածկաբար իր առաջուան հին տեղը։ ԺԳ–ԺԴ դարու վերջերը Թաթարաց Բայտուն խանը, ըստ պատմելոյ Օրբելեանի (Գլ. Հ.), կողոպտեր է այս վանքը և տարեր Ս. Գրիգորիսի գաւազանը և ոսկեձոյլ 36 ակներով զարդարուած խաչ մը։ Յունաց կայսեր Գեսպինա դուստրը, որ Աբաղա խանին կինն էր, խնդրեր և դրկեր է այդ խաչը և գաւազանը ի Կ. Պոլիս։ 1387 թուին Ամարաս ևս Արցախի ուրիշ վայրերու հետ, ենթարկուեր է Լէնկ—Թիմուրի աւերմունքներուն։ Դեռ ժողովուրդը կը պատմէ, թէ ինչպէս այդ բռնաւորը Ամարասէն մինչև Արաքսը շարելով իր զօրքերը, հրամայեր է վանքի և արքայաշէն հրաշակերտ եկեղեցւոյ քարերը միմեանց տալով գետը թափել։ Յետ սատակման Լէնկ—Թիմուրի, շրջակայ բնակիչք տեղւոյն, նախկին եկեղեցւոյ հիման կիսուն վրայ, անարուեստ բայց ամրակուռ և կրաշաղախ եկեղեցի մը շինեցին, որ տեւեց մինչև 1858 թուականը։ Եօթնեւտասներորդ դարուն, Ամարասայ միաբաններու համար իբրև ամարանոց, կառուցեր են Հերեր գիւղի մէջ գեղեցիկ եկեղեցի մը և սենեակներ։ Կը կարծուի, թէ նոյն վանքի ամարանոցն եղած լինի, նաև Վերին Թաղավարդէն դէպ ի հարաւային արեւմուտք 1½ ժամ հեռու գտնուող և գետնի մէջ թաղուած եկեղեցին, որ այժմ Բարեշածառ անունով ուխտատեղի է։ Եկեղեցւոյս մէջ կան արձանագրութիւններ ՆԽԶ (=997) թուականաւ։ Բարեւածառի համար աւանդութիւն մը կայ, թէ հին ժամանակներ այստեղ կ'ապրէր սուրբ եպիսկոպոս մը, և ամէն անգամ, երբ նա երկար

*ծածկապահութեան և ճշմութեան վերջ պատարագ կը մատուցանէր, շրջակայքի ծառերը ողջոյնի ժամանակ երեք անգամ կը խոնարհեցնէին իրենց գագաթները և միմեանց կպցնելով ողջոյն կու տային։ Ութևտասներորդ դարուն, Վարանդայի իշխան Մելիք Շահնազար Հայկազն՝ ուզելով ի հիմանց նորոգել այս ուխտատեղին և վերստին մէջը միաբաններ հաստատել, նախ եկեղեցւոյն չորս կողմը, քառակուսի ամրոցաձև պարըսպեր է։ Պարսպի չորս անկիւնները կան բրգաձև աշտարակներ, իսկ ներսը խոհանոցներ, սեղանատուններ, սենակներ, թէ՛ ուխտաւորաց և թէ միաբաններու համար։ Այս շինութիւններէ վերջ մահը վրան հասնելով, չկարողացաւ շինել նաև եկեղեցին։ Գարուս (ԺԹ) սկիզբը, վանքս անտէր մնալով ընկեր է Թուրքաց ձեռքը, զոր իրենք Աղ–Օղլան (Սպիտակ–Տղայ) կ'անուանէին և իրենց որբաւայր էին դարձուցեր։ Այսպէս կոչուելուն պատճառն այն է, որ հրաշագործ Սուրբ Գրիգորիսը միշտ կ'երևէր սպիտակազգեստ և մանկատեսիլ, ահ ձգելով շրջակայ բնակչաց վրայ։ Առ ժամանակ մը Ռուսաց զօրաց իբրև բերդատեղի ծառայած է վանքս, և 1832 էն մինչև 1847 մաքսատուն եղած է։ Մետրապոլիտն Աղուանից և արքեպիսկոպոսն Տէր Բաղդասար Ջալալեան, շատ աշխատելով՝ վերջապէս յաջողեցաւ մաքսատունը տեղափոխել Երասխի ափի մօտ, և վանքն իր կալուածներովն 1848ին վերադարձաւ Հայոց հոգևոր իշխանութեան։ Այժմեան վանացս եկեղեցին նորոգ կառուցուած է 1858ին գլխաւորաբար Շուշեցւոց օժանդակութեամբ. նոյն տարւոյ ապրիլ 23ին, եղաւ երկրորդ գիւտն նշխարաց Ս. Գրիգորիսի, և մեծ հանդէս կատարուեցաւ։ Եկեղեցւոյս երկայնութիւնն է 23 մետր, լայնութիւնն գրեթէ 13մ և բարձրութիւնն 6մ. կառուցուած է ամբողջապէս կաթնագոյն սրբատաշ քարերով։ Զորս քառանկիւնի անպատուանդան սիւներու վրայ կը բոլորուին ռոմանական կամարներ, որոնց վրայ կը յենու, նոյնպէս ռոմանական կամարակապ ձեղունը։ Ունի աւագ խորանէն զատ երկու փոքր խորաններ, տասն մեծ լուսամուտ, մէկ դուռ արևմտակողմը, երկու խորհրդարան, մէկ աւազան, և փոքրիկ կաթուղիկէ մը՝ որ կը ծառայէ իբրև զանգակատուն։ Աւագ խորանի տակ է ստորերկրեայ հին վիրապ մը 3, 75 մետր երկայնութեամբ, 1, 90մ լայնութեամբ և 3½ մետր բարձրութեամբ, ուր ամփոփուած են Ս. Գրիգորիսի նշխարները։ Դասի հարաւային կողմն բեմի մօտն է այդ վիրապի կամ փոքրիկ մատրան մուտքը, ուսկից տասն և ութ սանդուղներով կ'իջնուի մէջը։ Մատուռս՝ որ ամբողջապէս շինուած է խազեղի հանքի սրբատաշ քարով, բացի այժմեան մուտքէն, ունեցեր է նաև ուրիշ դուռ մը արևելեան կողմէն, որ այժմ փակ է։ Հիւսիսային դասի մօտ պատի կից, կայ 1889ին Շուշեցի ճարտարապետ Միքայէլ Տէր Խորայէլեանցի աշխատութեամբ շինուած, Ս. Գրիգորիսի քանդակազարդ գեղեցիկ տապանաքար մը հանդերձ արձանագրութեամբք։ Խորհրդարաններէն միոյն մէջ դրուած է Ս. Գրիգորիսի մասունքը, զետեղուած՝ արծաթեայ, ոսկեզօծ, ականակուռ և մատանիներով զարդարուած աջի մը մէջ։ Վրայի արձանագրութիւնը կը յայտնէ՝ թէ շինուած է 1870ին անվարձ աշխատութեամբ Շուշեցի մի քանի ոսկերիչներէն։ Վանքիս պարսպի կից թէ և կանգուն են տակաւին հին 24 կամարակապ և բաւական բարձր սենեակները, սակայն մասնաւոր նորոգութեան մը կը կարօտին։ Այժմ վանքս ունի միայն մէկ վանահայր վարդապետ, որոյ բնակութեան համար նորոգած են մի քանի սենեակներ։ Ամարասի կալուածներն և ստացուածքներն են գրեթէ 300 հարիւրակալ վարելահող և նոյնչափ այգետեղի, մէկ ջրաղաց, 10 կով, 1 ձի, և այլն։ Տարեկան եկամուտը կը հասնի 700 րուբլիի։ Վանացս հարաւային կողմը, վտակի աջակողմեան լանջի վրայ կը տեսուին ընդարձակ աւերակներ Ամարաս գիւղին կամ քաղաքաւանին։ Աւերակաց մօտ է նաև գերեզմանատունը, որ նոյնպէս ընդարձակ է։ — Ճռաքաղ, 1859, էջ 332–348. 1860, 219–220։ Արցախ, 113–115։ Վարանդա, 7–8, 37–39։*

ԱՄԱՐԴՈՒԼ. — *Հայաբնակ գիւղ Ատրպատականի Գարատաղ գաւառի Մնձաւ վիճակի մէջ. բնակիչք 180, բաժնուած 30 տան։ Արարատ ամսագրի 1872 տարւոյ*

332 իջին մէջ, հրատարակուած է տեղեկագիր մը, յորում նկարագրուած է այլազգեաց գիւղիս վրայ յարձակիլն և եկեղեցին ու տները կողոպտելը։

ԱՄԱՐԷՆ. Տես ԱՄԱՐԱՍ։

ԱՄԱՐՍՈՆ. — Գիւղ Տուրուբերանի, Վարդոյ վիճակին մէջ. բնակիչք Հայք և Քիւրդք խառն, ամբողջ 25 տուն։

ԱՄԱՐՍՏԱՆ. — Վարդանայ աշխարհագրի ընդարձակողը կ՚ըսէ, թէ Շամիրամ Վանայ բերդը շինելով, քաղաքը անուանեց Ամարստան։

ԱՄԱՑ. — Այս անուամբ հին գիւղ մը կը յիշուի Պարսկահայոց մէջ։

ԱՄԲ կամ ԱՄԳ. — Փոքրիկ գիւղ Հայոց Բաղիշոյ հարաւային արևմտակողմը. ունի ուխտատեղի Ս. Յակոբայ եղբօր Տեառն։ Նշանաւոր է մերձակայ ապառաժներու մէջէն բղխող պաղ ջուրն։

ԱՄԲԵՐԴ. Տես ԱՆԲԵՐԴ։

ԱՄԲԷԺ. Տես ԶՈՐՔ։

ԱՄԲՐԱԽԱՔԱՐ. — Թուի անուն գիւղի կամ կալուածի մը՝ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, զոր իշխան ոմն Աշոտ՝ որդի Կարապետայ ՇԼԸ (=1089) թուին նուիրած է Տաթևու Ս. Նշանին։

ԱՄԵՆԱԾԱՏ. — Փոքր գիւղ Հայոց Վանայ շրջակայքը, բնակիչք 100էն աւելի, եկեղեցի չունին։

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ. — Վանք և ուխտատեղի Գիլատան (Գանձակ) գիւղէն 1½ վերստ հեռու, բարձր ժայռի մը հարթացած գագաթան վրայ։ Վանացս հիւսիսային և հարաւային կողմէն կը հոսին երկու վտակներ, որոնք արևելեան կողմը իրար հետ միանալով կը ձևացնեն Խնչս գետը։ Եկեղեցիները կառուցուած են իրարու մօտ, և ինչպէս կը յայտնեն արձանագրութիւնք, երկու դարէն աւելի հնութիւն ունին։ Վանքս այժմ ցաւալի դրութեան մէջ կը գտնուի և քայքայուած է թէ՛ արտաքին և թէ ներքին կողմէն։ Աբեղաներու խուցերը շինուած են ընդհանրապէս նեղ և առանց լուսամուտի։ Գիւլըստանցի կոյր օրիորդ մը 1888 թուականին, նորոգել տուեր է եկեղեցիներէն մին, ուր կը դիմեն այժմ ուխտաւորները։ — Նոր Դար, Է. 132։

— Այս անուամբ կուսանաց վանք կամ անապատ մը կ՚իյնայ Սիւնեաց Արևիք գաւառը, Մանլեւու ձորակին մէջ։ Կը յիշուի միայն Տաթևու թեմին վանօրէից ցուցակին մէջ։ — Ամենափրկիչ անուամբ ուրիշ վանքեր ևս կան մեր երկրի զանազան կողմերը, Տրապիզոնի մօտ, Զէյթունի մօտ, և այլուր, որոց վրայ կը գրուի նոյն քաղաքաց նկարագրէն վերջ։ Տես ՀԱԽՈՒՑ-ԹԱՌ։

ԱՄԵՐԻԿ. — Գիւղ Աղձնեաց այժմեան Խզու կամ Հզու գաւառի մէջ, բնակիչք Հայք և այլազգիք խառն։

ԱՄԵՐԻԿԱ. Տես ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ։

ԱՄԵՏԻԱ կամ ԱՄԱՍԱ. — Գաւառակ Վանայ այժմեան Հէքեարի գաւառի հարաւակողմը, որուն մէկ մասն կ՚իյնայ մեր հին Մոկաց և Կորճէից նահանգաց մէջ, և մէկ մասն ալ մեր երկրէն դուրս։ Կը բաժնուի 5 վիճակաց և կը բովանդակէ 366 գիւղ։ Բնակչաց ընդհանուր թիւն է 23940, մեծագոյն մասը Քուրդ են, յետոյ Նեստորականք, Քաղդէացիք, Հրեայք, Եզիտիք և Թուրքք, իսկ Հայք այս գաւառակի մէջ խիստ նուազ թիւ մ՚ունին։ Գլխաւոր քաղաքն ևս կը կոչուի Ամետիա և ունի 5000 բնակիչք. ուր կը նստի Քաղդէացւոց եպիսկոպոս մը, և Մուսուլի Դոմինիկեան Հարք առաքելութիւն մ՚ունին, և ամառն հոս կ՚անցնեն։ Փոքրիկ քաղաքս կառուցուած է սարահարթի մը վրայ, որ գրեթէ 400$^{մ}$ բարձր է պարտէզներով և այգիներով զարդարուած գեղեցիկ հովտէ մը. հեռու է Վանէն 150հզրմ. և Ջուլամերկէն 65հզրմ. իսկ Պաշ-գալէէն 125 հզրմ։ Հինաւուրց բերդին համար, ոմանք կը կարծեն թէ Արտաշէս թագաւորէն շինուած ըլլայ։ Գաւառակիս գլխաւոր բերքերն են գղթոր, ծխախոտ, ընտիր խաղողի զանազան տեսակներ՝ որով և ընտիր գինի, թուզ, ցորեն, գարի, բրինձ, ձիթապտուղ, խնձոր, նուռն, գազպէ, և այլն։ Գրեթէ երկիրը հաւասարապէս բաժնուած է, լաւ ոռոգուած դաշտային մասանց և գեղեցիկ անտառազարդ լեռներու։ Կենդանիներէ ունի արջ, գայլ, վագր, յովազ, աղուէս, ճագար, նապաստակ, նաև ջայլամն, և անապատ տեղեր կը գտնուի նաև առիւծ։ — Հ. Հայ. 245–248։ Քինէ, Բ. 758–760։

ԱՄԵՐՈՒՏ. — *Լեռ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։*

ԱՄԵՌՆԱՓՈՐ. *Տես* ՍՈԴՔ։

ԱՄԷՏԻԷ. *Տես* ԱՄԵՏԻԱ։

ԱՄԻԴ, ԱՄԻԹ, ԱՄԻՏ, ԱՄԻՏԱ. *Տես* ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ։

ԱՄԻՐԴԱՐԵԱՆՑ ՁՈՐ. — *Անձուկ ձորակ Այրարատայ կոտայք գաւառի մէջ Երեւանայ մօտ, զոր յիշէ Զաքարիա սարկաւագ Ղապոնց ձորի հետ։*

ԱՄԻՐՎԱՆ. — *Հաստարակութիւն և գիւղ Գանձակու Արաշի գաւառի մէջ. բնակիչք 1012, ամբողջ Հայ, բաժնուած 152 տան։*

ԱՄԻՒԿ, ԱՄՈՒԿ *կամ* ՀԱՄՈՒԿ. — *Ի հնումն հռչակաւոր ամրոց բարձր քարաժայռի վրայ՝ Վասպուրականի Առբերանի (Գընունի) գաւառի մէջ, Վանայ ծովակի արեւմտեան եզերքը։ Թ. Արծրունին (241) կը պատմէ թէ ի՛նչպէս Աշոտ իշխանը ամրոցիս Ուրմանիկ կոչուած այլազգեաց դէմ պատերազմի գնաց ի վրէժ Ռոստոմ Վարաժնունիի արեան, և անառիկ դիրք ունենալուն չկրցաւ առնել։ Արծրունեաց քաջերը, մանաւանդ Դերենիկ անուանուած Գրիգոր իշխանը, շատ աշխատեցան և պատերազմեցան ամրոցիս առնելու, սակայն այդ փառքն պահուած էր քաջին Գագկայ՝ որ գիշեր ժամանակ «գողանայ զամրոցն, և սրախողխող արարեալ զբնակիչս բերդին՝ բնաջինջ բառնայ յերկրէ»։ Գագիկ բազմաթիւ արհեստաւորներով և շատ ծախքով շինութիւններ կառուցանել տուաւ հոս և լերին գագաթէն մինչև վար ամուր պարսպով շրջապատեց. այնպէս որ այլազգեաց արշաւանաց ժամանակ, երբև անառիկ և անմատչելի ապաստարան քրիստոնէից, յետ Աղթամարայ սա միայն կը յիշուի։ Ամրոցիս երբև տէր կը յիշուի, Սենեքերիմ Արծրունւոյ տոհմակից Աբըլմըսեհ կուրապաղատն և ապա իր որդին Ալուզի իշխանը։ Յետ ժամանակաց, ինչպէս կը յիշատակէ Վարդան (124), Պարսից Ելտկուզ աթաբէկը, առաւ ամրոցս Խեղենիկ Արծրունիի ձեռքէն։ Թովմա Մեծոփեցին եւս կը յիշէ Ամիւկ երբև բերդ, և տեղ մ'ալ զայն կը կոչէ Քար Ամկոյ։ Գագկայ և անկէ առաջ եղած շինութիւններէն բան մը մնացած չէ այժմ, բացի աճազին և դըժուարելանելի ապառաժէն, որոյ ծայրը դեռ կը մնայ փոքրատարած հինաւուրց ամրոցն։ Հ. Ինճիճեան կը յայտնէ թէ բերդի վրայ կան շատ և անդ անծանօթ գրուածքներ, որոնք կարելի է թէ լինին խուզարկութեան արժանի բեւեռագրեր։ Կը կարծուի թէ Գագկայ շինութիւնքն ծովակողմն եղած ըլլան, զորս ծովը բարձրանալով իր մէջ առած է այժմ և հասած է մինչև քարաժայռի ստորոտը։ Քարաժայռի մօտ ձորամէջը կը գտնուի համանուն գիւղը, որոյ բնակիչք Հայք և Թուրքք խառն են։ Հայոց թիւն կը հասնի 200ի, ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը։ Գիւղս թեմ է Լմայ, որուն ծովեզերեայ դրսի տունէն երկու ժամ հեռու է։ — Ստորգր. Հին Հայ. 224–5։*

ԱՄՈԿՏԱ. — *Գիւղ Համշէնի։*

ԱՄՈՁ. — *Սակաւաբնակ գիւղ Հայոց, Պորչալուի Լոռւայ վիճակին մէջ։ Դիրքն շատ գեղեցիկ է և զուարճալի. ունի սագաշէն փոքրիկ եկեղեցի մը և 50 բնակիչ։*

ԱՄՈՒՏԱՆ *կամ* ՀԷՄԴԻԷ. — *Հին բերդ Դաշտային Կիլիկիոյ, Ջահանայ աջ կողմը՝ զոր ամենէն առաջ նուաճեց Թորոս Բ, գերութենէ ազատելէ վերջ։ Լեւոն Թագաւորը 1212ին ապրիլի մէջ յատուկ պարգևագրով մը Ամուտան բերդն և ուրիշ կալուածներ նուիրեց իրեն սիրելի Տեւտոնեան ասպետաց։ Կէս դարէն աւելի Տեւտոնեանց ձեռքը մնաց բերդս մինչև Եգիպտացւոց մեծ և բազմաղէտ արշաւանքը (1266), յետ գերելոյ զԼեւոն Բ և սպաննելոյ անոր Թորոս եղբայրը, առաջ գալով և նուաճելով Ջահանայ ձախակողմեան բերդերը, գետին հունէն անցան և տիրելով բերդիս, մէջը ապաւինող 2200 հոգիներէն, մէկ մասը կոտորեցին և կանայք ու մանկունք գերի տարին։ — Սիսուան, 199–200։*

ԱՄՊ. *Տես* ԱՄԲ։

ԱՄՊԱՐԼՈՒ. — *Գետակ Այրարատայ, կը բղխէ Արագած լերան արեւելեան կողմէն. օժանդակ է Քասաղ գետոյն։*

ԱՄՊԸՐԿԱՅ. — *Հայաբնակ գիւղ Արաբկերի, բնակիչք 500էն աւելի են, ունին Ս. Նշան եկեղեցի մը և 1 վարժարան։*

ԱՄՍԹԵՐՏԱՄ, ԱՄՍՏԵՐԴԱՄ *կամ* ԱՄՍՏԵԼՈԴԱՄ. *Տես* ՀՈԼԱՆՏԱ։

ԱՄՐԱԳՈՄ. — Գիւղ Այրարատայ Հաւնունեաց գաւառի մէջ՝ Երասխայ մօտ ձախակողմը, գրեթէ փարսախ մը Վաղարշապատէն հեռու, հասարակաց ճանապարհի վրայ։

ԱՄՐՏՕԼՈՅ կամ ԱՄԼՈՐԴՒՈՑ ՎԱՆՔ. Տես ԲԱՂԷՇ։

ԱՄՕՔ. — Բիւզանդ (265) կը յիշէ գիւղս յատուկ Մեծին Ներսեսի։ Երբ Փաւստոս եպիսկոպոսի ճգնաւորաց եղբայրն Առոստոմ՝ անապատի մէջ վախճանեցաւ, մարմինը բերին և «թաղեցին ի բուն ի գիւղն հայրապետին Ներսէսի, որում անուն Ամօքն կոչի». գիւղն և գաւառն անյայտ է։

ԱՅ. — Հին Կորճէք նահանգի անծանօթ գաւառներէն մին։

ԱՅԱԶԼՈՒ. — Գիւղ Այրարատայ (Երեւան) այժմեան Քէմէրլիի վիճակի մէջ. բնակիչք 400 Հայք և 50 Թաթարք։

ԱՅԱԶՄԱ. — Գիւղ Հայոց Պորչալուի (Գուգարք) Թիրիալէթ վիճակի մէջ. բնակիչք 320, բաժնուած 33 տուն։

ԱՅԱՇ. Տես ԵԼԵՒԱՍ։

ԱՅԱՍ. Հն. ԵԳԷ կամ ԵԳԷԱՍ. Լտ. AEGÆ. Յն. Αἰγαί. — Այժմ փոքրիկ աւան Ծովային Կիլիկիոյ, և Ռուբինեանց ժամանակ հռչակաւոր բարգաւաճ և վաճառաշահ քաղաք։ Արեւմտակողմն է ի հնումն նոյն անուամբ կոչուող հռչակաւոր խորշը, որ այժմ Եուշմուրթալըք (Զուշանոց) գիւղի անուամբ կը կոչուի, և ուր ձմեռ ժամանակ կը կենայ Միջերկրականի անգղիական նաւատորմիղը։ Հին ժամանակները քաղաքս կոչուած է Եգէաս և հաւանօրէն կառուցուած է ի Յունաց, զի իւր անուամբ յատուկ դրամ ևս կայ (Թ. 61) յունական գրութեամբ։ Աշխարհակալ նուաճողը շուտով հնազանդեցուց այդ յառաջ գնաց քաղաքս և Հռովմայեցւոց ժամանակ ազատ քաղաքի պատուանունն ստացաւ։ Քրիստոնէութեան ժամանակ հոս հաստատուեցաւ Կիլիկիոյ երկրորդ արքեպիսկոպոսական աթոռ, ուր նահատակուեցան ոչ սակաւ մարտիրոսներ հռովմայեցի կուսակալի ձեռքով։ Քաղաքիս յոյն եպիսկոպոսունք կը յիշուին մինչև Զ դարուն մէջ, իսկ անկից վերջը ո՛չ նշանաւոր քաղաքական դէպք և ոչ եպիսկոպոսունք կը նշանակուին մինչև ԺԳ դար. յորում իր երկար լռութենէն յանկարծակի փառօք կը զարթնու Այաս վայելելու նոր կեանք մը, թէպէտև ոչ երկար, ըստ տեւելոյ բաղդի Ռուբինեան իշխանութեան, բայց այնքան ազնիւ և շարժմամբ և եռանդեամբ՝ որ աշխարհիս յաւէրժայիշատակ քաղաքաց կարգը կրցաւ անցնիլ։ Վասն զի մեր իշխանաց ամբողջ դար մը հարստութեան ժամանակ՝ եղաւ ամենաբարգաւաճ վաճառաշահ առեւտրոց և բազմաթիւ ազգաց երթեւեկութեամբ, և ինչպէս Սիս գլուխ էր հայկական աշխարհին և տէրութեան, այսպէս և Այաս՝ նոյն մարմնոյն սիրտն էր, և աշխարհածանօթ համբաւովն՝ գլխէն աւելի փառաւոր, իսկ վաճառականական մրցմանց մէջ՝ յաղթող Ասորւոց և Եգիպտոսի ամէն շահաստանաց. համառօտ ըսելով՝ ԺԳ դարուն կիսէն մինչև ԺԴ դարուն կէսը՝ եղաւ առաջին նաւահանգիստ և տեղի վաճառուց




61. Դրամ Եգէասայ = Այաս։

հին արեւելեան աշխարհաց՝ Պարսից, Հնդկաց և Չինաց, և արեւմտեան աշխարհաց՝ Իտալիոյ, Սպանիոյ, Գաղղիոյ, Ալամանաց, և այլոց։

Մեր պատմութեան մէջ, չենք հանդիպիր ուրիշ քաղաքի մը, որ իբրև նաւահանգիստ և շահաստան հռչակ ստացած լինի հանգոյն Այասայ, որ յօտարաց կոչուած է Լայացցոյ? Հայոց թագաւորի։ Ինչպէս այժմ Կ. Պօլիս, նոյնպէս և յայնժամ քաղաքս կեդրոն լինելով վաճառականութեան, լի էր վաճառականներով ամէն ազգէ և կրօնքէ։ Եւրոպացի վաճառական ազգերէն Այաս երթեւեկողներէն եղան գլխաւորաբար Վենետիկեցիք, Ճենովացիք և Սիկիլիացիք, որոնք մեր թագաւորներէն մասնաւոր արտօնութիւններ ևս ստացան. ասոնց յաջորդեցին Հետըզհետէ գրեթէ Իտալիոյ բոլոր ազատ քա֊

ղաքացիները, Փիզացիք, Փլորենտացիք, Փիաչենցացիք, Փաւիացիք, Անքոնացիք, Մանթոուացիք, և այլն։ Իսկ միւս արեւմտեան ազգերէն Սպանիայէն Կատալանք, Սեվիլիացիք, Պարցելոնացիք, Սարակոսացիք, Մայորքացիք. Գաղղիայէն՝ Մարսիլիացիք, Նիմիացիք, Նարպոնացիք, Մոնփելիեցիք. կու գային նաև Անգղիացիք, Ֆլամանք և այլք։ Այս ազգերէն գլխաւորները, Այասայ մէջ ունէին առանձին թաղեր, մթերանոց և եկեղեցի, ինչպէս նաև ապարանք պայլերու կամ ազգապետներու, որոնք սովորաբար Քօնսօլ (ըստ Հայոց Գոշնց) կ'անուանէին։

Այասու հին հասարակաց շինուածներէն, բաց ի հրապարակէ մը, միայն արքունի ապարանքն կը յիշուի յարեւմտեայց կամ մեր թղթաւորներէն ոմանց գրուած դիւանական գործոց մէջ, և տեղը կ'աւանդուի ցամաքային բերդին դրան դիմաց. նոյն ապարանից մէջ էին նաև պաշտօնարանք և դատարանք, որոց գլխաւորն է Արքունի դարպասն։ Արքունի ապարանից մէջ ուրիշ զանազան պաշտօնատեարց, քարտուղարաց, թարգմանաց հետ՝ հաստատուած էր նաև Վարժարանն լատին լեզուի, արեւմտից հետ դիւանական վերաբերութեանց համար, որոյ մէջ կը յիշուին նաև յանուանէ զանազան իտալացի ուսուցիչք։ Շահաստանին տարեկան առեւտրական շարժումն թէև ահագին էր, սակայն չունինք ժամանակակից վիճակագրութիւններ։ Կարելի է մերձաւոր գաղափար մը կազմել այլ և այլ յիշատակութիւններէ։ Զորօրինակ, Այաս նստող Վենետիկեցւոց պայլը, որ իւր ազգակիցներու վաճառականական գործառնութիւններէն կէս առ հարիւր իրաւունք ունէր, մէկ ու կէս տարուան մէջ կը պահանջէր 7200 ֆրանկ. հետեւաբար մէկ ու կէս տարուան մէջ միայն՝ Վենետիկեցւոց առեւտրի գումարն կը հանէր 1400000 ֆրանկաց։ Հռչակաւոր էր քաղաքիս Բաժտունը, զոր եւրոպացիք իբրև յատուկ անուն կը գործածէին և կ'ըսէին Pasidonium (Բազիտոնիում)։ Պոռքսիմոս կը կոչուէր արքունի մաքսատան հաշուակալն և բաժտան վերակացուն։ Վերոյիշեալ բաժտունը որ կշռելի նիւթերէն 2–4 առ հարիւր տուրք կ'առնար, հարկաւ միլիոնաւոր գումարներ կը հասցնէր Սսոյ արքունի գանձարանին։ Սիսուանայ 367–389 էջերն կը բովանդակեն կարեւորագոյն, հնագոյն և նորանոր ծանօթութիւններ Այասու բաժտանց, վաճառուց, վաճառականաց, բաժից, չափուց և դրամոց վերաբերեալ։

Այասը արեւմուտքէն կ'առնար. զգեստուց մետաքսեղէն, ցփսի, բամբակեղէն, չուխայ. շաքար, խունկ, օճառ, ձէթ, պղպինձ, կլայեկ, ոսկի, արծաթ, լեղակ, սնդիկ, բուստ, համեմներ, ատաղձ, նաւերու կազմած, նաւեր, զէնքեր, և այլն։ Իսկ յարեւմուտս կը ղրկէր. համեմներ, շաքար, որդան–փայտ (Brazil), պղպեղ, այծու ստեւ, ասուեղէն, բամբակ, քթան, երկաթ, պղինձ, պաղլեղ, ձի, ջորի, էշ, արջառ, մուշտակ, զոմէշի մորթ և եղջիւր, ցորեն, գարի, չամիչ, գինի, հաւեղէն, հաւկիթ, անտաշ փայտ, մետաքս, աղ, և այլն։

Որչափ որ Արեւմտեայց հետ վերաբերութիւն շատցընելով կ'օգտուէին Հայք անոնց մերձաւորութեամբն և նիւթական շահուք, այնչափ ալ Եգիպտացւոց ատելութիւնն իրենց դէմ կը գրգռուէր, որովհետեւ նորածին դըշխոյն Հայոց ծովուն՝ Այաս, յաղթանակել կ'սկսէր յղփացեալն Աղեքսանդրիոյ. ուստի Այասայ զարգացումն համարելով իբրեւ խաւարեցուցիչ իրենց նաւահանգստացն ու շահաստանին, շատ և զանազան անգամներ ջանացին Եգիպտոսի սուլտաններն կամ բոլորովին խափանել իրենց նախանձորդին բարգաւաճութիւնն ու պայծառանալն, և կամ գէթ դաշինքով կամ գինու զօրութեամբ մասնակցիլ անոր շահերուն։ Ուստի այլ և այլ անգամ յարձըկեցան և ասպատակեցին Եգիպտացի զօրքերը յԱյաս և կամ անոր շրջակայքը, մերթ աւերելով և աւարելով և մերթ աւերածի և աւարի ենթակայ ըլլալով։ Այս ամէն ասպատակութիւնք և դիմադրութիւնք Օշնի իշխանութեան օրերն ի գործ կը դրուէին. բայց վերջնոյս մեռնելէն վերջ, երբ յաջորդեց իրեն տղայահասակ մանուկն Լեւոն Դ, երեք և չորս անգամ յարձակեցան դարձեալ Եգիպտացիք աշխարհին զանազան կողմերը, բայց ամենէն աւելի աղետալի եղաւ աւերածովք 1322ին, յորում բոլորովին

քար ու քանդ եղաւ Այասը։ Աննկարագրելի էր այն ընդհանուր թախծութիւնը որ տիրեց Հայոց և բոլոր քրիստոնեայ աշխարհի վրայ. վասն զի կործանուողը պարզ քաղաք մը չէր, այլ համաշխարհային վաճառանոց մ'էր, ուր կը վազէին ամէն կողմէ հարըստութիւն փնտռելու։ Այնչափ ցանկալի և անհրաժեշտ էր Այասի գոյութիւնը, որ ժամանակին Յովհաննէս քահանայապետը 30000 ֆլորին դրկեց անոր վերաշինութեան համար։ Հայերն ալ իրենց կողմէն մեծ զոհաբերութեամբ, և հաւանութեամբ և նոյն իսկ դրամական օգնութեամբ աւերածու Նասիր սուլտանին, կարճ ժամանակի մէջ վերականգնեցին քաղաքը և բերդերը նախկին պայծառութեամբը։ Եգիպտացիք պայման դրած էին տարեկան հարկ առնալ 1200000 դրամ և Այասու բաժատն հաւսյթի կէսն. սակայն այսու հանդերձ յաճախ կը գրգռուէին և հանգիստ չէին թողուր քաղաքը։ 1337 կամ '38ին դարձեալ աւերող արշաւանք մ'ըրին Եգիպտացիք, և դաշնագրութեամբ Եգիպտացւոց ձեռքն ինկան քաղաքս և Ջահանայ արեւելակողման մասը։ Այնուհետև թէև զԱյաս ազատելու զանազան անգամ փորձեր ի գործ դրուեցան և առ ժամանակ մը ազատութիւն իսկ կրցաւ վայելել, բայց կարճ ժամանակի տեւողութեամբ. և թէպէտ չենք գիտեր թէ կոստանդին Բ՝ զայն ազատելէն վերջը որչափ ատեն զեռ Հայոց ձեռքը մնաց Այաս, և կամ ե՛րբ այս հայկական Տիրոսն բոլորովին ի գերութիւն մատնեցաւ, բայց այս յայտնի է՝ որ հայկական տէրութեան ցյեալին շուրջը՝ Այասու կորուստն անբժշկելի վէրք եղած էր իրեն։ Քրիստոնեայ Այասի վերջին յիշատակն է Կիպրոսի Պետրոս Ա թագաւորին քաջասիրտ ջանքն՝ ազատելու զայն յայլազգենից. բայց անօգնական մնալով ըստիպուեցաւ տեղի տալ։ Կոստանդին Բ՝ մահէն վերջը, Հայք հրաւիրեցին վերոյիշեալ Պետրոս Ա քաջայաղթ թագաւորը իրենց վրայ թագաւորելու, որուն անուամբ հայատառ դրամ ևս հասած է ձեռքերնիս (Թ. 62)։ 1367 թուականին Շահ–Սուար Զիւլգատրեան, ուրիշ քաղաքաց և բերդորէից հետ նուաճեց նաև Այասը, և յետոյ հետըզհետէ անցաւ Վենետկեցւոց, Օսմանցւոց, Պարսից և Եգիպտացւոց ձեռքը, և 1522 թուականէն վերջը Սուլթան Սիւլէյման այս կողմանց տիրելով՝ քաղաքիս մէջ ևս նորոգութիւններ ըրաւ։ Այասը մեր հարստութեան ժամանակ այնչափ համբաւ էր ըստացեր, որ ժամանակակից Եւրոպացի բանաստեղծներ, ինչպէս Պօքքաչիոյ, Արիոսթոյ և Զօսըր, իրենց հռչակաւոր գրիչներուն նիւթ են ըրարել անոր անունը։

Այաս՝ զինքը վերջին անգամ նուաճող հզօր ձեռաց ներքև հատատուն մնալով մինչև ցայժմ, և օր աւուր քայքայելով, այսօր կը ներկայանայ մեզ խեղճ գիւղի մը կերպարանօք։ Ունի միայն 600 բնակիչ, յորս և բաւական թուով Հայք։ Հին մեծամեծ շէնքերու աւերակներն ցանուցիր ընկած են




62. Հայաստան. դրամ Կիպրոսի Պետրոս Ա. թագաւորին։

շրջակայքը՝ որք և անբարբառ քարոզ են իւր անցեալ բարգաւաճ վիճակին։ Բերդերն ևս խարխուլ են (Թ. 63). ցամաքի բերդի և հիւսիսային լեռնէն վար սահող վտակի մը միջավայրը կան Եգէաս քաղաքի հին շինուածոց աւերակներն, աղիւսաշէն եկեղեցիք, բաղանիք, կամուրջք, և այլն։ Այժմեան Այասի նորագոյն շէնքերն են Հայոց և Յունաց երկու եկեղեցիները, մզկիթ մը և 1 բաղանիք. բնակչաց տները զուրկ են վայելչութենէ և կառուցուած են բերդի մէջ։ Շրջակայքը կան մեծամեծ անտառներ և նարնջի ու լիմոնի լայնատարած պարտէզներ։ Հիւսիսային կողմը տարածուած է խոտաւէտ դաշտ մը, որոյ մէջ կան տեղ տեղ չերքէզ գիւղացիներ։ Այս կողմերը լի են որսական կենդանիք նապաստակ, կինճ. նաև գազան-

ներ՝ բորբան, ընգայլ. ծովեզերքը՝ կաքաւ, կարապ, սագ, բադ, ջրլոր. ինչպէս նաև մեծամեծ ձկներ և կրիաներ : — Սիսուան, 356–397: Բազմավէպ, 1885 էջ



63. Այասայ աւերակաց տեսարանը:

392–396: Կիլիկիա, 207–219:

ԱՅԱՐ կամ ԱՐԱՐ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի Տարալաղըզ վիճակի մէջ. բն. 460, բաժնուած 50 տան:

ԱՅԱԽԱՆՔ. — Հին գաւառ Կորճէից:

ԱՅԳԱՌՔ. — Հին գաւառ Կորճէից:

ԱՅԳԵՀԱՏ կամ ԻԳԱՀԱՏ. — Հայաբնակ գիւղ Գուգարաց Ձորոփոր (Պորչալու) գաւառի, գիրքը լաւ չէ և ջրոյ նուազութիւն ունի. Այսպէս կոչուած է տեղւոյն գիրքէն, վասզի այգիները մինչև հօս կու գան և կը դադրին, այդ պատճառաւ առած է Այգեհատ

անունը։ Բնակիչք երկայնահասակ են, թուով 350, բաժնուած 41 տան։ Գիւղիս մօտ են Հռոմայրի Ս. Նշան և Քօբայր ուխտերը, որոց վրայ ի կարգին։

ԱՅԳԵՁՈՐ. — Հայանուն գիւղ Տայոց այժմեան Օլթի գաւառի մէջ։ Բնակիչք 80. ամբողջ Թուրքք։

— կամ ԷԿՈՒ. — Գիւղ Հայոց Աղձնեաց Գզեղ (Խիզան) գաւառի մէջ, բնակիչք 80*։ Գիւղիս մօտ է Ս. Գամաղիէլի վանքը, զոր՝ ըստ աւանդութեան շինած է Թադէոս առաքեալը, իր հետ բերելով Գամաղիէլի գլուխը։

ԱՅԳԻ. — Գիւղ Ճապախուր (Վան), բնակիչք 90*։ Ունի Ամենափրկիչ և Ծղկայ վանքերը։

ԱՅԳՈՑ ՀՈՂ. Տես ՄԱՂԱՐԴԱՑ ՎԱՆՔ։

ԱՅԳՈՐԴ. — Լեռնակ Այրարատայ Վերին Բասենի մէջ։

ԱՅԺՈՒՏԱՊ. Տես ՅՈՒՏԱՊԷ։

ԱՅԻԳԱՆ. — Բրդաբնակ գիւղ Բագրեւանդայ, Շեւեան գետի աջ ափին վրայ. բնակիչք են 20 տուն։ Ունի հին վանքի մը աւերակներ. իր անուամբ վտակ մը ևս կայ։ Գիւղիս մօտ կը գտնուի ամենաընտիր կաւճի բլուր մը, այդ կաւճէն կը գործածեն Ալաշկերտի վարժարանաց մէջ։

ԱՅԼԱԲԵՐԴ, ԱՅԼԱԲԵՐՍ կամ ԱԱԼԱԲԵՐԻՑ ԳԻՒՂ. Տես ԱԼԱՓԱՐՍ։

ԱՅԼԱԽ. — Ի հնումն Սիւնեաց Ծղուկ գաւառի երկու գլխաւոր վիճակներէն մին. կը յիշուի միայն Հարկատու գիւղօրէից ցուցակի մէջ։

ԱՅԼԱՆԼՈՒ. — Հայոց կրկին գիւղեր Այրարատայ Արագածոտն գաւառի, Վաղարշապատու մօտ՝ արևմտեան հիւսիսային կողմը։ Վերին Այլանլու ունի Ս. Աստուածածնի եկեղեցի մը և 250 բնակիչք, իսկ Ներքին Այլանլու՝ Ս. Սարգիս եկեղեցի մը և 75 բնակիչք։

ԱՅԼԻ. Տես ԱՂԻ։

ԱՅԾԱՄԱՆՑ ԵՐԿԻՐ. — Կը յիշուի Այրարատայ Արագածոտն գաւառի, Աշտարակ գիւղի Ս. Մարիանէ մատրան արձանագրութեանց մէջ։

ԱՅԾԵԱՑ կամ ԱՅԾԻՑ ԲԵՐԴ. — Բերդ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ։ Զոր-զարու սկիզբները մեր Սմբատ քաջ իշխանը յաղթելով Պարսից զօրաց, և սպաննելով վախստական սպարապետը, անոր որդին և կինը կը բերէ և կը պահէ այս բերդիս մէջ (Յովհ. Մամիկոնեան, 38)։ Կանխաւ կը կոչուէր Արծուիք, զոր յայտնէ մեզ Զենոբ (29–30), և որուն ստուգաբանութիւնն կ'ընէ հետեւեալ կերպով. իբրև թէ Հաշտենից իշխանը հեղնելով՝ Արծուոյ ձագ ըսեր է Սիւնեաց իշխանին, իսկ Սիւնեաց իշխանն ալ սպաննելով Հաշտենից իշխանը՝ ըսեր է. «Տեսցեն զքեզ անգեղք, և գիտասցեն՝ եթէ Արծուոյ հարեալ է գնապաստակդ։ Եւ ինքն դարձաւ։ Որ մինչև ցայսօր Արծուիք կոչեն տեղւոյն»։

ԱՅԾԵՆԱԿԱՆ ՏՈՀՄ. — Կը յիշուի տոհմս զօրարանի մէջ, որ 100 հոգւով կը մասնակցէր մեծ բանակին։

ԱՅԾՏԱՆ. Տես ՅԵՏՍԱՆՔ։

ԱՅՂԸՕ-ԿԷՕԼ. — Լճակ Այրարատայ Վանանդ գաւառի մէջ, Սողանլու լերանց ըստորոտը, Կարսայ հիւսիսակողմը։ — Այս անուամբ ուրիշ լճակ մ'ալ կայ Կարնոյ հիւսիսակողմը, Քէօսէ Մէհմէտ գիւղի մօտ։

ԱՅՆԱՁՈՐ. Տես ԸՂՆԱՁՈՐ։

ԱՅՆԹԱՊ կամ ԱՆԹԷՊ. Գղ. AÏNTAB. — Գլխաւոր քաղաք Հալէպի կուսակալութեան համանուն գաւառակի՝ որ իր մէջ կը բովանդակէ 346 գիւղ և 87 000 բնակիչք։ Քաղաքիս դիրքը լեռնադաշտային է, և ծովու մակերևութէն 2500 ոտք բարձրութիւն ունի։ Կը գտնուի Մարաշի և Հալէպի մէջտեղ դէպի արևելք շեղուած. առաջինէն հեռու է 18 ժամ և երկրորդէն 24, ունի նոր շինուած կառքի ճանապարհ մինչև Հալէպ, որոյ երկայնութիւնն է 150 հազարամետր։ Այնթապ կառուցուած է արևելքէ արևմուտք երկնցած երեք բլրակներու վրայ. ամէն կողմէն պատող լայնատարած այգիները և երկու ծայրերէն սկսող ծառաստանները գեղեցիկ երևոյթ մը կ'ընծայեն իրեն։ Տները առհասարակ քարաշէն, սպիտակ և կրկնայարկ են, և փողոցներն՝ լայն բաւական կանոնաւոր և շատ տեղ սալարկուած։ Քաղաքիս ջուրը բերուած է յատուկ ջրմուղով, Սաջուր գետի աղբիւրէն՝ որ 3 ժամ հեռու է, դէպի արեւմտակողմը։ Սաջուր գետը, որ

կը ձեւանայ Օսմա—օվ—տէրէ և Ղարղայ—չայ գետակներէն՝ կ'անցնի Այնթապի արեւելակողմէն և քիչ մը անդ կը կոչուի Այնթապի ջուր, և ապա յառաջ երթալով աջ կողմէն կը թափի Եփրատ գետը։ Բաց ի վերոյիշեալ գետէն, գաւառակիս մէջ կան նաև ուրիշ մի քանի գետակներ. իսկ լեռներէն նշանաւոր են Գարապըյըգը գիւղի սարերը։

Մեծին Աղեքսանդրի մահէն վերջ Այնթապի գաւառը ինկաւ Սելեւկեան իշխանութեան՝ Եփրատացիք կոչուած բաժանման մէջ։ Հին աշխարհագիրներէն ոմանք Անտիոք առ Տօրոսիւ քաղաքի դիրքը Այնթապի կ'ընծայեն։ Երբ մեր Մեծն Տիգրան Արշակունին յաղթութեամբ վերջացուց Սելեւկեան թագաւորութիւնը, հարկաւ այս գաւառն ալ անցաւ Հայոց տիրապետութեաններքև, մինչև որ 18 տարի վերջը (Ն. Ք. 64), Պոմպէոսի ձեռքով Հռովմէական գերիշխանութեան ենթարկուեցաւ։ Եօթներորդ դարուն՝ Արեւելեան կայսրութեան ձեռքէն յափշտակեցին Արաբները, և թէպէտ Ժ՞ դարու մէջ յունական բանակները դարձեալ յաղթեցին և հայ բերդապահներ գրաւեցան Տլուքէն մինչև Մմբէճ, բայց վերստին այլազգի բռնաւորաց զօրութիւնը վերահաստատուեցաւ։ Խաչակրաց օրով Այնթապ ամուր ապաստան դարձաւ քրիստոնէից, այն ժամանակի պատմիչներն «անուանին և մեծն Անթափ» կը կոչեն քաղաքս։ Բայց քրիստոնէից ապատութիւնն երկար չտեւեց, 1152ին Նուրէտտին եկաւ տիրեց. 1182ին ալ Սալահէտտինի ձեռքն անցաւ, և այնուհետև յաջորդաբար Եգիպտոսի սուլտանները և ուրիշ այլազգի իշխաններ տիրեցին։ Հեթում Ա. թագաւորը 1266ին երկու անգամ արշաւելով քաղաքիս վրայ, չէ յաջողած զայն գրաւելու։ Չորեքտասաներորդ դարու սկիզբը Աբուլֆէտա կը նկարագրէ Այնթապը իբրև մեծ և գեղեցիկ քաղաք, որ ունէր ժայռափոր և անառիկ միջնաբերդ, մեծ շուկայ, առատ ջուր և լայնատարած այգիներ։ Այնթապ մեծ աւերմունք կրեց Լէնկթիմուրէն 1404ին։ Սուլթան Գաթթիպայ 1480ին վերաշիներ է քաղաքիս բերդը, որոյ վրայ կը կարդացուի այժմ իրեն անուան արձանագրութիւնը։ Վեշտասաներորդ դարու սկիզբը հոս երեւցան Օսմանցիները. Մէրճի—տապըգ դաշտի վրայ կատարուած պատերազմի մէջ Սուլթան Սէլիմ յաղթեց Գանսու Ղաւրիին (1516), և նոյն ժամանակ Եգիպտացիներէն Օսմանեանց անցան ամբողջ Կիլիկիան և հիւսիսային Ասորիքն։ Դարուս մէջ եւ Իպրահիմ փաշայի առաջնորդութեամբ Եգիպտացիք արշաւեցին և սկսան տիրանալ այս կողմանց, բայց յետոյ օտար տէրութեանց միջամտութեամբ հարկադրուեցան թողուլ և դառնալ յԵգիպտոս։

Այժմ Այնթապը ամբողջ կուսակալութեան մէջ Հալէպէն վերջ առեւտուրին և ճոխութեամբն ինքն է առաջին. իսկ օդոյ բարեխառնութեամբն և ջրի առատութեամբը նախադաս է նոյն իսկ Հալէպէն։ Յարաբերութիւնը գլխաւորապէս Հալէպի հետ է, բայց ունի նաև ուղղակի գործառնութիւն Պէյրութի, Իզմիրի, Աղեքսանդրիոյ և Կ. Պոլսի հետ։ Գլխաւոր վաճառականութեան կամ արտածութեան նիւթերն են, արմտիք, ծխախոտ, չամիչ, ասիփ, գխտոր, գահրի, սակամոնի, բուրդ, այծու մազ, բամբակեղէն ձեռագործներ (մանուսա և կտաւեղէն) և այծու կաշիէ մարոկենի։ Վերոյիշեալ բամբակեղէն ձեռագործներէն և մարոկենիէն զատ, իբրև արհեստական արտադրութիւն համբաւաւոր են Այնթապի օղին և ձէթը։ Ներածութեան նիւթերն են, սուրճ, շաքար, քարիւղ, երկաթեղէնք, պղինձ, անագ, ապակի, կերպաս, չուխայ, մետաքսեղէն, գոյնզգոյն մանած բամբակ՝ մանուսա գործելու համար, և այլն։

Քաղաքիս մէջ կան 36 մզկիթ, 57 մէսճիտ, 21 մեդրէսէ, 4 թէքքէ, 5 եկեղեցի, 1 սինակոկ, 13 բաղնիք, 31 խան, 30 փուռ, 45 ներկատուն և կաշիի գործարան, 11 ջաղացք, 8 գինետուն, 5 օճառի գործարան, 2300 խանութ և 3800 դազկահ մանուսայագործներու և ջուլհակներու։ Այնթապի մէջ կան 6500 տուն 43000 բնակիչներով, որոնց 16500ը հայազգի, 857 հրէայ, մնացածը արաբ և թուրք մահմետական· կան նաև Հալէպէն գաղթած սակաւթիւ յոյն, ասորի և մարոնիտ։

Հայք կրօնական երեք բաժանումներ ունին, այն է լուսաւորչական, բողոքական և կաթոլիկ։ Հայ լուսաւորչականները կը հա-

մարուին 12 000 և բաժնուած են 2400 տան։ Մինչև ցարդ ունէին միայն Ս. Աստուածածին եկեղեցի մը, որ հիմնարկուած էր գրեթէ 95 տարի առաջ, որ և անճաշակ շէնք մը ըլլալէն զատ ժողովրդեան բազմութեան ալ չէր բաւեր։ Ուստի մօտ 25 տարի առաջ, Սարգիս պէյ Պալեան արքունի ճարտարապետի ձեռքով սկսան ձեռնարկել հոյակապ եկեղեցւոյ մը շինութեան, որ այժմ աւարտած է։

Վերջին 40 տարիներու մէջ կրթական վիճակը բաւական յառաջացած է, որուն գլխաւոր պատճառներէն մին եղած է նախ Ակնցի Պ. Յովհաննէս Քիւրքճեան՝ որ իր կենաց վերջին մասն այստեղ անցուցեր է։ Ցետոյ՝ 1867ին հաստատուած Վարդանեան Ընկերուհիները, 1875ին հիմնուած Աղինական Ընկերուհիները, նոյնպէս ուրիշ միութիւններ զգալի զարկ տուին կրթութեան գործին։ Ներսէսեան և Հայկանուշեան վարժարաններն ունին հաստատ հասոյթի աղբիւր՝ ազգային խան մը, որը գնուած է գըլխաւորաբար Յովսէփ սարկաւագ Աշճեանի կըտակած դրամով։ Վարդանեան կրթարանին բարերար հիմնադիրն եղած է ազնուաշուք վաճառական Պ. Գալուստ Ղազարեան։ 1886ին այս վարժարանին կազմէն կը հրատարակուէր Մենտոր վերնագրով կիսամսեայ հանդէս մը, հայերէն և թուրքերէն լեզուներով։

Հայ բողոքականաց թիւն կը հասնի 4000ի, ունին 3 եկեղեցի և 8 վարժարան։ Ամերիկացի միսիոնարներն հաստատած են նաև «Կեդր. Թուրքիոյ Քոլէճ» և Օրիորդական բարձր վարժարան մը։ Կրթական հաստատութեանց շնորհիւ բողոքականաց մէջ ուսեալներու թիւը աւելի ստուար է, և դրամական մասին ալ լաւ վիճակի մէջ են։ Պ. Աւուր Նիգիպլեան, կարեւոր նպաստներ է բերեր դպրոցաց՝ և մեծ քաջալերութիւն է ընծայեր կրթութեան գործին։ Հայ բողոքականաց ուրիշ բաժանում մի ևս էր Անգղիական և կամ Եպիսկոպոսական հասարակութիւնն, որոնց գլուխն եղաւ քաղաքիս նախկին (1866) առաջնորդ և Սսոյ կաթողիկոսական տեղապահ Սէմէրճեան Մկրտիչ եպիսկոպոսը, որ անձնական գժտութիւններով այս հերձուածի մէջ ինկաւ։ Նոյն անձը Անգղիա ուղեւորելով դրամ հաւաքեց և Այնթապի մէջ հիմնեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի մը. բայց նիւթական նպաստք և հետեւողք նուազելով, յաջող ելք մը չունեցաւ։

Հայ կաթոլիկաց թիւն յայտնուած է 400–500 հոգի. սակայն չգիտեմք ինչ հաշուով Վ. Քինէ 2000ի կը հանէ այդ թիւը։ Ունին փոքր եկեղեցի մը, որոյ շինութեան համար, ժամանակաւ դրամական նպաստ ուղարկած էր Նափոլէոն Գ կայսրը. ունին նաև առանձին դպրոց մը։ Քանի տարի կայ որ այստեղ հաստատուած է Ֆրանչիսկեան կրօնաւորներու վանք մը։ Մօտ 100 աշակերտներ, մեծաւ մասամբ հայ, կ՚ուսանին այս կրօնաւորաց մօտ։

Այնթապի Հայք շատոնց մոռցեր են մայրենի լեզուն, տիրող լեզուն թուրքերէն է, թէ և իրենց կրօնական և առանձին հայերէն բառերու թիւն Սսեցիներէն և Ատանացիներէն աւելի շատ է։ Վերջին տխուր դիպաց ժամանակ քաղաքս ես ունեցաւ իր զոհերն. հոս ես բացուած է որբանոց մը, որուն թոշակը կը հոգացուի Մէնչըսթըրի ազգայնոց կողմէն։ Այնթապի գաւառակը ունի միայն մէկ հայաբնակ գիւղ Օրուլ անուամբ։ Կիլիկիա, 353–367։ Քինէ, Բ. 188–191։ Արեւելք, Ա. 196։ Եւ այլն։

ԱՅՈՒՆ. — Գիւղ Լեռնային Կիլիկիոյ՝ զոր ուրիշ կալուածոց հետ Լեւոն նուիրեց Ալամանաց։

ԱՅՈՒՁԱՅ. — Գետակ Այրարատայ Արագածոտն գաւառի, օժանդակ Քասաղ գետոյն։

ԱՅՊՈՒՂԱՆ կամ ԱՅԻՊՈՒՂԱՆ. — Ամայի գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Հայր–Յովհանն վանից հարաւակողմը. մօտը կան հին եկեղեցւոյ կամ մենաստանի մը աւերակներ։

ԱՅՍՄԱՍ. Տես ԱՐԱՏԷՍ։

ԱՅՎԱԹԼԸ. — Գիւղ Զարաճագի, բնակիչք 110 Հայք՝ որք ունին Ս. Մինաս եկեղեցի մը, և 40 այլազգի։

ԱՅՎԱԼԸԴ. — Գիւղ Ծովային Կիլիկիոյ, Այասի արեւմտակողմը։

ԱՅՎՈՍ. — Գիւղ Խարբերդի, բնակիչք 1200 Հայք, որք ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը, և 350 Ասորի և Թուրք։

**ԱՅՏԸՆ** կամ **ԱՅՏԻՆ**. Գղ. AÏDIN. — Գըլխաւոր քաղաք Զմիւռնիոյ կուսակալութեան համանուն գաւառակին, 60 հազարամետր հեռաւորութիւն ունի Զմիւռնիոյ երկաթուղւոյ կայարանէն, գրեթէ $3^1/_2$–4 ժամուան մէջ Զմիւռնիայէն մեկնող շոգեշարժ կառախումբը կը հասնի Այտընի առջև: Քաղաքիս հիւսիս–արեւելեան կողմը բարձրացած է լերանց գօտի մը, որ հրաբղխային երեւոյթ ունի, որուն նոր արգասիքն իսկ տարւոյս (1899) մէջ երեւցաւ, շատ վնասներ տալով Այտընի և շրջակայից: Ի հնումն քաղաքս Տրալէս կոչուած է, և Հռովմայեցւոց կայսրութեան ժամանակին ալ Կեսարիա: Երկրաշարժով մը, լեռնադաշտի վրայ կառուցուած այս հին քաղաքը երկուքի բաժնուեր է և մէջտեղ ձեւացեր է ձոր մը: Ձորին աջ և ձախ կողմերն շինուած է այժմեան Այտընը, որ կ'ըսուի նաև Կիւզէլ Հիսար: Հին քաղաքի աւերակներն տակաւին կը տեսնուին ձիթենիներով զարդարուած լեռնադաշտի վրայ. 1890ին Հումանն գերմանացի հնախօսն, տեղ տեղ պեղումներ ընելով՝ հանած է արձաններ և կոթողներ: Վերոյիշեալ ձորոյն աջ կողմը կը գտնուին Թրքաց և Հրէից թաղերն, իսկ ձախ կողմը Յունաց, Հայոց և սակաւաթիւ Իտալացւոց, Գաղղիացւոց, Անգղիացւոց և Աւստրիացւոց բնակութիւններն: Գարաճըլըգ և Նազիլլի կոչուած կրկին քարաշէն կամուրջներն, կը միացնեն քաղաքիս երկու մասերն իրար հետ: Ժամանակաւ քաղաքս կուսակալանիստ էր և ունէր 60 000 բնակիչ, իսկ յետոյ կուսակալն փոխադրուելով ի Զմիւռնիա՝ Այտընը եղաւ աթոռ գաւառապետի: Այժմ բնակչաց թիւն կը համարուի 36250, հետեւեալ կերպով բաժնուած.

| | | |
|---|---|---|
| Մահմէտականք . . . | 26000 | հոգի |
| Յոյնք . . . . . . | 8500 | » |
| Հայ լուսաւորչականք . | 250 | » |
| Հայ կաթոլիկք և Լատինք | 114 | » |
| Հրեայք . . . . . | 1406 | » |
| Գումարն . . . . | 36250 | հոգի |

Մահմէտականք ունին 22 մզկիթ և 10 դպրոց, որոնց մէջ նշանաւոր է Խտաբիէ կոչուածը, որ բարձր դիրքով շինուած է հին քաղաքի քարերով. այս դպրոցը կը յաճախեն նաև քրիստոնեայք: Յոյնք ունին երկու եկեղեցի, Ս. Գէորգ և Ս. Ղարալամպոս, հիւանդանոց մը և երկու դպրոց. արհեստով վաճառական են: Հրեայք ընդհանրապէս աղքատ են, ունին սինակոկ մը և դպրոց:

Հայք գրեթէ 350 տարի յառաջ գաղթած են յԱյտըն Հայաստանի զանազան կողմերէն և ի սկզբան բաւական բազմաթիւ են եղեր. ըստ հին արձանագրութեանց կը բաղկանային առ նուազն 500 տունէ. սակայն ի վերջոյ շրջակայ քաղաքներն ցրուելով, մանաւանդ շատերը Զմիւռնիա իջնելով, այժմ հազիւ 40–50 տուն մնացած են: Ունէին յանցեալումն 1638 թուին կառուցուած երկու խորանով եկեղեցի մը, որուն տեղը 1834ին կառուցած են այժմեան Ս. Աստուածածնի եկեղեցին: Հին հայկական արձանագրութիւններով ծածկուած և շատ տեղ ողորկած տապանաքարեր գործածած են եկեղեցւոյս սանդղխոց և դրան սեմոց և այլ մասանց շինութեան համար: Աւագ դրան ճակատի մարմարին քարի վրայի արձանագրութեան համաձայն, եկեղեցիս փոխանակ հինգ խորանաց ունի երեք խորան. աւագն՝ նուիրուած է Ս. Աստուածածնի, աջակողմեանը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի և ձախակողմեանը Ս. Գլխադիր. բայց անշուշտ արձանագրողք ի միասին հաշուած են նաև աւանդատան խորանն որով կը լինի չորս խորան. իսկ հինգերորդին տեղն լինելու է ձախակողմեան որմի վրայի կամարակապի մէջ, ուր այժմ խորան չկայ: Ներքին մեծութիւնն է 13,80 մետր երկայն և 10,20 մետր լայն. մարմարինէ չորս սիւներու վրայ հաստատուած է կամարակապ ձեղունը: Աւագ դրան վրայ կայ կանանց վերնատուն, որուն տակ հաստատուած են երկու սիւներ, վերոյիշեալ սեանց ուղղութեամբ: Ներսը արձանագրութիւնք չկան, բաց ի քանի մը պատկերաց եզերքներր գրուած նուիրատուաց յիշատակարաններէ:

Եկեղեցւոյս մօտ է Ս. Գրիգորի վարժարանը, կառուցուած 1874ին. փայտաշէն է բայց գեղեցիկ և հովասուն լաւ դիրք ունի: Վարժարանիս մէջ յանցեալումն կար Ընթերցարան մը, որ նիւթական պիտոյից պատճառաւ առ ժամանակ մը գոցուած ըլլալով

*1897ին Գրըքաղաճցի Յովհաննէս էֆ. Մըսըրեան փաստաբանի նախաձեռնութեամբ և քանի մը երիտասարդաց միութեամբ վերստին կը բացուի։ Այս ընթերցարանի գրոց մէջ կան չորս ձեռագիր Գանձարան և Մաշտոց։ Մինչև 1893 եկեղեցւոյ պարտիզի մէջ էր Հայոց գերեզմանատունը, բայց այժմ առողջապահական պայմանաց համեմատ կը թաղեն եկեղեցւոյ կռնակը բարձրացող բլրակի վրայ։ Հին գերեզմանաքարերէն թէև հարիւրէն աւելի գործածուած են շինութեանց, սակայն դեռ կան անոնցմէ բազմաթիւ, ոմանք հողի տակ ծածկուած, ոմանց յիշատակարանք մաշած և ոմանցը տակաւին անջինջ մնացած։*

*Քաղաքիս Հայ կաթոլիկներն են գլխաւորաբար Գաղատացի սակաւաթիւ վաճառականներ և մի քանի Եւրոպացի ընտանիքներ։ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը 1850էն ի վեր հոս հաստատած է առաքելութիւն մը և 1853ին ունեցան մատուռ մը, զոր 1859ին աւելի ընդարձակեցին և նուիրեցին Ս. Աստուածածնի. ունին նաև վարժարան մը։ Հայ կաթոլիկաց գերեզմանատան մէջ կան գերեզմանաքարեր, հանդերձ հայատառ՝ բայց թրքալեզու արձանագրութեամբք։ — Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հտ. Բ. 1–47. Բիւն, Գ. 591–599։*

ԱՅՏՈՒԱՆՔ — *կորճէից հին գաւառներէն մին։*

ԱՅՏՕՂՄԱՁ. — *Գիւղ Սեբաստիոյ՝ արևմտակողմը։*

ԱՅՐԱՃ. — *Լեռ Կիլիկիոյ, կը բարձրանայ Զէյթունի հիւսիսային կողմը այգեստաններու քովէն։*

ԱՅՐԱՐԱՏ *կամ* ԱՐԱՐԱՏ. Աշ. ՈՒՐԱՐՏՈՒ. Դղ. ARARAT. Եբր. אֲרָרָט. — *Հայ աշխարհի հռչակաւոր և վեհագոյն նահանգն՝ կ'իյնայ մեր միւս նահանգաց միջավայրն, և այդ պատճառաւ ճահողապէս Միջնաշխարհ կը կոչուի Բուզանդէն։ Այրարատը շրջապատող նահանգներն են, արևելքէն՝ Սիւնիք. հիւսէն՝ Գուգարք. արևմուտքէն Տայք և Բարձր Հայք. հարաւէն՝ Տուրուբերան և Վասպուրական։ Ինչպէս որ վայել է թագաւորական վիճակի՝ ընդարձակագոյն է Այրարատ մեր բոլոր միւս նահանգներէն. գրեթէ 160 մղոն երկայնութիւն ունի Վերին Բասենու ծայրէն մինչև Գեղաքունեաց լեռները, և 120 լայնութիւն, Աշոցքէն մինչև նահանգիս Ծաղկոտն և Վասպուրականի Աղիովիտ գաւառները բաժնող լեռնագօտին։ Ընդարձակութեան համեմատ բաժնուած է նաև շատ մասերու, քան գաւառներու, և այս աւելի Արշակունեաց հարստութեան վերջանալէն յետոյ. վասն զի առոնց ժամանակ զանազան գաւառներ իրարու հետ միացած կազմէին միայն մեծ գաւառ մը, որ էր արքունի նահանգն Այրարատայ. անոր համար խորենացւոյ աշխարհագրութեան օրինակաց ոմանց մէջ տասնեւեց գաւառք կը յիշուին Այրարատայ, միւս չորս կամ հինգ գաւառները ի միասին համարելով սեփական Արարատեան երկիր, որ կը բնակէին հին Հայկազունք Արմենակէն սկսեալ, որ և վերջը Արշակունի թագաւորաց Ոստան եղաւ։ Այս նահանգը կամ բուն Այրարատեան Երկիր ըսուածը՝ կը տարածուի Հայոց բարձրագոյն լերանց, Մասեաց և Արագածու մէջտեղ, Հր.էն դէպ ի Հս. և Շիրակայ սահմաններէն կամ Ախուրեան գետէն՝ մինչև Գեղաքունեաց լեռները։*

*Երկու զատ հայկական գետահովտաց վիճակ է Այրարատ, Երասխայ և Արածանւոյ, յորոց առաջինն ընդարձակագոյն է. վասն զի Երասխ իր ակերակունքներէն, այսինքն Բասենու արևմուտքէն՝ գրեթէ ուղղակի վազելով դէպի արևելք՝ աշխարհին բովանդակ երկայնութիւնը կը կտրէ, մինչև մեծ դաշտը՝ որ կ'իյնայ Շարուրայ և Նախճաւանու մէջտեղ։ Երկրին մեծագոյն մասը Երասխայ ձախակողմն է, այսինքն հիւսիսային կողմը, և այս մասին մէջ են բոլոր արքունական քաղաքներն և ոստանները։ Իսկ Արածանի փոքր մաս մը ունի Այրարատայ մէջ, և են գեղեցիկ գաւառքն Ծաղկոտն և Բագրեւանդայ. վերջինս շատ ընդարձակ է և կը թուի թէ ի սկզբան առաջնոյն հետ միացած՝ առանձին տոհմի մը կամ նահապետութեան վիճակուած ըլլայ և ապա յարքունիս գրաւուած։*

ԼԵՌՆԵՐ. — *Այրարատայ վերոյիշեալ գետահովիտները կ'անջրպետեն Աղրի կոչուած լեռներն, որք Մասիսէն սկսեալ կ'երկննան յարևմուտս մինչև Սուէկաւէտ, և անկից այ*

 ԱՅՐԱՐԱՏ

ոչ այնչափ որոշ գօտիներով մինչեւ լայնանիստ Սրմանց (Պինկէօլ) լեռը, Տուրուբերանի եւ Բարձր Հայոց մէջտեղ. որով՝ գրեթէ Երասխայ ամբողջ երկայնութեամբ աջ կողմը կը տարածուի երկայնաշար լեռնագօտի մը։ Նահանգիս արեւելեան հարաւային կողմը բարձրացած հռչակաւոր Մեծ եւ փոքր Մասեաց վրայ երկարօրէն կը խօսուի ի կարգին. ասոնց արեւմտակողմէն կը բարձրանան Փամպուզ կամ Խաչկեռաշ, Զինկիլ, Սըչանլը (Մկնուշտ), Արփալան 9650', Սինէկ 9058', Մեծ Շիչըքփէ կամ Զօր 12000', Քօշպաշ, Փիրիլի 10650', որ գրեթէ տարւոյն մեծ մասը ձիւնապատ է, Քէօր–օղլու 8320', բուն Աղրի–տաղ 9054', Պօզ–տաղ, Սուշկաշտ (Քէօսէ–տաղ) 11276'։ Այրարատայ արեւմտեան մասին մէջ կը ձգուին ուրիշ հարաւագոյն լերանց շար մը՝ Շէռիան իրեն սահրովը, Թօփ–տաղ, եւ ուրիշներ մինչեւ կարնոյ արեւելակողման լեռները, որ ըստ նախնեաց կոչուած կը թուին Մեղեդուշխ։ Յիշենք նաեւ Բասենու եւ Վանանդայ Սօղանլու լեռները, եւ առանձնակ կատարքն Բասենու՝ Ագրակ, Ագ–մէգրէ, Զաւար 9222', Ս. Խաչ 9562' Մժնկերտի մօտ, եւ այլն։ Վանանդայ մէջ չկան բարձրաբերձ լեռներ այլ մի քանի անջատ լեռնակներ, իսկ Շիրակայ սահմանակից կան նաեւ չափաւոր բարձրութիւններ, ինչպէս Եաղլըճա 9752', Քողուշ 9145', Հաճի Խալիլ 9130', եւ այլն։ Ծաղկոտն գաւառի մէջ են Նպատ եւ Ծաղկէոյ լեռները. ուրիշ անջատ լեռներ կան նաեւ միւս գաւառաց մէջ։ — Բուն Այրարատեան նահանգի մէջ յետ Մասեաց՝ գլխաւոր եւ առաջին լեռն է լայնագագաթ եւ լայնատարած Արագած 12606', եւ նոյն դաշտի մէջ Արայի լեռ (Գառնըը–եարըգ), Շամիրամայ լեռ (Հատիս) եւ Քէօրան տաղ. Ճանկի, որ հիւսիսային կողմէն Արագածը կը միացնէ Գուգարաց Բամբակի լերանց շղթայի հետ։ Արագածու արեւելակողմը մինչեւ Սեւանայ լեռները, մի քանի առանձնակ լեռներէ զատ՝ բոլոր երկիրը դաշտային է, եւ այդ պատճառաւ ընդհանրապէս Արարատեան դաշտ կը կոչուի։

Կարելի է նոյն իսկ ամբողջ Այրարատ աշխարհը դաշտային կոչել, ինչպէս ի հնումն ալ կը կոչուէր Երասխեան դաշտ. վասն զի Ագրի լերանց շղթաներէն զատ՝ որոնք լայնանիստ ալ չեն, չկան ուրիշ լերանց մեծ շղթաներ, այլ եղածները կամ առանձնակք են կամ շեղջաձեւ։

ԳԵՏԵՐ. — Այրարատայ գլխաւոր եւ սեփական գետն է Երասխ, որոյ օժանդակներն են Մուրց, Ագառ–սու, Արտուդ–չայ, Խանի–չայ, Սարը–գամըշ–սու, եւ ուրիշ բազմաթիւ վտակներ, մինչեւ Ախուրեան գետը՝ որ իւր ամէն օժանդակներէն հզօրագոյնն է։ Նահանգիս մէջ Երասխայ միւս օժանդակներն են Մեծամօր (Գարա–սու), Քասաղ, Հրազդան, եւ այլ ուրիշ ոչ սակաւ գետակներ, զորս մի առ մի յիշելն աւելորդ կը համարիմ, քանի որ իրենց կարգին իւրաքանչիւրին մանրամասն նկարագիրն կը տրուի։ Ծաղկոտն եւ Բագրեւանդ գաւառաց մէջէն անցնելով կը վազէ դէպ ի Տուրուբերան Արեւելեան Եփրատ (Մուրատ չայ) կամ Արածանի գետն, որոյ օժանդակք են Շէրիան, Տուշապի, եւ ուրիշ շատ վտակներ։

Գետերէ զատ ունի Այրարատ նաեւ լճակներ, որոց մեծագոյնը կ'ինկնայ Կոգովիտ գաւառի մէջ. ի հնումն կը կոչուէր Ծովակ Գայլատուոյ եւ այժմ Պալըգկէօլ (Զկնալիճ) տատ ձուկ ունենալուն համար։ Կան նաեւ մօրուտ կամ ճախճախուտ տեղեր Բասենու դաշտին մէջ, ինչպէս նաեւ երկրին արեւելեան մասին մէջ, Երասխայ աջ եզերքը։

ԲՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ. ԿԼԻՄԱՅ. ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ. — Ընդհանրապէս երկրին կազմութիւնը մանաւանդ արեւելեան մասին՝ հրազանդուած կամ պղուտոնական է, որուն ակներեւ վկայք են մեր աշխարհի երեք բարձրագոյն լեռները, Մեծ եւ փոքր Մասիք եւ Արագած եւ ասոնց մերձակայ Կոգովիտ, Արագածոտն գաւառներու եւ սահմանակից Գեղամայ լեռները, որոնք երբեմն երկրիս ահեղագոյն հրաբուղխներէն էին, եւ իրենց վառարանաց շիջմանէն վերջ ալ, անդադար ներքին ներգործութիւններէ եւ շարժերէ հանգիստ չեն թողուցած երկիրը, եւ երբեմն ալ կողից պատառմամբք եւ ժայթմամբ աղմոյ եւ ակոյ, եւ մեծամեծ քարանց թաւալմամբ, յառաջ բերած են աղետալի վնասներ։

Այրարատ նահանգի գիրքը բարձր ըլլալով 2500 ոտքէն մինչեւ 6000', եւ լերանց նաւա֊

գութեամբ անպատսպար լինելով՝ օդը ցըրտային է։ Նուազ են նաև անտառներ. այդ պատճառաւ չորրորդ դարու կիսուն Խոսրով Բ անտառ տնկել տուաւ Գռնայ և Գառնայ մէջտեղ. ինչպէս նաև ի հնումն Երուանդ տնկել տուած է իրեն դաստակերտաց մօտ Ախուրեանի և Երասխայ խառնրդոց սահմանը. թողունք Արմաւրայ հին սօսիներն, որք կը համարուէին տնկուած Հայկայ Արմենակ որդիէն։ Բնիկ Այրարատայ մէջ կենդանի անտառ ոչ մի տեղ չկայ, բաց ի երկու Մասիսներու մէջ եղած թխենեաց անտառէն։ Իսկ արևմտեան մասին մէջ են հանրածանօթ մայրիքն Մեծրաց (Սօղանլու լերանց), Բասենու և Վանանդայ մէջ. որոնք յայտնի է թէ ի հնումն աւելի ընդարձակագոյն էին, որ այնչափ դարերէն ի վեր կարելով՝ տակաւին մնացած են։ ԺԳ դարուն Հուլաւու ղանն հոս գրկեց զՍմբատ Օրպելեան, «վասն անպար մայրափայտից, զի շինէին զմեծ արքունիքն որ ի Դաւան դաշտի», Ստ. Օրպել. ԿԶ։ Թուռնըֆոր որ 1701 տարւոյ օգոստոս 26ին անցած է անտառէս՝ Ղարսէն Կարին գացած ժամանակ, կը յիշէ նոճիներու և կաղամախեաց զանազան տեսակներ։

Հռչակաւոր է Այրարատ պտղաւէտութեամբն և հարստութեամբը, ինչպէս նաև տեսարանաց գեղեցկութեամբը. մեր պատմիչներն առաջիններէն սկսեալ մինչև վերջինները լիաբերան գովեստներ կու տան։ Ամենէն աւելի Երդ դարու պատմիչներէն մին՝ Ղ. Փարպեցին՝ (20–28) շատ գեղեցիկ կերպով նկարագրած է աշխարհիս բարեբերութիւնն և կենդանիներն։

Արշակ Գ թագաւորին համար կ'ըսէ. թէ «... լքեալ մերժեալ թողոյր զքաջ և զընտիր ժառանգութիւն նախնեաց իւրոց՝ զգաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն, զամենաբերոյսն, զամենաբերուշխն, զամենայղին, զամենագիւտն ի շահս և ի պարմանս մարդկային պիտոյից կենաց և վայելչութեան և սթափութեան»։ Կը թողուր Արշակ Այրարատայ ընդարձակ որսալից դաշտերը, գեղեցկանիստ և պարարտարօտ լեռները՝ լի որսի կենդանիներով, որոց կատարներէն իջած ջրերը՝ դաշտերը ոռոգելով՝ հացի և գինւոյ առատութիւն կու տան, բուսոյ և բանջարոց քաղցր համ և խըղաբուղխ ընդեղէններուն անուշութիւն։ Լերանց լանջերու վրայ կամ սարահարթ վայրերը երբ մարդ աչերն դարձունէ, կը տեսնուին բազմերանգ ծաղկունք գոյնզգոյն հանդերձի նման սփռուած։ Պարարտարօտ, պարարտահամ և թանձրախիտ աճած խոտերն կը կերակրեն անթիւ արօտականներ՝ թէ՛ ընտանի էշեր և թէ վայրի էրէներու անհամար երամներ, որոնք իրենց բոլոր մարմնով կ'երևին գէր, թանձրաթաղանթ և առոգագաւակ։ Իսկ անուշահոտ ծաղկանց հոտը, քաջ որսալէր մարդոց և բազօթեայ հօտարածներուն առողջութիւն կու տայ, և կը վերանորոգէ և կը կազդուրէ անոնց միտքը ու զգայարանքը։ Այրարատայ մէջ կան նաև զանազան բոյսերու արմատներ, յորոց օգտակար դեղեր կը շինեն։ Ունի նաև ոսկի, պղինձ, երկաթ և պատուական քարեր, որդան կարմիր բոլոր ճճին՝ որ կը ծնանի բոյսերու տերևներու վրայ, ուսկից ազնիւ ծիրանեգոյն կարմիր ներկ կ'ըլլայ։ Գետերն կը մատակարարեն զանազան տեսակ մեծ և փոքր համեղաճաշակ ձկներ։ Այրարատ կը սնուցանէ իւր մէջ նաև զանազան հաւեր. կրկչաձայն, տատպարակէր, վիմաոյզ, սորամուտ կաքաւուց և Սալամբաց երամներ. կամ եղեգնարմակ, թփամուտ, մացառադօղ, պարարտամարմին և անուշահամ վայրի Աքարաց տեսակներ. ինչպէս նաև ջրասուզակ, մամախնդիր և մեծամարմին փոր (կարապ), Թուճար (*Otis?*) և Սագ. թողունք միւս անհամար ցամաքային և ջրային թռչնոց տեսակներն։ Նոյն Ղ. Փարպեցւոյ նկարագրածի համեմատ, նախարարները որսի ելլելով, ոմանք այծեամներու և վայրի էշերու ետևներէն կը վազէին, ուրիշներ ձիով կ'ինկնային եղջերուի և եղնիկի երամներու ետևէն. մէկ քանին ալ սրով կը սպաննէին սատականգամ վարազները։ Իսկ նախարարաց փոքր որդիք՝ իրենց դաստիարակներու և ծառաներու հետ միասին բազէներով զանազան տեսակ թռչուններ կը բռնէին և կը բերէին ընթրիքնին ճոխացնելու համար։ Այժմ ևս Այրարատը նշանաւոր է պտղաւէտութեամբը և բերքերովը, որ և կը հաստատէ Փարպեցւոյ նկարագրութեան արժանահաւատ և բնական լինելը։

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Հին ժամանակները Այրարատ աշխարհի արեւելեան կողմը, Արագած և Մասիս լերանց մէջտեղ Այրարատեան դաշտի վրայ, առաջին անգամ բնակութիւն հաստատեցին որդիք և թոռունք Հայկայ: Ըստ մեր պատմութեան, Հայկայ անդրանիկին Արմենակ Արագածի ստորոտը կառոյց իր տունն, յետոյ իր Արամայիս որդին շինեց Երասխի եզերքը ամրագոյն և ընդարձակ քաղաքն Արմաւիր, որ անկէց վերջ գրեթէ 2000 տարի Հայոց նահապետութեան իշխանանիստ վայրն եղաւ. և ինչպէս որ քաղաքն կոչուեցաւ իր անուամբ, նոյնպէս և իր Շարայ որդւոյն անուամբ, կ'ըսուի թէ կոչուեցաւ Արագածու մերձակայ Շիրակ գաւառը, և գետն ալ իր թոռան ա-



64. Գաւառացոյց Այրարատայ:

նուամբ Երասխ։ Արամայիսի անդրանիկն Ամասիա՝ Երասխ գետէն անցնելով անոր աջ կողմը կամ դէպ ի հարաւ, բնակեցաւ Մասեաց Ոտքը, իւր անուամբ կոչելով մեծ լեռը, և անոր ստորոտքը իւր երկու կրտսեր որդւոց անուամբ կառուցանելով Ցողակերտ և Փառախոտ քաղաքներն, դարձաւ վերստին յԱրմաւիր։ Իսկ իր անդրանիկն Գեղամ, Արմաւիրը թողլով իւր Հարմայ որդւոյն, «ինքն գնաց զմիւս լերամբն արևելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ (Սևանայ), շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն սա զլեառնն անուանէ Գեղ, և զշէնսն Գեղաքունի, որով կոչի և ծովն» (Խոր. Ա. ԺԲ)։ Հօն ծնաւ Սիսակը, որուն ժառանգութիւն տուաւ Գեղաքունեաց ծովէն մինչև Երասխայ քարավազքը, և այն երկիրը կոչուեցաւ Սիսական կամ Սիւնիք, որ եթէ նոյն ժամանակ անբաժան մասն կը համարուէր Այրարատայ, վերջը զատուելով եղաւ Հայաստանի 15 նահանգներէն մին։ Գեղամ նորէն Այրարատ դառնալով շինեց իրեն ձեռակերտ մը և անուանեց Գեղամի, որ յետոյ իւր Գառնիկ թոռան անուամբ կոչուեցաւ Գառնի։

Պատմութիւնն մեզ այսչափ միայն կ՚աւանդէ Այրարատայ մէջ Հայկազուն նահապետաց շինութեանց նկատմամբ։ Հարմայ մինչև վերջը բնակեցաւ յԱրմաւիր, այսպէս նաև իւր յաջորդքն և պայազատք, քաջն և աշխարհակալն Արամ, և իւր որդին Արայ Գեղեցիկ, և սոր որդին Արայեանն Արայ, և ապա Անուշաւան։ Ասկէց կը զայրին Հայկայ ազգատոհմին որդւոց որդի ուղղակի յաջորդութիւնք, և չի գիտցուիր վերջը եկող նահապետաց և թագաւորաց ազգաբանութիւնը, և ոչ ալ երկրի մէջ եղած շինութիւնք և սահմանաց ընդարձակուիլն կամ նուազումն. այլ միայն յայտնի է որ աէրութեան գահն էր յԱրմաւիր, և արքունի կալուածոց յայտնի սահմանքն էին՝ արևելքէն Գեղամայ ծովէն սկսեալ մինչև արևմուտք Վանանդայ կողմերը. իսկ անկէ անդին մինչև Կարնոյ լեռները կամ աշխարհիս արևմտեան մասը, այսինքն վերջէն անուանուած Վանանդ և Բասեանք և անոնց կից քանի մը փոքր գաւառները, որք կը թուին թէ հին ժամանակները Բասեանք կոչուած օտար ազգի մը ժառանգութիւն եղած ըլլան, և չէ յայտնի թէ ե՛րբ նուաճուեցան Հայկազուններէն։ Բայց երբ ալ նուաճուած ըլլան, յայտնի է թէ Այրարատայ արևելեան մասին պէս արքունական սեփական կալուածներ չեղան, այլ մեր նահապետաց և թագաւորաց ձեռաց տակ կամ հարկատու, ունէին իրենց առանձին նախարարներն կամ դատաւորները։ Յետ բարձման Հայկազանց հարստութեան, մեր երկրորդ հարստութեան հեղինակն Վաղարշակ Արշակունին, որոյ համար կ՚ըսուի թէ ի Մծբին հաստատած ըլլայ գահը, սակայն Արմաւիրն ալ երբեք չձգեց, և մանաւանդ անոր մեհեանները զարդարեց իւր նախնեաց արձաններով։ Սա և իւր երեք յաջորդները, Արշակ որդին, Արտաշէս թոռը, և Տիգրան թոռնորդին, իրենց տէրութեան սահմանները Արամէն աւելի ընդարձակեցին։ Ասոնց ժամանակ կը կարծուի որ միացան աշխարհիս հեռ հարաւային արևելեան կրկին գաւառները, որ կը գտնուէին Արածանւոյ գետահովին մէջ, և այսպէս Այրարատը հասաւ իւր վերջին ընդարձակութեանը։ Արշակունեաց թագաւորութիւնը դեռ չվերջացած, քիչ մը ժամանակ երկիրը երկու մասի բաժնուեցաւ, և նորէն հին նահապետական կամ հայկազնեան Այրարատ գաւառը մնաւ իրեն անձուկ սահմանին մէջ, և եղաւ Պարսից հովանաւորութեան ներքև թագաւորական վիճակ մը. բայց Հայոց միւս նահանգաց և գաւառաց մէջ իշխող նախարարաց սադրանօք, երկար չանեց և վերջ տրուեցաւ Այրարատայ արքունի պայազատութեան. այնուհետև երկիրն ալ բաժնուեցաւ հինգ կամ վեց առանձնակ գաւառաց, ժառանգութիւն դառնալով քանի մը ազատազգի տոհմերու։ Այրարատը բաւական երկար ժամանակ մնաց Պարսից իշխանութեան ներքև և ի վերջոյ մասամբ մը և Թուրքաց. իսկ այժմ մեծաւ մասամբ Ռուսաց իշխանութեան ձեռքն է, և առ ժամս միայն Բասեն, Բագրեւանդ, Ծաղկոտն և Կոգովիտ գաւառներն մնացեր են Թրքաց։

ԱՅՐԱՐԱՏԱՅ ԳԱՒԱՌՆԵՐՆ. — Ի սկզբան միայն երկու գաւառական անուններ կը յիշուին մեծ նահանգիս մէջ, Արագածոտն Արմենա-

*կէն, և* Մասեաց ոտն *Ամասիայէն. որոց վրայ աւելցաւ վերջը* Շիրակ. *իսկ* Գեղաքունին, *ինչպէս տեսանք, թէ և առաջ անբաժան մասն էր Այրարատայ, բայց շուտով անկէց զատուեցաւ։ Թագաւորութեան վերնալէն վերջ, վերոյիշեալ երկու լեռնոտքն եղան առանձին գաւառներ, յայտնի չէ թէ որ տոհմի ձեռաց տակ. առաջնոյն մնացուցան հին մայրաքաղաքն Արմաւիր և Վաղարշապատը. իսկ վերջը շինուած Դուինը, մերձակայ հին Արտաշատ քաղաքովը, որք բուն Ոստան կը կոչուէին Երդ գաւառ մէջ, Մազազունեաց տոհմին անուամբ կոչուեցան* Մազազ. *բայց երբեմն* Դուինայ դաշտ *ալ կը կոչուի այս*

### ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՅՐԱՐԱՏԱՅ

| ՀԻՆ ԳԱՒԱՌՔ | ՆՈՐ ՎԻՃԱԿՔ |
|---|---|
| Ա. ԲԱՍԵՆ | ՎԵՐ. ԲԱՍԵՆ, ՀԱՍԱՆԳԱԼԷ |
| Բ. ԳԱԲԵՂԵԱՆՔ | ԿԱՂԶՈՒԱՆ, ԿԷՋՈՒԱՆ |
| Գ. ԱԲԵՂԵԱՆՔ | ՍՏՈՐԻՆ ԲԱՍԵՆ |
| Դ. ՀԱՒՈՒՆԻՔ | ԱՐԵՒԵԼ. ՎԵՐԻՆ ԲԱՍԵՆ |
| Ե. ԱՐՇԱՐՈՒՆԻՔ | ԿԱՂԶՈՒԱՆ, ՇՈՐԷԳԷԼ |
| Զ. ԲԱԳՐԵՒԱՆԴ | ԱԼԱՇԿԵՐՏ |
| Է. ԾԱՂԿՈՏՆ | ՏԻԱՏԻՆ |
| Ը. ՇԻՐԱԿ | ՇՈՐԷԳԷԼ, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ |
| Թ. ՎԱՆԱՆԴ | ԿԱՐՍ |
| Ժ. ԱՐԱԳԱԾՈՏՆ | ՍԱՐԴԱՐԱՊԱՏ, ԷՋՄԻԱԾԻՆ |
| ԺԱ. ՃԱԿԱՏՔ | ՏԷՐԷԲԷՆՏ, ԿՈՂԲ |
| ԺԲ. ՄԱՍԵԱՑՈՏՆ | ՏԱՇԲՈՒՐՈՒՆ |
| ԺԳ. ԿՈԳՈՎԻՏ | ԲԱՅԷԶԻՏ |
| ԺԴ. ԱՇՈՑՔ | ԱՊԱՐԱՆ ? |
| ԺԵ. ՎԱՐԱԺՆՈՒՆԻՔ | ՏԷՐԷ ՉԻՉԷԿ |
| ԺԶ. ՆԻԳ | ԱՊԱՐԱՆ |
| ԺԷ. ԿՈՏԱՅՔ | ԳԸՐԴԲՈՒԼԱԳ, ԵՐԵՒԱՆ |
| ԺԸ. ՄԱԶԱԶ ԵՒ ՈՍՏԱՆ | ԳԱՌՆԻԲԱԶԱՐ, ԴՈՒԻՆ |
| ԺԹ. ՈՒՐԾ ԵՒ ԱՐԱԾ | ՎԵՏԻԲԱԶԱՐ |
| Ի. ՇԱՐՈՒՐ | ՇԱՐՈՒՐ–ՏԱՐԱԼԱԳԸԶ |

*երկիրս։ Բուն Այրարատայ միջին մասն եղաւ* Կոտայք *գաւառ, որ վերջին դարուց մէջ և մինչև ցարդ՝ Երևան բերդաքաղաքովը համարուեցաւ Այրարատայ բնավայրը և նոր ոստան մը, յաջորդ չորս նախնի մայրաքաղաքաց (Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին), թողլով Երուանդայ շինածներն, որ քիչ ժամանակ թագաւորանիստ եղան։ Կոտայք գաւառի հիւսիսային կողմը Գուգարաց սահմանակից՝ ձեւացան* Նիգ *և* Ծաղկոտնիք *կամ* Վարաժնունիք *գաւառներ, և ասոնց արևմտեան հիւսիսային կողմը* Աշոցք։ *Ասոնք կը համարուին Այրարատ արքունական նահանգի սեփական գաւառներն կամ վիճակներն։ Իսկ Շիրակ՝ որ ի Հայկազանց հաստատուած և արքունի սեփականութիւն էր՝ Մեծին Տրդատայ ժամանակէն, օտար* Կամսարականաց *տոհմին ժառանգութիւն տրուեցաւ, ինչպէս նաև* Երասխաձոր, *որ այն տոհմի նահապետին անուամբ կոչուեցաւ* Արշարունիք։ *Ասոնց նման արքունի սեփականութիւն և մասն Այրարատայ կը թուի լինել և* Ճակատք, *որ կը գտնուի գրեթէ նահանգին կեդրոնը, և առանձին գաւառ ըլլալու ժամանակն չի գիտցուիր։ Նոյնպէս և* Կոգովիտ՝ *Մասեաց հարաւային արևմտակողմը, սեփական էր երբեմն արքունեաց, և տրուեցաւ ի ժառանգութիւն կրտսեր արքայորդւոց։ — Ասոնցմէ զատ կը մնան երկու Եփրատական գաւառներն՝* Ծաղկոտն *և* Բագրեւանդ, *որ յայտնապէս օտար են բուն Այրարատեան հին նահանգէն, նոյնպէս և արևմտեան գաւառներն,* Վանանդ՝ *որ երբեմն* Անփայտ Բասեան *կոչուած է, և յետոյ Վոնդ բուլղարի մը անուամբ այսպէս։* Բասեանք՝ *շատ ընդարձակ լինելուն համար երկուքի բաժնուած, որուն հարաւակողմը՝ հաւանօրէն իր հին մասերն՝* Աբեղեանք, Գաբեղեանք *և* Հաւնունիք, *որոնք Վաղարշակէն պարգև տրուեցան, քանի մը ազատաց և պաշտօնէից և համարուեցան առանձին գաւառներ։ — Այրարատայ վրայ գրուած կան բազմաթիւ հին և նոր գրուածքներ, թէ՛ աշխարհագրական և թէ պատմական տեղեկութիւններով լի, բայց ամենէն աւելի ընդարձակն և նորն է Մեծ. Հ. Ղևոնդ Ալիշանի մեծահատոր և հմտալից տեղագրութիւնն, յորում բովանդակուած կը գտնենք ամենայն ազգային և օտար աղբիւրներ, հանդերձ մեծադիր աշխարհագրական քարտէսիւ. տպ. Վենետիկ — Ս. Ղազար 1890, էջ 590։*

ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԼԵՐԻՆՔ. *Տես* ՄԱՍԻՍ։

ԱՅՐԻ *կամ* ԱՅՐՈՒ. — *Լեռ Սիւնեաց Ծղուկ գաւառի. բարձր՝ 10160'։*

ԱՅՐԻ–ՁԱՅԸ. — *Գետ Սիւնեաց Ծղուկ գաւառի. սկիզբն կ'առնու համանուն* Այրի *սարէն, և անցնելով Շխլար, Ախլար, Ախլաթեան, Տոլորս և Ոյծ գիւղերէն՝ կը թափի Բարկուշատ գետոյն մէջ։ Գետոյս գըլխաւոր օժանդակն է Սիսիան։*

ԱՅՐԻՃԷ. — *Այլազգաբնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ. ունի պատուական օդ և ջուր, այս պատճառաւ Գաւառեցի Հայք ամառը այստեղ կ'անցնեն, և բնիկ քաջ Մակուեցիներ ըլլալով, ամենևին երկիւղ չունին յայլազգեաց։ Գիւղիս մօտ կայ աղի ջրոյ աղբիւր մը, որ առողջարար դեղ է զանազան ցաւոց։ Այրիճէ կը համարուի հին* Արգիշտի *գիւղն։*

ԱՅՐԻ ՎԱՆՔ *կամ* ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆՔ. Գղ. AÏRI-VANK'H. — *Հռչակաւոր և հրաշալի մեծ ժամատունն (Թ. 66, 67) որբատաշ վիմօք, որ յարակից տաճարին՝ և հինգ փոքրածոյ եկեղեցիներու կամ մատրանց հետ միասին* Եօթն *եկեղեցիք կը կազմէ, ինչպէս երբեմն կը կոչուէր բոլոր մենաստանը։ Ընդ ամէնը քառասուն խորան կամ պատարագի սեղան կայ այս եկեղեցեաց մէջ, թէպէտ 1680ին մատենագիր մը 10 հատ աւելի կը դնէ, «հովանաւորութեամբ Ծ (յիսուն) խորանացն»։* Այրի վանք *կը կոչուի լերան լանջին վրայ շինուած ըլլալուն և քարայրներու*



65. *Այրի վանք կամ Գեղարդայ վանք։*

*կերա հին վանք Այրարատայ Մազազ գաւառի Գառնոյ ձորի մէջ։ Ինչպէս կը տեսնուի առաջիկայ պատկերին (Թ. 65) մէջ, բոլոր մենաստանն՝ քառակուսի բրգանման պարիսպներով շրջապատուած է, որոյ հիւսիսային և արեւմտեան կողմերն հանդչած են բարձրաբերձ ապառաժներու վրայ, իսկ միւս կողմերն աւելի ցած են։ Արեւելեան կողմը փոքր դուռ մը կը հանէ Գառնոյ գետը, որ քանի մը քայլ հեռուէն ահաւոր խոխոջանօք կը վազէ։ Աւագ դուռը արեւմտակողմն է, ուսկից ներս մտնելով, յանդիման կ'ելնէ նման փորուած մատրանց համար։*

*Ինչպէս յատակաձեւի (Թ. 68) մէջ կը տեսնուի, վանացս շինուածոց մէջէն ընդարձակագոյնն է* ժամատունն *կամ առաջին եկեղեցին (Ա), որ հաւասար քառակուսի է, 8 մետրէն քիչ մ'աւելի երկայնութեամբ և լայնութեամբ. յատակէն կը բարձրանան չորս ստուար սիւնք հաստ պատուանդանօք և խոյակօք, որոց վրայ ձգուած են լայնաբաց կամարքն, որ կը բռնեն կիսաբոլոր և քառակուսի գմբէթն՝ մեծ խորշխորշ ձեղուամբ, որ պարզութեամբ հանդերձ՝ ունի իր մեծ-*

վայելչութիւնն և գրեթէ իր տեսակին մէջ մէկ հատիկ է, և ունի միայն մէկ լուսամուտ, որոյ մօտ՝ տանիքի արեւելեան կողմը կը բարձրանայ փոքրիկ սիւնազարդ զանգակատուն մը։ Տիպուա այս ձեւը կը համարի իբր նախատիպ օրինակ արաբացի կամ մաւրիկ կամարներու և խորանաձեւ գոգոց։ Զորս մեծ կամարներէն զատ, ուրիշ ութ փոքրագոյն կամարներ կը կազմեն ձեղունը, նոյնպիսի խորշերով և ճարտար գրուագներով.

նին եւ Աւագին եւ յառաջնորդութեան Բարսղի միայնաւորին եւ աշխատութեամբ եղբարցս շինեցաւ կաթուղիկես մեծափառ, ՈԿԳ....։

Արժանաւոր շինուած արժանապատիւ շինողաց, որք Բագրատունեաց հաւասար և նման Հայաստանեայց եկեղեցիքը զարդարեցին մեծագործութեամբ։ Նոյնպէս իրենց արժանաւոր են երկու խաչքանդակներն, մանաւանդ հիւսիսակողմանը՝ որոյ վրայ կայ «Թվ. Պ» (=1351). բայց հարաւակող-



66. Այրի վանից ժամատունը կամ Ա. եկեղեցին։

խակ սիւներու խոյակներն և կամարաց զարդերն բոլորովին նման և համաչափ չեն։ Ժամատունէն ի կաթուղիկէն կամ յԲ Տաճարը տանող դրան աջ և ձախ կողմը գտնուող երկու պատուանդանաւոր մեծամեծ խաչվիմից քանդակներն յոյժ գեղեցիկ են։ Ժամատան այս կողմն կամարին վրայ արձանագրուած է շինութեան յիշատակը, 1214 թուին, հետեւեալ կերպով. ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարիայ եւ Իւանէի նորին նահապետի եւ որդւոց նոցին Շահանշա-

մանն ևս գրեթէ առաջնոյն կը հաւասարի, և վրան հնագոյն թուական մը ՈԿԲ (=1213) կը նշմարուի երիցագոյն քան զշինութիւն եկեղեցւոյն։ Միջնադրան կամ դաւթին արեւելակողման երկու անկեանց մէջ կան կրկնայարկ փոքրիկ մատրունք. հարաւակողման վերին դրան վրայ կայ կիսեղծ արձանագրութիւն մը, որ թուի թէ 1278ին գրուած է։

Բուն եկեղեցին կամ այս տաճարս երկար քառակուսի է, որոյ միջնամայրը կը բարձրա-

նայ անտին կաթուղիկէն, անտի միայն լոյս ընդունելով. բեմն հինգ աստիճան ատենէն բարձր է. կիսաբոլոր խորան մ՚ունի, և երկու կողմերը երկայնաձև նեղ մատուռք կամ կրկնայարկ աւանդատունք, որոց վերնատանց



67. Այրի վանից ժամատան աւագ դուռը։

դռները բեմին վրայ կը բացուին։ Արևմըտեան կողմի մատուռք փոքր են քան ըզսոսա բայց նոյնպէս կրկնայարկ, և վերնայարկաց սիւնազարդ դռները՝ նեղ սանդուղներով բացուած են որմոց մէջէն, և թուի թէ աւագորերոյն աղօթատեղիք էին։ Բովանդակ շէնքն կոփածոյ քարերով շինուած է՝ բաց ի միջնադռնէն։ Տաճարիս խորանին մէջ երբեմն կը պահուէր Գեղարդն Քրիստոսի՝ Հայոց սրբութեանց պարծանքը, որ այժմ յԷջմիածին է, և այն պատճառաւ Այրի վանքը երբեմն Գեղարդայ վանք ևս կը կոչուի, ինչպէս նաև լեռը Գեղարդասար և ձորը Գեղարդաձոր (Թ. 69)։ Յայտնի չէ թէ Ե՞րբ բերուեցաւ աստ այս սրբազան գործիքը, միայն ԺԵ դարուն կը յիշուի. իսկ Վարդան աշխարհագիրը ԺԴ դարուն կը հա-

մարի և այսպէս կըսէ. «Այրի վանքն, որ կայ սուրբ Գեղարդն աստուածամուխ ներկեալ արեամբ Կենարարին, և Տախտակն սուրբ տապանակին Նոյայ. և նա է տուն կանաւ վրայի արձանագրութիւնն, ու կ'ըսուի, թէ սա արժանաւոր հետեւող էր Զաքարեանց՝ քաջութեամբ և շինութեամբ. Պըռօշ ընծայեց սուրբ գէնքը այս սրբարանին,




68 · Ընդհանուր յատակագիծ Այրի վանից:

հաւատոյ Հայաստանեայցս, հաստատեալ ի Ս. Լուսաւորչէն»: Բայց արծաթէ երկիփեղկ Գեղարդայ պահարանը՝ որ ցարդ ի միասին կը պահուի յէջմիածին, յիշատակ է Պռօշ իշխանին, ինչպէս կը յայտնէ 1268 թուա- յորում և պատրաստեց իւր հանգստարանը, գրելով միանգամայն տաճարին խորանի հիւսիսակողման կամարի վրայ իւր նուիրած Ողջաբերդ և Բերդաղ գիւղերն և այլ զանազան ընծաներ և 10000 սպիտակ (դրամ):

Տաճարիս մէջ կան նաև ուրիշ նուիրատուաց և նորոգողաց կիսեղծ և անեղծ արձանագրութիւններ։

Ժամատունը և տաճարը ճարտարապետական արհեստով շինուած են, միայն հիւսիսային որմը կը կազմէ յղկուած միապաղաղ քարաժայռ մը, յորում փորուած են եկեղեցիներն։ Ժամատան և տաճարի մէջ կան դռներ, յորոց կ'երթցուի միւս եկեղեցիները։

բաններ՝ խանգարուած և եղծուած արձանագրութեամբք, և կը համարուին Պռօշի զարմին հանգստարանները, որոյ դաստակերտն է այս սրբարանը, ինչպէս արձանագրուած է հարաւային որմի վրայ։ Դարձեալ Պռօշի նշանն կը թուի այն մեծ քանդակը (Թ. 71), որ կը գտնուի այս հանգստարանաց երկու կամարաց վրայ. քօշի կամ նոխազի գլուխ մը կայ մէջտեղ, բերնին մէջ ունի մանեակ մը, ուստի կը մեկնին երկու



69• Գեղարդաձոր և Այրի վանք

Գ եկեղեցեակն կամ մատուռն (Թ. 70) փոքրիկ քառակուսի է, և ձեղուան վրայ երկայն բոլորակ գմբէթ մ'ունի, որ իբրև լուսամուտ կը ծառայէ. գետնէն բարձր է 28 ոտնաչափ, և զարդարուած է զանազան դրուագներով։ Ամէն մասունքը՝ բեմը, խորանը և սեղանը փորուած և կոփուած են միակտուր քարէ. Հիւսիսային կողմը ստուար սիւներով երկու կամարակապ խորշեր շինուած են, յորում կը գտնուին գերեզմանաց տաշղթաներ՝ կապելով երկու կողմերը մէկ մէկ առիւծ և մէջտեղը կէս թևատարած արծիւ մը՝ որ մագլօքն գառ մը բռներ է և վրան կը նայի։ Ժամատանս հիւսիսային կողմը սևագոյն և անհամ ջրոյ աղբիւր մը կը բղխէ վիմաց միջէն, որ յատակին տակէն անցնելով գետը կը թափի։ Գ եկեղեցին գրեթէ ձևով և երկայնութեամբ հաւասար և նման է Բ եկեղեցւոյն, միայն անկէ քիչ մը նեղ է և աւելի խաչաձև. անոր նման գրուագազարդ

լուսամուտ կամ թաղիկէ մը եւ ունի: Եկեղեցւոյս արեւմտեան թեւը միւսներէն աւելի զատուած կ'երեւի, անոր համար ոմանք երկու եկեղեցի կը համարին: Կ'ըսուի թէ երբեմն ասոր մէջ կը պահուէր Նոյեան տապանի մասն՝ որ այժմ յէջմիածին է: Յատակաձեւին նայելով Ե եկեղեցին մեծ ժամատան արեւմտահիւսիսային կողմը կը գտնուի, քառակուսի, փոքր և գմբեթաւոր՝ յորում է լուսամուտն. ասոր մէջ եւս աղբիւր մը կայ, որ Տիւպուայի քննութեան ժամանակ սառած ըլլալով, հազիւ կրցաւ սողոսկելով ներս մտնել և ուրիշ բան մը չի յիշեր, ինչպէս նաեւ այլք: Անոր համար չի գիտցուիր թէ ասոր մէջ արդեօք արձանագրութիւն կա՞յ. չգտնուեցաւ նաեւ Գ եկեղեցւոյն մէջ, ուստի և մեր մատենագիրները միւսներէն աւելի հին կը կարծեն զայն. անդ պահուած է, կ'ըսէ օտարազգին՝ Վարդանայ յիշած Նոյեան տապանի մասը: Այս երեք (Գ. Դ. Ե.) եկեղեցիներէն վեր կը գտնուի վիմափոր միւս մեծ եկեղեցին (Է), որ արտաքին քարաժայռի միջէն եւս յատուկ ճանապարհ մ'ունի, որ կը հանէ նախ նեղ և երկայն գաւիթ (Զ) մը և անտի մեծ գմբով եկեղեցւոյն մէջ: Այս եկեղեցին կամ լաւ եւս մատուռը Ս. Սարգիս (թ. 72) կը կոչուի, և հաւասարակողմ քառակուսի է, Բ մեծ տաճարին նման, չորս ստուար սիւներու վրայ բարձրացած է կաթողիկէն՝ բոլորշի պատուհանով. չորս կողմը կան երկերկու որմախինք, որոց վրայ ձգուած են կամարք. յատակը հարթ է և չունի ոչ բեմ և ոչ սեղան: Շինողն՝ 1288ին, Պռօշի որդին Պապաք՝ հիւսիս-արեւելեան սեան վերնախարիսխին վրայ փորագրուած արձանագրութեան մէջ, ժամատուն կը կոչէ այս մատուռս: Հարաւ-արեւելեան սեան վրայ եւս կայ տասնաւոր արձանագրութիւն մը, անթուական և ոչ հին: Այս ժամատանս վերնայարկին վրայ կան նաեւ մանր փորածոյ խցիկունք, ոմանք առանձին և ոմանք մէջ ընդ մէջ անցքերով, յորս կան նաեւ պատարագի սեղաններ:

Բաց ի վերոյիշելոց Այրի վանից պարսպի մէջ և դուրսը կան ուրիշ բազմաթիւ վիմափոր մատրունք և այրեր (թ. 73), պատարագի սեղաններով. ոմանց վրայ կան արձանագրութիւններ: Այս այրերէն ոմանք բնական կը թուին, ոմանք ձեռագործք, և են արդիւնք երկարատեւ համբերութեան և աշխատութեան: Սոքա երբեմն եղան աղօթից և վանդգաց ապաստանարանք, անոր համար խուզարկելով կարելի է արձանագրուած շատ յիշատակներ գտնել: Ասոր վկայ է ականատես քննիչն Տիւպուա, որ տեսեր է բազմաթիւ երկար արձանագրութիւններ, և կ'ըսէ թէ վանքէս ներսի և դրսի արձանագրութիւններով կարելի է գիրք մը յօրինել: Իսկ քարի տեսակին նկատմամբ՝ յորում փորուած են մատ-



70. Գ Մատուռն Այրի վանից:

րունք և եկեղեցիք, կը համարի որ կարծրակուռ պորփիւրի խառնուած մը ըլլայ, գորշագոյն և սպիտակագոյն՝ մեծ մեծ բծերով. հողի զանգուածներու մէջ կը գտնուին անկիւնաւոր ժայռերու կտորներ, շատը պորփիւրէ: Վանքին կամ միանձանց բնակարանք եկեղեցեաց շինուածոց նման, բոլոր քարաշէն են, պարսպի հարաւային և արեւելեան կողմերը:

Ոչ պատմիչք և ոչ ցարդ ծանօթ արձանագրութիւնք մեզ չեն յայտներ ստուգիւ, թէ ե՞րբ հիմնուեր է մենաստանս. միայն կը

*հաստատեն՝ թէ Զաքարեանց և Պռօշեանց եօթը եկեղեցիները շինելէն առաջ, որ է նախ քան ԺԳ դար, կային անդ կրօնաւորներ և Ս. Աստուածածին եկեղեցին՝ յորում կը կարդանք հնագոյն թուական մը 1177 տարւոյ, և քան զայն աւելի հնագոյն խաչքարերու վրայ՝ 1165։ Արդեօք ո՞վ նախ այս օտարոտի վայրերու մէջ բնակութիւն հաստատեց. ո՞վ նախ այս վիմաց ծերպերուն մէջ շինեց Աստուծոյ տաճարները, ուր հազիւ որսորդները սողոսկելով կարող էին մտնել. ո՞վ նոյնմէ ոմանք կամ քահանաներէն այստեղ ճգնած կամ վախճանած ըլլալով, ինքն ալ իւր և ժամանակի սովորութեան համեմատ խաչ մը անկեր է հոս և այսպէս սկսեր է միանձանց բնակարան դառնալ։*

*Այգիս քրիստոնէութեան առաջին դարերէն այս տեղս կոչուեցաւ* Այրից վանք, *ինչպէս յայտնի է Վարդանայ աշխարհագրի խօսքերէն. և յոմանց համարուեցաւ մայր Հայոց վանքերու։ Կ'աւանդուի Մեծին Ներսէսի հոս գալը. բայց աւելի ստոյգ է նորա որդւոյն*



71. *Քանդակ Այրի վանքից Գ մատրան մէջ։*

*արդեօք քրիստոնէական փառաբանութեան արձագանգներով ընդհատեց ծածուկ անձաւներու մշտնջենաւոր լռութիւնը։ Պէտք է հաւատալ աւանդութեան և Վարդանայ աշխարհագրին խօսքերուն, թէ Լուսաւորիչ հաստատեր է աստ Աստուծոյ տաճարը. և ան՝ կամ հեթանոսական պաշտամանց տեղ մի էր, և ինքն փոխեց ճշմարիտ Աստուծոյ տաճար, և կամ որ աւելի հաւանական է, երբ ինքն Ս. Հռիփսիմեանց ցրուած ընկերները կը փնտռէր, և տեղւոյս մօտերը գտնելով անոնց հետքերը Աղջոց վանքի մէջ, և թերեւս Մեծին Սահակայ գալուստը, ինչպէս կը յայտնուի Յովհաննէս պատմաբան կաթողիկոսի հետեւեալ տողերէն (419), որ Յուսուփայ և անոր տեղակալ Նսրայ հինահարութեանց ժամանակ (923 թուին) ապաստանած էր աստ, և «ապա եկեալ ի վանաց անուն Այրեաց, ի կացորդից սրբոյն Սահակայ, որ ի ծործորս լերինն Գեղայ՝ ի ձորակի միոջ, գէպ ուղիղ գնացաք և եկաք ի վերին վանս, ուր կայանք անասնոցն էին»։ Նոյն պատմիչն կը յայտնէ թէ վանացս մէջ կը գտնուէին բնական կամ ձեռագործ ամրոցներ,*

*իբրև ապաստանարանք մարդկանց և ընչից։ Նոր քսու մարդիկներէ զրգռուելով և խմանալով որ հոս կը գտնուէին շատ գանձեր, կարասիք և թանկագին եկեղեցական զարդեր, խոկոյն հեծեալներու բազմութիւն մը և զինուած լեգէոններ զրկեց, որք յանկարծակի մտնելով վանքի մէջ բռնեցին կրօնաւորները, և շատ ծեծելէ և չարչարելէ վերջ, պահած ինչքերը սկսան պահանջել։ Կրօնաւորներէն ոմանք, սաստիկ գանակոծութենէն, թէպէտ ոչ առժամայն, սակայն քիչ վերջը մեռան։ Այնուհետև հուղկահար զայրոյց նրման յափշտակեցին գրքերը, եկեղեցւոյ զարգերը, կենդանիները ու մեղուաց փեթակները, «և զգեղեցիկ շինուածս չքնաղազգեղս որ ի կուստատանի անդ՝ հրակիզեալ հրդեհեալ, չոգան ի բաց»։ Յով. կաթ. ԿԶ։*

*Այս խօսքերէն ընթերցողն ինքնին կը զուշակէ, թէ այն ժամանակ Այրի վանից մէջ կը գտնուէին զարմանալի և գեղեցիկ շէնքեր. և պէտք էր շուրջն ալ գտնուէին ոչ միայն արօտատեղիք, այլ և մարգեր և պարտէզներ մեղուաց խումբերուն համար։ Պատմարանէն գրեթէ դար մը յառաջ (839), նորա անուանակից և վիճակակից՝ Յովհաննէս Ե Ովայեցին, ոմանց քսութեամբ նախատուելով Բագարատ իշխանէն և նզովելով գիշխանը, եկաւ առանձնացաւ այստեղ և լռիկ մնջիկ միշտ աղօթքի կը պարապէր, ուսկից յետոյ ողջամիտ նախարարները իր աթոռը դարձուցին։ Այս վանքս ե՞րբ եղաւ բնակարան Ս. Սահակայ, նախնիք յիշատակած չեն. թերևս այն ժամանակ՝ երբ վաթսուն խարազնազգեստ աշակերտներ ժողվելով, հոգևորական սուրբ կրթութեան կը զբաղէր։*

*Թէպէտ այժմ այն հնագոյն ժամանակաց շինուածները չեն տեսնուիր, և ոչ պատմաբան կաթողիկոսին յիշատակներէն մինչև ԺԲ դարու կէսը, բայց տեղւոյն ամրութիւնը, հին սրմերու և մատուռներու գոյգն հետքեր կը հաստատեն թէ ի հնուց այս տեղ բնակութիւն եղած է։ ԺԲ դարու կիսէն վերջը յայտնուած է և աւելի պայծառացած ԺԳ դարու մէջ, վերոյիշեալ եկեղեցեաց շինութեամբ, որոց արձանագրութիւնք ամբողջ դար մը ժամանակի անոր յիշատակները կ'աւանդեն և կը յիշեն նաև առաջնորդներէն ոմանս։ ԺԳ դարու կիսուն ուրիշ գլխաւոր վանորէից առաջնորդաց հետ կը յիշուի նաև սորը, որ ստորագրած է Կոստանդին կաթողիկոսի կոնդակին. նոյն առենները վանացս մէջ առանձնացած կը ճգնէր հռչակաւոր Յովհաննէս Գառնեցի վարդապետը։*



72. Այրի վանքից՝ մատուռն Ս. Սարգսի։

 ԱՅՐԻ ՎԱՆՔ

Կ՚աւանդուի թէ ԺԴ դարու վերջերը այս վանքս հասեր է աշխարհաւեր Լանկթիմուրը կամ իրեն զօրքերը, և աւերեր ու կողոպտեր են շատ գանձեր. Մորիէ անգղիացին կը յիշատակէ ասոր նկատմամբ նաև երկար արձանագրութիւն մը, փորագրուած մեծ եկեղեցւոյն սեղանին ճակատը։ Բերանացի աւանդութիւն մ՚ալ կ՚ըսէ, թէ Լանկթիմուրի եկած ժամանակ՝ Աստուծոյ հրեշտակը ե-

ժամանակները Այրարատայ վանօրէից նորոգող Միսէոն քարոզչապետն († 1428) կըր-կին անգամ եկեր բնակեր է հոս և բոլոր կարգերը ու կանոնները ուղղեր և աստուածային պաշտամունք անխափան կատարելու ուխտ ընել տուեր է։

ԺԶ դարու մէջ վանացս վրայ ծանօթ շատ յիշատակութիւններ չկան, իսկ ԺԷ մէջ՝ ոչ սակաւ. և նախ 1605ին պատահած



73. Քարափոր մատուռք Գեղարդաւանքի։

բռներ և արգիլեր է աւերածը, և բռնաւորը զարհուրած ելեր գացեր է. և անոր համար վանքն յայլազգեաց Կեօր-կէչ (տե՛ս և ան-ցի՛ր) կոչուեր է։ Հնդետասաներորդ դարու մէջ աւելի յաճախ կը յիշուի մենաստանս գրոց յիշատակարանաց մէջ։ Յատուկ Մա-նուէլի անապատ ևս կոչուած է այս սրբա-րաններէն մին, բայց այդ Մանուէլ անուն անձի վրայ տեղեկութիւնք կը պակսին։ Նոյն

հետեւեալ աղետալի դէպքը։ Երբ Շահաբաս հրաման հանեց Հայերուն Պարսկաստան գաղ-թելու, վանացս առաջնորդ Աստուածատուր եպիսկոպոսը և Հաւուց Թառայ վանից Մա-նուէլ եպիսկոպոսն, կարեւոր պիտոյից՝ կե-րակրոյ և ըմպելեաց պատրաստութիւն տես-նելէ վերջ, իրենց ազգակից և մերձաւոր ան-ձանց հետ կ՚ամրանան Գեղարդաձորի բազ-մաթիւ այրերուն մէջ։ Ամիրգուն խանը ի-

 ԱՅՐԻ ՎԱՆՔ

մանալով այս բանս զօրքերով կու գայ և խուզարկութիւններ ընելով կը գտնէ. Մանուէլ եպիսկոպոսն կը գլխատուի և միւս անձանց շատերն ալ կ'սպանուին: Այս դէպքս մանրամասն կը յիշէ Առաքել (47–48). իսկ վերոյիշեալ Աստուածատուր եպիսկոպոսը ազատուած կը թուի այդ կոտորածէն, վասն զի 1640ին ստորագրած է Մելքիսեդ կաթողիկոսի կոնդակին:

Եւրոպացի առաջին ուղևորն Թավերնիէ գաղղիացին, գրեթէ 1655 թուականին եկաւ այս կողմերս, և կը յիշէ ոչ միայն վանքն և եկեղեցին հանդերձ իր ստուար սիւներովը, և Գեղարդ և Կեօր-կէչ անուանք, այլ նաև սուրբ տեղին պատկերը՝ զոր անդ գծագրեց, ինչպէս մէկուկէս դար վերջն ալ Մորիէ անգլիացին յէջմիածին (թ. 74):

Երևանու մեծ երկրաշարժին առեն, յորում գրեթէ գաւառին բոլոր նշանաւոր շէնքերը կործանեցան, Զաքարիա և ուրիշ ժամանակակից յիշատակագիրք կ'ըսեն, թէ Գեղարդայ վանքն ալ կործանեցաւ. որոց մէն ականատես՝ այսպէս կը գրէ (1684ին). «Այրի վանից ձորակին մէջ աւելի եղաւ աւերած և կործանումն, վասն զի բոլանդակ շէնքն կանգնած է խոր ձորին մէջ և շըրջապատած է ահագին քարերէ. ուստի երկրաշարժին առեն այդ սոսկալի քարերը չորս կողմանէ թաւալեցան վանքին վրայ, և գըրեթէ ուրիշ բան չէր նկատուեր անդ՝ բայց միայն քարանց կոյտեր, որք տեսողաց վրայ սոսկումն և սարսափ կը բերէին. նոյն իսկ բոլոր ճանապարհները խափանուած էին, ուստի թէ որ հարկ լինէր ողէպաճիկ կերակուր տանել նոցա՝ ուսոց և թիկանց վրայ առած կ'երթային»: Վանացս առաջնորդը՝ երկրաշարժին առեն Երևանու Անապատ եկեղեցւոյն մէջ լինելով՝ անոր փլատակին տակ մեռաւ: Իր յաջորդն և եղբօրորդին Գաւիթ՝ յետ երեք կամ չորս տարիներու սկսաւ շինութեանց ետեւէ ըլլալ, և ըստ վերոյիշեալ գրչին, «աներկիւղ և անկասկած մնաւ շինութեանց մէջ, իբրև քաջ պատերազմող թագաւոր մը՝ որ ամենեւին չի վախնար պատերազմէ և ինքնին կը վարէ պատերազմի խումբերը. այսպէս անվեհերաբար մնաւ փլած և խարխլած տան մէջ նորոգելու համար, կանգնեց բարձրաբերձ պարիսպներ տաշուած քարերով, հաստատուն և ամրապինդ, նոյնպէս նաև բոլորակաձև շէնքեր, բանապայք, քէօշք, ապարանք, սենեակք, խոհանոցք և ուրիշ շտեմարաններ, տաշուած քարով և կըրով, զորս տեսողքն կը հիանային: Շինեց նաև արծաթէ տուփ (դոշի) աստուածամուխ Գեղարդին պահարան, և զարդարեց պատուական և թանկագին ակունքներով և ոսկէջըրեց. շատ ծախք գնաց, մինչև քսան և հինգ թումանէն աւելի և ոչ պակաս: Ուրիշ այլ և այլ շէնքեր ալ շինեց, զորս չեմ գրած. վասն զի այս երկրորդ նորոգութիւնս աւելի եղաւ քան զառաջինն»:

Եօթնևտասներորդ դարուն վերջերը (յամի 1694 յունիս 2), Ճեմելլի իտալացի ուղևորն Երևանէն հոս եկաւ՝ ութ ժամ ձիավարելով, և առանց մանրամասն ստորագրելու



74. Ս. Գեղարդն ըստ Մորիէի:

կը յիշէ զայն Kiekart կոչելով, և ըստ Թավերնիէի Ս. Գեղարդն հոս բերողն ըղ-Մատթէոս առաքեալն կը համարի փոխանակ Թադէի: Ութևտասներորդ դարուն Աբրահամ կաթողիկոսն դեռ գահը չբարձրացած, ըստ իր գրութեան, եկաւ ի վանս և մնաց երկու գիշեր. կը յիշէ նաև (Գլ. ԺԶ), Նատիր շահի և անոր զօրաց Ս. Գեղարդայ և Գօրադարայի կողմերու լերանց գագաթը ելնելը, և երկու ամսէ վերջ լեռնէն իջնելը: Սոյն դարուս կէսէն ալ յառաջ՝ շէն էր Այրի վանքն, և նոյն միջոցի Սիմէօն կաթողիկոսն (Ջամբռ, 272–275) Երևանու մէջ ունեցած վիճակները և գիւղերը կը նշանակէ, Նորագաւիթ, Նորք, Ենկիձէ, Տաճարափակ, Բարձափի, Պորտիկ. և կալուածները՝ Պորտիկ գիւղն, Ագարակ և Վերի Աշտալներ, ուսկից տասնորդ կ'առնուր, նոյնպէս Գողբն գիւղի բեր-

քերուն կէսը, դարձեալ ուրիշ շատ այգեստանք, ջրաղացներ, ձիթահաններ, երկիրներ, և այլն, այլ և այլ գիւղորէից մէջ, որոց մեծ մասը սաացած էր տեղւոյն առաջնորդն Պետրոս վարդապետ Ճահկեցի։ Քիչ վերջը ամայացաւ շէնք և մեծափառ մենաստանս, ինչպէս կ'երեւի՝ երբ Պարսից պետութիւնը Լեկաց ապստամբէն յաղթել շփոթեցաւ. Մօրիէ անգղիացին ևս լսած է որ մենաստանիս ամայանալն այսպէս եղած է, 40 կամ 50 տարի առաջ քան իր այցելութիւնը (1813), և սակայն բաւական չէն է կ'ըսէ իր հաստատուն և ամուր շինութեան պատճառաւ և սակաւ ծախքով կարելի է կատարելութեան հասցնել. բայց շինուածքին ոճն անհարթ և անարուեստ թուեցաւ իրեն։

Վերոյիշեալ Մօրիէ անգղիացւոյն հայրենակիցը Քէր-Փօրթըր՝ որ քիչ տարի վերջ եկաւ աստ քննելու (1819), վանուցս համար կ'ըսէ. «..շատ նորանշան և մեծակառոյց շինուածք մի է սա, կանգնած բուն լերան սրտին մէջ. որբազան տաճարն կը բարձրանայ աւերակաց և գերեզմանաց մէջ, ամէն կողմանէ անպատսպար և խորին միայնութեան մէջ, որ յիրաւի խորին և վսեմական ազդեցութիւն կը տպաւորէ մարդուս սրտին մէջ։ . . . Հին նահատակներու բազմաց մարմիններն թաղուած են աստ, որոց անուանք կենաց գրքին մէջ գրուած են. արդի ջերմեռանդն երկրպագուք կը համարին, թէ նոյն ինքն Ս. Գրիգոր (Հայոց մեծ պահապան հրեշտակը) հալածանքի ժամանակ սուրբ լերանս այրերուն մէջ ապաստանած է». և այլն։ Ker-Porter II, 630. Նոյնը կ'ըսէ, թէ մեծ եկեղեցւոյն կամարաց և սիւներու ձևն և գրուագները ճշդիւ սաքսոնական ճարտարապետութեան ոճոյն կը նմանին։

Ուրիշ անգղիացի մը ևս (Մոնթիթհ զօրավար), որ ասոնցմէ առաջ և յետոյ Հայոց ու Պարսից սահմանները քննեց, յիշելով փորածոյ եկեղեցիներն կ'ըսէ. «Թէպէտ Հնդկաստանի նոյն տեսակ գործոց մեծութեան համեմատ նշանակութիւն չունին սոնք, սակայն սիւներու եգիպտական ձեւին շատ նշանաւոր են»։ Այս երեք անգղիացիներէն վերջ 1834ին քննութեան եկաւ այս տեղեաց Տիւպուա Հելուետացին, և խնամքով գծագրեց վանքին և եկեղեցիներուն արտաքին երեւոյթն և յատակաձեւն, և ժա-



75. Աւերակ Սղխտու գիւղի մէջ (էջ 101)։

մատան ներքին տեսիլն և մասամբ ինչ քանդակաց։ Նոյն տարին Յովհաննէս Ը կաթողիկոսն վանքս յանձնեց Յովհաննէս անուն Նախիջեւանցի վարդապետի մը, որ սկսաւ շինութեան և նորոգութեան ետեւէ ըլլալ. բայց դեռ չաւարտած վրայ հասաւ Արարատայ մեծ երկրաշարժը (2 յուլիս 1840) և շատ վնաս գործեց (Բ) մեծ տաճարին և բնակարանաց։ Քիչ ժամանակ վերջը Սեւանայ վանքէն Մարտիրոս Վաղարշա-

պատցիի տաւշնորդութեամբ եկան մի քանի կրօնաւորք և վերստին սկսան շինել, և այսպէս վանացս մէջ բնակութիւն վերահաստատեցաւ։ Վերջին շինութեան առեն խնամքով վատտակեցաւ վանահայր Միքայէլ Վ. Զամիչեանց, և հարաւային դրան վրայ հին արձանագրութեան տակ աւելցուց իւր արձանագրութիւնն 1855 թուականաւ, յորում կը յիշէ թէ երրորդ անգամ նորոգեցաւ մենաստանս։ Արդ այս ամբողջ նկարագրէն կը յայտնուի, որ Այրի վանքն Հայոց հնագոյն վանքերէն մին է, և թէ ի սկզբանէ բնակարան եղած է միաբանակեցաց և ճգնաւորաց, թէպէտև Ս. Մաշակէն սկսեալ մինչև Թ-րդ դարու կէսը յիշատակութիւն մը չենք գտներ, նոյնպէս նաև յետոյ մի քանի դարուց մէջ։ Ցեղւոյս ծանօթ վանահայրերէն ոմանք եպիսկոպոս են և ոմանք վարդապետ։ Այս վանքէս էր ԺԴ դարու վերջերը և ԺԵ սկիզբները ապրող վարդապետ և մատենագիր ոմն Մխիթար՝ որ կը կոչուի Այրի վանեցի, և որուն նշանաւոր գործն է ժամանակագրութիւն մը աշխարհիս սկիզբէն մինչև Հայոց ՉՀԷ (=1328) թուականը։ Այժմ վանացս մէջ միաբանութիւն չկայ, միայն էջմիածնէն նշանակուած վանահայր մ'ունի։ Սակայն մեր միւս վանքերու համեմատութեամբ աւելի չէն և բարեկարգ է, տնտեսական վիճակն ևս խիստ լաւ է, ունի եզներ, կովեր, ձիեր, ոչխարներու հօտեր, ինչպէս նաև զանազան տեղերու մէջ, կալուածներ, այգիներ և տներ։ Ուխտաւորք տարուան մէջ շատ անգամ կ'այցելեն վանքս, և գլխաւորապէս Վարդավառին և Աստուածածնի վերափոխման տօներուն. այդ օրերը կը կատարին միանգամայն ազգային ժողովրդական հանդէսներ։ — Այրարատ, 336—351։ Տիեզերա, Գ. 382։ Արարատ ամսագիր, 187, Դ. 10, 92։ Արաքս, 1892 Բ. 31—39։ Եւ այլն։ Տես ՀԱՅՐՈՒՎԱՆՔ։

ԱՅՐՈՒՄ. — Երբեմն Ուտի նահանգի նոր գաւառներէն մին էր, իսկ այժմ այս անուամբ զանազան հասարակութիւններ կան Գանձակու նահանգի մէջ։

ԱՅՐՔ. — Հին գիւղ Սիւնեաց Սոդք գաւառի մէջ։

ԱՆԱԳՈՆ. Տես ԲԱՂՔ։

ԱՆԱՁԱՐԲԱ. Տես ԱՆԱՐՁԱԲԱ։

ԱՆԱԼԻՒՐ. — Վարդան (117) կը յիշէ այս անուամբ գիւղ մը, երբ Մեղրիկ կոչուած Գէորգ վարդապետի համար կը գրէ. «Էր ի



76· Աղթամար կղզին։

վատոսրական գաւառէ (նահանգէ) ի յԱնալիւր կոչեցեալ գեղջէ»։

ԱՆԱՀՏԱՅ, ԱՐՏԵՄԻԴԱՅ ՄԵՀԵԱՆ և ԱՐՁԱՆՔ. Տես ԵՐԻԶԱ, ԱՇՏԻՇԱՏ, ԱՐՏԱՇԱՏ։

ԱՆԱՀՏԱՉՈՐ. Տես ԲԱՂՔ։

ԱՆԱՀՏԱՅ ԱԹՈՌ. — Բուզանդ (Ե. ԻԸ.) կը յիշէ անունս, Եպիփանու անապատաւորին վրայ գրած ժամանակ. «Նստէր սա ի մեծի լերինն ի տեղւոջն՝ զոր կոչեն Աթոռ Անահտայ»։

ԱՆԱՄՈՒՌ կամ ԱՆԵՄՈՒՌ. Գղ. ANAMOUR. Յն. Ἀνεμούριον. — Հռչակաւոր հրուանդան և մեծ ու շէն քաղաք ի հնումն Ծովային Կիլիկիոյ, և այժմ գաւառակ Ադանայի վիլայէթի։ Ունի 96 գիւղ և մօտ 17000 բնակիչք, որոց մեծագոյն մասը վրանաբնակ են և ամառը կը քաշուին լեռները, իսկ ձմեռը ծովեզերեայ խրճիթները. գաւառակիս կեդրոնատեղին է Զօրագ։



77. Սարտաժներ Անամուրի ափունքը։

Հին Անամուռ քաղաքը Կիլիկիոյ արևմտեան մասի նաւահանգիստներէն է և Կիպրոս կղզւոյ խիստ մօտ։ Նաւահանգիստս հովերու

*գէմ պատսպարուած չըլլալով, բայց ի արեւմըտեան հարաւէն, ուր կ'երկննայ հրուանդանը, վաճառականութիւնը բանուկ չէ, և նաւահանգստութիւնք անկանոն են: Առեւտրական գլխաւոր արտադրութիւնքն են կնճիթ, արմըտիք սակաւ, և մեծաքանակ շինութեան փայտ: Մաքսատան հասոյթը տարին կը հասնի հազիւ 150-200000 դահեկանի: Այս նաւահանգիստը 1889ին մարտէն մինչեւ 1890ի փետրուարը, մտած և ելած են միահամուռ 355 նաւ, յորոց 55ը շոգենաւ. մեծաւ մասամբ անգղիական, յունական և օսմանեան: Նաւահանգիստս մաքսվըրդեան կեդրոնատեղի չէ, այլ միայն չորս հինգ պաշտօնական շէնքեր. իսկ քաղաքը կը գտնուի աւերակ վիճակի մէջ, որուն Թուրքք Էսկի-Ամասռա կը կոչեն: Նշանաւոր աւերակներն են, ջըրմուղ մը, պարսպի մասեր, ջրամբարներ, երկու թատրոն և ընդարձակ գերեզմանատուն մը, ուր կան բազմաթիւ նոյնաչափ դամբաններ զանազան ձեւերով՝ որք արձանագրութիւն չունին:*

*Հռչակաւոր Անամուրի հրուանդանին (թ. 78) դէպ ի ծով երկնցած ծայրն՝ բոլորաձեւ բարձր զառիկ մի է, մէկ կողմէն անմատչելի, իսկ միւս կողման վրայ խոխտ կերպով բարձրացած է հնաւուրց բերդն՝ (թ. 76) շրջապատուած պարիսպներով և աշտարակազարդ որ մեծաւ մասամբ կանգուն է, և այժմ կը կոչուի Մամուրիէ: Դղեկիս ընդարձակութիւնն է 4 քառակուսի հազարամետրէն աւելի. պարիսպները ստուար են և հաստ աշտարակներով ամրացած: Ներքին կողմէն պարիսպն ունի ստորերկրեայ անցքեր. իսկ արտաքին կողմէն ստորոտը կայ լայն խրամ մը, որը՝ հաւանականօրէն պատերազմի ժամանակ կը լեցնէին մօտակայ գետի ջրով: Այս խրամը կը պատէ բերդիս երեք կողմերը, իսկ չորրորդ կողմը ծովապատ է. ուստի միայն քաշէն կամրջով մը կը մտնուի բերդը հոյակապ դռնէ մը. ուրիշ երկու դռներ եւս կան՝ բայց չարժական կամրջօք հնարաւոր է մտնել՝ որոց մնացորդք այժմ կ'երեւին: Բերդիս ներքին կողմը բաժնուած է՝ ստուար պարսպով մը և աշտարակներով, երկու մասանց: Այս մասերէն մին, հարաւային անկիւնը դէպ ի ծովակողմը, ունի ներքին մարակոց կամ միջնաբերդ մը ձեւացած պարսպէ շրջապատով մը և երեք հաստ աշտարակներով՝ յորոց մին մասամբ մը խորտակուեր է: Բերդիս խարաքանչիւր մասերն ունին ընդարձակ ջրամբարներ, յորս ջուր կը բերէին ազուգաններով մերձակայ գետէն:*

*Ոմանք կարծեցին թէ այս բերդս կառուցուած է Մեծին Աղեքսանդրի ձեռքով: Ցիբուսի դրանց միոյն վրայ կայ հնագոյն յունական արձանագրութիւն մը, սակայն անհըրնարին է զայն կարդալ. և որովհետեւ ճարտարապետական ձեւը իւր ամբողջութեամբը խաչակրաց ժամանակին կը վերաբերի, մեզ հաւանական կը թուի կարծել, թէ ի հնումն այս տեղ կար ամրոց մը, զոր ի վերջոյ խաչակիրք և կամ հաւանականօրէն մեր Կիլիկիոյ թագաւորք նորոգած են: Մեծին Լեւոնի օրով Հայոց ձեռքն անցաւ Անեմուռ, և անոր առաջին հայկական իշխանն կը յիշուի Հալկամ՝ որ այս բերդէն զատ, Լամոսի, Ժէռմանիկան և Մանիոնի բերդերն ալ ունէր իւր իշխանութեան ներքեւ: Լեւոնի մահէն վերջ թէ և ժամանակ մը գրաւեր է Ալայէաւոյն սուլթանէն, բայց վերջը Լեւոն Բ՛ օրով (1284), վերստին Հայոց ձեռքը անցաւ:*



78. *Անամուրի Բրուանդանը:*

*Օսմանեան կառավարութիւնը 1840ին բերդիս մէջ բաւական նորոգութիւններ ըրաւ, նոյն ժամանակ կառոյց նաեւ մզկիթ մը և*

մնարէ, և պահակազօր եւս գրաւ, բայց քիչ ժամանակէն թողուց։ Գրեթէ 40 տարի վերջը Զօրագի իշխանութիւնը ուզեց վերստին օգտակար ընել այս բերդը, և այս նպատակին համար քանի մը նորոգութիւններ եւս ըրին. բայց տարի մը վերջը աշտարակներէն միայն խորտակուելովը, բոլորովին ամայի և անբնակ վիճակի մէջ թողուեցաւ, և այժմ կինճերու և ուրիշ վայրի կենդանեաց բնակարան դարձած է։

Բերդէս 20 մեթր հեռու գլխաւոր դրան դիմաց կայ հին բաղնիք մը, որուն պատերը



79. Ամաշա։

դեռ կանգուն են։ Այս բաղանեաց հնութեան վրայ տարակոյս չկայ, վասն զի ամենեւին նմանութիւն չունի այժմեան թրքական բաղանեաց։ Բոլոր սալայատակը քակած հա-

նած են, բայց քանի մը մնացորդներէն կարելի է ստուգել, թէ աւազի տակ թաղուած կան ընտիր մագաղաթներ։ — Սիսուան, 321–322։ Բիւզ., Բ. 81–86։

ԱՆԱՆԱՎԱՆՔ կամ ԱՆՆԱՎԱՆՔ. — Փոքր գիւղ Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ, Վանայ հիւսիսային կողմը, Ամենաշատ և Ծակգար գիւղերու միջանց, Մարմէտ գետոյն մօտ։ Բնակիչք կը համարուին 150 հոգի, ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը։

ԱՆԱՇԱ. — Բերդ Լեռնային Կիլիկիոյ, Կուկլակի կապանէն քիչ հեռու, համանուն Անաշա (Թ. 79) սեպաձև լերան գագաթը, 4000 մետր բարձր։ Կուկլակի բերդի նման, կառուցուած է սև տաշած քարերով։ Ընդարձակ է բերդս, լերան գագաթան դրից համեմատ երկայնանիստ. պարիսպները տակաւին կանգուն են արևմտեան և հիւսիսային կողմերը, իսկ միւս երկու կողմերն բնական անմատոյց լինելով, ձեռագործ ամրութեան պէտք չունին։ Դարուս (ԺԹ) առաջին քառորդին դեռ կանգուն էին այստեղ չորս հզօր աշտարակներ կամ բուրգեր, երկաթէ դռներ, վեց մարտկոցներ, և ջրի համար քարէ փողրակներ։ Երկու աղբիւրներ ջուր կու տային, մին բերդին և միւսն պարտէզներուն։ Բերդէս վեր զատուած քարաժայռի մը վրայ կան մանր խաչքանդակներ։ Բերդիս ստորոտը արևմտեան հիւսիսային կողմը, քիչ մը հեռու կը գտնուի Անաշա գիւղն, պարտիզաց մէջ. բնակիչք Հայք և Թուրքք խառն։ Գիւղիս մօտ կայ խիստ պաղ ջրոյ աղբիւր մը։ — Սիսուան, 131–132։

ԱՆԱՊԱՏ. — Գիւղ Սիւնեաց Գողթն գաւառի, Որդուատէն մղոն մը հեռու հիւսիսային արևելեան կողմը։ Այժմ բնակիչք Թաթարք են 270 հոգի։ Անուան համապատասխան է գիւղիս երևոյթն, որ ի հնումն եղած կը թուի ընդարձակ և բազմամարդ քաղաքաւան։ Կը կարծուի որ հոս եղած ըլլայ նաև անապատաւորաց միայնարան, յորում կեցած է, ըստ ոմանց, Ս. Մեսրոպ։ Դեռ կը տեսնուին Ս. Ստեփանոս եկեղեցւոյն աւերակները (Թ. 80) շինուած անտաշ քարերով, յորում կան խաչվէմեր և քարեղէն աւազան մը։ Այս քաղաքաւանէս յանուանէ կը յիշուի, իբրև հարուստ հայ վաճառական Խաղոշ կամ Խաղոշի ամ որդի Թորոսի, որ 1663ին Վենետիկ կը գտնուէր։ Ութևտասներորդ դարու կիսուն Անապատցի Հայք գաղթած են հաւանականօրէն ի Զմիւռնիա։ — Սիսուան, 319–320։

ԱՆԱՊԱՏ. — Վանք Այրարատայ Արագածոտն գաւառի Սերկեւլոյ ձորի մէջ, Քասաղ գետոյն վրայ։ Անապատս՝ որ շինուած է Կարբեցի Յովհաննէս եպիսկոպոսէն, ըստ Զաքարիա պատմչի՝ պարսպապատ էր և ունէր շատ կրօնաւորներ, սեղանատուն, տնտեսատուն, փայտեայ ժամատուն, ինչպէս նաև այգի և պարտէզ տեսակ տեսակ անուշահամ և քաղցրահոտ մրգերով։

ԱՆԱՊԱՏ. — Սակաւարնակ գիւղ Հայոց Աղձնեաց այժմեան Խիզան վիճակին մէջ. ունի Ս. Գէորգ քարաշէն եկեղեցի մը։ — Նոյն անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կայ Մոկաց մէջ, Ս. Ստեփանոս քարաշէն եկեղեցեաւ։

ԱՆԱՊԱՏ ԿՈՒՍԱՆԱՑ. Տես ՇՆՀԵՐ և ՇՈՌՈԹ։

ԱՆԱՊԱՏ (ՄԵԾ). Տես ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ։

ԱՆԱՊԱՏ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ. — Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Սաղմոսավանից մօտ ձորի մէջ ճգնարան մի էր առանձնակեցից, զոր կը յիշէ Վարդան «սուրբ Անապատն հրեշտակարնակ» կոչելով։ Ասկէց էր ԺԷ դարու սկիզբն Յակոբ անուամբ միայնակեաց մը, որ ականատես լինելով Ա. Շահաբասի ժամանակի Օսմանեանց և Պարսից պատերազմաց, զայնս պատմած է Զաքարիա Սարկաւագի։

— Ս. ՓՐԿՉԻ. — Լեռնային Կիլիկիոյ մէջ, Զանտըր բերդի հարաւային արևմըտեան կողմը 1 ժամէն աւելի հեռու Տէկիրմէն–տէրէսին պարսպող լերանց միայն գեղադիտակ գահաւանդի վրայ կան մենաստանիս վիմափոր խցկանց մնացորդներ և մատուռ մը՝ որ միայն հիւսիսային կողմէն մատչելի է, որովհետև միւս կողմերը անմատոյց փոսեր և անդունդներ են։ Այս տեղւոյս այժմ Թուրքք Քիլիսէ կամ Քէչի պողազը (Անցք Եկեղեցւոյ կամ Այծից) անունը կու տան։ Մատուռը կանգուն է բայց ի տանիքէն, եւ արտաքին որմոյն վրայ փորագրուած է 17 տող կարևոր հայատառ արձանագրութիւն մը Կոստանդնի արքայահօր. զոր՝ ան-

մատչելի դրից պատճառաւ, հեռուէն հեռա-դիտակով զննելով օրինակած է Հ. Կղեմէս Սիպիլեան, գրեթէ 12 ժամ աշխատելով։ Այս արձանագրութենէս թէ և կը հասկցուի



80․ Աւերակ Անապատ գիւղի Ս. Ստեփանոս եկեղեցւոյն։

թէ վանքս կառուցած է Թադէոս անուն վարդապետ, արքունի հրամանաւ և ծախիւք, սակայն Թուականն կը պակսի։ Յայտնի չեն նաև վանատեղւոյս յիշատակաց արժանի ուրիշ դէպքեր, տեւողութիւնն և առաջնորդքն։ — Սիսուան, 74–76։

ԱՆԱՊԱՏԻ ԲԵՐԴ. — Կը յիշուի բերդս Սիւնեաց Վայոց ձոր գաւառի Ամաղուայ ձորի մէջ, որ ի վերջոյ եղած է Ամաղուայ Նորավանքի կալուածներէն մին։ — Անապատ անունը սովորաբար կը գործածուի ոչ սակաւ վանքերու անուանց հետ. կը տրուի նաև

գանազան աւերակ սրբատեղեաց և մատրանց։

ԱՆԱՏՕԼՈՒ. — Այժմեան անուն Փոքր Ասիոյ յորում է և Փոքր Հայք։



81 · Անաւզարբա քաղաքը։

ԱՆԱՐԶԱԲԱ, ԱՆԱԶԱՐԲԱ կամ ԱՆԱԽԱՐԶԱ. Գղ. ANAZARBE. Ար. عين زربة. Յն. Ἀνάζαρβας կամ Ἀνάζαρβος. — Երբեմն հռչակաւոր և հին մայրաքաղաքս Դաշտային Կիլիկիոյ, այժմ ամայի, տխուր և աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ Կառուցեալ է Սաէն 25 հազարամետր հեռու՝ դէպ ի հարաւային արևելք, Սարուանի և Սոյ գետոյն խառնմանէն ձևացած անկիւնատեղւոյն մէջ։ Ցետ Սսոյ՝ երկրորդ փառաւոր ոստանն էր բոլանդակ Կիլիկիոյ մէջ, և կարելի է ըսել նաև մին ի Թագերաց՝ աշխարհիս շքեղութեանց և խառ

նիհաղանձ բազմութեան մարդկան։ Երկայնանիստ քարաբլուր մը՝ իւր երկճիւղ գագաթան վրայ կը կրէ Կիլիկիոյ ամրագոյն բերդերէն մին, որոյ ստորոտը արեւմտեան կողմը, կը տեսնուին քաղաքի աւերակները՝ քառակուսի պարսպով և չորս դռներով (Թ. 84)։

Անարզաբայի այս գիրքը շատ նման լինելով Վան քաղաքին և բերդին, կ՚ենթադրեն որ արեւելեան ազգի մը գործ լինի, մանաւանդ որ իւր անունն ալ սեմական ծագում ունի և արաբերէն կը նշանակէ գեղին աղբիւր «այն զարբա»։ Ի հնումն քաղաքս յատուկ դրամներ ունէր որոց միոյն վրայ (Թ. 82), որ ըստ Սուիդասայ կոփուած է Յունաց կամ Աղեքսանդրի 180 թուականին, գրուած է Անազարբացւոց անունը։ Օգոստոս կայսրն քաղաքացիներէն մեծարուելով, քաղաքս անուանեց Կեսարիա և միւս համանուն քաղաքաց հետ չշփոթելու համար կոչուեցաւ Կեսարիա Անազարբեան, Cœsarea ad Anazarbum, կոչուած է նաև Դիոկեսարիա. սակայն հին անունը միշտ ընդունելի համարուեցաւ և անփոփոխ մնաց։ Մեզ կը յայտնէ պատմութիւնը քաղաքիս պայծառանալը Հռովմայեցւոց ինքնակալութեան ըսկիզբները. որոց կողմանէ գաւառաց իշխան մը կը նստէր հոն, որոյ հրամանաւ նահատակեցան Տարագոսեան վկայքն։ Դժբախտ ճակատագիր մը սահմանուած կ՚երեւի Անարզաբայի, որ չորս անգամ տապալեցաւ սաստիկ գետնաշարժէ, և թերեւս նոյնպիսի պատահարաւ մ՚ալ վերջին անգամ՝ անկանգնելի մնաց։ Առաջին կործանումը կը յիշուի Բ դարու վերջերը. նորոգեց Ներուաս կայսրը. երկրորդը՝ Յուստինիանոս կայսեր ժամանակ 525 թուին, որ նորոգեց և կոչեց Յուստինիանուպոլիս. քիչ վերջը նոյնպէս կործանուելով, նորոգեց Յուստինոս կայսրը և կոչեց Յուստինուպոլիս։ Երրորդ դարու սկիզբը կը կոչուի մայրաքաղաք, ինչպէս կը տեսնուի Վալերիանոս կայսեր (253–260) ժամանակ հատեալ պղնձէ դրամի մը վրայէն (Թ. 83)։ Փոքր Թէոդոսի օրով (444ին) եղաւ Բ Կիլիկիոյ մայրաքաղաք, իսկ Ա Կիլիկիոյ մայրաքաղաքն էր Տարսոն, ինչպէս կը յիշէ նաև Խորենացին (603)։



82. Դրամ Անարզաբացւոց։

Որչափ որ մարդկային ճարտարութիւնն կը ջանար նորոգել քաղաքս, այնքան եւս բնութեան և ընչաքաղց աշխարհակալաց բռնութեան ենթակայ կ՚ըլլար, մերթ յափշտակուելով յԱրաբաց և մերթ ի Հոռոմոց։ Ժ դարու կէսերը Եգիպտոսի ամիրապետաց ձեռքն անցաւ, յորոց թէ և առ ժամանակ մի Նիկեփոր կայսրն ազատեց զայն և ամրացոյց, բայց Թէոդորա Դշխոյին առեն դարձեալ այլազգեաց ձեռքն ինկաւ՝ անթիւ կոտորածով և գերութեամբ. որոյ թէպէտ և դարձեալ տիրեցին Յոյնք, բայց գրեթէ Խաչակրաց յԱրեւելս դիմած առեն՝ բարեպաշտն Ա Թորոս Ռուբինեան՝ առած էր զայն ի Յունաց, որոյ Դղեկին մէջ ժողվեց նաև ի Մանտալեանց հանած աւարն, և հոն Տիրանօր Պատկերին համար, զոր առած էր ի Յունաց, շինեց հոյակապ յատուկ եկեղեցի մը։ Անարզաբայի բերդն, որ վերանորոգուած է նախ Ա Թորոսէն և ապա Լեւոն Մեծէն, ի բնէ երեք կողմերէն անմատչելի է, իսկ չորրորդ կողմը՝ որ 700 ոտնաչափ բարձրութիւն ունի, ապառաժուտ է և դժուարելանելի. կրկին բարձր պարսպօք ամրափակուած է և Կիլիկիոյ ուրիշ շատ բերդերէն աւելի կանգուն և անկործան մնացած է տակաւին հանդերձ իւր բարձր աշտարակներով։ Արեւմտեան կողմի աշտարակներն որք շինուած են կիսաբոլոր և ու-



83. Դրամ Անարզաբայի Վալերիանոս կայսեր ժամանակ։

ռուցիկ տաշած քարերով, ըստ Լանկլուայի՝ արգիւնք են բաւզանդական ճարտարապե-տութեան. արեւելեան կողմն հայկական շէնք է: Բերդին չորս դռներէն արեւմտեանը կը նմանի հոյակապ յաղթական մեծ կա-մարի մը, անոր դիմաց կանգնած կայ բուն յաղթական կամար մը: Առաջին պարսպին մէջ կը գտնուի վերայիշեալ Ա. Թորոսէն շի-նուած Գէորգ և Թէոդորոս Զօրավարաց (Թ. 84) եկեղեցին, որ դեռ մեծաւ մասամբ կանգուն է. չորս ստուար սիւներ, որոց մին ինկած է, երեք մասանց կը բաժնեն եկեղե-ցին, և տակաւին վեր բռնած են ձեղուան մէկ մասը: Ներսը որմոց վրայ նկարուած կան պատկերներ, բաւական լաւ մնացած.



84. Անարզաբայի Զօրավարաց եկեղեցին:

Երեք կողմնակի դրանց մէկ կամարին վրայ գրուած է յունարէն ΕΥΛΟΓΕΟC, (Օրհնու-թիւն). եկեղեցւոյս որմոց վրայ չորս կողմը կան մեծատառ արձանագրութիւնք Թորոսի, բայց ափսոս որ խանգարուած ըլլալով՝ ամ-բողջութիւնը որոշ չի կարդացուիր: Մեր նախ-նիք յոյժ ջերմեռանդ էին Գէորգ և Թէոդորոս զօրավարաց, և անոնց օգնութեամբ շատ յաղ-թութիւններ կը տանէին. Թորոս Ա, մին-չեւ անգամ ունէր յատուկ կնիք (Թ. 85) մը, որուն մէկ կողմը կան այս սրբոց պատկեր-ները և միւս կողմը յունատառ արձանագրու-թիւն մը, որով զինքն կը յանձնէ ի պաշտ-պանութիւն կրկին քաջայաղթ վկայից: Ա-ւելի մեծ եկեղեցւոյ մը աւերակներն կը տես-

նուին քաղաքէն բերդը տանող ճանապարհի կիսուն վրայ. որոյ ստորին մասը փորուած են ժայռի մէջ, իսկ վերինն շինուած են մեծամեծ քարերով. երկրի սասանութենէ շատ աւելի վնասուած է այս քան վերոյգրեալն, և ներ-կայ (Թ. 86) պատկերս թերեւս տարր ըլլայ: Պարսպի արեւելեան ծայրը՝ քարաժայռն ճեղ-քուած է արուեստով զօրաւոր բազկի Մեծին Լեւոնի (1188ին), և դիմացը շինուած է միջ-նաբերդն կամ Կղայն (Թ. 87), ուր միայն հնարաւոր էր անցնիլ շարժական կամրջով, որ այժմ չըլլալուն պատճառաւ՝ անմատչելի և անքննելի մնացեր է ամրակուռ բերդն, բայց մեծ բրգան մը վրայ անաղարտ մնացած է արձանագրութիւն մը, զոր հեռուէն կարդա-ցած են, որ կը վաւերացնէ Լեւոնի զօ-րութեան և հանճարոյն մեծութիւնը: Թորոս Աէն մինչեւ Մեծն Լեւոն բա-




85. Կնիք Թորոսի Ա. Պարոնին Հայոց:

ւական դէպքեր ունեցաւ Անարզաբա նախ՝ 1107ին պարսիկները տասուեր-կու հազար հոգւով անցնելով Տօրոս լեռնէն աւերեցին քաղաքիս շրջակայքը, և շատ գերիներով և աւարով անցան գնացին Մարաշու դաշտէն: Երկրորդ անգամ 1110ին, ըստ գրելոյ պատմչին Կիլիկիոյ. «Փողովեցան զօրք Թուրքաց և մտին յաշխարհն Անարզա-բայ, և կոտորեցին զքրիստոնեայս գաւառին Մարաշայոյ. և իշխանն Հայոց Թորոս որդի Կոստանդեայ՝ ոչ համարձակեցաւ ելանել ընդ նոսա ի պատերազմ. և նոքա գնացին յաշ-խարհն իւրեանց»: Անկէ վերջ Թորոս դեռ ապրեցաւ և իշխեց 12 տարի խաղաղութեամբ և մեծ համբաւով Անարզաբայի մէջ: Իր եղբօր Ա. Լեւոնի իշխանութեան ժամանակ Յովհան Ալեքս Պերփեռոժէն կայսրն՝ ան-ձամբ պատերազմի գալով 1137ին, 37 օր

սաստիկ պաշարելով քաղաքիս տիրեց, և ըզԼեւոն Ա իւր ընտանիքովը գերի ղրկեց ի Կ. Պօլիս։ Քիչ վերջը Լեւոնի որդին Թորոս Բ Բիւզանդիոնի բանտէն ազատուելով, առջին նուաճած տեղերուն հետ Անարզաբան ևս ձեռք ձգեց, և այնուհետև քաղաքը Ռուբինեան իշխանաց աթոռանիստ եղաւ։ Երբ Լեւոն Ա, դեռ Սսոյ ամրութիւնները չշինուած, աւելի ամրացուց բերդը, Անարզաբան կը համարուէր պետութեան ամենէն առաջնակարգ ամրոցը։ Լեւոն քաղաքը այլ և այլ շէնքերով գեղեցկացնելէ վերջ, շրջապատեց զայն ըստուար պարսպով և միացուց բերդի պարսպին։ Երբ Սիսը մայրաքաղաք դարձաւ, այնու հանդերձ Անարզաբան բոլորովին երեսէ չձգուեցաւ, և վտանգի ժամանակ թէ՛ կը պաշտպանէր իւր մէջ ապաւինողները, և թէ այն դարերու ամրութեան համեմատ, կրակով նշան կու տար շրջակայ բերդերուն։

Թէպէտ և արքեպիսկոպոսական աթոռ էր Անարզաբա թէ՛ Յունաց և թէ մերայնոց ժամանակ և աթոռն հաստատուած էր ի Կաստաղոն, բայց պատմութեան մէջ սակաւք կը յիշուին աթոռակալներէն. որոց մէջ քան զամէնն աւելի նշանաւոր անձն է Գրիգոր, որ յատկաբար Անաւարզեցի կոչուեցաւ, որոյ գրաւոր երկասիրութեանց գլխաւորն կրնանք համարել Հայոց, Յունաց և Լատինաց Յայսմաւուրք մը, որ թերեւս կաթողիկոսութենէն առաջ յօրինած է։ Իշխանական աթոռն ի Սիս փոխադրուելէն վերջը քիչ անգամ Անարզաբա անունն կը յիշուի պատմութեան մէջ, քանի մը անուր դիպաց յիշատակօք. իսկ Հայոց թագաւորութեան վերցուելէն յետոյ՝ կը յիշուի Անարզաբա՝ Զիւլգատրեան Շահսուարի (1467) ապստամբութեան ժամանակ՝ վերջինիս բռնաբարեալ քաղաքաց թուոյն մէջ. այնուհետև քաղաքիս վրայ գրաւոր տեղեկութիւնք կը պակսին, և չի գիտցուիր նաև լքման և աւերման ժամանակին։ Սակայն ինչպէս ըսինք, մեծաւ մասամբ կանգուն է տակաւին Անարզաբա, և հեռուէն կը խաբէ զուղեւորն, տեսնելով բարձր տներ և պալատներ, բերդի պարիսպներն և բրգաձև աշտարակներ, սիւնազարդ և քանդակազարդ շէնքեր, գերեզմաններ, և այլն, որոնք կարծես կը խոստանան իրեն առաջնորդելու դէպ ի ծաղկած և բազմամարդ քաղաք մը, բայց երբ կը մօտենայ այդ յոյսերն ի գերև կ՚ելնեն։ Յիշատակաց արժանի են հին հռոմէական բազմակամար ջրմուղները, որոնցմով սարերէն ջուր կու գար քաղաքացւոց խմելու համար. ասոնց միայն 32 կամարներն դեռ կը մնան անկործան։ Երեսուն տարի առաջ Տրիպօլսեցի Ալեան Նիկոլաս անուն ասորւոյ մը ջանքով, քաղաքիս աւերակաց մէջ հաստատուեցան 20 տուն ասորիներ. նոյն անձը քաղաքիս տեղը և շրջակայքը մասամբ գնեց և մասամբ վարձեց ներկայ պետութենէն, և սկսաւ մշակել։



86. Աւերակ եկեղեցի Անարզաբայի։

Անարզաբայի սահմանին մէջ ի նախնեաց յիշուած նշանաւոր տեղերն են՝ Բաղըրդիկ, Սիմանակլայ բերդ և Տուճայի. իսկ ներկայ վիճակին մէջ իսկ չորս կողմի սահմանքն անծանօթ և աննշանակ մնացած են աշխարհացոյց տախտակաց մէջ, բաց ի քանի մը գիւղերէ, յորս են Հաճիլեր, Չէօրէկլի Սայչա, Սօյսում, և այլն։ Սոյն Վիճակիս մէջ կը գտնուի կղզիացեալ քարաբլրոյ մը վրայ կանգնուած Սիսուանայ հզօրագոյն և թերևս պատմական նշանաւոր գիպաց վկայ և ասպարէզ եղող բերդերէն մին, որոյ հին անունն անծանօթ կը մնայ, իսկ այժմեան կոչումն է Թումլա կամ Թումլու գալէսի, որոյ թերևս համապատասխանէ հին Անէ բերդը։ — Սիսուան, 236–244։

ԱՆԱՐԾԱԹ ԲԺՇԿԻ ՎԱՆՔ. — Երրորդ Հայոց Մելիտինէ քաղաքի մերձաւոր հին վանքերէն մին, որ այժմ ամայի վիճակի մէջ կը գտնուի։ Միայն կանգուն մնացած են մատրան երկու կամարներն. շուրջը գըտնուող աւերակաց կոյտերէն կ'երևի որ ժամանակաւ բաւական շէն վանք մը եղած է։ Առջևէն կը բղխէ մեծ ջուր մը, որ կ'ըսուի Բուճաղար պաշի. զուարճալի է վայրս՝ զարդարուած յուռթի բուսականութեամբ։



87. Անարզաբայի միջնաբերդը կամ Կլայն։

ԱՆԲԵՐԴ կամ ԱՄԲԵՐԴ. — Վիճակ Այրարատայ Արագածոտն գաւառի, Կարբոյ վի-

ճակի, Սարատարապատու, Վաղարշապատու և Արագածի հարաւ-արևելեան ոտաց մէջ-տեղ։ Միջին դարուն աւելի ընդարձակ էր վիճակս, և մինչև անգամ գաւառ ևս կոչուած է Արագածոտն անուան տեղ։ Գագիկ՝ Անբերդ գաւառը կառկեց իրեն յաջորդ Յովհաննէս-Սմբատ թագաւորին. իսկ Զաքարիա մեծ սպասալարը զայն նուաճեց 1196ին։ ԺԳ դարու առաջին կիսուն մէջ կը յիշուի նաև Մկրտիչ անուամբ մէկը Անբերդու եպիսկոպոս։ Նոյն եպիսկոպոսը, ինչպէս կը յայտնուի Յովհաննավանից արձանագրութենէ մը, Անբերդը իբրև վիճակ ունէր է նոյն վանից։ ԺԴ դարու սկիզբը (1311ին) Յովհաննավանից հայր Վասիլը, կը կոչուի առաջնորդ Շիրակայ և ամենայն Անբերդու ։ Այժմ Անբերդ ունի երկու զետակաց հովիտները. մին Լագրեւանայ կամ փարպիի և միւսն Անբերդի, որոնք Արագածու հարաւային ծործորներէն կ'իջնեն, և կը գիմեն արևելքէ դէպ ի հարաւային արևմուտք։ Անբերդ գետակը Բիւրականէն վար արևմտեան կողմէն ընդունելով Տեղերայ վտակը, և գեռ աւելի վարէն Լագրեւանը, այնուհետև կը կոչուի Տաղուշերատու գետ, և ապա Օշականի մօտ կը խառնուի Քասաղ գետի հետ։




88. Անարգարայի մօտ յունագիր արձանաքանդակ։

Հին Անբերդ ամրոցը կամ շէնը՝ շինուած է Արագած լերան սարատափի մը վրայ, Բիւրականի արևմտեան հիւսիսային կողմը՝ եօթը կամ ութ մղոն հեռու, երկու ձորակաց մէջտեղ, որոնք անմատոյց և զահավէժ ափունք ունին։ Այժմ կ'երևին միայն աւերակաց մնացորդներ, ջրամբարի և աշտարակաց հետքեր, որձաքար կոփածոյ քարերով պատեր։ Մեծաւ մասամբ կանգուն մը-նացած է, ձորակաց միացման կէտին վրայ, միջակ մեծութեամբ, քարաշէն, անսիւն և գմբեթաւոր եկեղեցի մը. սեղանոյն երկու կողմերը կան երկու մատրունք կամ աւան-դատունք, և դուռն է հարաւային կողմը։ Շինութեան թուականին գրան վրայի ար-ձանագրութիւնը ջնջուած է, բայց ներսը կայ արձանագրութիւն մը, Իվանէի և Շահընշահի տէրութեան ժամանակէն, յորում կը յիշուի Անբերդու գաւառի վերակացու ոմն Վաչէ։ Այս Վաչէն էր որդի Սարգսի Վա-չուտեանց՝ զոր Զաքարէ Սպասալարը վերա-կացու դրաւ Արագածոտան, Անբերդու և այլ կողմանց։ ԺԷ դարու սկիզբը, երբ Պարսիկ-ները այս կողմերս Օսմանցիներէն առին՝ Երևանու Ամիրկինէ կողմնակալը՝ գաւառա-պետ դրաւ կոտէից և Անբերդու Դաւիթ ոմն Քանաքեռցի։ Անբերդու աւերակներէն ոչ այնչափ հեռու կը գտնուին քանի մը այլ-ազգեաց գիւղեր, ինչպէս Արխաշան, Գօ-շապոշլագ, Քէօրբէկլիւ, Անագլու։ — Այ-րարատ, 156։

ԱՆԳԵՂԱԿՈԹ կամ ԱՆԿԵՂԱԿՈԹ. — Մեծ գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի՝ Սիսիանի հա-սարակութեան, Շաղատ և Շաքի գիւղերու մէջտեղ, մէկ մասը շինուած է Պազար-չայի ձախ ափին, իսկ միւսը՝ քիչ մը զառիվեր բարձրաւանդակի մը վրայ։ ԺԵ դարուն գը-րուած աւետարանի մը յիշատակարանի հա-

մեմաս, յորում գիւղս կոչուած է գիւղաքաղաք Անկեղակոչ, նոյն ժամանակ եկեղեցին կը կոչուէր Ս. Սարգիս։ Այժմեան եկեղեցին Ս. Աստուածածին բարձրացած է գիւղի կեդրոնը, բարձրաւանդակի վրայ, որոյ դիմացէն կը հոսի Պազար-չայը, և իր ծառազարդ ափերով գեղեցիկ տեսարան մը կ'ընծայէ գիւղին։ Եկեղեցին քարաշէն է և բաւական գեղեցիկ. ներքուստ զարդարուած է խաչկալով և ջահերով։ Կան նաև ուրիշ երկու հին եկեղեցիներ, մին՝ Ս. Ստեփանոս, հասարակ շէնք է, պատերու մէջ կան տապանաքարեր, յորոց միոյն վրայ կը կարդացուի ՉԼԲ (=1283) թուականը. դրան վրայ կայ շինողի արձանագրութիւնը ՌՃԾԷ (=1708) թուականաւ։ Միւս եկեղեցին, զոր տեղացիք Ս. Հագարփրկիչ կ'անուանեն, փոքրիկ աւերակ շէնք մ'է և կը գտնուի քիչ մը դէպի արևելք, բարձր ժայռերու կից։ Թէ՛ այս և թէ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մօտէն կը վազեն առատաբուղխ աղբիւրներ։ Գիւղս ունի երկու հին գերեզմանատուն, տապանաքարերով և արձանագրութեամբք։

Անգեղկոթէն դէպի արևմուտք, գրեթէ քառորդ հազարամետր հեռաւորութեան վրայ, բարձր ժայռերու կից կան երկու եկեղեցիներ, յորոց մին մասամբ ժայռի մէջ փորուած է։ Այս եկեղեցիները, որ այժմ աւերակ վիճակի մէջ են, ըստ տեղացւոց նուիրուած են Ս. Վարդանանց, որոց տօնին բաւական ուխտաւորներ կ'երթան։ Հոն կան ՉԼ (=1281) թուականաւ տապանաքարեր. այս եկեղեցիներու մօտէն կը բղխեն հինգ աղբիւրներ։

ԺԷ դարու վերջերը գիւղիս տանուտէրն էր Մելիք Շահբազ, որուն քով 1699 թուին Իսրայէլ Օրի թելադրութեամբ ժողվեցան մօտաւոր աւաններու 9 կամ 10 տանուտէրներ, Հայոց տէրութիւնը վերականգնելու խորհրդակցելու համար։ Այժմեան բնակիչք ամբողջ հայ լուսաւորչականներ են, Թաւրիզի Ղարա-Բէօփչաճ գիւղէն գաղթած. ընդ ամէնը 1700 հոգի, բաժնուած 180 տան։ — Սիսական, 212։ Սիւնիք, 79-81։

ԱՆԳԵՂԻ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, որոյ աւերակի տեղը կը կարծուի ըլլալ այժմեան Հայաբնակ Հասան-քէնտ գիւղէն մէկ ու կէս մղոն հեռու դէպի հարաւ։ Ասոր մօտերն ըլլալու է նաև Սիւնեաց պատմչի յիշած (49) Անգեղ ձորը, ուր Վարդանանց պատերազմէն վերջը նահատակուեցան ի Պարսից ոչ սակաւ հայ զօրքեր։ Հոն բլրոյ մը կողին վրայ կայ այժմ քարաշէն և փոքրիկ մատուռ մը, զոր Ընգեղի մատուռ կը կոչեն, և մերձակայ բնակիչք ուխտի կ'երթան։ Բայց նորագոյն նահատակի մը հանգստարանը կը համարուի մատուռս՝ յորում արձանագրութիւն մի եւ կայ. իսկ մօտը կը տեսնուի խաչքար մը ՉԽ (=1291) թուականաւ։ Ջալալեան՝ Ս. Կիրակոս կ'անուանէ մատուռս, և կ'ըսէ, թէ ըստ աւանդութեան՝ նահատակը պատարագի ժամանակ սպաննուեր է աւազակներէ։

ԱՆԳԵՂ ՏՈՒՆ. — Չորրորդ Հայոց կամ Մեծ Ծոփաց հին գաւառներէն մին, յորում անուանի էր Անգեղ բերդաքաղաքը։ Այսպէս կոչուած է Վաղարշակ թագաւորէն հաստատուած նախարարական տոհմի մը անունով, որոյ նախահայրն էր Տորք հայկազնը, որ դիմաց տգեղութեան պատճառաւ կոչուեցաւ անգեղեայ, և տոհմն ու գաւառն Անգեղ տուն։ Տես ԱԿՂ։

ԱՆԳԼԽԱ. Տես ԱՆԳՂԽԱ։

ԱՆԳՂ, ԱՆԳԵՂ կամ ԱՆԿՂ. — Գիւղ Վասպուրականի (Վան) Տոսպ գաւառի, այժմեան Ոստանայ վիճակի մէջ. նոյնանուն Անգղ կամ Խօշապ գետոյն աջ ափի մօտ, Արտամետի հարաւային արևելեան կողմը։ Հրաշալի տեսարան և ծառաստաններ ունի։ Բնակիչք կը համարուին 70 տուն, յորոց պանդխտութեան մէջ կը գտնուին մօտ 50 անձ։ Եկեղեցին կը կոչուի Ս. Գէորգ։ Անգղայ մէջ կան երկու բլրակներ, մին Ս. Սարգիս և միւսն Ս. Ծիրանաւոր, որոց վրայ կը նշմարուին աւերակ հին եկեղեցեաց տեղերը։ Գիւղս յառաջ կը բերէ այս կողմանց յատուկ բերքերէն զատ, ընտիր շողգամ մեծ քանակութեամբ, յորոց մին երբեմն կը կշռէ մինչեւ մէկ օխայ. նշանաւոր է քաղցրութեամբն, զոր շատ անգամ կ'ուտեն բնակիչք խնձորի նման։

Անգղէն 10 վայրկեան հեռու դէպ ի արևելք Սաչաճ ջրվէժի մօտ կը գտնուի Անգղայ Ս. Աստուածածին անուամբ վանք

մը՝ որոյ մէջ պահուած հին կնդակ մը և տեղական աւանդութիւնն հետեւեալն կը պատմէ։ Ս. Թադէոս առաքեալը իրեն հետ առած Քրիստոսի աստուածամուխ գեղարդը, Տիրամօր պատուական քօղը և իւղոյն շիշը, քարոզելով եկաւ հասաւ այս տեղ և տեսնելով գեղեցիկ դիրքն, և բարձր ու աչագին կռոց պատկեր մը որուն երկրպագութիւն կ՚ընէին բազմաթիւ մարդիկ, շատ ցաւեցաւ որ մարդիկ ճշմարիտ Աստուածը թողած դիւական պատկերի երկրպագութիւն կ՚ընէին։ Գիշեր մը Ս. Առաքելոյն աղօթած պահուն, յանկարծ Տիրամայր Ս. Աստուածածինն անպատմելի փառօք երեւեցաւ իրեն Աստուածորդին ի գրկին և ըսաւ որ խորտակէ դիւական կռոց պատկերը և տեղը տաճար մը շինէ, մէջը ամփոփելով վերոյիշեալ իւղոյն շիշը, ի նշան բժշկութեան ամենայն ախտաժէտաց։ Ս. Առաքեալը շատ մարդիկ յԱստուածպաշտութիւն դարձնելով երբ կռոց պատկերը խորտակելով հիմն դրաւ և սկսաւ շինել տաճարը, գիշեր ժամանակ դեւերը գալով կը քանդէին զայն և քարերը Մաշեան գետը կը նետէին՝ որ Անգղայ գետոյն մէկ մասն է։ Երկար ժամանակ այսպէս շարունակուեցաւ՝ միշտ շինուելով և քանդուելով։ Այս անյաջողութեան վրայ մինչ Առաքեալը տրտմաթախիծ և արտասուաթոր աչօք կը նիրհէր, կրկին անգամ իրեն երեւցաւ Տիրամայրն և ըսաւ, թէ «Խաչ մի օծէ և իւղոյն շիշը վրան դիր և դու պիտի տեսնես Աստուծոյ սքանչելիքը»։

Առաքեալն առաւօտը ելնելով քարէ խաչ մը շինեց և իւր ձեռքով օծելով՝ իւղոյն շիշը վրան դրաւ և տաճարի հիմանց մէջ զետեղեց։ Այնուհետեւ շինուածն անխափան մնաց, իսկ քարերը քակող դեւերն մարմնաւոր տեսքով սեւ ագռաւուց նման կապուած ինկած էին, և այն պահուն անգղ թռչնոց երամք եկան և Առաքելոյն հրամանով կտցով զարնելով բռնեցին զանոնք և ձգեցին ի Մաշան։ Այս վերջին կտորն հետեւեալ կերպով եւս կը պատմուի. երբ դեւերն իրենց սովորականին համաձայն քանդելու եկան, շուտով անոնց ետեւէն հասան Աստուծոյ հրեշտակները անգղ թռչունի կերպարանքով, իսկ դեւերը սեւ ագռաւներու կերպարանք առնելով և անոնց առջեւէն փախչելով գնացին ծովը լեցուցան աղաղակելով սա—չէ՛—մյն, սա—չէ՛—մյն, յորմէ կազմուեր է Մաշեան գետոյն անունը։

Անգղներ դեռ մինչեւ ցարդ բազմութեամբ կան վանացս մօտ Մաշան ջրվէժի ուռենիներու մէջ, և որսորդաց հալածանքն անգամ չէ կարող զայնս այն տեղէն հեռացնել։ Այս պատճառաւ գիւղն կը կոչուի Անգղ և վանքն Անգղայ Վանուց Ս. Աստուածածին։

Վանքս ունի երեք խորան, միջինն Ս. Ստեփանոս, աջակողմեանը Ս. Գէորգ և ձախակողմեանը Ս. Աստուածածին։ Ս. Գէորգայ խորանին մօտ կայ ուրիշ խորան մ՚ալ Ս. Յովհաննէս Կարապետի, հոն փոքրիկ պատուհան մը կայ, ուսկից չոր քարի մէջէն կաթ կաթ կը բղխէ հրաշալի սուրբ իւղը, որ հաւատացելոց ամէն վէրքերու միակ դարմանն է։ Այս իւղը կատուտի ձէթի համ ու հոտ ունի. ժամանակաւ առատ է եղեր այս ձէթը, և վաճառքի և շահու նիւթ դարձընելնուն պատճառաւ՝ նուազեր է։ Տխուր և ամայի է այժմ մենաստանս։ Տաճարի ետեւը կան մի քանի խաչքարեր յորոց 2—3ին համար կ՚ըսուի, թէ Վարդանանց ժամանակէն մնացած են։ Մ. Միրախորեան վերոյիշեալ գիւղը կը համարի Եղիշէի (98) յիշած Անգղ գիւղաքաղաքը, սակայն ստուգութենէ և ճշդութենէ զուրկ է այդ, որովհետեւ նոյն գիւղաքաղաքը կ՚իյնայ Այրարատայ Ծաղկոտն գաւառի մէջ։ — Նկարգ. Ուղեւորութիւն, Ա. 132—136։ Արաքս, 1897. 20—21։

ԱՆԳՂ. ՅՆ. Ἀγγλῶν. — Ի հնումն ամուր բերդ և գիւղաքաղաք Այրարատայ Ծաղկոտն գաւառի մէջ, Արածանւոյ մօտ։ Եղիշէ (98) և Ղ. Փարպեցի կը յայտնեն, թէ Պարսկաստանէն եկող մոգերն և հայ նախարարաց զունդը տօթագին եղանակին դադարեցաւ այս տեղ։ Պրոկոպիոս յոյն պատմագիրը, գիւղիս դիրքը կը դնէ լերան մը ստորոտը, և ամուր բերդը գագաթան վրայ. Բրունէն հեռու կը համարի 120 ստադէք։ Թ. Արծրունւոյ ընդարձակողի յիշած Անգեղայն մեծ աւանին հետ նոյն կը համարուի այս գիւղս՝ որուն տէրն էր տիեզերական իշխանաց իշխանն Աշոտ։

Գիւղս Մանազկերտէն Ծաղկոտն անցնե-

լու ճանապարհին վրայ գտնուելով, ի հնումն իբրեւ պատերազմական դիրք մեծ նշանակութիւն ունեցած է իւր բերդովը։ Շատ ճակատամարտներ եղած են այս տեղ, սակայն մենք միայն երկու ծանօթագոյնները յիշենք։ Պարսից Խոսրով Անուշրէան թագաւորէն ղրկուած Նապետ հրամանատարը չորս հազար զօրօք, այս բերդս ամրացնելով ծառերու կոճղերով և վիմաց կոշկոններով՝ և խաբէութեամբ աւանի տուներու մէջ դարանելով իւր զօրաց մէկ մասը, ձայն հանել տուաւ իբրեւ թէ բերդէն փախած ըլլայ։ Այս պատերազմի մէջ Յունաց Յուստինիանոս կայսեր զօրավարաց գլխաւորներն էին Վալերիանոս Հայոց զօրագլուխը, Մարտին՝ Արեւելից սպարապետը, և ուրիշներ. ասոնց հետ էին նաեւ Կամսարական քաջերն Ներսէս և Սահակ, հայկական և Հերուլացի գնդերով։ Յունական բանակն անզէտ եղած դարանակալութեան՝ երբ սկսան Անգեղ բերդը մտնել, Պարսիկներն մեծ հարուած տուին և յաղթող հանդիսացան. հռչակաւոր եղաւ այս մարտին մէջ քաջն Ներսէս և անգամ մի եւս յետ մղեց Պարսից գունդը, սակայն աչքին բբէն վիրաւորուեցաւ և երկար չդիմանալով մեռաւ, որով և մեծ կորուստ եղաւ Յունաց։ Վերոյիշեալ պատերազմը կը նկարագրէ Բիւզանդացի պատմիչն Պռոկոպիոս (Պատերազմաց Պարսից, Բ. իե). իսկ հետեւեալը կը պատմէ Սեբէոս (74)։ Պարսից Խոսրով Ապրուէզ թագաւորի Սեմիտամ Խոռրով զօրավարը կը պատերազմի Յունաց Թէոդոր Խորխոռունիի հետ՝ որ բանակած էր գիւղիս մօտ, Անգեղ բերդի մէջ։ Յունական բանակը տեսնալով Պարսից զօրաց բազմութիւնն, նախ չուզեց պատերազմիլ, այլ բերդը տալ և խաղաղութիւն ընել. բայց վերջը իւր ամուր դրից վրայ վստահացած, պատերազմեցաւ և չարաչար յաղթուեցաւ. երկրորդ օրը՝ Անգեղ բերդին եւս տիրեց Պարսից Սեմիտամ զօրավարը, և հոն բերդակալ մը դնելով ինքը մեկնեցաւ. իսկ Թէոդոր Խորխոռունին ալ պատուով ղրկուեցաւ Խոսրով թագաւորէն։



89. Լոնտրա քաղաքը։

Հաւանական կը թուի կարծելն, թէ Արածանւոյ երկու կողմերը գտնուած այժմեան Ղարղաշխ կոչուած գիւղերէն մին եղած ըլլայ մեր նկարագրած հին Անգղ աւանը։ — Այրարատ, 518։ Բագրեւանդ, 291—293։

ԱՆԳՂԱՑ ՎԱՆՔ. Տես ԱՆԳՂ։

ԱՆԳՂԻԱ կամ ԱՆԳԼԻԱ. Անգղ. ENGLAND. Գղ. ANGLETERRE. Լտ. ANGLIA. — Մեծին Բրիտանիոյ հարաւային մասն, որ Բրիտանական կայսերութիւնը ձեւացնող երեք աշխարհներէն ամենէն հարաւոյն և բազմամարդն է։ Կը բաժնուի քառասուն կոմսու-

թեանց յորոց 20ը ցամաքային և 20ը ծովային։ Տարածութիւնն է 131626 քառ. հզրմ. 29500000 բնակչօք. մայրաքաղաքն Լոնտրա կամ Լոնտոն։ Ծովուց և վաճառականութեան դշխոյ կը համարուի Անգլիա, որոյ հետ Հայք վերաբերութիւն ունեցած են ի հնուց, Արեւմտեան Եւրոպիոյ ուրիշ աշխարհներէն առաջ։ Երեքտասաներորդ դարուն կիսուն հոն կ'երեւին մերայինք, ոչ միայն Կիլիկիայէն այլ Մեծ և Հայքէն, թէպէտ և շատերը աշխարհաւեր Թաթարաց ձեռքէն փախչելով։ 1252ին Ենրիկ Գ կը գրէ մեր Հեթում թագաւորին՝ խաչակիր արշաւանք մի ընելու պատրաստուիլն։ Դեռ աւելի կանուխ (1228ին) կը յիշուի հայ ուխտաւոր եպիսկոպոսի մը Անգլիա երթալն, և անկէ հաշակուած է Յիսուսի ապտակ զարնող Կարտափիլոսի (Cartaphilos) կենդանի մնալը, և կ'ըսուի անկէ ստեղծուած և գրուած է Թափառական Հրեայ վիպասանութիւնը։ Տանէն աւելի նամակներ և գրուածներ ծանօթ են մեր և Անգլիոյ թագաւորաց և իրենց դեսպանաց, ԺԳ–ԺԴ դարուց մէջ, վերջին Լեւոնի պանդխտութեան ժամանակ գրուածներէն զատ։ Բայց, ինչպէս վերջը պիտի տեսնենք ի կարգին, պատմական, քաղաքական և վաճառականական տեսակէտով աւելի մեծ յարնչութիւն ունեցած են Հայք Անգլիացւոց հետ՝ Հնդկաց աշխարհի մէջ։ — Մետաքաբեր Հայոց արեւմուտքէն տարած գլխաւոր վաճառքներէն մին էր անգղիական չուխան, այդ պատճառաւ Բրիտանիոյ աւելի ճարտարարուեստ քաղաքները կը գիտէին Հայք, և մանաւանդ ի Լոնտոն։ Հայտ անգղիացին որ գրած է կրակապաշտ Պարսից աղանդոյն վրայ, կ'ըսէ թէ շատ տեղեկութիւններ անոնց ծիսից նկատմամբ ուսած է վաճառական Հայերէն և ամենէն աւելի Շաֆրազեան Աւետիքէն։ 1674–5ին ժամանակները հայ պուտախոս ոմն Տէր Յակոբ Գրիգորեան, ինչպէս ինքը կ'ըսէ «աշխարհատեսութեան պատճառաւ» Անգլիա



90 · Լոնտրայի աշտարակը։

գալով Օքսֆորդի մէջ կը գրէ ուսանուար դաւանութիւն «վանն այսր Պրիպանիա կըղզզոյս և այլոց բանականաց մեծի և փոքու, առ հասարակ ամենեցուն»։—ԺԸ դարու սկիզբը (1701) Խօճայ Պապա անունով մէկը և իրեն ընկերները հողապատելով Թիփ անուն եղուզակէ մը, դատով իրենց ինչքը կը խնդրէին. անոնց աղերսագիրը կը պահուի Լոնտոնի Գանձատան դիւանի մէջ։ — Քանի մը տարի վերջը կը յիշուին ի Լոնտոն Հաճի Յարութիւն եղբայր Հաճի Սարգսի, որոնցմէ առած էր ոմն ճոխ վաճառական Վենետիկոյ Պետրոս Սիմեան, 920 դամշի մորթ և 4100 դուկատաց փոխանակագիր մը, որ և կը պատուիրէր

իր կտակին մէջ (1712) վերայիշեալ Ցարութեան հատուցանել մարթերու գինը, երբոր վաճառուին։ Այս դարուս (ԺԸ) մէջ աւելի շատցած են հայ յաճախորդք ի Լոնտոն և ոմանք ալ բնակած են հոն ընտանեօք, յորոց մին կը յիշուի 1767–90 տարիներու մէջ, Ագուլեցի Պետրոս որդի Պօղոսի, որ վերջը հակառակութեան մը պատճառաւ մեկնած է յԱնտուէրփան։

Հայք ոչ միայն արեւելեան վաճառքներ կը տանէին յԱնգլիա, այլ և խալաթան, և մանաւանդ Վենետկոյ ապակեղէններ։ 1641ին վաճառական Պապա Խաչատուր, Վենետիկէն կը տանէր 30 արկղ հայելի, 14 արկղ ուլունք և 7 արկղ բաժակներ, վճարելով նաւողչէք 300 ռէալ։

Ռափայէլեան վարժարանի անմահանուն բարերարի որդին և Միաբանութեանս աշխարհական Եղբայրն, Պ. Աղեքսանդր Ռափայէլ Ղարամեան և իւր ազգասէր Հրնդկաստանէն անցնելով յԱնգլիա շատ տարիներ բնակած են ի Լոնտոն, որուն մօտ Տիւրրոնըրայմզ կոչուած գիւղի մէջ, իրմէն կառուցուած մատուռ մը մէջ կը հանգչին ի գամբանի՝ ոսկերք նոյն ազգային մեծ բարերարին սիրասուն որդւոյն։

Իննեւտասներորդ դարու մէջ դեռ աւելի բազմացած են Անգլիոյ Հայք և սկսած են գաղթականութիւն մը ձեւացնել։ Դեռ տասը տարի առաջ Լոնտրայի մէջ կային 120 Հայք, որոց թիւն վերջին տարիներս աւելի շատցաւ։ Կոմիտացի Գեր. Եսայի վարդապետ Աստուածատուրեանի ջանքով Լոնտրայի հայ գաղթականութիւնն ունեցեր է փոքրիկ և գեղեցիկ մատուռ մը, որ կեդրոն եղած է, գէթ կիրակի օրերն իր մէջ հաւաքելով քաղաքին հայ տարրն։ Որովհետև տեղւոյս Հայոց մէջ շատեր կան որ չեն հասկնար հայերէն լեզուն, Արժ. Եսայի վարդապետը հրատարակած է Հայաստանեայց եկեղեցւոյ Պատարագամատոյցը, հայերէնի հետ անգլիերէն ալ դէմ առ դէմ դնելով։ Այդ հայ–անգլիերէն հրատարակութենէն բաւական թուով օրինակներ շարուած կան մատրան մէջ գրասեղաններու վրայ։ Լոնտրայի մէջ վերջին տասն տարիներու մէջ ժամանակ մը կը հրատարակուէր Հայաստան լրագիրը, և ապա l'Arménie մեծ. Մ. Ջերազի խմբագրութեամբ. հոս հրատարակուած են նաև Հնչակն և Ազատակ, առաջինն երբեմն կը գաղրի և երբեմն կ'սկսի. կը հրատարակուի նաև Նոր կեանք և Մարտ։

Անգլիոյ մէջ, Լոնտրայէն 5 ժամի չափ հեռու է Մանչէսթըր վաճառաշահ քաղաքը, ուր պատուաբեր Հայոց գաղթականութիւն մը կայ։ Մանչեսթրի Հայք գրեթէ ամէնքն ալ վաճառականական գործերով կ'զբաղին. մեծ մասը կ. Պոլսեցի և Զմիւռնիացի են. կան նաև Հայաստանի մի քանի քաղաքներէն հայ վաճառականներ։ Այս գաղթականք կառուցած են վայելչագեղ փոքրիկ եկեղեցի մը հանգերձ պարտիզով և ունին իրենց հոգևոր հովիւն։ Մանչեսթրի հայ գաղթականութիւնը եւրոպական հայ գաղթականութեանց մէջ միշտ կարևոր դերք մը բռնած է և հայութեան փառք և պարծանք կը բերէ։ 1898 տարւոյ մէջ Մանչեսթրի քանի մը երիտասարդ հայեր, սկսան հրատարակել Վաղուան Ձայնը վերնագրով կիսամսեայ հանդէս մը, որուն ձայնը շուտով մարեցաւ։ — Սիսական, 459։ Արմենիա, 1888, թ. 2,3։

ԱՆԳՃՏԱՆՑ. — Փոքրիկ հայաբնակ գիւղ Վասպուրականի (Վան), այժմեան Ոստան գաւառակի մէջ. բնակիչք 60 տուն, ունին Ս. Ստեփաննոս քարաշէն եկեղեցի մը։

ԱՆԳՈՆՔ կամ ԱՆԿԱՆՔ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՆԳՈՒՄՆԵՐՈՒ ՎԱՆՔ. Տես ՎԱՆ։

ԱՆԳՈՒՏԻՔ. — Յիշուի անունս Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ։

ԱՆԴ. — Հայաբնակ գիւղ Ագնուաձոր (Բաղէշ) կամ Կիւղէ Տէրէ դաշտի մէջ։ Բնակիչք 30 տուն են և խեղճ վիճակ մ'ունին։ Գիւղիս հարաւակողմն է եկեղեցին՝ նուիրուած Ս. Ստեփաննոսի։ — Այս անուամբ փոքրիկ գիւղ մ'ալ կայ Այրարատայ Ուրծ և Արած գաւառի մէջ. 160 օտար բնակչօք։

ԱՆԴԱԿ կամ ԱՐԴԱԿ. — Բլուր կամ լեռնակ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, որոյ վրայ ի հնումն եղած կը թուի ամրոց։

ԱՆԴԱՄԷՋ. — Կրկին գիւղք Սիւնեաց Գողթն գաւառի, այժմեան Ագուլիսի վիճակին մէջ։ Վերին Անդամէջ ունի 260 այլազգի բնակիչներ, իսկ Ստորին Անդամէջ 330 բնակիչք, յորոց 166ը Հայք։

ԱՆԴԵՆՑ. — *Սակաւարնակ գիւղ Հայոց, հին Աղձնեաց նահանգի, այժմեան Խիզան վիճակի մէջ. ունի Ս. Մինաս կամ Ս. Անանիա անուամբ քարաշէն եկեղեցի մը։*

ԱՆԴՈԿ. — *Աղձնեաց լերանց պարը ձեւացնող լեռներէն մին։ Սասունի լեռներէն ամենաբարձրն է Անդոկ, որոյ բարձանց վրայ 1894ի դէպքերու ժամանակ ապաստանեցան հայ գիւղացիները։ Լերանս գագաթէն շրջակայքը գիտողի աչքին կը ներկայանայ հետեւեալը։ Հիւսիսային կողմը կ'երկննայ արեւմուտքէն դէպ ի հարաւ ուղղութեամբ կորդուք լերանց շղթայն՝ որ կը բաժնէ Մուշը Սասունէն։ Հարաւային կողմը միմեանց կը յաջորդեն Տաւուրիկի սարերը, յորոց նշանաւոր են՝ Մերկիտ և Սպիտակ սարերը։ Հիւսիս–արեւելեան հորիզոնի վրայ կը նշմարուին Խութայ մթին գագաթները։ Արեւելեան և հարաւ–արեւելեան կողմերը զետեղուած է Ծովասարը իր լայնանիստ լանջերով։*

*Անդոկի կողքերու վրայ շատ կը բուսնի լայնատարած և մեծ տերեւներ ունեցող խաւարծիլ կոչուած բոյսը, զոր կողմանցս բնակիչք կը քաղեն և կ'ուտեն։*

ԱՆԴՈԿԱԲԵՐԴ. — *Կը յիշուի Օրբէլեանէն (Գլ. Գ) Սիւնեաց ամուր բերդերու կարգին մէջ ի Քաշունիս, զոր անշուշտ կառուցած է Անդոկ իշխանը։*

ԱՆԴՈՒԼ ԱՆԱՊԱՏ. — *Ի հնումն Դաշտային Կիլիկիոյ մէջ կար այս անուամբ վանք մը, զոր 1238ին բարեպաշտ Հեթում թագաւորը և աստուածասէր Զապէլ թագուհին, իրենց Հովանեց անուանեցին։ Նոյն ժամանակները այս տեղ Գրիգորիս երգեցող ունն Սըսցի կ'օրինակէր աւետարան մը, Գրիգոր պատուաւոր վարդապետի և անոր Պօղոս աշակերտին համար։ Այս վանքիս վրայ առ ժամս ուրիշ տեղեկութիւնք կը պակսին։*

ԱՆԴՈՒԿ կամ ԷՆՏԷԿ. — *Հին գիւղ Այրարատայ Հաւնունեաց գաւառի մէջ, արքունի ճանապարհէն քիչ հեռու դէպի արեւմտեան հարաւ՝ վտակի մը ձախակողմը։ Այս գիւղիս մերձաւոր լերանց լանջաց վրայ գերմանացի ուղեւորն Վակնէր հանդիպեցաւ Հայոց Աղբերաց Արին կոչուած գեղեցկագոյն ծաղիկներէն միոյն։*

ԱՆԴՈՒՇՃԱ. — *Բերդ Ծովային Կիլիկիոյ մէջ, որուն կը տիրէր Պր. Պաղախն։*

ԱՆԴՐԷ Ս. — *Գուգարաց Ձորափոր նահանգի մէջ միայնարան, Կայանայ անառիկ բերդի դիմաց, յորում կը բնակէր մեծ վարդապետն Վարդան։*

ԱՆԴՐԷԱ. — *Հայարնակ գիւղ Շապին Գարահիսարի, 300 բնակչօք։*

ԱՆԴՐԷԱ. — *Գիւղ կամ աւան Թաթարաց, Ղզլարի հարաւակողմը, մէկ ու կէս օրուան ճամբայ հեռու, Սուլուք և Աքսայ գետոց մէջտեղ. ամրացած է բարձրաբերձ լեռներով և անտառներով։ Հոս կան նաեւ բաւական թուով Հայեր, որք եկած են Դարբանդէն և Տփղիսէն և վաճառականութեան կ'ըզբաղին. ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին։*

ԱՆՐԷԱՍԱՆՑ ԲԵՐԴ. — *Լեռնային Կիլիկիոյ հին բերդերէն մին։*

ԱՆԴՐԷԱՍԱՆՔ կամ ԱԼԱՊՈՂԱՆ. — *Գիւղ կամ սակաւարնակ փոքրիկ շինատեղի Լեռնային Կիլիկիոյ, Զէյթունի հարաւակողմը 4—5 ժամ հեռաւորութեամբ։ Այսպէս կոչուած է բնակչաց մէջ նշանաւոր եղող Անդրէաս անձի մը անուամբ, իսկ Ալապօղան կը կոչուի ի Թրքաց։*

ԱՆԴՐԷԻ ՎԱՆՔ կամ ԱՆԴՐԻԱՍԱՆՑ ՈՒԽՏ. — *Ի հնումն հռչակաւոր վանք Լեռնային Կիլիկիոյ մէջ, Բարձրբերդի մօտ։ Վանքս գրոց յիշատակարանաց մէջ մեզ ծանօթ է ԺԲ դարու վերջերէն մինչև ԺԴ դարու կէսը. հոս գրուած են զանազան եկեղեցական մատեանք, աւետարան, շարական, մանրուսումն, են։ Կ'երեւի որ Բարձրբերդի եպիսկոպոսանիստ վանքն եղած ըլլայ այս Անդրիասանց Ուխտը, որոյ անունն կը յիշուի իբրև առանձին թեմ՝ Յովհաննէս Արքայեղբօր Բարձրբերդի եպիսկոպոս և տեառ անուանուելէն առաջ. իսկ հաստատութիւնն Ռուբինեանց տիրելէն առաւել կանխագոյն կ'երեւի, յանուն Սրբոյն Անդրէի Զօրավարին և Բանակի նորին, որք այս կողմերս նահատակեցան։ — Սիսուան, 149—151։*

ԱՆԴՐԻ. — *Արաբկերի մօտ գիւղ այլազգեաց։*

ԱՆԴՐՈՒՆ. — *Կը յիշուի այս անուամբ Հայոց գիւղ ի Կիլիկիա, 1332ին գրուած մաշտոցի մը յիշատակարանին մէջ։ Կը կար-*

ծուխ որ գիւղս կը գտնուէր դաշտային Կիլիկիոյ մէջ, Ջահան գետը Թափող Անարզե—ուէ կոչուած վտակի մօտերը. վասն զի հոն դաշտին ծայրը տակաւին կ'երեւին աւերակներ եկեղեցւոյ մը և բերդի։

ԱՆԵՄՈԽԻ. Տես ԱՆԱՄՈԽԻ։

ԱՆԶՈՒՐ կամ ԱՆԶԻՐ. — Այս անուամբ ի հնումն երեք հայաբնակ գիւղեր կային Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ, կոչուելով Վերին, Միջին և Ներքին, յորս կը բնակին այժմ այլազգիք և կ'անուանեն Պաշ, Օրթա, և Տիպ Անզուր։ Անզուր անունն կ'ստուգաբանուի իբրև աղաւաղութիւն Ընկուզաձորի, վասն զի այն ձորակին՝ յորում կը գտնուին այս գիւղերը, ունի բազմաթիւ ընկուզենիներ։

Վերին Անզուրի բնակիչք են 228. ուր կը տեսնուին տակաւին Հայոց ժամանակէն մնացած քարաշէն, վայելչակերտ և փոքրագիր եկեղեցւոյ մնացորդները, սիւնաբարձ և կամարակապ տանիքն ինկած է. սեղանոյն երկու կողմերն կան երկու փոքրիկ աւանդատունք։ Դրան արտաքին ճակատաքարի վրայ ՌՃԿԸ (=1719) թուականին արձանագրուած է հիմնարկողի անունն։ Գիւղիս արեւմտակողմն է Հայոց ընդարձակ գերեզմանատունը։

Միջին Անզուր ունի հազիւ 50 բնակիչ, հոս ևս կան հայ շինուածոց կիսակործան աւերակներ։ Ասոր եկեղեցին աւելի աւեր վիճակի մէջ կը գտնուի. կառուցուած է գիւղի արեւմտակողմը բարձրաւանդակի վրայ՝ միջակ մեծութեամբ և անշուք։ Հարաւակողմը՝ մերձակայ Հայոց գերեզմանատան մէջ կան ԺԷ դարու վերաբերեալ թուականներով տապանաքարեր։ Եկեղեցւոյ արեւելեան կողմն ևս, ճանապարհի ձախ թևի վրայ կայ ուրիշ հնագոյն գերեզմանատուն մը, որուն տապանաքարերու արձանագրութիւնք եղծուած են։

Ներքին Անզուր ունի 262 բնակիչ. կանխաւ եղած է Հայոց բազմամարդ աւան մը, որուն ապացոյց են կիսաւեր, քարաշէն և փառաւոր շինութեանց մնացորդք և ընդարձակ գերեզմանատունը։ Եկեղեցին վերի երկուքէն աւելի մեծ և հոյակապ շէնք է չորս սիւներով. տանեաց մէկ մասն և որմոց շատ տեղերն փլած են։ Գիւղիս մէջտեղ ձգուած կայ ձիթահանքի քար մը՝ ՌՃԾ (=1701) թուականաւ արձանագրութեամբ։ Գերեզմանատան մէջ կան ԺԶ դարէն մինչև ԺԸ դարու սկիզբներու վերաբերեալ թուականներով և արձանագրութեամբք տապանաքարեր։ Այս թուականներէն կը յայտնուի որ դեռ ԺԸ դարու սկիզբները հայաբնակ էին այս գիւղերը, նոյն դարու մէջ, թշնամեաց անողոք սուրն և բռնակալութիւնն ջնջեր է այս գիւղերու հայ բնակիչներն և կործաներ նոցա յիշատակներն։ — Սիսական, 361–362։ Հնութիւնք Հայրենեաց, 116–120։

ԱՆԷ. — Կիլիկիոյ հին բերդերէն մին։

ԱՆԷԺ. Տես ԱՂԱՀԷՃՔ։

ԱՆԷՐ. — Գիւղ Տուրուբերանի այժմեան Վարդոյ վիճակին, բնակիչք Հայք և Քուրդք խառն։

ԱՆԷՆՑԻԼՏ. — Գիւղ Եղիսաբեթուպօլի գաւառի մէջ. բնակիչք 500 հոգի, յորոց 60ը հայ։

ԱՆԸՍՏԱՆ. — Հին գիւղ Վասպուրականի Բողունիք գաւառի մէջ, կը յիշուի Թ. Արծրունիէն։

ԱՆԹԱՆԱՆ կամ ԱԹԱՆԱՆ. Տես ԱԹԱՆԱՆՑ։

ԱՆԹԱՆԵԱՅ կամ ԱԹԱՆԱԳԻՆԵԱՅ ՎԱՆՔ. — Հին մենաստան Աղձնեաց Տատիկ գաւառի մէջ Մաճկոնիս գիւղի մօտ։ Աւանդութիւնը վանքս շինուած կը համարի Ս. Գրիգոր Լուսաւորչի Արիստակէս որդիէն։ Յոյժ ամայի և աւերակ վիճակի մէջ լինելով, 1849ին մշոյ Մեղտի գիւղէն Պօղոս վարդապետը՝ միաբան Առաքելոց վանքի, ի հիմանց վերանորոգեց։ Վանացս չորս կողմը անտառ է կաղնի ծառոց և կան գեղատեսիլ բլուրներ, գիմացէն ալ կարկաչաձայն կը հոսի գետակ մը՝ որուն եզերքը մատրանաձև տեղէ մը կը բղխէ առողջարար ջուր։ Կը կարծեն ոմանք, թէ ի հնումն այս վանքի մէջ պահուեցաւ Ծիծառնէոյ խաչը։

ԱՆԹԱՊ կամ ԱՆՏԱՓ. — Այժմեան Պաղիսի կառավարութեան հինգ բաժանումներէն մին, որ ըստ ոմանց կը համապատասխանէ Տուրուբերանի Տուարածատափ գաւառի։ Սահմանքն են յարևելից Արածանի, հարաւէն Քէօսիայ ջուրը, յարեւմտից Բարաղան լեռները մինչև Բասեան, որ ըղխուս կը բաժնեն Անթապէն, և հիւսիսէն

Գլխձկեռուկի շղթայն, որ բարձրացած է Ալաշկերտի և Անթապի միջավայրն։

Անթապ գաւառակն որ այժմ 100է աւելի զուտ քրդաբնակ գիւղեր ունի, 1760–80 թուականներուն ամբողջապէս հայաբնակ էր. 1815–20 թուականներուն դեռ ժողովրդեան կէսը հայ էր, 1830ին 30 մեծ գիւղեր կային։ Ամբողջ բնակչաց թիւն այժմ կը հաշուի 8000, յորոց հայք թերեւս 500ը հայ լինին։ Արածանւոյ աջ ափին վրայ 12 ժամ ի հարաւ և նոյնչափ եւս յարեւմուտս տարածուած անհարթ երկիր մ՚է Անթապ, և թերեւս այս անհարթութեան պատճառաւ կոչուեր է Անտափ։

Անթապ գաւառակի ամէն կողմը կը տեսնուին հայկական հնութիւններ, եկեղեցիներ, վանքեր և բերդեր, յորոց շատերը կործանուած և շատերն եւս դեռ կանգուն կան և զանազան կը հիացնեն։ Գաւառակիս այժմեան Քրդաց գիւղերու անուանք տակաւին հայահնչիւն են, ինչպէս Մեշք, Տերք կամ Տերքք, Կաշէ, Կալէ, Խեշէ, և այլն. այս գիւղերէն զանազան կը յիշեմք ի կարգին. — Բագրեւանդ, 302–4։ — Տես ԱՅՆԹԱՊ։

ԱՆԻ կամ ԿԱՄԱԽ. Ասոր. ܟܡܚ. Գր. ANI, GAMAKH. Թ. كماخ. Յն. Κάμαχα. — Ի հնումն անուանի ամուր բերդ բարձր Հայոց Դարանաղեաց գաւառի, և այժմ վաճառաշահ և գլխաւոր բերդաքաղաք Երզնկայի Կամախ կամ ըստ Թրքաց Քէմահ գաւառակին։ Կ՚ինկնայ Երզնկայէն Ակն տանող ճանապարհի վրայ, Եփրատայ ձախ կամ հարաւային կողմը։ Գեղեցիկ է դիրքն, պարտէզներով զարդարուած դաշտի մը ծայրը, բարձր քարալերի մը գլուխը, որ մասամբ մը պատեալ է խիստ հին և ամուր պարսպօք, և մէկ մասը ծառազարդ զառ ի վայր է. արեւելեան կողմէն կը վազէ Թանանձոր վտակն։ Հին ժամանակ անառիկ էր, բայց այժմ դըժուար է որ կարենայ դիմանալ ռմբակոծութեանց, վասն զի իւր մօտ կան բարձր լեռներ, մանաւանդ հարաւային կողմը։

Բերդիս շինութեան ժամանակն, ինչպէս նաեւ անուան սոյզ ծագումն, յայտնի չէ. թերեւս ի նախնումն Անահիտ դիցուհւոյն անուանէն առաջ եկած ըլլայ Անի, և ի վերջոյ Կամախ կոչուած է, որ եկած է Կմախք բառէն, վասն զի իւր մէջ կը թաղուէին Արշակունի թագաւորները։ Առաջին անգամ Անի ամրոցը կը յիշուի Ա. Արտաշիսի ժամանակ, որուն մեռնելէն վերջ, այս ամրոցիս մէջ պահեցին, անոր Ցուցատանէն առած չաստուածոց կուռքերը և անոնց քուրմերը։ Արտաշէսի որդին Տիգրան, իւր հօր քաջութեամբ Հայաստան բերուած Յունաց ամենամեծ չաստուածոյն ամենաշքեղ կերպարանն, որ էր «Ողիմպիական պատկերն» կանգնեց յԱնի, և վերյիշեալ քուրմերն ալ սպաս կը մատուցանէին այն կուռքին։ Իբրեւ մեհենական պաշտամանց և դպրութեան տեղի մեծ հռչակ ստացաւ Անի, ուր Ողիւպ քուրմը Բ դարու սկիզբը կը գրէր ժամանակին պատմութիւնը, յորում և Արտաշէս Բ՚ի որդին Մաժան քրմապետ էր Դիւայ դից, որոնց երկասիրութիւններն աչքէ անցուց մոլորուայց և մեծ բանասէրն Բարդածան ասորի, որ և այս տեղ ասորերէն թարգմանեց Հայոց քրմաց պատմութիւնը և Մաժանայ մահուան դէպքը։ Երրորդ դարու վերջերը շատ տարիներ հոս ամրանալով Ամատունեաց Օտայ նախարարը «իբր ի կաղապի հանգարտութեան զօղեալ» (Խոր. Բ. ՀԸ) կը պահէր Տրդատայ Խոսրովիդուխտ քոյրը, և արքունի գանձերը և կուռքերը, ինչպէս նաեւ երբեմն Երուանդ թագաւորը, հոս կը պահէր քաջակորով Սմբատ Բիւրատեանի դըստերքը։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կործանեց ամրոցիս Արամազդայ կուռքը և մեհեանը որոց ու ճշմարտին աստուծոյ տաճար յարգարեց։ Արշակունի թագաւորաց վերջին ժամանակներն եւս եղաւ անոնց գանձարան և հանգստարան։ Պարսից Շապուհ Բ թագաւորը բերդիս տիրեց իւր սպարապետին ձեռքով և մեր նախարարաց օգնութեամբ, կործանեց պարիսպը և մէջը դիզուած թագաւորական գանձերը յափշտակելէն զատ, հանեց նաեւ գերեզմաններէն Արշակունի թագաւորաց ոսկորները. միայն Սանատրուկ թագաւորին գերեզմանը չկրցաւ քակել ամուր և հսկայագործ շինուածքին համար։ (Խոր. Գ. ԻԷ. Բիւզ. Դ. ԻԴ)։ Միջին դարուն Բիւզանդիոյ կայսերք Անին ամրացուցին և մէջը դրին հեծելազօրք. անոնցմէ առին Հագարացիք,

յորոց առաւ Սուլթան Պայէզիտ. վերջնական կերպով նուաճեց Սուլթան Սէլիմ 1515ին։

Բերդի ճանապարհը զառիվեր է և ունի սանդղաձեւ ելք և երեք դուռ. բաւական ընդարձակ է, շէնքերէ զատ ունի նաեւ անշէն տափարակ տեղ մը, որուն այլազգիք Երգենկեան-եերի կը կոչեն, իբրեւ Երզնկացւոց ապաւինի վայր։ Կան չորս քարաշէն՝ բայց լքուած եկեղեցիներ, և շատ մզկիթներ՝ երկուքը մինարէով. մզկիթներէն ոմանք կանխաւ եկեղեցի եղած կը թուին։ Ամրոցին հիւսիսային կողմը լերան մէջ փորուած է խոր ճամբայ մը բոլորապտոյտ և երկու կանգուն լայնութեամբ աստիճաններով, տեղ տեղ կան ընական և արուեստական լուսամուտներ, և այս սանդխաւոր ճամբուն ծայրը կը բարձրանայ գեղեցիկ աշտարակ մը, կէսը նոյն լեռնէն և կէսը որձաքար վիմօք շինուած. վերնայարկը կան լուսաբեր պատշգամներ։ Այլազգիք մինչեւ ցայսօր այս աշտարակս կը կոչեն Գըզլ գըզըն չարտակը, այսինքն Թագաւորի դստեր պատշգամբ, որ կը յիշեցընէ Մեծին Տրդատայ քոյր Խոսրովիդուխտը, որ աստ մէջ կը պահուէր։ Աշտարակիս ներքը, վերոյիշեալ ճանապարհի ծայրը կայ քարափոր լայն ջրամբար, որ կը լեցուի մօտակայ Թանաձոր վտակէն. կան նաեւ այս քարուղւոյն մէջ մանր քարանձաւներ։

Հարաւային կողմէն բարձր լեռնէն փայտեայ խողովակներով կու գայ քաղաքին ջուրը և կը բաժնուի աղբիւրներու։ Ամրոցի արեւմտեան կողմն ալ կայ բարձր լեռ մը, միապաղաղ երեսներով, կը տեսնուի իբրեւ տաշուած և ողորկուած, և մէջը փորուած կան շատ մը կամարաձեւ դժուարելանելի քարայրներ։ Արեւմտեան կողմը լերան գահավայրի վրան է քաղաքի շուկան հարիւրի չափ երկկարգ կրպակներով և անկէ վար Հայոց թաղը. ունին մէկ եկեղեցի չէն, նուիրուած Ս. Աստուածածնի և երկու հատ եւս աւերակ։ Իսկ քարալերին ստորոտը Եփրատայ ափի մօտ կայ ուրիշ հոյակապ Ս. Հրեշտակապետք անուամբ կաթողիկէով եկեղեցի մը, որոյ կէսը կոփուած է ժայռի մէջ և կէսը քարով և կրով շինուած։ Դարուս սկիզբը քաղաքս ունէր մօտ 1500 տուն բնակիչք, մեծաւ մասամբ Թուրքք. բայց բերդատեղին մեծ ըլլալով կրնայ բովանդակել մինչ 4000 տուն։ Այժմեան քաղաքաւանի բնակչաց թուոյն վրայ ճիշդ տեղեկութիւն չենք կրնար տալ։

Կամախ գաւառակը ունի 86 գիւղ և 3076 տուն. բնակչաց թիւն կը համարուի 18872, հետեւեալ կերպով բաժնուած.

| | | |
|---|---|---|
| Մահմէտականք . . | 14547 | հոգի |
| Հայ լուսաւորչականք . | 3505 | » |
| Հայ բողոքականք . | 189 | » |
| Յունադաւանք . . | 633 | » |
| Գումարն... | 18872 | հոգի։ |

Գաւառակիս այլազգի բնակչաց մեծամասնութիւնք, ժամանակաւ Հայ քրիստոնեաներ էին, որուն վկայք են բազմաթիւ հայանուն գիւղերն, և աւերակ ու կիսակործան տաճարներն։ Հայք այժմ ունին չէն վիճակի մէջ 9 եկեղեցի և 1 վանք, ինչպէս նաեւ 8 նախնական վարժարան։ Երկիրը լաւ մշակուած է, առատութեամբ յառաջ կը բերէ արմտիք, ամէն տեսակ բանջարեղէններ, և պտուղներ։ Ունի տասնի չափ ջրաղացներ, և արուեստական արտադրութեանց մէջ նշանաւոր են գեղեցիկ գորգերը. — Սուր. Հին Հայ. 7–9։ Նոր Հայ. 101–103։ Ալիշան, Բարձր Հայք ձեռգր. 29–30։ Քինէ, Ա. 220–222։

ԱՆԻ. Ան. آنی. Ար. Պ. և Թ. آني. Գր. ANI. Ռ. Ани. — Հռչակաւոր մայրաքաղաք Բագրատունեաց վերջին հարստութեան. Այրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ. հեռու է Կարսէն 20 մղոն և Աղեքսանդրապօլէն 50 վերստ։ Մոգիչ և յափշտակիչ անուն մը դարձած է Անի, որ հառաչանաց խոր արձագանգ մը հնչել կու տայ զինքը և զազգը ճանչցող Հայու մը, ոչ միայն բնաշխարհէն այլ և հեռի աշխարհներէ, Լեհաստանի դաշտերէ և Տաւրոսի ծովակոծ եզերքներէ սկըսեալ, մինչեւ այն ամէն գաղթավայրերէն, ուր կենդանի է հայութիւնն, մանաւանդ երբ անոր կիսակործան և վեհ աւերակաց տեսարաններն ներկայանան իրեն աչաց։ Բազմաթիւ ազգային և օտար ուղեւորներ և հե-

գինակներ հիացման և սրտառուչ նկարա-գրած են Անին, որ աւաղ քանի մը դար հազիւ ապրած է իր փառօք և ճոխութեամբ, մանաւանդ թէ դար մը միայն, և երկու դար ալ երկրորդական կամ կիսկատար շը-նորհքով. իսկ հինգ դարէ ի վեր սրտաշարժ և սգաշարժ մեծ մահարձանի գաղափար մ'ընծայած է և կ'ընծայէ։

Անին կ'ենկնայ Հոռոմոսի վանքի հա-րաւային արեւմտեան կողմը՝ գրեթէ փար-սախ ու կէս հեռու, Ախուրեանի աջակողմը 1500 մետր ծովու երեսէն բարձր և քարուտ



91 · Անւոյ տեսարանը արեւմտեան կողմէն դիտելով։

1 · Դղեակն · — 2 · Ս · Գրիգոր Ապուղամրենց · — 3 · Աւագ դուռն · — 4 · Մեծ Աշտարակ · — 5 · Մզկիթ · — 6 · Կաթուղիկէն · — 7 · Ս · Փրկիչ · — 8 · Նախարարածի եկեղեցին քաղաքէն դուրս։

բարձրաւանդակի մը վրայ, որ եռանկիւնա-ձեւ թերակղզւոյ մը կը նմանի։ Այս թե-րակղզւոյ հարաւային կողմէն ամենամեծ և խոր ձորի մը մէջէն օձապտոյտ և փրփրա-

դէպ կը վազէ Ախուրեանը․ արեւմտեան կողմն տարածուած է համեմատաբար փոքր՝ Ծաղկոցաձորը, որոյ մէջէն կը վազէ Ալաճա վտակը՝ որ ըստ ոմանց կը համարուի պատմական Ոսաճ գետակը, արեւելեան կողմն է աւելի փոքր և սակաւաջուր Գայլիձոր կամ Գլիձորը, իսկ հիւսիսային կողմէն թերակղզիս լայն պարսպով մը կը միանայ դաշտի հետ։ Եռանկիւնաձև թերակղզւոյս մակերեւոյթը հարթ հաւասար չէ, այլ ունի բարձրութիւններ․ ներքին շրջապատն կը համարուի 4100 մետր, որով և քաղաքիս տրամագիծը կամ երկայնութիւնը հիւսիսէ հարաւ հազիւ կը լինի 1 հազարամետր․ Տրդատ պարգեւեց, գրեթէ 321 թուականին, իսկ խնամի Կամսարականաց ցեղին, որոց ձեռքը մնաց մինչև Ը դարու վերջերը, յորում Կամսարականք վաճառեցին Բագրատունեաց։ Աշոտ Գ Ողորմածը՝ աթոռը Երազգաւորսէն Անի փոխադրեց․ իր ժամանակ (964) քաղաքս ընդարձակեցաւ, վայելչացաւ և ամրացաւ։ Աշոտ Գը ի մէջի այլոց շինեց Անւոյ առաջին պարիսպը, բուրգերով և աշտարակներով զարդարուած, և անոր առջևը փորել տուաւ լայն խրամ մը։ Տասն և հինգ տարի վերջը իր որդին մեծագործն և սէգն Սմբատ Բ Տիեզերակալ և Շահանշահ կոչուածը, Ախուրեան



92․ Անւոյ դուռը և պարիսպները։

իսկ լայնութիւնը արեւմուտքէ արեւելք կէս հազարամետրէն քիչ մը աւելի։

Անւոյ հիմնարկութեան սկիզբն յայտնի չէ, սակայն հաւանական է որ Հայկազունք տեղւոյս անմատոյց դիրքն դիտելով հոս կառուցած են ամրոց մը, նման Բարձր Հայոց Դարանաղեաց գաւառի մէջ կառուցուած համանուն բերդին, և անունն ալ տուած կը թուի նոյնպէս Անահիտ դիցուհւոյ անունէն։ Սակայն սկզբնաւորութիւնն գտնելու առանց երկար զուր ջանք թափելու, հետեւինք պատմութեան։ Դեռ չորրորդ դարէն առաջ կը յիշուի հոս լոկ բերդ, զոր շրջակայ Շիրակ գաւառով ի միասին Մեծն գետին եզերքէն մինչև Ծաղկոցաձոր՝ նոր ընդարձակ հաստ և ամուր պարիսպ մ'ալ բարձրացուց․ լաւ քարերով և կրով ամրացուց, աշտարակներով ու բուրգերով զարդարեց, լայն խրամով շրջապատեց, անփուտ փայտով և երկաթներով ամրացուց դռները․ միով բանիւ իր ժամանակ Անին ամրութեան և վայելչութեան ծայրն հասաւ, ազգային սիրելի և պանծալի, իսկ օտարաց նախանձելի դառնալով։ Անւոյ տկարանալը և արտաքին ու ներքին թշնամիներէ հետզհետէ ոտնակոխ լինելը սկսաւ Գագիկ Առաջնոյ մահէն վերջը՝ իր Յովհաննէս և Աշոտ որդւոց ժամանակ 1020

թուին։ Թագաւորական գահը ժառանգելու համար երկու եղբարց մէջ վէճ ծագելով և նախարարաց և ժողովրդեան մէջ կուսակցութիւններ կազմուելով՝ սկսաւ ներքին պատերազմ, յորմէ օգուտ քաղելով 1021ին Վրացիք եկան Անին պաշարեցին, և առաջին բարոյական և նիւթական հարուածը տուին։ Քիչ վերջը 1040ին քաղաքս պաշարեցին Յունաց Միքայէլ կայսեր 100000 զօրքերը, որոց անասելի քաջութեամբ դէմ դրին Հայոց 30 հազար հետեւակները և 20 հազար ձիաւորները, առաջնորդութեամբ ալէզարդ և քաջարի Վահրամ Պահլաւունւոյ։ Երրորդ անգամ Անին պաշարուեցաւ 1042ին ճառ եղան Անեցի Հայոց գաղթականութեան վտանգաւոր գործին։ Հինգերորդ անգամ 1094 թուին Սկիւթացի Թաթարք 7000 զօրքով Անին պաշարեցին, բայց Գրիգոր իշխանը իր քաջ զօրականներով զթշնամին ցրուեց։ Վեցերորդ անգամ Հայոց ցանկութեամբ Անին պաշարուեցաւ Վրացիներէն և 60 տարի Պարսից ձեռքը մնալէն և օրէօր քանդուելէն յետոյ 1124ին անցաւ Վրաց Դաւիթ թագաւորի ձեռքը։ Անւոյ Վրացւոց ձեռքը անցնիլը լսելով Ապլսուար ամիրայի որդին Փադլու, ի Պարսից բազմաթիւ զօրքեր վարձելով, ամբողջ տարի մը Անին պաշարելէ վերջ, սովամահ ժողովրդեան հետ



93. Անւոյ արեւմտակողման ճեղքին պարիսպները։

մէկ կողմէն Մոնոմախոսի զօրքերէն, և անոր թելադրութեամբ, միւս կողմանէ Պարսիկներէն, որոնք թէև Գագկայ կորիճներէն հալածուեցան, սակայն յաղթութիւնը չպսակուեցաւ. վասն զի ներքին շփոթութեան պատճառաւ, 1046ին Մոնոմախոսի զօրքերը կրկին Անին պաշարելով, վերջապէս անոր և գաւառին տիրեցին, և երկրի կառավարութիւնն ալ ենթարկեցին իրենց իշխանութեան։ 1064ին Յունաց տիրապետութեան ժամանակ Անին պաշարուեցաւ Սելջուկ Ալփասլանի բազմաթիւ զօրքերէն, և մեծ սրածութեան, աւերածի և քանդման ենթարկուեցաւ։ Այս ամենայն խժդժութիւնք պատ- պայման կապեց և մտաւ քաղաքը (1126ին) առանց ո՛ և է վնաս հասցնելու. այս երկար պաշարման մէջը, Հայ ժան ա'Արքն Այծեմնիկ տիկին, քանի՛ քանի՛ անգամներ իր կանացի կուրծքը դէմ տալով թշնամեաց նետերուն, կատաղաբար կը կռուէր քաղաքի պարիսպներու վրայէն։ Եօթներորդ անգամ 80000 զօրքերով Անին պաշարեց Շահարմէն ամիրան, և թէպէտ Վրաց Գորգի թագաւորը մեծ կոտորած և վնաս հասուց անոր զօրաց, բայց այնու հանդերձ երկար ժամանակ չկարողանալով պարսկական անընդհատ յարձակմունքներէն պաշտպանել իր աշխարհը, տիրուեցաւ Անին անոնց վե-

բաղարձնել, թէև 1174ին զօրանալով նորէն հո առաւ։ Ութերորդ անգամ 1239ին Թաթարաց Չարմաղան խանը մեծ աւերածով տիրեց Անւոյ. և անկէ վերջ դար մը միջոց ալ շատ անգամ վտանգուելով և նորոգուելով՝ հասաւ իր յետին մեծ արկածին, այսինքն ընդհանուր կործանման, աւերման և անմարդութեան։ Սակայն տակաւին անյայտ մնացած է և պատմութիւնն հիանալի լռութեամբ մը դեռ ծածկեր է մեզմէ. Անւոյ վերջին ամայանալուն ժամա-



94. Անւոյ արեւելեան կողմի պարսպի բուրգերը։

նակն և պարագաներն։ Շատերը կը կարծեն, որ 1319ին մեծ երկրաշարժն, բազմաբնակ, բազմատաճար և բազմահարուստ քաղաքս դարձուցեր է ի բազմաշխարհելի աւերակ, և ի թագուհի աւերակաց աւերակացեալն Հայաստանի։ Բայց որչափ ալ մեծ վնաս հասուցած լինի այդ երկրաշարժն, աւերակ եկեղեցեաց մինչև ժԴ դարու կիսէն վար գտնուող արձանագրութիւնք, կը ցուցընեն, որ յետ երկրաշարժին տակաւին շէն էր Անի։ Մինչև ցարդ իսկ կան շատ գերդաստաններ մեր բնաշխարհի և օտարութեան մէջ ապրող, որք իրենց նախահարց քաղաք կը համարին զԱնի։ Անիէն գաղթողաց գլխաւոր տեղերն են Հայաստանի մէջ, Նախճաւան, Ջուղա, Վան, Սիս, Համշէն, Կարին, և փոքր Հայոց մէջ, Սեբաստիա և Տրապիզոն. իսկ հեռաւոր օտար աշխարհաց մէջ Վրաստան, Աստրախան, Աքսէրայ, Ղրիմ և Լեհաստան։ Այս գաղթականութիւնք ամբողջ մի և նոյն ժամանակ եղած չեն, այլ ժէ դարու կիսուն ի Կափա գրուած յայսմաւուրքի մը յիշատակարանին համեմատ, յԱքսէրայ գաղթած են ժԳ դարու վերջերը 1299ին, ի Ղրիմ՝ 1330ին, և այլն։ Թէ և ամայացած՝ սակայն առաջին դարուց մէջ՝ այսինքն ժԵ–ժԶ, յայտնի է թէ աւելի չէն էր, քան յետին ժէ–ժԸ և մեր դարուն մէջ, յորում սկսաւ քննուիլ և ծանօթանալ։ 1638էն սկսեալ մինչև վերջին Ռուսաց և Թուրքաց պատերազմը (1877) Անին ժառանգութեամբ մնաց խաթու Օղլուի ցեղի ձեռքը, և կը ծառայէր

իբրև արօտատեղի հովուաց։ Պարոս (Ժ․Թ) սկիզբները կը յիշուի Անի Աբովեանի վի-պասանութեան մէջ այսպէս. 1820 տարւոյ յուլիս 23ին Աղասի գիւղացին գումարելով իրեն հետ 300 քաջակորով հայազգի երի-տասարդներ և ապստամբելով ի Պարսից, ամրացաւ քաղաքիս աւերակաց մէջ. և Հիւ-սէին խանը յանգէտս այստեղ գալով և զօրաց հանգիստ տուած ժամանակ, յանկարծակի Աղասեանք յարձակեցան Պարսից վրայ, շատը կոտորեցին, մէկ մասը փախուցին և իրենք ալ աւարն առնելով գացին Կարս, ուր մեծ սիրով ընդունուեցան փաշայէն։ Պատմական այսչափ տեղեկութիւններ ի մի

տեղ գետնին հաւասար՝ տեղ տեղ կիսա-կործան, աշտարակներ ալ ունի բայց սա-կաւաթիւ են և՝ ներքին պարսպին չեն հա-ւասարիր։ Ներքին պարիսպը (Թ. 94) աւելի ամբողջ և անկործան մնացած է. միւս պա-րսպի նման կառուցուած է գլխաւորաբար սև, կարմրագոյն դեղին և մոխրագոյն կա-նաչ տաշած քարերով։ Աշտարակներն կը բարձրանան մէկ մէկէ քիչ հեռու. քարէ են և բաւական ճարտարաշէն, բայց ամենուն ծայրերն ալ քիչ շատ քանդուած ըլլալով՝ որոշ բարձրութիւննին չի գիտցուիր։ Այս աշտարակներուն շատն բոլորաձև են և սա-կաւք քառակուսի. ամէնն ալ երկայարկ



95․ Դունայ կամ Երեւանայ դուռը։

ամփոփելէ վերջ, սկսինք այժմ մի առ մի համառօտիւ գիտել և հետազօտել Անւոյ կի-սակործան և աւերակ վիճակի մէջ իսկ վեհ մնացորդները։ Անին շրջապատող պարիսպ-ներէն հարաւային կողմինը կործանուած է և բնական ամրութիւն ունի Ախուրեանի ձորը, ինչպէս նաև արևելեան կողմն։ Հիւ-սիսային կողմն, որ ինչպէս կանխաւ ըսինք, լայն պարանոցաձև միացած է Շիրակայ դաշտի հետ, պատած է ներքին և արտա-քին կրկին պարիսպներով. երկու պարսպաց մէջտեղի լայնութիւնն է գրեթէ 20 քայլ։ Արտաքին պարիսպը Ծաղկոցաձորի գանէն մինչև արևելեան կողմը կը հասնի, տեղ

կամ եռայարկ են և քարէ կամարակապ-ներով. ներսի եզերաց կողմէն սանդուխներ ունին, որ մէկ յարկէն մէկալը կը հանեն։ Աշտարակաց, ինչպէս նաև պարսպի վրայ, կան այլ և այլ ձևերով վայելուչ քանդակ-ներ և արձանագրութիւններ։ Այս աշտա-րակները միայն քաղաքը շինող և զարդա-րող Աշոտի և Սմբատայ կառուցածները չեն, այլ անոնց ատեն և անոնցմէ վերջը եկող իշխանազուն մարդկանց ալ, ինչպէս կը յայտնուի վրայի արձանագիրներէն. և կ'երևնայ թէ զանոնք շինած են թէ՛ իրենց յիշատակին և թէ իրենց պալատներու պաշտպանութեան համար։ Այս աշտարակ-

ներու բազմութենէն յայտնի կը լինի նաև, թէ Անի ունէր բազմաթիւ պաշտպան զօր֊քեր, ինչպէս մեր պատմութենէն ալ գի֊տենք։ Աշտարակներէն կամ բուրգերէն իբրև նշանաւոր յիշենք գէթ երկուքը, զորս Ճա֊նուշ անուամբ խաթուն մը ԺԳ դարու ս֊կիզբները կառուցանել տուած է. Իւրա֊քանչիւրին վրայ փորուած են քարէ զոյգ մը վիշապ, որ պարսպէն երևելով՝ մէկ մէկու կը պլլուին աշտարակաց վրայ մինչև վեր, և հոն երկուքն ալ գլուխ գլխի կը բերեն, մէջերնին ալ եղան գլուխ մը և ուրիշ զարդ մը կայ։ Բրգանց վրայի արձանագիրներէն և Տիգրանեանց։ Այս անուններն առած է իւրաքանչիւր դուռ ըստ իրեն դրից։ Ա֊ւագ կամ միջին դրան երկու կողմը լայն և բարձր աշտարակներ կան. մէկուն վրայ քովէ քով երեք գեղեցկաքանդակ մեծ խաչեր կան կարմիր քարէ. միւսին մօտ պարսպին վրայ քառակուսի մեծ քարով առիւծ մը քանդա֊կուած քալելու դիրքով։ Ռուս տեղագննողն վայրացս Մուրաւիեֆ՝ 1846ին փոխանակ այս դրանս, Խօշանի կամարադուան կար֊ծելով Անւոյ նախադուռն, անոր վերագրած է Իտալացւոց աշխարհածանօթ քերթողահօր Տանթէի Դժոխոց դրան վերտառութիւնն.



96 · Անւոյ կաթողիկէին արտաքին տեսքը։

կը յայտնուին շինել տուողաց անուանք, յորոց յիշենք Զաքարիա, Լուսոտ, Մխի֊թար Գանձակեցի, Աբրահամ, Աշոտ Իշ֊խան, Սարգիս որդի Սամուէլի, Մամխա֊թուն, և այլն։

Անւոյ պարիսպներու կիսակործան վի֊ճակէն անկարելի է որոշել իր դռներու ճիշդ թիւն, սովորաբար արտաքին պարսպին միայն երկու դուռն կու տան, իսկ ներքին պարսպի դռներէն կը յիշուին հետևեալք. Աւագ դուռն, Գաղտ, Գլիձորի, Գառակիրոցի, Դուռնայ (Թ. 95) կամ Երևանայ, Իգաձորի, Ծաղ֊կոցաձորի, Կամրջաց, Կարուց, Ջորդուռն

Per me si va nella città dolente; . . .

Ընդ իս մուտք են ի քաղաքն աղետաւոր . . .

Եւ յիրաւի, երբ այս դռնէն ներս մտնե֊լով ակնարկ մը տանք, ահա բովանդակ աղետաւոր կամ տրտմաթախիծ Անին մեր դիմաց կը տարածուի, ջարդած, փշրուած, փլած, ահագին աւերակներ դարձած. կը տեսնուին գեղեցիկ քանդակներ, սիւներ, խոյակներ և այլ բազմատեսակ շէնքերու բեկորներ հողի հաւասարած և ծածկուած։ Այս ծովանման աւերակաց մէջ դեռ կեցած

են քանի մը հոյակապ շէնքեր, իբր յաւիտենական յիշատակ աշխարհաքարոզ քաղաքին. ուր էր թէ ժամանակը բաւականանալով իր մինչև ցարդ ըրած աւերմունքներով, խնայէր այս քանի մը մնացորդներուն մինչև որ բաղդի շրջանն դառնալով վերստին ազնիւն Անի մարդաբնակ և հայաբնակ լինէր։

Անին իւր պայծառութեան օրերն այնչափ շէն և բազմամարդ էր և լի հարստութեամբ և գեղեցկութեամբ, որ յատուկ առակ մ'ալ ունեցեր է. «Անին շէն, աշխարհս աւեր. աշխարհս շէն, Անին աւեր». այսինքն երբ Անին շէն էր՝ բոլոր աշխարհը աւերակ կ'երևար անոր դիմաց. երբոր Անին աւերեցաւ՝ այն ատեն աշխարհս շէն երևցաւ։ Սակայն իւր շքեղութեան և մեծութեան համեմատ, խիստ փոքր է իւր պարըսպաց միջի տարածութիւնն, և այսպիսի փոքր տեղւոյ մէջ անհնարին երևցած է շատերուն՝ հազարաւոր եկեղեցիներ և պալատներ լինելը։ Յայտնի է որ «Անւոյ հազար ու մէկ եկեղեցին» ըսել և երդնուլը՝ ազգային առակ մ'է բազմաթիւ նշանակելու. այսօր եթէ նկատենք Անւոյ մնացած աւերակները՝ հազիւ 20 եկեղեցի և մատուռ որոշ կը նշմարենք, թէ՛ կանգուն թէ կործան, և թէ աւելի մանր որոնենք՝ գուցէ նոյնչափի նշան ալ գտնուի։ Սակայն կրնանք ընդունիլ Անւոյ հազար ու մէկն՝ եթէ խորհրդածենք, որ նախ ժամանակն՝ անգութ օտնակոխներով՝ ոչ միայն դարէ դար այլև տարիէ տարի կը մաշեցնէ, կործանէ և հողաթաւալ կը ծածկէ շինութեան նշաններն ալ. եօթանասուն տարի հազիւ կայ՝ որ սկսան ճանապարհորդք քիչ մը աւելի մտադրութեամբ քննել զԱնի. և երբ անոնց գրութիւնները ժամանակի կարգաւ կարդանք, զգալի փոփոխութիւններ կը գտնենք նախորդներու և վերջիններու մէջ։ Թէպէտև պատմիչք այն առակաւոր հազար ու մէկէն զատ թիւ մը չեն ըսեր եկեղեցեաց, յանուանէ ալ՝ հիմակուան մնացածներէն զատ հազիւ հինգ վեց մը կը յիշուին, և թէպէտ մեր միջին անուանի պատմիչներէն մին՝ Կիրակոս՝ միայն «Եկեղեցի բազում կայր ի նմա» կ'ըսէ և կ'անցնի, սակայն իրեն ժամանակակից Եւրոպացի մը, Անիէն անցած ատեն 1255ին, կը յիշէ որ 100 եկեղեցի կար հոն և 2 մզկիթ։ Իսկ անկէ գրեթէ 30 տարի առաջ գրող Արաբացի պատմիչ մը՝ կ'ըսէ, թէ Ալփասլանի Անին առնլու ժամանակ՝ 500էն աւելի եկեղեցի կար հոն։ Եթէ ասոնց վրայ աւելցնենք նաև Ծաղկոցաձորի լայն քարափանց վրայ փորուած մատուռներն և շրջակայից եկեղե-



97 · Անւոյ կաթուղիկէի ներքին տեսքը։

ցիներն և մատրանք, ինչպէս նաև աշտարակաց մէջի խորաններն, վասն զի Վարդան պատմիչ ներքնապարսպին համար կ'ըսէ, թէ շինողն՝ Աշոտ Ողորմած՝ «զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց», մանաւանդ եթէ եկեղեցեաց ամէն մէկ խորաններն առանձին եկեղեցի համարենք, ինչպէս կոչուած ալ են, այն ատեն առակն ստուգութիւն կը գտնայ։ Անհաւատալի չի լինիր այլ եւ Անւոյ 1001 եկեղեցին, մեծ ու փոքր, հանդերձ մատրամբք գերեզմանաց և խորանօք. և ԺԲ դարու պատմիչն Մատ-



98․ Կաթուղիկէի խորանին խորշերը։

թէոս Ուռհայեցի՝ կրնայ ըսել Անւոյ պայծառ ժամանակին համար, թէ «Ցայնմ աւուր հազար և մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի». ինչպէս որ բնակչաց համար ալ կ'ըսէ. «Էր Անի բազմամբոխ, լցեալ քաղաքն, բիւրք բիւրուց արանց և կանանց, ծերոց և տղայոց. որ և հիացումն արկանէր տեսողացն. զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց իցէ»։ Ո՞ւր թողունք և սարերկրեայ քաղաքը. վասն զի Անւոյ մէջ տեղ տեղ ներքնատուններ ըլլայն անտարակոյս է, և արդէն քանի մը տեղեր գետնափոր մուտքեր ծանօթ են, որոց մէկն նոյն իսկ Ախուրեան գետոյն տակէն կ'անցնի, ինչպէս Լոնտոնի Թամիզ գետոյն գետնանցքն. կ'ըսուի նաև, և չէ անհաւան, թէ քաղաքին մեծ մասն կամ բոլորն ալ իր ներքնայարկն ունի, ինչպէս ուրիշ քանի մը աշխարհաց մեծ քաղաքներն ալ, զոր օրինակ Հռոմ, Փարիզ, և այլն. ուստի անտարակոյս եկեղեցիներ և մատուռներ ունէր նաև ներքնայարկն։

Անւոյ այժմեան, գուցէ և ի հնումն ունեցած շինուածոց և աւերակաց վեհագոյն և սքանչագոյնն է մեծութեամբն և գեղեցկութեամբ հռչակաւոր Մայր Եկեղեցին կամ Կաթուղիկէն Ս. Աստուածածին (թ. 96), որ կ'իյնայ քաղաքին հարաւ – արեւելեան կողմը։ Ասողիկ (Գլ. Լ.) հետեւեալ կերպով կը նկարագրէ մեծակառոյց եկեղեցին. «ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք զմբեթաւորեալ՝ խորան երկնանըման. (զոր շինողն) զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ ոսկէթել անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց, և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որով ջահանայր ըստ երկնային կամարին, կաթուղիկէն սուրբ»։ Իր սրբազան գրկաց մէջ կը մանկանային Բագրատունի Շահանշահք մեր. թագաւորք և հայրապետք կ'օծուէին, և կը կատարուէին շատ ուրախալի և մեծամեծ հանդէսներ։ Ինչպէս որ Անին մեր ազգային ճոխութեան և ճարտարապետութեան յետին և յայտնի թագաւորն է, կաթուղիկէս ալ անոր գլխոյն է և հազար ու մէկ եկեղեցեաց թագուհին։ Բնութիւնն և բնութիւնն երկար ժամանակի մէջ չեն յաջողած բոլորովին հիմնայատակ կործանել հրաշակերտ տաճարս, վասն զի հաստատ հիմն և ամուր պատեր դրած էր անոր կանգնողն կամ սկզբնաւորողն՝ Սմբատ Տիեզերակալ. և հինգ կարգ մեծամեծ քարերով ալ տախտակաձև եկեղեցւոյն չորս կողմը պատեր։ Դիրքն կը թուի որ քաղաքին բարձրագոյն յատակին վրայ էր. անոր համար մինչև այսօր իսկ այնպէս մեծ, վեհ և ահեղահայեաց կ'երևի։ Խորհրդաւոր ժամանակ մը՝ Քրիստոսի

երկրորդ հազարամեայ դարուն սկիզբն աւարտած է կաթուղիկէի շինութիւնն, Սմբատայ հարսին, և Գագկայ կնոջ կատարամիզէ թագուհւոյն ձեռամբ։ Այս մեծակառոյց եկեղեցւոյս շինութեան համար, ոմանք կը համարին որ տեւած ըլլայ 20 տարի, և այլք 4 տարի 989էն մինչև 993 թուականը։ Կաթուղիկէի հարաւային կողման վրայ է պանծալի արձանագրութիւնն կատարանիզէ կամ կատարամիզէ թագուհւոյն, որ կը յայտնէ թէ կառուցած է զայն հրամանաւ առն իւրոյ Գագկայ շահանշահի։ Եկեղեցւոյս օծողն՝ Սարգիս կաթողիկոս, ուրիշ արձանագրութեամբ մը կը յայտնէ իր հրամանն, թէ անոր մահէն վերջը, Վարդավառէն սկսեալ 50 օրուան մէջոց՝ 40 օր եկե-




99․ Կաթուղիկէի քանդակներէն նմուշներ։

գեցոյս սպասաւորք պատարագին վասն հոգ-ւոյ Կատրանիդեայ բարեպաշտ թագուհւոյ։ Մինչ Կատրամիդէ թագուհին մայր եկե-ղեցւոյ շինութեան կ'զբաղէր, Գագիկ թա-գաւորն ալ, կը համարուի որ մի և նոյն ժամանակ ուրիշ հոյակապ և հիանալի յի-շատակարան եկեղեցի մը կը կանգնէր յԱնի։ Ասոր կը վկայէ բնիկ Անեցի Սամուէլ պատմիչն՝ և իրմէ առաջ ալ ծերունի ժա-մանակակիցն Ասողիկ կ'իմացնէ, որ Գագիկ ի կուռ Ծաղկոցաձորոյն՝ ի բարձրաւան-դակ տեղւոջն, տարփատենչ տեսողացն. մեծատաշ վիմարդեան կոփածու վիմօք, մա-նուածոյ քանդակեալ յօրինէ, լուսանցոյց պատուհանօք, երրակի դրամբք, սքանչա-տես տեսմամբ գմբեթաւորեալ, զանակ զեր-ամբարձ և երկնանման գնդին»։ Այս խօս-քերէս կ'երևի թէ թագաւորին շինածը ա-մէլի բազմազարդ մանր աշխատութեամբ շի-նուած էր քան թէ կաթուղիկէն. սակայն



100. Կողմնակի տեսիլ կաթուղիկէի։



101. Ս. Գրիգոր Աբուղամրենց։

ուղելով կենդանացնել մեծ յիշատակ մը, — այսինքն Ներսէս Գ Շինող կաթողիկոսի Է. դարու կիսուն՝ Վաղարշապատու մէջ շինած հրաշալի ղուշազարդ և մեծ եկեղեցին Ս. Գրիգորի, որ այն ատեն կործանած էր, բայց աւերակներն կը քարոզէին իր մեծու-թիւնը և ճոխութիւնը, — ազնուախոհ թա-գաւորն անոր չափն և ձեն առնել տուաւ և սկսաւ «նոյնաձև չափով և յօրինուածով յարդարել ի քաղաքն Անոյ. հիմն արկեալ կամ ոչ հաւասար հաստատուն, և կամ աւելի նախանձու նպատակ ըլլալով, այսօր իր ամեն զարմանալեօքն աներեւոյթ եղած է աւերակաց կոյտերու տակ։ — Կաթուղիկէի ձեն է քառակուսի՝ 35,53 մետր երկայն, և 23,64 մետր լայն ամբողջապէս շինուած է դեղին, սև, կարմիր և գորշ գունով հրաբխային կոփածոյ քարերով։ Արեւ-ելեան, հիւսիսային և հարաւային կողմերը դրան երկերկու տեղ՝ պատը սուր անկիւ-

նաձև խորշի պէս ներս մտած է, և իւրաքանչիւրի վրան գեղեցիկ քանդակազարդ կամարաշէն ձևացուցած են։ Եկեղեցւոյն մէջը (Թ. 97) որչափ որ պարզ է, այնչափ ալ վսեմ և զարմանալի, մանաւանդ գեղեցիկ և պատշաճ չափակցութեամբը․ խորանը ճիշդ արևելեան կողմը կէս կլոր խորշ մի է, որ մինչև ձեղունը նոյն կիսաբոլոր ձևով կը բարձրանայ և կը խառնուի բեմին կամարագօտիներու հետ։ Այս կի-



102. Ս. Փրկիչ եկեղեցի։

սաբոլոր մեծ խորշը կամ լաւ ևս խորանի կոնքը, վարէն մարդաչափ բարձրութեամբ բաժնուած է 10 խորշերու (Թ. 98) պատին մէջ. երկու ծայրի խորշերը մէկ մէկ դռներ են, որոնց մէջէն քարէ սանդուխներով կ՚ելլեցուի երկու կողմնակի վերնայարկեր կամ մատուռներ, որոնց ներքեւ կան ուրիշ մատուռներ կամ պահարաններ՝ բոլորն ալ քարաշէն ու կամարակապ։ Եկեղեցիս ունի երեք դռներ՝ իւրաքանչիւրը վեց կամարով,

երկուքը դիմացէ դիմաց Հարաւային և Հիւսիսային կողմերը, և մին արևմտակողմը՝ որ է աւագ դուռն, որոյ վերև, ինչպէս նաև ուրիշ կողմեր ևս, կան անեղծ մնացած արձանագրութիւններ. արևու ժամացոյց մը ևս կայ Հայերէն այբուբենով նշանած։ Կաթուղիկէի մէջ չորս սքանչելի սիւներ կը բարձրանան՝ խաչաձև և 16 անկիւնի, 3 մետր տտուարութեամբ. գեղին և սև մեծամեծ կոփածոյ քարերով, բոլորակ, կիսաբոլոր, քա-



103. Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցի։

ռակուսի, կորնթարդ և անկիւնաւոր ձևերով մեծ և փոքր շերտեր ձգուած են սքանչելի ներդաշնակութեամբ այդ սիւներու վրայ վերէն մինչև վար. նոյն ոճով շինուած են նաև վեց թերասիւնք կամ որմասիւնք՝ որք կամարները պատերուն կը հաղորդեն ի Հիւսիս, ի Հարաւ և յարևելս։ Այս սիւներու վրայ ձգուած կամարներն, եկեղեցին կը բաժնեն երեք թևերու, միջինն աւելի լայն և բարձր քան երկու կողմնակի-

ները։ Կամարաց վրայէն ձգուած ուրիշ կամարագօտիներ՝ վեր կը բանէին իրենց արժանաւոր, երկնանման գմբէթը, որ առանց 850 տարիներէ աւելի քաղաքին վրայ հովանի ըլլալէն վերջ՝ ԺԹ դարու առաջին կիսուն վերջերը կործաներ ինկեր է, և եկեղեցւոյն մէջտեղ ըլրակաձև աւերակաց կոյտ մը ձևացուցեր։ Գմբէթիս գագաթան վրայ էր երբեմն, մարդաչափ բարձրութեամբ արծաթի խաչն՝ զոր աւերածու Ալփասլանի զինուորները վերցուցին և տեղը զրին ոսկէզօծ մահիկ. նոյն ժամանակ խաչին տակը մը, երեք հատ գաւը, որոնց մէկը երկայն և երկուքը կլորաձև, մէկ մէկ բոլորակ՝ կողմնակի աւանդատանց վրայ, արեւմտեան դրան վրայ ևս կան մէկ բոլորաձև բարձրը և մէկ քառակուսի աւելի վարով. յայտնի է որ գմբէթն ալ զարդարուած լինելու էր պատուհաններով։ Պատերու կամարաց և պատուհաններու եզերքներն, մանաւանդ ոմանցը, զարդարուած են հրաշալի նուրբ քանդակագործ զրուագներով, որոնց իբրև նմոյշ մը թող լինին մեր պատկերներն (Թ. 99, 100)։ Ժամատան կամ գաւիթ չունի, և կ'երևի



104. Ս. Գրիգոր Լուսաւորչի վանք։

ներքուստ կախուած բիւրեղէ մեծ ջահն ալ գետին ինկաւ և ջախջախեցաւ։ Այդ ջահը 12 լիտր կը կշռէր, և նոյնքան ալ ձէթ կը տանէր, և էր յիշատակ առատաձեռնութեան եկեղեցւոյս հիմնադիր Սմբատ Բ. վասն զի Հնդկաստանէ բերել տուեր էր բիւր գանձ (ըստ ոմանց գրեթէ 120–150000 ֆր.) ծախս ընելով։ Կողմնակի դրանց վրայ կան երեք երեք երկայնաձև պատուհաններ. երկերկու հատ որմանեանց և արեւմտեան պատին մէջտեղը, մէկ հատ երկայն և քառակուսի խորանին վրայ արեւելեան կողմը թէ ունեցած ալ չէ, բայց չորս կողմը ուրիշ մատրանց կամ շէնքերու հետքեր կան. որոց մէկն ալ լինելու է Սարգիս կաթողիկոսի շինել տուած «Վկայարանն սրբոց Հռիփսիմեանց», ուր և փոխադրեր էր մեծ հանդիսիւ անոնց նշխարքը։ Կաթողիկէիս նորոգութեան ամենևին յիշատակութիւն չըկայ, ինչպէս ուրիշ եկեղեցեաց. միայն արտաքին չորս կողմի տափճանները նորոգեր է յամին 1213 Տիգրան իշխանն, Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքի շինողն։ Կաթուղիկէի շինութեան վերակացուն և արուեստա-

ւորն էր, հին հայ ճարտարապետաց մէջէն ծանօթն և անմահանալին Տրդատ։

Ս. Գրիգոր Ապուղամրենց՝ (թ. 101) որ կ'ենթայ կաթուղիկէի արեւմտեան հիւսիսային կողմը, գեղեցկահայեաց գիրքովը, ճարտարապետական արուեստի կատարելութեամբն և ամբողջ և անկործան մնալովը, Անւոյ միւս եկեղեցիներէն ամենէն աւելի բաղդատորն կրնայ համարուիլ, մանաւանդ որ հնութեամբն ալ զամէնքը կը գերազանցէ։ Փոքր է, բայց վայելուչ և ճարտարաշէն. որմերը հաստ են և զօրաւոր, որով



105. Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցւոյն մէկ կողմը։

900 տարիէ աւելի է որ անխախտ մնացած է առանց ամենեւին նորոգութեան։ Արտաքուստ ձեւով երկոտասանանկիւնի է խարիսխն, բայց անանկ լայն են անկիւնները՝

որ գրեթէ բոլորակ կ՚երևի, և տրամագիծն է արտաքին պատէն չափելով 12 մետր. մէջն՝ որ վեց հաւասար կիսաբոլոր բաժնուած է եզերքէն՝ հազիւ 10 մետր տրամագիծ ունի: Դրսէն պատի խարսխէն քիչ վեր ամեն երկու կողման մէկուն մէջ սրանկիւնաձև խոր խորշ բացուած է: Ներքին վեց կիսաբոլորակաց վերջացած անկէն կանգնած են մէկ մէկ սիւն, որով մեծ բոլորակ մ՚ալ կը ձևանայ կեդրոնը, որուն վրայ կը բարձրանայ վայելուչ և գեղեցիկ կոնաձև գմբէթը՝ 12 պատուհանօք: Եկեղեցւոյս դուրսը թէ և կ՚երևին քանդակք՝ այլ ոչ խուռն և շատ, ներսն ալ աւելի պարզ է, բնական և անկարօտ գեղեցկութեամբ լցեալ. այնպէս որ հայկական ճաշակի և ճարտարապետութեան ընտիր օրինակաց մէկն կրնայ ընծայել. և անշուշտ



106 . Խաչվէմ Ս . Գր . Լուսաւորչի եկեղեցւոյն մէջ:

Անւոյ այն շէնքերէն մին է, որոց վրայ հիանալով անգղիացի և գաղղիացի ճանապարհորդք՝ վկայեցին որ յունական ճաշակ և փափկութիւն ունին: Արձանագիրք և ձևոյն փոքրութիւնը կը վկայեն որ կառուցած են զայն Պահլաւունիք իրենց տոհմին հանգստարանի համար: Շինութեան թուականն յայտնող արձանագրութիւն կը պակսի, բայց դրան վերը կայ Անւոյ հնագոյն արձանագրութիւններէն մին ՆԽԳ (=994) թուականաւ, Շուշանայ տիկնաց տիկնոջ՝ ամուսնոյ Գրիգորի իշխանաց իշխանի՝ որ վախճանած է 982ին: Միւս արձանագրութիւններն են Գրիգորի և Շուշանայ որդւոց. մին Վահրամայ՝ իշխանաց իշխանի, ուրիշ մը Ապլղարիպայ Հայոց մարզպանի, յամի 1040. յորմէ կ՚իմացուի որ եկեղեցիս շիներ է, իբր հանգստարան իր հօրը, Համզէ եղբօրը և Սեդա քրոջը համար: Ապլղարիպ շիներ էր նաև եկեղեցւոյս կից երկու սենեակ կամ մատուռ Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր. որք հաւանօրէն են եկեղեցւոյ հիւսիսակողմը գտնուած աւերակ գեղեցիկ մատուռներն: Եկեղեցւոյս համանման է Նախրարածի եկեղեցին Անիէն դուրս՝ քառորդ ժամ հեռու, որոյ համար կ՚աւանդուի թէ հարուստ հովիւ մը շինած ըլլայ, և այն պատճառաւ այսպէս կը կոչուի, և այլազգիներէն կը թարգմանի Չօպան-քիլիսէսի:

Մեծահարուստ և մեծահաւատ Պահլաւունի Ապլղարիպ մարզպանի՝ մնացեալ ձեռակերտաց վեհագոյնն համարուած է Ս. Փրկիչ (Թ. 102) եկեղեցին, որ կ՚իյնայ Անւոյ արևելեան կողմն և կաթողիկէէն հեռու հազիւ 65 մետր և Գլիձորէն 22մ: Ձևովն և ճարտարապետական ոճով բաւական նման է Ս. Գրիգորի, բայց անկէ մեծ է և աւելի զարդարուն: Ի հեռուստ թէև բոլորշի կ՚երևի տակայն բազմանկիւնի է, և իւրաքանչիւր անկեան եզերքը կրկնակի սիւներ կան, որոց վերնախարիսխներէն ձգուած են կամարներ: Ամբողջապէս շինուած է մեծամեծ սրբատաշ կարմիր և գորշ հրաբխային քարերով և ունի երկու դուռ հարաւային և արևմտեան կողմերը: Ներսը բաժնուած է ութ բոլորակաց, յորոց վեցը ի-

բարու հաւասար են, եօթներորդն՝ որ է խորանին տեղն՝ աւելի մեծ է, իսկ ութերորդն որ է աւագ դրան տեղը, աւելի շիտակ է քան թէ բոլորակ։ Այս բաժանմանց միջոցն մէկ մէկ միակտուր սիւն կայ,



107. Մահարձան Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցւոյ մէջ։

որոց վերնախարսխաց վրայ կը հանգչի եկեղեցւոյն շրջաբոլոր պատն կամ պատերուն շրջանակն, և կը վերցընէ բոլորշի գմբէթն՝ 12 բարձր և նեղ կամար բաժնուած՝ բարակ և զուգակ սիւներով, մէջերնին պատուհաններ։ Գմբէթի բոլորշի գլանն բաւական լայն և մեծ լինելով, և եկեղեցին ալ շատ մեծ և քառակուսի չլինելով՝ դուրսէն բոլոր եկեղեցին երկու յարկ կ'երևի, վարն բազմանկիւն և վրան բոլորաձև։ Ունի երկու նեղ պահարաններ պատերուն լայնութեան միջոցը, և հարաւային դրան գիմացը կիսաբոլորին մէջտեղը բարձրկեկ ամպիոն մը, ուր կ'ելլեցուի քարաշէն սանդուղներով պատին միջէն, և անկից ալ վեր մինչև տանիքը։ Եկեղեցւոյս ներսը պատերու վրայ կան աւրշակած նկարէն պատկերներ։

Ս. Փրկչի ճարտարապետն կրնայ Տըրդատայ աշակերտ մ'ըլլայ. վասն զի շինութիւնն աւարտեր է յամին 1036, «շատ ջանիւ և մեծամեծ գանձիւ» Աբլղարիպայ, ինչպէս կը յայտնէ արձանագիրն. ուրիշ արձանագրութիւն մ'ալ կ'իմացնէ՝ որ նախընթաց տարին՝ Աբլղարիպ, Սմբատ—Յովհաննէս Թագաւորէն հրովարտակ առած՝ գնաց ի Կ. Պոլիս առ Միքայէլ կայսր, և նոյնպէս «շատ ջանիւ և մեծամեծ գանձիւ» բերաւ մասն ի սրբոյ խաչէն. և տաճարին շինութիւնն կատարելով՝ կանգնեց «զնշանն յուսոյ ի պատկ հարսին Քրիստոսի». զոր և զարդարեց և հաստատեց շատ հողերով և կալուածներով, «ոսկւով և արծաթով և սկամբք պատուականօք... հին և նոր կտակարանօք»։ Զերկարենք նկարագիրն՝ մի առ մի յիշելով նուիրատուաց անուանք, միայն ըսենք որ եկեղեցիս նորոգուած է երկու երեք անգամ։ Նախ նորոգած են 1173ին, Տրդատ ամն քահանայ և իր խուշուշ երիցակինն, շինելով նաև «ժամատունն ամարանոյ և ձմերանոյ», որոնք այժմ չեն երևիր։ Երկրորդ 1291ին Շիրացի Մխիթար ամն, սա շինած է Զանկակատունն և կախեր է զանկակներ. և երբ կ'ըսէ «զվարձանէք ի ձայնից սորա՝ առացէք, Տէր Աստուած, ողորմեա Մխիթարայ և ծնողաց իւրոց». և այլն։ Ասկէ գրեթէ 50 տարի վերջ, ժԴ դարու կիսուն մօտերը (1342) և Անւոյ յետին ամայութենէն քիչ առաջ, Երկայնաբազուկ մեծին Զաքարիա սպասալարի ցեղէն ուրիշ Զաքարիայի մը թոռն՝ Աթաբէկ Վահրամ՝ Վասիլ անուամբ մէկու

մը ձեռօք նորոգեր է Ս. Փրկչի գմբէթը, ի յիշատակ իւր և նախնեացն։

Անւոյ արևելեան հարաւային ծայրը, Ախուրեան գետոյն քարափան մօտ կը գտնուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին՝ (Թ. 103) որ կոչուի նաև Վանք Ս. Գրիգորի (Թ. 104)։ Ասկէ գրեթէ 800 տարի առաջ, Տիգրան իշխանն յազգէ Հոնենց, երբ մեծն Զաքարիա կը նորոգէր զԱնի, անոր հաւանութեամբ ինքն ալ զանազան նորոգութիւն և շինութիւն ընելով, եկաւ նաև այս գետեզրս, ուր հնուց ուխտատեղւոյ պէս եկեղեցեակ մը կայ եղեր Մառաւե Աստուածածնին կոչուած, և վանք մի ևս յանուն Ս. Լուսաւորչի. բայց զանազան քաղաքական փոփոխութեանց պատճառաւ աւեր ամայի թողուած և լքուած։ Տիգրան կը գնէ զայն, ինչպէս կ'ըսէ, իր «հալալ գանձով ի հերէնախրանց. և բազում աշխատութեամբ և գանձով պարսպեցի շուրջանակի. շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Լուսաւորչին Գրիգորի, և զարդարեցի բազում զարդիւք», և այլն. և իր երկար արձանագրութեան նայելով՝ յիրաւի շատ և շատ տեսակ նուէրներ տուեր է եկեղեցւոյն և վանաց, զոր նոյնպէս ինքն նոր շիներ է, նաև բնակարաններ իշխանաց. որոց ամենուն հարուստ կալուածներ կարգեր է, գեղ, տուն, այգի, կրպակ, պարտէզ, փնդուկ, ջաղաց, միլ, և այլն, թէ՛ մօտ և թէ հեռու տեղեր. ուրիշ վանք մի ևս շինած է Բեխենց մականուանեալ, և զայն ալ Ս. Գրիգորի առաջնորդին հոգաբարձութեան յանձներ է։ Այս արձանագիրս գրած է յամի 1215, յետ կատարելու շինութիւնը զոր սկսած է Զաքարիայի օրով և անոր որդւոյն իշխանութեան ժամանակ աւարտած։ Այս թուականէն կը յայտնուի որ եկեղեցիս, Անւոյ միւս եկեղեցիներէն ամենէն վերջը շինուած է, և



108. Գաւիթ Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցւոյ։

այդ պատճառաւ, թէ՛ ներսն և թէ դուրսն խիստ լաւ և անկործան մնացած է։ Ձևով նման կաթուղիկէին, բայց անկէ փոքր երկայնաձև քառակուսի է, գրեթէ 14 մետր երկայն և 10մ լայն. ունի մէկ դուռ արևմտակողմը։ Ս. Լուսաւորիչը շինուած է նոյնպէս կարմիր, գորշ և սև քարերով և արտաքին պատերու տեսքը նման է կաթուղիկէին. բայց ասոր սիւները կրկնակ են, և կամարներու, լուսամուտներու շրջանակաց, գօտիներու և այլ մասանց վրայ փորուած գեղեցիկ և նուրբ քանդակներն կարելի է նախապէս համարել։ Արտաքին

որմոց սեանց վերնախարիսխներէն վեր գե֊ղեցիկ և խիստ բնական քանդակած են բա֊ղէներ, արծիւներ, աղաւնիներ, առիւծներ, վագրեր, խնձեր, և այլ տեսակ կենդանի֊ներ։ Եկեղեցւոյս մէջ չորս կիսասիւներ, որք միացած են իրարու հետ կամարնե֊րով՝ կ'ամբառնան գմբէթն, որ արտաքուստ բաժնուած է սիւնակներով 18 կամարակապ մասերու և ունի ութ լուսամուտ՝ նուրբ քանդակազարդ եզերքներով։ Խորանի երկու կողմն կան երկու նեղ և հաւասարաչափ աւանդատունք։ Ամբողջ եկեղեցւոյն ներքին մասը ծածկուած է կիսեղծ պատկերներով, ւիթս իր չափակցութեամբ, հոյակապու֊թեամբ և սեանց խարսխաց և պսակաց, ինչպէս նաև կամարաց նուրբ քանդակնե֊րով հայ ճարտարապետութեան սքանչելի գործ մ'է։ Գաւթի աջակողմը կայ մատուռ մը, նոյնպէս կործանած. բայց կամարներն կանգուն մնացեր են։ Գաւթի և մատրան ներսը կան քանի մը կիսեղծ պատկերներ։ Ս. Գր. Լուսաւորչի արձանագրութիւնք, որք թուով ութ են, փորուած են արտաքին որմոց վրայ, յորոց ամենաընդարձակը կը պատկանի եկեղեցիս շինող Տիգրանի, և է արեւմտեան պատի վրայ. միւս արձանա֊



109. Աւերակ եկեղեցի կաթողիկէի մօտ։

որոնց համար յայլազգեաց Նագըշլը–քիլիսէ կոչուած է։ Հաւանական է որ այդ պատ֊կերներէն մէկ մասն կանխաւ ի Հայոց նը֊կարուած ըլլան, և մէկ մասն ալ վերջերը Յունաց և Վրաց տիրապետութեան ժամա֊նակ. վասն զի շատերուն վրայ կան համառօտագիր յոյն և վրացի արձա֊նագրութիւնք։ Եկեղեցւոյս դրան կից և աջեր փոքրիկ և գեղեցիկ կամարակապ և սիւնազարդ գաւիթ մը կայ (Թ. 108). բայց կամարներու մեծ մասը և սիւնե֊րէն երկուքը կործաներ են, և կտորուանքը ցարդ կը տեսնուին գետնի վրայ։ Այս գա֊գրութիւններէն կը տեսնուի որ այլ և այլ անձինք զանազան նուէրներ ըրած են վան֊քին և անոր համար ջուր բերել տուած։ Որչափ որ Տիգրանայ գլխաւոր գործն՝ ե֊կեղեցին՝ անարատ մնացեր է, այնքան քովի ուրիշ շէնքերն, որք էին վանականաց և իշխանաց բնակարանք, բոլորովին կոր֊ծաներ, աւրուեր և եկեղեցւոյն քով բլրի պէս դիզուեր են, մանաւանդ հիւսիսային կողմը։ Արեւելեան կողմն կ'երեւան քաղաքին գետնայարկը կամ՝ ստորերկրեայն տանող կամարակապին մնացորդքն. և երկու կողմը՝ քարակտուր աստիճաններով ճանապարհ մը

կայ կամարակապ գոցուած, որ կ՚երթայ մինչև Ախուրեանի կոտրած կամուրջը։ Այս ճանապարհի ծայրն կան աւերակ սենեակներ, և մօտը ժայռի վրայ զուտ կարմիր քարէ շինուած երկու գեղեցիկ մատուռներ, անզարդ և կանգուն մնացած։ Արձանագրութիւնք կը պակսին, բայց աւանդութիւնը կ՚ըսէ, թէ թագուհւոյ մը համար շինուած են այս մատուռները, և մերձակայ աւերակ

կեղեցւոյս միմիայն միջի մասը այժմ մնացած է, մնացեալ մասանց փլատակները դիզուած են արեւելեան, արևմտեան և հիւսիսային կողմերը։ Զարդարուած է բազմաթիւ խաչարձաններով և հիանալի նուրբ քանդակներով. ունի չորս սեւաքար միթխարի սիւներ։ Ս. Առաքելոց եկեղեցւոյ նորօրինակ ձեն տեսնելով ոմանք՝ զայն համարած էր Նուշիրէվանայ թագաւորին խո-



110. Անւոյ աւերակներէն տեսարան մը։

սենեակներն ալ՝ անոր բնակարաններն են։

Ապուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցւոյն հիւսիս–արեւելեան կողմն է Ս. Առաքելոց եկեղեցին, քառակուսի խաչաձև, չափաւոր մեծութեամբ։ Նոր տեսակ ճարտարապետութեամբն կը տարբերի քաղաքիս միւս եկեղեցիներէն. գմբէթ չունի, բայց բարձր սագաշէն ձեղունով ծածկած է, լայն և աղեղնաձև կամարներու վրայ ձգուած։ Ե-

հակերոց, իսկ Պ. Պրոսէ՝ պալատ կոչած է։ Ներսը և դուրսը կան 14 հատ արձանագրութիւններ, գրեթէ բոլորն ալ անեղծ մնացած են, բաց ի մէկէն, որոյ կէսը քանդած հանած են։ Արձանագրութիւններէն մէկ քանին միայն ունին ազգային թուականներ, յորոց հնագոյնն գրուած է 1031 թուին. բայց դժբաղդաբար, այս արձանագրութիւններէն չեն յայտնուիր եկե-

ղեցւոյս շինողի անունը և տարեթիւը. այլ գրեթէ ամենուն բովանդակութիւնն զանազան նուիրատուութեանց կը վերաբերի, և ոմանք ևս այլ և այլ քաղաքական հարկաց

այնչափ հնութիւնն և բնութիւնն, որքան մարդկային բնութիւնն եղած կը թուի պատճառ այդ աւերմանց. վասն զի արևմտեան կողմը գետնէն վեր՝ ուր որ մարդու



111 · Պահլաւունեաց կամ Բագրատունեաց պալատան դուռն։

նուազեցնելն կամ դադրեցնելն կը յայտնեն։ Բազմաքանդակ և զարմանաշէն եկեղեցիս, շատ աւելի քայքայուած և աւերած է, քան մեզ ծանօթ միւս եկեղեցիք. ոչ

ձեռք հասեր է, հանած և կործանած են հրաշալի քանդակները. միւս կողմերն ևս մեծամեծ քարերէն շատերը հանած են, և շատերն ալ գետին ինկած խորտակած են։

Ա. Առաքելոց հիւսիսային կողմը կից կայ աւերակ մատուռ մը, որոյ աւերակներն վկայ են հոյակապ շինուածքի։ Ուրիշ մեծագոյն մատուռ մը կայ քաղաքի հարաւ–արեւելեան կողմը, որուն խորանի տեղը և պատերուն մի քանի մասերը կանգուն են. ուր կայ նաև թերատ արձանագիր մը։

Անւոյ բազմաթիւ եկեղեցիներու մէջ աւելի



112. Արքունի խորհրդարան կամ մզկիթ Անւոյ։

կանգուն մնացածներէն այս մի քանին յիշելով բաւականանանք, և անցնինք դիտելու նաև ուրիշ շինութիւնները։ Քաղաքիս մէջ եկեղեցիներէն զատ քիչ և ամենաքիչ շէնքի մնացորդ կայ. և այն տասնեկանման յիշեալ հազարաւոր ոսկէզօծ պալատներէն, կամ յետին պատմչի մը նմանցուցած օրիորդաձև և [illegible] և ոչ մէկ մը կանգուն մնացեր է։ Բայց Անւոյ արեւմտա–հիւսիսային անկիւնը, ճիշդ այն ահեղ քարափի գլուխը, որոյ ներքև Ծաղկոցաձորը երեք մասանց կը ճիւղաւորի, տարածուած են վիթխարի շինութեան մը աւեր, կիսակործան և թանձր պատերը և քանի մը կամարներ, շինուած պարզ և աշտարակաց նման գեղնագոյն քարերէ։ Ռամիկը այս շէնքը կը կոչէ Նուշիրէվանայ պալատ, իսկ հայ և եւրոպացի ճանապարհորդք կը համարին Պահլաւունեաց պալատը։ Ասոր պալատ լինելուն թէ և տարակոյս չկայ, բայց Պահլաւունեաց թէ այլոց, անկարելի է ստոյգ իմանալ, վասն զի արձանագրութիւնք կը պակսին և պատմութիւնն ևս կը լռէ։ Այս պալատի այժմ երեւցող մասանց

մէջ գլխաւորն կրնայ ըսուիլ արեւմտեան մասին վրայ եղած դուռն՝ (Թ. 111) որ կը նայի յարեւմուտս. և մեծութեամբն և մանրամասն քանդակօք և խաչաձեւօք, արդարև մեծագործ հոյակապ և զարմանալի է։ Երկու կարգ է դուռն, կամ երկու դուռ վրայէ վրայ. երկուքն ալ հաստատ քառակուսի ընդարձակ շրջապատ մ'ունելով, որք դեղին և սև քարերով շարուած են. վերինն՝ բոլոր քառակուսի քարերով, և անոնց անկեանց մէջ բարակ խաչեր. դրան բարաւորին վրայի կամարն ալ սրաձև դէպի վեր զարձած է։ Իսկ ստորին դրան չորս կողմը զարդարուած է աւելի գեղեցիկ խաչերով. իսկ դրան կամարն բոլորակ է։ Այս դրանց քանդակաց վրայ շատ հիացած են եւրոպացի ուղեւորք, մանաւանդ ասկէ 70 տարի առաջ տեսնողք, երբ աւելի շէն էր պալատն, և ըստ վկայութեան սոցա՝ բազմաթիւ էին սենեակք, բազմաթիւ խաչք և քանդակք, միով բանիւ անթիւ հարստութիւն զարդուց և դրուագաց։ Այս երկկարգ դռներն կ'իմացընեն որ պալատն ալ երկյարկ էր, և մինչև երեք յարկի ալ նշանք



113. Պահանորդաց տնակ (կարծուած)։

կ'երեւին, ստորերկրեայ ներքնատունէն զատ։ Քեր Փորթըր պալատիս քանդակաց համար կ'ըսէ «Այնպիսի սքանչելի բանուածքով զարդարուած է, որ անկարելի է ստորագրութեամբ հասկցընել այն ճարտարագործ քարերուն զարդուց զանազանութիւնը և հարստութիւնը, կամ այն բարակ բանուած միւսին ձեւերը, որոնցմով պալա-

տան անթիւ սրահներու յատակներն զեղեցկացած են»։ Այլ ափսոս որ երկար ժամանակի մէջ այդ ուղևորի նկարագրած գեղեցկութիւններէ, մեծաւ մասամբ, այժմ պալատս զրկուած է։ Պալատիս մեծագործութեան մի մեծ ապացոյց է նաև ներքնատունը կամ գետնայարկը, որ վրայի յարկէն աւելի վսեմ և ահաւոր է։ Հարաւային կողմէն դռնով մը կը մտնուի երկայն սրահի մը մէջ՝ որ բոլոր կամարակապ որմասեանց վրայ շինուած է, ու մէջը կան մեծ ու փոքր բարձր ու ցած սենեակներ, սրահներ ու նեղ ճամբաներ. յատուկ զարմանար այսպէս շինողաց պատկերքն կան, սակայն պժգալի թշնամութիւնն այս պատկերիս գըլուխն թռուցեր է, անոր համար չի գիտցուիր այս արձանի թագաւոր լինելն. բայց հաստատակաց աւանդութիւն է՝ թէ պարսպաց շինող Սմբատ Տիեզերակալին պատկերն է. զոր ոմանք կարծեցին թէ Անւոյ մանչին պատկերն ըլլայ, և թէ անոր համար գըլուխը կտրած և ձեռքը կրուած էր։ Գրեթէ 1845ին, կ՚ըսուի, թէ Ռուսք փոխադրած են զայս ի Փեթրպուրկ, կայսերական թանգարանը դնելու ուրիշ քանդակաց հետ։

Այս պալատան մօտ արեւմտակողմը,



114. Արքունի խորհրդարանին ներքին տեսքը։

ճամբայ մ՚ալ կը հանէ Ծաղկոցաձորի մէջ, որոյ յատակն և պատերը շատ աւրուած են։ Պալատան մնացորդաց մէջ նշանաւոր է դէպ յարեւելս դարձած սենեկաց մէկուն միջի՝ պատի կից քարեայ ջրի աւազանն՝ զմրեխտաձև խորշով, կարմիր ու սև քարերով և ծաղկաձև քանդակներով զարդարուած։ Ուրիշ յիշատակաց արժանի մնացորդ մ՚ալ կայ պալատիս հիւսիսակողմը, դրսի պատին վրայ, բնական մեծութեամբ մարդու բարձրաքանդակ մը, զինուորական հագած. ձեռաց մէջ շէնքին պատկերը բռնած, ինչպէս որ եկեղեցեաց ումանց վրայ կա

Ծաղկոցաձորի պարսպաց մօտ ... աւերակ մասուն մը փորուա... կարմրագոյն քարով, անոր քով կայ նա... ուրիշ փոքրագոյն վիմափոր մասուն ... Անւոյ գրեթէ կեդրոնը 100–150 ք... կաթուղիկէի արեւմտակողմը կայ ու... քառակուսի երկայնաձև շէնք մը (թ... 12), արտաքէ արեմուտք ձգուած. ... երկու կարգ երեք երեք կարճ ու ...ատ սիւներով՝ երեք թե բաժնուած ... որոցմէ կամարներ ձգուած են իրար... չորս կողմի 12 որմասեանց վրայ. ...վ կամարայարկ տեղ մ՚է, ոչ մի... նման և ոչ եկեղեցւոյ, և ոչ ալ

ժամատան՝ ինչպէս կարծուած ևս է, համարելով թէ արևմտեան կողմն եղած ըլլայ եկեղեցին, որուն հետքն չկայ։ Մեզ այնպէս կը թուի՝ որ ժամանակաւ եղած լինի արքունի խորհրդարան (թ. 114) և ապա փոխուած ի մզկիթ։ Ձեղունն և յատակն նորատեսիլ կերպարանք մ'ունին. գետինն 12 քառակուսի բաժնուած է քարերուն շարուածքով և սենեկու գիծքով. բայց ոչ մեծութեամբ իրարու հաւասար են, և ոչ քարերու շարքով, որոց պէսպէս դիրքն, մեծութիւնն և գոյնն այլևայլ ձևով միախառնեալ չկայ, ըստ մահմէտական օրինաց, բեմ կամ տեղի ընթերցման. այլ յատակին տակը կայ ներքնատուն կամարակապ և մէջէ մէջ դռներով։ Արտաքին որմոց վրայ կան արձանագրութիւններ, մին քուֆի գրով շատ թերի, գրուած է Մանուչէի ժամանակ 1072 թուականին։ Հիւսիսային կողմն ալ կայ երկայն պարսկերէն արձանագիր մը՝ իբր Էպուսայիտ Թաթարաց խանին անուամբ և հրամանաւ գրուած ծԴ դարու առաջին քառորդին, որով կը պատուիրէ քաղաքին վերակացուաց՝ չնեղել ըն-



115. Անւոյ միջնաշտարակն։

կամ ճաղաշճէր կ'ընծայեն, և ճարտար ձևեր կամ շարքեր ևս ունին։ Ձեղունն տեղ տեղ կլորակ է, տեղ տեղ ալ տափակ, մեծամեծ քարէ տախտակներով կցուած։ Արևելեան հիւսիսային անկեան քառակուսի միջոցը կանգնած է մինարէն՝ ութանկիւնի ձևով, 85 աստիճանով, սև ու կարմիր քարերով շինուած։ Արևելեան պատին վրայ կան մեծամեծ պատուհաններ, որ Ախուրեան գետի վրայ կը նային. արևմտեան պատին կէսն փլած է, մաս մ'ալ հիւսիսայնոյն. մնացածն բաւական շէն է։ Մէջը ժողովուրդը հարկապահանջութեամբ, և բաց ի բաժէ և կնքէ (տամղայ) ուրիշ բան չառնուլ, ինչպէս որ առաջ կ'առնուին. և անոր համար, կ'ըսէ, քաղաքացի և գաւառացի տանուտէրք (քէթխիւտաք) սկսեր էին թողուլ զԱնի և զՇիրակ՝ և երթալ յօտար աշխարհս։ Այս արձանագրութենէն վար կան երեք լեզուով մէկ մէկ տող արձանագրութիւնք. առաջի երկուքն՝ պարսկերէն և վրացերէն՝ կ'ըսեն. «Ես Զաքարիա Արարեկ որդի Ճաճգուցեալ . . . Ճատատեցի ի թուին 1258». իսկ երրորդն հայերէն և անթուա-

կան կ'ըսէ միայն. «Հաստատուն պահողքն ուրենին Աստուծոյ»: Այս հայերէն արձանագրութիւնն գրուած է նաև քաղաքի կեդրոնը գտնուող միւս ութանկիւնի մեծ աշտարակին (թ. 115) վրայ: Այդ մեծ և խորոխ աշտարակն, որ գրեթէ եօթն կամ ութ դար կանգուն մնացած էր, դեռ քիչ տարիներ առաջ քայքայած և յերկիր տապալած է, որուն մէկ բեկորն կը նշմարուի առաջիկայ (թ. 116) պատկերի մէջ:

Անւոյ հարաւային արեւմտեան կողմն 80 մետրի չափ բարձրութեամբ, եւ կճեալ վիթխարի քառակուսի ձեւով ժայռի մը գագաթը կը գտնուի Միջնաբերդն կամ Ներքին կլայն, որ ի Թրքաց կը կոչուի Իչ-գալէ: Արեւելեան կողմէն գրեթէ ուղղահայեաց դիրք ունի դէպի Ախուրեան ձորը, արեւմտեան կողմը որ կը նայի դէպի Ծաղկոցաձոր՝ աւելի զառիվայր է, մինչև պարիսպը, կանգնած խորդուփորդ ձորի գագաթը: Միջնաբերդի յատակն կը հաւասարի պարսպաց աշտարակներուն. պատերազմական տեղ մ'ըլլալով՝ ի հարկէ թշնամութեան աւելի նպատակ եղած և աւրուած է: Ամբողջ ժայռի գագաթը ծածկուած է փլատակաց շեղջերով, որոց մէջ 16 հատ քառակուսի մեծկակ միմեանց կից սենեակներու հիմքեր կ'երեւին: Ժայռի արեւելեան կողմը կանգուն մնացած է երկայն սրահ մը, որոյ ճակատը դէպ յարեւելս կը նայի և արեւմտեան կողմէն որ արդէն քանդուած է, հաւանականօրէն միացած լինելու էր վերջիշեալ սենեկաց հետ: Հ. Ալիշան միջնաբերդի մէջ գտնուող այս սրահն (թ. 117) որ անշուշտ Կամսարականաց կամ Բագրատունեաց ապարանից մէկ մասն էր, իր Նըշմարքի մէջ համարած է Պահլաւունեաց պալատի մի մասը, որ ընդհակառակն շատ հեռու կը գտնուի Միջնաբերդէն: Մեր պատկերի մէջ երեւցող արքայական խոյակքն այժմ չկան, չարաճճի ձեռքեր քանդած հանած են:

Միջնաբերդի մէջ, ժայռի արեւելեան կողքին, Ախուրեան ձորին գլուխը, կայ կիսաւեր փոքրիկ եկեղեցի մը կլորակ գմբէթով: Ուրիշ բոլորակ եկեղեցի մը կամ մատուռ կայ նոյնպէս միջնաբերդի հարաւային կողմը, որ միւս մատուռներէն կը զանազանուի, կամարաց անկիւններու մէջ զետեղուած կենդանեաց գլուխներու քանդակօք: Այլ եկեղեցեաց հետքեր և աւերակներ ես կը նշմարուին, բայց թէ՛ միջնաբերդն և թէ իր եկեղեցիք զուրկ են արձանագրութիւններէ:



116. Անւոյ մեծ աշտարակին բեկորը:

Միջնաբերդի աւերակաց մէջ գտած են և կը գտնեն շատ անգիր, և յունական, պարսկական և արաբական դրամներ:

Միջնաբերդի դիմաց և անկէ ալ վար, Անւոյ արեւ-հարաւային մասը, գետն արմըկաձև պատելով թերակղզեակ մը ձեւացուցած է, որ երկու ձորոց միջոց երկայնաձև քարաբլրոյ պէս բարձրացած է: Թերակղզւոյս վրայի շէնքերուն մէջ գլխաւորն է Կարմիր եկեղեցի (Գըզլ-քիլիսէ) ըսուածն,

ուր և վանք մը կար, համանօրէն և կատատան, Զաքարիա սպասալարէն շինուած կամ նորոգուած ԺԳ դարու սկիզբն, և իր Սահակադուխտ մօրը և քերց հոգւոյն ազօթելու տեղ սահմանուած, ինչպէս կը յայտնուի կիսեղծ արձանագրէն։ Կը կարծուի որ այստեղ եղած լինի հին հայկազնեան Անւոյ ամրոցն և կատաուճն, զոր Ս. Գրիգոր փոխեր է յեկեղեցի. և յետոյ տեղն ալ իր անուան նուիրուեր է։ Ս. Աստուածածնի վանք ևս կոչուած է այս եկեղեցին, որոյ արևմտեան կողմն կ'երևին ուրիշ շինուածի մը հետքեր, զոր իրեն գաւիթ կամ ժամատունը համարեցան քննողք։

տերը, իսկ արևմտեան պատի կէսը և բոլոր միւս մասերը քանդուած և աճապին շեղջակոյտ մը ձևացուցած են եկեղեցւոյ մէջ, յորում կը նշմարուին գեղեցիկ սիւներու և կամարաց մեծամեծ բեկորներ։

Քաղաքիս արևելեան հարաւային անկիւնը և Ս. Փրկիչ եկեղեցիէն դէպի հարաւ 100 քայլ հեռաւորութեան վրայ կայ երկայն քառակուսի աւերակ մը, որոյ տանիքը արդէն գետնի հաւասարած է։ Պրոսէ արքունական բաղանիք կ'անուանէ այս աւերակն, որոյ երկայնութիւնն է 18 մետր և լայնքն՝ 14մ։ Ներսը բաժնուած է հինգ բոլորակաձև գմբեթաւոր սենեկաց, մին մեծ՝



117. Միջնաբերդի մէջ ապարանից սրահ։

Հիւսիսային պատի լուսամուտի քով քանդակուած էր կարմիր քարեղէն տախտակ մը (Թ. 118) հինգ բոլորակներով՝ որոց մէջ կան հայերէն տառեր ծածկագրութեամբ։ Այս ծածկագիր տախտակի ընթերցման վրայ շատ աշխատեցան և գրեցին՝ Նիկողոս Զօրեան (Բազմավէպ, 1850, էջ 21–28), և ուրիշ մը կանխաւ (Հայաստանեան Օրագիր, Թիւ 146), որոց խօսքերէն, Պրոսէ թարգմանաբար գրած է իւր Անւոյ աւերակաց պատմութեան մէջ։ Վերոյիշեալ եկեղեցւոյ ձևն քառակուսի է, գրեթէ 11 մետր երկայն և 6½ լայն. անկիւնս մնացած են հարաւային և արևելեան պա-

մէջտեղը, և չորս փոքր՝ անկիւնները, և անոնց մէջ մեծ բոլորակին չորս կողմը՝ կան չորս քառակուսի փոքր սենեակներ. երկու մեծագոյն սենեակներ ևս կան հարաւակողմը պատով զատուած. այս բոլոր սենեակները իրարու հետ հաղորդուած են դռներով։ Բաղանիքի մեծ դուռն կը գտնուի արևմտակողմը. դեռ կ'երևին ջրոյն ծորակաց տեղեր. բայց գրեթէ բոլոր աւերուած են։

Արդ մինչև ցարդ, գլխաւորաբար հետևելով ուրիշ անթիւ ազբիւրներէ զատ, Պ. Յ. Գեղամեանի տեղագրութեան, և մանաւանդ Հ. Ալիշանի Նշմարքի Բ պրակին,

յորմէ շատ անգամ ամբողջապէս քաղե- ցինք, կը յուսամք, թէ բոլոր կանգուն մնացած և յիշատակաց արժանի շինուածոց վրայ, բաւական ընդարձակ գաղափար մը կազմեցինք։ Հարկաւ դեռ ապագային նո- րանոր քննութիւնք և հնագիտական պեղ- մանք շատ օգտակար տեղեկութիւնք պի- տի յայտնեն մեզ։ Մեր ցարդ նկարա- գրածներէն զատ, քաղաքին մէջ մնացած բոլոր շէնքերը, գետնի հաւասարած և կամ բլրակաձև դիզուած մնացած են։ Աւերակ- ներէն կը տեսնուի՝ որ տանց ձևերը ընդ- հանրապէս քառակուսի են և փոքր։ Փո- ղոցները նեղ և անկանոն, որոց շատերու




118. Արձանաքանդակ Ս. Աստուածածնի վանից։

անուանք կը յիշուին արձանագրութեանց մէջ, ինչպէս՝ Դարբնոց, Վերին փողոց, Ներքին փողոց, Զարիճայ փողոց, Յանո- քային փողոց, Բոշն փողոց, Սառայ փո- ղոց, Փողոցկտէր, և այլն։ Փողոց բառի տեղ գործածած են երբեմն նաև զուկակ՝ որ է Թուրքերէն սոգագ բառը։ Կը յիշուին նաև արուեստանոցաց և վաճառուց շէնքեր. չեն յիշուիր կարաւանատունք կամ իջևանք և անկելանոցք, այլ Փնդուկք (Ֆօնտուզք ըստ Արաբաց), որ կը նշանակեն իջևաններ և միանգամայն վաճառականաց մթերանոցներ։ Իսկ յիշատակուած գործարանք կամ ա- րուեստանոցներն և արուեստներն, որոց ա- ռանձին թաղեր կային, են՝ Կօշկակարոց, Դարբնոց փողոց, Բազզնոց (կերպասա- գործք), Նալպանըղնոց, Գոտակարոց, Ներ- կարարք, Լարարարք, Ջիրաճանք, Ջա- ղացք, և այլն։ Անւոյ ծանօթ Ծաղկոցա- ձորէն և Գայլեձորէն զատ, կը յիշուին նաև հետևեալ ձորերը. Իգաձոր, Բովաձոր, Կար- մրնջի ձոր կամ Արեգյանց։ Անւոյ քննողք միասանց մէկն ալ է Ծաղկոցաձորն, որուն երկու զառիվար երեսներուն վրայ, խճա- խառն կակուղ քարերու մէջ փորած են ան- թիւ մեծ և փոքր զանազան ձևերով կըր- պակներ. ոմանք պատուհան չունին, ո- մանք ալ մէկ կամ երկուքէն. շատ տեղ երկու կարգ են այս խանութները։ Վարի կարգի մուտք տեղերը գոցուած են, և վերիններն ալ մտնելը շատ դժուար է. շատերուն մէջ կ'երևան զարդեր ու խորշեր, բայց ամէնն ալ բնութենէ և հնու- թենէ աւրուած են։ Ներկայ պատկերս (թ. 119) որ կը ներկայացնէ վիմափոր գերեզմաններ, կը թուի թէ այս ձորին կը վերաբերի, և կամ Անւոյ մի ուրիշ մասին։ Անւոյ արձանագրութիւնները ուշադրութեամբ ընթերցողը կը տեսնէ, որ ժամանակ առ ժամանակ քաղաքին տիրապետող ազգերը, ունեցեր են իրենց ազդեցութիւնը ժողովըր- դեան վրայ։ Լեզուի մէջ անգամ մտած են շատ օտար բառեր, անուններ և ոճեր։ Բո- լոր արձանագրութիւնք երկաթագիր են և երբեմն ծաղկագարդ, որոց փորագրողն կը յիշուի Գէորգ անունով մէկը, որ շատ ար- ձանագրութեանց տակը կ'աւելցնէ «գրիչ Գէորգ յիշեցէք» և կամ լոկ «գրիչ Գէ- որգ»։ Քաղաքին մէջ կը բուսնի ընդհանու- րապէս վայրենի բոյս մը, զոր Հայք վայ- րենի կանեփ՝ իսկ Թուրքերը չըր-չըր կ'ա- նուանեն. ուրիշ տեսակ բոյսեր գրեթէ չկան։ Աւերակաց մէջ գտնուող սովորական կեն- դանիներն են՝ խլուրդ, բզէզ, վայրենի կա- տու, ոզնի, դաշտամուկ, կաքաւ, աղաւնի և բազմաթիւ բուեր։

Անւոյ ամայանալուն ոչ միայն բնութիւնն այլ եւ առաւել շրջակայ այլազգաբնակ գիւ- ղերու բնակիչք պատճառ եղած են. երբ նա լքուած մնաց իր բնակիչներէն, մի և

նոյն ժամանակ նա ազատեցաւ թշնամեաց յարձակմունքներէն: Սակայն մօտակայ բնակիչք որ ասոր սկսան քանդել նորա ամէնէն գեղեցիկ և ճարտարաշէն տաճարները Անւոյ շինութեանց քարերով: Անւոյ այսչափ քարուքանդ եղած վիճակին տեսնելով, միշտ երախտագէտ պէտք է լինի Հայ ազգն Կարուց Գեր. Աղուանեան Գրիգորիս



119. Վիմափոր գերեզմաններ Ծաղկոցաձորի:

ները, իրենց տներ, գոմեր և բնակարաններ շինելու համար. այսպէս նաև Ծաղկոցաձորի մէջ բանջարներ ցանող Պարսիկները, շրջապատեր են իրենց բանջարանոցեպիսկոպոսին՝ որ իւր առաջնորդութեան օրով, յաջողեցաւ Ռուսաց բարեխնամ տէրութենէն հրաման ձեռք բերելու, և քանի մը հարիւր ռուբլի հաւաքելով Անւոյ Ս.

Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին և վանքը մաքրեց և մէջը պաշտօնեաներ հաստատեց, Աստուծոյ փառաբանութեան և այցելուաց առաջնորդութեան և առընջականութեան համար: Նոյն անձը մաքրեց նաև Մայր եկեղեցին և պահակատուն մը շինեց



120 · Անւոյ աւերակ տաճարի մը մնացորդ :

մեր նախնի մեծութեան այդ աւերակները պահելու համար: Քաղաքիս իշխեցող հայ թագաւորաց և իշխանաց, ինչպէս նաև հայրապետաց կարգն յիշելն և իւրաքանչիւրի գործոց վրայ տեղեկութիւն տալն համառօտութեան համար զանց կ'ընենք, փափաքողները կարող են գանել ընդարձակ տեղեկութիւն այդ մասին Շիրակի տեղագրութեան մէջ: Անւոյ մօտ է Հոռոմոսի վանքը և Բագրատունի թագաւորաց հանգստարանը, որուն նկարագիրն տես ի կարգին: Հին դարուց մէջ Անին այցելող մի քանի օտար ուղևորներէ զատ ժէ դարու մէջ (1655ին) առաջին անգամ քաղաքս կը յիշէ գաղղիացի վաճառականն և ճանապարհագիրն Թավերնիէ. անկէց զրեթէ 20 տարի վերջը ալ աղգային ոմն Պետրոս Պետիկ՝ որ իր լատիներէն զրուածքին մէջ կը նկարագրէ

զԱնի։ Տասը տարի վերջը 1694ին իտալացի բազմաշրջիկ գիտնական Ճէմէլլի, քաղաքիս մօտէն անցնելով հաւանօրէն կը նկարագրէ։ Ամբողջ ԺԸ. դարու մէջ, գրեթէ ամենեւին չի յիշուիր Անիին քննող և այցելող մէկը։ 1804ին այցելեցին Անի՝ Էջմիածնի կրկին միաբան Խաչատուր և Յովհան քահանայք, և տեսան 40ի չափ կանգուն և կիսականգուն եկեղեցիներ և ընդօրինակեցին բաւական արձանագրութիւններ։ Դարուս կիսուն մօտերը ուրիշ ազգային վարդապետներ ևս այցելելով տպագրութեամբ հրատարակեցին կարևոր տեղեկութիւններ։

Օտարազգի նշանաւոր քննողներէն է Քէր-Փօրթէր անգլիացին՝ 1817ին։ 1830էն վերջ բաւական անգլիացիներ եկան Անւոյ աւերակաց քննութեան, և նաև Մորիէ որ Այիշէ կամ Աղջիկն Ղարսայ վիպասանութեան մէջ կը յիշէ քաղաքս։ Ճարտար կերպով գրեց քաղաքիս աւերակաց և ճարտարապետական արուեստի վրայ Հէմիլթըն, որ 1836 տարւոյ յունիս 13ին քննեց։ 1837ին նաև ևս երեք այցելուներ ունեցաւ Անի. նախ մայիս 8ին մանրախոյզ բուսաբանին գերմանացին Քոխ, որ հոյակապ սեանց և զրուագաց վրայ հրաշացած կը գրէ, և որ Ախուրեանի ափանց վրայ գտաւ 20 տեսակի չափ բոյսեր և ծաղիկներ։ Երկու շաբաթ վերջը, մայիսի 20ին, Կարնէն եկաւ Էսպոր անգլիացին, և իսկ վերջը նոյեմբեր 4ին իր հայրենակիցն Ուիլպրէհէմ։ 1838ին եկաւ գաղղիացին Ե. Պօռէ, որ եօթն օր զբաղեցաւ արձանագրութիւններ օրինակելու և տեղն նկարագրելու, և երկրորդ տարին 1839ին Թէքսիէ ճարտարապետը, որ շատ շէնքերու պատկերներն նկարեց։ 1841–1851 տարիներու մէջ աւելի շատ և կարևոր քննութիւններ եղան յԱնի, թէ՛ յազգայնոց և թէ օտարներէ։ Հ. Ներսէս Վ. Սարգիսեան միաբան Ս. Ղազարու, 1845ին, Հոռոմոսի վանքէն սանդուղ բերելով և աչաց սուր տեսութեամբն չբաւականանալով՝ գործածեց նաև դիտակ և շատ աշխատութեամբ գաղափարեց այն բոլոր արձանագրութիւններն զորս կրցաւ տեսնել։ Շահնազարեան Կարապետ Վ. այցելեց 1848ին և Աբէլ Վ. Մխիթարեան 1850ին։ Մեծ երկրաբանն և կովկասեան գաւառաց բազմամեայ քննող գերմանացին Աբիխ 1844ին հանեց նաև քաղաքիս ձևը և մէջը եղած շէնքերուն տեղերը նշանակեց։ 1846ին եկաւ Մուրաւիէֆ. և իսկ երկու տարի վերջը 1848ին Ռուս զօրավարն Խանիքով։ 1850ին Փեթերսպուրկի Գիտութեանց ճեմարանն ղրկեց գերմանացին Քէսթնէր, որ շատ օրեր (6–17 օգոստ.) Անի մնալով, երկրորդ անգամ գծեց քաղաքի շրջապատի և յատակի ձև, և ընդօրինակեց եկեղեցիներու և այլ շինութեանց մնացորդաց շատերը, զորս 10 տարի վերջը (1860) Պրոսէ՝ գաղղիացի արևելագէտն, որ հմուտ էր նաև Հայոց և Վրաց լեզուներու, հրատարակեց վիմատիպ պատկերներով և կարևոր տեղեկութեամբք իւր Աւերակք Անւոյ (Les Ruines d'Ani) գրքին մէջ։ Վերջին պատերազմաց ժամանակ (1878), անգլիացի սպայն Քրէյ Հեռուէն կամ մօտէն հիացմամբ դիտելով Անին, 1880ին հրատարակեց՝ անոր իւր վրայ բրած տպաւորութիւնը։ Ուրիշ ճամբորդներու և քննողներու մէջէն մասնաւորապէս կը յիշուին երկու Ռուսք, Պուշչաշկին՝ որ հանած է քաղաքիս փոքրիկ յատակագիծը և նշանակած է 19 եկեղեցւոյ տեղեր, և Խոշտարաշէ՝ ոչ այնչափ ճշգրիտ։ Անւոյ վրայ լաւագոյն գրուած մ'ալ ճարտարապետական քննութեամբ հրատարակած է Ռուսն Կրիմ, որ անձամբ, վերոյիշեալ Քէսթներէն քիչ առաջ, չափած և գծագրած է քաղաքիս շէնքերէն շատերը։ Յետ այսչափ այցելուներ յիշելու աւելորդ կը համարինք դնել աստ նաև ուրիշ նորագոյն այցելուները, որոց գրուածոց մէջ, թերևս նոր գիտելիք մի ևս չգտնուի։ Միայն ըսենք, որ 1888ին անգլիացի գիտնական բանասէրն և հայագէտն Քօնիպիր՝ այցելելով քաղաքս, ըստ իր գրութեան, հանդիպած է կիկլոպեան մնացուածոց. և ուրիշ Ռուս հայագէտ մ'ալ Պ. Մառ՝ իւր շատ անգամ Անւոյ վրայ բրած հետազօտութեանց իբրև արդիւնք, վերջերս հրատարակեց պատմական և հնագիտական տեղեկութիւններ, որուն մէկ մասն թարգմանուած Հայերէն, հրատարա-

կուեցաւ Բազմավէպի 1899 տարւոյ պրակաց մէջ:

Ազգասիրական եռանդեամբ և ջանքով Պ. Յովհաննէս Քիւրքճեանն՝ լուսանկարած է քաղաքիս գրեթէ բոլոր մասերն և պարիսպներն, ինչպէս նաև ոչ սակաւ արձանագրութիւնք և քանդակք, այս լուսանկարներու թիւն 100ը կ'անցնի: Օտարազգի լուսանկարիչներ ևս հանած են քաղաքիս լուսատիպ պատկերները և տեսարանները: Անւոյ վրայ գրուած են Հայերէն ոչ սակաւ ոտանաւորներ, յորոց նորագոյններէն նշանաւոր են Հ. Ալիշանի «Անդորրանք Անւոյ» վերնագրով հարիւր տողով



121. Անկիւրիոյ տեսարան:

քերթուածն, և Ալեքսանդր Վ. Արարատեանի հանրածանօթ գիմանանական երգն, որ կ'սկսի.

Անի քաղաք նստեր կու լայ.
Զրկայ բոող՝ Մի՛ լա, մի՛ լա.
Կ'ըսեն քիչ է, բող մընայ լայ: Եւ այլն:

Քաղաքիս գրեթէ ամէն այցելուք, մատիտով, ածուխով կամ կաւճով գրած են աւերակ որմոց վրայ իրենց անունն ու ազգանունը և քանի մը ոտանաւոր տողեր: Այդ գրութիւնները միայն Հայերէն չեն, այլ և ռուսերէն, գաղղիերէն, գերմաներէն, անգլիերէն և թուրքերէն: — Զամչեան. Պատմ. Հայոց. Բ. 415, 837, 851, 872, 931–36, 978–82. Գ. 44, 79, 147, 213, 317, և այլն: Սարգր. Հին. Հայ. 417–427: Հնախօս. Հայ. Ա. 344. Բ. 49. Գ. 287, և այլն: Հ. Մինաս Բժշկ. Պատմութիւն Անոյ, 1830, տպ. Վենետիկ: Բազմավէպ, Գ. 324. Ե. 5: Հայաստան լրագիր, 1848–1849: Աբէլ Վ. Մխիթ. Ճանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1855: Ջալալեանց, Բ. 1–15: Հ. Ալիշան. Տեղագր. Հց. Մեծաց, 26–32: Նըշմարք Հայկականք, Բ. Պր: Շիրակ, 34–111: Տեղգ. ի Փ. և ի Մեծ Հայս, 103–143: Յով. Տէր Աբրահամեան. Տեղագրութիւն Անի քաղաքի հանդերձ տեսարանացոյց պատկերօք. Թէոդոսիա, 1867: Պ. Յ. Գեղամեան. Ախալցխայից մինչև Անի, փորձ. 1880, Գ. յաւելուած, 33–61. Զ. 50–96. Ը. 91–115: Եւ այլն:

ԱՆԻ. — Այլազգաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի Արևմտեան մասի մէջ, կէս մղոն Անի քաղաքէն հեռու՝ արևմտեան կողմը: Իր մէջ հնութիւն մը չկայ, այլ քաղաքին և իր մէջտեղը կան նահատակաց երկու գերեզմաններ, որք ըստ արձանագրաց, նահատակուած են ԺԴ դարու մէջ:

ԱՆԾՂՆԱՊԱՐ ՎԱՆՔ. — Վասպուրականի Ռշտունեաց գաւառի ուրիշ վանքերու հետ կը յիշէ և վանքս Վարդան աշխարհագիր:

ԱՆԿԱՃԱԼՈՒ ԽԱՉ. — Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ բլրակ մը կայ, զոգաւոր կամ ծակ քարով զոր նուիրական կը համարին և ականջացաւի բուժիչ:

ԱՆԿԱՆԻՍ. Տես ԱՆԿՆԻՍ:

ԱՆԿԱՆՔ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ:

ԱՆԿԵՂԱԿՈԹ. Տես ԱՆԳԵՂԱԿՈԹ:

ԱՆԿԻՒՐԻԱ կամ ԷՆԿԻՒՐԻԻ. Գղ. ANCYRE. կամ ANGORA. Թ. انقره. — Հնութեամբն և բազմադիմի դէպքերովն ի հնուց մինչև ցարդ երևելի հանդիսացած է քաղաքս, որ երբեմն մայրաքաղաք էր Գաղատիոյ, և այժմ գլխա-

ւոր և վաճառաշահ քաղաք համանուն վիլայէթի։ Ցայժմ հռչակ ունեցած է քաղաքս Փռիւգիոյ անկախութեան ժամանակ. հիմնարկութեան թուականն որոշ չի գիտցուիր, վասն զի, այս նկատմամբ մինչև ցարդ ծանօթ հին մատենագրաց տուած տեղեկութիւնք, համարուած են լոկ առասպելախառն աւանդութիւններ։ Պաւսանիաս կ'ըսէ, թէ Անկիւրիոյ հիմնադիրն եղած է Կորդիոսի որդին՝ Փռիւգիոյ Միդաս թագաւորը, որ այստեղ Արամազդայ համար կառուցանելիք տաճարի մը հիմն փորել տուած ժամանակ, գտաւ խարիսխ մը, և այդ պատճառաւ քաղաքս անուանեց է Խարիսխ (յն. Ἄγκυρα) որ բառ մեր հնչման եղեր է Անկիւրա և Անկիւրիա։ Ապողոնիոս կարիացի պատմագիրն ալ, այս խարիսխն կը համարի մին այն խարիսխներէն, զորս հին Գաղղիացիք կամ Կեղտք բերած էին, Պաղոմէոսէն գրկուած եգիպտական նաւատորմիղին դէմ իրենց ըրած յաղթութեան իբրև նշանակ։ Սակայն այս աւանդութիւնն առերծագործեալ կը թուի, որովհետև քաղաքս նոյն անունն ունէր նաև Մեծին Աղեքսանդրի ժամանակ, որ Անկիւրիոյ դիմացը եկաւ, Պափղագոնիացւոց պատգամաւորները ընդունելու համար։ Աւելորդ կը համարինք, յիշել աստ քաղաքիս ծագման մասին պատմուած ուրիշ զրոյցներ։

Հռովմէական տիրապետութենէն առաջ Անկիւրիա կառուցուած էր այժմեան բերդատեղւոյն վրայ. Հռովմայեցիք զայն ընդարձակեցին և բերդի պարիսպներն երկնցուցին մինչև դաշտը։ Պատմական անթիւ դէպքեր ունեցած է քաղաքս ի հնումն, որոնք մեզ հետ ուղղակի վերաբերութիւն չունենալուն, զանց կ'ընենք մանրամասն յիշելը։ Յովիանոս կայսրը Անկիւրիոյ մէջ առաւ կայսերական ծիրանի. իսկ Յուլիանոս հոն ընդունեցաւ մեծաշուք հանդէսներով։ Հերակլիանի կայսերութեան ժամանակ Խոսրով Պարսից թագաւորը քաղաքիս տիրեց. քանի մը տարի վերջն ալ Արաբացիք յարձակեցան, և ապա Գոնիայի Սելջուկեաններուն ձեռքն անցաւ։ Ըստ Խաչակրաց պատմութեան, առ ժամանակ մը Անտիոքայ Բոհեմոնդ իշխանն ևս տիրեց Անկիւրիոյ։ Յետ բազմատեսակ խառնակութեանց, զորս պատմութիւնն չէ կարողացած լիովին և ճշդութեամբ արձանագրել, քաղաքս նուաճուեցաւ Սուլթան Մուրատէն 1362ին։ Չըպուք—ուա դաշտի պատերազմով, 1402ին Պայազիտ յաղթուելով Լէնկթիմուրէն, Անկիւրիա քիչ մը ժամանակ մնաց Մոնղոլաց ձեռքը. բայց Մէհէմմէտ Ա. զայն շուտով վերստին գրաւեց և այնուհետև քաղաքս Օսմանցւոց ձեռքէն ելած չէ, բայց միայն 6 ամիս 1833ին, Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի փաշայի տիրապետութեան ժամանակ։

Անկիւրիա նշանաւոր է նաև իբրև քրիստոնեայ քաղաք. Ս. Պօղոս գնաց քարոզելու զԱւետարանն, անթիւ կուռքերով լի քաղաքիս մէջ, և քրիստոնէական ճշմարիտ կրօնքն հոն ունեցաւ իրեն աղանդաւորները։ Չորրորդ դարու առաջին կիսուն, Ս. Յուլիոս քահանայապետը, Անկիւրիոյ եկեղեցին առաքելական եկեղեցեաց կարգը դասեց. աստ գումարուած են շատ ժողովներ, յորոց ոմանց կանոնքն ևս հասած են ձեռքերնիս։

Այժմեան քաղաքն հեռուէն հիանալի և նկարչական դիրք ունի, ամփիթէատրոնի ձևով տարածուած է, 120 մետր դաշտէն և 920մ ծովու մակերևութէն բարձր բլրոյ մը՝ արևելեան, հարաւային և արևմտեան կողմերը, որոյ գագաթան վրայ հանգչած է մեծատարած և եռապարիսպ բերդը։ Բոլոր պարիսպները քարակերտ են, որք ոչ այնչափ մեծագործութեամբ, որչափ բարձրութեամբ և աշտարակներով վեհ կ'երևան։ Հիւսիսային ծայրն՝ որ կը կոչուի Աք—գուլէ (Սպիտակ աշտարակ), ամենէն բարձր կէտն է և արտաքուստ սեպացած գահավայր ապառաժին ահաւոր տեսարան մը կ'ընծայէ։ Արտաքին պարիսպը շատ տեղ կիսով չափ կործանուած և ի վերջոյ մասամբ մը նորոգուած է Մէհէմմէտ Ալիէն. նորոգութեան համար գործածած են հին յիշատակարանաց բեկորներ՝ յունական և հռովմէական արձանագրութիւններով։ Բերդի դրանց անուններն են. Հիսար գափու, Իչ հիսար գափու, Տէմիր գափու, Արպազար գափու. այս դռներէն երկուքն, հոյակապ յիշատակարաններ են հին դարուց։ Իչ հիսար դրան վրայ կայ յունարէն արձանագրութիւն. նոյն դրան մօտ կան քանի մը բարձրաքանդակներ, հորիզոնաձև ագուցուած պարսպին մէջ։ Աթպազար դրան

մօտ և Աքզուլէի մէջ կան առիւծներու արձաններ, որոնք յունական արուեստի հիանալի գործ կը թուին։ Քաղաքին միջնաբերդէն զատ, ուր այժմ վառօդ կը պահեն, Անկիւրիոյ բոլոր միւս ամրութիւններն և պարիսպներն խարխուլ և աւերեալ վիճակի մէջ կը գտնուին. Հին բերդի շատ մասերը գործածուած են իբրեւ հիմունք ի վերջոյ կառուցուած տներու։ Այժմ քաղաքն դեռ աւելի ընդարձակուած է և շէնքեր կառուցուած են մինչեւ միջնաբերդը շրջապատող պարսպի քովերը։



122. Անկիւրիոյ հայկական թաղի մէկ մասը։

Անկիւրիոյ հնութեանց մէջ առաջինն կը համարուի հռչակաւոր Օգոստոսի տաճարը, որ ոչ միայն դեռ մասամբ կանգուն մնացած որմոց սրբատաշ և հաստաբաշխ մարմարեան քարերով, ճարտարապետական ձեւով և զարդերով, այլ և ընդարձակ արձանագրութիւններովը, յոյժ հետաքրքրական և թանկագին մնացորդ մ'է հնութեանց յաչս հնախօսից և պատմաբանից։ Թուրքք այս տաճարին Հաճի Պէյրամ անունը կու տան, մերձակայ համանուն մզկիթի անուամբ, որոյ մէջ է Հաճի Պէյրամի շիրիմը կամ գագաղը։ Հին արձաններ, խոյակներ, սիւներ և այլ հնութեանց մնացորդներ կը գըտնուին քաղաքին զանազան կողմերը։ Միջնաբերդին մէջ կայ երկաթէ դուռ մը, ուսկից 700 աստիճաններով գետնափոր սանդղով մը կ'իջնուի բլրան ստորոտը, ուսկից կը վազէ Անկիւրիոյ գետակը, և անկէց ալ գետակի տակէն անցնելով ուրիշ անվերջանալի սանդղով մ'ալ կ'ելնուի դիմացի բլրան վրայ։ Քաղաքացիք բերդէն մինչեւ գետակը տանող գետնափորը կ'անուանեն Սուլուք, որ անշուշտ պաշարման ժամանակ գետակէն ջուր առնելու կը ծառայէր. իսկ դիմացի բլրան վրայ ծածուկ ճանապարհով կ'ելնէին զթշնամին դիտելու համար։ Տիքիլի թաշ կը կոչուի բերդէն դուրս գտնուող բոլորշի բայց ոչ միակտուր քար մը, քառակուսի պատուանդանով, որոյ վրայ, ըստ ծերոց, ի

հնումն կար լատին արձանագրութիւն։ Քաղաքէն դուրս Թրքաց գոմերու մօտ կայ անծանօթ հին աւերակ մը Եօղուշ տաշլար կոչուած. ստուար որմոց զանազան մասունք են, որոց մէջ կայ կամարակապ ճանապարհ և ջրոյ ազուգաներ. ըստ ոմանց բաղնիք կը համարուի։ Ալաճախանէ կը կոչուի ի հնուց մնացած գազանամարտի վայրը, որ կը գտնուի բերդէն դուրս. ունի քարակերտ ամուր սենեակներ, որոնք տեղ տեղ աւերած են և ի վերջոյ հին շէնքերուն հետ միացուցած կառուցած են նոր սենեակներ, և կը գործածուին իբրև ընթերցարան մոլլայից։ Այս տեղ շատ են հին արձանագրութիւնք, սակայն մեծաւ մասամբ խանգարուած։

Անկիւրիա որչափ որ ի հեռուստ հրապուրիչ երեւոյթ մ'ունի, այնչափ ալ տխուր է իր տեսքն ի մօտոյ, բաց ի քանի մը նորոգ կառուցուած սպիտակագոյն շէնքերէ և մինարէներով մզկիթներէ, մնացած ամբողջութիւնն, այրուած քաղաքի մը նմանութիւն ունի. փողոցներն նեղ են, աղտոտ և ծուռ ու մուռ. տներն ընդհանրապէս շինուած են՝ արեւու տակ չորցած յարդախառն շաղախով և այդ պատճառաւ սեւ ու տխուր տեսք ունին։ Քաղաքս այժմ ունի առատ ըմպելի ջուր, զոր ջրանցքներով բերած են, 20 հազարամետր հեռուէն վազող Էլմա-տաղ վտակէն. 1890 տարւոյ ապրիլի 25ին այդ նոր ջրանցքներու բացման առթիւ քաղաքական մեծ հանդէս կատարեցին։

Դարուս (ԺԹ) սկիզբը Անկիւրիոյ բնակչաց թիւն կը հասնէր 40էն 50000ի, իսկ այժմ վերջին վիճակագրութեանց համեմատ ունի 30էն 35000 բնակիչ։ Մեծամասնութիւնը կը կազմեն Թուրքք, որոնք մեծաւ մասամբ կը զբաղին պետական գործերով, կան նաեւ երկրագործք և անասնադարմանք, ինչպէս նաեւ արհեստաւորք։ Ունին 18 մզկիթ՝ շատերը աւերակ վիճակի մէջ, քաղաքի մօտ երկու զինուորանոց մին հեծելազօրաց, միւսն հետեւակաց, այժմ կը կառուցանեն նաեւ ընդարձակ հիւանդանոց մը, ամէն ազգաց աղքատաց համար։ Բազմութեան կողմանէ երկրորդ կու գան Հայ կաթուղիկեայք, որոց թիւն կը համարուի 9000էն 10000, և 1850 Թուականէն ի վեր ունեցած են եպիսկոպոս առաջնորդներ, որոց մէջ իր վարուքն և գործոք հռչակաւոր հանգիստացած է Գեր. Անտոն Ճիշմանեան (1850–1862), որուն դամբանն կը գտնուի մայր եկեղեցւոյ աւագ խորանի կռնակը և ունի արձանագրութիւն։ Նոյն բազմավաստակ եպիսկոպոսի օրով բացուած կղերանոցն այժմ փակուած կը մնայ։ 1861ին Գէորգ Փէրոյ գաղղիացի ուղեւորն, մեծ գովեստիւք կը խօսի կղերանոցին վրայ, յորում կանոնաւոր դասախօսութիւնք կ'ըլլային զանազան լեզուաց, և որուն աշակերտք առաջինն եղան ամբողջ քաղաքի հայ հասարակութեան մէջ հայերէն լեզուն մշակողն և խօսողն, վասն զի մինչեւ նոյն ժամանակ Անկիւրիոյ բոլոր Հայք կը խօսէին միայն թուրքերէն։ Ունին չորս եկեղեցի, Ս. Աստուածածին՝ է մայր եկեղեցին, որոյ մօտ կը գտնուի վայելուչ առաջնորդարանը. միւս եկեղեցիներն են Ս. Կղեմէս, Փրկիչ և Ս. Պետրոս Պօղոս։ Այս եկեղեցեաց ոմանց մօտ կը գտնուին տարրական դպրոցներ. կանխաւ կար նաեւ գաղղիացի Եւգինէոս Պօրէն հաստատուած լեզուաց դպրոց մը։ 1883–84 տարիներու մէջ արժանընտիր Յովսէփ Գըրմըզեան քահանայի ջանիւք բացուեցաւ Սըրտին Յիսուսի կամ Քառասնից կոչուած վարժարան մը, որ այժմ փակուած է, և որուն ի մօտոյ բացուիլն կը մաղթենք։ Գեր. Յովհաննիսեանի (1887–1899) առաջնորդութեան ժամանակ, Անկիւրիոյ մէջ հաստատեցան գաղղիացի Քրիստոնէից դպրոցաց Եղբարք, և այս պատճառաւ միւս դըպրոցներն գոցուեցան և բացուեցաւ միայն այդ գաղղիացւոց դպրոցն, որուն վրայ շատ ափսոս մնաց ժողովրդեան մեծ մասն, որոնք կ'ուզէին զատ ազգային վարժարաններ ունենալ, և իրենց նախնեաց լեզուն ուսուցանել սերնդոց։ Անկիւրիոյ մէջ գտնուող ձեռներէց անձանց և գիտուն հոգեւորականաց ջանիւք կը յուսացուի, որ ի մօտոյ բացուին վերստին ազգային վարժարաններ։ Հոս հաստատուած են նաեւ հայազգի Քորք Անարատ Յղութեան, որք կը զբաղին աղջկանց դաստիարակութեամբ։ Կաթուղիկեայ Հայք մեծաւ մասամբ հարուստ են, և աղքատք սակաւթիւ. ունին մօտ 30–40 քահանաներ, զորս մեծապէս կը յարգեն ու կը պատուեն։

Լուսաւորչական Հայք խառն կը բնակին առանձին թաղի մէջ, կաթողիկեայ Հայոց հետ միասին, որոց թիւն կը համարուի 3000, մեծամասնութիւնը աղքատ են և հարուստք սակաւաթիւ: Ի հնումն աւելի բազմաթիւ եղած են և ունէին եօթը եկեղեցիներ որոց անուանք են. Ս. Նշան, Ս. Սարգիս, Ս. Ստեփաննոս, Ս. Կղեմէս կամ Ս. Խաչ, Ս. Լուսաւորիչ, Քառասուն մանկունք և Ս. Հոգի: Այժմ այս եկեղեցիներէն երեքը միայն կայ, իսկ միւս չորսէն ոմանք հիմնայատակ եղած են և իրենց նախկին պայծառութեան հազիւ աղօտ նշմարանք մը թողուցած, և ոմանք կաթողիկեայ Հայոց ձեռքն անցած: Վերոյիշեալ երեք եկեղեցիներէն ալ միայն երկուքը կը գործածուին,



123. Անկիւրիոյ Ս. Աստուածածնի վանքը:

Ս. Նշան՝ որ բաւական արծաթեղէն անօթներ ունի, և Ս. Խաչ՝ որ կառուցուած է բերդի մէջ: Այս եկեղեցւոյս արեւմտեան կողմը գտնուելով Ս. Կղեմայ հայրապետի գերեզմանը, կաթողիկէ Հայք եւս կը յաճախեն ուխտի. սոյն գերեզմանի վրայ գեղեցկաշէն գմբէթ մը կայ և շրջապատուած է երկաթեայ գեղեցիկ վանդակներով. հոն կան նաեւ ուրիշ սրբոց գերեզմաններ:

Լուսաւորչական Հայոց սեփականութիւն է, Անկիւրիոյ հիւսիսային կողմը՝ գրեթէ կէս ժամ հեռու դաշտի մէջ գտնուող Ս. Աստուածածնի (Թիւ 123) վանքը, յորում կը նստի քաղաքին առաջնորդը, երկու կամ երեք վարդապետներով: Ունի 24 սենեակ և երեք դուռ, մին ուխտաւորաց, ուրիշ մը միաբանից և երրորդ մը ուխտաւորաց և արջառոց համար: Բոլորշի և գմբէթաւոր եկեղեցին հիմնուած կը համարուի Ս. Պօղոս առաքեալէն, կամ լաւ եւս ոմանց բանին համեմատ, ի հնումն մեհեան եղած է, զոր սուրբ առաքեալը սրբեր և օծեր է տաճար Աստուծոյ. և այդ կարծիքը հաւանական եւս է, վասն զի գմբէթը խորշ խորշ յօրինուած է, կուռ արձաններու համար: Բայց ինչպէս որ ալ ըլլայ, տաճարս ոչ այնչափ մեծագործութեամբ որչափ հնութեամբն պատկառելի է: Ունի հինգ խորան, արեւելեան կողմն է աւագ խորանը, և անոր աջ ու ձախ կողմերը երկերկու խորան: Աւագ խորանը որ եկեղեցւոյ յատակէն 1,20 մետր բարձր է, շինուած է ամբողջապէս Կուտինայի ապակի և կապոյտ խեցիով, ինչպէս նաեւ պատերն և յատակը, որոնց շինութեան թուականն ըստ Հէճիրէի 1174 (= 1758) փորագրուած է սեան մը վրայ: Եկեղեցւոյ մէջ, ինչպէս նաեւ գաւիթը կը գտնուին բաւական թուով պատկերներ իտալացի և անգղացի հեղինակներէ նկարուած: Իտալական նկարներէն միոյն վրայ կայ իտալերէն յիշատակարան մը, 1774 թուականաւ և Հռոմ քաղաքին անունը: Այս պատկերներէն ոմանք, ըստ աւանդական քահանայից, բերուած են Հռոմէն: Վանուցս մէջ կայ բաւական ընդարձակ առաջնորդարան մը, որուն մէկ փոքրիկ սենեկին մէջ կը պահուին եկեղեցւոյ սուրբ անօթները, գաւազանները և ծանրագին զգեստները: Առաջնորդարանին մէջ կայ նաեւ թանգարան մը, հին և նոր գրքերու հաւաքածոյիւ մը: Վանքս ունի առատ եկամուտ, հաստատուն կալուածներ, արմտիք ցանելու արտեր, թթենւոյ և մրգեղինաց պարտէզներ և այգիներ. ունի նաեւ կովեր, եզներ և ոչխարներ. ասոնցմէ զատ ուխտաւորներէն ալ բաւական նուէրներ կու գան: Սակայն ցաւալի է ըսելն, թէ այսչափ առատ եկամուտներով հանդերձ, վանքն չունի ոչ կանոնաւոր դպրոց և ոչ գիտուն հոգեւորականներ պատրաստելու կղերանոց. միայն վերջին աղէտալի դէպքերէն հարկադրուած բացած են այժմ որբանոց մը: Անկիւրիոյ պարծանք և Միաբանութեանս բազմարդիւն և սրբակեաց անդամներէն մին՝ Հ.

 ԱՆԿԻՒՐԻԱ

Մկրտիչ Վ. Աւգերեան, իր Գեր. Սահմանս եղբօրմէն առնելով բերած է ի Ս. Ղազար Անկիւրիոյ Ս. Աստուածածնի վանաց ձեռագիր յիշատակագիր մը 152 էջերով։ Այս յիշատակագրի մեծ մասն բռնած են, նոյն վանաց նուիրատուաց անուանք և նուիրաց քանակն և նկարագիրն։ Պատմական և կարեւոր կտոր մ՚ալ կայ, որով կը յայտնուի, թէ, վանքս հաստատուն եղած է ամն ի Հայոց Տէր Ներսէս, զոր ապա Հայկական ՋԺԸ (= 1469) թուին, իւր հարազատ եղբայրը Տէր Նիկողայոս արքեպիսկոպոս՝ աւելի կարգաւորած և շէնցուցած է։ Թէեւ վանացս վրայ գրելու շատ նիւթ կայ, ուրնցմով մինչեւ անգամ կարելի է հատորիկ մը ձեւացնել, սակայն բառագրոյս ոճէն չշեղելով՝ այսչափով բաւականանանք։ — Անկիւրիոյ Հայոց սակաւաթիւ մասի մը մէջ մուտ գործած է բողոքականութիւնն, ասոնց թիւն հազիւ կը հասնի 150ի, որք ունին ժողովարան մը։

Քաղաքիս Յոյնք կը բնակին առանձին թաղի մէջ և կը հաշուուին 1600 հոգի. ունին երկու եկեղեցիներ, Ս. Գէորգ և Ս. Երրորդութիւն, և աղջկանց և տղայոց դպրոցներ, որոց շնորհիւ անցեալն մէջ իրենց կորսնցուցած մայրենի լեզուն՝ այժմ սկսած են վերստին ձեռք բերել. ընդհանրապէս վաճառականութեամբ կը զբաղին և նիւթական լաւ վիճակի մէջ կը գտնուին։ Իսկ Հրեայք 400 հոգի են առանձին թաղի մը մէջ, ունին Սինակոկ մը և մայրենի լեզունին կորսնցուցած չեն երբեք։

Որոշ չէ գիտցուիր թէ ո՞ր ժամանակին գաղթած և հաստատուած են աստ Հայք. բայց ըստ աւանդութեան կը կարծուի որ այս գաղութի մէկ մասն եկած է Պարսկահայաստանէն ԺԶրդ դարու առաջին քառորդին մէջ։ Թէեւ մէջերնին կրօնական բաժանմունք կան, սակայն իրենց բարքն, սովորութիւնք և ընդհանուր յատկութիւնք իրարմէ ամենեւին չեն տարբերիր։ Հեզահամբոյր են, համարձակ, հաստատամիտ, աշխատասէր և ամէն բանի աջողակ՝ մանաւանդ առեւտրոյ. որով քիչ ժամանակի մէջ շատ առաջ կ՚երթան և կը հարստանան, քաղաքէն աւելի օտարութեան մէջ։ Մեծամեծաց առջեւ արեւելեան անվեհեր համարձակութեամբ, յոյժ անուանի են Անկիւրացիք, որով իրենք զիրենք պատկառելի կ՚ընեն ծանր բարքովին և անշփոթ ու պատրաստ պատասխաններով։ Ժամանակաւ փաշայ մը վախնալով որ չըլլայ թէ ծածուկ քրիստոնեայք իրեն դէմ ապստամբին, խստիւ արգիլեր է հայ լեզուի գործածութիւնն, և անոր հետեւանք դեռ մինչեւ ցարդ հայերէնը տիրացած չէ տեղւոյս ազգայնոց մէջ, թէպէտեւ մեծ յառաջադիմութիւն կայ և նորանոր ջանքեր ալ պակաս չեն. որամիտ են և դիւրաւ կ՚ուսանին օտար լեզուներ։ Սաստիկ հետաքրքիր են, մանաւանդ կանայք, քաղաքն եկող գացող օտարականները գիտելու։ Շատ հիւրասէր են, և կը վշտանան եթէ չկարենան մէկը հիւրասիրել։ Ամառնային եղանակին և մանաւանդ կթոց ժամանակ, քաղաքէն դուրս գտնուող անուանի այգիները կ՚երթան և շատ օրեր հոն ուրախութեամբ և զուարճութեամբ կ՚անցնեն. իսկ ձմեռն սովորութիւն ունին գիշերները իրարու տուն այցելութեան կամ նստի (օթուրմա) երթալու։ Այցելուները կը պատուասիրուին նախ ծխախոտի գլանիկներով, որ վերջը եւս կը շարունակուի, յետոյ սեխի կուտով, որ շատ յարգի է Անկիւրիոյ մէջ և ամէն տուն անպատճառ պիտի գտնուի. վերջը կու գայ պատուական օղին. և ապա ազգի ազգի մրգեղէններ, խմորեղէնները և ուտելիքներ. վերջը, ուշ ժամանակ կը մեկնին տուներնին, կրկին զիրար հրաւիրելով նոյնպիսի զուարթ գիշերներ անցնելու։

Անկիւրիոյ արեւելեան և հիւսիսային կողմերն թրջելով կ՚անցնի համանուն գետակն, որոյ վրայ ձգուած են զանազան կամուրջներ, և յորոց նշանաւոր է մին քարաշէն։ Այս գետակս քաղաքէն հիւսիսային կողմէն քիչ մը անդ դէպ ի հարաւային արեւմուտք իջնելով՝ ապա կը շեղի արեւմտեան հիւսիս, կոչուելով Թապաղխանեայի գետակ, և կը թափի Զաքարիոյ գետոյն մէջ։ Քաղաքիս կառավարութեան պալատը նշանաւոր է մեծութեամբն, յորում թուրք լեզուի տպարան մի եւս կայ. շուկայն ձեւացած է երեք հազարի չափ խանութներէ. կան 12 բաղնիք, 21 խան, յորոց ոմանք խիստ հին. պէզէստէն

մը և գետակի վրայ բազմաթիւ ջրաղացներ։ Անկիւրիոյ շրջակայից և վիլայէթի բերքերն են. հռչակաւոր այծամազն, բուրդ, ոսկեակ գունով և քաղցր համով անուանի մեղր, ցորեն և ուրիշ արմտիք, խէժ, խաշխաշ, ապա-ժահրի (ճէհրի), խաղող, սանձ, խնձոր և ուրիշ տեսակ տեսակ գեղեցիկ և անուշահամ մրգե-ղէններ։ Կենդանիներէն անուանի են երկայն մազոտ այծերն, բրդոտ կատուներն և շներն։

Թէպէտ որ Անգղիացիք՝ Գլխոյ գաղթա-կանութեան կլիմային սկսան վարժեցնել Անկիւրիոյ այծերը, բաւական վնասեցաւ քա-ղաքիս վաճառականութիւնն, վասն զի իր գլխաւոր և հարստութեան աղբիւր վաճառքնե-րէն միայն արտածութիւնն շատ նուազեցաւ։ Սակայն այսուհանդերձ տակաւին շատ թուով կը գործածեն այս կենդանիներէն և ամէն տարի բաւական մասը մը կը գոյանայ։ Տարուան մէջ միջին հաշուով կ՚արտածուին հետևեալ նիւթերէն.

| | | |
|---|---|---|
| Կրօն կամ այծամազ | 1 500 000 | ֆրկ. |
| Բուրդ | 2 000 000 | » |
| Այծամազ հասարակ | 250 000 | » |
| Բամբակ | 60 000 | » |
| Գաղի խէժ | 180 000 | » |
| Դեղին հունտ | 600 000 | » |
| Ափիոն | 125 000 | » |
| Խաշխաշ | 40 000 | » |
| Բրինձ | 800 000 | » |
| Կարագ | 500 000 | » |
| Պտուղներ | 5 000 000 | » |
| Խաղող | 7 000 000 | » |

Կ՚արտածեն նաև ամէն տարի գրեթէ 100 000 ոչխար, 200 000 այծու մորթ, 20000 եզան մորթ։ Արմտեաց արտածու-թիւնն կը համարուի 4 000 000 քիլէ։ Պաշ-տօնական տեղեկութեան մը համեմատ 1893ին արտածուած է 12,500 000 ֆրան-կէն աւելի արժողութեամբ ապրանք։ Ներ-մուծուած ապրանքներու արժէքն աւելի ա-ւելի է. նիւթերն են, շաքար, սուրճ, բամ-բակեղէն և բրդեղէն լաթեղէնք, եւրոպական չուխայ, ֆէս, երկաթ, պղպեղ, զանազան մետաղք, քարիւղ, և այլն։ Անկիւրիոյ ա-րուեստական արտադրութեանց մէջ ժամա-նակաւ մեծ շահու դուռ էր սրօնի կամ թիֆթիկի պատրաստութիւնն, ինչպէս նաև տեղական գործուած շալիները. այս երկու արհեստներն ևս այժմ ինկած են։ Նշանաւոր է Անկիւրիոյ խճուղն (սուճուղ) և ապուխտն (պաստրմա). անուանի են նաև գինին և օղին։

Անկիւրիան այժմ սկսելով կապուիլ եր-կաթուղեաց գծերով Կ. Պոլսոյ և ուրիշ վա-ճառաշահ կեդրոններու հետ, իր վաճառակա-նական շարժումն ևս օր ըստ օրէ աւելնալու վրայ է. այս պատճառաւ կարելի է որ քաղաքն ևս զարգանայ և բարգաւաճի և մէկ խօսքով զարթնու իր արևելեան քաղաքաց յատուկ խորունկ քունէն։ Տփղիսաբնակ ռուս լուսա-նկարիչն Երմակով, լուսանկարած է Անկիւ-րիոյ 130էն աւելի տեսարաններն և բազմաթիւ հնութեանց լուսանկարները։ — Տեղեկագր. Գաղատիոյ, 1873, 1–78։ Տեղգր. Հայս. 48–52։ Քիէփ, Ա. 1867, էջ 257 և 247–284։ Բազմավէպ, 1899, էջ 27, 137, և այլն։

ԱՆԿՂ. Տես ԱՆԳՂ.։

ԱՆԿՆԻՍ կամ ԱՆԿԱՆԻՍ. — Յովհան Մամիկոնեան կը յիշէ Վէրին եւ Ներքին Անկնիս կրկին տեղեր ի Տարօն։

ԱՆԿՃՏԱՆ կամ ՀԱՆԿՃՏԱՆՔ. — Հին գիւղ Վասպուրականի Երուանդունիք գաւա-ռի, կը գրուի նաև (Տես) Անգշտանք։

ԱՆՀԱՆԳՍՏԻՑ ՎԱՆՔ. Տես ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔ։

ԱՆՁԱԽՁՈՐ կամ ԱՆՁԱՀԻՑ–ՁՈՐ. — Վասպուրականի գաւառներէն մին էր ի հնումն, կը գրուի նաև Անձախաձոր և Ըն-ծաճից–ձոր։ Այս գաւառ ըստ Թովմայի Արծրունւոյ կ՚աւարտի Պարսկահայոց Հեր քաղաքի սահմանաց մօտ։ Նոյն պատմիչը հետևեալ տողերով կը յայտնէ նաև գաւա-ռիս այսպէս կոչուելուն պատճառը. «Իսկ Անձահից–ձոր վասն այսր կոչեցին. բա-զում ունելով ինչս ի կոխակս բարձրաւան-դակս, և ի կիրճս նրբականս, ի զերձս և ի խոխոմս ձորայն ի թափս և ի բախս երկրին անբնակ մարդկան»։ Նշանաւոր է ձորոյս մէջ գտնուող Կոտոր բերդը, որոյ անուամբ կը կոչուի այժմեան Քոթուր վիճակը։

ԱՆՁԱՒ. — Փոքր գիւղ Վասպուրականի Աղբերանի (Բերկրի) գաւառի մէջ, Վանէն

ոչ այնչափ հեռու: — Այս անուամբ գիւղ մ'ալ կայ այժմեան Օլթիի գաւառի համանուն հասարակութեան մէջ. բնակիչք այլազգի են:

ԱՆՁԵՒԱՑԻՔ կամ ԱՆՁԱՒԱՑԻՔ. — Հին գաւառ Վասպուրականի՝ արեւմտեան հարաւային ծայրը: Կը թուի թէ սոյր գիրքն, բոլոր բնակչացը վրայ յարմարցուց Անձաւացիք անունն, վասն զի ամէն կողմը լի են անձաւներ, խորաձորեր, ծործորներ, եւ այլն. եւ ամբողջ գաւառն կը նմանի ամուր բերդի մը, եւ կամ թշնամիներէ խոյս տալու եւ ապաւինելու անմատոյց վայրի մը՝ ինչպէս կը յայտնեն մատենագիրք, յորոց ի մէջ բերենք Յովհան. կաթուղիկոսի՝ Ատովմայ Անձեւացեաց իշխանին համար բառը, թէ իր տէրութեան բնակիչները. «Ամրանայր ի գլուխ ամուր լերանց աշխարհին




124. Անտիոքեան դրամ Տիգրանայ Արշակունւոյ:

(Անձեւացեաց), ամրապահեալ գնալ ասնելով ի խորաձորս եւ ի խորխորակ վիհս փոսոց, եւ ի ծործորս լերանց»: Վաղարշակ թագաւորը գաւառին մէջ նախարարութիւն հաստատեց, որ ժամանակ մը եղաւ իրեն սահմանին իշխանութիւն. իսկ Ա. Սմբատ թագաւորի ժամանակ, նուաճուած էր, Թովմայի Արծրունւոյ գրածի համեմատ. «Ընդ ձեռամբ Վասպուրականի իշխանութեանն»: Արծրունի թագաւորաց ժամանակ երբեմն երբեմն տէրութիւն կոչուած է ինչպէս. «Յետ բազում յաղթին եւ պատերազմացն (կ'ըսէ Թ. Արծրունի՝ Գուրգէնի համար) եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն». եւ այս պատճառաւ, կամ Արծրունեաց արքայական ոմանց հոն նստելուն համար, երբեմն կոչուած է նաեւ թագաւորութիւն:

Շատ անգամ կը յիշատակուին գաւառին եպիսկոպոսներ. նախ Եղիշէի եւ Ղազարայ մէջ յիշուած Արտաշատու ժողովոյն եպիսկոպոսաց ստորագրութեանց մէջ, Եղբայր եպիսկոպոս Անձեւացեաց. եւ յետոյ նոյն պատմագիրներէն եւ Թ. Արծրունիէն կը յիշուի Շմաւոն եպիսկոպոս Անձաւացեաց: Նոյնպէս Գիրքի ժողովոյն եպիսկոպոսաց ստորագրութեանց մէջ կը յիշուի Գրիգոր եպիսկոպոս Անձեւացեաց: Բայց ամենէն աւելի երեւելի հանգուցեալ եւ փայլեցաւ Ժ. դարու մէջ սրբութեամբ եւ գրութեամբ, Ս. Գրիգոր Նարեկացւոյ հայրն՝ Խոսրով եպիսկոպոսն Անձեւացեաց: Գաւառին նշանաւոր ամրոցն էր Խարենացիէն եւ Արծրունեաց պատմչէն յիշուած Կանգուար բերդը: Հոս է նաեւ անուանի եւ հին ուխտատեղին Հոգւոց Վանք: Յայսմաւուրաց ոմանց մէջ, գաւառիս իբրեւ նոր անուն, գրուած Քարպաճ: Հին Անձեւացեաց գաւառին կը համապատասխանէ այժմեան Նոտուզ գաւառակը: — Սոփ. Հին Հայ. 196–199: Հնախօս. Հայ. Բ. 65, 166. Գ. 283:

ԱՆՁԻՏ կամ ԱՆԾԻՏ. Տես ՀԱՆՁԻԹ:

ԱՆՁԿԱՑՔ. Տես ՀԱԲԱՆԴ:

ԱՆՃԱՊՈՆՃՈՒՈՒԻ. Տես ԱԼՃԱՊՈՆՃՈՒԻ:

ԱՆՃԻՑ ԱՆԱՊԱՏ. — Կը յիշուի անապատ Սիւնեաց Գեղաքունիք գաւառի մէջ, եւ ունի Ս. Մինաս եկեղեցի մը, որուն 1670էն վարդանեցիք ընծայեր են աւետարան մը: Թերեւս նոյն ըլլայ անապատ Սիմոն կաթողիկոսի յիշած Վարդենեաց Անապատի հետ:

ԱՆՄԵՌ. — Հին գիւղ Սիւնեաց Սոդք գաւառի մէջ:

ԱՆՆԱ ՎԱՆՔ. — Փոքր գիւղ Վանայ հիւսիսակողմը, 150 բնակչօք. ունի Ս. Աստուածածին եկեղեցի մը:

ԱՆՆԷՖԷԼՏ. Տես ԱՆԷՖԷԼՏ:

ԱՆՈՒՇԱՎԱՆՔ. Տես ՃԱՀՈՒԿ:

ԱՆՈՒՇԱՒԱՆ. Տես ԱՂԱՀԷՃՔ:

ԱՆՋՐԴԻ. — Հայաբնակ գիւղ Արաբկերի. բնակիչք 800 հոգի: Ունին վարժարան մը եւ եկեղեցի մը Ս. Նշան:

ԱՆՏԻՈՔ կամ ԱՆԹԱՔԻԱ. Գղ. ANTIOCHE — Քաղաք Ասիական Տաճկաստանի (Ասորիք), Որոնդէս գետոյն վրայ. Հալէպի

արեւմտակողմը 95 հազարամեար հեռաւորութեամբ, եւ Միջերկրական ծովէն 25 հազարամեար հեռու։ Բնակիչք 25000 հոգի, յորոց գրեթէ 5000ը Հայք՝ կաթողիկէք եւ լուսաւորչականք, 4000 Յոյնք, 300 Հրեայք, եւ մնացածն Արաբք, Ասորիք, Թուրք, եւ այլն։ Հին ժամանակ քաղաքս կը կոչուէր Հռեբայթ, զոր վերստին կառոյց Անտիգոնոս, եւ ապա Սելեւկոս եւ կարգի դնելով եւ զարդարելով իւր որդւոյն անուամբ կոչեց Անտիոք Մեծ։ Գաղթական Յունաց, Ասիացւոց եւ Հրէից զարմանամբ՝




125. Անտիոքեան լատինագիր դրամ Լեւոնի։

այնչափ բարգաւաճեցաւ վաճառականութեամբ եւ ճոխութեամբ, մինչեւ կոչուեցաւ Թագուհի Արեւելից։ Հոս նախ Քրիստոսի հաւատացեալները կոչուեցան Քրիստոնեայք. եւ որովհետեւ նախ աստ հաստատեց Ս. Պետրոս իւր աթոռը՝ քաղաքիս պատրիարքութիւնը նախապատիւ եղաւ, եւ Թէոդոսի ժամանակ կոչուեցաւ Թէուպօլիս, այսինքն է Աստուածաքաղաք։ Պարսից Խօսրով թագաւորը քաղաքս կործանեց, եւ վերջը վերստին շինուեցաւ. անուանի է քաղաքիս առումն ի Խաչակրաց. շատ արիւնահեղ պատերազմներ եղած են աստ մօտ։

Քաղաքիս հետ վերաբերութիւն ունեցող օտար ազգաց պատմական դէպքերն աստանց յիշելու, ըսենք միայն, որ մեր քաջակորով Տիգրան Արշակունի թագաւորը 83 թուին Ն. Ք. քաղաքիս տիրեց. եւ ի յիշատակ իւր յաղթութեան մասնաւոր դրամ (Թ. 124) եւ կոխած է։ ԺԲ դարու մէջ ալ քաղաքիս բրինձներն խնամութիւն ունեցած են, մեր Կիլիկեան իշխանաց հետ։ Լեւոն Ա. մտադիր էր Անտիոքը միացնել Կիլիկիոյ հետ, սակայն չյաջողեցաւ. առաջին անգամ պաշարելով կ'առնու քաղաքս 1203 տարւոյ նոյեմբեր 11ին, եւ երեք օր վերջը նորէն կը թողու։ Երկրորդ անգամ 1206ին կը մտնէ Անտիոք եւ Ռուբէնը իշխան կը դնէ քաղաքին, Պրեմոնդ Դ՛ի տեղ, սակայն քիչ ատենէն վերստին Պրեմոնդ տիրացաւ Անտիոքայ։ 1212ին զինու զօրութեամբ Լեւոն զՌուբէն Անտիոք կը մտցնէ եւ քաղաքը կ'առնէ։ 1216ին երրորդ անգամ Լեւոն կ'առնու Անտիոքը, եւ մեծ փառքով Ռուբէնը կը հաստատէ բրինձ քաղաքին։ Այս բոլոր պատմութիւնը մանրամասն գրած է Հ. Ալիշան՝ Սիսուանի Լեւոն Մեծագործի նուիրուած մասին մէջ։ Լեւոնի մահէն վերջ, այլ եւ չենք տեսներ զԱնտիոք Հայ իշխանաց եւ կամ իրենց խնամիներու իշխանութեան մէջ, այլ օտարներ կը տիրեն անոր. իսկ 1516ին կ'անցնի Թուրքաց ձեռքը։

Անտիոք՝ որ ի հնումն բազմաթիւ պալատներով եւ հոյակապ շէնքերով կը պարծէր եւ մինչեւ անգամ կը հաւասարէր Հռովմայ՝ այժմ բոլորովին անշքացած է։ Գրեթէ միշտ 50 տարին անգամ մը երկրաշարժի վտանգներու ենթակայ կ'ըլլայ. 1872ին քաղաքիս կէսը աւերակ դարձաւ երկրաշարժէ։ Տակաւին կը մնան հին հաստակառոյց պարսպաց (Թ. 127) եւ ջրանցից աւերակներ։ Անուանի են ջերմուկները. վա-




126. Դրամ Ռուբենի Բրնձի Անտիոքայ։

ճառականութիւնն այնչափ ծաղկած չէ։ Հայրենիք է Անտիոք Ս. Ղուկասու եւ Ս. Յովհաննու Ոսկեբերանի. իր մէջ եղած են շատ ժողովքներ։

Անտիոքայ գաւառակին մէջ գտնուող գիւղերէն հեռաւորներուն մէջ, Պիրազ, Հաճի Հապապ, Եօղունճ Օլուք, Խըտըրբէկ, Քէպուսիի, կան 1200 տուն Հայք, որոնք գրաբարի ոճով հին հայերէն մը կը խօսին։

ԱՆՏԻՏԱՒՐՈՍ. — Տաւրոս լերան մէկ երկայն բազուկն է, որ կը ձգուի դէպի հիւսիսային արեւելք՝ փոքր Հայոց մէջ, եւ կը հասնի մինչեւ Պոնտոսի սահմանները։ Ըստ

խորենացւոյ ունի շատ հանքեր ոսկւոյ, արծաթի, պղնձի և երկաթի։

ԱՆՏՐԱՔ. — Այս անուամբ կրկին գիւղեր կը յիշուին Գուգարաց Թանգք գաւառի մէջ։

ԱՆՏՐԷԱ. — Հայաբնակ գիւղ Շապին Գարահիսարի. ունի գրեթէ 400 բնակիչք։

ԱՆՓԱՅՏ ԲԱՍԵՆ. Տես ԲԱՍԵՆ։

ԱՆՔՈՆԱ կամ ԱՆԿՈՆԱ. Իտ ANCONA — Ծովեզերեայ փայելչագեղ քաղաք և նաւահանգիստ Ադրիականի. որ թէպէտ ժամանակաւ Վենետկոյ և Ճենովայի հետ չկրցաւ մրցիլ վաճառականութեամբն, բայց անանցալ



127 · Անտիոք քաղաքի հին պարիսպները։

շատ վար ալ չմնաց։ Իտալական քաղաքաց շատերէն առաջ ասպնջական եղած է Հայ վաճառականաց և ուխտաւորաց, անշուշտ նաև վաճառականաց։ Քաղաքս ունի Հայ պաշտպան սուրբ մը, Ս. Լիբերիոս, որ կը թարգմանուի Ազատ. մեր պատմիչներէն ամենևին չյիշուած այս սրբազան անձնաւորութիւնն, ըստ ոմանց կը համարուի Հեթում թագաւորի որդին, և ըստ այլոց, դեռ աւելի հնագոյն Հայ թագաւորի մը կամ իշխանի որդի։ Ամէն տարի մայիսի 27ին, Անքոնացիք մեծ հանդիսով կը կատարեն սրբոյս տօնը։

Ս. Հեթմոյ թագաւորութեան ժամանակ սկսած են բնակիլ աստ Հայք, որոնք Վենետիկ նաւած ատեն կը հանդիպէին նաև



128. Հին արձան Անքոնայ։

այս նաւահանգիստ։ Նոյն դարուց սովորութեան համեմատ, քաղաքիս պարիսպներէն դուրս Բալամոյ կոչուած գրան մօտ տեղաւորուած էին Հայք՝ հաստատելով իրենց Հոգետունն Ս. Հոգի, ինչպէս կը կոչէ Ինոկենտ Դ քահանայապետը 1248ին, այն կոնդակի մէջ, որով թոյլ կու տայ եկեղեցի կառուցանել։ ԺԳ և ԺԴ դարուց մէջ աստ բնակող Հայոց վրայ տեղեկութիւնք կը պակսին, և ոչ իսկ կ'երևին, Մաղաքիա դպրի յիշած այն «բազում գերեզմանաքարք հայ գրով փորագրեցեալք»։ 1538ին Կղեմէս Է քահանայապետի հրամանաւ քաղաքիս պատուարաց և պարսպաց շինութեան ժամանակ, Հայոց հին հոգէտունք բոլորովին անյայտացեր է։ 1539ին իբրև մեծափարթամ վաճառական կը յիշուի ոմն Գէորգ որդի Մուրատայ, որ հրաման կ'առնու և քաղաքիս բնակիչ կը գրուի։ Նոյն հայազգին Գէորգ, Ս. Օգոստինոսի եկեղեցւոյն մէջ նկարել տուաւ, Պալոնիացի անուանի Յ. Փելլեկրինոյ Փելլեկրինի, ըստ այլոց Փրիմիթիչչիոյ՝ նկարչին Քրիստոսի Մկրտութեան մեծ և գեղեցիկ պատկեր մը. 1560ին ալ շատ ծախքով մայր եկեղեցւոյն աւագ խորանը շինեց, Քրիստոսի Յարութեան գաճեայ պատկերով, որոյ տեղ այժմ դրուած է նկարէն պատկեր, Ֆաւա պատկերահանէն նկարուած։

Նոյն ժամանակները (1549) Հռովմայ պետութեան յորդորներով, քաղաքիս վաճառականութիւնն բաւական ծաղկեցաւ, և պատմիչներէ յիշուած վաճառականաց կարգին մէջ կան նաև Հայք։ 1580ին կը յիշուի Հայոց գոզեց կամ գոնսոլ ոմն Հերոնիմ Թոմասեան։ Նոյն ժամանակները վաւերական դաշնագրութեամբ Հայոց ձեռքն անցաւ Ս. Անաստասիա եկեղեցին, յորում գրեթէ 200 տարի ազգային ծիսիւ կատարուած են աստուածային պաշտամունք։ 1584ին գլխաւոր վաճառականներէն մին Սիմոն Սինանեան նաւաբեկութեամբ մեռնելով, ինչքն կը գրաւէ զանգը. բայց Աբգարու տպագրողի Սուլթանշահ որդին՝ Հռովմէն գալով, զանգին ձեռքէն կ'առնու զայնս և կը սեփականէ վերոյիշեալ եկեղեցւոյն։ ԺԷ դարու սկիզբը (1626) կը յիշուի Հայ և պարսիկ վաճառականաց գալուստն յԱնքոնա։ Նոյն ժամանակները, Հայոց հոգէտան վերակացու կը յիշուի օտարազգի մը Բեռնարդ Զեզլեր։ 1655–61ի տարիները, քաղաքիս ինչպէս նաև Հռովմայ Հայոց եկեղեցիներու նորոգութեան դրամ հանգանակելու համար, փոխարքային հրամանաւ կը շրջէր Նէապօլսի մէջ ոմն՝ Տէր Վարդան որդի Հայրապետի։ Մինչև ԺԸ դարու վերջերը, նոյն Ս. Անաստասիա եկեղեցին կը գործածէին հայ երիցունք և քանի մը եպիսկոպոսներ, որոնք հոն կը կենային կամ կը հանդիպէին, յորոց էին և Գրիգոր Պասմաճի (1777), որ երբեմն պատրիարք էր ի Կ. Պօլիս, Ղազար Անմարմին եպիսկոպոս, ուր

և վախճանեցաւ 1783ին, և Միաբանող Հարց վերջինն իննամեան Հ. Թովմաս Խասվերտենց՝ † 1794։ Յետոյ Հայք այս եկեղեցին թողլով, իրենց բոլոր սպասներով փոխադրուած են Ս. Հերոնիմոսի եկեղեցին, զոր կոչեցին Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ։ 1766 թուին ազգային հաւատաւոր ոմանք Զմիւռնիայէն քաղաքս գալով, ուզեցին կուսատան հաստատել, և միաբանական կեանք կը վարէին Ս. Անաստասիայի եկեղեցատան մօտ, ուր և թաղուած են անոնցմէ երիցագոյնները։ Վերջը ուրիշ նորեր ևս գալով՝ 1780ին իրենց բնակութիւնն հաստատեցին Լորեթոյի մէջ, Տիրամօր հռչակաւոր ուխտատեղւոյն մօտ. ուսկից 1787ին փոխադրուեցան ի Քասթելֆիտարտոյ, և անկէց ալ 1838ին դարձան վերստին յԱնքոնա, և բնակեցան Հայոց հին և նոր եկեղեցեաց մօտ։ Հայազգի և հայրենասէր Գրիգոր Նուշի (Զըպղլագեան) լատինածէս կանոնիկոսի օգնականութեամբ 1848ին կանգնեցին կուսատան Ս. Բարզողիմէոսի եկեղեցւոյն մօտ՝ Ս. Լուսաւորչի անուամբ, և իրենք Հռիփսիմեանք կոչուեցան. բայց քիչ տարի վերջը (1859ին) կաթոլիկ Հայոց կաթողիկոսը զիրենք փոխադրեց ի Հռոմ։ 1872էն ի վեր ազգային ամէն շաւաւիղ ջնջուած կամ ցրուած է քաղաքէս. և յետին հոգևոր առաջնորդն հարկադրուելով մեկնիլ անտի՝ վեղարաւոր հարք ժառանգած են Հայոց վերջին եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ, յորում կայ նաև Ս. Հռիփսիմէ կոյսի յատուկ խորան, բայց դեռ քաղաքացիներէն շատերը Հայոց եկեղեցի կ՚անուանեն։ Յատուկ քննութեան պէտք կայ, և հաւանական է որ շատ ազգային յիշատակներ դուրս գան քաղաքիս դիւաններէն, եպիսկոպոսարանէն և ժողովրդապետական եկեղեցիներէն։ Անքոնայի մօտ հարաւակողմը գտնուող փոքրիկ Ռեքանաթի քաղաքին մէջ 1897ին բացուեցաւ Հայոց որբանոց մը, որոյ կրթութեան գործն յանձնուած է Վենետկոյ Մխիթարեանց Միաբանութեան։ — Սիսական, 452–454։

ԱՇԱՂԸ–ԿԷՏԻԿԼԷՐ. — Հայաբնակ գիւղ Կարսի, 400 բնակչօք։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՐԿԻՐ. Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԱՇԱՆ. — Քրդաբնակ գիւղ Ալաշկերտի, Խաչլուայ արևմտեան հիւսիսային կողմն. բն. 15 տուն։ Ամենապատուական ժախ կը բուսնի գիւղիս մօտերը. ժողովուրդը գարնան կը հաւաքէ, կը խաշէ, և աղջուր գնելով ձմեռուան համար կը պահէ. պահք աւուր ուտելիք է կողմանցս հայ գիւղացւոց համար։

ԱՇԱՆ. — Հայաբնակ գիւղ Արցախի Վարանդա գաւառի մէջ, Եմիշջան գիւղի արևմըտեան կողմը, ձորի մը հարաւահայեաց լանջի վրայ։ Բնակչաց թիւն է 556, որոց մէկ մասն եկած է Ջրաբերդէն. ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին։

ԱՇԱՐՈՒՆԻՔ. Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԱՇԳԱԼԱ կամ ԱՂԱՃԳԱԼԷ. — Գիւղ Կարնոյ արևմտակողմը, 8 ժամ հեռաւորութեամբ, կը գրուի նաև Աշխալա։ Բնակիչ 500 հոգի, յորոց 200ը Հայք։ Կողմանցս բնակչաց Ախալցխա գաղթելէն առաջ, գիւղս ունէր 103 տուն հայ։ Գիւղիս մօտ կայ բարձր և երկայնանիստ բլուր մը, որոյ վրայ ի հնումն ամրոց կար։ 1868ին այդ բլրէն քար մը փրթելով, կ՚ինկնայ աւանիս վրայ, և Առաքել անուանով հայու մը տան մէկ մասը կը կործանէ։ ԺԸ դարու առաջին քառորդին մէջ, աստ գտնուելով Գրիգոր անուն հայ ուղղափառ քահանայ, կը ծեծուի ի Հայոց, և մեր միաբանութենէն Հ. Յակոբ վարդապետը՝ կը զարմանէ. տարիներ վերջը հալածանաց ժամանակ կը բանտարկուի նոյն քահանան, և Հ. Յակոբը կ՚ազատէ, բայց այնչափ քաշած տառապանքներով տկարանալով կը վախճանի և կը թաղուի գիւղիս մէջ. կ՚ըսեն, թէ գերեզմանէն բժշկութիւնք կը լինին։

ԱՇԳԱԼԷ կամ ԱՇԽԱԼԻ. — Գեղեցկադիր հայաբնակ գիւղ Բագրեւանդայ Ալաշկերտի վիճակին, Երանոս գիւղի արևմտակողմը՝ կէս ժամ հեռու, դաշտի մէջ։ Աշխալի ի հնումն ունէր 300–500 տուն հայ բնակիչ, իսկ այժմ 14 տուն հայ և 100 տուն քուրդ, որ 15 այլ և այլ ցեղերէ կազմուած են, և հետզհետէ հաւաքուած են գիւղս։ Ասոր մօտերը կան աւերակներ, ինչպէս՝ Աղախալի, Մանուշենի, Դաշլի։

Ընտիր է ահագին ցորենը, և Հայք քրդերէն աւելի լաւ օգուտ կը քաղեն երկրագործութենէ։ Հին աւերակ եկեղեցին անխնամ մնալով՝ քրդերը մօտերը տներ շինած են, և զայն աղբանոց դարձնելով՝ հիմերն անգամ անհետացուցած են։ Նոյնպէս հին մեծ գերեզմանատան զարդարուն խաչքարերով քրդերը զարդարած են իրենց ախոռները, որով գերեզմանը զուրկ մնացած է ամէն հնութենէ։ — Բագրեւանդ, 147–151։

ԱՇԻԹԱ. — Վիճակ և աւան հին Կորճէից նահանգի Այգառք գաւառի մէջ։

ԱՇԻՆՈՍ ԱՄՐՈՑ. — Հին բերդս կը յիշուի Վասպուրականի Անձախիձոր գաւառի մէջ։

ԱՇԽԱԼԱ. Տես ԱՇԳԱԼԱ։

ԱՇԽԱԼԻ. Տես ԱՇԳԱԼԷ։

ԱՇԽԱՐ կամ ԱՇԽԱՐԱՊԱՏ. Տես ԱԳՇԱՐ։

ԱՇԽԱՐՀԱԲԵՐԴ. — Կը յիշէ անունս Թ. Արծրունի. «Եւ ինքն (Գուրգէն) անցեալ գնայր առ իշխանին ի յամուրն յԱշխարհաբերդն կոչեցեալ». կը կարծուի որ կ'ինկնար Սպերոյ կողմերը։

ԱՇԽԱՐՕՎԱ կամ ԱԳՇԱՐՕՎԱ. Տես ԱԳՇԱՐ։

ԱՇԿԱՆ. — Գիւղ Վանայ նահանգի այժմեան Նորդուզ գաւառակի մէջ։ Սակաւաթիւ են հայ բնակիչք, և ունին Ս. Յովհաննէս եկեղեցի մը։ — Այս անուամբ հայաբնակ գիւղ մ'ալ ունի Ջմշկածագ (Ծոփք), Ս. Գէորգ եկեղեցիով։

ԱՇՄՈՒՆԻՔ. Տես ԱՐՇԱՄՈՒՆԻՔ։

ԱՇՄՈՒՇԱՏ կամ ԱՐՇԱՄՈՒՇԱՏ. Յն. 'Αρσαμώσατα կամ 'Ασμώσατα. — Հին և հռչակաւոր քաղաքս յիշուած է ի պատմութեան, և այժմ իր որոշ դիրքն և աւերակաց վայրն անյայտ։ Հաւանական է որ կ'ինկնար Տուրուբերանի Արշամունիք գաւառի մէջ, և կամ Չորրորդ Հայոց մէջ, և շինուած է Արշամ թագաւորէն։ Մատթէոս Ուռհայեցին Արածանւոյ վրայ կը դնէ բերդաքաղաքս Աշմուշատ՝ Ճապաղջուրի մօտ։ Թէոփիլոս կայսրը իններորդ դարուն մէջ աւերեց Աշմուշատայ և Հանձիթայ սահմանները. իսկ ԺԱ դարուն Սասնոյ Թոռնիկ իշխանին ձեռքն էր քաղաքս, որ անկէ ելնելով ընդդէմ Փիլառտոսի 1073 թուին, մեծ յաղթութիւն ըրաւ Ալէլուայ դաշտի մէջ։ ԺԲ դարուն Հռոմկլայու ժողովոյն եպիսկոպոսաց ստորագրութեանց մէջ կը յիշուի տեղւոյս եպիսկոպոսը, Կիպրոսի եպիսկոպոսէն վերջ և Նփրկերտի եպիսկոպոսէն առաջ, Թէոդորոս եպիսկոպոս Աշմուշատայ։ Կը յուսանք որ ապագային նորանոր քննութեամբք, աւելի ընդարձակ և ճիշդ տեղեկութիւններ ստանանք հին քաղաքիս վրայ։

ԱՇՆԱԿ. — Հին անուանի աւան Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Թալին գիւղի արևելեան կողմը մէկ ժամ հեռաւորութեամբ, Արագածի հարաւային արևմըտեան ստորոտը, և համանուն Աշնակ լեռնակի հիւսիսակողմը։ Ի հնումն ձմերոց էր մեր Արշակունի թագաւորաց, զոր ուրացեալն Վասակ ուրիշ քաղաքաց և շինից հետ աւերեց հինգերորդ դարու մէջ. բայց տակաւին մեծ շէն էր մինչև ԺԱ դար։ Սամուէլ Անեցի 1162 թուին արկածը պատմած ժամանակ, հետևեալ կերպով կը յիշէ նաև աւանս. «Զմեծ աւանն զԱշնակ՝ այրեաց չարագլուխ Եյտկուզն, զոր ՍՊ (=2800) տուն դայրածն կամ Ր (=5000)»։ Աւանս որ ի հնումն ըստ աւանդութեան ունէր մինչև 12000 բնակիչ, այժմ ջրոյ նուազութեան պատճառաւ ունի միայն 70 տուն այլազգի։ Հայկական հնութեանց միակ յիշատակ կը մնայ աւերակ քարաշէն եկեղեցի մը, որոյ ձևոյն և արձանագրութեանց վրայ տեղեկութիւնք կը ճակ, պակսին։ — Այրարատ, 142–143։

ԱՇՈՏ կամ ԱՇՕՏԻ. — Սեբաստիոյ կուսակալութեան Տէրէնտէ գաւառակի մէջ գիյուղ կան բաւական թուով Հայեր։

ԱՇՕՏԱՑ ԵՐԿԻՐ. — Կը յիշուի յիշատակարանի մը մէջ, և կը թուի Այրարատայ Գաբէղէնք գաւառի մէկ մասն։

ԱՇՕՏԻ ԴՈՒԽՈՆ կամ ԲԵՐԴ. — Այսպէս կը կոչուի Վանայ Մահմուտի գաւառակի մէջ բաւական ընդարձակ լերանմը վրայ գտնուած քարափոր դուռ մը։ Այս լեռը մօտ է Փական և Սալախանէ գիւղերուն. երկնցած է արևելքէ արևմուտք միջակ բարձրութեամբ, և նեղ կիրճով մը երկու գլխաւոր մասերու բաժնուած, որոյ երկու կողերուն վրայ փորուած են մեծա-

մեծ խաչեր։ Խիստ հին ժամանակաց արքայական կամ իշխանական բերդի մը մնացորդ կը թուի այս դուռը, և արդէն լերան վրայ կը գտնուին այլ և այլ խորութիւնք ու մանաւոր այրեր։ Դրան բարձրութիւնն է 4 մետր, լայնութիւնը 2 և խորութիւնը 1։ Վերի—կողմը 1 մետր երկայնութեամբ 10 կարգ բեւեռագրերով զարդարուած է, ոմանք հինգ տող կը համարին՝ կրկնագիր տեսակէն։ Այս արձանագրութիւնս կը թուի 1863ին ուսուցիչ Վինչի գտածն, որ և կաղապարեց և լուսանկարն հանեց. ուրիշ բանասէրներ ևս զանազան ժամանակաց մէջ գրած են ասոր վրայ։ Եւրոպացիք սովորաբար կը գրեն Աշրուտ—Տէրկէ (Aschrut—Darga), տէրկէ պարսկերէն բառ է, որ կը նշանակէ դուռն՝ թագաւորաց. կողմանցս բնակիչք թէ Հայք և թէ Քուրդք միշտ Աշոտի դուռն կամ Աշոտի բերդ անունը կու տան։ Բերդին կողերուն վրայ արձանի կամ կոց պատուանդանի տեղեր կը տեսնուին, քառակուսի և ուղղանկիւն ձևերով։ Վերայիշեալ դրան հարաւակողմն կը նշմարուին հինաւուրց ոչ սակաւ բնակութեանց հիմունք, որոնց նկատմամբ միայն աւանդութեամբ գիտենք՝ թէ հին և մեծ քաղաքի մը տեղերն են։ — Նկարգր. Ուղևորութիւն, 48—50։

ԱՇՈՐՆԻՔ Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ։

ԱՇՈՑ կամ ԱՇՈՑՔ. — Այրարատայ գաւառներէն մին, որ թէ և պատմութեան մէջ փոքր ի շատէ ծանօթ է, սակայն աշխարհագրութեան մէջ կրնանք ըսել թէ անծանօթ է։ Դիրքն վեր ի վերոյ յայտնի է և ոչ որոշակի, և մեր պատմիչներն չեն յիշեր գաւառիս յատուկ գիւղ մը կամ շէն մը։ Պատմական յիշատակութիւններէ կը համարուի որ կ'ինկնայ Տաշրաց հարաւակողմը, Շիրակայ հիւսիսային՝ և Կանգարաց և Ջաւախաց հարաւային կողմը։ Կը համարուի դարձեալ Գուգարաց Աշոց վիճակն, որ ծանօթ է Վրաց պատմութեան մէջ, որոյ փոխան հայերէն թարգմանութեան մէջ ըստ Ջուանշիրայ գրուած է Աշոցք, և կը նշանակուի սահմանակից Տաշրաց։ Ըստ Խորենացւոյ (Բ. Ը), Վաղարշակ թագաւորը Գուշարայ որդւոց յատկացուց «զՏէրութիւնն Աշոցայ և զսեպհականութիւնն Տաշրաց»։ Պատմական զանազան դէպքերէ և յիշատակներէ կը յայտնուի որ գաւառս ժամանակաւ եղած է միջնաահման մեր և Վրաց տէրութեան։ Վրացիք Վաղարշակ թագաւորէն ալ առաջ կը յիշեն գաւառս, իրենց հռչակաւոր Փառնաւազի ժամանակ. կը յիշեն նաև Ա դարու վերջերը Բ Արտաշիսի օրով։ Պատմութեան մէջ կը յիշուի նաև Ձոր Աշոցայ, որ անշուշտ գաւառիս գետահովիտ մի էր։

Աշոցայ տարածութիւնն և ընդարձակութիւնն կ'երևի չափաւոր էր, որ և արքունական բանակի զօրաբաժնին կու տար 500 հոգի։ Գաւառիս իշխաններէն կը յիշուի Գ դարու մէջ Տաճատ, որ Հայոց նախարարաց հալածանաց և տագնապի ժամանակ, մինչ Արտաշիր Սասանեան կը կոտորէր Արտաւազդայ Մանդակունւոյ Տրդատայ դայեկի տոհմը, ազատեց անոր մէկ քոյրը և իրեն կին առաւ, որուն փոխարէն Տրդատ վերջը զինքը Աշոցայ իշխան դրաւ։ Հայոց թագաւորութեան վերնալէն վերջ, կը յիշուի Հմայեակ Աշոցայ Տէր։ Վարդանանց ժամանակ կը յիշուի Հրահատ, և նոյնը կը թուի որ անոնց նահատակութենէն վերջը, ուրիշ նախարարաց հետ գերի գնաց ի Պարս. — Ասոնցմէ վերջ գրեթէ երեք դար պատմութեան մէջ Աշոցայ իշխանաց յիշատակ չկայ. բայց Ը դարու երրորդ քառորդին մէջ Սիոն կաթողիկոսի օրով յԱգուանս եղած ժողովքին մէջ կը յիշուի Արտաւազդ Աշոցայ Տէր։ Նոյն ժամանակները կամ քիչ վերջը, Աշոտ և Շապուհ Բագրատունի եղբարք, Արաբացւոց ձեռքէն առին Շիրակայ հետ նաև Աշոցք և Տայք գաւառները։ Անկէց վերջը կը թուի թէ վարչութեամբն միացած է Շիրակայ հետ, և յատուկ իշխաններ չեն յիշուիր։ ԺԳ դարուն Հաղբատայ արձանագրութեան մը մէջ կը յիշուի որ Զաքարիա սպասալարը տուեր է նոյն Ուխտին՝ իւր «Հայրենի գեղերն որ յԱշոցք՝ զՀալալաշէն և զՎանա. և զի այս գեղերս հեռի էին ի Հաղբատայ», զանք կը փոխէ Հաղբատ գիւղի տեղոյ հետ և զայն կը նուիրէ վանացն։ Ահա միայն այս երկու գիւղերն կը յիշուին ի

նախնեաց Աշոցայ մէջ։ Յատուկ բնութեան և ուսումնասիրութեան պէտք կայ գաւառիս ճիշդ աշխարհագրական դիրքն, լեռներն, գետերն և գիւղերն որոշելու համար։ — Այրարատ, 127–128։

ԱՇՈՒՇԷՆ. — Հայաբնակ գիւղ (Սերաստխա) Տփղիսու, 700 բնակչօք։ Ունի մէկ եկեղեցի Մոգուց Թագաւոր, և մէկ վարժարան Սմբատեան՝ 80 աշակերտօք։

ԱՇՈՒՆՔ. — Կը յիշէ անունս Վարդան, հետևեալ կերպով. «Գրեաց պատասխանի (Թղթոյն փառայ) Սահակ Մռուտն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ի յԱշունքն»։

ԱՇՎԱՆ. — Հայաբնակ գիւղ Խարբերդի, 800 բնակչօք։ Ունի երկու եկեղեցի՝ Ս. Գէորգ և Ս. Սարգիս։

ԱՇՏԱՐԱԿ. — Նշանաւոր և գլխաւոր գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի համանուն վիճակի մէջ, Էջմիածնի հիւսիսային կողմը 20 վերստ հեռու։ Կառուցուած է Քասաղ գետոյն աջակողմը, գեղագիտակ սարահարթի վրայ. հիւսիսային և արևմտեան կողմերէն կը բարձրանան Արագած լերան ճիւղերը, իսկ հարաւային կողմն են գիւղի ընդարձակ այգիները, և մինչև Մասիսի ստորոտքը, գրեթէ 60 վերստ երկայնութեամբ՝ լայնատարած դաշտ է։ Աշտարակի հիւսիսային կողմը գրեթէ կէս ժամ հեռու կը գտնուի Մուղնի, և հարաւային կողմն է Օշական, մէկ ժամ հեռաւորութեամբ։

Թէպէտև ցարդ ծանօթ պատմութիւնն մեզ կը յայտնէ Աշտարակի անունն իններորդ դարու մէջ, յիշելով զայն իբրև հայրենիք Գէորգ Ա կաթողիկոսի, բայց իր հին շինուածոց և պարսպաց մնացորդներէն կարծելի հաւանական է, որ իններորդ դարէն շատ առաջ ևս գոյութիւն ունեցած ըլլայ, և թերևս Արագածոտն գաւառի ամենէն բարգաւաճ և բազմամարդ քաղաքաւանն եղած։ Մորիէ անգղիացին, որ 1813 տարւոյ յունիսի 16ին աստ իջևանեց, կը վկայէ թէ Աշտարակ՝ բարգաւաճ և քաղաքակիրթ երկրի քաղաքի մը հաւասար շքեղութիւն և արժանիք ունի։ Գերմանացի Քոխ բուսաբանն ևս 1837 տարւոյ ապրիլի 18ին աստ գիշերօթեց, որ և Քասաղ գետոյն խոխոջանքն, ժայռերու վրայ սփռուած լուսնի լուսոյ ընծայած նորօրինակ երևոյթներն և այլ պարագայք, որ իրեն վրայ ազդեցութիւն են ըրեր նոյն գիշերուան խորին լռութեան մէջ, գեղեցիկ կերպով կը նկարագրէ։ Իսկ բնիկ Աշտարակցի երևելի վիպասանն Պերճ Պռօշեանց՝ որ իւր Կռուածաղիկ վիպասանութեան մէջ շատ անգամ կը յիշէ և կը նկարագրէ գիւղս, ի միջի այլոց կը գրէ և հետևեալը. «Աշտարակ – դա աչքն է Արագածոտն գաւառի, դա Արագած սարի բազմատեսակ հոտաւէտ ծաղիկներից կազմած փնջի գլխի զարդն է, դա կատարելատիպն է բոլոր Արագածոտնում գտնուող իւր նմանների»։ Եւ յիրաւի դեռ մինչև ցայսօր այս կողմերու բնակչաց ամենուն բերնէն կը լսուի, թէ Աշտարակը՝ իւր այժմեան նահանգի, Երևանու աչքն է։ Գովուած են միշտ ոչ միայն գիւղիս հրաշալի դիրքն այլ և բարեբեր պարտէզներն և անուանի այգիներն, կենսատու ջուրն և մաքուր, առողջարար ջուրն, որ մինչև անգամ Այրարատայ մէջ առած է դարձեր. «Դողացնո՞ւմ ես, Աշտարակ գնա՛ առողջացիր»։

Քասաղ գետէն զատ ունի նաև ուրիշ առուակ մը, որ Մուղնիի վերէն կը սկզբնաւորի և ճամբան ուրիշ աղբիւրներով առատանալով՝ կու գայ կ՚անցնի գիւղիս միջով և առատ ջուր կը բաշխէ այգիներու և պարտիզաց։ Արևելեան կողմէն խոր ձորի միջով ահագին խոխոջանքներով վազող Քասաղի վրայ ձգուած է եռակամար, կոփածոյ խարտեաշ քարերով շինուած հնաւուրց գեղեցիկ կամուրջ մը, զոր կը յիշէ նաև Զաքարիա Սարկաւագ ԺԷ դարու սկիզբները. շինողի արձանագրութիւնն՝ քանդակուած երկու կամարաց մէջտեղը, բոլորովին աւրուած է. տեղացի բնակիչք աւանդութեամբ կ՚ըսեն, թէ շինուած է Քանաքեռցի Խօջա Փիլա կոչուած հայ մեծատան մը ծախքով։ Կամուրջին դիմացը կը բարձրանայ Փոլկաբերդ կոչուած բնական պարսպաձև երկարաձիգ քարաժայռ մը։

Հին բերդատեղին կը կոչուի Բերդաթաղ, որոյ արևմտեան կողմը տակաւին կը մնայ հին պարսպաց մէկ մասն, իսկ միւս կողմերն, և գլխաւորապէս արևելակողմը գահավէժ ձորափունք լինելով մինչև գետը,

արուեստական ամբողջութեանց պէտք չեն ունեցած։ Բերդաթաղի մէջ և դուրսը կը գտնուին գիւղիս բնակարանները, որոնց թիւն այժմ կը հասնի 450ի, և բնակիչք են գրեթէ 3500 հոգի ամբողջ հայ։ Բերդի մէջ կան երկու լքուած եկեղեցիներ. մին Սպիտակաւոր կոչուած, միւսն Ծիրանաւոր՝ նուիրուած Սուրբ Աստուածածնի, շինուած է բարձր ղրից վրայ կոփածոյ քարերով. Մատարայի և փարպիի եկեղեցեաց նման, անմիջապէս եկեղեցւոյս որմոց չորս կողմէն բարձրացուցած են կրկին որմեր, և ձևացեր է խրբիւ անմատչելի աշտարակ մը. մինչև 1845 թուականը հոս կը կատարուէին ժամերգութիւնք, բայց նոյն տարին տանիքը կործանելով լքուած մնաց։ Բերդէն դուրս



129. Տաճարն Ս. Մարիանէ։

րուն գիւղի մէջ ալ կան երեք եկեղեցիներ՝ որոց երկուքի մէջ կը կատարեն պաշտամունք։ Ամենափրկիչ, որոյ միայն խորանն շինուած է ի հնուց սրբատաշ քարերով, իսկ միւս մասերն, ինչպէս կ՚երևի, վերջերը շինուած են, պատերն հասարակ քարերով, և տանիքն փայտածածք։ Ս. Մարիանէ (Թ. 129) փոքրիկ, վայելչաձև, քարաշէն և սրածայր կաթուղիկէով տաճարն կը գտնուի գիւղիս արևմտակողմը, և չորս կողմը ունի պարիսպ և բուրգեր, մեծամեծ որձաքարերով շինուած։ Կ՚աւանդուի թէ այս տաճարս և պարիսպները, Էջմիածնի կաթողիկոսի հրամանաւ, ապաշխարութեան համար՝ շինած է երիտասարդ երէց մը, որուն կինը մեռնելով ուզած է երկրորդ անգամ ամուսնանալ։ Ս. Մարիանէի տաճարն ևս առ ժամանակ մը լքուած մնալէ վերջ, 1838ին նորոգելով սկսան սոր մէջ ևս կատարել բոլոր աստուածային պաշտամունք, և պատճառն այն էր որ Ամենափրկիչ եկեղեցին բաւական չէր ժողովրդեան բազմութեան։ Գիւղիս բնակիչ Պ. Գէորգ Փարվանեանց, իւր ծախքովը փոքրիկ զանգակատուն մ՚ալ կառուցանել տուաւ եկեղեցւոյս տանեաց վրայ։ Մեր ներկայ պատկերն գծուած է Մորիէ անգղիացիէն, և կը ներկայացընէ Ս. Մարիանէի եկեղեցւոյն վերջին նորոգութենէն շատ տարիներ առաջ ունեցած երևոյթն։ Եկեղեցւոյս դուրսը և ներսը որմոց վրայ կան ոչ սակաւ արձանագրութիւնք նուիրատուաց. Հարաւային դրան մօտ ալ կայ քանդակուած կէս բոլորակ արևաշուք ժամացոյց մը. արձանագրութիւններէն հնագոյնը կը վերաբերի 1285 թուականի և նորագոյնը 1326 տարւոյ։ Արձանագրութիւնքս կը յայտնեն, թէ եկեղեցւոյս մօտ կար միաբանակեցաց վանք, ուր և Յակոբ ամն երէց շինած է Հիւրատուն ԺԴ դարու սկիզբը։ Կարմրաւոր կոչուած եկեղեցին է գիւղի արևելեան հիւսիսային ծայրը՝ բարձրաւանդակի վրայ, և է փոքրիկ, խաչաձև և գմբեթաւոր տաճար մը, կղմինտրով ծածկուած. աս ևս պարսպապատ է և այժմ լքուած, ամայի։ Կ՚ըսեն թէ երբեմն հոս կը բնակէին կուսանք՝ և ունէին եկեղեցւոյս մօտ վանք կամ կուսանոց։ Եկեղեցւոյս շինութեան արձանագրութիւնը, կը պատէ արտաքուստ հարաւային կողմէն սկսելով և կ՚աւարտի հիւսիսային կողմը, տեղ տեղ աւրուած է. թէպէտ թուական չկայ, սակայն շինողաց անուանք անջինջ մնացած են։ Այս արձանագրութեան տակը 1292ին գրած է Յակոբ երէց, անշուշտ վերյիշեալ հիւրատունը շինողը, ուրիշ արձանագրութիւն մը, որով կը յայտնէ գիւղի մեծ առուի ճանապարհը նորոգելը։ Կարմրաւորի պարիսպները շինած են Ամատուր և Դուտալչաք զաւակիցքն, որոց արձանագրութիւնը քանդակուած է պարսպի հարաւային դրան վրայ։

Այս վերյիշեալ երեք եկեղեցիներն և վանորայք՝ կը յիշուին աւետարանի մը մէջ 1478 թուին, զոր գրել տուաւ Պատրոն

*Թըլենցի և ընծայեց այս տաճարաց, հետեւեալ կերպով գրելով. «Ես Պատրոնս և ամուսին իմ Մելիք խաթուն, ստացաք զսուրբ աւետարանս ի յարդար վաստակոց մերոց, և տուաք զսա յընծայ՝ ի դուռն Ս. Ամենափրկչին և Ս. Մարիանէին և Ս. Կարմրաւորին, ի վայելումն մանկանց սոցա...։ Եւ մի որ իշխեսցէ հեռացուցանել... ի դրանէ Ս. Ամենափրկչին և սուրբ Վանօրէացս»։*

*Ուրիշ Ս. Կիրակի անուամբ եկեղեցւոյ մը մնացորդներ և կործանուած գմբեթին մէկ մասն կ'երեւին գիւղի հարաւային ծայրը Ծուխնեց կոչուած այգիներու մօտ։ Ի հնումն Ս. Կարապետի նուիրուած եկեղեցի մ'ալ, աւեր և անյայտ դառնալով, այժմ փոխած են մարագ։ Կարմրաւոր եկեղեցւոյն շուրջը և աւելի հիւսիսային և արեւելեան կողմերն է հասարակաց գերեզմանատունը, յորում կան նաեւ հին շիրիմներ մեծամեծ խաչքարներով և պատուանդանօք։ Այս շիրմաց մէջ կայ հրաշալի քանդակներով խաչարձան մը բարձր դիրք, Մողնիի Ս. Գէորգայ վանքը տանող ճանապարհի արեւելակողմը. խարիսխը կամ պատուանդանը մատրանաձեւ է, և ունի խորշ մը, այդ պատճառաւ բնակիչք Ծակ–խաչ կ'անուանեն. կառուցուած է Թովմաս քահանայէ մը, Արծրունեաց ցեղէն Սադուն անունով իշխանի արեւշատութեան համար, և ունի մասամբ եղծուած արձանագրութիւն* **ՉԺԷ** (= *1268*) *թուականաւ։ Գիւղի արեւմտեան հարաւային կողմն ալ կան ուրիշ գերեզմաններ Օշական այգիներու մօտ, որ կը կոչուին Թորոսենց, Գէորգենց կամ Շահազիզեանց տոհմին անուամբ։ Այս տոհմն նշանաւոր է եղեր Աշտարակի մէջ և յաջողեր է իր համար յատուկ գերեզմանատեղի որոշել։ Շահազիզեանց գերեզմանատունն այժմ լքուած է և թաղելու տեղ չկայ. արդէն գիւղն ալ ընդարձակելով գրեթէ իր մէջ է առեր գերեզմանատեղին և արգիլուած է նոր ննջեցեալ թաղել։ Վերոյիշեալ նշանաւոր տոհմէն էր հռչակաւոր կաթողիկոսն Էջմիածնի և գիւղիս անմոռաց պարծանքն՝* Ներսէս **Ե** (*ծն. 1771 † 1857*)։ *Աշտարակը ընծայեր է ազգին նաեւ ուրիշ ոչ սակաւ նշանաւոր եպիսկոպոսներ, վարդապետներ, գործունեայ իշխաններ և զինուորականներ։*

*Գիւղիս արեւմտակողմը երկու կամ երեք մղոն հեռու կը բարձրանայ* Ուլատխանիկ *կոչուած սարահարթը, որ զբօսատեղի է բնակչաց։ Հիւսիսային կողմն ալ ձորակի գլուխը* Գոմշախպամ *բռնուած տեղւոյն մօտ կան փայտայարկ քարայրներ՝ Ցերեր կոչուած, որոց մէջ երբեմն կ'ապաւինէին Աշտարակի բնակիչք վտանգաց ժամանակ. հոն կ'երեւին նաեւ քանդուած մատրան հետքեր։ Աշտարակցիք ընդհանրապէս շատ ժիր և աչքաբաց մարդիկ են, ունին մեծ յարգանք դէպ ի լուսաւորութիւնը, և շատ կան Մոսկուայի մէջ և ուրիշ տեղեր ուսումնաւարտ Աշտարակցիներ. այժմ եւս պակաս չեն ուսանողներ զանազան քաղաքաց մէջ։ Բոլոր Աշտարակցիք ունին այգիներ և իրենց գլխաւոր պարապմունքն է խաղողէն ընտիր գինի և օղի պատրաստել, որոնք կը ծախեն Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Ջալալօղլուի և Նոր Պայազիտու գաւառաց մէջ։ Առհասարակ գիւղիս բնակիչք շատ յաջողակ և տաստուրէ հանկցող մարդիկ են, և Աշտարակի մէջ եւս կան բաւական թուով կըրպակներ։*

*Աշտարակի բոլոր բարեյաջող հանգամանքներու պատճառաւ է, որ ի հնումն մեր թագաւորները, նախարարները և հայրապետները կ'երթային հոն, եթէ ոչ ամբողջ ամառն, գէթ մի քանի շաբաթ կամ մի քանի օր հրաշագեղ գիւղիս վայելչութիւններով զուարճանալու։ Շատ անգամ ալ Աշտարակ, իւր եզական և անզուգական յատկութեանց շնորհիւ թշուառութեանց և տխուր տեսարանաց եւս ենթարկուեր է։ Երեւանու խաները և բէկերը ոչ սակաւ չարչարանքներ և նեղութիւններ հասուցեր են Աշտարակցւոց վրայ։ Երբեմն եղեր է նա սեփականութիւն Էջմիածնի, երբեմն ալ՝ որ և է պարսիկ խանի մը կալուած, ապա Պարսից տիրապետութեան։ Ռուսաց Պետութեան ձեռքն անցնելէ առաջ, եթէ լաւ տեղեկանանք պատմութեան, կը տեսնենք որ Աշտարակը քանի մը տասնեակ տարիներ շարունակ մի և նոյն դրութեան մէջ չէ մնացեր, և այս ամէնը, բոլոր իրեն նմանները զերազանցելուն պատճառաւ։ Աւանիս ձորեզերքը տեսակ տեսակ վայրենի բոյսերէ*

գատ, կ՚ընծայէ նաև պատուական սննդա֊րար բանջարեղէններ, ինչպէս՝ եղինջ, ջող֊լապատ, ծնեբեկ, պարսն բանջար, և այլն։ Գերմանացի Բոխ բուսաբանը, Աշտարակի սահմանաց և Քասաղի ձորոյն մէջ կը յիշէ 30 տեսակէ աւելի բուսոց անուանք՝ պտղա֊բեր ծառերէն զատ. առանցմէ մանաւորաբար կը գովէ ծիրանն ու գեղձը։ — Կոռնա֊ծաղիկ, 1–134, տպ. Թիֆլիս, 1878։ Մշակ, 1874, թ. 45։ Շահխաթունեանց, Ստորագր. Էջմ. Բ. 83–89։ Այրարատ, 185–188։

ԱՇՏԱՐԱԿ. Տես ԿՈՎՍԱԿԱՆ։

ԱՇՏԱՐԱԿԱՑ ԳԻՒՂ. — Այրարատայ Բագ֊րեւանդ գաւառի մէջ կը դնէ գիւղս Յովհան կաթողիկոս. անկէ էր Ներսէս Բ կաթողի֊կոսը։

ԱՇՏԻՇԱՏ կամ ՅԱՇՏԻՇԱՏ. — Հին և հռչակաւոր, նախ դիցանուէր և ապա քրիս֊տոսանուէր քաղաք կամ աւան Տուրուբե֊րանի Տարօն գաւառի մէջ, Եփրատայ ճիւ֊ղին Արածանւոյ աջակողմը բարձրացող Քարքէ լերան սարահարթ բարձրաւանդակի մը վրայ. Ս. Կարապետի վանքէն արեւելա֊կողմը՝ 6 ժամ հեռու, և Մատրավանից հիւսիսակողմը 1 ժամ հեռաւորութեամբ։ Այսպէս կոչուած է իր մեհենին մէջ հաշ֊տութեան զոհեր և պաշտամունք շատ կա֊տարուելուն պատճառաւ, ինչպէս կ՚ըսէ նաև Ագաթանգեղոս (606). «Որ և անուանեալ ըստ յաճախապաշտ պաշտամանն տեղեացն Յաշտիշատ»։ Կ՚ստուգաբանուի իբրև Հաշ֊տարան կամ Հաշտութեան տեղ վասն զի առաջին վանկն Աշտ եղած է պարսկերէն آشتی Աշթի բառէն, որ կը նշանակէ Հաշ֊տութիւն, և շատ մասնիկին միանալով յա֊տուկ անուանց հետ կը նշանակէ քաղաք կամ տեղ, ինչպէս՝ Երուանդաշատ, Վար֊դանաշատ, Վասակաշատ, և այլն, այս ստուգաբանութեան ճշդութեան Խորենացին ևս կը վկայէ, երբ Աշտիշատի իբրև թարգ֊մանութիւն կը գրէ. Յաշտից տեղիք։

Մեր բոլոր պատմիչներէն առաջ, Աշտի֊շատի անունն կը յիշուի Զենոբայ պատ֊մութեան մէջ, Վաղարշակի օրով։ Մինչ սա նոր կը հաստատէր Հայ—Արշակունեաց թագաւորութիւնը, Հնդկաստանէն փախստա֊կան եկան և իրեն ապաստանեցան Դեմետր և Գիսանէ կոչուած երկու իշխաններ, որոց բնակութեան տեղ տուաւ Տարօնոյ գաւառը։ Հոն Օձ կամ Վիշապ քաղաքը շինելէ և մէջը օձակերպ կուռք մը կանգնելէ վերջ, եկան Աշտիշատի մէջ ևս կանգնեցին ուրիշ կուռքեր, և իրենց հայրենի ծիսով կը պաշ֊տէին։ Տասն և հինգ տարի վերջ Վաղար֊շակ յանցաւոր գտնելով վերոյիշեալ իշխան֊ները՝ սպաննեց, բայց երկիրը թողուց ա֊նոնց Կուառս, Մեղտի և Հոռեան որդւոց, որոնք ի յիշատակ իրենց հարց Աշտիշատի մօտ Քարքէ լերան վրայ կանգնեցին ա֊նոնց կուռքերը՝ զորս չորս դար վերջը Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Հայոց ուրիշ կռոց հետ շատ դժուարութեամբ կործանեց։ Զգի֊տեմք ինչ պատճառաւ Դեմետր և Գիսանէ կռոց յիշատակութիւնն ամենևին չեն ըներ Խորենացի, Ագաթանգեղոս և Բուզանդ, այլ միայն ընիկ Տարօնոյ պատմիչն Զենոբ։ Եւ նոյնպէս մինչ վերոյիշեալ պատմիչք կը յիշեն Աշտիշատի հռչակաւոր Վահէվահեան մեհեանն, Զենոբ՝ բոլորովին լռութեամբ կ՚անցնի։

Աւանս Արտաշէսի ժամանակ և Վաղար֊շակայ օրով իսկ սեպհականութիւն էր Վա֊հունեաց գարմին. բայց վերջը Միջին Տիգ֊րանը բարկանալով սոցա, որ իշխեր էին մեհենին մէջ Հերակլեայ արձանը կանգնել, զիրենք քրմութենէ ձգեց և Աշտիշատը յար֊քունիս գրաւեց։ Յետոյ ամբողջ գաւառը միասին անցաւ Մամիկոնեանց ձեռքը. անոր համար Խորենացին (Գ. Կէ) Մեծին Սա֊հակայ թաղումը պատմած առեն՝ իշխանաց գիւղ կ՚անուանէ Աշտիշատը, Մամիկոնեան֊ները նկատելով. որոց Դստրիկ տիկինն՝ հոն բերաւ հանգոյց սրբոյն մարմինը, ինչ֊պէս կը վկայէ նաև Ասողիկ (Բ. Ա)։ Աշ֊տիշատի մեծագանձ և փառահեղ մեհեանն՝ շինուած էր Միջին Տիգրանէն առաջ. իսկ Միջին Տիգրանը Խորենացւոյն ակնարկա֊ծին համեմատ, կամ ի հիմանց՝ և կամ ըստ մասին նորոգեց։ Այս հռչակաւոր մեծ մեհեանը բաժնուած էր երեք մեհենաց, ո֊րոց իւրաքանչիւրի մէջ կային մէկ մէկ բա֊գինք՝ նուիրուած զանազան չաստուածոց։

Առաջին մեհեանը կը կոչուէր Վահէվահ֊

եան, յորում էր Հերակլեայ բագինը և պղնձաձոյլ ոսկեզօծ անդրապատկերը, զոր շինած էին Կրետացի երկու երեւելի ճարտարներ Սկիւլէս և Դիպինոս. Պլինիոսի գրածին համեմատ, ասոնք նախ ծաղկեցուցին քանդակագործութեան արհեստը, և Ապողոնի պատգամաւորին հրամանաւ և Սիկիոնացւոց խնդրանօք՝ շինեցին Անահտայ, Հերակլեայ և Աթենասայ արձանները։ Այս ճարտարներէն շինուած Հերակլեայ արձանը, մեր Արտաշէս Ա թագաւորը Ասիոյ մէջ գրաւ-



130. Աշտարակ գիւղի Ս. Աստուածածնի եկեղեցին (էջ 222)։

նելով, բերաւ Հայաստան Արմաւիրի մէջ կանգնելու համար. բայց Վահունի քրմապետները՝ որոնք սերունդք էին մեր Վահագն թագաւորին, իրենց նախնոյն Վահագնի արձանը կարծելով, Արտաշիսի մահէն վերջը կանգնեցին Աշտիշատ աւանին մէջ, որ և եղաւ կ[illegible]ամարեցաւ Վահագնի ութերորդ արձանն ի[illegible] Այս արձանը կը ներկայացնէր Հերակլ[illegible]ւթային գլուխը հատանելը, ինչպէս յունար[illegible]Թանգեղոսի մէջ բացայայտ կերպով գրուած է. [illegible]տ-նէր Սեղան Ութերորդ արձանին հռչակաւոր վիշապահեղձոյցն Հերակլեայ». իսկ Հայերէնի մէջ թարգմանուած և փոխուած է. «Ութերորդ պաշտօն հռչակեալ անուանեալ վիշապաքաղն Վահագնի»։ Բուզանդ այս մեհենի գիրքն կը դնէ սարաբարձր տեղ մը, գրեթէ քարընկէց մը Հացեաց դրախտ կոչուած տեղէն վեր։

Երկրորդ մեհեանն նուիրուած էր Անահտայ՝ որուն Հայք Ոսկիամայր և Ոսկեծին անունները կու տային, և որոյ բագինն կը կոչուէր նաեւ Ոսկեհատ։ Այս մեհեանս և բագինս, միւս երկուքէն հին էր, վասն զի անոնք Ս. Արտաշիսի մահէն վերջը դրուեցան։ Անահտայ տաճարին նուիրուած էին սպիտակ երինջներ, որոնց արածիլը տեսնելով Լուկուլլոս հռովմայեցին՝ Արածանւոյ ափերու մօտ, սքանչացաւ։ Պլուտարքոս՝ Լուկուլլոսի Անահտայ երինջաց տեսնելն յիշելով, կ'ըսէ միանգամայն, թէ այս կողմանց բնակիչք մեծ հանդիսով կը տօնէին նոյն դիցուհին։

Երրորդ մեհեանն կը կոչուէր Վահագնի սենեակ, որոյ մէջ կանգնած էր Հայոց անպարտելի դիւցազնի գեղեցկուհին՝ ոսկեձոյլ Աստղիկը։ Ասոր արձանը Արտաշէս Ա բերաւ Յունաստանէն, և Միջին Տիգրանն կանգնեց այստեղ։ Խորենացին Տիգրանայ մեհենաց շինութիւնն պատմած ժամանակ, Աստղկան կամ ըստ Յունաց Ափրոդիտայ արձանին համար կ'ըսէ. «Բայց զԱփրոդիտայ զպատկերն՝ իբրեւ Երակլեայ տարփաւորի՝ առ նորին պատկերի Երակլեայ հրամայեաց կանգնել յԱշտից տեղին»։ Խոր. Բ. ԺԴ։

Մեր նախնեաց հեթանոսութեան ժամանակ, Հայոց տարեմտին, Նաւասարդ ամսոյ սկիզբը, այստեղ կը կատարուէր ընդհանուր աշխարհախումբ տօնախմբութիւնը։ Կը ներկայանային Հայոց թագաւորն, մեծ քրմապետը, նախարարները, մեծամեծ իշխաններ և ժողովրդեան բազմութիւնը, և մեծէն մինչեւ փոքրը, ամէնքը կը մատուցանէին իրենց զոհերը։ Նոր տարին իր հետ կը բերէր նաեւ նոր կեանք, և Հայաստան պարտական էր այդ տօնախմբութեան ժամանակ, իր աստուածոց ցոյց տալ իր անցած տարուան յառաջադիմութեան պտուղներն։ Վա-

հագն՝ քաջութիւն կը պահանջէր, Անահիտ՝ արհեստ, իսկ Աստղիկ՝ սէր և բանաստեղծութիւն։ Հոն կը կատարուէին հանճարի և քաջութեան մրցումներ։ Բանաստեղծն իր յօրինած երգը կ'երգէր, երաժիշտն իր բամբիռն կը զարնէր, ըմբիշը ցոյց կու տար իր բազուկներու զօրութիւնը, իսկ վարպետը՝ իր գեղարուեստի արդիւնքը։ Կը լինէին գազանամարտութիւնք, արշաւանքներ՝ կառքով, ձիով և ոտքով։ Յաղթողները կը ստանային այն վարդեայ պսակներէն, որոնցմով զարդարուած և վառուած կը լինէր նոյն օրը Աստղկան տաճարը. այդ պատճառաւ այս տօնախմբութիւնը կը կոչուէր նաև Վարդավառի տօնախմբութիւն։ Հին տարւոյ մեղքերը քաւելու և նորը մաքուր սկսելու համար, նոյն օրը կը կատարուէր նաև ընդհանուր մկրտութիւն մի։ Մեծ քրմապետը՝ ոսկեայ ցնցուղով կ'առնէր Արածանիի սուրբ ջուրը և կը սրսկէր բազմութեան վրայ, և ապա բոլոր ուխտաւորներն ալ միմեանց վրայ ջուր կը սրսկէին։ Այդ միջոցին օդը կը լեցուէր անթիւ սպիտակ աղաւնիներու բազմութեամբ. ամէն ուխտաւորք կը թռցընէին մէկ մէկ աղաւնի։ Այս հանդէսներու սկզբնապատճառը, աւանդութիւնն շատ հին դարերու մէջ կը դնէ։ Նմանութիւն կը համարի զայն Նոյ նահապետի Արարատ լերան գագաթէն աւետաբեր աղաւնին թռցնելուն, և տապանէն դուրս գալէն վերջ, հաշտութեան առաջին զոհը մատուցանելուն։ Նոյի աւանդապահ որդին, Սեմ, Արարատէն Տարօն գալով, և բնակելով Սիմ լերան ստորոտը, առաջին անգամ նուիրագործեց այս խորհրդաւոր աւանդութիւնը, որ և ապա շարունակուեցաւ դարուց ի դարս։

Ագաթանգեղոս կը պատմէ, թէ ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մատրավանքը շինած ժամանակ՝ հրաման տուաւ քրիստոնեայ իշխանաց և զօրաց՝ կործանելու նաև Աշտիշատի հրաշակերտ մեհենաց բագինները։ Ս. Հայրապետի գիտաւորութիւնն էր անշուշտ միայն բագինները կործանել և հեթանոսական մեհեանները սրբել ի տաճար Աստուծոյ. բայց իշխանները դիւաց ընդդիմութեամբ, որոնք մեհենաց դռները ծածկեր էին, չկարողացան ներս մտնել, սկսան փորձել արտաքուստ որմերը քանդելու, սակայն չյաջողեցան, «և ոչ գծեաց, կ'ըսէ պատմիչը, երկաթ գործոյն»։ Նոյն ժամանակ հարկադրուեցաւ Ս. Գր. Լուսաւորիչ աստուածային հրաշիւք, ի հիմանց կործանել և աներևոյթ ընել այս մեհեանները. «Եւ այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչինչ յայնմ տեղւոջ նշմար էր գտանել, ոչ քարի և ոչ փայտի, ոչ ոսկի և ոչ արծաթ, ոչ բնաւ երևէր թէ լեալ ինչ իցէ անդ»։ Ագաթ. ՃԺԵ։

Այնուհետև Ս. Լուսաւորիչ նոյն մեհեաններու տեղը՝ հիմնեց առաջին սրբութեան սեղանը և Հայաստանի առաջին Մայր եկեղեցին, որոյ մօտ ի վերջոյ վանատուն ևս շինուելով, կոչուեցաւ Աշտիշատի վանք։ Որչափ որ պատուած էր մեհենադարդ Աշտիշատը հեթանոսական դարերու մէջ, այնչափ ևս պատուեցաւ քրիստոնէութեան ժամանակ։ Վարդավառի տօնախմբութիւնն փոխուեցաւ Քրիստոսի Այլակերպութեան տօնին հետ, որ կը հանդիպի Նաւասարդի ամսոյ առաջին օրերու մէջ, և նախնական սովորութիւնները մնացին անփոփոխ։ Դարձեալ, կը ներկայանար հոն Հայոց քրիստոնեայ թագաւորը, մեծ քահանայապետը, նախարարները և ժողովրդեան բազմութիւնը, և կը կատարէին հին աշխարհախումբ տօնախմբութեան հանդէսը։ Դարձեալ մրցութիւններ կ'ընէին, աղաւնիներ կը թռցնէին, ջուր կը սրսկէին, և միով բանիւ ամբողջապէս կը կատարէին հին սովորութիւնները, որոնց շատերը հասած են նաև մինչև մեր օրերը։

Սուրբն Գրիգոր իւր Դանիէլ աշակերտը քորեպիսկոպոս անուանեց Աշտիշատի եկեղեցւոյն։ Աւանիս անուամբ թէև ուրիշ եպիսկոպոսներ չեն յիշուիր, սակայն կար անդ եպիսկոպոսանոց, իբրև կայան Ս. Հայրապետաց, յորում՝ ըստ Բուզանդայ (Գ. ԺԹ), Ս. Յուսիկան Պապ և Աթանագինէս անարժան որդիքն, ուտելու և արբենալու ժամանակ՝ իրենց անառակ վարուց ի պատիժ, սատակեցան Աստուծոյ հրեշտակէն։ Ս. Ներսէս կաթողիկոսն Աշտիշատի վանից և մայր եկեղեցւոյն այցելած ժամանակ, հոս կու գայ նաև Հայր մարդպետը, և մեծ ու գեղեցիկ հրապարակի վրայ ճեմած ժամանակ, տեսնելով շրջա-

կայից մօղիչ գեղեցկութիւնն և հրաշալի բարձր, առողջարար դիրքն, նախանձելով միտքը դրաւ նոյն տեղը արքունի ապարանք կառուցանել. բայց նպատակին չհասած՝ նետահար սատակեցաւ Շաւսով անունով կարիճէ մը։ Բուզանդ, Ժ·Դ։ — Իբրև առաջնակարգ և պատուաւոր տեղ, աւանիս մէջ գումարուած են երեք եկեղեցական ժողովներ, Ս. Ներսէս Մեծի, Ս. Սահակայ և Ս. Յովսեփայ կաթողիկոսութեան ժամանակ։

Հայաստանեայց առաջին և Մայր եկեղեցին Է դարու կիսուն կործանուեցաւ Մահմետի քեռորդի Ապտուլահիմէն. ժամանակ անցնելէ վերջ Մամիկոնեաններէն վերստին շինուեցաւ մեծակառոյց։ Աւերածու Լէնկթիմուրը նորէն քակեց եկեղեցիս և վանատունը, անոնց քարերով Սուլուխի մօտ Եփրատայ վրայ քայքայուած կամուրջը շինելու համար։ Աշտիշատէն մինչեւ կամուրջը, որ երկու ժամ հեռաւորութիւն ունի՝ շարել տուաւ, կ՚ըսեն, Լէնկթիմուր զօրքերը, և այնպէս մէկ մէկու ձեռք տալով փոխադրեց քարերը։ Մամիկոնեանց մեծագործութիւնը տակաւին կ՚երեւի եկեղեցւոյս աւերակներէն, որ այժմ գետնի հաւասարած է հանդերձ իր արտաքին պարիսպներովը։ Ներքին կողման երկայնութիւնն է ճիշդ 38 ոտք, և լայնութիւնն 31, իսկ քարուկիր որմերու թանձրութիւնն 8 ոտք։ Յատակը ծածկուած է փլածոյներով, և հարկ է պեղել, եկեղեցւոյս սիւնազարդ կամ անսիւն ըլլալն որոշելու համար։

Եկեղեցւոյս քիչ մը հարաւակողմն է Ս. Սահակ Պարթեւի մատուռը, որ քայքայուած և աւերակ վիճակի մէջ գտնուելով, Հայոց ՌՄԾԹ (= 1810) թուին, Ս. Կարապետի վանահայրն և առաջնորդ Վանեցի Մկրտիչ վարդապետ, աղքատին, փոքրիկ և գետնափոր մատուռ մը շիներ է, որուն մէջ՝ աջ կողմն է Ս. Սահակայ և ձախ կողմը՝ Ս. Շուշանայ գերեզմանները։ Այս մատրան յետոյ կցեր են գիւղացիք գեղջուկ ժամատուն մը. շուրջը կան ոչ սակաւ զանազան ձեւերով հին քանդակազարդ խաչքարեր։ Արդեօք պիտի գա՞յ օր մը, որ արդեամբ Մամիկոնեաններու առաքինութեանց հետեւող հայրենասիրաց, տեսնենք ազգային լուսաւորութեան գործոյն մեծապէս նպաստող՝ բազմարդիւն մեծ քահանայապետի՝ այժմեան անշուք գերեզմանին վրայ կառուցուած փառահեղ տաճար մը և յաւէրժական յուշարձան մը։ — Հին Աշտիշատին անունն է այժմ Տէրըք, և բնակիչք կը համարուին 150 Հայք։ — Սոոր. Հին Հայ, 92–96։ Րաֆֆի, Սամուէլ, Ա. Թ։

ԱՉԱՐԱՆ. — Գիւղ Ատրպատականի Ղարատաղ գաւառի Բէյլան վիճակի մէջ։ Բնակիչք 12 տուն Հայք, ունին եկեղեցի մը։

ԱՋԱՂՈՒ. — Հին գիւղ Սիւնեաց Բաղք



131 · Աշտարակ գիւղի Կարմրաւոր եկեղեցին (էջ 222)։

(Աճանան) գաւառի, որ տրուած էր իբրև կալուած Վահանայ վանից։

ԱՋԱՋՈՒՐ. — Հայաբնակ գիւղ Գանձակու Ղազախ գաւառի մէջ, Ս. Մակարայ վանքէն գրեթէ 11 վերստ հեռու։ Բնակիչք 1845 հոգի, բաժնուած 151 տուն։

ԱՋԸԴՊԱՏ. — Այս անուամբ հայաբնակ գիւղ մը կար դարուս սկիզբը, Բարձր Հայոց Եկեղեաց (Երզնկա) գաւառի մէջ։

ԱՋԻՔՈՅ. — Կը յիշուի Մոկք առանձնակ գաւառի մէջ։

ԱՋՔԱՀԱՆ. — Կը յիշէ գիւղս Ջալալեան՝ Լոռու գաւառի մէջ։

ԱՋՔԱՋՈՒՐ կամ ՃԱԼԱ. — Հայաբնակ գիւղ

Գաւգարայ, այժմեան Պօռչալու վիճակի մէջ. բնակիչք 12 տուն՝ 121 հոգի։

ԱՊԱՀՈՒՆԻՔ. — Հին գաւառ Տուրուբերանի, որուն կը համապատասխանէ այժմեան Մանազկերտ կամ Մէլազկերտ գաւառակը։ Վաղարշակ Թագաւորը գաւառիս մէջ հաստատեց յատուկ Ապահունեաց նախարարութիւնը։ Ժամանակ անցնելէ վերջ Ասողկայ պատմածի համեմատ (Գ. ԺԵ), Վասիլ կայսրը այս գաւառս, սահմանակից Հարք և ուրիշ գաւառաց հետ առաւ Տայոց Դաւիթ կիւրապաղատէն, որպէս զի անոնց փոխարէն իրեն օգնութեան զօրք ղրկէ։ Թ. Արծրունին կայսիկ անուամբ այլազգի ժողովուրդ մը կը յիշէ գաւառիս մէջ, Հայոց Սմբատ Թագաւորի ժամանակ։ Թ. Մեծոփեցին ալ, գաւառիս անուամբ դաշտ մը կը յիշէ. «Եւ միւս օրն ելեալ գնաց (Շառուհ որդի Լանկթամուրին) ի Դաշտն Ապահունեաց...»։ Գաւառիս մէջ կատարուած պատմական դէպքերն, տակաւին գրաւորապէս և մանրամասն ծանօթացած չեն։ Գաւառիս գլխաւոր քաղաքն էր Մանազկերտ։ Ապահունիք Հայաստանի եպիսկոպոսական գաւառներէն էր, և կը թուի թէ կանխաւ Հարք գաւառի հետ մէկ թեմ կը կազմէր, և հինգերորդ դարու մէջ բաժնուեցան այդ երկու գաւառներն և ունեցան առանձին եպիսկոպոսներ. որովհետև Արտաշատի ժողովոյն ներկայացան Հարքայ անունով Մելիտէ եպիսկոպոսը, և Ապահունեաց անունով Երեմիա եպիսկոպոսը։ Այժմ Ապահունիք (Մանազկերտ) Մշոյ առաջնորդութեան մէկ վիճակը կը կազմէ, և ունի 23 գիւղ։ Տես ՄԱՆԱԶԿԵՐՏ։

ԱՊԱԳԱ. — Վասպուրականի Աղբերանի գաւառի համապատասխանող այժմեան Բերկրի գաւառակի մէջ նշանաւոր դաշտ մ'է, զոր գիտականներէն ոմանք սխալմամբ համարեցան Զիրաւ դաշտը։ Վասպուրականի ամենէն անապահով և երկիւղալի տեղերէն մին է այս դաշտը, որոյ երկայնութիւնն է 80 հազարամետր և լայնութիւնը 24 հզրմ։ Այդչափ ընդարձակութեան մէջ դուն ուրեք կը տեսնուին հաւկթի մը մեծութեամբ քարեր, և ամէն տարի կու տայ առատ ընտիր խոտ, որոյ բարձրութեան մէջ ժամանակին մարդս կը թաղուի։ Վանայ դաշտատափէն աւելի բարձր ըլլալով, պտուղ և ծառ չունի։ Հողն է սեւագոյն, պարարտ և բարեբեր, որ կրնայ բուսցնել առատ և ամենապատուական ցորեան և մանաւանդ գարի, բայց ափսոս, որ այժմ հայ բնակիչ չունի. այլ միայն 400–450 քուրդ ընտանիք՝ գլխաւորաբար Հայտարանցի բռուած Հաշիբեքին (հասուած) վերաբերեալ, որք երկիրը անմշակ ձգած են, ցիրուցան կը բնակին և կ'ապրին միայն ոչխարաբուծութեամբ։ Այս ընդարձակ դաշտը աշնան ժամանակ կը բռնկցնեն, որ երկրորդ տարին աւելի առատ խոտ բուսցնէ։

Հին ժամանակ դաշտս ունէր 300ի չափ Հայոց գիւղեր, որոնց շատերու աւերակներն տակաւին կ'երևին. կան նաև բերդերու աւերակներ, զարմանալի այրեր ու խոռոչներ։ Ապաղա անուամբ բերդաքաղաք մի ևս կար ԺԸ դարու մէջ այս կողմերը, դաշտս շրջապատող լերան մը վրայ, որ ունէր 4 ամուր բերդեր. բայց որովհետև աւազակաց բոյն դարձած էր, որոնց կ'իշխէր Եէզիտի պէյ մը, այն պատճառաւ 1788ին Վանայ փաշան շատ զօրքով վրանին յարձակելով, աւազակները ցրուեց և բերդերէն մին կործանեց, իսկ միւս երեք բերդերն ալ ամայի և աւերակ մնացին։ Լայնատարած դաշտիս շրջապատի լեռներէն բղխած ջուրերն ժողվուելով՝ կը ձևացնեն Պանտումահու (Աեսա) կոչուած գետը, որ ոլորապտոյտ ընթացքով կ'ոռոգէ դաշտս, և յորդութեամբն Վանայ ծովը թափող գետերէն կրնայ առաջինը համարուիլ։ Կը պատմուի, թէ Ապաղայի գիւղօրէից շէն եղած ժամանակ գետս երբեմն բոլորովին կը ցամքէր, ըստ որում կը բաժնուէր արտօրէից վրայ։ Ապաղացի Հայք, ժիր մշակք և երկրագործք, իրենց առատ ցորենին աղալու համար, ժամանակաւ գետոյս վրայ ունէին 20ի չափ ջրաղացներ, իսկ այժմ չկան։ — Նկարգր. Ոսկեորսութիւն, Գ. 19–20։ Մասիս շաբաթաթերթ, Թիւ 3803, 546–548։ Նոր Հայ, 157–158։

ԱՊԱՆԱ. — Գետակ Սիսնեաց Վայոց ձոր գաւառի՝ արևմտա–հիւսիսային ձորահովտի մէջ։ Համանուն հին գիւղի մը աւերակներն կը տեսնուին գետակիս մօտերը։



132․ Ապաստուման ։

ԱՊԱՍ. — *փոքրիկ գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ։ Այժմեան բնակիչք քիւրդ են 15 տուն։ Գիւղիս մէջ կը տեսնուին եկեղեցւոյ և գերեզմանատան հետքեր։*

ԱՊԱՍ–ԹՈՒՄԱՆ *կամ* ԱԲԱՍ–ԹՈՒՄԱՆ. — *Հռչակաւոր ամառանոց և քաղաքաւան Տփղիսու նահանգի Ախալցխայի գաւառի մէջ, Ախալցխա քաղաքէն հեռու է 25 վերստ և Քութայիսէն 91 վերստ։ Ձգտեցուած է 5 վերստ երկայնութիւն ունեցող ահագին ձորի մը մէջ, որոյ մէջէն կը վազէ համանուն Ապասթումանի (հն. Օձխէ) գետակն։ Ձորի երկու կողմերն բարձրացող լեռներն, ծածկուած են եղեւնիներով, շոճիներով, բարդիներով, ընկուզենիներով և ուրիշ տեսակ ծառերով։ Աբասթումանն բարձր է ծովի մակերեւութէն մօտ 1273 մետր. անուանի է իր օդովն և առողջարար բնական տաք (47° R) ջրերով, գլխաւորապէս խլացուի և յօդացուի դէմ։ Աբասթումանն, իր բնական աշխարհագրական դիրքովն կ'ինկնայ Հայաստանի հիւսիսային արեւմտեան սահմանածայրը. հին ժամանակներն շատ կռիւներ և պատերազմեր եղած են այս կողմերը։ Այժմեան քաղաքաւանէն քիչ հեռու, կը գտնուէր Օձախուէն կառուցուած* Ոծրախէ *կամ* Ունձրխէ *բերդաւանը լերան մը ստորոտը, որ և շատ տարիներ իշխանանիստ եղած էր և գար ու կէս առաջ Լազիկացիներէն կործանուեցաւ և այժմ բոլորովին ամայացած է. կ'երեւին միայն քանի մը աւերակ եկեղեցիներ և գերեզմաններ։ Մեր Արտաշէս Բ Թագաւորի ժամանակ, Վրացիք Հայաստան արշաւելով, հալածուեցան մեր քաջակորով Սմբատ Բիւրատեան սպարապետէն, որ «յաջողութեամբ մտեալ ի Բարթլ՝ աւերեաց զերկիրն, և շինեաց բերդ մի յերկիրն Ունձրխւոյ զՍամցխէ, և եթող անդ զօրս օգնական Ծունդացւոցն, որք հնազանդեցան նմա»։ Ջուանշիր Գլ. Ե։ Այս Սմբատէն շինուած Սամցխէ բերդն կոչուած է նաև Գեռոք ըստ Վրաց պատմչի, և Գոռշիւ՝ ըստ հայ թարգմանութեան։ Կողմանցս ազգասէր երիտասարդաց ուշադրութիւնն կը հրաւիրենք այս հայկական հին բերդի գէթ աւերակաց լուսանկարն առնլու և նկարագրութիւնն ընելու։*

*1869ին Ռուսաց օգոստափառ կայսեր հրամանով, Աբասթումանի հանքային ջրերը յանձնուեցան կովկասի բժշկական կառավարութեան։ Տէրութիւնը յատուկ գումար նշանակեց և երեւելի բժիշկ Պ. Ռէմմէրտի ձեռքով, քաղաքաւանիս հանքային ջրերու նախկին խրճիթներն, փոխուեցան և զարդարուեցան Եւրոպայի նշանաւոր ջերմկաց նման շինութիւններով։ Աբասթումանն այժմ ունի 110էն մինչև 130 փայտաշէն շքեղ բնակարաններ, որոնք կը պատկանին գլխաւորաբար Թիֆլիսի, Ախալցխայի և Բագուի հարուստներուն։*

*1892–1899 տարիները հոս բնակեցաւ Ռուսաց թագաժառանգ († 1899) Մեծ Իշխան Գէորգի Ալեքսանդրովիչ։ Աբասթումանի երեք մասերէն, Վերին մասի մէջ որ ամենագեղեցիկն է, կը գտնուի թագաժառանգի պալատը, իր միւս բազմաթիւ տներով, ծաղկանոցներով և ճեմելիքներով կը բռնէ մօտ 1 վերստ տարածութիւն. հոս է նաև մեծ իշխանուհի Կսենիա Ալեքսանդրովնայի գեղեցիկ պալատը։ Աբասթումանի երկրորդ մասն է Վերին թաղը, ուր շինուած են մեծամեծ գեղեցիկ տներ և հոն կ'ապրին հարուստները։ Իսկ Ներքին թաղի մէջ են մթերանոցները, շուկան, և այլն։ Վերջին երկու թաղերը իրարմէ բաւական հեռու են, և մէջ տեղ կը գտնուին հանքային ջրերը և անոց վերաբերող գեղեցիկ շինութիւնները։*

*Աբասթումանը շատ հարուստ է զբօսավայրերով, հանքային ջրերու լողարաններու մօտ կան ծառաստաններ և ճեմելիքներ. անուանի են Վերին թաղի կրկին ծառաստանները, ուր զբօսանաց համար կան խաղեր, և ուտելեաց և ըմպելեաց տնակներ։ Ունի յատուկ շէնք մը, ուր կը կատարուին պարահանդէսներ, և երբեմն թատերական տեսարաններ։ Հիանալի է Թոքախտաւորներու զառիվեր կոչուած ճանապարհը, որ կը բարձրանայ ահագին լերան մը գագաթը, և ապա կ'իջնէ միւս կողմը։ Այս լերան գագաթէն սքանչելի տեսարան կը բացուի մարդու առաջ, ամբողջ քաղաքաւանը իր գեղեցիկ շինութիւններով, ծաղկանոցներով և ծառուղիներով, կախարդական տպաւո-*

ութիւն կը գործէ մարդու վրայ։ Ուրիշ աղբիւրներէ զատ, նշանաւոր է Միրոյ աղբիւրը իր սառ ջրով, անուանի է նաև Վարդանի կիրճը, ջրվէժ մը և կամուրջ մը՝ որ կը կոչուի Պ. Բէմմէրաի անուամբ։ Ամբողջ Ռուսիոյ մէջ նշանաւոր է քաղաքաւանիս պետական հիւանդանոցը, հիմնուած 1865 թուին, յորում Ռուսք ունին փոքրիկ եկեղեցի մը։ Ներքին թաղի մէջ կը գտնուի Լուսաւորչական Հայոց նորակառոյց և բաւական գեղեցիկ Ս. Գէորգ եկեղեցին, շինուած ի պատիւ հանգուցեալ թագաժառանգի՝ Բագուի հարուստ Պ. Յակոբ և Յովակիմ Աղամեաններու ծախքով։ Կաթոլիկեայ Հայք ևս ունին մի փոքրիկ մատուռ։ Տարուան մէջ միջին հաշուով Աբասթումանն կ'այցելեն 5000էն 5500 անձ։ 1892էն ի վեր քաղաքաւանս ունի յատուկ աստղաբաշխական դիտարան, որ ծովու մակերևութէն բարձր է 1292 մետր։ — Մշակ, 1875, Թ. 41. 1886, Թ. 94։ Նոր Դար, 1899, Թ. 135, 136։

ԱՊԱՐ. — Հին գիւղ Զօրրորդ Հայոց Խորձեան (Կեղի) գաւառի մէջ։ Գիւղիս անուամբ տակաւին այժմեան Կեղի գաւառակին մէջ կայ վանք մը Ապարու Ս. Կարապետ. ունի հարուստ կալուածներ և հաստատուն ամուր սենեակներ։ Վանացս, այժմ կէօլ բռնած արտին մէջ, գտնակուեր է Ս. Խաչ Հայրապետը։

ԱՊԱՐԱՆ կամ ՊԱՇ-ԱՊԱՐԱՆ. — Վիճակ այժմեան Երևանայ նահանգի Էջմիածնի գաւառի մէջ, որ կը համապատասխանէ Այրարատայ հին Նիգ գաւառին արևմտեան մասին։ Վիճակին մէջէն կ'անցնի Քասաղ գետը որ Ապարանի ևս կը կոչուի։ Որչափ և բնութեան տեսարանօք զուարճալի և գեղեցկատեսիլ է Ապարան, սակայն տխուր տպաւորութիւն կ'ընեն բազմաթիւ ամայի և աւերակ գիւղերը, յորոց շատերը ցարդ այլազգի անուններ ունին, մինչդեռ երկու դար առաջ բոլոր հայաբնակ էին։ Այդ գիւղերու ցուցակն և բնակչաց թիւն կը տեսնուին հետևեալ տախտակի մէջ։ Վիճակին գլխաւոր աւանն կը կոչուի Քասաղ, կամ Պաշ-Ապարան զոր պիտի նկարագրենք ի կարգին։

## ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱՊԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԻ

| ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | | ՕՏԱՐՔ |
|---|---|---|---|
| | Տուն | Հոգի | Հոգի |
| Ալիքօչագ . . . . | 165 | 1412 | — |
| Անղըրաղ . . . . | — | — | 140 |
| Աստուածընկալ . . | 27 | 257 | — |
| Ափնագեղ . . . . | 111 | 866 | — |
| Գալաչա . . . . | 46 | 439 | — |
| Գարանլըգ . . . . | 45 | 469 | — |
| Գարապուլաղ . . . | 84 | 636 | — |
| Գարաքիլիսէ . . . | 84 | 818 | — |
| Գիւլապլի . . . . | 57 | 574 | — |
| Գիւլլիճէ . . . . | 147 | 889 | — |
| Թամճէրլի . . . . | 96 | 877 | — |
| Թագեարլու . . . | 49 | 587 | — |
| Իլանչալան . . . . | 44 | 345 | — |
| Իմէրլի . . . . | 46 | 555 | — |
| Հաճի Բէքիր . . . | 27 | 297 | — |
| Համամլը . . . . | — | — | 555 |
| Ղազանֆար . . . | 144 | 1216 | — |
| Ղուչճի . . . . | 29 | 287 | — |
| Միւլքի . . . . | 49 | 495 | — |
| Մոլլա-գասըմ . . . | 82 | 776 | — |
| Նորաշէն . . . . | 13 | 142 | — |
| Ճիրագալա . . . . | 102 | 806 | — |
| Զամբըրլու . . . . | 112 | 1022 | — |
| Պազարճըգ . . . . | 55 | 491 | — |
| Պաշ Ապարան . . . | 152 | 1353 | — |
| Պապաքիչի . . . . | — | — | 435 |
| Պլխեր . . . . | 71 | 692 | — |
| Սաղմոսավանք . . | 10 | 97 | 141 |
| Սամատէրվիշ . . . | 46 | 426 | — |
| Սաչլու . . . . | 87 | 616 | — |
| Փերաք . . . . | — | — | 229 |
| Քըրաճլու . . . . | — | — | 744 |
| Քիւրտ Ալի . . . . | — | — | 102 |
| Քոթուր . . . . | 18 | 122 | 80 |
| ԳՈՒՄԱՐՆ . . . | 1964 | 17342 | 2224 |

ԱՊԱՐԱՆ կամ ԱՊԱՐԱՆՆԵՐ. — Երբեմն հայաբնակ մեծ աւան կամ գիւղաքաղաք Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ, Երնջակայ գետոյն աջակողմը, և այժմ 84 տուն թաթար բնակչօք անշուք գիւղ։ ԺԷ դարու սկիզբն Միաբանողաց գլխաւոր բնակութեան տեղն եղաւ, ուր փոխադրեցին նաև իրենց եպիսկոպոսի աթոռն Նախճաւանէն. բարգաւաճ էր ոչ միայն կրօնաւորական կարգօք, այլ և երկրի մշակութեամբն և բերքերով։ Նոյն ժամանակ Ապարաններ ունէր 500 տուն, և

Միաբանոցաց եպիսկոպոսանիստ եկեղեցին կը կոչուէր Ամենայն Սրբոց անուամբ, և կառուցուած էր խոշոր քարերով աւանին մէջ տեղը բարձրաւանդակի վրայ, որ 1848ի երկրաշարժէն բոլորովին աւերակ դարձաւ (Թ. 133)։ Եկեղեցւոյս մէջ կան զանազան արձանագրութիւնք ԺԲ և ԺԳ դարուց վե֊րաբերեալ թուականներով։ 1870ին այլազ֊գի բնակիչք եկեղեցւոյ տակ գտան ներք֊նատուն, և հանեցին ոսպաներ, որոնք նշա֊նաւոր բան մը չէին։ Արձանագրութեանց թուականներէն կը յայտնուի, որ Միաբանո֊ցաց ուխտի այստեղ հաստատուելէն առաջ ևս Ապարանները շէն էր։ Միաբանոցաց ե֊պիսկոպոսը ԺԷ դարու սկիզբը, Ապարանե֊րի սահմանները կը յիշէ նաև ուրիշ հինգ մատուռներ, յորս միայն տօնական օրեր կը կատարուէին պաշտամունք։ Բնիկ ոմն Մխիթար՝ որ զինքը Ֆրա Մխիթարիչ կ՚ա֊նուանէ, և ըստ իր գրութեան 50 տարի (1360–1410) գրքերով զբաղած է, գրոց յիշատակարանաց մէջ, Ապարանի Միաբա֊նոցաց վանքի եկեղեցին կը կոչէ յանուն «Սրբուհւոյ Աստուածածնին, և Ս. Ստե֊փաննոսի Նախավկայի և Ս. Յակոբոսի Առաքելոյ և Ամենայն Սրբոց, հազարապե֊տաց խորհրդոցն Աստուծոյ». կը յիշէ նաև կրօնաւորաց անուանք։ Ապարանից Միա֊բանոցաց պատմութիւնն ընդարձակ գրուած է Հ. Ալիշանի Սիսականի տեղագրութեան 369–374 էջից մէջ։ Այս կրօնաւորաց մէջ գիտութեամբ և գրուածներով իբրև նշա֊նաւոր են, Հ. Օգոստինոս Բաջենց որ ե֊պիսկոպոս եւս եղաւ, և Հայրն Մատթէոս և Թադէոս։ Ոչ սակաւ Ապարանցիներ, թէ՛ եկեղեցականք և թէ աշխարհականք գացած են ի Հռոմ, և ոմանք եւս անդ կնքած ի֊րենց կեանքը։ Եւրոպացի ուղևորներէն գլխա֊ւորաբար աւանիս այցելողներն են Թաւեռ֊նիէ, Շարտէն, Հ. Վիլլոթ և Հ. Պոմուշայիէ Յիսուսեանք. սոնք ամէնքն ալ սքանչացած և գովեստիք կը խօսին Ապարանից պտղոց առատութեան և ազնուութեան վրայ։ Աւա֊նէս կէս մղոն հեռու ճանապարհի վրայ կայ սահմանախաչ մը (Թ. 134)։



133. Աւերակ եկեղեցի Ապարանքի։

ԱՊԱՐԱՆԵՐ. Տես ԱՊԱՐԱՆ։

ԱՊԱՐԱՆԻՑ ԳԵՏ. — Կը յիշուի Ծղուկ (Սիւնիք) գաւառի Սիւնեաց եկեղեցւոյն հար֊կատու գիւղերու կարգին մէջ. կը կարծուի թէ եղած ըլլի փոքրիկ գետակ մը, որոյ ձկանց որսերէն մասն կը հանուէր եկեղեց֊ւոյն։

ԱՊԱՐԱՆՋԱՆ. — Յիշուի աղբիւրս Վաս֊պուրականի Տոսպ գաւառի մէջ. Վարագայ մօտ։ — Արծ. Վասպ. Գ. 105։

ԱՊԱՐԱՆՔ կամ ԱՊԱՐԱՆԻՑ Ս. ԽԱՉ. — Մոկաց աշխարհի Մոկք Առանձնակ (Մամրտանք) գաւառի մէջ կ՚ինկնայ՝ երբեմն

*հաշակաւոր և այժմեան գրութեամբն ազաւոր վանքս, համանուն հայարնակ գիւղէն քառորդ մը հեռու՝ հիւսիսային կողմը։ Հին ժամանակները վանացս տեղը կառուցուած էր եղեր Հայոց երեւելի նախարարներէն միոյն ապարանքը, որոյ անուամբ, կ'ըսեն, ի վերջոյ կոչուեր է վանքս։ Ապարանից ուխտի հիմնարկութեան ժամանակն որոշ չի գիտցուիր, ինչպէս նաեւ անծանօթ է իր հին պատմութիւնն։ Տասներորդ դարու մէջ կը սկսի պատմութեան մէջ յիշուիլ այս հռչակաւոր վանքս, որ կը թուի, թէ Մոկաց*



134 • *Սահմանախաչ Ապարանքի մօտ։*

*աշխարհի եպիսկոպոսանիստ աթոռն էր։ Հայոց Աբաս թագաւորի և Անանիա Մոկացի կաթողիկոսի ժամանակ, Մոկաց եպիսկոպոսն էր՝ սրբութեամբ, առաքինութեամբ և իմաստութեամբ հռչակաւոր Դաւիթ անուամբ մէկն, որ խոր ծերութեան հասնելով, վախճանեցաւ և թաղուեցաւ Ապարանից վանքի մէջ, որոյ շիրմէն և գերեզմանին հողէն շատ բժշկութիւններ կը լինէին։ Այս երանելի Դաւիթ եպիսկոպոսը, իր կենդանութեան ժամանակ, եղբօրը զաւեր որդին Ստեփաննոս՝ քահանայ ձեռնադրած էր, և վարդապետութեան պատիւ ևս տալով Ապարանից ուխտին առաջնորդ դրած, որ վերջն ալ Մոկաց աշխարհին եպիսկոպոս ձեռնադրուելով՝ կը նստէր նոյն վանքի մէջ։*

*Վանքս կանուխ ունեցեր է Ս. Կարապետ եկեղեցի մը, որոյ խորանին մէջ է Դաւիթ եպիսկոպոսի հրաշագործ գերեզմանը։ Ստեփաննոս եպիսկոպոսի վանականութեան ժամանակ շինուած է նաեւ ուրիշ եկեղեցի մը Ս. Ստեփանոս Նախավկայ։ Նոյն Ստեփաննոս եպիսկոպոսը շատ նորոգութիւններ ըրաւ, և սկսաւ վանաց մէջտեղը հիմնարկել Ս. Աստուածածնի մեծ և փառաւոր եկեղեցի մը։ Այս նորոգութեանց և շինութեանց միջոց, վերոյիշեալ եր. Դաւիթ եպիսկոպոսի եղբօրը որդին Մանգլաւա՝ Կ. Պօլսի մէջ, իր հօրեղբօր գերեզմանին հողով ոչ սակաւ հրաշքներ և բժշկութիւններ ընելով, ժամանակին իշխող Կոստանդին և Վասիլ կայսրներէն մեծապէս պատուեցաւ, և ի վերջոյ ըստ բաղձանաց Ստեփաննոս եպիսկոպոսի և վանականացն Ապարանից, խնդրեց և ընդունեցաւ ոսկեհուռ և ձուլածոյ փառաւոր խաչի մը մէջ զետեղուած՝ մասն ինչ կենաց փայտէն և ուրիշ անգին մասունքներ, Փրկչի փուշ պսակէն, սպունգէն, բեւեռներէն, գենջակէն և Ս. Աստուածածնի հանդերձէն։ Այս ամէնը վայելուչ կերպով ամփոփուած ճարտարագործ երկու դռնով տապանակի մը մէջ, հետն առած Մանգլաւա իշխանը մեծ շքով մեկնեցաւ Կ. Պօլսէն, և բերաւ Ապարանից վանքը։ Ստեփաննոս եպիսկոպոսն իր վանականներով մեծ հանդիսիւ հանգոյց զայն նախ Ս. Կարապետի եկեղեցւոյն հրաշակառոյց խորանին վրայ. այնուհետեւ եռանդեամբ և փութով սկսաւ առաջ տանել Ս. Աստուածածնի եկեղեցւոյն շինութիւնը. որուն փառաւորութեան և գեղեցկութեան, քանդակներու, նկարներու, մանր բանուածքներու, մեծագին զգեստուց և սպասուց նկարագիրը՝ մանրամասն ըրած է Գր. Նարեկացին։ Ս. Աստուածածնի եկեղեցւոյն հետ միացուց մերձակայ Ս. Ստեփաննոսի և Ս. Կարապետի եկեղեցիները։ Աստուածածնի եկեղեցւոյն շուրջը շինեց նաեւ մեծամեծ խորաններ կամ փոքրիկ մատուռներ՝ յանուն Ս. Առաքելոց, Ս. Լուսաւորչի, և Ս. Աբդլմսեհի, և անոնց մէջը դրաւ,*

նոյն սրբոց նշխարներէն. ասոնց հետ դրու. նաև Անդրէի առաքելոյն, Ատովմեանց վկայից, Քառասուն Մանկանց Սեբաստիոյ, Ղևոնդեանց քահանայից, և ուրիշ սրբոց մասունքներ: Երբ եկեղեցւոյ շինութիւնն ըստ ամենայնի աւարտեցաւ, Ստեփաննոս եպիսկոպոսի հրաւիրելովը, վանուցս մէջ ժողովեցան բազմաթիւ եպիսկոպոսներ, վանականներ, կղերիկոսներ, մեծամեծ իշխաններ, նախարարներ, նաև Վասպուրականի թագաւորներն երեք եղբարք՝ Աշոտ Սահակ, Գուրգէն Խաչիկ և Սենեքերիմ Յովհաննէս: Ասոնք ամէնքը, բազմամբոխ ժողովրդեան հետ, փառաւոր թափօրով և շքեղ հանդիսով կենաց փայտի տապանակն առին Ս. Կարապետի եկեղեցիէն և փոխադրեցին Ս. Աստուածածնի նորակառոյց եկեղեցւոյ մէջ, փրկչական 983 թուին, մեծ պահոց աւագ ուրբաթու խորհրդաւոր օրը: Այս հանդիսին ներկայ էր նաև Ս. Գրիգոր Նարեկացին, որ ի վերջոյ Ստեփաննոս եպիսկոպոսի խնդրանօք՝ գրեց թէ՛ Ապարանից պատմութիւնը և թէ Ս. Խաչի հրաշալի ներբողն: Կենաց փայտի մասին այս վանքս բերուելէն վերջ, Ապարանից ուխտի անունն փոխեցին, և այնուհետև սկսան անուանել Ապարանից Ս. Խաչ:

Հռչակաւոր վանքս, ժամանակի յաջող և ձախող ընթացից համեմատ իր գոյութիւնն պահած և հասած է մինչև մեր օրերը, սակայն պատմական կարևոր տեղեկութիւնք և դէպքեր, դրութեամբ մեր ձեռքն հասած չեն: Այս վանքէն էր ԺԶ դարուն բանաստեղծ Սիմոն վարդապետը, որ տաղաչափեց Պահլաւունեաց և Մամիկոնեանց վիպասանութիւնը: ԺԹ դարու երկրորդ կիսուն մէջ վանուցս հին ձեռագիր մատեանք, թանկագին սպասները և սրբութիւնները, և բոլոր ինչքերը աւարառութեամբ գրաւած է քիւրտ Օսման աղան. այժմ ևս նոյն քրդի Հասան և Ապտուլ–րահման որդւոց ագարակն (չիֆթլիկ) եղած է: Հայ մը իր ընտանիքով կը բնակի վանուցս մէջ, որ բռնի ստիպուած է շէնքին պահպանութիւն ընելու, շուրջը եղող մարգագետինները մշակելու և արդիւնքը վերոյիշեալ քրդաց ձմերոցն տանելու: Տակաւին կանգուն է վանուցս հինաւուրց չքնաղակերտ գմբէթաւոր հոյակապ եկեղեցին, որ ունի երեք խորան և հինգ լուսամուտ: Մօտակայ Ս. Կարապետի եկեղեցւոյն գմբէթն և արտաքին շէնքեր քանդեր են քուրդերն և այժմ անտէր և աւերակ կը մնայ: Վանուցս միւս բոլոր շինութեանց վրայ կը փայլի հին արուեստի գեղեցկութիւն. չնաշխարհիկ զանգակատունն ալ խարխլած են քուրդերը: Այսպէս ահա երբեմն հռչակաւոր և հոյակապ Ապարանից վանքս, այսօր կը գտնուի Հայոց իրաւասութենէն դուրս, տխուր և ողբալի վիճակի մը մէջ:

ԱՊԱՐԱՆՔ. — Հայաբնակ գիւղ Ապարանից վանքի մօտ, լեռնային դիրք, դրեթէ 4 ժամ հեռու է Մոկաց վտակէն, և Վանէն երեք օր՝ անոր արևմտեան հարաւային կողմը: Բնակիչք կը համարուին 60 տուն, ունին Ս. Աստուածածին քարաշէն եկեղեցի մը: — Ապարանք կամ Ապրանք անուամբ գիւղ մը ևս ունի Ակն, որոյ բնակիչք այլազգի են այժմ: — Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ:

ԱՊԸԼՀԻՆՏԻ. — Գիւղ Կարնոյ, 50 տուն, բնակչօք, կէսը հայ և կէսը թուրք: Հայք ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը:

ԱՊԸԼՊՈՒՀԱՐ կամ ԱՊՈՒԼԲՈՒՀԱՐ. — Գիւղ Տուրուբերանի Տարնոյ գաւառի մէջ, կը նայի Մշոյ լայնածաւալ դաշտի վրայ: Ունի 30–35 տուն հայ, որք շատ հիւրասէր են և ունին պարզ եկեղեցի մը:

ԱՊԸՐՆԷՍ. — Հայաբնակ գիւղ Թորթումի (Բարձր Հայք). բնակիչք 60 տուն:

ԱՊԻԷՐՁԷՆ. Տես ՀՁՈՒ:

ԱՊԻԿԷՐՄ. Տես ՋԵՐՄԻԿ:

ԱՊԻՇ կամ ԱՓԻՇ ԹԱՐ. — Կիլիկիոյ Ալատաղ լերանց բարձրագոյն կատարն:

ԱՊԻՊԻՏԼԻՍ. Տես ԲԱՂԷՇ:

ԱՊԼԱՍՏԱՆ. Տես ԱԼՊԻՍՏԱՆ:

ԱՊՈՍ. — Ստրաբոն կը յիշէ լեռ, Հայաստանի արևելակողմը, Մարաց սահմանին մօտ:

ԱՊՈՅ. — Փոքրիկ վիճակ Գուգարաց, զոր այլազգիք Գայքուշի անուանեն. վիճակս ունի իր անուամբ լեռներ: Վախուշտ կ՚ըսէ, թէ անփայտ է երկիրը և անպտուղ, բայց ունի մարգեր, և հովտաց մէջ տեղ տեղ կը բուսնի նաև ցորեն, գարի և վարսակ: Վախտանգ վերջին շատ շինութիւններ ըրաւ վիճակիս մէջ,

գորս յետոյ Նասիր Շահ գրաւեց։ Բնակիչք Հայազգի են, կորովի և բարձրահասակ, և արուեստով խղագործ։ Նոյն Վախուշտ աշխարհագիրը վիճակիս իբրև քաղաքաւանը կը յիշէ Ղազանճի, և հետևեալ գիւղերը, սկսելով արևելեան կողմէն. Բանճարկոշա, Գիճարզ, Միրիս, Շանճազար, Խաղ, Փանոս, Խոչի, Ցարկմոշզ, Մելիքպեկ, Օրբլոշ, Կիրակոս, Ծքարոս, Տեվեկեօզ, Բեվայ, Լօքսիշզ կրկին, Կեօլ կրկին՝ լճակի մը մօտ, Գորգոր կրկին, Տիքմէրաշի, Թերգիօղլոշ, Սառանա, Պէկ, Ճալ, Մերապաղ, Թաշքեօփրիշ, և այլն։ Այս անուններէն, որք հայկական են կամ տաճկական, կը հասկըցուի թէ երկիրս աւելի Հայոց կը վերաբերի քան Վրաց։ Տես ԱՃՈՅ։

ԱՊՈՒՋՆԱԿ. — Գիւղ Զորբորդ Հայոց, այժմեան Վերին Կեղի գաւառակի մէջ։

ԱՊՈՒԼ կամ ԱԲՈՒԼ. — Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի ամենաբարձր լեռն է, որ կը բարձրանայ գրեթէ գաւառի կեդրոնը։ Բաղկացած է երկու գագաթներէ, որ իրարմէ հեռու են մօտ 22 մետր։ Կը կոչուին Մեծ և Փոքր Ապուլ. առաջինը բարձր է 10826 ոտնաչափ, և երկրորդը 9191 ոտն։ Մեծ Ապուլէն կը բղխէ քաղցրահամ աղբիւր, որ առուակ մը ձևանալով կ'անցնի համանուն Ապուլ գիւղէն։ Գիւղացիք կը պատմեն, իբր թէ նախնիք խմեր են այդ ջրէն և սաստիկ հաւնելով ըսեր. «խոտակ ապուր է», յետոյ այժմեան գիւղի տեղը բնակութիւն հաստատեր և գիւղն ու սարը կոչեր են Ապուր, որ աղաւաղուելով դարձեր է Ապուլ։ Մեծ Ապուլի արևմտեան լանջին կը նկատուի պղնձի հանք և սուրից, սակայն դեռ հետազօտուած չէ։ Լերանս գագաթը ամառն ևս ծածկուած է ձիւնով։ — Փոքր Ապուլի լանջին ի հնումն կայ եղեր ամրոց մը, որ այժմ աւերակ է։ Այս երկու լերանց մէջտեղ կը գտնուի փոքրիկ Ապուլ լիճը։ Ապուլ գիւղի բնակիչք ամբողջ հայ են 732 հոգի, բաժնուած 65 տան։ — Ջաւախք, 15։

ԱՊՈՒԼԲՈՒՀԱՐ. Տես ԱՊԸԼՊՈՒՀԱՐ։

ԱՊՈՒՁԵԽ. Գիւղ կամ արուարձան Փոքր Հայոց Ակն քաղաքի։ Ունի Ս. Նշան փառաշէն եկեղեցի մը և մէկ Վարագայ վարժարան։ Բնակիչք 1066 հայ և 838 այլազգիք։ Տես ԱԿՆ։

ԱՊՈՒՍԻ. Տես ՀԱՊՈՒՍԻ։

ԱՊՊԱՍԱՊԱՏ. Տես ԱՍՏԱՊԱՏ։

ԱՊՊԱՍ–ԿԷՕԼ. Տես ԱԲԱՍ–ԿԷՕԼ։

ԱՊՏԱԼ–ԱՂԱԼԸ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հարաւային եզերաց մօտ։ Բնակիչք 543 հոգի, բաժնուած 59 տան։

ԱՊՏԻՒԼ–ԱՃԱՐ. Տես ԱԲԴԸԼԱ–ՍԱՐ։

ԱՊՏՈՒՀԵՐ կամ ԱՊՈՒ–ՏԱՀԻՐ. — Այլազգաբնակ գիւղ Խարբերդու։ Համանուն վիճակն ունի արգաւանդ երկիր. կը բուսցնէ առատ արմտիք, ցորեն, գարի, են. և տեսակ տեսակ պտուղներ, յորս նշանաւոր է չամիչն՝ զոր վաճառելու կը տանին Արաբկիր և Ակն։

ԱՊՐԱԿԻ կամ ԱՄՐԱԿԻՑ. — Հին գիւղ Գուգարաց Տաշիր գաւառի մէջ։

ԱՊՐԱԿՈՒՆԻՍ կամ ԱՊՐԱԿՈՒՆԻՔ. — Հին գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ, Երընջակայ գետոյն աջ թևի վրայ, Ջուղայէն մղոն մը հեռու։ Թէ և պատմութիւնը ԺԳ դարու անցից մէջ կը յիշէ գիւղիս անունը. բայց անշուշտ նոյն ժամանակէն աւելի հին պիտի լինի։ Ապրակունիք ևս Միաբանողաց ձեռքն անցած է. եկեղեցին կը կոչուի Ս. Գէորգ, որ Ապարաններէ եկեղեցւոյն նման հին եղած կը թուի, զոր 1868էն վերջը հիմնովին նորոգած են։ Գիւղիս վանքն ևս կը կոչուէր Ս. Գէորգ. Մխիթար Ապարանեցի այս վանքս կ'անուանէ Վերին վանք, անշուշտ մերձակայ Ս. Կարապետի վանքին հետ համեմատելով, և կ'ըսէ, թէ կափայեցի Մաղաքիա վարդապետը ճարտարութեամբ անելով, մէջը վարժարան հաստատեր է, Սարգիս անուն վարդապետի մը ձեռաց տակ, բայց յետոյ անցած կը թուի վերստին Միաբանողաց ձեռքը։ ԺԷ դարու սկիզբը 12 միաբաններ ունէր վանքը և գիւղը 100 տուն բնակիչք։ Երթալով նուազած է բնակչաց թիւն, և ըստ Ջահկեցւոյ կաթողիկոսի, մեծ մասն դարձած են Պարսից դենին, և մեզ կը թուի թէ մէկ մասն ալ գաղթած է ուրիշ կողմեր։

Այժմ Ապրակունիք ունի 79 տուն զուտ հայ բնակիչք. հին բնակչաց սերունդներէն

## ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱՊՐԱԿՈՒՆԵԱՑ ՎԻՃԱԿԻ

| ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | | ՕՏԱՐՔ |
| --- | --- | --- | --- |
| | Տուն | Հոգի | Հոգի |
| Ալիխանլու-Չէնատին. | — | — | 595 |
| Անգուր Վերին. . . | — | — | 228 |
| » Ներքին . . | — | — | 262 |
| » Միջին. . . | — | — | 41 |
| Ապարաներ. . . . | — | — | 589 |
| Ապրակունիք . . . | 79 | 705 | — |
| Արագին. . . . . | 59 | 271 | 552 |
| Արավուս. . . . . | — | — | 227 |
| Գաղանճի-Միւլուխ. . | 99 | 858 | 262 |
| Գաղապ-Գերղերլինօ-կէյ. . . . . | — | — | 512 |
| Գըրլճա. . . . . | 5 | 25 | 144 |
| Զուպալա . . . . | — | — | 49 |
| Թէյվաղ. . . . . | — | — | 140 |
| Լեռքաթաղ. . . . | — | — | 119 |
| Խանագա . . . . | — | — | 322 |
| Խաչափարախ . . . | — | — | 485 |
| Խօշկաշէն . . . . | — | — | 154 |
| Կզնուտ. . . . . | 199 | 1516 | 100 |
| Կեալ-Զարաջուր . . | 20 | 238 | — |
| Կեյնուկ (Գոյնուկ). . | — | — | 141 |
| Կէօլա-Քէմէր . . . | — | — | 60 |
| Ճամալտին. . . . | — | — | 480 |
| Նախչի-Նարկիզ . . | — | — | 45 |
| Նաղաժիր . . . . | — | — | 512 |
| Նաճաֆ-Ալիբէկղիղէ. | — | — | 75 |
| Նեղրամ. . . . . | — | — | 2519 |
| Նորաշէն . . . . | 39 | 259 | 455 |
| Շահմիրանշահ. . . | — | — | 269 |
| Շուռութ . . . . . | 56 | 555 | 102 |
| Պօյ-Ահմէտ. . . . | — | — | 75 |
| Ջուղա . . . . . | 90 | 649 | — |
| Սալթախ. . . . . | — | — | 574 |
| Սուրապ. . . . . | — | — | 738 |
| Սուրմալիգ. . . . | — | — | 112 |
| Վայխիր. . . . . | — | — | 215 |
| Փորադաշտ. . . . | 36 | 481 | — |
| Քէրպալայ-Օրուճղիղէ. | — | — | 90 |
| Քռնա . . . . . | — | — | 465 |
| ԳՈՒՄԱՐՆ . . . | 662 | 5555 | 11100 |

մնացած է ոչինչ թիւ մը։ Բնակչաց շատերն գաղթած են Սալմաստէն և ուրիշ տեղերէ. կ'զբաղին երկրագործութեամբ, ժիր են և յաջողակ. իրենց երկրի հունձքը աւարտելէ վերջ, կ'երթան Սխիան և անկէ ալ Շարուր, և այն կողմանց ցորենի և բրնձի հնձողաց օգնելով դրամ կը շահին և կը դառնան. Մէջերնին կան նաև արուեստաւորներ, և ճարտար քարակոփք։ — *1868*ին հին եկեղեցւոյ նորոգութեան ժամանակ, հիմերը փորելու ատեն յայտնուեցան խաչքարեր, որոնց ոմանց վրայ կը նշմարուէին անարուեստ ձեռքի գրած արձանագրութիւնք անվերծանելի. միայն վրայ կար թուական ՇԱ (= *1052*) և գաճեայ պատկեր Ս. Աստուածածնի՝ Յիսուս գիրկը։ Եկեղեցւոյն հարաւային կողմը, *30* քայլ հեռու, տապարի մը վրայ կայ կիսաւեր մատուռ մը Ս. Յովհաննու, ուր ամէն կիւրակամուտ երեկոներ կը յաճախեն բարեպաշտ կանայք և ճրագ կը վառեն։ Գիւղիս հիւսիսային կողմը տաուակի աջ թևի վրայ, կայ ուրիշ բլրակաձև տապար մը, որոյ վրայ կը տեսնուին երեք մեծամեծ քարէ սահմանախաչեր. այս տապարի վրայ և ստորոտը ափուած են Միաբանողաց ժամանակի գերեզմաններ, գրեթէ հողի հետ հաւասարած։

Ապրակունիք ըստ այժմեան աշխարհագրական բաժանման, կը կազմէ Նախճաւան գաւառի երրորդ վիճակը, որ ունի *38* գիւղ, որոց անուանք և բնակաց թիւերն դրուած են առանձին ցուցակի մէջ. — Հնութիւնք հայրենեաց, *35–45*։ Սիսական, *376–378*։

ԱՊՐԱԿՈՒՆԻՔ. Տես ԱՊՐԱԿՈՒՆԻՍ։

ԱՊՐԱՆԻՑ ՎԱՆՔ. — Իբրև գիւղ Կոտեայ երկրին, յիշուի անունս յիշատակարանաց մէջ։

ԱՊՐԱՆՈՒՑ ՋՈՐ. — Կը յիշուի Այրարատայ Շիրակ գաւառի Հոռոմոսի վանաց արձանագրութեանց մէջ։

ԱՊՐԱՆՑ. Տես ԱՊՐԱՆՔ։

ԱՊՐԱՆՔ կամ ԱՊՐԱՆՑ. — Գիւղ Բարձր Հայոց Դերջան գաւառի մէջ։ Գիւղիս մօտ է Ծակքարի Ս. Դաւիթ վանքը. ունի մեծ խաչարձան մը, որոյ արձանագրութիւնք դժուարընթեռնլի են։ — Ապրանք անուամբ գիւղ մի ևս կայ Չորրորդ Հայոց Բալու գաւառակի մէջ, Բալու քաղաքէն ժամ ու կէս հեռաւորութեամբ՝ հիւսիսային կողմը։ Բնակիչք զուտ հայ են *25* տուն, և ունին եկեղեցի մը։

ԱՊՐԻ. — Գիւղ Տուրուբերանի հին Կորի գաւառի և այժմեան Ներքին Պալանըխ գաւառակի մէջ, Լիզ գիւղէն $1^{1}/_{4}$ ժամ հեռու՝

արեւելեան հիւսիսային կողմը։ Բնակիչք բաժնուած են 80–90 տան, կէսն հայ և կէսը քուրդ։ Հայք ունին անշուք եկեղեցի մը, կը պարապին երկրագործութեամբ, և հաւատարիմ ծառայք են տեղւոյն քրդաց, որք շէխ կը կոչուին։

Գիւղիս շեխերէն միոյն տան մէջ օձախ կոչուած քար մը կայ, որ իբր թէ լինի գերեզման Մամբրէ հօվւոյն, որ Մանեայ այրին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինն գտաւ և Թորդան աւանին մէջ թաղեց։ Այդ գերեզման համարուած քարին, թէ՛ Հայք և թէ Քուրդք ուխտի կու գան, իբրև սրբոյ մի յարգելի գերեզմանին։ Քուրդերն կը պատմեն՝ որ իրենք յունական ծագումն ունին, և իրենց այժմեան ջամին ժամանակաւ քրիստոնէական եկեղեցի մը եղած է։ Այրիի հիւսիսակողմը քարահանք կայ, յորմէ շրջակայ գիւղերը ջաղացքի քարեր կը հանեն։ Իսկ արեւելեան հիւսիսային կողմն ալ Կարմիր վանք ըսուած աւերակ մը կայ, ուր Հայք ուխտի կ'երթան, որ կը կարծուի լինել Թիլ աւանը։ Գիւղիս հարաւային կողմի աւերակներու մէջ կան ոչ սակաւ խաչքարեր։ – Նկրգր. Ուղևորութիւն, Գ. 87–89։

ԱԶԱԲԱԶ կամ ԱԶԲԷԶ. — Հին գիւղ Սիւնեաց Զորք գաւառի, որոյ վրայ յարձակելով Տէր Աւետիք՝ միջի բոլոր այլազգի բնակիչները կոտորեց։ Այժմ ունի 38 տուն այլազգի։

ԱԶԱՌԱԳԱՒԻԹ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱԶԱՌԵՐԵԿ ԱՆԱՊԱՏ. — ՋԼԱ (= 1482) թուին գրուած շարականի մը յիշատակարանին մէջ կը հանդիպինք անուանս. «...ի յերկիրս Արարատեան ձեռամբ անիմաստ գրչի, Վրթանէս սուտանուն կրօնաւորի, ի յանապատս որ կոչի մականուն Աջառերեկ, ընդ հովանեաւ Ս. Սարգսի և Ս. Յակոբիս...»։ Տես ԱՐԶԱՌԵՐԵԿ։

ԱԶԲԷԶ. Տես ԱԶԱԲԱԶ։

ԱԶԻԹ. — Գուգարաց աշխարհի մէջ, Հաղբատայ վանքի մօտ աւերակ գիւղատեղի մ'է, Ամիր–Զաքար լերան ստորոտը։ Ունի մշակութեան ընդարձակ գետին, անտառներ և պտղատու ծառեր, աւերակ ջրաղացներու տեղեր։ Տխուր կերպով մնացած են տակաւին կիսակործան եկեղեցւոյն և կրկին թաղերու բնակութեանց աւերակներն, ինչպէս նաև հին գերեզմաններն՝ անտաշ տապանաքարերով։ Թէ ե՞րբ կամ ո՞ւր գաղթած են տեղւոյս բնակիչք, յայտնի չէ։

ԱԶՈՂՔ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՌԱԶ. — Սակաւարնակ գիւղ Վանայ Մահմոան վիճակի մէջ։ Ունի Ս. Սարգիս քարուկիր եկեղեցի մը։

ԱՌԱԼ. — Գիւղ Ախալցխայի գաւառի մէջ, 52 տուն բնակչօք։

ԱՌԱԿ. — Կը յիշէ գիւղս Առաքել պատմիչ (Գլ. ԽԸ), Աւետիս նահատակի պատմութեան մէջ։

ԱՌԱԴ կամ ԱՌԱԴՍ. — Հին գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ արեւելակողմը ձորագեայ մը բերանը։ Ձորը և գետակը կը կոչուին Աւղըձոր, որ շատ բարեբեր է, և կ'երկննայ դէպի հարաւ մինչև Սասուն՝ շատ ձորակներու բաժնուելով։ Յոհան Մամիկոնեան (25) կ'ստուգաբանէ անունս, երբ Հայոց ընդդէմ Պարսից յաղթութիւնն պատմելէ վերջ կ'ըսէ. «Եւ միւս ընկերին առեալ աւազ մատուցանէր և ասէր. Պարսից խորակարար, Ա՛ռ զաղս։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Առաղս մինչև ցայս օր. զոր և աւան իսկ շինեաց»։ Ի հնումն աւելի շէն եղած կը թուի գիւղս, որուն վկայ են բազմաթիւ տանց և որմոց աւերակներն։ Այժմ ունի 70 տուն հայ բնակիչ, և երկու տուն քուրդ։

ԱՌԱԿԼԻ. Տես ԷՐԷԿԼԻ։

ԱՌԱՆ կամ ԱՌՆԱՑ. — Ցիշուի անունս Աղձնեաց Սէրխէթք գաւառի մէջ. տեղեկութիւնք կը պակսին։

ԱՌԱՆԱՑ ԱՇԽԱՐՀ. Տես ԱՂՈՒԱՆՔ։

ԱՌԱՆՁՆԱԿ ՄՈԿՔ. — Մոկաց աշխարհի հին գաւառներէն մին, որուն կը համապատասխանէ այժմեան Մոկք վիճակը։

ԱՌԱՆՐՈՏ կամ ԱԹԱՆՌՈՏ. — Ուտի նահանգի հին գաւառներէն մին։

ԱՌԱՊԱՆ. Տես ՌԱՊԱՆ։

ԱՌԱՊԱՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒ. — Այսպէս կոչուած է ի հնոց Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Վաղարշապատէն դէպի հիւսիսային արեւելք և մինչև Օշական եղած քարուտ և աւազոտ երկիրն։

ԱՌԱՊԱՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ. — Վերոյիշեալ

Վաղարշապատու Առապարի մէջ, էջմիածնէն կէս ժամ հեռու՝ արևելակողմն կը գտնուէր երբեմն հռչակաւոր եկեղեցին, որ այժմ գրեթէ բոլորովին անհետացած է։ Աւանդութիւնը կ'ըսէ, թէ այստեղ Տրդատ թագաւորը ընդառաջ ելաւ սրբոյն Գրիգորի. ուստի և այդ յիշատակին է դարու մէջ Ներսէս Գ Շինող կառուցանել տուաւ հոյակապ և հրաշակերտ եկեղեցի մը, որ Սեբէոսի գրածին համեմատ, նախ կոչուեցաւ յանուն Երկնաւոր Զօրաց, և ի վերջոյ փոխուած է յանուն Ս. Գրիգորի։ Մեր բոլոր յետագայ ականատես և չանմտող պատմիչք, մեծ գովասանօք կը յիշեն եկեղեցին, և կը թուի թէ բոլոր Հայաստանի մէջ յոյժ հռչակաւոր և ճարտարապետական եզական շէնք մը եղած է։ Ասողկայ պատմածի համեմատ տասներորդ դարու մէջ արդէն փլած և կործանած լինելով եկեղեցին, Գագիկ Ա թագաւորը ցանկացաւ նոյն ճարտարապետական ձևով և նոյն Ս. Գրիգոր անուամբ տաճար մը կառուցանել յԱնի։ — Ներսէս Շինողը եկեղեցւոյն շուրջն ալ պարսպով պատեց, և մէջը կոփածոյ քարերով բնակարաններ կառոյց իրեն և այլոց համար։ Քասաղ գետէն ջուր բերել տուաւ, այգի տնկեց և մէկ խօսքով տապար և անջրդի վայրը զարդարեց բուսականութեամբ։ Ցանկալի է որ ի հնումն այնչափ հռչակուած տաճարիս այժմեան տըխուր մնացուածոց վրայ նոր քննութիւնք կատարուին, որովք թերևս յայտնուին նորանոր պատմական տեղեկութիւնք։ — Այրարատ, 244–246։

ԱՌԱՋԱՁՈՐ. — Գիւղ Արցախի Պարզկանք գաւառի մէջ, Ջիլէթ սարի հարաւային ստորոտը. պատուական է օդն, ջուրն և կլիման։ Բնակիչք ամբողջ հայ են 1500 հոգի, բաժնուած գրեթէ 200 տուն։ Ունի եկեղեցի մը Ս. Աստուածածին, որոյ հարաւային կողմի արձանագրութենէն կը յայտնուի թէ կառուցուած է ՌՃԺԷ թուին։ Եկեղեցւոյ մէջ կան երկու ձեռագիրք, մին Աւետարան և միւսն Աստուածաշունչ, երկուքն ալ ունին յիշատակարաններ։ Գիւղէս դէպ ի Ծմակահող տանող ճանապարհի վրայ կան մարդաչափ բարձրութեամբ երկու խաչարձաններ, զորս կանգնած է Սէր անուն ոմն՝ իւր ծնողաց գերեզմաններու վրայ, ՈՁԶ թուին, ինչպէս կ'երևի համառօտ արձանագրութենէն։ Առաջաձոր գիւղի սահմանները կան քարայրներ և ուխտատեղիներ, ինչպէս նաև հին գիւղերու տեղեր և գերեզմանատներ։ Այդ ուխտատեղիներէն և մատուռներէն անուամբ կը յիշուին հետևեալքն. Կարմիր եկեղեցի, Նահատակ, Անապատ, և այլն։ — Արցախ, 185–189։

ԱՌԱՋԻՆ ՀԱՅՔ. — Ի հնումն փոքր Հայոց երեք բաժանմունքներէն մին այսպէս կոչեց մեր Արամ քաջ նահապետը։ Այս մասին գլխաւոր քաղաքն էր Կեսարիա։

ԱՌԱՋՆԱԳԼՈՒԽ. — Լեռ Գուգարաց աշխարհի մէջ, Հաղբատայ վանից մօտ։

ԱՌԱԻԱՆ. — Հայանուն՝ բայց յունաբնակ գիւղ Լեռնային Կիլիկիոյ. ունի Ս. Թէոդորոս եկեղեցի մը։

ԱՌԱԻԵԼԱԴԱՇՏ. — Օրբէլեան կը յիշէ այս անուամբ դաշտ մը Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, Ցուրայ վանքի մօտերը։

ԱՌԱԻԵՂԵԱՆՔ կամ ԱՌՈՒԵՂԵԱՆՔ. — Նախարարական տոհմ մ'էր Հայոց Մեծաց մէջ, սերած Ալանաց ազգէն։

ԱՌԱԻԵՆԵԱՆՔ. — Հին նախարարական տոհմ, սերած Վահագնի Առաւան որդիէն։

ԱՌԱԻԻՒՏՈՒՑ ԳԻՒՂ. — Այրարատայ Ծաղկոտն գաւառի մէջ, Շահապիվանի մօտ. ուր դադարեց Գնէլ Արշակայ գացած ժամանակ, և առաւօտը անոր ներկայացաւ։

ԱՌԱՓՍՈՒՆԻՔ կամ ՌՈՓՍԵԱՆՔ. — Հին նախարարական տոհմ ի Հայս, սերած Տիգրան Գ-ի Ռոփսեայ կնոջէն։

ԱՌԱՔ. — Գիւղ Տուրուբերանի Ապահունեաց գաւառի մէջ։ Այժմ սակաւաբնակ է, բայց ի հնումն ունէր մինչ 80 տուն։

ԱՌԱՔԵԼՈՑ ԲԼՈՒՐ. — Կը յիշուի այս անուամբ բլուր մը Աղձնեաց և Վասպուրականի սահմանածայրն, Ռշտունեաց գաւառի մօտ, Երկարաճատաց և Կապարաճատաց կոչուած լերան շղթայի մէջ։

ԱՌԱՔԵԼԻՍ կամ ԱՌԱՔԻԼ. — Հայաբնակ գիւղ Գանձակու այժմեան Ճիպրայիլ գաւառի մէջ. բն. 645 հոգի։

ԱՌԱՔԵԼՈՑ ԵՐԿԻՐ. — Կը յիշուի Մաղարդայ վանից թեմերու յիշատակագրի մէջ, որ կ'ինկնար Պարսկահայոց կողմերը։

ԱՌԱՔԵԼՈՑ ԼԵՌՆԵՐ. — *Այս անուամբ լեռներ կը թուի թէ կը գտնուին Մշոյ կողմերը. կը յիշէ ոմն տէր Յովհաննէս երգոց մէջ հետեւեալ կերպով.*

*«Առաքելոց լեռներ ձուն է*
*Աշխարհ կասէ Աստծու տուն է»։*

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ. — *Կը գտնուի ամայի վանքս Գանձակու Դաղախ (Աղստև) գաւառի մէջ, Ուզունթալայ կայարանէն շեղելով դէպի աջ, մօտ 32 վերստ հեռաւորութեան վրայ։ Վանքս կը բաղկանայ հոյակապ տաճարէ մը՝ շինուած սրբատաշ քարով և սուր կաթուղիկէով։ Ներքուստ զարդարուած է եղեր տամկանկարներով, որոնք այժմ աւրուած են, կ'երեւին տակաւին Ս. Գէորգայ կիսեղծ պատկերն և ուրիշ նկարներու մնացորդներ։ Տաճարի առջև կայ վայելուչ կամարակապ գաւիթ, որոյ միակ պատուհանն տանիքէն է։ Գաւթի դրան արտաքին ճակտի վրայ կայ ՈԴԳ (= 1244) թուականաւ արձանագրութիւն. կան նաև մի քանի ուրիշ արձանագրութիւնք։ Վանքիս չորս կողմը կայ եղեր քարաշէն պարիսպ, և ներսը բնակարաններ և անտեսատուն. այժմ մնացած է միայն պարսպի հարաւային մասը և անտեսատունը։ — Արձագանգ, Է. 158։ — Այս անուամբ ուրիշ մի քանի վանքեր ևս ունինք, ի Շապին Գարահիսար, ի Կիլիկիա և այլուր։ Տես* ԵՂԻՎԱՐԴ *և* ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ։

ԱՌԱՔԻԼ. *Տես* ԱՌԱՔԷԼԻՍ։

ԱՌԲԵՐԱՆԻ. — *Ըստ հին աշխարհագրական բաժանման, Վասպուրականի գաւառներէն մին է, և սովորաբար կը յիշուի Տուրուբերանի Աղիովիտ գաւառի հետ, յորս կը բնակէին մեր թագաւորաց եղբարք և քորք։ Գաւառս արևելակողմէն ունի աղեղնաձև լեռանց շղթայ մը՝ ամանք հիւսիսէն ի հարաւ տարածեալ. արևմտակողմն է Վանայ ծովակն։ Երկիրն ընդհանրապէս դաշտային է, առողջարար օդով, ջրով և արգաւանդ հողով, որոյ բարեբերութենէն թերևս ծագումն առած լինի այժմեան* Բերկրի *անունը, որ հաւանականաբար բերքի բառին աղաւաղութիւնն է, և կամ ինչպէս կ'աւանդուի, նախնի ժամանակներն շատ ծառաստաններ ունենալով, որոնք ամէն տարի առատ պտուղներ կու տային և բնակիչքն իրարու բերկրի՛ (ուրախացիր) ըսելով պտղոց առատութիւնն կ'աւետէին միմեանց։ Գաւառիս գլխաւոր քաղաքն է* Բերկրի, *որոյ նկարագիրն ինչպէս նաև շրջակայ գիւղերն կը նկարագրուին իրենց կարգին։ Տես* ԱՂԻՈՎԻՏ։ — *Նկարգր. Ուղևորութիւն, Գ. 17–18։*

ԱՌԳԷՈՍ. — *Լեռ Առաջին Հայոց մէջ, Կեսարիոյ մօտ։*

ԱՌԵՂ. — *Սահմանային գիւղ Հայոց, Մակաց այժմեան Շատախ գաւառակի մէջ. ունի աննշան եկեղեցի մը։ Գիւղիս արևելակողմը կէս ժամ հեռու կայ Ս. Վարդան անուամբ փոքրիկ վանք մը, կառուցուած բլրակի մը կողին վրայ։ Այս վանքը ամայի վիճակի մէջ կը մնայ, և տարին անգամ մը Ս. Վարդանայ տօնին գիւղիս քահանայն կը պատարագէ ի ներկայութեան բազմաթիւ ուխտաւորաց։*

ԱՌԵՍՏ. — *Հին աւան Վասպուրականի Առբերանի գաւառի մէջ, համանուն գետի վրայ, Վանայ ծովակի եզերքը։ Այստեղ մեր Խոսրով թագաւորը Վրթանէս քահանայապետի աղօթիւք յաղթեց Պարսից անհամար զօրաց։ Արշակ թագաւորի ժամանակ ևս Բագոս զօրավարն՝ տեսնելով Պարսից զօրքերը, «...զի հասեալ բանակէին ի վերայ ձկնատեսնիցն Առեստեայ», յարձակեցաւ և մեծ յաղթութիւն տարաւ։ Բիւզանդ, Գ. ԻԲ. և Գ. Ը։ Աւանս իւրանուն գետէն կ'ըստանար առատ ձուկ. և իւր մօտ կար յատուկ ձկնատեսանք կամ ձկնատեսանք (ձուկ որսալու տեղ) արքունի։ Փարպեցին Առեստ աւանը քաղաքագեօղ կ'անուանէ. իսկ Ղևոնդ (Գլ. Զ), անոր մօտ գտնուած դաշտն կ'անուանէ Առեստակողմն։*

ԱՌԵՍՏ ՓՈՔՐ. — *Զգիտեմք վերոյիշեալ աւանն է, թէ անոր մօտ ի հնումն գտնուող մի ուրիշ փոքր գիւղ, որ հայրենիք էր ըստ Ասողկայ (Բ. Բ) Ղևոնդ կաթողիկոսի. «Ի գաւառէ Առբերանոյ ի գեղջէ Փոքր Առեստոյ»։ Յոհան կաթողիկոսն յիշելով Ղևոնդ կաթողիկոսն կը գրէ «... էր ի Փոքր Եռաստայ...», որ անշուշտ կամ գրչի վրիպակ է, և կամ այդպէս ևս կը կոչուէր ի ռամկաց։*

ԱՌԵՍՏ *կամ* ՊԱՆՏՈՒՄԱՀԻ. — *Վասպուրականի հին Առբերանի գաւառի և այժ-*

մեան Բերկրիի գլխաւոր և պատմական գետն է։ Գարնան շատ կը յորդի և երբեմն դժբաղդութեանց առիթ ևս կը լինի, մարդկային կեանքեր կուլ տալով։ Գետս ունի հին, բայց ամրաշէն կամուրջ մը. իր ընթացից մէջ կան զուարճալի տեղրաններ, ուր բաւական քանակութեամբ եղէգներ կը բուսնին։ Ինչպէս ի հնումն, նոյնպէս և այժմ անուանի է գետս տառեխ ձկներովը, զորս գարնան կողովներով կ'որսան։

ԱՌԷԿ. — *Գիւղ Չորրորդ Հայոց այժմեան վերին Կեղի գաւառակի մէջ։*

ԱՌԷՆ *կամ* ՅԱՌԻՆ. — *Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Խորխոռունեաց (Արծկէ) գաւառի մէջ, Վանայ ծովակի հիւսիսային եզերքը։ Բնակիչք 160 տունէ աւելի են, ունին անզարդ քարուկիր եկեղեցի մը Ս. Լուսաւորչի, և ծաղկոց մը։ Ծովեզերեայ գիւղս յուլիս և օգոստոս ամիսներու մէջ Վանեցի և Բաղիշեցի վաճառականներով կը լեցուի, որք ապրանք և մրգեղէններ կը բերեն վաճառելու և նաւերով ցորեան կը տանին մինչև սեպտեմբեր ամսոյն վերջը։*

ԱՌԸՆԴԵԴ. — *ԺՉ դարուն գրուած աւետարանի մը վերջին յիշատակարանի մէջ կը հանդիպինք անուանս, որ կը թուի լինել Խարբերդու հին գիւղերէն մին։*

ԱՌԸՆՋՈՒՅ *կամ* ԱՌԸՆՋԵԱՅ ՎԱՆՔ. — *Կը յիշուի 1505 թուին, Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, Առինճ գիւղի մօտ։*

ԱՌԻԳՈՄ *կամ* ՅԱՌԻԳՈՄ. — *Սակաւաբնակ գիւղ Հայոց, Մոկաց աշխարհի այժմեան Շատախ գաւառակի մէջ։*

ԱՌԻՆՋ *կամ* ԱՌՈՒԶ. — *Հայաբնակ գիւղ Չորրորդ Հայոց Վարի Կեղի գաւառակի մէջ, Մէլիքան գիւղաքաղաքի դիմացը։ Բնակիչք կը համարուին 200 տուն. ունին Ամենափրկիչ եկեղեցի մը՝ որ երկրաշարժէ քայքայուեր և ապա նորոգուեր է։ Նշանաւոր են բերքերէն ընկոյզը, տանձը, սանկը, և այլն։*

ԱՌԻՆՃ. — *Հայանուն՝ բայց թուրքաբնակ (14 տուն) գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։ Տակաւին կը տեսնուին իր մէջ աւերակ եկեղեցւոյ մը չորս որմնակից սիւներն և որմերը, սեղան մը և աւազան՝ հանդերձ արձանագրութեամբ։*

ԱՌԻՆՃ. — *Ուրիշ գիւղ Սիւնեաց Ճահապօնք գաւառի մէջ։ Բնակիչք 43 տուն հայ. ունին եկեղեցի մը և ընդարձակ ագարակներ։*

ԱՌԻՆՃ *կամ* ԱՌԻՆՋ. — *Գիւղ Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, Աւան գիւղի հիւսիսակողմը, արքունի ճանապարհի վրայ։ Բնակիչք 578 հոգի, բաժնուած՝ 75 տան. ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը։ Հին և կիսաւեր մատուռ մ'ալ կայ գիւղիս արևելեան կողմը՝ բազմաթիւ գերեզմանաց և խաչքարերու մէջ։ Ճահ Աբասի աւերմունքներէն և գերեվարութենէն վերջ, երբ ամայի մնաց գիւղս և մերձակայ սահմանքն, նոյն ժամանակները Առաքել պատմիչ (Ա. ԼԱ) կը յիշէ այս գիւղէն ալեւոր ոմն՝ որ Քանաքեռէն շալակը աղ բարձած յԱռինճ տանելու ժամանակ՝ գայլերու կերակուր եղաւ։*

ԱՌԻՆՋ *կամ* ՅԱՌԵՆՋ. — *Գիւղ Մոկաց աշխարհի Հին Ջերմաձոր գաւառի մէջ։ Բնակիչք մօտ 40 տուն, ունին Ս. Ստեփանոս քարուկիր եկեղեցի մը։*

ԱՌԻՆՋ *կամ* ԱՌԻՆՃ. — *Գիւղ Կաթողիկեայ Հայոց, Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ հիւսիսային կողմը, կէս ժամ հեռու, շրջապատեալ ծառազարդ պարտէզներով։ Տներն ցրուած չեն այլ կից միմեանց. ընդհանուր գիւղը երկու թաղերու կը բաժնուի, որ է Վերին թաղ և Վարին թաղ. 150 տուն է ընդ ամէնը, իսկ բնակիչք 900–1000։ Եկեղեցի մը կայ զոր տեղացիք Իրեք խորան կը կոչեն, անշուշտ մէջը երեք խորան գտնուելուն պատճառաւ։ Աւագ խորանին ետևը կից է քարաշէն գետնափոր մատուռ մը, որուն մէջ կը գտնուին շատ հին գերեզմաններ, որոց տէրերն յայտնի չեն։ Եկեղեցւոյն չորս բոլորը կը շրջապատէ հին գերեզմաննոցը՝ զարդարուած բարձր ծառերով, բայց այժմեանը գիւղէն դուրս է։ Յոհան Մամիկոնեան (Գլ. Գ) անուանս ստուգաբանութիւնը կ'ընէ ըսելով. «Եւ նոցա (այսինքն զօրացն Պարսից) աղաղակեալ ասեն, Առ ի՞նչ դարձայք անդրէն ի պատերազմ, ո՛վ աւելախօսք. և կոչեցաւ անուն տեղւոյն Առինչ»։*

ԱՌԻՆՋ. — *Բարձր Հայոց հին Աղիւծ գաւառի մէկ մասն է, և կը ձևացնէ առան-*

ձին վիճակ մը։ Կ՚ինկնայ Կարնոյ գաւառի Հարաւակողմը, երկիրը լեռնային է. գլխաւոր տեղն է Առինճ կամ Առիչ աւանը։

ԱՌԻՆՋՎԱՆՔ կամ ԱՌՆՃՎԱՆՔ. — Հայաբնակ գիւղ Հայոց, Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Առինչ գիւղի մօտ, Մշէն 1 ժամ հեռու։ Բնակիչք 50–60 տուն են, յորոց 5ը քրդաց է։

Մեծն Ներսէս կեսարիայէն կը դառնար, Արշակ Թագաւորը իրեն ընդ առաջ ելաւ մինչև այս լերան քով։

ԱՌԻԽԾ կամ ԱՌԻԽԾԲԵՐԴ. — Կիլիկիոյ բերդերու կարգին մէջ կը յիշուի նաև այս անուամբ բերդ մը, որ Ռուբինեանց ժամանակ Հայոց ձեռքն անցաւ։

ԱՌԾՂԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Ապա-



135. Առնեղ գիւղի Ս. Գրիգորի եկեղեցին։

ԱՌԻՉ. Տես ԱՌԻՆՉ։

ԱՌԻԽԾ. — Բարձր Հայոց երկրորդ գաւառն է, որուն կը համապատասխանեն այժմ Կերձանիս և Շեյրան վիճակներն։ Գաւառիս մէջ է Առխուծ լեռն ուր կը բնակէր Ս. Դանիելի Շագիտայ աշակերտը, որ անկէց տեսաւ Ս. Մեծին Ներսէսի փոխումը։ Երբ

հունեաց գաւառի մէջ։ — Փիրղալէմ, Զորս ընկերք, 44։

ԱՌՂԱՋՈՐ կամ ԱՌՂԸՋՈՐ. — Ձոր Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ։ Տես ԱՌԱՂ։

ԱՌՂԱԽԻՍ. — Գիւղ Շապին Գարահիսարի, 80 տուն հայ բնակչօք։

ԱՌՂՈՒ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց,

*Մոկաց աշխարհի այժմեան վերին Կարկառու վիճակի մէջ։*

ԱՌՄԷՆԻԱ. *Տես* ՀԱՅԱՍՏԱՆ։

ԱՌՆԱ. *Տես* ԸՌՆԱ։

ԱՌՆԱՌԻՏ. — *Գիւղ Սիւնեաց Աղահէճք գաւառի մէջ, Հօչանց գետոյն ձախակողմը։*

ԱՌՆԵՂ. — *Հին գիւղ Հայոց, Սիւնեաց Գեղարքունիք գաւառի մէջ, Գեղամայ ծովակի արեւմտակողմը։ Այժմ կը կոչուի* Փաշաքէնտ *կամ* Մէհմէտ–Աղալի, *և ունի 1965 հայ բնակիչք՝ բաժնուած 244 տան։ Գիւղիս մօտ գտնուող բլրակի ստորոտէն կը բղխեն քանի մը աղբիւրներ և կը սկզբնաւորեն Կեօք–չայ կոչուած գետակն։ Ունի կրկին եկեղեցիներ, մին Ս. Գրիգոր (Թ. 135) շինուած սրբատաշ քարերով և փոքր կաթուղիկէով, որ քայքայուած լինելով, բնակիչք վերջին տարիներս մէջ նորոգած են՝ միւս աւելի հին եկեղեցին կամ վանքն Ս. Աստուածածին։ Ս. Գրիգորի եկեղեցւոյ մօտ գտնուած է արձանագրութիւն մը* **ՋՂԸ** *(= 1549) թուականաւ, յորմէ կը յայտնուի թէ նոյն տարին ումն Տաղուզան՝ դուստր պարոն Գաւթի և կենակից Փիրհամզայի, նորոգած է եկեղեցւոյ շրջապատը։ Ս. Աստուածածնի եկեղեցին ըստ արձանագրին կառուցուած է* **ՅԽԷ** *(= 898) թուին, Առնեղ գիւղի Շաղուքաթ անուն իշխանէն։ — Գիւղէս դուրս կայ աւերակ եկեղեցի մը, որոյ մօտ կայ* **ՌՃԽ** *(= 1691) թուականաւ տապանաքար մը։*

ԱՌՆԷՏ. — *Աւերակ գիւղատեղի Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։ Բաշբերունին դայս կը համարի հին Արատամոռղ գիւղը։*

ԱՌՆԻՍՏ. — *Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելակողմը։ Բնակիչք 70–80 տուն ամբողջ հայ, բայց այս կողմանց յատուկ թշուառ վիճակ մը ունին։*

ԱՌՆՃԻԿ *կամ* ԱՌՆՉԻԿ. — *Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելեան հարաւակողմը. բնակիչք քուրդ են։*

ԱՌՆՃՎԱՆՔ. *Տես* ԱՌԻՆՋՎԱՆՔ։

ԱՌՆՃՈՅ *կամ* ԱՌՆՋՈՅ ՀՈՒՆ. — *Կը յիշուի անուամբ Սիւնեաց Գեղարքունեաց գաւառի գիւղօրէից ցանկի մէջ։*

ԱՌՆՈՅՈՏՆ *կամ* ԱՌՆՈՅ ՈՏՆ. — *Վասպուրականի հին գաւառներէն մին։ Կը կարծուի թէ կ'ինկնայ Վանայ ծովակի հարաւային արեւելակողմը Աճնու կամ Աճնոյ լերան մօտերը կամ ոտքը։*

ԱՌՆՉԻԿ. *Տես* ԱՌՆՃԻԿ։

ԱՌՆՈՍ *կամ* ԱՌՆՈՍԱՍԱՐ. — *Լեռ Վասպուրականի այժմեան Խօշապ գաւառի մէջ, Վանէն Պաշգալէ տանող ճանապարհի վրայ. բարձր է 3350 մետր։ Լերանս արդի անունն է Զոշխ։*

ԱՌՆՋԿՈՑՍ. — *Գիւղ Տուրուբերանի Խորխոռունեաց (Արծկէ) գաւառի մէջ, Վանայ ծովակի հիւսիսային կողմը։ Բնակիչք 200էն աւելի. ունին Ս. Գէորգ և Ս. Յարութիւն եկեղեցիք։*

ԱՌՈՍՊԻԺԱՆ. — *Փայտակարանի հին գաւառներէն մին։*

ԱՌՈՒԱԼԻՃ. — *Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի։ Գիւղիս մօտ աղեձև ապառաժուտ մը կը ցուցնեն տեղացիք, և Մեհերի դութավարն է կ'ըսեն։*

ԱՌՈՒԱՆԻՑ *կամ* ԱՌՈՒԵՆԻՑ ՁՈՐ. — *Մոկաց աշխարհի հին գաւառներէն մին։ Գաւառս ունի և նոյնանուն աւան մը՝ որ Մոկս քաղաքէն հեռու է 6 ժամ։ Բնակիչք քուրդ են 120 տան չափ։ Թ. Արծրունւոյ գրութեան համեմատ ի հնումն գաւառս սահմանակից էր Ուշտունեաց գաւառի։*

ԱՌՈՒՋ. *Տես* ԱՌԻՆՋ։

ԱՌՈՒՆ. — *Գետ Այրարատայ Կոգովիտ գաւառի մէջ, այժմեան անունն է Պալըք–չայ։*

ԱՌՈՒՍ. — *Հին աւան Փայտակարանի (Թալիշ) Առոսպիժան գաւառի մէջ. ունի 105 տուն թաթար բնակիչք։*

ԱՌՁԱԿ. *Տես* ՀԱՌՁԱԿ։

ԱՌՎԱՆՈՏ. — *Հին գիւղ Սիւնեաց Կովսական գաւառի. կը յիշուի հարկատու գիւղօրէից ցանկի մէջ։*

ԱՌՎՏՆԱՑ. *Տես* ԱՌԻԸՏՈՑ։

ԱՌՏԵԱԼ. *Տես* ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ։

ԱՌՏԷՐ. — *Վանայ ծովակի կղզիներէն մին է. կ'ինկնայ Աղթամարի արեւմտակողմը մղոն մը հեռաւորութեամբ, և նոյնչափ ալ հեռու է ծովակի հարաւային եզերքէն։ Անուանս ստուգաբանութիւնն կը գտնենք հետեւեալ աւանդութեան մէջ. «Երբ օր մը առաւօտուն Ս. Գրիգոր Նարեկացին ըստ սովորութեան գետնամած կ'աղօթէր իր ճըգ-*

նարանի լերան ժայռի վրայ, ձայն մը կու գայ իրեն հիւսիսէն. աչքերը կը դարձնէ դէպ ի ծով, կղզեկիս վրայ կը տեսնէ Ս. Կոյսն՝ Յիսուս մանուկն գիրկը, և ձայնը՝ կը կոչէր Նարեկացիին. Գրիգոր եկ առ տէր, որում ցանկանալով ցանկանայիր: Սուրբն յափըշտակուած՝ կ'իջնէ փութով ճգնարանէն, կ'անցնի ծովը իբրև ցամաքի վրայ քալելով, կ'ելնէ կղզին և կ'երկրպագէ Տիրուհւոյն և Աստուածորդւոյն: Այս հրաշալի տեղեան օրէն ի վեր կղզեակս կոչուած է Առտէր»: Ոմանք այս սիրուն աւանդութիւնը չընդունելով, կղզեակս կ'անուանեն Առտեր՝ Աղթամարայ վանքը առոր վրայ արտեր ունենալէն հետեւցնելով: Սուրբն Գրիգոր իւր այս սքանչելի տեսիլքն մանրամասն կ'ստորագրէ Աչքն ծով ի ծով տաղին մէջ. կը յիշէ նաև իւր աղօթից մէջ (ԺԲ: և ԺԷ):

Այս տեղեան ի յիշատակ ի հնումն կղզեկիս մէջ կառուցին մենաստան և եկեղեցի Ս. Աստուածածնի նուիրուած. բայց ժամանակ անցնելէ վերջ քայքայելով, անցեալ դարու մէջ, ոմն Յակոբ վարդապետ Բատականցի, վերանորոգեց այդ վանքի եկեղեցին և յարակից շէնքերն և քանի մը կրօնաւորներ հաւաքելով, հոն միաբանական ուխտ մը հաստատեց: Նոյն վարդապետը քանի մը տարի վերջը 1772ին նահատակուելով՝ միաբանները ցրուեցան, և վանքն ալ Վանայ քրդերէն կողոպտուեցաւ և կործանեցաւ: Տակաւին կը մնայ լքեալ և կիսակործան քարաշէն տաճարը: Կղզեակս այժմ Աղթամարայ վանքի ոչխարներու արօտատեղին է. ունի բաւական թուով պտղի (սալորդ) ծառեր: — Ն. Հայս. 153–154: Բիւզանդիոն, 1897 Թ. 135: Եւ այլն:

ԱՌԽԸՏՈՅ կամ ԱՌԿՏՆԱՅ. — Սաննոյ գիւղերէն մին, որոյ բնակիչք այժմ քուրդ են:

ԱՌՓԱ. Տես ԱՐՓԱ:

ԱՍԱԴԻՆ. Տես ԱԼԲԵՐԴ:

ԱՍԱՐԵԴ. — Անունս կը յիշուի ի Խիզան:

ԱՍԲԻՆԾԱ. — Գիւղ Ախալցխայի գաւառի Խոսմալայ հասարակութեան մէջ, համանուն գետակի եզերքը՝ որ գիւղիս մօտ կը խառնուի Կուրի հետ: Բնակչաց թիւն է այժմ 378, որոց մեծամասնութիւնը կը կազմեն այլազգիք, և միայն քանի մը տուն են Հայք և Վրացիք: Ի հնումն առանձին վիճակ մը կը կազմէր Ասբինծա, և ունէր 12 գիւղ: Գիւղս ունի 3500' բարձրութեան վրայ քառակուսի ձևով բերդ մը, որ Թրքաց տիրապետութեան ժամանակի գործ կը թուի, և յորում կը նստէր վիճակապետը: Գիւղիս հանդէպ, Կուրի ձախ կողմը կան համանուն հանքային գաղջ ջրեր: Ասբինծայի սահմանքն զարդարուած են ծառերով և յուռթի է բուսականութիւնն:

ԱՍԵԱՅՓՈՐ կամ ԱՍԵՅՓՈՐ. — Տայոց հին գաւառներէն մին, որուն կը համապատասխանէ այժմեան Բերդագրակ վիճակը:

ԱՍԽՎՐԷԹ կամ ԱՁԱՎՐԷԹ. — Հայաբնակ գիւղ Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ: Բնակիչք 1146 հոգի, բաժնուած 104 տան:

ԱՍԼԱՆԲԷԿ կամ ԱՍԼԱՆ ՊԷՅ. — Զուտ հայաբնակ գիւղս կը գտնուի Փոքր–Ասիոյ ծայրը, Նիկոմիդիայէն հեռուն երեք ժամ ճանապարհ հեռու է, կառուցուած է գեղեցկադիր բարձր բլրոյ մը վրայ: Բնակչաց թիւն է մօտ 4000, ունին Ս. Աստուածածնի նուիրուած փառաւոր եկեղեցի մը, և Մամիկոնեան կոչուած դպրոց մը: Ասլանբէկցոց զբաղումն է գլխաւորաբար շերամաբուծութիւն, այգեգործութիւն, ածխագործութիւն և երկրագործութիւն. այժմ սկսած են նաև ծխախոտի մշակութիւն: Գործունեայ, աշխատասէր և քաջ են Ասլանբէկցիք, իրենց շրջակայ Թուրք, լազ և չէրքէզ գիւղերու հետ յաճախ կռուելու առիթ կ'ունենան և միշտ քաջ կը հանդիսանան: Ուսման և գիտութեանց եռանդն ալ բաւական տիրած է իրենց մէջ: — Ասլանբէկի բարբառի վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակած է Գ. Հրաչեայ Ց. Աճառեան, տպ. 1898, Ս. Ղազար–Վենետիկ:

ԱՍԼԱՆ ԴԱՅԱ. — Ապառաժուտ բարձր լեռ, Կարնէն 10 ժամ հեռու՝ Սպերու ճամբուն վրայ:

ԱՍԼԸ կամ ԱՅԸԼԸ. — Այրարատայ Նիգ գաւառի արևելեան մասին մէջ, Պապաքիշի հիւսիսակողմը ձորի մէջ կան այս անուամբ անծանօթ մենաստանի մը աւերակներն: Այդ մնացորդներէն կը տեսնուի թէ եկեղեցին հոյակապ շէնք է եղեր և սրբազարդ.

իսկ նշխարհաց արձանագրութիւնք կը յայտնեն, թէ վաչուտեանց դաստակերտ եղած է։

ԱՍԽՈՋ. Տես ՍՈԴՔ։

ԱՍԿԱԾԱԿ. Տես ՀԱԲԱՆԴ։

ԱՍԿՆՋԱԽՍ կամ ՅԱՍԿՆՋԱԽՍ. — Հայաբնակ գիւղ Մոկաց. բնակիչք 150 հոգի, ունին Ս. Յովհաննէս քարուկիր եկեղեցի մը։

ԱՍԿՈՒՌԱՍ. — Բերդ Լեռնային Կիլիկիոյ։

ԱՍԿՈՒՐԷԹ. Տես ԱԶՂՈՐ։

ԱՍՂԱՊԱՏ. — Քաղաք անդրկասպեան, յորում կան մօտ 150 տուն Հայք, և ունին յատուկ եկեղեցի և դպրոց։

ԱՍՂՆԲԵՐԴ. Տես ԱՍՏՂԱԲԵՐԴ։

ԱՍՄՆՋՈՒԿ կամ ԱՆՑՄՆՑՈՒԿ. — Զորակ



136. Ասորւոց Դրունք — Սագալ–Թութան։



137. Աշտարակ Ասպենդոսի մօտ։

և վտակ Դաշտային Կիլիկիոյ, Սսոյ մօտ։ Ի հնուց վտակին վրայ ձգուած էր կամուրջ մը, որուն մէկ մեծ աչքը կամ կամարը փլած լինելով, ազնուատոհմ ոմն Գրիգոր որդի Պաղտինի և եղբայր Լեւոնի, 1350–60 տարիներու մէջ նորոգած է։

ԱՍՈՐԵՄԱՑՐ ԱՆԱՊԱՏ. — Կը յիշուի անապատս Չորրորդ Հայոց Ծոփք գաւառի մէջ (Յշտկ. ԺԳ դ.)։

ԱՍՈՐԻՈՑ ԴՐՈՒՆՔ. — Նշանաւոր կապան կամ դուռն Ծովային Կիլիկիոյ մէջ, Աղեքսանդրեակ քաղաքի մօտ՝ հիւսիսային կողմը։ Այսպէս կոչուած է, վասն զի անկէց միայն երթեկ կը լինի Կիլիկիայէն յԱսորիս։ Այս անցքին այլազգիք Սագալ–Թութան կ'ըսեն, իբր թէ ով որ այս նեղ անցքէն անցնի՝ նեղուելով ձեռքով մօրուքը կը բռնէ։ — Սիսուան, 416։

ԱՍՊԱԳՈՒՆԻՔ. Տես ԱՍՊԱԿՈՒՆԻՔ։

ԱՍՊԱՀԱՆ. Տես ԻՍՊԱՀԱՆ։

ԱՍՊԱԿՈՒՆԻՔ կամ ԱՍՊԱԳՈՒՆԻՔ. — Տուրուբերանի հին գաւառներէն մին։

ԱՍՊԱԿՈՒՆԵԱՑ ՁՈՐ. — Ձորս կը գտնուի անշուշտ Տուրուբերանի վերոյիշեալ Ասպակունիք գաւառի մէջ։

ԱՍՊԵՆԴՈՍ. Յն. Ἄσπενδος. — Հին քաղաք (Թ. 138) Ծովային Կիլիկիոյ (Պամփիւլիա), Ատալիոյ արեւելակողմը։ Այժմ կը գտնուի աւերակ վիճակի մէջ. բլրոյ մը գագաթը և կողերը ցրուած են այդ աւերակներն, յորս կը տեսնուին հռովմէական ճարտարապետութեան ոճով շէնքեր, ազուգայք, մեծ թատրոն մը 21 կարգ նստարաններով։ Մեծին Լեւոնի ժամանակ, այս կողմերն ևս անցած կը թուին Հայոց տիրապետութեան տակ։ — Սիսուան, 307–308։

ԱՍՊԻՃԷՆ կամ ԱՍՊՈՒՃԷՆ. — Հայանուն՝ բայց թրքաբնակ գիւղ Բարձր Հայոց այժմեան Թորթումայ վիճակին մէջ։

ԱՍՊԻՍԱԿ կամ ԱՊՍԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Աղիովիտ (Արճէշ) գաւառի մէջ, Արճիշու մօտ. այժմ կը կոչուի Հասպիսնակ։ Ունի 70–80 տուն հայ բնակիչ և եկեղեցի մը։

ԱՍՊԻՍԸՆԿԱՑ ՎԱՆՔ. — Վերջիշեալ Ասպիսակ գիւղի մօտ կը գտնուի վանքս, որ կը կոչուի նաև Սուրբ ուխտ Ցարուցեան։ Տես ՅԱՐՈՒԹԻՒՆ։

Տոսպ գաւառի մէջ, Վանայ շրջակայքը։ Բնակիչք սակաւաթիւ են, ունին Ս. Աստուածածին փայտաշէն եկեղեցի մը։

ԱՍՏԱՁՕՐ. — Հայաբնակ գիւղ Մունեաց



138. Ասպենդոս քաղաքի աւերակներէն տեսարան մը։

ԱՍՊՃԱՏ. — Սակաւաբնակ գիւղ Հայոց, Վասպուրականի Տոսպ գաւառի մէջ Վանայ շրջակայքը. ունի Ս. Աստուածածին փայտաշէն եկեղեցի մը։

ԱՍՊՍՏԱՆ. — Գիւղ Վասպուրականի

Հին Արեւիք գաւառի և այժմեան Զանգեզուրի մէջ. Հռչակուած է այնիւ գինին։ Բնակիչք 795 հոգի, բաժնուած 99 տան։

ԱՍՏԱԽԱՆԷ կամ ԱՍՏԵՂԱՆԻ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի, Ախուրեան և

Արգինայ գետոց խառնման անկեան մէջ։ Այժմեան բնակիչք օտարազգի են. ունի փոքրիկ բերդ մը։ Արձանագրութեանց մէջ կը գրուի Աստեղանի, և կը թուի թէ իւր գրիւքն ի հնումն աննշան տեղ մը եղած չէ։

ԱՍՏԱՊԱՏ կամ ԱԳԳԱՍԱՊԱՏ. — Երբեմն հռչակաւոր գիւղաքաղաք Սիւնեաց Նախճաւան գաւառի մէջ, Երասխայ ձախակողմը։ Անունս կը յիշէ նախ Թովմա Արծրունին՝ երբ խօսած ատենին համար կ'ըսէ թէ կը գտնուի «ի ներքոյ Աստապատոյ վանացն», և Խաչիկ Ա կաթողիկոսի կոնդակին մէջ 976 թուին։ Կը յիշէ նաեւ Օրբելեան պատմիչը գիւղ կոչելով, որուն մօտ ԺԲ դարու կիսուն, Սիւնեաց Բարսեղ եպիսկոպոսը ջարդով Ե- որ յետոյ դառնալով իւր հայրենիքը, և հաւատաւորաց վանք մտնելով և ապաշխարելով վախճանած է։ — Աստապատ շատ անգամներ Պարսից ապստամբութեանց ենթակայ լինելով, երթալով անշքացած է և սակաւաբնակ գիւղ մը դարձած, այնպէս որ ԺԹ դարու առաջին քառորդի մէջ, Պարսից թագաժառանգ Աբբաս Միրզան, ռազմագիտական նպատակով այն մնացած ժողովուրդն ալ ուրիշ տեղ փոխադրեց։ Այնուհետեւ եւրոպացի ճարտարապետաց խորհրդով, մասամբ մը ամայի շէնքերը քակելով, շինեց Աստապատի տեղը մեծ ամրոց մը, քառակուսի, ընդարձակ պարիսպներով և խրամով։ Այս ամրոցի մէջ դրաւ զօրքեր և զէնքեր և գի-



139. Աստապատ, Աբբաս Միրզայի բերդը։

րասխ գետը ինկնալով և խեղդուելով, հանեցին և տարին թաղեցին Մաղարդայ վանքը։ Ի վերջոյ աւելի բարգաւաճելով և բազմամարդ դառնալով կոչուեր է գիւղաքաղաք։ ԺԴ դարու վերջերը Միաբանողաց հակառակորդ Մաղաքիա Ղրիմեցին՝ հոս գրրոց հաստատեց Սարգիս վարդապետի տեսչութեան տակ, ասկէց էր նոյն ժամանակները Ցաթեւացւոյն աշակերտ Առաքիս վարդապետը։

ԺԵ դարու սկիզբը Շահ Աբաս գերի տարաւ Աստապատու բնակիչներն ի Պարսս, և ըստ պատմելոյ Զաքարիա պատմչի (Ա. Ի), իրեն իբրեւ հարճ առաւ Կիւզէլ (Գեղեցիկ) անուամբ Աստապատցի հայազգի կին մը, նուրական ամենայն ռազմամթերք և 20 թնդանօթներ։ Թագաժառանգի անուամբ ամրոցը կոչուեցաւ Աբբասապատ. բայց քիչ օգտակար կրցաւ ըլլալ, վասն զի փոխանակ հիմունքը մեծամեծ քարերով հաստատուն գնելու, վերին կողմերը ծանրացուցած էին խոշոր քարերով, որով և շուտով սկսաւ քակտիլ, և ապա վրայ հասաւ Ռուսաց պատերազմը, որք գրեթէ առանց աշխատութեան տիրեցին 1827ին։ Այժմ բոլորովին ամայի և աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ Յիշատակաց արժանի է Աստապատու մեծակառոյց եկեղեցին՝ շինուած նախնի բնակիչներէն, և ունի բազմաթիւ արձանագրութիւններ գրուած՝ ԺԵ–ԺԸ դարու սկիզբները։ Եկե-

ղեցին կառուցուած է Ս. Վարդանայ Մամիկոնեան զօրավարի անուամբ և կողմանցս բնակիչք Աստապատ անուան ստուգաբանութեան համար կ'աւանդեն, թէ մեծին Վարդանայ և ընկերաց նահատակութենէն վերջը, անոնց մարմինները հոս կը բերեն, և զանոնք թաղելու համար պատանած ժամանակ, Մակուայ բնակչաց երեւելիներէն կու գան զանոնք կ'առնուն և կը տանին կ'ամփոփեն Մակուայ մէջ. և այն օրէն այս տեղս կոչուեցաւ Աստապատ՝ իբր աստ պատած։

Աստապատու Ս. Վարդան եկեղեցին բաւական մեծ է և հաստատուած է չորս սիւներու վրայ. ունի բարձրաբերձ գմբէթ, մէկ սեղան, երկու աւանդատուն և ընդարձակ գաւիթ։ Տաճարս վերանորոգած են ԺԷ դա-



140. Աստապատու Ս. Վարդան եկեղեցւոյն դուռը։

բու մէջ, 1655ին ամէն Խօջայ Սաֆար, ըստ արձանագրին, իր ծախքով ընծայիւք կառուցանել տուած է հրաշագան յօրինուածովք Ս. Վարդանայ մեծ գումբը, որուն ճակատը, ինչպէս կը տեսնուի պատկերի մէջ, զարդարուած է այլ և այլ ճարտարարուեստ քանդակներով։ Դրան վրայ կայ Տիրամօր քանդակապատկերը, մանուկ Յիսուսը գիրկը և գլխացը ծնրադիր մէկը, թերեւս եկեղեցւոյս շինողը. կան նաեւ հրեշտակներ որոնք թագեր բռնած են Տիրուհւոյ և ծնրադիր անձի մը գլխոց վրայ։ Այս քանդակապատկերի վերը և երկու կողմերը կը տեսնուին զարդարուն խաչարձաններ՝ որոց արձանագրութիւնք, մասամբ անընթեռնլի են։ Դրան կամարի երկու կողմերն ալ կան արձանագրութիւնք և խաչարձաններ։ Եկեղեցւոյ աւազանն սեաւ կճէ է, և ունի ՌՃԼ (= 1681) թուականաւ նուիրատուաց արձանագրութիւն։ Գաւթի սիւներէն միոյն վրայ գրուած է ՌՃԾԲ (= 1703) թուին եկեղեցւոյս վերակացու Մարտիրոս վարդապետի յիշատակագիրը, որ կ'երեւի թէ շատ աշխատութեամբ աւարտած է գաւթի շինութիւնը կամ նորոգութիւնը։ Ս. Վարդանայ եկեղեցւոյն կից և անկից կը մնացուի ուրիշ փոքր, սրգաշէն և կարմիր աղիւսներով եկեղեցի մը Ս. Պետրոս և Պօղոս առաքելոց նուիրուած։ Ապպաս Միրզա Թագաժառանգի օրով, վերոյիշեալ գեղեցկաշէն Ս. Վարդանայ եկեղեցին ամրոցի մէջ մնաց, և ամբարանոց դարձաւ։

Աստապատու գետեզերեայ գիւղն և Նախճաւանի աւելի մերձ լինելն, շատ նպաստաւոր էին իրեն բարգաւաճմանց. աստ կը վկայէ նաեւ Թաւերնիէ՝ որ ԺԷ դարու կիսուն երկու օր հոն մնաց, և կ'անուանէ քաղաք փոքր բայց շատ գեղեցիկ, որոյ իւրաքանչիւր տուն ունէր աղբիւրներ և մէջը կային 4 կարաւանատունք։ Սահմանները յուռթի և այգեւէտ կը նկարագրէ նոյն ուղեւորը, ուր և գտած էր Ռոնաս, Ronas, կոչուած կարմրաներկ արմատը։ Թաւերնիէ, Ա. 47։ — Վաճառականութեամբ հեռու աշխարհներ գացող Աստապատցիներէն յիշենք Խօճայ Յովհաննէս ամէն որդի Սահակայ, որ Վենետիկ լինելով 1666ին, Ս. Խաչի եկեղեցւոյ նորոգութեան համար ընծայեր է երկու սիւն։ Աստր ժամանակակից կը յիշուին Բարսեղ, Թորոս և Առաքել վաճառականներ, որոնք արծաթի անօթներ և սպասներ նուէր տուած են Անկիւրիոյ Ս. Աստուածածնի վանաց. զորս նոյն վանաց յիշատակագիրն Աստապատեցի կ'անուանէ։ — Աստապատու ազգային արուեստից և այլ յատկութեանց վրայ տեղեկութիւն չեն տար մեր մատենագիրք, և գիւղաքաղաքէն աւելի կը հռչակեն անոր վանքը, որ կը կոչուի Աստապատոյ վանք և գրեթէ 2 մղոն հեռու կը գտնուի հարաւային արեւելեան կողմը, Երասխայ արեւելեան եզերքը քարոտ լերան մը ստորոտին վրայ՝ որ գետին երեսէն բարձր է մօտ 60 մետր։ Կը կոչուի նաեւ Քարատակի վանք և շէնքին կարմրագոյն քարանց պատճառաւ Կարմիր վանք։ Եկեղեցին կառուցուած է պարսպաց մէջտեղը բարձր դիրք, չափաւոր մեծութեամբ, հիմերը քարով և որմերը թրծեալ աղիւսով շինուած։ Հաստատուած է երկու սեանց վրայ. ունի մէկ սեղան, երկու աւանդատուն, մէկ դաս արեւմտակողմը, քարաշէն գաւիթ երկու սեանց վրայ, և փոքրիկ զանգակատուն մը. իսկ եկեղեցւոյն կաթողիկէն բարձրացած է տանեաց մէջտեղէն։ Յայտնի է թէ վանացս կամ եկեղեցւոյս առաջին շինութեան ժամանակն շատ հին է, ըստ ոմանց Ժրդ դարու մէջ կառուցուած. Խաչիկ Աի կոնդակի մէջ կը յիշուի 976ին, և նոյն թուականաւ խաչվէմ մի ևս կը գտնուի ագուցուած տաճարի դրան աջ կողմը։ Կան նաեւ 1277, 1471, 1477 և 1481 թուականներ, որոց ոմանք ունին համառօտ արձանագրութիւնք։ Վանացս տաճարի և գաւթի մէջ կան քանի մը վարդապետաց՝ թերեւս և առաջնորդաց վանացս՝ գամբաններ, մարմարինէ քարերով և արձանագրութիւններով։ Գամբաններէն մին՝ որ ունի 1673 թուականաւ արձանագրութիւն, կը վերաբերի Յակոբ վարդապետի, որ ուսումնակից էր պատմիչ Զաքարիա վարդապետին, և նորոգած ու պայծառացուցած է վանքս շինութիւններով։ Գաւթին մէջ՝ արեւմտեան հարաւային անկիւնը կը գտնուի Յովսէփ արհիեպիսկոպոսի տապանն, որոյ կճեայ կափարչի վրայ կայ 1706 թուականաւ արձանագրութիւն։ Նոյն Յովսէփ ար-

Հիեպիսկոպոս, յիշատակագրի մը գրածի համեմատ, վանացս առաջնորդ եղած ժամանակ, 1697 թուին սկսաւ նորոգել մենաստանս. «... ի կողմն յարեւմտեան, կոփածոյ վիմօք, ներքնատնօք և վերնատնօք զարգեղեցկութիւն և մեծավայելուչ կերպարանք մը կ՚ընծայէն ամբողջ վանքին։ Ունեցեր է ժամանակաւ և ներքնապարիսպ մը, որ երկու, արեւելեան և արեւմտեան մասանց կը բաժնէ ամբողջ վանքը, բայց քայքայուած է այժմ,



141 · Աստապատու Կարմիր վանքը։

զարդեալ կամարակապ»։ Վանացս արտաքին պարիսպը կառուցուած է կարմիր կոփածոյ քարերով, բաւական բարձր՝ մանաւանդ հիւսիսային կողմանը, տեղւոյն աւելի ցած դիրք ունենալուն պատճառաւ։ Այս պարիսպը ունի տեղ տեղ նոյնպէս քարաշէն բուրգեր, որոնք

և միայն կանգուն մնացած է անոր դրան քարաշէն կամարը, որոյ մէջտեղը դրան վերի կողմը կայ խաչվէմ, և անթուական արձանագրութիւն մը, պարիսպը նորոգողաց, որք են Աստապատցի քահանայք և ժողովուրդք։ Վանացս արեւմտեան մասին մէջ է եկեղե

ցին, յորում նշանաւոր են քանի մը գեղեցիկ քանդակները և ի մէջի այլոց՝ Ցիսուսի մկրտութիւնն ներկայացնող խորաքանդակը։ Նոյն մասին մէջ են քարաշէն և կրկնայարկ բնակարաններն, լաւ վիճակի մէջ։ Արևելեան մասի մէջ են վանացս միւս կարևոր շէնքերը, գոմը և 60 ձիոց բաւական ախոռ մը։ Արևելեան հիւսիսային անկիւնը կը գտնուի վանացս արտաքին կամարակապ, քարաշէն դուռը, որոյ վրայ կայ խաչվէմ և 1707 թուին արձանագրութիւն մը Յովանէս վարդապետի, որ վերակացու եղած է պարսպի նորոգութեան կամ շինութեան։ Աստապատու բերդի շինութեան համար Ապպաս Միրզան քակել տուաւ նաև այս պարսպի մէկ մասը, ինչպէս նաև կուսան կանանց մենաստանի եկեղեցին, որ կ'ինկնար Աստապատու և Կարմիր վանուց մէջտեղ։ Աստապատու այս երկրորդ մենաստանն կը կոչուէր Ս. Յովհաննէս, որոյ այժմ միայն տխուր աւերակներն կը տեսնուին։

Կարմիր վանքի առաջնորդ Նիկողայոս վարդապետը 1831ին նորոգել տուաւ եկեղեցւոյն որմոց հիմերը, որք ուրիշ շէնքերու հետ բաւական վնասուեցան 1840ին երկրաշարժէն։ Այժմ տակաւին շէն է վանքս, և է ընդ տեսչութեամբ Նախճաւանու հոգևոր կառավարութեան։ — Ռուսաց աշխարհահամարի մէջ նշանակուած է Կարմիր վանք անուամբ հայաբնակ գիւղ մը, որ թուի թէ կը գտնուի վանացս մօտ. ունի 17 տուն՝ իբր 80 բնակչօք։ — Աբրահամ կաթողիկոսը 1736ին այցելելով Աստապատ, կ'ողբայ ու կը հառաչէ տեսնելով տեղւոյն դրից վայելչութիւնն և ամայանալն. նոյն ժամանակ. կիրակի օր մը պատարագի սուրբ խորհուրդն կատարելով, կը ձեռնադրէ երեք եպիսկոպոսներ։ Որչափ և տխուր է Աստապատ՝ իւր ամայի շէնքերով, սակայն զուարթ են տակաւին իւր սահմանքն և զարդարուած են բազմաթիւ միգաբեր ծառերով, յորս հռչակուած են խնձորն արքունական (պրսկ. սիպի ռուշբանի), դեղձը, տանձն, ծիրանն, և այլն։ Կարմիր վանքի սահմանները, լերան կողերուն վրայ կը տեսնուին բրածոյ քարայրներ, որոնք համարուած են գանձուց և գրոց պահարաններ։ — Շահխաթունեանց, Ստորագր. Բ. 297–304։ Միսաքեան, 507–514։

ԱՍՏԱՐԱ. — Գլխաւոր քաղաք Թալիշ (Փայտակարան) նահանգի, համանուն գետոյն վրայ։

ԱՍՏԵՂԱՆԻ Տես ԱՍՏԱԽԱՆԷ։

ԱՍՏԵՂՕՆՔ կամ ԱՍՏԵՂՈՒՆՔ. Տես ԱՍՏՂԱԲԵՐԴ։

ԱՍՏՂԱԲԵՐԴ, ԱՍՂՆԲԵՐԴ կամ ՄՈԿԱՑ ԲԵՐԴ. — Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արևելակողմը $1^1/_2$ ժամ հեռու լեռնակի մը վրայ կը տեսնուին երբեմն հռչակաւոր բերդիս աւերակներն։ Դիրքն հրաշալի, չորս կողմերն կան աչագին խոտաւէտ հովիտներ։ Ամրոցիս վիթխարի պարսպաց մեծագոյն մասն, ի բաց առեալ արևմտակողմնը, տակաւին կանգուն է։ Աւերակացս միջէն ոչ սակաւ Մշեցիներ փորելով գտած են հնութիւններ, և այնպէս հարստացած։ Կ'ըսուի թէ ամրոցս խիստ հին ժամանակները եղած է Ձրուանայ բնակարան, զոր կառուցանել տուած է նորա Աստղիկ քոյրը։ Յովհան Մամիկոնեան կը յիշէ Աստղաբերդի եկեղեցին, կոչելով Մեծ կաթուղիկէ, որ կործանեցաւ Ապտուռահիմի արշաւանաց ժամանակ։ Նոյն պատմիչը զանազան ձևերով կը գրէ այս պատմական բերդի անունն, ինչպէս Աստեղունք, Աստեղօնք, Աստղօնք։

ԱՍՏՂԱԲԵՐԴ կամ ԱՍՏՂԲԵՐԴ. — Գիւղ Զորրորդ Հայոց, այժմեան Վերին Կեղի գաւառակի մէջ, լերան մը ստորոտը։ Բնակիչք գրեթէ 300 տուն կէսը Հայք։ Բերքերէն անուանի է ընտիր և առատ ընկոյզը։ Գիւղիս մօտ է Ս. Գէորգ անուն մենաստան մը որ ունի յորդառատ և բարեհամ աղբիւր։ Իսկ այս մենաստանէն ալ քառորդ մը հեռու է Ս. Կիրակոսի վանքը, անտառազարդ, ջրաբեր և պտղաւէտ տեղւոյ մը մէջ, որոյ մօտ կայ Լուսաղբիւր։ Գիւղիս գիմացը Օրօր գետէն անդին կը տեսնուի հին քարաշէն և քայքայած բերդ մը, որ ըստ պատմելոյ բնակչաց կը վերաբերի Աստղ անուն թագուհիի մը։ — Նոր Հայս. 108։

ԱՍՏՂԱԲԼՈՒՐ կամ ԱՍՏԵՂ-ԲԼՈՒՐ. — Կը յիշուի այս անուամբ բլուր մը Արցախի Մեծկուենեաց գաւառի մէջ։ Տես ԱԿԱՆԱ։

ԱՍՏՂԻԿ. — Գետ և լեռ Սեբաստիոյ, այսպէս կոչուած է ի Հայոց թարգմանելով թուրքերէն Եըլտըզ տաղի և Եըլտըզ սու անուններէն։ Գետս կը բղխի նոյնանուն լեռնէն և Գավառշ գիւղէն անցնելով կը կոչուի Գավառշչուր. իսկ Սեբաստիոյ մէջէն անցնելով կը կոչուի Մուշտառ սու, որովհետև քաղաքին բոլոր աղտեղութիւնք իր մէջ կ'առ-

մանակ, իմանալով անգութ Տուղրիլի արշաւանքը, բոլոր թագաւորական գանձերը և Հայրապետական զգեստները ի միասին առնելով՝ սոյն լերան ստորոտը կը պատսպարուի։

ԱՍՏՂՈՒՆՔ կամ ԱՍՏՂՕՆՔ. Տես ԱՍՏՂԱԲԵՐԴ։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Հին գիւղ Այրարա-



142. Սպիտակաւոր Աստուածածին=Կիւլ վանք։

նու, և կ'երթայ կը թափի Գըզըլ ըրմագի մէջ։ Գետս իւր ընթացից մէջ դեռ Սեբաստիա չհասած կը դարձընէ ոչ սակաւ ջրաղացներ։ — Աստղիկ լերան ստորոտը հինաւուրց շէնքերու փլատակներ կան և կը կարծուի թէ երբեմն լայնատարած քաղաք մը եղած լինի նոյն տեղը։ Աւանդութեամբ կը պատմեն, թէ Հայոց Սենեքերիմ թագաւորի կրտսեր որդին Ատոմ՝ իւր եղբօրը յաջորդած ժա-

տայ Բասեն գաւառի մէջ. կը յիշէ Ասողիկ (Գ. ԽԴ) երբ կ'ըսէ. «Եւ եկեալ ի հանդիպումն միմեանց՝ Գուրգէն և մաժիստրոսն ի մայրաքաղաք լերին Մեծրաց, ի գիւղն որում սուրբ Աստուածածին կոչի՝ անուամբ եկեղեցւոյն որ ի նմա»։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Փոքր և անշուք մենաստան Տարուբերանի Բզնունեաց գաւառի մէջ, Վանայ ծովակի արևմտեան ափանց վրայ։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — *Գիւղ Սիւնեաց Սօթք գաւառի. կը յիշուի Հարկատու գիւղորէից ցանկի մէջ։*

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — *Աւերակ վանատեղի Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։ Ունի փոքրիկ կամարակապ եկեղեցի մը, տանիքը կործանած և ներսը հարաւային որմին վրայ կան ԺԳ–ԺԴ դարուց վերաբերեալ արձանագրութիւնք։ Եկեղեցւոյս շուրջը կան գամբաններ և խաչարձանք՝ յորոց ոմանք ունին արձանագրութիւններ, մասամբ եղծուած։*

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՏ. — *Հին մենաստան Սիւնեաց Վայոց ձոր գաւառի Գայլեձորոյ հովտին մէջ։ Կը կոչուի նաև* Մարիամ Աստուածածին *կամ* Սպիտակաւոր Աստուածածին՝ *եկեղեցւոյն սպիտակագոյն քարերուն համար (Թ. 142). իսկ այլազգիք կը կոչեն Կիւզլ վանք, շուրջը խիտ առ խիտ բուսած վայրի վարդենիներուն համար։ Դիրքը գեղեցիկ է, շրջապատուած է բազմաթիւ պտղատու և վարդի ծառերով։ Հիւսիսային կողմը պարսպապատ է, միւս կողմերն կան 30ի չափ սենեակներ, ոմանք կամարակապ։ Եկեղեցին փոքր է, քառակուսի և բարձրադմբէթ. ունի չորս գեղնագոյն քարէ սիւներ, վայելուչ քանդակուած պատկերներ սեղանին վրայ, ինչպէս նաև գմբէթի չորս անկիւնները չորս աւետարանչաց քանդակապատկերները, բոլորն ալ անվնաս մնացած։ Վէմքարի վրայ քանդակուած կայ ծերունի քահանայի մը պատկերը, ձեռքերը վեր բարձրացուցած։ Արևմտեան դրան ճակատը սպիտակ քարի վրայ քանդակուած է Տիրամայրն՝ Յիսուս գիրկը։ Եկեղեցիս ունի նաև փոքր գաւիթ մը, որոյ առաստաղը բոլորովին խոնարհած է, և գեղեցկաշէն զանգակատուն մը։ Տաճարի մէջ անարատ մնացած է նաև մկրտութեան աւազանն՝ գեղեցիկ զրուագներով զարդարուած շրջանակով։ Արտաքին հիւսիսային որմին վրայ կայ քանդակապատկեր մը, որ կը ներկայացնէ լայն զգեստով, մեծաշուք և գլուխը խոյր դրած մարդ մը՝ ձեռքը աղեղ բռնած. կը կարծուի թէ Պռօշ իշխանն է. նոյն ձևով զարդարուն զգեստներով պատանի մ'ալ կայ մօտը, որոյ գլխոյն վրայ գրուած է* ԱՄԻՐ ՀԱՍԱՆ ՈՐԴԻ ՊՌՈՒՇԱՅ։ *Եկեղեցւոյ արևելեան որմին վրայ ագուցուած են խաչքարեր. հարաւայնոյն վրայ կայ երկու խաչակիր ձեռաց քանդակ և* ՉՁԳ *(= 1334) թուականը, այդ քանդակներն տեղերնէն ինկած լինելով՝ այժմ դրուած են եկեղեցւոյ մէջ։ Վանացս եկեղեցւոյ դուրսը և ներսը կան բաւական թուով արձանագրութիւնք ԺԳ–ԺԵ դարուց, որք են յիշատակագրութիւնք զանազան միաբանող և նուիրատու անձանց։ — Միսաքեան, 137–139։*

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — *Ամայի և կիսակործան վանատեղի Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, Յախայքարի վանքէն քիչ հեռու արևմտեան կողմը (Թ. 143)։ Եկեղեցին փոքր է (9 քայլ երկայն և 8 լայն) չորս որմնափակ սեանց վրայ, հինգ սեղանով, ունի նաև ընդարձակ ժամատուն (20 քայլ երկ. 8 լայն) վեց որմնափակ սեանց վրայ, որոյ տանիքը ինկած է։ Հարաւային կողմէն դռնով մը կը մտնուի ուրիշ ժամատուն կամ մատուռ մը (12 քայլ երկ. 5 քայլ լայն) նոյնպէս հաստատուած վեց որմնայար սեանց վրայ, ամբողջ կոփածոյ քարերով. մէջը կայ տապանն* Ուքանայ *որ թուի* Խաչենոյ *իշխանազուններէն մէկը,* ՉՀԵ *(= 1326) թուի արձանագրութեամբ։ Վանացս պարսպի հարաւակողմը կայ ուրիշ եկեղեցի մ'ալ բարձրայարկ և չորս որմնափակ սեանց վրայ հաստատուած, որոյ կամարաձև առաստաղը խոնարհած է, մօտը կան բնակարանաց աւերակներ և գերեզմաններ։ Պարսպի դրան վրայի արձանագրութիւն մը կը յայտնէ, թէ Աստուածածնի վանքս նորոգուած է* ՈՀԱ *(= 1222) թուին։ Վանքս ունի նաև ուրիշ արձանագրութիւններ, բայց ափսոս որ իւր հիմնարկութեան տարին չեն յայտներ։ Այժմ վանացս միաբաններու կիսականգուն սենեկաց մէջ, մերձակայ թուրքերը ոչխարներ կը պահեն. եկեղեցւոյ յատակն ալ կենդանեաց աղբով ծածկուած է, և միով բանիւ սրտաճմլիկ տեսարան մը կը ներկայացնեն այս վաղեմի աւերակներն։ — Միսաքեան, 137–139։*

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — *Գիւղ Վասպուրականի, Վանայ հիւսիսակողմը, Լիմ կղզւոյն դիմացը։ Բնակիչք 50 տունէն աւելի են, և ունին գեղեցկաշէն հոյակապ կաթուղիկէով*

եկեղեցի մը Ս. Աստուածածին, որոյ անուամբ կոչուած է գիւղն։ Վերափոխման տօնին բազմաթիւ ուխտաւորներ կը դիմեն աստ. ուր կը ցուցնեն Ս. Կուսի հողաթափը և գլխոյն ծածկոցը։ — Աստուածածին անուամբ դեռ ուրիշ բազմաթիւ եկեղեցիներ և վանքեր կան մեր աշխարհի զանազան քարուկիր եկեղեցի մը, որ 500 տարուան շէնք կը համարուի։ Բնակիչք եկեղեցասէր չեն և պատճառ բերելով եկեղեցւոյ հնութիւնն կ'ըսեն. «ծերացած է այլ ես չի լսեր մեր աղօթից ձայնը»։ Տեղւոյս ժողովուրդը եկեղեցի չերթալու ուրիշ նախնական պատճառ մ'ալ ունի, այն է թէ ի-



143. *Ս. Աստուածածնի եկեղեցւոյ աւերակները։*

կողմերը, ինչպէս ի Զէյթուն, յՕծոփ, ի Նշուա, և այլն։

ԱՍՏՈՒԱԾԱՁՈՐ. — Գիւղ Սիւնեաց՝ կը կոչուի նաև Աստազոր (Տես)։

ԱՍՏՈՒԱԾԱՇԷՆ. — Հին գիւղ Վասպուրականի, Վանայ հարաւային արևելակողմը, Հայոց ձորի մէջ։ Ունի 80 տուն բնակիչ, յորոց 50էն աւելին Հայոց է և մնացածը Քրդաց։ Հայք ունին Ս. Ստեփանոս

րենք թերևս սերնդական շառաւիղ են այն հարց՝ որք երբեմն չաստուածներ կը շինէին գիւղիս մէջ, որոյ համար աւանդութիւնը կը պատմէ, թէ «Հայկ նահապետը դեռ այս կողմերը չեկած՝ գիւղս կռապաշտից արհեստարան էր. աստ կը շինէին զանազան չաստուածներ, որոց պատճառաւ Աստուածաշէն կոչուեցաւ։» Երբ յիշեալ Նահապետը այս տեղ կու գայ կը կործանէ կռոց ար-

հեստաբաններն եւ արհեստաւորներն կը դարձրնէ յԱստուածպաշտութիւն։ Գիւղս ունի ընդարձակ հին գերեզմանատուն, յորում կան զանազան ձեւերով եւ գոյներով խաչքարինք։ Աստուածաշինէն քառորդ մը հեռու կը գտնուի կործանուած բերդ մը զոր կը կոչեն Վարդանեայ բերդ, եւ կ'ըսեն, թէ քաջն Վարդան կառուցած է եւ ժամանակ մը մէջը բնակած։ — Նկարգր. Ոշղեորուշբիշն, Ա. 145–147։

ԱՍՏՈՒԱԾԱՇԷՆ. — Բարձր լեռ Կիլիկիոյ Կապան գաւառի մէջ։

ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ կամ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԵԼ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Ապարան վիճակի մէջ, 27 տուն բնակչօք։ Այսպէս կոչուած է, սուրբ խաչի մասին համար, որ կը պահուէր հոս եկեղեցւոյ մէջ, որ կառուցուած է բարձր գիրքով, եւ որոյ մօտ կար նոյնանուն վանք մը։ Տակաւին կանգուն է քարաշէն եկեղեցին, փոքր, գմբեթաւոր եւ վայելչաշէն։ Աւանդատան հարաւային որմոյն վրայի արձանագրութիւնն կը յայտնէ եկեղեցւոյս շինողն՝ 1244 թուին, որ է Քուրդ իշխանաց իշխան որդի Մեծին Վաչէի։ Կ'աւանդուի թէ եկեղեցւոյ շինութեան ժամանակ, սեղանոյն հիման մէջ ամփոփած են Ս. Յակոբայ առաքելոյ մէկ կողը կամ աջը. երգարան Թումաս Վանանդեցւոյն հետեւեալ տողերն ալ անշուշտ այս կ'ակնարկեն.

«Աստուածընկալ երկրպագեալ,
Ս. Յակոբայ աջըն պատուեալ,...»

Եկեղեցւոյ կից կան փոքրիկ մատուռներ կամ խցիկներ, եւ գրան մը վրայ կայ 1207 թուականաւ արձանագրութիւն, յորմէ կը յայտնուի թէ վանքը նորոգուած է նոյն թուին. հետեւապէս հիմնարկութիւնն աւելի հին ժամանակաց մէջ եղած է։ Այժմ հազիւ կը տեսնուին վանքի բնակարանաց հետքերը. կան նաեւ շիրիմներ եւ մեծամեծ խաչքարեր։ Այրարատ, 254։

ԱՍՏՐԱԽԱՆ, ԱԺՏԷՐԽԱՆ կամ ՀԱՇՏԱՐԽԱՆ. Գղ. ASTRAKHAN. Ռ. Астраканъ. — Գլխաւոր քաղաք Ռուսիոյ համանուն կուսակալութեան. Վոլկա գետոյն բերնէն հեռու է գրեթէ 45 հազարամետր եւ կառուցուած է նոյն գետոյն ճիւղերէն ձեւացած կղզւոյ մը վրայ։ Եթէ պատմութեան վրայ աչք դարձնենք, պիտի տեսնենք որ Աստրախանի նահանգը ենթակայ եղած է բազմադիմի անցքերու եւ պատմական մեծ դեր կատարած, ծառայելով իբրեւ դուռն եւ ճանապարհ Եւրոպա գաղթող նախկին ցեղերու։ Ոչ սակաւ արագ արագ իրարու յաջորդող վայրենի թափառականներ այս երկրի մէջ ատ ժամանակ մի բնակութիւն հաստատած են, եւ ապա կռիւ մղելով իրարու դէմ տկարն զօրաւորին տեղի տալով փախեր է։ Այդ



144. Աստրախանի Հայոց Ս. Աստուածածնի եկեղեցին։

թափառական ազգերէն ծանօթ են Ալանք, Ռոկսոլաններ, Ակացիրներ, Ավարացիք, եւ այլն։ Վայրենի ազգաց ժամանակամիջոցէն պատմական ստոյգ տեղեկութիւնք կը պակսին, եւ արդէն մեր նպատակէն դուրս է զայնս քննելը։ ԺԳ դարու մէջ քաղաքս Թաթար խաներու իշխանութեան ներքեւ մնալով, ըստ ոմանց՝ այն միջոցէն Հաճի Թէրխան իշխանի անուամբ՝ սկսեր է կոչուիլ Աժտէրխան։

Ռուսաց Իւան Ահեղ (Грозныи) թագաւորը Ղազան քաղաքը նուաճելէ վերջ, 1554 թուին տիրեց նաեւ Աստրախանի եւ բոլորովին ոչնչացուց Թաթար խաներու իշխանութիւնն։

 ԱՍՏՐԱԽԱՆ

Նոյն թագաւորը 1568 թուին հին Աստրախանէն 10 հազարամետր հեռու հիմնեց այժմեան քաղաքը, որուն դիրքը դաշտային է, և մէջէն կ՚անցնին երկու ջրանցք, մին կը կոչուի Կուտում, իսկ միւսն Վարվացիևվեան ջրանցք, Վարվացիեվ յոյնի անուամբ, որ փորել տուած է 1805ին։ Կլիման բարեխառն է, օդը և ջուրը ընդհանրապէս առողջարար։ Ռուսիոյ հարաւային քաղաքներէն մին լինելով, և ծովային ճանապարհով հաղորդակցութիւն ունենալով Պարսկաստանի հետ, վաճառականութիւնը բաւական ծաղկած վիճակի մէջ է։ Արտածութեան կողմանէ Աստրախան Վոլկայի 10 նաւահանգիստներէն առաջին տեղին կը գրաւէ, իսկ ներմուծութեան մէջ երրորդ։ Ազգային նաւահանգիստները կը դրկէ գլխաւորաբար ձուկ և քարիւղ. իսկ ի Պարսկաստան, բամբակեղէնք, կտաւներ, շաքար, մետաղեղէնք, և արուեստական զանազան նիւթեր։ Կ՚ընդունի Պարսկաստանէն, Բուխարայէն և Խիվայէն, բամբակ, պտուղներ, բրինձ, մետաքս, կաշի, բուրդ, և այլն։ Գրեթէ տարուան մէջ միջին հաշուով Աստրախանի նաւահանգիստը կը մտնեն 4000–4600 նաւ և նոյնչափ ալ կ՚ելնեն։ Արուեստական մասին մէջ քաղաքս այնչափ ծաղկած չէ, սակայն ունի գործարաններ մետաքսի, մեքենաներու, օճառի, մոմի, կաշիի, գարեջրոյ, և այլն։ Ըստ վերջին (1897 տր.) վիճակագրութեան, Աստրախանի բնակչաց թիւն կը հասնի 125000ի, մեծամասնութիւնն կը կազմեն Ռուսք, միւս ազգերն են Հայք, Թաթարք, Հրեայք, Պարսիկք, Գերմանացիք, և այլն։ Քաղաքս ունի զանազան դպրոցներ, նաւային վարժարան, մէկ գիմնազիական և երեք քաղաքական հիւանդանոցներ, յիմարանոց, ծերանոցներ, երկու որբանոց, հասարակաց գրատուն (14000 հատորներով), թատրոն, և այլն։

Եւրոպայի և Ասիոյ զանազան կողմերը ցրուած Հայերէն ամենէն հիները և նշանաւորները կը համարուին հին Աստրախանցիք, որք Անւոյ վրայ եղած ութերորդ կամ վերջին արշաւանաց և աւերմանց ժամանակները 1239ին, Թաթարաց Չամարղան զօրավարին ձեռքէն խոյս տալով ապաստանեցան քաղաքս, յորում գրեթէ 100 տարի բնակելէ վերջ, բազմութեամբ ոտք ելան և Թաթարաց հետ պատերազմելով, անցան Խրիմ և անկէց ալ կամաց կամաց Լեհաստան, Հունգարիա և այլ աշխարհներ։ Այժմեան Աստրախանցի Հայոց նախնիք Անեցիներ չեն։ Վերոյիշեալ դէպքէն վերջը որոշ չի գիտցուիր, թէ քաղաքիս մէջ մշտաբնակ Հայեր կային. բայց յայտնի է որ ԺԷ դարուն սկիզբները Պարսկաստանէն բաւական թուով հայ վաճառականներ եկած են և հոն տեղաւորուած։ Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը, լաւ ըմբռնելով Հայոց ազգի վաճառականութեան և արուեստից ունեցած մասնաւոր յարմարութիւնն և հանճարն, նա ինքն հրաւիրեց զՀայս յԱստրախան, և մասնաւոր արտօնագիր ալ շնորհեց անոնց՝ որպէս զի իր տէրութեան մէջ ծաղկեցնեն թէ վաճառականութիւնն և թէ արուեստներն։ Տեղւոյս Հայերը արտօնագիր ընդունած են նաև ուրիշ կայսրներէ. բայց իրենց շնորհուած ազատութիւնները անփոփոխ չմնացին, մասամբ մը իրենց կամօք՝ մասամբ մ՚ալ տէրութեան կողմանէ երբեմն աւելցան և երբեմն պակսեցան։ Քաղաքիս Հայք հետզհետէ բազմացած են գաղթելով զանազան կողմերէ, ինչպէս Պարսկաստանէն, Արցախէն, Կորիէն, Ղազանէն, Տարօնէն և Ագուանից աշխարհէն։ Այժմ Աստրախանի Հայոց թիւն կը հասնի 6500 հոգւոյ։ Ունին չորս հոյակապ եկեղեցիներ, որք են Ս. Աստուածածին, Ս. Պետրոս Պօղոս, Ս. Կատարինէ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ. հինգերորդ եկեղեցի մ՚ալ ունին քաղաքէն դուրս Ս. Յարութիւն անուամբ՝ գերեզմաննոցի մէջ։ Ս. Աստուածածին (թ. 144) է մայր եկեղեցին. կառուցուած է չորս սիւներու վրայ, գմբեթայարկ և գեղեցկաշէն. ներքուստ զարդարուած ոսկեզօծ նկարներով և արծաթապատ պատկերօք։ Իսկ զարդուց, զգեստուց և արծաթեղէն անօթոց և սպասուց կողմանէ ալ խիստ ճոխ է։ Ունի նաև վայելչաձև և գեղեցիկ զանգակատուն մը՝ շքեղ կաթուղիկէով։ Այս զանգակատան մէջ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանց 1850ին անխնամ ձգուած գտաւ և ցուցակագրեց այլ և այլ ձեռագիր և տպուած գրքեր, զորս հաւաքած

էր Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանց՝ զանազան կողմերէ, որոց մէջ կար նաև Գրիգոր Նիւսացւոյ երգ երգոցի մեկնութիւնը գրուած Հայոց ՅԽԲ (= 893) թուին և բերուած հոս ի Սանահնէ։ Աստրախան կը կազմէ Ռուսաստանի Հայոց թեմերէն մին, հետևաբար ունի իր առաջնորդ թեմակալ եպիսկոպոսը կամ արքեպիսկոպոսը, զոր կ'առաջարկէ Էջմիածնի կաթողիկոսը և կը հաստատէ Ռուսաց կայսրը առանձին հրովարտակով։ Ներկայ թեմակալ առաջնորդն է Գեր. Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան։ Մեծաշէն և փառաւոր առաջնորդարանը կառուցուած է մայր եկեղեցւոյ մօտ։ 1795 թուին Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանց աստ հիմնած էր Աստրախանի միակ հայկական տպարանն, ուր տպուած են բաւ մեծի մասին եկեղեցական գրքեր և օրացոյց։ Ցաւալի է ըսել որ այդ տպարանն շատ տարիներէ ի վեր անգործութեան դատապարտուած է։ Ս. Պետրոս Պօղոս (Թ. 145) եկեղեցին ևս յոյժ գեղեցիկ և հոյակապ շէնք է, գմբեթաւոր և երկու եռայարկ և սրածայր զանգակատամբք։ Այս եկեղեցիս ևս հարուստ է ծանրագին շուրջառներով և անօթներով, արծաթապատ սաղաւարտներով, խաչերով, ջահերով, կանթեղներով, բուրվառներով, և այլ զարդուք։ Զալալեանց զմայլած տաճարիս գեղեցկութեան և ճոխութեան վրայ կ'ըսէ. «... համեմատ նմին եկեղեցի չունին ամենևին Հայք ո՛չ ի Հայաստան և ո՛չ ի Ռուսաստան»։ Եկեղեցւոյս մէջ է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խաչէն վար առնելու և գերեզմանի դնելու պատկեր մը, որ յոյժ գեղեցիկ օրինակութիւն մ'է հռչակապանծ իտալացի նկարչին Ռափայէլի, որուն բուն օրինակն կը գտնուի Հռոմ։ Այս պատկերին համար կը պատմեն, թէ Ռուսաց Սուվարով զօրավարը Իտալիայէն բերելով նուիրած է Կատարինէ Թագուհւոյն, և նա տուած է իրենց քաջ զօրավարին իշխան Գրիգոր Պօտէմկինի։ Իսկ Պօտէմկին իշխանն ալ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանցի, նա ալ ընծայած է եկեղեցւոյս։ Եկեղեցւոյս հիմն ձգած է Մինաս արքեպիսկոպոսը, և կաթուղիկէն վերստին շքեղազարդուած և նորոգած է Յովսէփ արքեպիսկոպոսը, իսկ դարուս (Ժ.Թ) կիսուն թէ ներքուստ և թէ արտաքուստ աւելի ճոխացուց և պայծառացուց Մեծ. Գրիգոր Դանիէլեան Սարգսեանց։ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին ի հիմանց կառուցած է Մեծ. Դանիէլ Սարգսեան՝ Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ մօտ, իրեն սեփական ծախքով, և արքունական գանձարանի մէջ յատուկ գրամագլուխ ևս դրած է, ուսկից տարեկան նորոգութեանց և ծախուց համար որոշեալ



145. Աստրախանի Հայոց Ս. Պետրոս Պօղոս եկեղեցին։

գումար մը կ'առնուն։ Ս. Կատարինէ եկեղեցին փոքր է և կ'ինկնայ քաղաքէն դուրս հարաւակողմը, Մայր եկեղեցիէն կէս մղոն հեռի, հին գերեզմանատան մէջ։ Քաղաքիս ուխտատեղին դարձած է, ուր կը դիմեն բազմութիւն ժողովրդոց, և աւելի Սարգիս անուն վարդապետի մը հրաշագործ գերեզմանին։

Աստրախանի մէջ կանխաւ կային նաև կաթուղիկէ Հայեր, որոց թիւը թէև քիչ էր, սակայն լաւ դիրք ունէին։ Դեռ 1830ին ժամանակները իրենց թիւը կը հասնէր մօտ 300ի, և ունէին կրկին եկեղեցիներ. մին՝ Վերափոխման՝ գեղեցիկ և նորաշէն, երկու զանգակատամբք։ Եկեղեցւոյս մօտ

 ԱՍՏՐԱԽԱՆ

էր կրկնայարկ վանատուն մը 8 սենեակներով, և ուրիշ մեծատուր շէնքի մը սարքին յարկի մէջ ալ կ'ուսանէին կաթուղիկէ Հայոց մանկունք։ Միւս եկեղեցին կը գտնուէր քաղաքէն դուրս իրենց գերեզմանատան մէջ և կը կոչուէր յանուն Գաբրիէլի հրեշտակապետի։ Այժմ ցաւ ի սիրտ պէտք ենք ըսել, թէ այդ հաստատութիւնն գուրկ մնալով խնամատուն և ազգասէր հովիւներէ, ժամանակի ընթացքին մէջ կորսնցնելով իրենց ազգային ինքնուրոյնութիւնը, ձուլուեր և միացեր է Ռուսաց հետ։ Ներկայապէս թէ և կան մի քանի ընտանիք, սակայն աղքատին և չնչին ապրուստով հազիւ կարող են ապրեցնել իրենց գոյութիւնը։

Աստրախանի ազգայինք անտարբեր չեն եղած դէպի ուսումն և գիտութիւն։ 1806էն Հայազգի ոմն պարոն Աղաբաբեանց տէրութենէն թոյլտուութիւն կը ստանայ և իրեն սեփական ծախքով կը հիմնէ ազգային վարժարան մը Աղաբաբեան անուամբ, որ և մինչև ցայսօր կայ։ Այս վարժարանը անտեսականապէս բոլորովին ապահովուած լինելով՝ զուտ ազգային կրթութեամբ կը շարունակէ իր գոյութիւնը մինչև 1896 թուականը։ Այնուհետև կ'անցնի Ռուսաց կառավարութեան ձեռքը և կ'ինկնայ Լուսաւորութեան Նախարարութեան անմիջական հսկողութեան տակ. սակայն հայերէն լեզուի ուսումն՝ հիմնարկի ժառանգներու աշխատութեամբ բոլորովին չի վերցուիր։ Այժմ վարժարանս կը կոչուի «Աստրախանի Հայոց գաւառական ուսումնարան». ունի հայ հասարակութենէն ընտրուած վեց անձինքներէ բաղկացած հոգաբարձութիւն մը. ուսումնարանիս գլխաւոր կառավարիչները միշտ եղեր են հայ։ 1860էն առեններն Հայք ունէին նաև առանձին հոգևոր դպրանոց մը, որ քանի մը տարի բաց մնացած է։ Ունեցեր են նաև արական և իգական սեռի մի քանի դպրոցներ, որոնք կը կոչուէին «Հայոց եկեղեցական ծխական դպրոցներ»։ Այս դպրոցներէն մին՝ տղայոցը, կը գտնուի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաւիթը և ուրիշ մը օրիորդաց՝ Ս. Կատարինէ կոյսի եկեղեցւոյ գաւիթը. 1896էն երբ բոլոր Հայոց դպրոցներն անցան կառավարութեան ձեռքը՝ վերոյիշեալ երկու դպրոցները փակուեցան։ Ուրիշ օրիորդական՝ երկդասեան դպրոց մ'ալ կայ Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ մօտ, որ այժմ չորեքդասեան եղեր է և կը շարունակէ իր գոյութիւնը։ Հայք նորոգ կառուցած են Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյ դիմաց, փառաւոր և հոյակապ քարուկիր շէնք մը, որ լինելու է ազգային դպրանոց. սակայն բացման ըղձալի թոյլտուութիւնն դեռ ստացուած չէ կառավարութենէն։

Հայոց նիւթական անտեսական վիճակն ընդհանրապէս լաւ է. կը զբաղին գլխաւորաբար արուեստներով, ունին մեծ և փոքր վաճառանոցներ և կրպակներ, առևտուրը յաջողակ է։ Մեծ վաճառականներ քիչ կան, հազիւ մէկ երկու անձինք, որք բազմաթիւ ռուս դրամատէրներու հանգոյն կը զբաղին ձկան առևտրով։ Երբ Ռուսիոյ մէջ արուեստներն այնչափ ծաղկած չէին, Աստրախանի Հայք խիստ յառաջացած էին ներկարարութեան արուեստին մէջ. մինչև անգամ քաղաքէս ի Մոսկուա հրաւիրուած են Հայեր, այդ արուեստն Ռուսաց սովորեցնելու համար։ Այժմ Հայոց մէջ կան նաև շոգենաւ և առագաստանաւ ունեցող վաճառականներ։— Քաղաքիս ազգայինք ունին նաև յատուկ հոգաբարձութիւն մը հայ անանկաց համար, որ ունի մօտ 150,000 րուբլի, և բաւական մեծ գումար մ'ալ պիտի աւելնայ դորա վրայ Ցովսէփ Սարկաւագի կտակով որ դեռ Ռուսաց ձեռքն է։ Աստրախանի Հայոց նիւթական վիճակն որչափ որ լաւ է, ի հակառակէն իրենց մէջէն ազգային ինքնուրոյն կեանքը օր ըստ օրէ կը պակսի, շռայլ կեանք վարել սկսած են, թղթախաղը տարածուած է, պսակը նուազած և անոր հետևանք փոխանակ բազմանալու կը նուազին։ Ցանկալի է որ այժմեան Աստրախանի հայ հասարակութիւն, հետևելով իր նախնեաց բարի բարի սովորութիւններուն, ետ կենայ այդ վնասակար և ազգակործան դիրքէն, աւելի ուժ և մղում տայ ազգային լուսաւորութեան, ուսմանց, արուեստից և գիտութեանց մէջ յառաջանալու գործին. որովք միայն կարող պիտի լինի ապագային ունենալու ընտիր յաջորդներ։

Քաղաքիս մէջ Ռուսք ևս ունին արքեպիս-

կայսրական աթոռ. իրենց բազմաթիւ եկեղեցիներէն գեղեցկագոյնն է մայր եկեղեցին, յորում կը պահուին զանազան հնութիւններ, այսինքն զգեստներ, սաղաւարտներ, թանկագին ակունքներով զարդարուած աւետարաններ, և այլն։ Այս հնութեանց հետ կը պահուի նաև Ղուկաս կաթողիկոսի մէկ կոնդակը։ — Աստրախան՝ ժամանակի շրջանաց մէջ ունեցեր է զանազան տեսակ պատահարներ. ժանտախտ՝ ԺԷ. դարու երկրորդ կիսուն, և վերջին անգամ 1887ին. հրդեհներ 1709ին, 1878ին և 1880ին. հոդկախտ (choléra) 1830ին, որով մեռան 3000 հոգիք. ապստամբութիւնք՝ ամենէն աւելի յիշատակելի 1861ին. երկրաշարժ՝ երկու զօրաւորագոյնքն 1660ին, և 1886ին աւելի թեթև։ — Ճնպրհ. ի Լեհաստան, 390–403։ Ճնպրհ. Ջալալեանցի, Բ. 438–444։ Եւ այլն։

ԱՍՐԱՆ կամ ԱՇՐԱՆ. — Այս անուամբ Վերին և Ներքին երկու հայաբնակ գիւղեր կան Աստրպատականի Գարատաղ գաւառի Քէլվան վիճակի մէջ։ Մին ունի 29 տուն բնակիչ, միւսն 12։

ԱՍՐԱՖ. — Գիւղ Տուրուբերանի Աղիովիտ (Արճէշ) գաւառի մէջ։ Բնակիչք 70 տուն կը համարուին. ունին Ս. Աստուածածին հոյակապ եկեղեցի մը։ Անուանի են գիւղիս այգիներն. առուտուրն լաւ վիճակի մէջ։

ԱՎԱՆԱՇԷՆ. — Հայաբնակ գիւղ Աղուանից Կոլիխան գաւառի մէջ, կառուցուած՝ գոգաւոր հովտի մը հարաւահայեաց լանջի վրայ։ Հովիտն ճահիճներ ունենալով՝ ամառն օդն վտանգաւոր է և ջուրն լաւ չէ։ Բնակիչք 1060ը կ'անցնին. գաղթած են Արցախի Դիզակ և Վարանդայ գաւառներէն, Խաչենի Թաշ–պուլաղ գիւղէն և Սիւնեաց Զանգեզուր գաւառէն։ Գիւղիս հոյակապ եկեղեցին կառուցուած է չորս սեանց վրայ 1752 թուին, նուիրուած է Ս. Աստուածածնի։ Եկեղեցւոյ արևմտեան կողմը շինուած է նաև փառաւոր ուսումնարան մը։ Գիւղիս անուան ստուգաբանութեան համար բնակիչք կը պատմեն, թէ Ավանաշէն կոչուած է իւր հիմնադիր Ավան–Իւզպաշիի անուամբ որ իրեն ժողովրդովը եկած է այս տեղ Արցախի Շօշու գիւղէն։ — Աղուանք, 194։

ԱՎԱՆՑ. Տես ԱՒԱՆՑ։

ԱՎԵԽՈՒ կամ ԱՒԵԽՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Վանք Աղձնեաց Սալնոյ ձոր գաւառի մէջ, Բաղէշի արևելեան կողմը, ½ ժամ հեռու։ Վանքս ունի բաւականին վարելահողեր, և չափաւոր եկամուտ։ Մօտը կան Թադէոս և Թովմաս առաքելոց անուամբ զոյգ մ'աղբիւր, որք պրապատիկէ մը զարձած են ամէն տեսակ հիւանդութեանց։ Այս աղբիւրները կ'սկզբնաւորեն Ավեխու ջուր կոչուած վտակն։ Մենաստանիս մօտ պատռուած լերան քարերու մէջ կը բուսնի աղբրաց արիւն ծաղիկը, զոր կը գործածեն դեղերու մէջ։ Ի հնումն այս կողմերը Ավեխ անուամբ գիւղ մը եղած պէտք է լինի։ Այս է նաև Ավեխու ձոր։

ԱՎԸՐԴՆԻ. — Պաղաւէտ գիւղ Զօրորդ Հայոց, այժմեան Վերին Կեղի գաւառակի մէջ. բնակիչք խառն։

ԱՎԹՈՅ. — Յիշուի Աղձնեաց Տատիկ գաւառի մէջ։

ԱՎՇԷՆ. — Ծառազարդ գիւղ Բարձր Հայոց, այժմեան Կամախ գաւառակի մէջ։ Երբեմն բազմամարդ և շէն եղած է, իսկ այժմ ինկած։

ԱՎՈՒՇ. Տես ԱՒԷՇ։

ԱՎՏԻԲԷԿ. — Գիւղ Այրարատայ այժմեան Ալեքսանդրապոլի գաւառի մէջ, 120 տուն հայ բնակչօք։

ԱՎՏՈՒԽ. — Հայաբնակ գիւղ Արցախի Վարանդա գաւառի մէջ, Հացի գիւղի արևմտեան կողմը, կառուցուած՝ ձորի մը երկու լանջերու վրայ։ Երկիրն բերրի և պտղաւէտ, պատուական օդն, կլիման և ջուրն։ Եկեղեցին Ս. Աստուածածին, կամարակապ է, շինել տուած են Սարգիս բէկ և Յարութիւն բէկ Ղազեանց։ Բնակիչք 847 հոգի, բաժնուած 125 տան։

ԱՎՐԻԱՐ կամ ԷՎԼԻԱ. — Լեռ Այրարատայ Վանանդ (Կարս) գաւառի մէջ։

ԱՏԱ. — Հայաբնակ գիւղ Աստրպատականի, Ուրմիոյ գաւառի մէջ։ Բնակիչք հազիւ 50 հոգի։

ԱՏԱԲԱԶԱՐ կամ ԱՏԱՊԱԶԱՐ. Գղ. ADA-BAZAR. — Գլխաւոր քաղաք Իզմիտի նահանգի համանուն գաւառի։ Նոր գիւղէն հեռու է 3 ժամ, և Նիկոմիդիայէն 8 ժամ. ընդարձակ դաշտի մը վրայ գեղեցկացիր և

թթենաշատ վայր մի է։ Ունի 25000 բնակիչք, յորոց 12000ը Հայք, և մնացածը Մահմէտականք և 1600 Յոյնք։ Լուսաւորչական Հայք 10700 են, և ունին չորս հոյակապ և փառաւոր եկեղեցիներ։ Առաջինն և հնագոյնը կը կոչուի Ս. Հրեշտակապետ, որոյ մօտ է վայելուչ եկեղեցատունը. միւսները կը կոչուին Ս. Կարապետ, Ս. Լուսաւորիչ և Ս. Ստեփանոս։ Այս չորս եկեղեցիներու համեմատ քաղաքիս Հայք չորս թաղի բաժնուած են, և ունին ամեն եկեղեցւոյ յատկացեալ արական և իգական սեռի դպրոցներ։ Հայք ընհանրապէս վաճառականութեամբ կ՚զբաղին, աշխատասէր են բայց ոչ այնչափ հարուստ. չերամագործութիւը այստեղ շատ տարածուած է։ Բողոքական Հայք են 1300 հոգի, ունին ժողովարանի մը և արական ու իգական սեռի մէկ մէկ դպրոց։ Քաղաքիս Ատա = Կղզի կոչուելուն պատճառն այն է որ երկու կողմէ


146 · Ատալիա քաղաքի տեսարանը։

շրջապատուած է գետերով, մին է Սղանձայի գետն և միւսն Սաքարիա։ Ատաբազար իր ջուրն կ՚ընդունի վերոյիշեալ Սղանձայի գետէն, որոյ վրայ դրուած է մեծ գոլլակիր անիւ մը, որ ջուրը առնելով կը լեցնէ ջրամբարներու մէջ, և ստորերկրեայ խողովակներով մինչև քաղաքը գալով աղբիւրներու կը բաժնուի։ Քաղաքիս վաճառականութիւնն չափաւոր է. ունի մեծ վաճառանոց (պազար) մը, որ վերջին տարիներս նորոգ շինուեցաւ քարէ, որովհետև հինն մեծ հրդեհէ մը բոլորովին կործանեալ էր։ Տարեկան վաճառականութեան ելևմուտք գումարն կը հանի միջին հաշուով 14,000,000 փրանկաց։ Բիւզանդիոն 1897. Թ. 170։




147. Յատակագծն Ատալիոյ։

ԱՏԱ ԹԷՓԷ. — Քարտարլար Սիւնեաց, Գեղամայ ծովակի արևելեան եզերքը Ադա կոչուած փոքրիկ թերակղզւոյն վրայ։

ԱՏԱԼԻԱ, ԱՏՏԱԼԻԱ կամ ՍԱԴԱԼԻԱ. Յն. Ἀττάλεια. — Գլխաւոր և հին քաղաք (Թ. 146) Կիլիկիոյ համանուն գաւառի մէջ, Պամփիւլիոյ ծովեզերքը, որ հայկական տիրապետութեան արևմտեան ծայրագոյն սահմանն է, վասն զի Մեծին Լևոնի յաղթական սուրը մինչև այս կողմերը իրեն հպատակեցուց։ Կառուցուած է համանուն ծոցի մէջ 25 մետր բարձրութեամբ ժայռի մը վրայ, և ունի 25000 յոյն և թուրք բնակիչք և սակաւաթիւ հայեր։ Այսպէս կոչուած է իւր հիմնադրին անուամբ՝ որ է Ատտալոս Բ Եղբայրասէրն, Քրիստոսէ առաջ։ Հռովմայեցւոց ձեռքն անցնելով (132էն Ն. Ք.) Պամփիւլիոյ մայրաքաղաք եղաւ։ Քրիստոնէութեան սկիզբները պատուեցաւ քարոզութեամբ Ս. Պօղոս և Բառնաբաս առաքելոց, և Ալեքս հայսեր աւեն՝ մետրապօլտական աթոռով։ Բիւզանդացւոց ձեռքէն անցաւ կարգաւ Սելճուքեանց, Իկոնիոնի Թուրքաց, Գարամանեաց, Օսմանեանց. 1471էն Վենետիկեցիք թէպէտև տիրեցին քաղաքիս, բայց փութով առիպուեցան անզի տալու, առանց նուաճելու միջնաբերդը։ Եթէ ոչ պատերազմաւ, գէթ վաճառականութեամբ, յԱտալիա գիմողներն օգտուեցան իր նուաճանգատէն զանազան պատուական արևելեան բերքերով, զոր կը կրէին յարևմուտս ԺԲ—ԺԵ դարուց մէջ։ Հիանալի է քաղաքիս դիրքն, պարսպապատ է, և նշանաւոր շէնքերն են մզկիթք, եկեղեցիք և հասարակաց վաճառանոցք։ Տակաւին կը տեսնուին հին շէնքերու գեղեցիկ յիշատակարաններ, յորս ամենէն նշանաւորն է ի պատիւ Ադրիանոսի կանգնուած հոյակապ յաղթական կամարն։ Շրջակայ պարտէզները լի են նարնջի, լիմոնի, թզի և թթի ծառերով և այգիներով։ Ս. հաստատ Ատալիոյ գաւառը բարեբեր է և ունի շատ տեսակ ծաղիկներ. առևտրական գլխաւոր նիւթերն են արմտիք, բնջութ, փայտ, բուրդ, բամբակ և ափիոն։ Տարուան մէջ քաղաքիս նաւահանգիստը կը հանդիպին միջին հաշուով 1100 օսմ. առագաստանաւ, և 180 շոգենաւ՝ որոց մեծ մասը Անգլիական և Յունական, և մնացածը՝ Օսմանեան։ 1895 տարւոյ օգոստոսին, քաղաքս ունեցաւ մեծ հրդեհ մը, որով այրեցան մօտ 400 տուն։ Ատալիայէն քիչ հեռու կը գտնուի հիանալի ջրվէժ մը, որ 100 ոտնաչափ բարձրութենէ քա-



148. Ատալիոյ պարսպաց վրայ փանանաքանդակներ։

բաժայրից գաղաթներէ դէպ ի ծով կը թափի աճաւոր շառաչմամբ։ — Սիսուան, 302–305։

ԱՏԱՆԱ. Գղ. ADANA. — Գլխաւոր և վաճառաշահ քաղաք համանուն կուսակալութեան, ընդարձակ և բարեբեր դաշտի մը մէջ, Սարոս (Սէհուն) գետի ափանց վրայ։ Կիլիկիոյ գրեթէ կեդրոնն գտնուելով, կը համարուի անոր նոր մայրաքաղաքը. շրջապատուած է ոչ սակաւ գիւղերով և աւաններով։ Հին ատեն Ադանա անունն ծանօթ չէր, և իր հնութեան նկատմամբ ալ որոշ տեղեկութիւնք չկան։ Եթէ Յունաց աւասպելներու հաւատանք, Երկնից և Երկրի որդի Ադանան և Սարոս շիներ են քաղաքս, որոնք երկու զօրավարներ են եղեր, և որոնց անուամբ կոչուեր է թէ՛ քաղաքը և թէ գետը։ Ուրիշներ ալ կ'ըսեն, թէ Ադան՝ փիւնիկեցւոց լեզուով կը նշանակէ ուռենի, որովհետև շատ ուռենիներ կ'աճէին Սարոսի ափունքը։ Զերքերնիս հասած են քաղաքիս հին դրամներէն, յորոց է նաև հետևեալ պղնձադրամը (Թ. 149)։



149. Հին դրամ Ադանայի։

— Առաջին անգամ ի պատմութեան կը ներկայանայ անունս Քսենոփոնի Նահանջ բիւրուց գրքին մէջ. յետոյ Միհրդատեան պատերազմաց ժամանակ, հազիւ կէս դար առաջ քան զԹուականն Քրիստոսի. ուր Մեծն Պոմպէոս մաս մը ծովային հինից գերիներէն բնակեցուց, ստիպելով երկիր մշակելու. անկէ վերջը հռովմէական քաղաքաց կարգը անցաւ, թէպէտ և ոչ առաջնակարգ։ Ամրութիւններէ զուրկ ըլլալով քաղաքս՝ խաւրացւոց յարձակմանէն աւերեցաւ. բայց յետոյ նորոգուեցաւ Զ դարուն մէջ ի Յուստինիանոս կայսերէ։ Աւելորդ է կրկնել՝ թէ Կիլիկիոյ միւս քաղաքաց նման՝ Ադանա ևս գանազան անգամ Արաբացւոց և Բիւզանդացւոց պատերազմաց և հարստահարութեանց աղէտքը կրեց. բայց Բ. Թորոսի իշխանութեան ժամանակ՝ Ադանա ծաղկեալ և բազմամարդ կ'աւանդուի։ Առաջին խաչակրաց արշաւանքին ատեն՝ վերջինքս յափշտակեցին զայն Թուրքաց ձեռքէն. զոր յետոյ կրկին անգամ առաւ Յունաց ձեռքէն՝ Տանկրետ, և միացուց Անտիոքայ իշխանութեան հետ, որ իրեն բաժին էր ինկած։ Տանկրետեայ անուրի յաջորդաց ձեռքէն ազատեց ուրիշ շատ տեղերու հետ նաև զԱդանա մեր Պարոնն Լևոն. զոր երբ իր գերութեամբն կորուսուց՝ կրկին անգամ յափշտակեցին զայն իր որդին՝ Բ. Թորոս և թոռն. Բ. Ռուբէն։

Ընդհանրապէս կ'երևի, որ Մեծին Լևոնի և իւր յաջորդաց թագաւորութեան ժամանակ՝ երկրորդական քաղաք կը համարուէր Ադանա։ Եգիպտացւոց ձեռքով Կիլիկիոյ առաջին աւերմանէն յետոյ՝ Ադանա կը սկսի կամաց կամաց պատմութեան մէջ նշանակութիւն ստանալ. վասն զի հոն յամին 1310, Պապին նուիրակին առջև հաստատուեցան Կիպրոսի թագաւորին Հենրիկոս Բ- և իւր եղբօր Ամաւրեայ դաշինքը. դարձեալ հոն յամին 1316 ժողովեցաւ վերջինթեր աշխարհաժողով սինհոդոսն, յորում եկեղեցւոյ ուխտին հետ ի միասին բազմեցան նաև աշխարհիկ հայ իշխանազունք. այս դիպուածիս մէջ Ադանա կը կոչուի ճոյակապ և թագաւորական քաղաք, ինչպէս նաև ժողովատեղին՝ տաճարն Ս. Մինասայ կը գտնուէր ի թագաւորական պալատին։ Եւ յիրաւի, Սսոյ և ուրիշ քաղաքաց աւերմանէն յետոյ հոս ապաստանած կ'երևին մեր յետին թագաւորքն, յորոց՝ Դ. Լևոն անկակած կեցեր էր, երբ յամին 1335 ասպատակեց իր վրայ Ալթուն–պաշ Նայիպն Հալպայ, որոյ ձեռքէն հազիւ կրցաւ ազատիլ Լևոն՝ փախչելով ի Մոլևոն բերդն։ Այս յիշատակաւս կը լռէ նաև Ադանայի վէպքն՝ Հայկական թագաւորութեան մերձաւոր անկմանն հետ։

Բաց ի վերոյիշեալ Ս. Մինաս եկեղեցիէն՝ կը յիշուին յԱդանա նաև եկեղեցիքն Հաւքեր կամ Անճաւքեր Ս. Աստուածածին, Մօրօրուշ, Ս. Ստեփանոս։—Հայոց տէրութեան անկման ժամանակ Թուրք Րամազա-

նի ցեղը ինքնագլուխ տիրեց շինանիստ տեղեաց՝ Լևոնի գերութենէն երեք տարի վերջը (1378), և յաջորդաբար կ'իշխէր երկրի մեծ մասին։ 1467ին Շահսուար Զիւլգադրեան ամրութիւնները քանդեցին, բայց դաշնադրութեան համաձայն՝ շուտով դարձաւ Օսմանեանց ձեռքին, որք նորէն Ռամազանեան ցեղը պետ կարգեցին քաղաքիս վրայ։ Ռա-



150 · Ատանա քաղաքի տեսարանը ։

Ատանայի տիրեց, բայց քիչ վերջը Օսմանցիներէն նուաճուեցաւ, և իրենց հպատակ քաղաքներէն մին դարձաւ։ ԺԵ դարու վերջերը Եգիպտացիք Ատանայի տիրելով անոր մազանեանք ինքնագլուխ տիրապետութեան ձգտելով՝ Օսմանցիներէն բոլորովին նուաճուեցան 1575ին. թէպէտև նոցա սերունդներն վերջին ժամանակաց մէջ ևս ապստամբե-

ցան, որք այժմ եւ յայտնի են Ռամազան–Օղլու կամ Պէնի Ռամազան անուամբ։ Ադանան բացի Ռամազանեաններէն, յաճախ տակն ու վրայ եղեր է նաև ուրիշ թուրքմէն ցեղերու բռնաւոր պետերէ, յորոց յիշատուք Մալաղուշանեանց, Սարգիս, Մանուշ, Եուսուֆ, և այլք։ 1836 թուին դեռ կանգուն էր Ադանայի հին, բիւզանդական ճարտարապետութեամբ շինուած աշտարակազարդ ամրոցը, որ կ՚ենկնար արևմտեան



151 · Ադանա և Սարոս գետը։

կողմը, Սարոսի եզերքը բարձրացող կարծր ապառաժի վրայ։ Եգիպտոսի փոխարքայ Մէհէմէտ–Ալին, նոյն տարին երբ պատերազմ ծագեցաւ իւր և Մահմուտ Բի մէջ, քանդել տուաւ այս ամրոցը, որ 300 քայլ շրջա–

շենք թուշիկ անուն ունի, որ 1606ին Սիմն և Մոխոր պաշարեալ վերջ, կը յարձակի քաղաքին վրայ և կը կողոպտէ։

ԺԷ դարու երրորդ քառորդի մէջ կը յիշուին քաղաքին գլխաւոր տանուտէրները՝ Խա–

պատ ունէր։ Մինչեւ անցեալ դարու վերջերը, քաղաքիս մէջ դեռ կը տեսնուէին հին Հռովմէական մեծ ջրմուղի հետքեր, որք այժմ բոլորովին անհետացած են։ Ադանան 1844 թուէն սկսեալ բոլորովին Օսմանեան երկիր մը դարձած է, յորում կը նստի Բ. Դրան նշանակած կուսակալն։

Այժմ Ադանայի հնագոյն յիշատակարանն է Սարոսի վրայ ձգուած հոյակապ կամուրջն՝ որ 22 աչք ունի եւ երկայնութիւնն է 400 կանգուն, ի սկզբանէ մինչեւ այժմ շատ անգամներ նորոգուած է այս կամուրջը։ Յիշատակութեան արժանի է նաեւ Ուլու-ճամի, որ ժամանակաւ յունական հին եկեղեցի մի լինելով, Ռամազան-Օղլուի ձեռքով դարձեր է մզկիթ. դուռը եւ միւսարէն զարդարուած են սեւ ու սպիտակ ութանկիւնի մարմարիոն քարերով. գեղեցիկ են պատուհանաց քանդակազարդ երկաթի վանդակները (թ. 152)։ Ադանա իւր կեդրոնական դիրքովը եւ այլ հանգամանքներով՝ մեծ ապագայի յոյսեր կը խոստանայ։ Մերսինի նաւահանգստի հետ կապուած է քաղաքս երկաթուղիով, որ օձապտոյտ սրընթացութեամբ կ'անցնի Տաւրոսի Լեռնաշղթայից ստորոտէն եւ որ մեծապէս նպաստած է վաճառականութեան։ Բնակչաց թիւն է 45000 (հաշուած նաեւ պանդուխտները)։ Հայերն են մօտ 13000, բաժնուած են երեք դաւանութեանց. Մահմէտականք են 13,000. մնացած ազգերը բազմութեան կարգաւ են, Յոյնք, Պարսիկք, եւ այլն։ Պանդուխտ կամ բանւոր ըսուածներուն թիւն է 12—15000, որոնք ամէն տարի երկու երեք ամիս կը կենան աստ՝ բամբակը կլպելու եւ խատակելու համար։

Այս տեղ ամառը թէեւ շատ տաք կ'ըլլէ, սակայն օդը վտանգաւոր չէ. Սարոսի ջուրը շատ սքանչելի եւ առողջարար է, որ կը բղխէ Տաւրոսի ժեռուտ կողերէն։ Ադանա ունի նարնջի եւ ուրիշ պտղատու ծառերու ընդարձակ պարտէզներ, ողկուզաւէտ այգեստաններ որոնք թաւաթուփ անտառի մը երեւոյթ կու տան իրեն։ Քաղաքիս մէկ քանի փողոցները թէեւ լայն են, բայց չինուած լինելով պարզ աղիւսէ, եւ գիշերային անկոչ հիւրերու երկիւղէն՝ կողմնակի ի պատուհաններ չունենալով, խիստ տխուր երեւոյթ մը ունին։

Տներէն շատերը երկնայարկ են. նշանաւոր շէնքեր կրնան համարուիլ, կառավարութեան պալատն գետի աջ կողմը, բեզեսթանն, շուկան եւ այլ մի քանի քաղաքական վարչութեան վերաբերեալ պաշտօնատուններն։ Հասարակաց շէնքերէն են նաեւ քանի մը մեծ բաղնիքներ, 1 յիմարանոց, 29 խան, 2 հիւրանոց, 1 թատրոն. կնջութի ձիթահաններ, մահուցի մեծ գործարան մը՝ զինուորական զգեստեղէններու համար, թաղիքի գործարաններ եւ ներկարաններ, 7 բամբակի գործարաններ՝ 5 շոգեշարժ մեքենաներով՝ բամբակն խատկելու համար, 55 ջրաղացներ, 2 կղմինտրի եւրոպական գործարան, 10 օղի քաշելու գործարան, 1 կաշիի, 5 գարեջրոյ եւ 1 կերպասի գործարաններ։ Տեղական արհեստները մեծաւ մասամբ Հայոց ձեռքն է, ինչպէս նաեւ վաճառականութիւնն. Հայք կ'զբաղին նաեւ երկրագործութեամբ, որուն համար մասնաւոր գործիքներ բերել տուած են Եւրոպայէն։ Քաղաքիս մէջ կը շինեն զանազան արծաթեղէն զարդարանքներ, անձեռոցներ, թաշկինակներ, կարպետ, կաշի, պարկ, քուրձ, տեսակ մը հաստ կտաւ՝ ապած, խեցեղէն անօթներ, եւ այլն։ Ադանայի Լուսաւորչական Հայք՝ բաղդատմամբ միւս երկու հայ հասարակութեանց ամենէն բազմաթիւ են, եւ ունին ի հնուց մնացած երկու եկեղեցիներ՝ Ս. Աստուածածին եւ Ս. Ստեփանոս, որք ժամանակի ընթացից մէջ նորոգուած են։ Ունին երկու վարժարան Արգարեան եւ Աշխէնեան, ինչպէս նաեւ Արամեան կոչուած տարրական ուսումնարան մը։ Այս վարժարանները կը յաճախեն 1200ի մօտ երկսեռ ուսանողներ։ Ի հնուց քաղաքս ունեցեր է հայ եպիսկոպոսական աթոռ, սակայն բաւական տարի է որ այս վիճակն առաջնորդէ զուրկ մնալով, տեղապահով մը կը կառավարուի։ — Կաթողիկեայ Հայք այժմ են 170 ընտանիք, եւ ունին իրենց եկեղեցին որ հնցած լինելով, ձեռնարկած են կառուցանելու ուրիշ մը, որ նուիրուած է Անարատ Յղութեան Ս. Կուսի։ Կիլիկիոյ կաթողիկէ Հայոց եպիսկոպոսն Գեր. Պօղոս Թէրզեան կը նստի աստ, եւ ամենայն եռանդեամբ կ'աշխատի ի բարգաւաճումն իւր հօտին, հաստատելով թեմին զանազան կողմերը

դպրոցներ, որ և միջոցներ հայթհայթած է քաղաքիս մէջ արուեստից վարժարան մը և տպագրատուն մը բանալու։ — Բողոքական Հայոց թիւն աւելի նուազ է. ունին ժողովարան մը, և տղայոց և աղջկանց քանի մը վարժարաններ։—Յոյնք ևս ունին եկեղեցի մը մը և ուսումնարաններ։ Մահմէտականք ունին 18 մզկիթ և 8 Թէքքէ (վանք), և դպրոցներ։ Ունին նաև վարժարան Գաղղիացի Յիսուսեան կրօնաւորք, ուր կը յաճախեն 400 աշակերտք։

Ատանայի Հայք մեծաւ մասամբ թրքախօս են, բայց Հայերէնի զարգացումն որ



152. Երկաթի վանդակ պատուհանի Ուլու-ճամի մզկիթին։

դադրած էր 300 տարիներէ ի վեր, այժմ շնորհիւ դպրոցներու սկսեր է ընդհանրանալ։ Շատ հիւրասէր են և զուարճասէր, կրօնասիրութեան և ջերմեռանդութեան մասին ալ ոչ նուազ նախանձախնդիր են, նոյնը կրնանք ըսել նաև կրթութեան և դաստիարակութեան համար։ Քաղաքիս մերձակայ հայաբնակ գիւղերն են, Շէյխմուրատ արևելեան հարաւակողմը 40 տուն բնակչօք. Ապտօղլու գեղ ի հարաւակողմը 50 տնուոր. Կեավուրք քէօյ կամ Հայ գիւղ, Սարոսի վերին ափանց մօտ 20 էն աւելի տուներով. Փօզ—օլուք 20 տնուոր, և այլն։ Ատանայի հիւսիս—արևելեան կողմը գտնուող լեռնաշղթայից վրայ վերջերս կատարուած պեղումներով գտնուած են կապարի, պղնձի և արծաթի հանքեր։

Ատանայի կուսակալութեան տարածութիւնն կը համարուի 52,432,000 տեօնիւմ կամ 40,000 քառակուսի հազարամետր. իսկ բնակիչք 403,403 հոգի։ Վաճառականութիւնն բաւական զարգացած է այս նահանգի մէջ. արտածութեան գլխաւոր ապրանքներն են, ցորեն, գարի, վարսակ, շինութեան փայտ, բամբակ, մեղրամոմ, բամբակի հատ, ողկա-հատ, կանեփի հատ, քնջութ, խաշխաշ, գազի խէժ, բուրդ, կորեկ, ոսպ, ափիոն, չամիչ, աղած միս, ճարպ, գորգեր, մետաքսի բոժոժ, կենդանիներ, չոր մրգեր, և այլն։ Այս նիւթերն կ'արտածուին գլխաւորաբար Մերսինի և մի քանի երկրորդական նաւահանգիստներէ։ Այս ապրանքներէն ամենէն աւելի կը ներմուծուին Գաղղիա, ապա Տաճկաստան, Աւստրիա, Իտալիա, Անգլիա, Սպանիա, Եգիպտոս, Ռուսաստան, Յունաստան, և այլ զանազան երկիրներ։ Վ. Քինէի նշանակած թիւերու համեմատ 1890 թուականին Ատանայի նահանգէն արտածուած է 21,150,000 ֆրանկաց ապրանք։ իսկ նոյն տարին ներմուծուած է 8,528,000 ֆրանկաց ապրանք՝ հետևեալ աշխարհներէն. Անգլիա, Ամերիկա, Աւստրիա, Գաղղիա, Գերմանիա, Իտալիա, Յունաստան, Ռուսաստան Տաճկաստան, և այլն։ Ներմուծուած ապրանքներն են, ըմպելիքներ, սուրճ, համեմունք, անագի, կապարի, պղպատի և պղնձի բանուածքներ, պաստառներ և զգեստեղէններ, մեքենաներ, գործիքներ, պատրաստած կաշի, նաւթ, թղթեղէն, լուցկի, այծի մազ, ապակեղէնք, բրինձ, շաքար, օճառ, ծխախոտ, և այլ զանազան նիւթեր։ — Ատանա քաղաքի արևելեան կողմը՝ Սարոսի դիմացի ափունքը, կայ ընդարձակ ծառաստան ուր կը թափուին վայրի անասուններ և թիւրքմէններու հօտեր։ Անուանի է քաղաքիս և Տարսոնի մէջտեղ տարածուած Ատանայի բերրի և ծաղկազարդ դաշտի այն մասն, որ այժմ Աղա չայիր կը կոչուի, որոյ վրայ 1488ին կատարուեցաւ Օսմանեանց և Եգիպտացւոց պատերազմն, որ վերջիններուս յաղթութեամբ վերջացաւ։ Մեզ համար աւելի նշանակութիւն ունի Ատանայի և Մսիսի մէջտեղ

ինկած պաշտը, որ վկայ եղաւ Հայ իշխանաց ներքին պառակտումին Թագաւորական տոհմի հետ։ Մեծին Լեւոնի մահէն վերջ՝ 1220 թուին՝ քանի մը հայ մեծամեծներ ապստամբելով Թագաւորական ցեղի դէմ, 5000 զորքով դիմեցին մայրաքաղաքի վրայ. բայց Կոստանդին Պայլն, 300 զօրքով անոնց վրայ յարձակեցաւ և ստիպեց փախչելու մինչև Տարսոն։ — Սիսուան, 256–262։ Կիլիկիա, 95–109։ Եւ այլն։

ԱՏԱՊԱՂԻ. — Գիւղ Տօրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ, Վանայ ծովակի արեւմտեան ափանց վրայ։

ԱՏԵԱՄԱՆ կամ ԱՏԻԱՄԱՆ. — Գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Թալնայ վիճակի հիւսիսային սահմանածայրը։ Ունի 533 հայ բնակիչք, բաժնուած 50 տան։ Թէև գիւղս հին հայկական անունն ծանօթ չէ, սակայն հնութեանը վկայ է հոյակապ և անուխին գմբեթաւոր եկեղեցին, որ ոչ այնչափ ընդարձակ, բայց վայելուչ է, և շատ կը նմանի Էջմիածնի Ս. Հռիփսիմեանց վկայարանին։ Եկեղեցին ունի չորս պատուհան, և 12 գմբեթն՝ որոյ վերին ծայրը կործանուած լինելով, փայտերով ծածկած են բնակիչք։ — Այրարատ, 134։

ԱՏԵԱՄԱՆ ՎԵՐԻՆ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի, Կոթայ հիւսիսային կողմը կէս փարսախ հեռու, Իշխանագետի եզերքը բարձր դիրքով։ Բնակիչք 987, բաժնուած 77 տան. գաղթած են Ալաշկերտի Խասաուր գիւղէն. ունին եկեղեցի մը՝ Ս. Գէորգ՝ անշուք ձևով։ Տես ԿՈԹ։

ԱՏԵԱՄԱՆ կամ ՀԱՍԱՆ ՄԱՆՍՈՒՐ. — Փոքրիկ քաղաք Երրորդ Հայոց, Մալաթիոյ գաւառի մէջ։ Բնակիչք են Թուրքք, Ասորիք և Հայք՝ Լուսաւորչական, Կաթոլիկեայ և Բողոքական։ Լուսաւորչական Հայոց եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի. ունին նաև վարժարան մը Ռուբինեանց։

ԱՏԷՕ. Տես ՅԱՏԵՕ։

ԱՏԸԿԻՒՋԷԼ. — Սակաւաբնակ գիւղ Վասպուրականի, Վանայ շրջակայքը։ Ունի Ս. Աստուածածին փայտաշէն եկեղեցի մը։

ԱՏԻԼՃԷՎԱԶ. Տես ԱՐԾԿԷ։

ԱՏԻԼԼՈՒ. — Գիւղ Արցախու Գիզակ գաւառի մէջ։ Բնակիչք 425 Հայք, և 75 այլազգիք։

ԱՏԻՃԱՆՍ կամ ԱՏԻՃԱՆՑ. — Գիւղ Մոկաց աշխարհի Մոկք գաւառի մէջ, ունի մօտ 200 հայ բնակիչք, և Ս. Ստեփաննոս, Ս. Յովհաննէս քարաշէն եկեղեցիք։

ԱՏԻՇ կամ ԱԴԻՇ. — Գիւղ Չորրորդ Հայոց, Արղնոյ Մաադէնի առաջնորդութեան թեմին մէջ։ Բնակիչք 1500 Հայք, և սակաւաթիւ այլազգիք։ Հայք գրեթէ բոլորն ալ ի Կ. Պօլիս պանդխտելով կ'ապրին, և մեծաւ մասամբ հացագործ են։ Ունին եկեղեցի մը Ս. Կարապետ, և մէկ վարժարան։

ԱՏԻՇԷՆ. — Աւերակ գիւղատեղի Արցախի Գարդման գաւառի մէջ։ Փառիսոսի վանքի արեւելեան կողմը և Փառիսոս վանքի աջակողմեան բարձրութեան վրայ։ Տակաւին կանգուն է գիւղիս եկեղեցին։

ԱՏԿՈՆ կամ ՀԱՏԿՈՆՔ. — Գիւղ Տօրուբերանի այժմեան Ներքին Պուլանըխ գաւառակի մէջ, Լիզ գիւղի հարաւակողմը։ Հայք են 100 տնուոր, և ունին Ս. Աստուածածնի եկեղեցի մը և նախակրթարան։ Կան նաև քանի մը տուն այլազգիք։

ԱՏՆԱԿԱՆՑ. — Հայաբնակ գիւղ Վասպուրականի, Վանայ շրջակայքը։ Բնակիչք 30 տուն, ունին Ս. Ստեփաննոս քարուկիր եկեղեցի մը։

ԱՏՇԱ կամ ԱՏԸՇԷ. — Գիւղ Տիգրանակերտի Սլիվան գաւառի մէջ։ Ունի 40 տուն հայ բնակիչք և մէկ եկեղեցի։

ԱՏՈՎՄԵԱՆՑ ՎԱՆՔ. — Կը գտնուի Աղձնեաց այժմեան Հզու վիճակի մէջ, Կոնոնոսի վանքէն քառորդ ժամ հեռու։ Այժմ բոլորովին ամայի և աւերակ վիճակի մէջ է։

ԱՏՁԱՐ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, զոր Սոփիա տիկին Սիւնեաց՝ նուիրեց Գնդեվանքի։

ԱՏՕ. Տես ԲԱՂՔ։

ԱՏՐԵՆԻՍ. — Յիշատակագիր մը 1313 թուին, կը յիշէ այս անուամբ գաւառ մը փոքր Սիւնեաց մէջ։

ԱՏՐՄԴԵՆԱԲԱԿ. Տես ՍՈԴՔ։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ կամ ԱԶԷՐՊԷՅՃԱՆ. — Հին աշխարհ Հայաստանի արևելեան հարաւակողմը, որ իր մէջ կը պարունակէ Մեծին Հայոց Պարսկահայք և Փայտակարան նահանգներն և մասն ինչ Վասպուրականի։ Բուն Ատրպատական նահանգը կ'ինկնար Ուրմիոյ

ծովակի արևելակողմէն մինչև Կիլանայ սահմանները. հիւսիսային կողմէն կը տարածուի մինչև Գարատաղ և Մուղան գաւառները կամ մինչև Երասխ գետը, և հարաւային կողմէն մինչև Պարսից Քիւրտիստանը և Իրագ–Աճէմ, որ է հին Մարաց աշխարհը կամ Մեծ Մարք ըսուածը, որուն մէկ մասը կը համարուէր Ատրպատական և կը կոչուէր փոքր Մարք։ Որովհետև այս նահանգը մերթ ի Հայոց և մերթ ի Մարաց կը նուաճուէր, կամ թէ կէսը մէկին և կէսը միւսին կը վերաբերէր, այդ պատճառաւ կը կոչուէր Ատրպատական Հայոց և Ատրպատական Մարաց։ Ցոյնք կ'ըսեն, թէ նահանգս Ատրպատ նախարարին անուամբ կոչուեր է Ատրպատականն, Պարսից Դարեհ Գ թագաւորի ժամանակէն. սակայն աւելի հաւանական է թէ ատր բառէն եկած է, որ պարսկերէն կրակ ըսել է, և անկէց կը հետևցնեն թէ կրակապաշտութիւնը նախ հոս հնարուած է։

Ատրպատական աշխարհը Մեծն Արշակ Պարթև իւր Վաղարշակ եղբօրը տուաւ, զինքը Հայաստանի վրայ թագաւոր դնելով։ Վաղարշակէն մինչև Ա. Արտաւազդայ ժամանակ, կ'երևի թէ Հայք կ'իշխէին նաև այս ընդարձակ աշխարհի վրայ, և անկէց վերջ անցաւ Պարսից ձեռքը, և երբեմն երբեմն ինքնագլուխ եղաւ, Փայտակարան նահանգի և Պարսկահայոց մէկ մասի հետ։ Այժմ Ատրպատական Պարսկաստանի գաւառներէն մին է, և տարածութիւնն է 104840 քառակուսի հազարամետր՝ գրեթէ 2 000 000 բնակչօք։ Երկիրը տեղ տեղ խիստ բարեբեր է, մանաւանդ Դավրիժու կողմերը, ուր գրեթէ ամէն տեսակ բերք առաջ կու գայ, և ունի ճերմակ մարմարիոնի նման քարահանք, երկաթ, պղինձ, հանքային ջրեր, առատ աղահանքեր և նաւթ։ Դիրքը բարձր է գրեթէ 12–1500 մետր ծովու երեսէն. ունի շատ լեռներ՝ յորս նշանաւոր են Սահանտ և Սաւալան։ Վաճառականութեան գլխաւոր նիւթերն են, նուշ, խաղող, շալ, կաշի, չոր պտուղներ, ափիոն, և այլն։ Ատրպատականի գլխաւոր քաղաքն է Դավրէժ կամ Թավրիզ։ 1898 տարւոյ Արարատ ամսագրի պրակներու մէջ «Պարսկահայք» վերնագրի տակ հրատարակուեցան այս նահանգիս հայաբնակ քաղաքաց և գիւղերու վրայ օգտակար տեղեկութիւններ ի Պ. Ար. Ցակոբեանէ։ Մենք կարևոր կը համարինք աստ առանձին տախտակի մէջ հրատարակել Ատրպատականի հայաբնակ վայրերու վիճակագրութիւնն, յորմէ կ'երևի թէ ամբողջ այս նահանգի հայ բնակչաց թիւն 30000ը կ'անցնի։ Այս նահանգը կը կազմէ Հայոց առաջնորդական մի առանձին թեմ. այժմեան առաջնորդն է Սահակ Եպ. Այվատեան։ Հայերը ընդհանրապէս ցրուած կը բնակին, և չկայ գաւառ մը ուր իրենք կազմեն մեծամասնութիւն։ 1828 թուականի գաղթականութեամբ Հայոց թիւն շատ նուազեցաւ, և այնուհետև շատ չկարողացաւ աճիլ, որովհետև առևտրի և այլ հանգամանքներու պատճառաւ, շարունակաբար մասնական փոքր գաղթականութիւններ ալ եղած են։ Բայց երբեմն ևս Տաճկաստանի սահմանակից գաւառներէն գաղթած և հաստատուած են այս տեղ Հայք, վերջին Ռուս–Թրքական պատերազմի պատճառաւ Աղբակ գաւառէն բազմաթիւ ընտանիքներ Սալմաստ հաստատուեցան, և այժմ տեղացի կը համարուին. վերջին գժբախտ դէպքերու պատճառաւ ևս շատ ընտանիքներ գաղթեցին։ — Ատրպատականի հայ ժողովուրդը ընդունակ է և հիւրասէր. բայց լաւ յատկութիւններու հետ, միացուցեր է նաև պարսկական խորամանկութիւն, որ դարերու ընթացքին մէջ տիրապետող ոյժի ազդեցութեան տակ արմատացեր է։ Սակայն մտաւորապէս չէ ենթարկուած տիրապետող մեծ ոյժին. բուռ մը ժողովուրդ ահագին մոլեռանդ ամբոխի մէջ իւր ազգային յատկութիւնները չկորցնելէ զատ, յառաջադիմութեան յայտնի նշաններ ալ ցոյց կու տայ։ Այսօր բոլոր Պարսկաստանի մէջ, միայն հայն է, որ քաղաքակրթութեան ընդունակ է, և այդ պատճառաւ շատ անգամ Պարսից շահերու գոհունակութեանց եւ համակրանաց արժանացած է։ Մօտ 200000 բնակիչ ունեցող Դավրէժի մէջ, միայն 580 տուն Հայերն են, որ ունին ուսումնարաններ, ընթերցարան, լսարան և թատրոն։ — Վաճառականութեան մէջ ևս Հայերն են առաջին. իւրաքանչիւր հայ վաճառական ամէն տարի ահագին քանակութեամբ մրգեղէններ կ'արտածէ դէպի արտասահման։ — Կրթական

# ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ

| ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ | Տուն | Շունչ | Եկեղեցի | Քահանայ |
|---|---|---|---|---|
| **Ա· ԴԱՎՐԷԺ** | | | | |
| Դավրէժ քաղաք | 580 | 2850 | 2 | 6 |
| Մուժումբար | 116 | 696 | 1 | 1 |
| Ալչամուլք | 36 | 216 | 1 | 0 |
| Սէօհրիզ | 10 | 66 | 1 | 0 |
| **Բ· ՄԱԿՈՒ** | | | | |
| Մակուայ Բերդ | 78 | 375 | 2 | 1 |
| Քիշմիշ Թէփէ | 67 | 395 | 1 | 1 |
| Գարաքիլիսէ | 29 | 223 | 0 | 0 |
| Գարաշամ | 35 | 255 | 1 | 0 |
| **Գ· ԽՈՅ** | | | | |
| Խոյի Արուարձանք | 94 | 517 | 2 | 1 |
| Սէյդավար | 80 | 480 | 1 | 0 |
| Մահլաղան (Մալխաղան) | 30 | 195 | 1 | 0 |
| Վառ | 42 | 262 | 1 | 0 |
| Փէռա | 15 | 95 | 1 | 0 |
| Դիզէ | 8 | 50 | 1 | 0 |
| Թազէքէնտ | 7 | 45 | 0 | 0 |
| Քօթուր | 32 | 192 | 1 | 0 |
| **Դ· ՍԱԼՄԱՍՏ** | | | | |
| Հաֆթվան | 325 | 1829 | 1 | 1 |
| Փայաճուկ | 238 | 1284 | 1 | 1 |
| Մահլամ | 180 | 922 | 1 | 1 |
| Ղալասար | 70 | 507 | 1 | 1 |
| Սառնա | 74 | 430 | 1 | 1 |
| Հախվերան | 46 | 291 | 1 | 0 |
| Սավրա | 109 | 629 | 1 | 1 |
| Սարամերիկ | 81 | 586 | 1 | 1 |
| Հին Քաղաք (Զարեւանդ) | 70 | 526 | 2 | 1 |
| Ախթխանա | 46 | 337 | 1 | 0 |
| Կղլճա | 41 | 251 | 1 | 1 |
| Վառդան | 40 | 268 | 1 | 0 |
| Քեաբրիկ | 28 | 200 | 1 | 0 |
| Քեալաշան | 25 | 150 | 1 | 0 |
| Այան | 22 | 141 | 1 | 0 |
| Դերիշկ | 25 | 144 | 1 | 0 |
| Խոսրովայ | 25 | 117 | 1 | 1 |
| Ասլանիկ | 14 | 93 | 1 | 0 |
| Շէյթանաւա | 21 | 107 | 1 | 0 |
| Ճարա | 12 | 66 | 1 | 0 |
| Քէօշամիշ | 12 | 80 | 1 | 0 |
| Ուլա | 14 | 61 | 1 | 0 |
| Ջէվաճուկ | 9 | 72 | 0 | 0 |
| Ըռկաւա | 8 | 81 | 0 | 0 |
| Հմբանաւա | 9 | 62 | 1 | 0 |
| ԳՈՒՄԱՐ | 2799 | 16124 | 41 | 20 |

| ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ | Տուն | Շունչ | Եկեղեցի | Քահանայ |
|---|---|---|---|---|
| ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ | 2799 | 16124 | 41 | 20 |
| Հովասար | 7 | 49 | 1 | 0 |
| Շիտան | 5 | 25 | 0 | 0 |
| Աղխամայէլ | 2 | 13 | 0 | 0 |
| Գիւլիղան | 3 | 22 | 1 | 0 |
| Ղարաբուլախ | 12 | 84 | 1 | 0 |
| **Ե· ՈՒՐՄԻ** | | | | |
| Ուրմի քաղաք | 45 | 230 | 1 | 1 |
| Ճէմալաւա | 5 | 32 | 1 | 0 |
| Կերասպատ | 120 | 660 | 1 | 1 |
| Գարադըղ | 20 | 130 | 0 | 0 |
| Ցախկի բէկլու | 20 | 122 | 1 | 0 |
| Բաղլըէօ | 40 | 220 | 1 | 0 |
| Ջէյնալու | 6 | 33 | 0 | 0 |
| Ղզլարու | 19 | 106 | 0 | 0 |
| Խանբաբախան | 20 | 115 | 1 | 0 |
| Նախչեւնթէփէ | 75 | 488 | 1 | 1 |
| Ադա | 8 | 45 | 1 | 0 |
| Սիւփիրղան | 12 | 66 | 1 | 0 |
| Ղարաճալու | 21 | 110 | 1 | 0 |
| Գարակէօզ | 8 | 42 | 0 | 0 |
| Իքի աղաճ | 40 | 250 | 1 | 0 |
| Շիրապատ | 20 | 115 | 1 | 0 |
| Իսալու | 35 | 210 | 1 | 0 |
| Ոսհավայ | 105 | 640 | 1 | 1 |
| Դիկէլէ | 25 | 137 | 1 | 0 |
| Աղջա Գալէ | 10 | 58 | 1 | 0 |
| Թէքեալու | 12 | 72 | 0 | 0 |
| Խանիլան | 2 | 11 | 0 | 0 |
| Թասմալու | 10 | 66 | 0 | 0 |
| Սարաճուկ | 1 | 7 | 0 | 0 |
| Շմբուլապատ | 17 | 112 | 1 | 0 |
| Ջամաքի | 5 | 32 | 0 | 0 |
| Ջիչեքլու | 14 | 80 | 0 | 0 |
| Ջարբաշ | 24 | 125 | 1 | 0 |
| **Զ· ԲԱՐԱՆԴՈՒԶ** | | | | |
| Բաբառի | 50 | 325 | 1 | 0 |
| Բէլանէժ | 16 | 100 | 1 | 0 |
| Դարբարի | 25 | 145 | 0 | 0 |
| Դիզաթափայ | 35 | 192 | 1 | 0 |
| Թամաթար | 30 | 176 | 1 | 0 |
| Նորաշէն | 12 | 71 | 0 | 0 |
| Սհաթլու | 8 | 50 | 0 | 0 |
| Սարդառութ | 20 | 130 | 1 | 0 |
| Սարալան | 5 | 34 | 0 | 0 |
| Քուքէ | 5 | 28 | 0 | 0 |
| ԳՈՒՄԱՐ | 3770 | 21882 | 67 | 24 |

| ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ | Տուն | Շունչ | Եկեղեցի | Դպրոց |
|---|---|---|---|---|
| **Է· ՍՈՒԼԴՈՒԶ** | | | | |
| ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ· . | 3770 | 21882 | 67 | 24 |
| *Նաղադէյ* . . . . . | 46 | 254 | 1 | 1 |
| *Զայեանէ* . . . . . | 5 | 36 | 0 | 0 |
| *Կէօրնավայ* . . . . . | 8 | 32 | 0 | 0 |
| *Քարվան սարայ* . . . | 3 | 26 | 0 | 0 |
| *Թօփչավայ* . . . . . | 6 | 46 | 0 | 0 |
| *Բախտանէ* . . . . . | 9 | 31 | 0 | 0 |
| *Տիւշատ* . . . . . . | 6 | 37 | 0 | 0 |
| *Մէհմէդեառ* . . . . . | 30 | 166 | 1 | 0 |
| *Քիօհլ* . . . . . . | 7 | 43 | 1 | 0 |
| **Ը· ՍՕՎՈՒՃ ԲՈՒԼԱԳ** | | | | |
| *Սօվուճ բուլագ* . . . . | 12 | 56 | 1 | 0 |
| *Գարալըգ* . . . . . | 30 | 178 | 1 | 0 |
| *Լաճ* . . . . . . . | 4 | 27 | 0 | 0 |
| *Քեաբլարգախն* . . . . | 8 | 43 | 0 | 0 |
| **Թ· ՄԻԱՆԴՈՒԱԲ** | | | | |
| *Միանդուաբ* . . . . . | 16 | 78 | 1 | 0 |
| *Սէօյլթէփի* . . . . . | 3 | 16 | 0 | 0 |
| *Գարա վերան* . . . . | 6 | 39 | 0 | 0 |
| *Թաղիապատ* . . . . . | 27 | 155 | 1 | 0 |
| *Գարաջալ* . . . . . | 1 | 8 | 0 | 0 |
| **Ժ· ՄԱՐԱՂԱ** | | | | |
| *Մարաղա քաղաք* . . . | 178 | 838 | 1 | 1 |
| *Բեհրիվայ* . . . . . | 5 | 25 | 1 | 0 |
| *Խօճամիր* . . . . . . | 8 | 33 | 0 | 0 |
| **ԺԱ· ԳԱՐԱՏԱՂ** | | | | |
| *Ա· ԴԻԶՄԱՐ* | | | | |
| *Աղաղան* . . . . . . | 41 | 326 | 1 | 1 |
| *Իւրկիվդն* . . . . . | 51 | 311 | 1 | 0 |
| *Ղշլախ* . . . . . . | 29 | 174 | 1 | 0 |
| *Սարդու* . . . . . . | 44 | 261 | 1 | 1 |
| *Խանագեահ* . . . . . | 91 | 543 | 1 | 1 |
| *Ղուլիաի* . . . . . . | 31 | 191 | 1 | 0 |
| *Նորաշէն* . . . . . | 41 | 242 | 1 | 0 |
| *Օղա* . . . . . . . | 30 | 222 | 1 | 0 |
| *Բ· ՄԷՇԱՓԱՐԱ* | | | | |
| *Մղկիթ* . . . . . . | 23 | 135 | 1 | 0 |
| *Ողան* . . . . . . . | 49 | 311 | 1 | 0 |
| *Քլալայ* . . . . . . | 24 | 132 | 1 | 0 |
| *Կերամեու* . . . . . | 21 | 163 | 1 | 0 |
| *Նեփեշա* . . . . . . | 24 | 139 | 1 | 0 |
| *Միքիաի* . . . . . . | 12 | 66 | 1 | 0 |
| ԳՈՒՄԱՐ . . . . | 4698 | 27285 | 90 | 29 |

| ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ | Տուն | Շունչ | Եկեղեցի | Դպրոց |
|---|---|---|---|---|
| *Գ· ՄՆՃՎԱՆ* | | | | |
| ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԳՈՒՄԱՐ· . | 4698 | 27285 | 90 | 29 |
| *Սեահող* . . . . . . | 15 | 93 | 1 | 0 |
| *Քարադլուխ* . . . . . | 23 | 176 | 1 | 1 |
| *Ամրադուլ* . . . . . | 30 | 179 | 1 | 0 |
| *Վինա* . . . . . . . | 24 | 134 | 1 | 0 |
| *Դ· ՔԷՑՎԱՆ* | | | | |
| *Սրդըն* . . . . . . | 118 | 673 | 1 | 0 |
| *Ասրան* . . . . . . | 29 | 180 | 1 | 0 |
| *Ահմատն* . . . . . . | 10 | 85 | 1 | 0 |
| *Նորաշէն* . . . . . | 16 | 104 | 1 | 0 |
| *Աշրաֆ* . . . . . . | 12 | 81 | 1 | 0 |
| *Դուկէյդարա* . . . . | 33 | 180 | 1 | 0 |
| *Ղասումաշէն* . . . . | 40 | 306 | 1 | 0 |
| *Բերդին* . . . . . . | 40 | 212 | 1 | 0 |
| *Սիւրիւն* . . . . . . | 33 | 209 | 1 | 0 |
| ԳՈՒՄԱՐ . . . . . | 5119 | 29897 | 103 | 30 |

# Հ Ա Մ Ա Գ Ո Ւ Մ Ա Ր

## *ԱՇԽԱՐՀԱԳՐԻ*

## Ա Տ Ր Պ Ա Տ Ա Կ Ա Ն Ի  Հ Ա Յ Ո Ց

| ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ | Գիւղ. թիւ | Տուն | Շունչ | Եկեղեցի | Դպրոց |
|---|---|---|---|---|---|
| *Դավրէժ կամ Թաւրիզ* . | 4 | 742 | 3828 | 5 | 7 |
| *Մակու* . . . . . | 4 | 209 | 1226 | 4 | 2 |
| *Խոյ* . . . . . . | 8 | 308 | 1856 | 8 | 1 |
| *Սալմաստ* . . . . | 30 | 1569 | 9427 | 27 | 10 |
| *Ուրմի* . . . . . | 28 | 739 | 4514 | 17 | 4 |
| *Բարանդուզ* . . . . | 11 | 203 | 1251 | 5 | 0 |
| *Սուլդուզ* . . . . | 9 | 120 | 691 | 2 | 1 |
| *Սօվուճ բուլաղ* . . . | 4 | 54 | 304 | 2 | 0 |
| *Միանդուաբ* . . . . | 5 | 33 | 296 | 2 | 0 |
| *Մարաղա* . . . . . | 3 | 190 | 896 | 2 | 1 |
| *Գարատաղ* { *Դիզմար* . . . | 8 | 358 | 2270 | 8 | 3 |
| *Գարատաղ* { *Մէշափարա* . . | 6 | 153 | 946 | 6 | 0 |
| *Գարատաղ* { *Մնճվան* . . . | 4 | 90 | 582 | 4 | 0 |
| *Գարատաղ* { *Քէյվան* . . . | 9 | 331 | 2030 | 9 | 0 |
| *Արտաւիլ* . . . . . | 1 | 31 | 220 | 1 | 1 |
| *Ջանադանք* . . . . | — | 30 | 273 | 0 | 0 |
| ԳՈՒՄԱՐ . . . . | 134 | 5200 | 30392 | 304 | 30 |

*գործին մէջ դեռ աւելի յառաջադիմելու պէտքին մէջ կը գտնուի Ատրպատական. մեր վիճակագրի մէջ որոշ կը տեսնուի որ կան շատ գիւղեր զուրկ ուսումնարանէ։ Նոյնպէս շատ գիւղեր չունին քահանայ. եղած քահանաներն ալ, քիչ բացառութեամբ, տգէտ են։ Ատրպատական ունի չորս վանքեր, յորոց Դէրիքի Ս. Աստուածածինը աւերակ դարձեր է (1894ին). Գարատաղի Ս. Գէորգը միաբան չունի, Արտազի Ս. Թադէոս Առաքեալ և Դարաշամի Ս. Ստեփաննոս անխնամ վիճակի մէջ են։— Արաքս, 1898. Ա. 143—152։*

ԱՏՐՊԱՏՈՒՆԻՔ *կամ* ՏՐՊԱՏՈՒՆԻՔ. — *Վասպուրականի հին գաւառներէն մին. կար նաև նոյն անուամբ մեծ նախարարութիւն մը Արշակ Թագաւորի և Մեծին Ներսէսի ժամանակ։*

ԱՐԱԲԿԵՐ *կամ* ԱՐԱԲԿԻՐ. *Գղ.* ARABKIR. — *Գլխաւոր քաղաք համանուն գաւառի, Երկրորդ Հայոց մէջ. մահկաձև տարածուած է գեղեցիկ և բարձր դիրքով Անտիտաւրոսի ստորոտը, Եփրատայ արևմտակողմը՝ անոր վտակին մօտ։ Մալաթիայէն հեռու է 55 հազարամետր և Խարբերդէն 75, իսկ Եփրատ գետէն 25 հզմ։ Բնակիչք կը հաշուին 20000 հետևեալ կերպով բաժնուած.*

| | |
|---|---|
| *Մահմէտականք* . . . . | 10,000 |
| *Լուսաւորչական Հայք* . . | 9,565 |
| *Կաթողիկեայ Հայք* . . . | 500 |
| *Բողոքական Հայք*. . . . | 535 |
| *Գումարն*. . . . | 20,000 |

*Քաղաքիս անուան համար Պ. Մարկոս Նաթանեան կ'ըսէ. «Տեղացւոց ոմանք Արբ և կեր կ'ստուգաբանէին, բայց Սարդանապաղի մը գործ լինել չէին կարող հաստատել։ Ոմանք Արաբակերտ բառի աղաւաղում կը համարէին Արաբկեր անունը, բայց ճիշդ արաբական ձեռակերտ լինելուն հաստատ ապացոյց չկայ, թէպէտ և հին աշխարհագրութիւնը չնշանակեր այս քաղաքը և միջին դարու գործ լինելուն հաւանականութիւնն աւելի զօրաւոր ըլլայ։» Ձևով շատ կը նմանի Բաղէշի, անոր պէս շինուած լինելով երեք ձորերու մէջ, բլրաձև զարևանդներու կողերու վրայ։ Տուները կառուցուած են ամփիթէատրոնի ձևով, սանդղանման կարգ կարգ բարձրանալով։ Քարակերտ են և յատակները մեծաւ մասամբ ծածկուած՝ կամ սրբատաշ ընտիր քարերով և կամ տախտակով։ Արաբկեր յատուկ աւազանման սև հող մը ունի, որ իբր խիս մածանուելով՝ միապաղաղ և միակտուր քարի պէս կը պատապարէ տանց տանիքները, որով կաթուածներէ և անձրևահոսութենէ ազատ կը մնան տուները։ Ներքին կահ կարասիքն ևս աւելի բարեվայելուչ և յարդարուն են քան Հայաստանի ներքին քաղաքաց, և այդ ամենը արդիւնք են պանդխտութեան՝ որ իւր բազմադիմի վնասներուն հանդերձ, քաղաքակրթութեան ճաշակն զարգացնելու յատկութիւն ևս ունի։ Շուկայ, խանութ, տուն գործարան, պարտէզ, այգի, առուակներ, ծառ ու ծաղիկ, շէնքերու սև ու ճերմակ ծեփմունք, սոքա ամէնքը միախառնուելով, հրաշալի և նկարչական երևոյթ մը կ'ընծայեն Արաբկերի։*

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՐԱԲԿԵՐԻ

ՀԱՅ ԳԻՒՂՈՐԷԻՑ

| ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | |
|---|---|---|
| | *Ար.* | *Իգ.* |
| *Ամբըրկայ կամ Ամբրկայ* . . | 442 | 267 |
| *Շեփիկ* . . . . . | 286 | 236 |
| *Անջրդի* . . . . . | 308 | 302 |
| *Ծագ* . . . . . | 275 | 212 |
| *Մաշկերտ*. . . . . | 283 | 249 |
| *Աղըն* . . . . . | 119 | 105 |
| *Սաղմըկայ* . . . . | 111 | 86 |
| *Վաղշէն* . . . . . | 114 | 110 |
| *Քուշնա* . . . . . | 130 | 140 |
| *Ծապլվար* . . . . | 12 | 10 |
| *Խոռոչ* . . . . . | 38 | 40 |
| *Վանք* . . . . . | 51 | 33 |
| *Ինհնէցիք* . . . . . | 61 | 64 |
| *Կռանի* . . . . . | 42 | 29 |
| *Հացկնի կամ Հասկնի* . . | 39 | 41 |
| ԳՈՒՄԱՐՆ . . . | 2351 | 1924 |

*Լուսաւորչական Հայք ունին չորս եկեղեցիներ։ Մայր եկեղեցին, որ Ս. Աստուածածին կը կոչուի, հոյակապ է, ընդարձակ և քարուկիր. միւս եկեղեցիներն կը կոչուին.*

Ս. Յակոբ, Ս. Գէորգ և Ս. Լուսաւորիչ. առանք աւելի փոքր են։ Ունին առաջնորդարան, և 13ի չափ դպրոցներ, յորոց մին կը կոչուի Ս. Թարգմանչաց անուամբ, մէկն ալ է օրիորդաց վարժարան Զարուհեան անուամբ. միւսներն ծաղկոցներ կամ միջին կարգի վարժարաններ են։ Մայր վարժարան բուածը ծաղկոց մ'է, ուր կ'ուսանին 200 աշակերտք ձրի, Սաղաթելեան Կարապետ աղայի կտակած 50000 դահեկանի տոկոսով։ Բոլոր վարժարանաց աշակերտաց թիւն 1000ը կ'անցնի։ Կաթողիկեայ Հայք ունին եկեղեցի մը Ս. Փրկիչ և մէկ վարժարան։ Իսկ Բողոքական Հայք՝ ժողովարան մը և 2 վարժարան։ Այս երեք դաւանանքի վերաբերող հայ հաստատութիւնք իրարու հետ խիստ լաւ և սիրով են։

Քաղաքիս մէջ առաջին արուեստն համարուած է մանիսա գործել, որ երբեմն մեծ շահու դուռ էր Արաբկիրցւոց. բայց երբ եւրոպական լաթեղէնք սկսան մեծ քանակութեամբ ներմուծուիլ Թուրքիոյ քաղաքներն, այս արդիւնաշատ արուեստն սկսաւ ինկնալ, որով աւելի պարտաւորեցան Հայք պանդխտութեան դիմելու։ Այժմ քաղաքի մէջ կան 15 գործարան մանուսայի, 9 վաճառական մանած բամբակի և 18 պաստառաց։ Արաբկիրի մէջ կան նաև 2 դրամավաճառ, 2 դեղավաճառ, 2 ժամացուցագործ, 5 վաճառական Հալէպի աճառի, 3 ոսկերիչ, 5 պղնձագործ, 5 արճարան, 2 գինետուն, և այլն։ Ընդհանրապէս արուեստներն Հայոց ձեռքն է. կան հայ ճարտարապետներ, որք գիւտութեամբ կը շինեն եւրոպական զէնքեր, մեքենաներ և նուրբ գործիքներ։ Վերջին տարւոյ դէպքերու ժամանակ, քաղաքս ևս շատ վնաս կրեց, 600էն աւելի անձինք զոհ գացին, բազմաթիւ տուներ կողոպտուեցան, եկեղեցիներէն երեքը այրեցան, և այլն։

Արաբկիրի բազմաթիւ գիւղերէն միայն 15ը հայաբնակ են, որոց անուանք և բնակչաց թիւն կը տեսնուին առանձին տախտակի մէջ։ Այս գիւղերն ունին մէկ մէկ եկեղեցի և վարժարան, եկեղեցիներէն շատերը կը կոչուին Ս. Աստուածածին, և մէկ քանին Ս. Նշան։ Քաղաքիս մօտ կայ ուրիշ հին քաղաք մը, զոր Հայք Անգի-քաղաք կ'անուանեն և Թուրքք՝ Էսկի շէհիր, ուր տակաւին կը բնակին այլազգիք, և կան մինարէով մզկիթներ. Հազիւ 100 տարի կայ որ Հայք բոլորովին թողած են զայն և գաղթած նոր քաղաքը։



153. Արագածու կատարք, Բարդող լեռնէն դիտելով։

Հին Արաբկիրն կը կարծուի որ շինուած է Արծրունի Սենեքերիմայ գաղթականութեան միջոցին։ — Թորոս Աղբար, Ա. 270–297։ Մասիս, 1885, էջ 655–656։ Եւ այլն։

ԱՐԱԳ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն

գաւառի, Մշոյ դաշտի մէջ, բնակիչք Հայք և Քուրդք խառն։ Հայք ողորմելի վիճակի մէջ կը գտնուին, միշտ հարստահարութեանց ենթակայ լինելով։

լեռներէն գրեթէ բոլորովին զատուած է, և ինքնուրոյն լերանց խումբ մը կը ձևացնէ։ Ըստ Խորենացւոյն՝ Արագած կոչուած է լեռս Հայկայ Արմենակ որդւոյն անուամբ։ Ծո-



154 · Արագած լեռը Ալեքսանդրապոլէն տեսնուած ։

ԱՐԱԳԱԾ. Գզ. ARAKADZ. — Նշանաւոր և բարձր լեռ Այրարատայ Արագածոտն գաւառի, հիւսիսային արևմտեան մասին մէջ։ Այլազգիք Ալակեզ անունը կուտան լերանս։ Մասիսի նման Արագած ևս մեր աշխարհի միւս վու երեսէն բարձր է 4100մետր կամ 12,874 ոտնաչափ, այս պատճառաւ գագաթան ճեղքուածներու մէջ մշտնջենաւոր սառնամանիք կը գտնուին։ Թէպէտև այսչափ բարձր է, և գրեթէ 10000' Էջմիածնի գիւղէն վեր

է, բայց ուրիշ լերանց պէս չի ազդէր մարդուս վրայ վսեմ բարձրութեամբ մը, սոր պատճառն է իր մեծատարած լայնութիւնը. շրջապատին երկայնութիւնն ըստ Ռուսաց կայսերական գրապետին ժիլի է 150 վերստ։ Արագած գլխաւոր չորս կոնաձև կատարներ ունի, և իր բազմաթիւ հովիտներով և գագաթներով Մասիսէն շատ կը տարբերի։ Չորս կատարներու վրայ ևս կան գեղեցիկ լեռնադաշտեր։ Հնագարեան հրաբխային ապառաժներն ևս Մասիսէն աւելի փխրած և



155. Արագած լերան քօշ։

հող դարձած են, և գետինն ալ աւելի բուսաւէտ և արգաւանդ է։ Այս երևոյթին պատճառը, կ'ըսէ Վակներ, ոչ Արագածի ժայռերուն տեսակէն և ոչ ալ անոնց հնութենէն է, այլ ազբիւրներու առատութենէն ու գագաթներու և լեռնահովիտներու շատութենէն, որոնց վրայ հալած ձիւներու և անձրևներու ջուրը կը ժողվի, և լուծիչ օդին հետ միանալով երկրի վրայ աւելի կ'ազդէ։ Հին ժամանակներն մեր նախնեաց ծանօթ էր լերանս հրաբխային զօրութիւնն, որոյ համար միջին դարուց աշխարհագիրն (Վարդան) կ'ըսէ. «Մեծաքանչ լեառն Արագածոյ, որ ստորոտէն մինչև գկատար լերինն աւուրսեկէս ճանապարհ է, ի չորս բաժանի լերինք մեծամեծք, և մէջ նոցա գոգ հովտաձև հարթյատակ, և չորեքին ծայրք լերանցն՝ հանդէպ միմեանց խաչանման.» կը յաւելու նաև հետևեալ ռամկական աւանդութիւնն. «Ասեն թէ օրհնեալ և օծեալ նշան տէրունական՝ շնորհաբաշխ աջովն սուրբ Լուսաւորչի լերինքն այն, ի փառս խաչելոյն Քրիստոսի. և է ի մէջ հովտին քարածերպ այր մեծ. ի նմին այրի շինեալ տաճար փոքրիկ խորան, և կախեալ կանթեղս առանց շուանի, և փոխանակ ջրոյ՝ արտասուօք լցեալ, և հրով երկնային վառեալ. և մնայ մինչև ի գալուստն Քրիստոսի ի դատաստան. որ բազմաց յարժանաւորացն տեսեալք են և տեսանեն զհրաշն զայն ի փառս Քրիստոսի»։ Լերանս հրաբուղխ կանթեղներն ի վաղուց շիջած են, բայց թերևս դեռ կը ծխային մեր պատմական ժամանակաց սկիզբները, և հեթանոսական առասպելաց աւանդութեամբ հանելով առ քրիստոնեայ սերունդս՝ փոխուեցան Ս. Լուսաւորչի հրաշագործութեանց, որուն արտասուաց փոխան՝ այժմ կ'երևին լերանս գագաթը և սարատափներու վրայ տասնէ աւելի լճեր։ Այս լճերէն ոմանց տրամագիծն կէս մղոնաչափէն աւելի է, և յայտնի կ'երևի որ հրաբուղխներու խառնարաններ եղած են ժամանակաւ, և այժմ հալած ձեանց ջրով լեցուելով՝ շտեմարաններ դարձած են բազմաթիւ տաւարակաց և ագբերաց, որոնք ձորերն անցնելով գետեր կը ձևացնեն։ Լճակներէն մեծագոյնն և բարձրագոյնը, արևելեան կողմը կը գտնուի, և կը կոչուի Գառա կէօլ (Սև լիճ). արևմտակողմը կան երկու լճակներ, որոց մեծագոյնը՝ Գըզըլ կէօլ (Կարմիր լիճ). միւսներն որ կ'ինկնան արևմըտեան հարաւակողմն և մէջտեղերը՝ անուններ նշանակուած չկան աշխարհացոյց տախտակաց վրայ։ Արագած իր առատ ջրերու համար ոչ միայն ձորեր և ծործորներ ունի, այլ և տեղ տեղ քարավէժ սահանքներ։ Գագաթանց հիւսիսային արևմտակողմը՝ կայ հրաբղխի մը շրջաբոլոր խառնարանն՝ գրեթէ 40' տրամագծով, յորմէ հոսած թխագոյն

լաւան կը տեսնուի լերանս ստորոտը։ Հոս երկրաբանական նշանաւոր դէպքերէն մին դիտեց Թարթռոն, այսինքն հրաբղխային արտատոյ ապառաժին մէջ անթաւ որձաքարեր տեսաւ, որ կանխաւ գոյացած լինելով՝ կ'երևի թէ արտատոյ ապառաժը հրաբղխային զօրութեամբ վեր նետուելու ատեն՝ որձաքարերն ալ պատռած, փրցուցած ու մէկտեղ վեր բերած է։ Լերանս հարթ կողերու և սարաւափներու հողն սև է և պարարտ։ Մայիսի կէսէն սկսեալ մինչև սեպտեմբերի վերջերը խիստ գեղեցիկ և զմայլեցուցիչ երևոյթ ունի լեռս, ջրերովը, յստակ և առողջարար օդովը, բազմատեսակ երանգ երանգ և քաղցրաբոյր ծաղիկներովը։ Ծաղկանց մէջ գեղնագոյն խիստ շատ են, կան նաև կապտագոյն վայրի շուշանք կամ հիրիկք, կակաչք, բոկք, զանգակ—ծաղիկ և ուրիշ շատ տեսակներ։ 1888ին Պր. Աղեքսանդր Գալանթարեան, Արագածու բոյսերէն շատ տեսակներ անձամբ քաղելով զատուորել տուաւ Տփղիսու բուսաբանից, որք տասնևվեց ազգաց բաժնեցին, որոց անուանք հրատարակեց Հ. Ալիշան՝ Այրարատի 549—550 էջից մէջ։ Վակներ գերմանացին զմայլած կը նկարագրէ լեռս, որուն վրայ ելաւ 1843ին, և շատ տեսակ ծաղկանց հետ հաւաքեց նաև միջատաց և ճճիներու տեսակներ, և ամենէն աւելի նշանաւոր և միայն Հայաստանի կողմանց սեփական՝ Ոսկեղն (Callisthes) կոչուածն, խիստ փայլուն կապտագոյն և նորօրինակ ձևով, որ լերանց բարձունքը և ձեանց սահմանները կը գտնուի։ Արագածի ծաղկանց կ'այցելեն նաև օգտակար միջատներն՝ մեղուներու երամք, և կուտան պատուական մեղր, մանաւանդ կարբիի սահմանները։ Ամրան ամիսներու մէջ խիստ սքանչելի է Արագած, իսկ ձմեռն խիստ երկայն լինելով շատ անգամ չեն հասունանար պիտանի բոյսեր, երբեմն և ոչ իսկ գարին կը հասնի։ Հայաստանի լեռներէն առաջինն կրնայ համարուիլ Արագած իր օգտակարութեամբն. շատ անգամ Արարատեան սրբազան լեռնէն վեաններ հասած են մեզ, բայց այս լերան բարիքները ի հնուց մինչև ցարդ ծանօթ են ամէն հայու։ Մեր նախնեաց հարստութեան ժամանակ, Պարսից տիրապետութեան օրով, և նոյն իսկ մեր օ-



բերը, լերանս սարատափներն զուարճալի զբօսավայրեր և ամարանոցներ եղած են։ Անգէորականք և խաշնարածք միատեղ՝ Հայք, Պարսիկք և Քուրդք խուռն բազմութեամբ բաժին բաժին կը բնեն Արագածայ ծործորք, խորաձորք և աղբիւրաշատ սիզաւէտ հովիտներն, և տարուան չորս եղանակաց համեմատ տեղափոխութիւն կ'ընեն։ Լերանս վրայ կը գտնուին նաև վայրի այծեմունք և վիթք, գեղեցիկ, ոլորկ սուր և երկայն եղջիւրներով, մինչև 0,70 մետր երկայնութեամբ։ Արագածու ճիւղերն կամ ստերը առանձին թրքաձայն անուններով ծանօթ են. արևմըտեան հիւսիսային կողմը՝ Գզըլկար, արևելեան հիւսիսային կողմը՝ Ջանկիլ, արևմտակողմը՝ Գզըլ պուռուճ, Գզըլ գիյարկը, հարաւակողմը՝ Տիքմէ թաշ, Ամբերդ, և այլն։ — Այրարատ, 129—131։ Մ. Վակներ, Ճեպրհ. Բ. 115—118։ Եւ այլն։

ԱՐԱԳԱԾՈՏՆ. — Այրարատայ գաւառներէն մին, և մեր աշխարհի շատ գաւառներէն աւելի հռչակագոյնը, թէ բնական գիրքովը և թէ քաղաքական տեսութեամբ։ Սահմանքն են Ար.էն Կոտայք և Ոստան, Հր.էն Մասեացոտն և Ճակատք, Ամ.էն Արշարունիք և Շիրակ, իսկ Հս.էն Նիգ։ Այսպէս կոչուած է վերը նկարագրուած Արագած լերան անուամբ, որ կ'ինկնայ գաւառիս հիւսիսային կողմերն և իր ստորոտը կամ ոտքը կը տարածէ աւելի դէպ ի հարաւ։ Արագած իր բազմաթիւ բարեմասնութիւններով, յորդառատ ջրերով, զուարճացեղ բուսաբերութեամբը և յստակ օդովը կեանք և կենդանութիւն կու տայ իր ոտքը տարածուած գաւառիս։ Արագածոտն հռչակաւոր կրնայ ըսուիլ նաև քաղաքական տեսակէտով, ըստ որում իր մէջ կը բովանդակէ մեր աշխարհի հնագոյն մայրաքաղաքներն. դարձեալ հռչակաւոր է, որովհետև իր մէջ կը գտնուի Հայոց ազգի պատմական և նուիրական Էջմիածինը։ Գաւառիս մէջ ըստ աւանդական պատմութեան անդրանիկն Հայկայ Արմենակ նախ այս կողմերն սկսեր է շէնցնել, որուն կալուածները տարածուած էին այս կողմերը և կը կոչուէին Ոտն Արագածու։ Յայտնի չէ Արմենակայ բնակութեան կեդրոնը կամ բնիկ դաստակերտը, բայց կը թուի թէ աւելի դաշտակողմը լինէր,

Քասաղ գետոյն արեւելեան կողմերը, վասն զի շինութեան աւելի յարմար էին, քան անհարթ լեռնավայրերը. և որովհետև Աղթամարայ վիճակին Դաւիթ կաթողիկոսը կամ եպիսկոպոսը, Ժ դարու (923) սկիզբները, կ'ըսուի թէ էր Արագած գիւղէն և ազգակից Մաշտոցի կաթողիկոսի՝ և սոր հայրենիքն լինելով Եղիվարդ գիւղն, հաւանական է կարծելն թէ նոյն Եղիվարդ գիւղն է և կամ անոր մօտերն կը գտնուէր Արագած շէնը: Արագածոտն ի հնումն արքունի սեփհականութիւն եղած կը թուի. ոչ միայն նշանաւոր էր իր բնական ամրութիւններովն, այլ և ձեռակերտ բերդերովն, դաստակերտներով և ձմերոցներով: Գաւառիս անուամբ իշխաններ կամ նախարարներ չեն յիշուիր. միայն Տրդատայ Գահնամակի մէջ՝ ըստ Մեսրովպայ Երիցու կը յիշուին նաև Արագածեանք: Հայկազեանց հարստութենէն շատ ժամանակ վերջը Արտաշէս Բ ժամանակները, գաւառիս գէթ մէկ մասը (արեւելակողմը) արուեցաւ օտար տոհմի, Ամատունեաց, որոց վրայ կը խօսինք Օշականի տեղագրութեան մէջ, ինչպէս նաև անոնց եպիսկոպոսներու վրայ: Գաւառիս նշանաւոր վանքերն են Յովհաննավանք, Սաղմոսավանք, Ծաղկավանք, Ուշոյ վանք (Ս. Սարգիս), Լազրեվանք, Մուղնոյ Ս. Գէորգ, Եղիվարդայ վանք, և այլն: Այս վանքերուն վրայ իրենց կարգին կը խօսինք. սա միայն ըսենք, որ ասոնցմէ հաշակաւորներու սկզբնաւորութիւնն եղած են Արշակունեաց ժամանակ: Յայտնի է թէ այս վանքերու կառուցման համար ձեռնտու եղած են երկրի մէջ բնակող բազմաթիւ ազնուականներ և նոյն իսկ Հայոց արքունիքն: Անտարակոյս միաբանակեցաց վանքերէն զատ, կային նաև ճգնաւորաց միայնարաններ և անապատներ, Արագածու անքոյթ խորշերու և ծերպերու մէջ: ԺԷ դարու վերջերը Արագածու վրայ՝ քարերու խոռոչներու մէջ, որսորդ մը գտաւ ճգնաւոր մը մեռած, և անապական մնացած, վրան փիլոն և գլուխը վեղար դրած. զոր յետոյ Սաղմոսավանից եպիսկոպոսն և առաջնորդն Սարգիս՝ թաղեց, և անկէց ազդուեցաւ միանձնական կենաց կարգը հաստատելու և վերանորոգելու, զոր մանրամասն կը պատմէ Առաքէլ Պատմիչ (Գլ. ԻԱ):

Գաւառիս անուամբ մինչև ցարդ կայ տոհմ մը Արագածունի, որոնց ցեղէն կը յիշուի ոմն Մէլիք Սեղբում 1685ին, և այդ թուէն հետ չի յիշուիր այլ ոք. այս տոհմի սերունդք պահած ունին թագաւորաց վկայական կոնդակներ և հրովարտակներ: — Ի հնումն Արագածոտն մասնաւոր վիճակաց բաժնուած չի յիշուիր. իսկ միջին և վերջին դարուց մէջ աւելի սակս կը հանդիպինք փոփոխութեան: Մեզ ծանօթ գաւառիս գլխաւոր ստորաբաժանումներն կամ վիճակներն են, Ա. Թալին, Բ. Թալիշ, Գ. Սարտարապատ, Դ. Կարբի կամ Կարբի պազար, Ե. Անբերդ կամ Բիւրական, Զ. Վաղարշապատ: Պարսից իշխանութեան ժամանակ, գաւառս Երևանայ մեծ կուսակալութեան մասն լինելով, գլխաւոր քաղաքաւանին անուամբ կը կոչուէր Սարտարապատ: Իսկ այժմ Ռուսաց պետութեան նոր բաժանման համեմատ՝ Երևանայ նահանգի հինգ գաւառներէն մին է Արագածոտն՝ որուն կը համապատասխանէ Էջմիածնի կամ Վաղարշապատու գաւառն: — Այրարատ, 129—133:

ԱՐԱԳԵՂՏ. — Այս անուամբ ձոր մը կը յիշէ Ղևոնդ Պատմիչ, որ կը թուի թէ կ'ինկնար Այրարատայ Կոգովիտ գաւառի մէջ:

ԱՐԱԳԻԼ. Տես ԱՐԵԳԻՆ:

ԱՐԱԳԼԻ. — Այս անուամբ լեռ և գետակ մը կայ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ:

ԱՐԱԳԼԻԲՈՅՆ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւելեան հարաւային կողմը:

ԱՐԱԳՈՎԱ. Տես ԱՐԱԿՈՎԱ:

ԱՐԱՁ. Տես ԵՐԱՍԽ:

ԱՐԱՁԻՆ. — Գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ. 39 տուն հայ և 43 տուն թաթար բնակչօք: Հայք գաղթած են Պարսից բաժնէն, և ունին անշուք եկեղեցի մը:

ԱՐԱՁ ՕՂԼՈՒ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ (Շօրէկէլ) գաւառի մէջ: Բնակիչք 300, բաժնուած 40 տան:

ԱՐԱԹ կամ ՀԱՐԱԹ. — Գիւղ Մոկաց Մամրտանք գաւառակի մէջ, 20 տուն բնակչօք. ունի Ս. Պետրոս—Պօղոս եկեղեցի մը:

ԱՐԱԼԸԳ կամ ԱՐԱԼԸԽ. — Թաթարաբնակ գիւղ Այրարատայ Մասեացոտն գաւառի հիւսիս—արեւելեան սահմանածայրը. ունի

պտղատու պարտէզներ և այգիներ։ Այս անուամբ ուրիշ քանի մը գիւղեր ևս կան Այրարատայ գաւառաց մէջ, բոլորն ալ այլադաւանակ։

ԱՐԱԼԸԽ կամ ԱՐԱԼՕԽ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի, Ախուրեան և Գարախանէ գետոց միացմանէն ձևացած թերակղզւոյն վրայ։ Ունի 40 տուն բնակիչ՝ զանազան ազգերէ։ Յիշատակաց արժանի է մէջը գտնուած քառակուսի ձևով հին ամրոցն, որոյ որմունքն մնացած են։ Խանգարուած արձանագրութեան մէջ որոշ կը կարդացուի Հազարբէկ անունն, և թուական մը ԺԱ կամ ԺԳ դարու վերաբերեալ։ Դրան մօտ կայ մեծ քար մը, որուն վրայ արձանագրուած է միայն ՈՀԷ (= 1228) թուականը։

ԱՐԱԽՕՅԶ կամ ԱՐԱԽՕԽՍ. Տես ԱՐԱՄՕԽՍ։

ԱՐԱԾ. — Փոքր գաւառակ Այրարատայ, կ՚ինկնայ Ուրծ գաւառի հարաւակողմը և կը համարուի անոր վիճակն։ Նախնիք գաւառակիս տուած են նաև Արածոյ կողմն կամ Արածակողմն անունը։ Արածոյ անուամբ ոչ իշխաններ կը յիշուին և ոչ տոհմ մը. միայն ազգային զօրաբաժնի ցուցակին մէջ կը կարդանք Արածացի տոհմի մը անուն, որ թերևս սխալ գրուած ըլլայ փոխանակ Արածացի, վասն զի Արած անունն ամենևին ուրիշ տեղ չի յիշուիր։ Ի նախնեաց կը յիշուի Արած անուամբ գիւղ մը կամ աւան մը, որուն տեղն այժմ մեզ անյայտ է։ Այս գիւղն հայրենիք էր Ղևոնդեանց ընկերաց սուրբ նահատակացն Սամուէլի երիցու և Աբրահամու սարկաւագի, որք քաջութեամբ աւերեցին Արտաշատայ ատրուշանը, Յազկերտի հալածանաց ժամանակ, և իրենց ընկերներէն առաջ արժանացան մարտիրոսական սուրբ պսակին։ — Արածոյ գլխաւորներէն կը յիշուի Ջ դարու վերջերը ոմն Սահակ որդի Համազասպայ։ Վերջին անգամ գաւառակիս անունն կը յիշուի 832 թուին, յորում Դաւիթ Բ կաթողիկոսը մեռնելու առեն՝ կաթողիկոսարանին կալուածները յափշտակողաց հետ, անիծեց նաև Ապուջափր անունով Արածացին։ Տես ՍԻՐԾ։ — Այրարատ, 445։

ԱՐԱԾԱԿՈՂՄՆ. Տես ԱՐԱԾ։

ԱՐԱԾԱՆԻ. — Եփրատայ արևելեան զօրաւոր ճիւղն է, որ այժմ ծանօթ է Մուրատ չայ անուամբ։ Կը բղխի Այրարատայ Ծաղկոտն գաւառի Ծաղկանց լեռներէն. ունի բազմաթիւ ճիւղեր. երկու գլխաւոր ճիւղերն Ս. Ոսկեանց սրբավայրէն խոնարհ, Ջէյնալի ձորին ստորին մասին վրայ կը միանան։ Աջ կողմէն կ՚ընդունի բազմաթիւ ընտիր ջերմուկներու ջրեր, որոնք տեսնողներու վրայ մեծ տպաւորութիւն կը թողուն։ Այս ջերմուկներու ջրերէն վար՝ կ՚անցնի կրային ջրէ կազմուած բնական մեծ կամուրջի մը ներքևէն։ Երկու ժամ ու կէս ևս ի հիւսիս շարունակելով իր ընթացքն, տակաւ առ տակաւ կը շեղի յարևմուտս. յանկարծ դուրս կու գայ Տիատինի դաշտի մէջ և Տիատին գիւղաքաղաքի մօտէն քերելով կ՚անցնի Ջիրաւայ դաշտի միջէն, աջակողմը թողլով հին Բագաւանը և ուրիշ գիւղեր, նոյն ուղղութեամբ պտոյտներով առաջ կ՚երթայ մինչև Գարաքիլիսէ։ Հոն կ՚սկսի շեղիլ դէպ ի հարաւ և կ՚ընդունի ոչ սակաւ գետակներ, և Շէխեան գետը արևմտեան կողմէն։ Այնուհետև Անթապ գաւառակէն անցնելով կը շարունակէ իր ընթացքն Մանազկերտի և Ապահունեան գաւառներու մէջ, իւրաքանչիւր գաւառ երկու մասանց կը բաժնէ, աջ ու ձախ դաշտային և լեռնային մասեր թողլով։ Ուղղուելով դէպ ի հարաւային արևմուտք կ՚անցնի նաև Հարք և Տարօն գաւառներէն, եզերքները թողլով հին և նուիրական վայրեր։ Տուրուբերանէն դուրս գալով, Չորրորդ Հայոց արևմտեան սահմանածայրն, Բարուշ գիւղի մօտ կը միանայ Արևմտեան Եփրատի հետ։ Մ. Միրախորեան՝ գետոյս վրայի կամրջաց նուազութիւնն յայտնելով, կ՚ըսէ, թէ գարնան ժամանակ երբ գետս կը յորդէ, վրայէն անցուդարձի համար կը գործածեն 12 կամ 16 այծու տիկերէ կազմեալ անպատսպար տկանաւ մը։ Այդ տիկերն իրարու հետ կապուած են, որոց վրայ կը ձգեն խեղճ ճիւղերէ գործուած վանդակ մը, և 4—5 հոգի վրան նստելով կենաց մեծ վտանգով կ՚անցնին մէկ կողմէն միւսը։ Շատ անգամ կամրջաց նուազութեան պատճառաւ այս օրինակ տկանաւակներով անցնելով մարդիկ զոհ գացած են։ Իսկ երբ գետոյս յորդութիւնն իջնայ, ձիով կարելի է անցնիլ։ Մանազկերտ գաւառի մէջ կայ 13 աչքէ գեղեցկաշէն

*կամուրջ մը, շատ հաստատուն և հին գործ, բայց ափսոս որ մէջ տեղի երեք աչքն քանդուած ըլլալով, անցուղարձ ընելն անկարելի եղած են։ — Նկարագրի. Ուղևորութիւն, Գ. 56–59։ Բագրևանդ, 21–24։*

ԱՐԱԾԱՆՍ. — *Այս անուամբ գիւղ մը կը յիշուի յԱղուանս, Ս. Գրիգորիսի նշխարաց գիւտի պատմութեան մէջ. «Զու արարեալ արքային (Վաչագանայ) ի Գուտականէ... հասանէին ի գեօղ մի* Արածանս»։

ԱՐԱԿԱՅ. — *Գիւղս որ ունի 50 տուն թուրք բնակիչ, երբեմն Ակնայ գիւղ է եղեր, իսկ այժմ Տիվրիկի կը վերաբերի. Ակնէն և Տիվրիկէն հեռու է վեցական ժամ։ Գիւղէս դուրս լերան կողին վրայ է Ս. Գրիգորի Նարեկացւոյ վանքը, գրեթէ 12 մեթր երկայնութեամբ և 10մ լայնութեամբ պարսպով պատած. ներսն է մատուռն, գաւիթն և մատաղատունն։ Աւանդութեամբ կ'ըսուի, թէ այն կրօնաւորները որք ԺԱ դարուն Սենեքերիմ Թագաւորի հետ Վանայ Նարեկայ վանքէն փոխադրուեցան այս կողմերը, իրենց հետ բերին Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ մարմինը, և հոս վանք շինելով՝ եկեղեցւոյ մէջ հանգուցին զայն. ասկէ գիւղն ալ նախ կոչուեցաւ* Նարեկայ *գիւղ, որ վերջը աղաւաղանօք փոխուեր է* Արակայ։ *Այս աւանդութեան ճշգութեանը նկատմամբ թէպէտ ծանօթ փաստեր և տեղեկութիւններ չկան, սակայն վանքս՝ այժմ ամայի վիճակի մէջ գտնուելովն հանդերձ, կը լեցուի բազմաթիւ ուխտաւորներով, մանաւանդ Ս. Գր. Լուսաւորչայ գիւտ նշխարաց, Վարդավառին և Ս. Աստուածածնի տօներու օրեր։ Շրջակայքը ունի բաւական գետին, ուր վրաններ կը կանգնեն ուխտաւորք և մատաղ կ'եփեն։ Ի հիւսիս քիչ մը վար կը գտնուի Զոպնի (Ճովուշի) գերեզմանն կոչուած ուխտատեղին, որոյ մօտ մացառ մը կայ՝ վրան բազմաթիւ քուրջեր կապած։ Հարաւակողմը կը գտնուի Լոշս աղբիւր կոչուած ջուրը։ Վանքս ոչ կալուած ունի և ոչ պահապան. երբեմն ուխտաւորաց հետ մէկ երկու քահանայ կու գան, պատարագ մատուցանելու և մատաղներն օրհնելու։ Կ'ըսեն թէ խորանին ներքև շէնք մը կայ, և հոն է սրբոյն մասունքը։ Շատ ախտաժէտներ և լուսնոտներ հաւատքով ուխտի գալով բժշկուած են։ Քանի մը տարի ուխտաւորաց նուէրներէն գոյացած արդիւնքն յատկացուած է եղեր մերձակայ հայաբնակ Նարվեր գիւղի Հայոց վարժարանին։ — Հնութիւնք Ակնայ, 36–37։*

ԱՐԱԿԵԼ ՄԵԾ. — *Գիւղ Գուգարաց Ջաւախք (Ախալքալաք) գաւառի մէջ։ Բնակիչք 555, յորոց 49 քուրդ են և մնացածը ամբողջ հայ։*

ԱՐԱԿԵԼ ՓՈՔՐ. — *Նոյնպէս գիւղ Գուգարաց Ջաւախք գաւառի. 307 բնակչօք, մեծամասնութիւնը Հայք, և սակաւաթիւ այլազգիք։*

ԱՐԱԿՈՎԱ *կամ* ԱՐԱԳՈՎԱ. — *Հայաբնակ գիւղ Գուգարաց Ջաւախք գաւառի մէջ, Ախալքալաքի հիւսիսային կողմը 9 ½ վերստ հեռաւորութեամբ, համանուն գետի ափունքը։ Հին ժամանակները գիւղս բաղկացած է եղեր Արա բերդէն, որ կառուցուած է եղեր գետի ձախակողմը բարձրացող լերան վրայ, և Կովա գիւղէն՝ որ կը գտնուի եղեր բերդի հիւսիսակողմը՝ գետի աջ ափունքը։ Յետոյ այդ երկու անունները միանալով կազմեր են այժմեան գիւղի Արակովա անունը։ Այժմ Արա բերդը աւերակ է, որոյ միջէն ստորերկրեայ անցք մը կը հանէ մինչև գետի եզերքը։ Հոն կայ նաև կիսաւեր եկեղեցւոյ պատը, որոյ մէջի խորանն դարձած է ուխտատեղի Ս. Սարգիս անունով։ Կովա գիւղն ալ բոլորովին քանդուած է, իսկ տեղ շինուած են մարագներ։ Բերդի դիմաց հինգ բլուրներ գիրար կարելով կը ձևացնեն ձոր մը, որ յատուկ անուամբ Մեծ ձոր կը կոչուի. մօտը կայ բլրակ մը և վրան խաչ մը, որ ուխտատեղի է Ս. Մինաս անուամբ։*

*Գիւղիս եկեղեցին շինուած է բերդի լերան լանջին, հարթ տեղւոյ մը վրայ. բաւական մեծ է և գեղեցիկ։ Գաւիթը կը գտնուի նաև Հայոց դպրոցի համար որթատաշ քարերով շէնք մը, որ Ռուսաց դպրոցի հիմնուելէն վերջ, կը ծառայէ իբրև հասարակաց շտեմարան։ 1882ին հաստատուած է Արակովայի գիւղական արքունական դըպրոցը, շինուած՝ գետի աջ կողմը բարձրաւանդակի վրայ. աշակերտաց թիւն կը հասնի 525–550։ Գետի ափունքը զարդարուած են ծառերով և ուռիներով։ Տները*

*ընդհանրապէս կիսագետնափոր են, բաց ի քահանայի տնէն, որ շինուած և զարդարուած է եւրոպական ճաշակով։ Բնակիչք գաղթած են Կարնոյ Ճինիս գիւղէն, ընդ ամէնը կը լինին 1000 հոգի։ Կը զբաղին գլխաւորաբար երկրագործութեամբ, անասնապահութեամբ, փուրգոններ ևս կը քանեցնեն։ — Ջաւախք, 33–34։*

### ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՐԱԿՈՎԱՅԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

| ԱՆՈՒԱՆՔ ԳԻՒՂԻՑ | ՀԱՅՔ | | Օտարք |
|---|---|---|---|
| | Լուս. | Կաթ. | |
| Ապուլ | 722 | — | — |
| Արակովա | 621 | — | — |
| Բաւրա | — | 296 | 5 |
| Բղաւէթ | 366 | — | — |
| Խօսպիա Մեծ | — | — | 242 |
| Խօսպիա Փոքր | 331 | — | — |
| Խուլգումոյ | — | 326 | — |
| Կարտիկամ | — | 852 | 6 |
| Կորխ | 658 | — | — |
| Կուլիկամ | 634 | — | — |
| Մաճատիա | 584 | — | — |
| Օլավէրա | 558 | — | — |
| Օրճա | 659 | — | — |
| ԳՈՒՄԱՐՆ | 5433 | 1474 | 253 |

ԱՐԱՀ. *Տես* ՀԱՑՆԻ։

ԱՐԱՀԵՋ. — *Հին գիւղ Տայոց աշխարհի մէջ, դիրքը անյայտ։ Ղազար Փարպեցի (333) կը յիշէ գիւղս իբրև հայրենիք Գիւտ կաթողիկոսի, ըսելով «Ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեզայ»։*

ԱՐԱՀՈՒԾ. *Տես* ԱՂԱՀԷՃՔ։

ԱՐԱԳ. — *Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, շինուած ընդարձակ ձորի մը բերանը. բնակիչք 100 տունէն աւելի։ Կ'աւանդեն թէ ի հնումն գեղեցիկ քաղաք մը եղած լինի գիւղս, և այս աւանդութեան ճշգութեան վկայք են, այժմ նշմարելի բազմաթիւ հնութեանց բեկորներն։ Հնախօս գիտնականաց պեղմանց և քննութեանց կը կարօտին այս կողմերս։*

ԱՐԱՄԱՑ ԳԻՒՂ. *Տես* ԱՐԱՄՈՒՍ։

ԱՐԱՄԱՆԱՑ ԳԻՒՂ. — *Հին գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, որուն դիրքը հետևեալ կերպով կ'ստորագրէ Ղազար (165). «Եւ եկեալ հասանէին ի գիւղ մի որոյ անուն էր* Արամանայ *ի նահանգին Բագրեւանդայ, մերձակայ սահմանակից Բասենոյ և Տուարածատափայ»։ Եկողներն էին Մեծն Վարդան և իւր դրան միահամուռ բազմութիւնն, որք կ'ուզէին դիմել Յունաց աշխարհը, կրակապաշտ Պարսից բռնութենէն ազատելու համար։ Սակայն երբ Ղևոնդ երէց և ուրիշ քահանաներ, Արշարունեաց Արշաւիր իշխանը և այլ տանուտէրներ աղաչաւոր եկան, այն ժամանակ Մեծն Վարդան ետ կեցաւ իւր խորհրդէն և դարձաւ Հայոց բանակը։*

ԱՐԱՄԱՆԵԱԿ. — *Ծայլին Գարահիսարի այժմեան* Ալամոնիկ *հայաբնակ գիւղի հին անունն կը թուի։ — Այս անուամբ բերդ մը կար ըստ Թ. Արծրունւոյ (218) Սպեր գաւառի մէջ կամ սահմանակից։ Պատմութիւնն մեզ կը յայտնէ, թէ իններորդ դարու կիսուն Գուրգէն Արծրունին խոյս տալով Բուղայէն գնաց «Ի Սպեր գաւառ, և էր յայնժամ առեալ ի Յունաց զօրաբար իշխանին կոչեցեալ ի տանէ Բագրատունի, զբերդն* Արամանեակ *կոչեցեալ, և ընկալեալ ի նմանէ մեծաշուք պատուով։ Եւ արևելեաց զօրավարին եկեալ պատերազմել ընդ իշխանկանն առնուլ զամրոցն, և անդ Գուրգէն բազում արութիւն ցուցեալ ընդդէմ յունական զօրացն, ոչ մի անգամ այլ բազում անգամ....»։ — Վարդան* Արամանեակ *անուամբ գաւառ մը կը յիշէ, որ անշուշտ կ'ինկնար Մեծ Հայքէն դուրս։*

ԱՐԱՄԻՍ. *Տես* ԻՐԻՄԻՍ։

ԱՐԱՄԼՈՒ *կամ* ԱՐԱՄԱՆԻՑ ԳԻՒՂ. — *Գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Օշականի արևմտակողմը. բնակիչք այժմ այլազգի են, 10 տուն։*

ԱՐԱՄՈՒՍ *կամ* ԱՐԱՄՕՆՔ. — *Հայաբնակ հին գիւղ, Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, 1129 բնակչօք։ Եղիշէ* Երամօնս *անուանած է գիւղս, բայց հարկ էր որ ուղղականի մէջ կոչուէր* Արամօնք *և կամ* Արամունիք, *ինչպէս կը կոչեն Սամուէլ և Կիրակոս պատմիչներն, և անոնցմէ առաջ Ասողիկ՝* Արամօնեաց *կ'ըսէ։ Անունս եղած է քաջին Արամայ անունէն, ինչպէս որ կաթողիկոսաց գաւազանագրոց մէջ գրուած*

է Գիւղ Արամայ, որուն մօտ էր Արախոյզ կամ Արախուշ կոչուած տեղը՝ ուր ըստ ոմանց Շամիրամեան պատերազմէն վերջը ինկած լինելով Արա, Ասորւոց թագուհին փնտռել տուաւ անոր դիակը։ Յովհաննէս պատմաբան կաթողիկոսը գիւղիս համար կ'աւանդէ, թէ «Այս գեղ սեպհական էր տան կաթողիկոսարանին. նախ քան զչարչարանս Ս. Գրիգորի՝ յարքայէն Տրդատայ նմա իսկ հաստատուր պայմանաւ ընծայեալ. որոյ և յետկար վճռանն պահի մինչև ցայսօր ժամանակի»։ Այս գիւղէս 729 թուականին կաթողիկոս ընտրուեցաւ Դաւիթ Ա, որ և շինեց «... եկեղեցի ի գեօղն Արամօնս, գեղեցկայարմար զարդարմամբ». մօտն ալ վայելուչ բնակութեան տեղի շինելով, հոն ութ տարի բնակեցաւ, և վախճանելով նոյն եկեղեցւոյ մօտ թաղեցաւ։ Այս հին եկեղեցւոյ քայքայած որմոց հողին մէկ մասը կայ այժմ, շինուած կոփածոյ քարերով. անյայտացած է Դաւիթ Ա կաթողիկոսի գերեզմանատեղին։ Այժմեան եկեղեցին կը կոչուի Ս. Յակոբ, զոր փոխանակ հնոյն նորոգ կառուցց քարաշէն Տէր Յովհան քահանայն 1863 թուին։ Երկու եկեղեցիներն ալ ունին Թ· դարու արձանագրութիւնք երկու տող, գօտւոյ նման որմոց շրջապատին փորագրած։ Օրպելեան պատմիչը կը սխալի՝ Դաւիթէն առաջ կաթողիկոսանիստ համարելով այս գիւղս. ընդ հակառակն իր յիշած Յովհանը նստած է Աւան գիւղը, ինչպէս կ'աւանդէն հնագոյն պատմիչք։ Թէպէտև քիչ ժամանակ կաթողիկոսանիստ եղած է գիւղս, սակայն այնու հանդերձ բարգաւաճեր և զարդարուեր է շինութիւններով և սրբութեամբք՝ յորոց կը յիշուի ԺԵ դարուն Արամօնից Ս. Խաչն՝ Աղջոց վանքի մէջ։ — Արամօնից արեւելեան հարաւային կողմը բլրակի մը ծայրը շինուած է սրբատաշ քարով մատուռ մը Ս. Աստուածածին՝ հայկական ՅԾԶ (=907) թուականին։ Արձանագրութիւնն՝ որ միւս եկեղեցեաց նման շրջապատած է չորս կողմը, կը յայտնէ որ Գրիգոր Սիւնեաց տէրը Վասակ Հայկազնի որդին, շատ գանձիւք գնեց է Արամոնքայ (Արամօնք) գիւղը Հագարացիներէն, և մի և նոյն ժամանակ նորոգած է այս մատուռը։ — Այրարատ, 289։ Տեղագր. Հին Հայ. 455–6։ Գեղարքունի, 272–276։

ԱՐԱՅԻ ԳԻՒՂ. — Աւերակ գիւղատեղի Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Պաղարճուղ գիւղի մօտ՝ հարաւակողմը։

ԱՐԱՅԻ ԼԵՌ. — Նշանաւոր և պատմական լեռ Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Արագածու արեւելեան գօտւոյն վրայ։ Կը պատմուի թէ այսպէս կոչուեր է Արա գեղեցիկի անուամբ, որ Ասորեստանի Շամիրամ թագուհւոյ դէմ պատերազմի ելնելու ժամանակ՝ լերանս ստորոտը բնակեցաւ։ Այս աւանդական պատմութեան վկայ կրնայ համարուիլ նաև Շամիրամայ անուամբ կոչուած լեռը, որ կ'իյնայ լերանս դիմաց՝ Կոտայք գաւառի մէջ, և որոյ ստորոտն ալ բանակած է եղեր Ասորեստանի թագուհւոյ զօրքը։ Այս երկու լերանց մէջ տարածուած է պատերազմի յարմար լեռնադաշտ մը։ Լերանս գիրքը կոնաձև է, բայց ոչ այնչափ սրածայր. հիւսիսային և հարաւային երեսները՝ միապաղաղ գագաթէն քիչ մը վար, ունի պատառուածքներ՝ անշուշտ երկրաշարժներու ազդեցութենէն եղած, այս պատճառաւ այլազգիք լերանս Գառնը եարըղ (հերձափոր) անունը կու տան։ Հարաւային կողմի պատառուածոյն ձորացած տեղւոյն մէջ, մինչև ցարդ կը պատուի քարայր մը, իբրև գերեզման Վառվառեայ կուսի, ուր կը դիմեն բազմաթիւ ուխտաւորք Համբարձման տօնին։ Գեղեցիկ են առհասարակ Արայի լերան շրջակայքը, զարդարուած լինելով ոչ միայն բնութեան հրաշալի տեսարաններով, այլ և սրբաշէն մենաստաններով, ինչպէս Եղուարդայ և Թեղենեաց վանքերը, Բջնոյ վանքը Հրազդանի խորաձորի մէջ, Սաղմոսավանք, Յովհաննավանք և Սերկևլի (հն. Սիւղի) անապատ։ — Վաղարշապատ, Ա. 28–30։ Այրարատ, 161։

ԱՐԱՅՎԽՈՍ կամ ԱՐԷՊՍՈՒՆ. — Փոքր Հայոց գաւառակ, Այժմեան Նիկոէ գաւառի մէջ, ունի 14 գիւղ. ի հնումն կը կոչուէր նաև Արապխոս։

ԱՐԱՆԹՈՍ. — Հին գաւառ Արցախու, գիրքը դաշտային է. այժմ միացած է Տափ գաւառի հետ և ծանօթ է Քեաթիլու անուամբ։ Բնակիչք մահմէտական են։

ԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ. *Տես* ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ:

ԱՐԱՃԱՏ *Տես* ԵՐԻՃԱՏ:

ԱՐԱՃ *Տես* ԱՐԷՃ:

ԱՐԱՃԻՆ. — *Լեռ Սիւնեաց Երնջակ գաւառի հիւսիսային կողմը. բարձր 9940':*

ԱՐԱՈՒՍ. — *Հայաբնակ գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, 15 տուն բնակչօք:*

ԱՐԱՊԻՍՈՍ. *Տես* ԱՐԱՑՎԻՈՍ:

*գրական սխալ չէ, չգիտեմ ինչ հիման այդպէս փոխած են:*

ԱՐԱՏԷՍ. ԱՐԱՏԵՆՔ *կամ* ԱՐԻՏԵՍ. — *Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի՝ բոլորաձեւ հովտի մը մէջ, վտակի մը աջակողմը: Այժմ ծանօթ է Այասսի անուամբ, և ունի 45 տուն այլազգի բնակիչ: Գիւղին մէջտեղը բարձրաւանդակի վրայ ի հնումն*



156. *Արատէսի վանքի աւերակները:*

ԱՐԱՍՈՒՍ. *Տես* ՀՌՈՍՈՍ:

ԱՐԱՍՏԱՄՈՒՂ. — *Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ. այժմ անծանօթ է:*

ԱՐԱՎԱՐԴԱՆ. — *Գիւղ Այրարատայ Վանանդ գաւառի մէջ, Կարսի արեւմտակողմը. բնակիչք յոյն: Այժմեան Ռուսաց վիճակացոյց տախտակաց մէջ, գիւղին անունն գրուած է Կարամ-Վարդան, որ եթէ տպա-*

*կառուցուած էր հոյակապ վանք մը՝ Արատեսի վանքը, զոր կը յիշէ Սիւնեաց պատմիչը, որ և գիւղին հետ իւր Տարսայիճ հօրէն իրեն ժառանգութիւն վիճակելով՝ նուիրեց Նորավանից հռչակաւոր ուխտի միաբանից, իբրեւ կալուած և բնակարան ամրան: Տակաւին թէ և մասամբ կանգուն են վանացս եկեղեցիներն, սակայն ամայի, և օրէ օր*

քայքայման և կործանման տխուր վիճակի մէջ են։ Այս եկեղեցիներէն գլխաւորն կառուցուած է չորս որմափակ սեանց վրայ. ունի երկու աւանդատունք կամ մատուռներ աջ և ձախ կողմերը, որոց մէջ կան պատարագի սեղաններ։ Ունի նաև ժամատուն՝ կոփածոյ քարերով շինուած, վեց որմափակ սիւներով, և երկու խորանօք և պատուհաններով։ Արտաքին կողմէն հարաւային որմոյն վրայ քանդակուած կայ արևային ժամացոյց, տասներկու շառաւիղներով՝ իւրաքանչիւրի ծայրերը հայկական տառերով Ա. Բ. Գ. մինչև ԺԲ։ Արևելեան որմոյն մօտը կայ որոգաձև տապան մը ՉԼԹ (= 1280) թուականաւ գեղեցկատառ արձանագրութեամբ, յորում հանգչին նշխարք վանքս նորոգող Բարուշնապետ Հայրապետի։ Ժամատան հարաւային որմոյն վրայ ևս կայ Մամաքս անուն անձի մը նուիրատուութեան յիշատակարանը. ներքին որմերու վրայ ևս կան արձանագրութիւնք։ Հիւսիսային կողմէն գաւիթ մը կը միացնէ երկրորդ եկեղեցին, կանգնած չորս որմափակ բարձր և նուրբ սեանց վրայ, որոյ տանիքն խախտած է և այժմ թերևս կործանած։ Վերջինիս ժամատան կամ գաւթի վրայ շինուած է եղեր փառահեղ զանգակատուն վայելուչ կաթուղիկէով, որ աւաղ այժմ կործանած է։ Նոյն տխուր բաղդին են վիճակուած այժմ նաև գաւթի հիւսիսային և հարաւային պատերն, և միայն մնացած են կամարակապ սրբատաշ քարէ առաստաղը և սիւներն։ Գաւթի արևմտեան դրան ճակատը կայ ճարտարաքանդակ պատկեր Տիրամօրն՝ Յիսուս գիրկը, և երկու կողմը կրկին անձնաւորութիւնք։ Երրորդ նոյնպէս կիսակործան եկեղեցւոյն քանդակներն և դրան դրուագները աւելի նուրբ արուեստով շինուած են, ուր կը տեսնուին զանազան ձևերով խաչեր, ողկոյզներ, կենդանիներ, և այլն։ Վանացս եկեղեցեաց որմերու և խաչարձաններու վրայ կան բաւական թուով արձանագրութիւններ, յորոց մին կը յայտնէ երեք եկեղեցիներուն անուանքը, որք են Ս. Սիոն, Ս. Աստուածածին և Ս. Կարապետ։ Վանացս արձանագրութիւններէ չի յայտնուիր հիմնարկութեան թուականն, եղած թուականներէն հնագոյնն է ՆԻԴ (= 975), և նորագոյնն՝ ՌՃԿԲ (= 1713)։ Գիւղիս մէջ ցրուած խաչքարերէն նշանաւոր են 200 քայլ եկեղեցիներէն հեռու գտնուած երկու գեղեցկաքանդակ խաչարձանք՝ բարձր պատուանդաններով, որոց մին ընկած է գետին։ — Սիսական, 141–145։ Հնութիւնք վանօրէից, Թ. 279։ Եւ այլն։

ԱՐԱՐ. — Հին գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ։

ԱՐԱՐԱՏ. Տես ԱՅՐԱՐԱՏ։

ԱՐԱՐՈՒՑ ՎԱՆՔ. Տես ԱՐԱՐՔ։

ԱՐԱՐՏԱԿ. — Այս անուամբ լեռ մը կը յիշէ Ասողիկ, որ կը թուի թէ կ'ինկնար Այրարատայ Բասեն գաւառի մէջ։ Յուստինիանոս կայսրը բազմաթիւ զօրքերով Հայաստան եկած ժամանակ, այս լերան մօտ իւր զօրքերը երեք մասանց բաժնեց։

ԱՐԱՐՔ. — Հին երևելի գիւղ Հայոց, Վասպուրականի Ճուաշ գաւառի մէջ։ Գիւղիս մօտ կամ մէջ էր անշուշտ Արարուց վանքը, որ Մաղարդայ Ս. Ստեփանոսի վանքի թեմերէն էր, սահմանուած Մեծէն Ներսիսէ։ Տես ՎԱՆ։

ԱՐԱԽԱԳԵՏ. — Կը յիշուի Սիւնեաց Բաղք գաւառի մէջ։

ԱՐԱԽԻՍ կամ ԱՐԱԽՍԵԱԿ. — Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի Ապրակունեաց վիճակի մէջ։ Կայ նաև համանուն վտակ մը։

ԱՐԱԽԻՍ. — Հայաբնակ փոքր գիւղ Սիւնեաց Հարանդ (Ջան եզուր) գաւառի մէջ. բնակիչք 160, բաժնուած 20 տան։

ԱՐԱԽՍԱԲԱԿՔ. Տես ՍՈԴՔ։

ԱՐԱԽՍԵԱԿ. Տես ԱՐԱԽԻՍ։

ԱՐԱԽՐԱԿ. Տես ԱՐՕՐԱԿ։

ԱՐԲԵՆՈՒՏ կամ ՍՐԲԵՆՈՒՏ. — Այս անուամբ բարեհամ աղբիւր մը կը յիշուի Բարձր Հայոց մէջ։

ԱՐԲԵՐԴ. Տես ՅԱՐԲԵՐԴ։

ԱՐԳԱԲ. Տես ԿՈՎՍԱԿԱՆ։

ԱՐԳԱՃԻՆ կամ ԱՐԳԻՃԻ. — Հին գիւղ Գեղարքունեաց (Սիւնիք), որուն համապատասխանող կը համարուի Այրիճէ գիւղը։

ԱՐԳԱՍՈՎԻՏ. — Մոկաց աշխարհի հին գաւառներէն մին։ Գաւառիս անունն գրուած է նաև Ջարդարեաց ովիտ։

ԱՐԳԵԱԶ. *Տես* ԱՐԿԱԶ։

ԱՐԳԵԼ. — *Հայաբնակ գիւղ Այրարատայ կոտայք գաւառի մէջ։ Բնակիչք 458, բաժնուած 56 տան։*

ԱՐԳԵԼԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ. *Տես* ՏԷՐ ՅՈՒՍԿԱՆ ՈՐԴԻ։

ԱՐԳԷՈՍ. — *Արգէոս գրուած յիշեցինք լեռ ի կարգին, Առաջին Հայոց մէջ, կը գրուի նաև փոխանակ ռի ր տառով։ Այլազգիք ուրիշ զանազան անուններ տուած են լերան, ինչպէս Էրճիէշ կամ Արճիտս, որ է աղաւաղութիւն հին Արգէոս անուան կ'անուանեն նաև Ճէպէլի էրճասիպ։ Լեռս անուանի է թէ՛ հին և թէ նոր պատմութեան մէջ, աշխարհիս մեծամեծ լեռներէն մին կրնայ համարուիլ, լայնանիստ է և բարձր։ Գագաթը միշտ ծածկուած է ձիւնով, որ իբրև սպիտակ գլխարկ մը կ'երևի երկու երեք օրուան ճանապարհ հեռուէն. օդաստու ամառն մէջ անգամ հոն ձիւն կու գայ։ Ունի աղբիւր մը, որոյ ջրոյն առողջարարութիւնն և պատուականութիւնն հռչակուած է։ Լերանս վրայ կը գտնուին արջ, գայլ և ուրիշ կենդանիներ։ Սարոտները կան ցիրուցան հին կամարակապ շինուածոց աւերակներ, և փոքրիկ քարակոփ այր մը, յորում կը գտնուին մարդկանց ոսկրատիք, և կը կարծուի որ գերեզմանատեղի եղած ըլլայ։ Լերանս մօտ կը գտնեն հնագէտք նաև հին Կեսարիոյ աւերակները։ — Նոր Հայ. 310։*

ԱՐԳԻՆԱ. — *Երբեմն անուանի գիւղաքաղաք Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, և այժմ փոքրիկ տաճկաբնակ գիւղ Կարուց Ախուրեան գետոյ ձախակողմեան եզերքը։ Մեր պատմիչներէն Մատթէոս Ուռհայեցին միայն Մեծ Արգինա կ'անուանէ գիւղս, անշուշտ մէջը գտնուած հռչականուն վանաց և վարդապետարանին համար, որոյ սկզբնաւորութեան ժամանակն յայտնի չէ. այդ վանքի մէջ կար նաև ուխտական խաչ մը։ Կամսարականաց ժամանակ, Զրդ դարէն սկսեալ նշանաւոր է եղեր գիւղս, իբր ընդարձակ և ամուր բերդով։ 603 թուականին երբ Պարսիկք Շիրակաւանէն չուող Յունաց վրայ կ'երթային, շրջակայ գիւղերէն բնակիչք այս բերդս ապաւինեցան և օգտուելով ամուր դիրքէն և երկու գետոց անձուկ միջոցէն, ուսկից պիտի անցնէր պարսկական բանակը, յարձակեցան գերանդիներով անոնց վրայ, մեծ վնաս հասուցին և աւարն առնելով ամրացան վերստին իրենց բերդը։ Իսկ Պարսիկներն յաղթութեամբ դառնալով, երբ տեսան իրենց զօրաց հասած մեծ չարիքը, արշաւեցին բերդիս վրայ և տիրելով՝ շատ մարդ սրով սատակեցին. շատերն ալ երկիւղալից իրենք զիրենք բերդէն գահավէժ վար նետեցին, մէկ մասն ալ գաղտնի ճանապարհով, գետի կողմէ բացուող դռնէն դուրս ելնելով փախաւ. իսկ մնացած բոլոր ժողովուրդը գերի տարին, ինչպէս նաև բոլոր գաւառի մէջ եղած աւարը։ Այս պատմական դէպքս կը յիշէ Սեբէոս (Գլ. ԻԲ) և գիւղիս անունն կը գրէ* Երգինա։ *Անկէց վերջը գրեթէ երեք դար չի յիշուիր Արգինայի նկատմամբ դէպք մը, և կը թուի թէ ինններորդ դարուն, Բագրատունեաց ոստանն ի Շիրակաւան հաստատուած միջոց, փոխադրուած է նաև կաթողիկոսական աթոռն Արգինայի մեծ վանքը, որ անկէց վերջ գրեթէ դար մը մինչև յԱնի փոխադրուած ժամանակ Նիստ կաթողիկոսաց կոչուած է։ Անանիա Մոկացի կաթողիկոսը՝ որ Ժ դարու կիսուն եղաւ, կը թուի թէ առաջին շինութիւնները ըրած է, որ և թաղուած է իր մարմինն։ Անանիայի քրոջ որդին և յաջորդը Խաչիկ Ա (972–990), ըստ Ասողկայ (Գ. Թ) պատմութեան, «Նորոգեաց զաւան կաթողիկոսարանին ի Շիրակ գաւառի, ի գիւղաքաղաքին Արգինայ, յեզերս Ախուրեան գետոյ, ի հանգստարանի Տեառն Անանիայի՝ Հայոց վերադիտողի. և ի նմին գիւղ շինեաց զկաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանօք, զմբեթարդ խորան երկնանման. հանդերձ երեք եկեղեցօք նոյնաձև հրաշաշէնիկ չքնաղագեղ յօրինուածովք. և զարդարեաց մեծապայծառ ծիրանածաղիկ ոսկեթել անկուածովք. ի զարդ ոսկւոյ և արծաթոյ, և ամենազարդ պայծառութեամբ ջահարօրօք լուսաւոր անօթոց։ Այլ և գաստուածախօս կտակս յօրինակի ստացեալ գգիրս սուրբս... հանդերձ ամենայն վարդապետացն ձայնիւք»։ Հայոց մեծ ճարտարապետն Տրդատ կառոյց այս հրաշաշէնիլ կաթողիկէն, Անւոյ մայր եկեղեցիէն առաջ։ Խաչիկ կաթողիկոսն վախճանելով 990*

թուականին, կը գտնեն եկեղեցւոյս հիւսիսային կողմը, իրեն յատուկ հանգստարանի մէջ։ Կաթողիկոսական աթոռոյն անկէ վերնալէն վերջ ևս, Արգինա իւր վանքովը և վարդապետներով, քանի որ երկիրը շէն էր, միշտ անուանի եղաւ։ ԺԱ դարու կիսուն Ասողիկ Հայոց իմաստուն վարդապետաց կարգը կը դասէ նաև զմն «Տէր Ներսէս ի Բագրևանդ գաւառէ՝ իշխան Հայոց... այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն և իմաստասէր, ունելով ի մեծն Արգինա, հանեալ ամենայն շնորհաց ստացուածեղէն կատարմանցն», և այլն։ Այսպիսի նշանաւոր տեղւոյ մը այժմեան աւերակ վիճակն խիստ սրտաճմլիկ է։ Ասողկայ յիշած եկեղեցիներն բոլորովին կործանուած և գետնի հաւասարած են, միայն կաթուղիկէին հիւսիսային որմն և արևմտակողման կէս մասը որ կանգուն մնացած են, բաւական են ցուցընելու համար, թէ ամբողջութեամբ և ձևովն հրաշալիք մի է եղեր, և քաջարուեստ ճարտարապետին Տրդատայ անունն անմահացնող վեհ կոթող մը։ Արևմտեան դրան վրայի արձանագրութիւնն բոլորովին խանգարուած է, կը նշմարուի շինութեան թուականն ՆԿԱ (= 1012) և շինողի անունն.... Քևորգի խաչկայ կարողիկոսի։ Ուրիշ տող մը արձանագրութիւն ևս կայ հիւսիսային որմոյն վրայ ներքին կողմէն։ Գիւղիս արևմտակողմը ձորոյն մէջ կը տեսնուին աւերակաց քարակոյտեր, և սեպացած բլրոց եզերքը ամրոցի աւերակներ։ Կաթողիկոսարանին և ոչ հետքերը կը նշմարուին։ — Շիրակ 12։ Տեղգր. Հայս. 173։

ԱՐԴՈՒԼԻՔ. *Տես* ԱԳՈՒԼԻՍ։

ԱՐԴԱԼԷՍՈՆ. — *Հին գիւղ Չորրորդ Հայոց Խորձայն գաւառի մէջ, զոր Յուստինիանոս կայսրը ամուր պարսպով պատելով՝ բերդ ըրաւ և մէջը զօրքեր դրաւ։*

ԱՐԴԱԽ *կամ* ԱՐԴԱՔ. — *Սակաւածանօթ գիւղ Այրարատայ Ճահուկ գաւառի մէջ։ Միհրանոզաց ժամանակ, գիւղս բնակիչք կը յիշէ Ազարիա Ջրիտան 30 տուն, 100 հողորդընկալք և 70 տղայք։ Հ. Ալիշան կը համարի թէ Արդախ կը համապատասխանէ հին Որդոք գիւղի։*

ԱՐԴԱԿ. *Տես* ԱՆԴԱԿ։

ԱՐԴԱԻԱՍԻԿ. — *Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Բիւրականի արևելակողմը ձորակի մէջ Ջրվշտիկ կոչուած վանքի մօտ կար այս անուամբ հին մատուռ մը սրածայր գմբէթով։ Կ'աւանդեն թէ այդտեղ վախճանելով ճգնաւոր մը, Աստուծոյ հրեշտակը բերելով հոն քահանայ մը բերած է. « Արդ աւաղիկ երթ և թաղեա զդա ». և քահանայն թաղելով զայն ձորակի արևելեան եզերքը, կը կանգնէ վրան մեծ խաչվէմ մը, և ջրոյն արևմտակողմը այս մատուռը։ 1840 թուականի ջրոց հեղեղները տապալելով կործանեցին մատուռս։ Ըստ ոմանց այդ տեղւոյ ստոյգ հին անունն էր Արտաւազդիկ։*

ԱՐԴԵԱՆՍ. *Տես* ԸՆՁԻՆ։

ԱՐԴԵՐԹ. — *Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արևելեան հիւսիսային կողմը։ Բնակիչք 100 տունէն աւելի են։*

ԱՐԴԻԿ. — *Բազմամարդ հայաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Հառիճոյ վանքի հիւսիսային արևմտակողմը գրեթէ մղոն մը հեռու, գետակի և ձորի մը երկու եզերաց վրայ։ Բնակչաց թիւն է այժմ 2558, բաժնուած 367 տան. գաղթած են Կարնէն և Կարսէն։ Գիւղս ունի երկու հնաշէն և գեղեցիկ եկեղեցիներ. մին մեծ Ս. Գրիգոր խաչաձև կիսաբոլոր թևերով, անսիւն է և գմբեթն ինկած. միւսն ևս սիւն չունի և աւելի փոքր է, նուիրուած է Ս. Աստուածածնի։ Այս եկեղեցիներու շինողաց անունք յայտնի չեն, որովհետև ստորին կողմերը արձանագրութիւնք չկան, և բարձրերը եղած արձանագրութիւնք ևս այցելուներէ կարդացուած չեն։*

ԱՐԴԻՍ-ՈՒՊԱՆԻ. — *Հայաբնակ գիւղ Գուգարաց Զորափոր (Տփղիսու վիճ.) գաւառի մէջ։ Բնակիչք 192, բաժնուած 25 տան։*

ԱՐԴԼԱՆ. — *Հայաբնակ գիւղ Չորրորդ Հայոց, Բալուի առաջնորդութեան մէջ. բնակիչք 50 տուն. ունին եկեղեցի մը Ս. Մինաս։*

ԱՐԴՈՒԻ. — *Հինաւուրց նշանաւոր գիւղ Հայոց, Գուգարաց Տաշիր գաւառի մէջ, Օձուն գիւղի արևմտեան հարաւային կողմը։ Գեղեցիկ դիրք ունի, երեք կողմերն ունի մասամբ անտառազարդ բլուրներ, իսկ արևելեան կողմը բաց է, ուսկից կ'երևի Լոռւոյ*

գաւառակի մեծ մասը։ Բնակչաց թիւով, որոց թիւն է 160, գիւղին անունը կանխաւ եղեր է Մելիք–գիւղ (Մելիք–քեանդ)։ Ութերորդ դարու մէջ, ըստ աւանդութեան, զրպարտութեան մը համար Յովհան Օձնեցին իր ծննդավայրէն ելնելով կու գայ յԱրդուի, ուր և կը շինէ իր համար ճգնելու տեղ և եկեղեցի։ Իբր թէ Յովհան Օձնեցին Օձունէն հեռացած ժամանակ անիծեր է գիւղը և Մելիք գիւղը գալով՝ վերջինս անուաներ է Առաջի, այսինքն Մելիքն առջի և Օձնշին առջի։

Յովհան Օձնեցիի վանքը այժմ կը գտնուի Արդուիէն ½ վերստաչափ հեռու արևմտեան հիւսիսային կողմը, լերան լանջի վրայ։ Ոչ կալուած ունի և ոչ վանահայր կամ տիրացու, ունի միայն երեցփոխան մը. երբեմն Արդուիի քահանայն կը հանդիպի կարեւոր դէպքերու ժամանակ։ Վանքի տօնը կարմիր կիրակէի օրն է, ուր կը դիմեն բազմաթիւ ժողովուրդք ամէն կողմերէ։ Այս վանքը շատ խարխուլ վիճակի մէջ է, ունի հին բրգաձև և հաստահիմն զանգակատուն մը։ Եկեղեցւոյ ներսը սեղանի առջև կայ քարեայ հաստատուն դագաղ մը, վրան ծածկուած նոյնպէս քարէ անտաշ կափարիչով, դա է Յովհան Օձնեցի իմաստասիրի դամբարանն։ Ի հնումն Արդուի գիւղը և շրջակայքը, սեփհական կալուած են եղեր Յովհան Օձնեցիի տոհմին, որ՝ ըստ պատմագրաց «էր յազատ տանէ»։ Գիւղս միշտ կառավարեր են Օձնեցիի տոհմի շառաւիղները, որոնց մէկ մասը Մելիք և միւսը Քալանթար տիտղոսը գործածած են։ Վերջին դարերու մէջ դոքա կը կոչուէին Լօռու–Մելիքներ և Լօռու–Քալանթարներ, որովհետև Պարսից տիրապետութեան ժամանակ իրենք կը վարէին երկրի մելիքութեան և քալանթարութեան պաշտօնները. բայց իրենց իսկական տոհմանունը եղած է Տայիեանք։ Իրենց անուամբ Արդուիի մէջ Տայիեանց թաղ մի կայ, ուր կ'երևին նոցա ապարանից աւերակներու հետքերը։ Գիւղիս մօտի ձորակն կը կոչուի Վիշապաձոր։ Արդուի ըստ երևոյթին, շատ մեծ գիւղ է եղեր, սակայն ինչպէս անդացիք կը պատմեն, ժողովուրդը մեծ բազմութեամբ գաղթեր է Արդուինի քաղաքը, որ իր անունն առած կը համարուի գիւղիս անունէն։ Այս գաղթականութիւնն եղած է անշուշտ անցեալ դարու վերջերը, երբ Լեզգիները աւերեցին թէ՛ գիւղս և թէ մենաստանը։ Լօռու Մելիքեանները և Քալանթարեանները, այս գիւղիս կալուածատէրեր են, վերջնոցս մեծ մասը կը բնակին Արդուիի մէջ։ — Ջալալեանց Ճնպրհրդ. Ա. 103–104։ Լոռւայ, Ե. Գիրք Ա. 275–280։

ԱՐԴՈՒԻՆ. Գղ. ARTVIN. Ռ. Артвинъ. — Հայաշատ և գլխաւոր քաղաք համանուն գաւառի, Քութայիսի նահանգի մէջ, Ճորոխ գետի ձախակողմը։ Ե. Մարկով ռուս ճանապարհորդն սքանչացած քաղաքիս դրից վրայ լաւ կերպով կը նկարագրէ զայն, յորմէ կը քաղենք մասն ինչ։ Երբեք գեղեցիկ նկար մը ակախեալ կ'երևի յօդս Արդուին (թ. 157) բարձադիր և կիսաբոլոր ձևով քարոտ լերան վրայէն, և ամփիթատեր ձևով կ'իջնէ ձորոյն մէջ։ Տներն ընդհանրապէս ձևաւոր, բազմայարկ և սպիտակ քարաշէն են. որք գրեթէ լերան գագաթէն մինչև ստորոտը ցիրուցան սփռեալ կ'երևին կողին ամէն կողմը. շրջապատուած բազմաթիւ պարտէզներով՝ որք գարնան ժամանակ իրենց կանանչ դալարեօք, կը ներկայացնեն հակապատկեր մը քաղաքին շրջակայ մթին, մռայլ և լերկ ժայռերուն։ Քաղաքին ծայրը աջակողմը՝ բարձր սեպացեալ ժայռի վրայ, կայ կիսաւեր հին ամրոց մը, որ իր զօրաւոր և շրջակայից վրայ տիրող դրից համար, երբեմն անառիկ և անմատչելի համարուած էր։ Շատ մասամբ նշանաւոր է Արդուին և իր առաւելութեանց չափ չկայ. քաղաքին վերին մասը կը գտնուի բարձր դրից վրայ, ուր փութով կը հասնի դառնաշունչ ձմեռն և ուր շատ համառօտ կը տևէ ամառն։ Որչափ դէպ ի վար կը խոնարհի քաղաքն լերան մեղմիկ դարևանդին վրայ, այնչափ ևս շրջապատող բուսականութիւնն կենդանի և բարգաւաճ է։ Վերի բարձրաբերձ սօսեաց կը փոխանակեն սառ խիտ ու խիտ կաղնիք, և բազմաթիւ այգեաց մէջ կը հասունանան խաղողին հրաշալի ողկոյզքն։ Տաք է վարը՝ լերան ստորոտը, տաք է ձմեռուան մէջ անգամ, հանդոյն ամրան տօթագին աւուրց։ Անդ կ'աճին գեղձենիք, նռնենիք, և ձիթենիք՝ որոց ար-

*մառանները կը թանայ ձորոխ իր պղտոր կոհակներով։ Արդուինի այս օրինակ դիրք շնորհիւ՝ ընակիչք տարւոյն մեծ մասը կը վայելեն պարտիզաց և անդոց բազմազգի բերքերը։ Մինչդեռ լերանց գագաթներն կը հեծեն բազմակոյտ ձեան խաւերու ներքև, մի և նոյն ժամանակ վարը ձորոխի ափանց վրայ՝ կը հասունանան բանջարեղէնք և պտուղք, և դեռ ևս սոքա չը սպառած, կը սկսին հասունանալ գարնանցին վրայ պտղըւածներն։ — Արդուինի շատ օդաւոր է բաղ-*

*կեայ Հայոց թիւն 5500էն աւելի է, որոնք երբեմն ունէին եպիսկոպոս, բայց այժմ եպիսկոպոսական այդ հին թեմն, զանազան իրաց հանգամանքներով թափուր մնացած է։ Ունին չորս հեռաւոր եկեղեցիները, Ս. Աստուածածին, Պօղոս–Պետրոս, Գրիգոր Լուսաւորիչ և Ս. Խաչ։ Այս եկեղեցիք կառուցուած են չորս զանազան մասանց մէջ, որոց անունք են. Միջնաքաղաք, Խայփէթ, Կօլօրտօ և Կորձուլ։ Եպիսկոպոսարանը, մայր եկեղեցին և գլխաւոր ուսումնարանն կը գտ-*



157 • *Արդուինի քաղաքի տեսարանը։*

*մէջտեղ ձորոխ գետն, որոյ վրայ ձգուած է գեղեցիկ, բարձր և միակամար կամուրջ մը։ Ճորոխը իւր նաւարկութեան յարմար ընթացքովն կը կապէ Արդուինը Պաթումի հետ, հետևաբար և բովանդակ քաղաքականացեալ աշխարհի հետ։*

*Արդուին ունի մօտ 1300 տուն, և բնակչաց թիւն երկու սեռերն ևս մէկտեղ առնելով 8000ը կ'անցնի։ Ամենէն բազմաթիւ են Հայք՝ որք երկու հաւատակութեանց բաժնուած են. Տաճկաց թիւն է 1600, իսկ Վրացիք հազիւ 10–15։ Արդուինի Կաթուղի-*

*նուին Միջնաքաղաքի մէջ։ Միւս եկեղեցիներու մօտ ևս կան մի մի ուսումնարան, սակայն ուսուցչութեան կերպը և ուսմանց տարիքաները, դեռ նախնական հին վիճակէ նոր է սկսեր բարեփոխիլ։ Քաղաքիս թէ եկեղեցիները և թէ ուսումնարանք քարաշէն են, մանաւանդ մայր եկեղեցին լաւ շէնք է և քովը ունի փառաւոր նորաշէն զանգակատուն մը։ Էջմիածնական Հայք՝ որոց թիւը 1000ը կ'անցնի. ունին յատուկ եկեղեցի և վարժարան։*

*Արդուինի գաւառի մէջ գլխաւոր պարապ-*

մանք այգեգործութիւնն է, որ խիստ շահաբեր է։ Ծարունակեալ ջերմ ամառուան շնորհիւ՝ բնակիչք տարին երկու անգամ հունձք կ'ընեն, և սովորաբար յետ լազուտը հնձելու՝ գարի կը սերմանեն։ Բազմաթիւ պարտիզաց մէջ՝ որ սփռուած են Արդուինի շրջակայքը և տարածուած զառիվեր լեռնակողից վրայ կը հասուննան տեսակ տեսակ պտուղներ. խնձոր, տանձ, դեղձ, սալոր, խաղող, կաղին, թութ, ձիթապտուղ. յետինքս կը գրաւեն 20 արտավարէ աւելի տարածութիւն։ Այնքան տարածուած է սա ձիթենւոյ մշակութիւնն և այնքան առատ է ձիթապտուղն, որ տարուէ տարի Արդուինի գաւառէն դուրս կը ղրկուի ի Պաթում և արտաքոյ քան զսահմանս տէրութեան մինչև 100,000 երկլիտր ձիթապտուղ, թէ՛ ուտելու և թէ ձէթ հանելու տեսակէն։ Արդուինի վաճառականութեան բերքերն են նաև ծխախոտ, ընկոյզ, խաղող, թուզ, շագանակ, սերկեւիլ, մեղր, մոմ, և այլն։ Քաղաքին մէջ կը գտնուին կաշեգինաց գործատուններ, որք կը սփռեն տէրութենէ դուրս հազարաւոր այծամորթեր։

Արդուինցիք ընդհանրապէս անուանի են ճարպիկութեամբ և աշխուժութեամբ. լաւ գիտեն ձևանալ ազգասէր և ուսումնասէր, ինչպէս նաև ջերմեռանդ և հոգեսէր։ Արտաքին յարաբերութեանց մէջ ևս խիստ քաղաքավար կը ձևանան։ Հիւրասիրութեան կողմանէ չեն կարող այնչափ պարծենալ Արդուինցիք։ Զգեստուց արտաքին զարդարանքները, թէ՛ արանց և թէ կանանց շլացուցիչ են։ Իգական սեռը կը գործածէ հին յունական տարազով զգեստներ, ճակատն և կուրծքը զարդարելով շարեշար ոսկիներով։ Արանց հագուստները ընդհանրապէս լազերու տարազի նման են։ — Արդուին գաւառի հայաբնակ գիւղերը վեց են. Տանձոտ, Նորաշէն, Սարթէլ, Մամանեղիս, Փիփկուր և և Օքքոթակէր։ Գաւառիս մէջ կան նաև քանի մը հանքեր, ինչպէս Օրճոխ գիւղը ունի մարմարի քարահանք, Մորղուլը պղնձի, իսկ Խօզը երկաթի։ Թթենիներու առատութիւնն և տեղւոյն կլիմայն խիստ յարմար կը թուին շերամապահութեան, սակայն քիչեր կ'զբաղին այս գործով։ Արդուին գաւառի արդիւնաբերութեան վրայ օգտաշատ տեղեկութիւններ հրատարակած է Մշակ գանագան անգամներ։ — Բազմավէպ, 1889, էջ 392–395։ Մշակ, ԺԱ, 75, 173. ԺԳ, 36, 58. ԺԵ, 137։ Եւ այլն։

ԱՐԴՍԽՎԱՆ. — Գիւղ Գուգարաց Թռեղք գաւառի մէջ։

ԱՐԵԱՆ ԼԻՃ. — Կը յիշէ Թ. Արծրունի Կորճէից Որսիրանք գաւառի մէջ։

ԱՐԵԳԱԿՆԱՃԱԳ. — Այս անուամբ բլուր մը կը յիշուի Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ Տաւրոս լերան ստորոտը, արևելեան կողմը։ Յիշատակարանի մը համեմատ, սա ամփոփեցին սուրբ առաքելոց նշխարներն, և վրան եկեղեցի և միանձանց վանք կառուցին, որ է այժմեան Առաքելոց կամ Ղազարու վանքը։

ԱՐԵԳԳԷՄ. — Կը յիշուի Սասնոյ մէջ, տեղեկութիւնք կը պակսին։ — Այս անուամբ փոքրիկ գիւղ մը կայ Խոտրջրոյ վիճակի մէջ։

ԱՐԵԳԻՆ. — Գիւղ Մոկաց աշխարհի այժմեան Սպարկերտ վիճակի մէջ. բնակչաց թիւն 100ի կը հասնի։ 1881 թուին տեղագրութեան մը մէջ գրած կը գտնենք Արագիլ անուամբ գիւղ մը Սպարկերտի մէջ, որ ինձ կը թուի թէ նոյն այս Արեգին գիւղն ըլլալու է։

ԱՐԵԳՈՒՆԻ կամ ԱՐԱԳՈՒՆԻ. — Վիճակ Սիւնեաց աշխարհի Գեղարքունի կամ աւելի Սոդք գաւառի։ Այսպէս կոչուած է արևելեան գիրքովը, ինչպէս նաև յայլազգեաց կը կոչուի Կիւնէյիք։ Կ'ինկնայ Գեղամայ ծովակի արևելեան ափունքը, երկիրը անձուկ է, որովհետև ծովակէն քիչ հեռու կը բարձրանան լերինք և կը պարփակեն վիճակս։ Այդ լեռներէն կը բղխեն քանի մը գետակներ և կարճ ընթացք մը ընելով կը թափին ծովակն։ Վիճակիս գիւղերն՝ որոց անուամբ կը կոչուին նաև գետակներէն շատերը, կը յիշուին իրենց կարգին։ — Սիսական, 76։

ԱՐԵԼԱՆԱՑ ՎԱՆՔ. — Կը յիշուի ԺԵ դարու վերաբերեալ յիշատակարանի մը մէջ։

ԱՐԵՆԻ կամ ՅԱՐԵՆԻ. — Կը յիշէ գիւղս Առաքել Պատմիչ (ԻԱ) Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ Կարբիի մօտ, որ ի հնումն շէն է եղեր և իւր ժամանակ աւերակ և անմարդաբնակ։ Այս գիւղէն էր Սաղմոսավանից Սարգիս եպիսկոպոսը ԺԷ դարու սկիզբները։ Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐԵՆՑ *կամ* ՅԱՐԵՆՑ. — *Գիւղ Մոկաց աշխարհի այժմեան Մոկք գաւառակի մէջ. ունի 100էն աւելի բնակիչ և Ս. Աստուածածնի քարաշէն եկեղեցի մը։*

ԱՐԵՒԲԱՆՈՍ *կամ* ԱՐԵԲԱՆՈՍ. — *Յայսմաւուրք կը յիշեն այս անունով քաղաք մը Վասպուրականի Աղբակ գաւառի մէջ. բայց Խորենացին (Բ. ԼԴ) հետևեալ տողին մէջ որոշ բան մը չի յայտնէ. «Եւ Բարդուղիմէոս առաքեալ՝ որ և կատարեցաւ առ մեզ յԱրեւբանոս քաղաքի»։ Օտարազգի մատենագիրներէն քաղաքս կոչուած է. Ալբանոպոլիս Մեծի Հայոց, Աղվանոպոլիս և Ուրբանոպոլիս։ Խորենացին Տիրամօր պատկերի պատմութեան մէջ Ուրբանոս կ'անուանէ քաղաքս՝ ըսելով «Եւ ինքն սուրբ առաքեալն եկեալ աւետարանել ի Հայս, և կատարեցաւ յՈւրբանոս քաղաքի ի Բարմ անուանեալ տեղւոջն յանուն առաքելոյն»։ Տես* ԲԱՐՄ։

ԱՐԵՒԵԼՔ. *Տես* ԱՐԵՒԻՔ։

ԱՐԵՒԻԿՍ. *Տես* ԾՂՈՒԿ։

ԱՐԵՒԻՐՆԴԱՆ. — *Ամրոց Եփրատացւոց երկրի մէջ, Կուրիս ամուր քաղաքի մօտ։ Եդեսիոյ Բաղտին կոմսը 1117 թուականին եկաւ տիրեց այս բերդիս և շրջակայ վայրաց, որոնք Բագրատ անուն հայ իշխանի մը ձեռքն էին։*

ԱՐԵՒԻՔ *կամ* ԱՐԵՒԵԼՔ. — *Փոքրիկ գաւառ Սիւնեաց աշխարհի հարաւակողմը. սահմանքն են Ար.*[էն] *Կովսական, Հս.*[էն] *Կապան, Ամ.*[էն] *Գողթն գաւառները և Հր.*[էն] *Երասխ գետը։ Գլխաւոր գետն է Մեղրի՝ որ ունի բաւական թուով օժանդակներ. կան նաև ուրիշ մէկ քանի գետակներ որք կը թափին Երասխ։ Ունի բարձր և ցած լերանց շղթաներ, գեղեցիկ վայելուչ ձորակներ և հովիտներ։ Այգիներովն և բազմաթիւ պտղատու ծառերով մեր երկրի արգաւանդ և բարգաւաճագոյն գաւառներէն մին կրնայ ըսուիլ։ Օդը ամառը սաստիկ տաք է և ձմեռն չափազանց ցուրտ, մանաւանդ երբ հովերն կը փչեն շրջակայ բարձրաբերձ լեռներէն։ Բերքերու մէջ առատութեան կողմանէ կը յիշուին մասնաւորապէս շերամ և բամբակ. ունի նաև Կարճաւանի մօտ փոքր արծաթահանք մը։ Գաւառիս ընդարձակութիւնն է հիւսիսէն հարաւ 15 մղոն և գրեթէ նոյնչափ ալ լայնութիւնը։*

*Կը կարծուի թէ ի հնումն առանձին իշխանութեան մը գաւառ կամ վիճակ եղած չէ Արեւիք, վասն զի իրեն առանձին նահապետ կամ իշխան ոք ևս չի յիշուիր, այլ հաւանական է որ մասն եղած լինի ուրիշ ընդարձակագոյն գաւառի մը (Թերևս Գողթան), և ապա զատուելով համարուեր է Սիւնեաց աշխարհի գաւառներէն մին։*

*Սիւնեաց եկեղեցւոյն հարկատուաց ցանկի համեմատ, Արեւիք ունէր միայն 24 գիւղ, զորս կը դնենք աստ, հանդերձ իրենց տրից բաժնովը.*

| | |
|---|---|
| Աղվանք *կամ* Աղուոյ վանք | 7 |
| Կառուտի | 15 |
| Մայրի | 8 |
| Աբկավանք | 8 |
| Մալունու (Մանլեւ) | 8 |
| Տափեար | 8 |
| Մեղրոյ վանք | 20 |
| Լոճավանք. Լճավանք | 30 |
| Որդիշոյ վանք | 20 |
| Լուսկայ վանք | 12 |
| Խոլավանք | 12 |
| Ջուարի վանք | 12 |
| Կարճաւանք | 12 |
| Մոլոշան | 12 |
| Տաշտուն | 12 |
| Կուրավանք *կամ* Կուրօնք | 8 |
| Ագարակ | 8 |
| Մանաղու *կամ* Մանուղու | 8 |
| Մեղ | 6 |
| Տենի | 8 |
| Կորեկնէք | 10 |
| Թաղամայրի | 6 |
| Խոզուշիւղ *կամ* Խոզուղիւղ | 6 |
| Վարդանածոր | 6 |

*Այս գիւղերէն ոմանք, ինչպէս կը տեսնուի, կը բարդուին Վանք բառով, որոնք անշուշտ կրօնաւորաց բնակարաններ եղած են. վասն զի գաւառս որչափ որ անծանօթ և անյիշատակ է քաղաքական պատմութեան մէջ, ընդհակառակն մեր եկեղեցական պատմութեան մէջ նախածանօթն կրնայ համարուիլ՝ քարոզութեամբ սրբոյն Բարթողիմէոսի և իր աշակերտաց. և հաւանօրէն վերը յիշուած Լուսկայ վանքն, իր անունն առած է առաքելոյն Լուսիկ անուն աշակերտէն որ ծանօթ է ի պատմութեան։*

*Օրպելեան Պատմիչ կը յայտնէ, թէ իր*

ժամանակ փոխանակ Արեւեաց՝ երկու անուն կու տային գաւառիս, Դաշտոն և Մեղրի մէջը գտնուած երկին նշանաւոր գիւղերու անուամբ: Մեղրի աւանը գլխաւոր լինելով գաւառիս բոլոր գիւղերէն, իսկ մէջէն վազող գետն և բոլոր երկիրն ևս երբեմն կոչուած է Մեղրաձոր: Տաթեւի թեմին վերջին ցուցակաց մէջ կը յիշուին գաւառիս մէջ երկու վիճակաց անուններ, Մանցրու և Կաքաւաբերդ, որոց մէջ կը յիշուին վերայգրեալներէն զատ հետեւեալ գիւղերն.

| ՄԱՆՑՐՈՒ | ԿԱՔԱՒԱԲԵՐԴ |
|---|---|
| Թօս | Լիճ |
| Աղաւնեակ | Սեւատարա |
| Գոմերանց | Տիկնատափ |
| Ճուանիձոր | Քարն |
| Իշխուն | Նորաշինիկ |
| Նաւըն | Թաղմեծ |
| Մծնաձոր | — Փոքր |
| Կարթամթաղ | — Միջին |
| Մեգրէն | Թխկոտն. Թիկոտն |
| Ափկէս | Լէօք կամ Լեկ |
| Երկաստանց | Կատօն |
| Կուավանք. Կուրուս | Քուչերդ |
| Վանքն | Կալեր |
| Նուշանց | |

Դաւիթ Բէկի պատմութեան մէջ կը յիշատակուին նաև հետեւեալ տեղերը.

| | |
|---|---|
| Գտանիս | Լեւազ |
| Տանրաւեց | Լեչկին կամ Լեշկին |
| Գուղաքար | Քիս կամ Աքիս |

Ալիշան երկու վիճակաց կը բաժնէ Արեւիք, Մեղրաձոր և Կենաւուզ: — Սիսական, 298–308:

ԱՐԵԽՈՑ կամ ԱՐԵԽՈՒ ԲԼՈՒՐ. — Կը գտնուի Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ. կը կոչուի նաև Աւետեաց Բլուր: Հոս կը ճգնէին սուրբքն Անտոն և Կրօնիդէս, Բաբեկեան աղբիւրի մօտ՝ որ կը կոչուի նաև Քաղցրահամ աղբիւր:

ԱՐՋԱՔԱՆ եւս ԱՐՋԱՔԷՆՏ. — Մեծ գիւղ Այրարատայ Նիգ գաւառի մէջ. բնակիչք 1045, յորոց 750ը Հայք և մնացածը այլազգիք: Հայք ունին երկու եկեղեցիներ, մին գիւղին հիւսիսային ծայրը, գերեզմանաց մէջ, կը կոչուի Ս. Գէորգ, որ հնութեամբն խարխըլած լինելով, նորոգուած է ի վերջոյ հաստաբակ քարերով և փայտով ծածկուած: Երկրորդ եկեղեցին նորաշէն է և կը գտնուի գիւղի մէջ. նուիրուած է Ս. Ստեփանոսի:

Գրեթէ գիւղէս քառորդ ժամ հեռու հիւսիսային կողմը, լերանց ծործորաց մէջ կայ մենաստան մը Ս. Աստուածածին Նեղուցի կոչուած, մերձակայ աւերակ Նեղուս գիւղի անուամբ: Այժմ այս վանքս կը կոչուի Արզաքանայ անուամբ: Եկեղեցին փոքր է, անսիւն և գմբեթաւոր, երկու կողմերը ունի մատուռներ կամ աւանդատունք, և արեւմտեան կողմէն գաւիթ մը կը միացուի ընդարձակ կամարակապ ժամատուն մը չորս սիւներով զարդարուած: Արեւմտեան հարաւային անկեան դուռն խիստ ճարտար արուեստիւ և վայելուչ շինուած է, և ունի արձանագրութիւն, բայց երկրաշարժի պատճառաւ քարերը խախտած լինելով անիմաստ կը մնայ: Թերակատար արձանագրութիւն մի ևս կայ տաճարի դրան վրայ 1271 թուականաւ: Տաճարի որմոց վրայ կան նաև նուիրատուաց արձանագրութիւններ: Վանացս միաբանից բնակարանները բոլորովին աւերած են: Տաճարի արեւմտեան կողմը քարընկէց մը հեռու կը տեսնուին գեղեցկաշէն մատրան մը աւերակները, հոն կան նաև գերեզմաններ և խաչքարեր: — Այրարատ, 258:

ԱՐՋԷՆԿԱՆ, ԱՐՋԷՆՃԱՆ. Տես ԵՐԻԶԱ:

ԱՐՋՆ. — Աղձնեաց նահանգի հին գաւառներէն մին, գրուած է նաև Արճն և Աղճն ձեւերով: Օտար մատենագիրք ևս զանազան կերպերով գրած են գաւառիս անունն, ինչպէս Արքանենի, Արզանենի, Արզունե, եայլն: Գաւառիս սկզբնական պատմութիւնն, ինչպէս նաև անուան ստուգաբանութիւնն տակաւին անծանօթ են: Խորենացւոյն պատմութենէն կը տեղեկանանք որ Սանատրայ ցեղէն ոմն Տարաշան երբ կուսակալ գրուեցաւ մեր աշխարհի արեւմտեան հարաւային կողման, այս գաւառն ալ իրեն պարգեւ արուեցաւ: Թ. Արծրունին գաւառս կը համարի նախկին բնակավայր Արծրունեաց տոհմի, և այդ պատճառաւ կը կարծուի, թէ կոչուած են նախ Արզրունիք և ապա ժո-

*փոխմամբ Արծրունիք։ Այս կարծեաց ճըշդութիւնն կամ անճշդութիւնն առանց կարենալու հաստատել, բանք միայն, որ Արծրունեաց ցեղի վերջին շառաւիղներն եւս տիրած են այս գաւառիս։ Ասողիկ կը յիշէ գաւառիս մէջ Ազրուշ անուամբ քաղաք։ Արզն սահմանակից է Տուրուբերանի Խոյթ և Ասպականիք գաւառաց, այժմ կը կոչուի Խարզան։ Երկիրը լեռնային է, ունի նաև գետակներ. բնակիչներն են Հայ և Քիւրդ։ Գաւառիս մէջ կայ այժմ Խարզան անուամբ այլազգաբնակ գիւղ մը (158), որ կը կարծուի թէ լինի հին Արզն քաղաքի տեղը։ Արզնի հայ բնակիչք կորովի են և քաջ։*

*մնացորդներն, ինչպէս նաև հին եկեղեցին։ Պարիսպներէն դուրս հիւսիսային կողմը կան երկու մատուռնք տաշած քարերով շինուած, և գերեզմաններ հանդերձ խաչարձանօք։ Գերեզմանատան մէջ գտնուած խաչքարերու արձանագրութեանց ծանօթ թուականք կը վերաբերին ԺԶրդ դարու։ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց, հետևեալ կերպով կը ստուգաբանէ Արզնի անունն. «Արզնի բառն ստուգաբանի Արային զննի. այն է՝ Արային յետ սպանմանն ի Շամիրամայ՝ տար զննի, բառ որում Շամիրամայ անունով լերան մօտ է գիւղն»։ ԺԵ դարու կիսուն կը յիշուի գիւղիս անունն ճաշոցի մը յի-*



158. Արզն = Խարզան։

ԱՐԶՆ. — *Հին և գլխաւոր քաղաք Աղձնեաց, համանուն գաւառի մէջ։ Որուն դիրքը և տեղն յայտնի չէ, և քննութեան կը կարօտի, թէև յոմանց կը համարուի Խարզան աւանը։*

ԱՐԶՆԻ *կամ* ԱՐԾՆԻ. — *Ի հնումն բազմամարդ և զուտ հայաբնակ գիւղս, այժմ ունի միայն 110 տուն օտարազգի բնակիչներ։ Կ'իյնայ Այրարատայ Կոտայք գաւառի մէջ, Հրազդան գետոյ ձախակողմը, Նուռնուս և Բիգրան գիւղերու մէջտեղ։ Այլազգիք գիւղս կը կոչեն Սարաչլու։ Արզնիի հին մեծութեան վկայք են պարսպաց և բազմաթիւ ամայի տանց աւերակներն և*

*շատակարանին մէջ։ Սուլդան Մուրատի արշաւանաց ժամանակ (1635) իւր զօրքերէն ոմանք բռնելով երկու հայ մանուկներ այս գիւղս կը բերէին, և հանելով Դժարագէմ կոչուած բարձր քարանց գլուխը, մանուկները կը խնդրէին որ քիչ մը ատեն ձեռքերնին արձակեն, և միասին ժայռերու ծայրն ելնելով, անօրինաց ձեռքերէն ազատելու համար իրենք զիրենք վար կը նետեն, և ապա ձորի մէջ թաքնուած քրիստոնեայք վերցնելով մարմինները, կը տանին կը թաղեն Արզնի գիւղը։ Գիւղիս մօտ, ձորի մէջ կան բազմաթիւ քարայրներ, որոց մէջ կը պատսպարուէին Արզնիի բնակիչք այլ-*

ազգի բարբարոսաց ձեռքէն ազատելու համար։ Արզնի թէև շատ անգամներ ենթակայ է եղեր թշնամեաց յարձակմանց և աւերմանց, սակայն բոլորովին հայ բնակիչներէն զրկուեր է դարուս մէջ։ Այժմեան Ասորի յանադաւան բնակիչք, հայկական հին եկեղեցւոյ քարերով կառուցած են իրենց յատուկ եկեղեցի։ — Գիւղիս մօտ կայ Քօս պրիշր կոչուած հանքային ջուր մը, որ քօս և քոր բժշկելու զօրութիւն ունի։ — Այրարատ, 288։ Գեղարքունի, 223–230։

ԱՐԶՈՒՆ. Տես ԱՐԶՆ։

ԱՐԶՐՈՒՄ. Տես ԿԱՐԻՆ։

ԱՐԶՐՈՒՏԻ. Տես ԱՐԾՒՈՒՏԻ։

ԱՐԵՃ, ԱՐԱՃԻՆ կամ ԱՐԱՃ. — Աղուանից աշխարհի սորին գաւառներէն մին, որ մեծաւ մասամբ թրքաբնակ է։ Հայաբնակ գիւղերն են. Խաճաշատ, Քաճդակ, Հաշարիկ, Մազրղոշ, Արեշ, Նեմիրապատ։ Գաւառիս մէջ կան Աղուանից հին բերդերէն երեք հատ։

ԱՐԵՃ, ԱՐԱՃ կամ ԷՐՄԱՆԻ–ԲԱԶԱՐ. — Հայաբնակ գիւղ Աղուանից վերոյիշեալ գաւառի մէջ Արչկաճ գետակի ձախ ափի վրայ, արքունի ճանապարհի մօտ, համանուն թրքաբնակ գիւղի կից։ Նշանաւոր են գիւղիս և շրջակայից սեխն, ձմերուկն, սոխն, սխտորն, վարունգն, սամձն, խնձորն և ընկուզն։ Բնակչաց թիւն կը հասնի 200ի, իրենց բարբառն խառնուրդ մի է Արցախի, Զոկերու և Խոյի բարբառներու. ծերունիք կը վկայեն թէ փոխադրուած են այստեղ մերձակայ Խաղդաճ գիւղէն, որ այժմ աւերակ է։ Գիւղիս եկեղեցին, որ ունի ՉԻԸ (== 1279) թուականաւ կառուցանողի արձանագրութիւն, աւանդութիւնը կը համարի թէ հիմնուած է Եղիշէ առաքեալէն։ Աղուանից Եսայի կաթողիկոսի 1718 թուին հաւաքած արձանագրութեանց մէջ, եկեղեցիս կոչուած է Ուռեկայ տաճար։ Կաղանկայտուացիի պատմածի համեմատ, թէ Եղիշէ առաքեալի մասունքներն գտնուելէ վերջ՝ Ուռեկան գիւղացի Ստեփանոս անուն քահանայ մը առաքեալի գլուխն յափշտակելով փախաւ և տարաւ ամփոփեց իրեն գիւղը, վերոյիշեալ աւանդութիւնն կը հաստատուի։ — Աղուանք, 177–284։

ԱՐԵՊՍՈՒՆ. Տես ԱՐԱՑՎԻՈՍ։

ԱՐԵՏ. Տես ԱՐԻՏ։

ԱՐԸԽՎԷԼԻ. — Այս անուամբ երեք հայաբնակ գիւղեր կան Այրարատայ Շիրակ գաւառի մէջ։ Երկուքը կը կոչուին Արըխվէլի Մեծ եւ փոքր, և կ'ինկնան Նորաշէն գիւղի հարաւակողմը, իրարմէ քիչ հեռու։ Իւրաքանչիւրն ունի Ս. Աստուածածնի եկեղեցի մը. առաջնոյն բնակչաց թիւն է 1013, և երկրորդին 590։ Այս երկին գիւղերու բնակիչք գաղթած են Խնուսի Զէվիրմէ գիւղէն։ Ասոնց մէջ 1837 թուին յայտնուեցաւ աղանդ մը՝ Թոնդրակեցւոց նման, որոց վրայ երկար կը գրէ Ալ. Երիցով Փորձի (Դ տարի, Թ. Ժ, 91–130) մէջ։ — Երրորդ կամ Նոր Արըխվէլի կոչուած գիւղն ունի 500 բնակիչ, և կ'ինկնայ Սարիար Մեծ և Թէօփարլու գիւղերու մէջտեղ, Ալեքսանդրապոլի հիւսիսային կողմը։

ԱՐԸՆՔԱՐ. — Այս անուամբ վայր մի կը յիշէ Փիրղալէմեան, Տուրուբերանի Ագիովիտ գաւառի մէջ, Ասրափ գիւղի մօտերը։ — Զորս Ընկերք, 40–41։

ԱՐԸՆՔԷՐ կամ ԱՐԻՒՆՔԱՐ. — Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Կարնոյ։

ԱՐԹԱՍԻԱ. Տես ԱՐՏԵՍԻԱ։

ԱՐԹԷՔ. Տես ԾՂՈՒԿ։

ԱՐԹԻԳԱՊԱՏ կամ ԱՐԹԻԳՕՎԱ. — Այս անուամբ դաշտ և աւան մը կայ Եւդոկիոյ և Սեբաստիոյ մէջտեղ։

ԱՐԹԻԿ. Տես ԲԱՂՔ։

ԱՐԻԳԻ. — Այլ կերպ գրուած անուն Կիլիկիոյ մէջ գտնուած Արեգին գիւղի և վանքի։

ԱՐԻԳԼԻ. — Լեռ Սիւնեաց աշխարհի Ծղուկ և Ճահապոնիք գաւառաց մէջտեղ։ Կայ նաև համանուն այլազգաբնակ գիւղ մը, լերանս մօտ։ Կը գրուի նաև Արագլի։

ԱՐԻՄԱԿՏՈՍ. — Լեռ և գետ Ծովային Կիլիկիոյ մէջ։

ԱՐԻՏ կամ ԱՐԵՏ. — Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, որ սահմանակից էր Հարժէից և Տամալեկաց գիւղերու, և զոր 907 թուականին Հայկազուն Սոփանեան իշխանները ընծայեցին Տաթեւոյ։ Գիւղիս նախնական վիճակին, ինչպէս նաև վերջին ամայանալուն վրայ տեղեկութիւնք կը պակսին։ Զանազան անգամներ Արիտ

Տաթևի վանքէն օտարացած լինելով, վերըստին սեփհականութիւն է իրեն։ — Սիսական, 246։

ԱՐԽԱՇԱՆ. — Լեռ Սիւնեաց Գեղարքունեաց գաւառի արևմտեան սահմանածայրը։

ԱՐԽՈԽՆԴ. — Հայաբնակ գիւղ Տիգրանակերտի. ունի Ս. Մինաս եկեղեցի մը։ Բնակիչք 30 տուն։

ԱՐԾԱԹԱՀԱՆՔ. — Կը գտնուի Արցախի Ջրաբերդ գաւառի մէջ, Մեհմանանց գիւղատեղիէն կէս մղոնաչափ վեր, լեռնաշղթայի մը հիւսիսային կողմը։ Փորուածներէն կ՚երևի որ ի հնումն գործածութեան մէջ է եղեր հանքս։ 1870ին այստեղ Յոյներ գալով կը վարձեն հանքս և մօտ բնակութիւն կը հաստատեն։ Ըստ իրենց խօսքին, իբր թէ արծաթն կապարախառն լինելով, եղած ծախքերն վճարել կը գոցէ, ատոր համար հանքն այժմ անգործածելի է։ — Արցախ, 215։

ԱՐԾԱԹԱՂԲԻՒՐՔ. — Այսպէս կը կոչուին Այրարատայ Բասեն գաւառի մէջ, Կարնոյ սահմանակից լեռներէն բղխող այն աղբերակունք, որք կ՚սկզբնաւորեն Երասխ գետը։ Ոմանք փարպեցւոյ յիշած Արծաթաղբերքը կը դնեն Կարնոյ հիւսիսակողմը, Արծաթի գիւղի մօտերը։

ԱՐԾԱԹԻ կամ ԱՐԾԸԹԻ. — Հին և անուանի գիւղ Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ, Կարնէն 4 ժամ հեռու՝ հիւսիսային կողմը, Տումլու լերանց ստորոտը։ Նշանաւոր է բարձր դիրքովն և առատ ջրովն. ունի 70—80 տուն՝ յորոց 50ը Կաթողիկեայ Հայք են, 10ը Լուսաւորչական Հայք և 20ը Մահմետականք. իւրաքանչիւր տան մէջ կը բնակին երկու՝ երեք՝ չորս ընտանիք։ Յանցեալումն աւելի բազմամարդ և աւելի ծաղկեալ վայր մը եղած կը թուի, որուն վկայք են աջ ու ձախ ցրուած գեղեցկաձև խաչքարերն և հնութեան պատկանող սիրուն քանդակներու բեկորները։ Ղազար Փարպեցի (454) կը պատմէ թէ 483 թուին Մուշեղ Մամիկոնեան և Ներսեհ կամսարական, որք նիզակակից էին Մեծին Վահանայ, մոլորելով այս կողմերս կը գեգերէին։

Արծաթի՝ Կարնոյ Կաթողիկեայ Հայոց համար մեծ նշանակութիւն ունի և յարգ. գիւղագնացութեան համար հաճոյական վայր մի է։ Գիւղէն քառորդ ժամ հեռու, հիւսիսային կողմը գտնուած ջերմուկն, կը ծառայէ յառողջութիւն այս կողմերու բնակչաց։ Լուսաւորչական Հայք ունին եկեղեցի մը Ս. Նշան, իսկ Կաթողիկեայ Հայոց եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնի։ Վերջինս նշանաւոր է հնութեամբն, և 1½ մետր ստուար պատերովը. երկայնութիւնն է 22 մետր, և լայնութիւնն 11մ։ Ունի միջավայրն իրարմէ չափաւորապէս հեռու 6 քառակիր սիւներ, որոց վրայ հաստատուած է ձեղունը։ Եկեղեցւոյս ներսը և դուրսը որմերու մէջ և առջեր, գետեղուած կամ կանգնուած կան քանդակազարդ հին խաչքարեր, որոնք արձանագրութիւն չունին։ Եկեղեցւոյս մէջ կայ միայն ՌՃՂԹ (= 1750) թուականաւ նուիրատուութեան մը արձանագիրը, քանդակուած սիւներէն միոյն մէջ· հաստատուած՝ քարի մը վրայ։

Արծաթի գիւղն նշանաւոր է նաև իւր կռնակը բարձրացած լեռնակի բարձանց վրայ գտնուած Ս. Լուսաւորչի վանքովն, որ մեծ ուխտատեղի է Կարնոյ Կաթողիկեայ Հայոց։ Ի հնումն սա բաւական մեծ և չէն վանք մը եղած կը թուի, իսկ այժմ մնացած է միայն փոքրիկ եկեղեցի մը Ս. Լուսաւորիչ անուամբ, որուն շուրջը կը տեսնուին հինաւուրց շէնքերու հիմերն և քարերը։ Այս եկեղեցին ալ, իւր հնութեամբն կործանելու վտանգի մէջ գտնուելով, գիւղացւոց գործունէութեամբ և քաղաքացւոց օգնութեամբ, վերջին ժամանակներս նորոգ կառուցուած է հնոյն հիման վրայ։ — Բազմավէպ, ԻԳ. 326—328։ Հանդէս Ամսօրեայ, ԺԳ. 338—340։

ԱՐԾԱԿ. — Կը յիշէ գիւղս Ղ. Փարպեցի Այրարատայ Բագրևանդ գաւառի մէջ։ Այստեղ Ս. Վարդանայ հաւատարիմ նախարարները բռնեցին Ջանդագան ուխտանենգ մատնիչը, և մերձակայ Բերդ-կունք գիւղի մէջ քարկոծեցին։

ԱՐԾԱՓ. — Հին և անուանի բերդաւան Այրարատայ Կոգովիտ գաւառի. Պայազիտէն հեռու է 12 մղոն՝ արևմտեան հիւսիսային կողմը, Զինկիլի լեռնահովտին մէջ, գետակի

մը եզերքը։ Առաջին անգամ գիւղս ի պատմութեան կը յիշուի Զ դարու վերջերը կամ Է՛ սկիզբը, Դուինի գումարուած Արտաշատ կաթողիկոսի ժողովքի մէջ, ուր ժողովականաց մէջ կը յիշուի անդւոյս վանաց երէցն՝ Յովհաննէսիկ։ Արաբացւոց աշխարհակալութեան ժամանակ, նշանաւոր դէպքեր հանդիպած են այստեղ։ Նախճաւանի կողմերէն, 643 թուականին, այլազգեաց գունդ մը գալով բանակեցաւ աւանիս բերդի դիմաց, և պատերազմելով սկսաւ շատ փասներ հասցնել։ Իսկ բերդի մէջինները, Կախանակոոց կոչուած պահուանդէն ծածուկ ճանապարհաւ դուրս ելնելով գացին օգնութիւն խնդրեցին Գառնից բերդէն, և Սմբատ Բագրատունին՝ Վարազ Սահակայ որդին, տուաւ 40 մարդ։ Ասոնք գիշեր ժամանակ մտան Արծափի բերդը, և Իսմայէլացիք գինելով, նոյն ճանապարհով ներս մտան և պահապաններէ 10 հոգի քուն եղած ժամանակ սպաննեցին, և երկրորդ օրն անասելի փասներ հասուցին։ Բայց շուտով արծուաբար վրայ հասաւ Թէոդորոս Ռշտունին, և այլազգեաց դէմ իր հայրենակցաց վրէժն լուծեց։ Այս դէպքէն գրեթէ 800 տարի վերջը դարձեալ կը յիշուի Արծափ իբրև ամուր բերդ։ Դարուս (ԺԹ) սկիզբը, և Ռուսաց Երևանը նուաճելէն առաջ, Արծափեցի կարիճ մը Մանուչ Բաննան, հետը միաբանած ուրիշ հայ քաջեր, Պարսից և Քրդաց վրայ սարսափ կը ձգէր. բայց ի վերջոյ տասը գաւաճան Պարսիկներէ յանկարծակի շրջապատուելով, անոնցմէ վեցը գետին տապալեց և ինքն ալ ինկաւ։ Ռուսաց և Թրքաց վերջին պատերազմի ատեն, Տէր Ղուկասով Պայազիտը նուաճելէ վերջ, բանակը զետեղեց գիւղիս մէջ (1877ին) մայիսի սկիզբը, և նոյն ամսոյ 8 ին գնաց նուաճելու Ծաղկոտան կողմերը։ Այժմ Արծափ ունի գրեթէ 50 տուն հայ բնակիչ։ Գիւղիս սահմանաց մէջ կը յիշուին Ս. Գէորգ աւերակ վանքը, և Ծաղկավանք։ — Այրարատ, 509—510։

ԱՐԾԸԹԻ. Տես ԱՐԾԱԹԻ։

ԱՐԾԻԱՍ. — Դաշտ մի է փոքր Հայոց Կիզիստրա քաղաքի մօտ, ուր Հոռոմք բանեցին Հայոց Գագիկ թագաւորը և սպաննեցին։

ԱՐԾԻՒ, ԱՐՋԻՒ. — Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ, Հարժիք գիւղի արեւմտեան հիւսիսային կողմը, զոր 839 թուին Դաւիթ եպիսկոպոսը գնեց Սիւնեաց Փիլիպպոս դահերէց իշխանէն, Բերդ-կանտերկչ գիւղի հետ՝ 10000 դրամով։

ԱՐԾԿԷ, ԱԼՃԱԽԱԶ կամ ԱՏԻԼՃԷՎԱԶ. Գղ. ARDZGUÉ. — Վանայ նահանգի գաւառներէն մին, որ կը համապատասխանէ հին Տուրուբերանի Խորխոռունեաց գաւառի մէկ մասին։ Կ՚ինկնայ Խլաթու, Պուլանըխայ, Մանազկերտի և Արճէշի մէջտեղ, հարաւային կողմէն սահմանափակուած է Վանայ ծովակով։ Երկիրը լեռնային և բլրային է առհասարակ, միայն ծովու եզերքներն դաշտային են, և սքանչելի տեսարաններ կ՚ընծայեն ճանապարհորդի աչաց։ Կլիման բարեխառն է և հողն բարեբեր. ունի բազմաթիւ պտղատու ծառեր, յորս տատ են ընկուզենիք և ծիրանիք։ Ընտիր է գաւառիս ցորենն, յորմէ ամէն տարի աչագին քանակութեամբ, նաւերով կը տանին կը թափեն Վանայ հրապարակի վրայ, ուր արգարև սով կը տիրէ, երբ Արճիշու և մանաւանդ Արծկէ գաւառիս ձիւնի նման սպիտակ ցորենի շեղջերն չանձնուին յաչս ժողովրդեան։ Գաւառիս երկայնութիւնն Արեւելքէ Արեւմուտք կը համարուի 10 ժամ և լայնութիւնն՝ Հարաւէ Հիւսիս 6—7 ժամ։ Սիփան-Մասիք մեծ և գեղեցիկ լեռը նստեր է գաւառիս վրայ, պարզելով թեւեր և ոտները մինչև Արճիշու, Մանազկերտի և Պուլանըխայ սահմանները։ Նոյն հսկայ և հրաբղխային լերան գլուխը 7—8 արտի ընդարձակութեամբ լեռնադաշտ մ՚է, ուր ստէպ ցուրտ կը լինի նոյն իսկ Վարդավառի ամենատաք եղանակին։ Սիփանայ աջ թեւին տակը սկաւառակաձև հովիտ մը կայ Սուրբն անունով, որ աւազան է մշտաբուղխ ջրոց, և երկրին ձիոց, խաշանց և զուարաց պարարտ ու զուարթ արօտատեղի։ Լերանս ձեան ջուրն վերի և վարի Սիփան կոչուած հայաբնակ գիւղերու ջրաղացներն կը բանեցնէ, և ջուր կու տայ բնակչաց, որոնք առանց Սիփանայ կեանք չունին։ Գաւառիս բնակիչներն են Հայք, Թուրքք, Չէրքէզք և Քուրդք՝ զանազան ցեղերէ։

*Վ. Բինէի համեմատ գաւառս ունի 44 գիւղեր, և 12697 բնակիչք, հետևեալ ազգերէն.*

| | | | |
|---|---|---|---|
| *Հայք* | *Լուսաւորչականք* | 8000 | *հոգի* |
| | *Կաթողիկեայք* | 93 | » |
| | *Բողոքականք* | 45 | » |
| *Մահմէտականք* | *Թուրքք* | 145 | » |
| | *Քուրդք* | 4000 | » |
| *Հրեայք* | | 74 | » |
| *Այլ և այլք* | | 540 | » |
| | *Գումարն* | 12697 | *հոգի։* |

*Բայց այս թիւերն, մանաւանդ նկատմամբ Հայոց, խիստ նուազ են, վասն զի 1880 թուականէն վերջը կատարուած վիճակագրի մը համեմատ, միայն գաւառիս Հայոց թիւն կը հասնի 15–16000ի։ Հայաբնակ գիւղերու թիւն հազիւ 30ի կը հասնի, սակայն ամէնքն ալ, բաղդատմամբ այլազգեաց գիւղերու, բազմամարդ են։ 1858 թուին Վասպուրականի Արծրոյ մէջ հրատարակուած վիճակագրութիւնն, գաւառիս Հայոց գիւղերն կը հաշուէ 17, որք են հետևեալք.*

| | |
|---|---|
| Արծկէ (*քաղաքաւան*) | Արջրայ (Առջրա) |
| Յուռու | Գարաքէշիշ |
| Նորշնչող | Վիճակացուկ |
| Գաշկուն (Տաշխուն) | Առնջկոյս |
| Էգէծոր | Յառխն (Առխն) |
| Կժխորշէն | Խոռանց |
| Պէշնագոմեր | Վերին Սիփան |
| Գօզոխ (Կեազուխ) | Վարին Սիփան |
| Կոճեր | |

*Իսկ առանցմէ զատ յիշուած գիւղերն են՝ Մանիկ, Բարկատ, Կոշգել, Մոշրխոշս, Ածոշ—Աղբիշր, և այլն։ Գաւառիս Հայ բնակիչք առաւելապէս կ՚զբաղին երկրագործութեամբ, և արմտեաց մէջ ամենէն աւելի ցորեան կը ցանեն. կը պահեն նաև քիչ քանակութեամբ ոչխար։ Մահմէտականք մեծաւ մասամբ խաշնարածք են, և երկրագործութեամբ զբաղողներ խիստ քիչ են։ Գաւառիս վանքերն երեք են, հռչակաւոր է* Սքանչելագործ վանքը։ *Վերջին դէպքերու ժամանակ, գաւառիս թէ՛ Արծկէ գիւղաքաղաքի և թէ վերոյիշեալ գիւղերու Հայ բնակիչք մեծ զոհեր և վնասներ ունեցան, վանքերն և եկեղեցիներն ալ աւերի առնուեցան։*

ԱՐԾԿԷ *կամ* ԱՐԾԽԷ. — *Հին աւան կամ քաղաք Վանայ ծովակի հիւսիսակողմը, զոր մեր պատմիչները կը դնեն Տուրուբերանի Բզնունեաց գաւառի մէջ, որ ըստ նոր տեղագրողաց, սահմանակից է Բզնունեաց և մասն՝ Խորխոռունեաց։ Այժմ գլխաւոր քաղաքաւան է վերոյգրեալ համանուն գաւառի. Վանէն հեռու է 165 հազարամետր, ծովով երթևեկութիւնք կը կատարուին 4–5 ժամուան մէջ։ Գեղեցիկ և նկարչական է ծովեզերեայ դիրքովը, զարդարուած՝ մրգատեր ծառաստաններով և առատ ու վճիտ ջրերով։ Բնակչաց թիւն այժմ կը համարուի 2457, հետևեալ կերպով բաժնուած.*

| | | |
|---|---|---|
| *Մահմէտականք (Թուրքք և Քուրդք)* | 1245 | *հոգի* |
| *Հայք (Լուսաւորչականք, Կաթողիկեայք և Բողոքականք)* | 1138 | » |
| *Հրեայք* | 74 | » |
| *Գումարն* | 2457 | *հոգի։* |

*Աւանիս սկզբնաւորութեան ժամանակն և հին պատմական դէպքերն ծանօթ չեն։ Խորենացին և այլք կը յիշեն սա՝ իբրև Հայրենիք Մուշմակ հակառակաթոռ կաթողիկոսի։ Տաս պատերազմներու ենթակայ եղած է Արծկէ զանազան ժամանակաց մէջ, և իր ամուր դիրքովն երբեմն դիմադրած թշնամեաց և երբեմն նուաճուելով, տխուր և սրտաճմլիկ տեսարանաց ենթակայ եղած։ Անուանի է աւանիս առումն ի Տուղրիլայ, ԺԱ դարու սկիզբը, որ շատ մարդիկ կոտորեց և բազմաթիւ գերիներ տարաւ։ Նոյն ժամանակները, ինչպէս կ՚երևի Լաստիվերտցիի (Գլ. ԺԶ) գրածէն, Արծկէ բարգաւաճ վիճակի մէջ կը գտնուէր՝ և անուանի էր իր անառիկ և ամուր բերդովը։ Կրկին բերդեր ունեցեր է աւանս, մին լերան ստորոտը դէպ ի ծովեզերքը՝ որ շրջապատ պարսպի հետ, ծովու ալիքներէն բոլորովին կործանած է և ջրոյ տակ ծածկուած. և միւսն մեծ քարայերան գագաթը՝ որ թէև մեծաւ մասամբ կանգուն է, բայց ամայի վիճակ մ՚ունի։ Վերնաբերդէն մինչև ծովեզերքը կ՚իջնեն հինաւուրց պարիսպներն։ Աւանիս հին մասին մէջ կը տեսնուի Հայկական հին եկեղեցի մը և նոյնպէս հին մզկիթ մը։ Յիշատակարանաց մէջ կը յի-*

շուրջ Արծկէի կրշին եկեղեցիք, Ս. Աստուածածին և Ս. Նշան, անշուշտ առնցմէ մին լինելու է այդ եկեղեցին, որ յագգային քննուած չէ տակաւին։ Արծկէի շէնքերը և կրպակները գիւղական բնակարանաց հանգոյն, խեղճ երևոյթ ունին։ Հայոց նիւթական և բարոյական վիճակը ողորմելի է։ Աւանիս մօտ՝ հիւսիսային կողմը Սիփանայ մէկ կողին վրայ կառուցուած է հռչակաւոր վանքն՝ ի հնումն Երաշխաւոր կոչուած, և այժմ Աքանչելագործ։ Մեծ ուխտատեղի է վանքս, յորում կը պահուի, ըստ աւանդութեան Քրիստոսի մանկութեան ժամանակի լուացման տաշտի մի փոքրիկ մասն։ Այս սուրբ նշխարը, մահտարաժամի և փոխադրական հիւանդութեանց ժամանակ բոլոր երկիրը կը շրջեցնեն։ — Ստորգր. Հին Հայ. 120—1։ Տեղգր. Ուղևորութիւն, Գ. 36—42։ Համով Հոտով, 95—6։ Եւ այլն։

ԱՐԾԿԷՈՑ ԿՂԶԻ, — Կղզեակ Վանայ ծովակի հիւսիսային արևմտեան կողմը, Արծկէ աւանի դիմաց, յորում նշանաւոր էր Ս. Ստեփանոսի մենաստանը, որ Ցիպնա եւս կը կոչուէր։ Թովմաս Մեծոփեցի ստէպ կը յիշէ այս անապատս՝ որ կոչուած է նաև Դաստակ՝ Ս. Ստեփանոս Նախավկայի դաստակի նշխարն իւր մէջ պահուելուն համար։ Այս մենաստանի մէջ ծաղկեցաւ Գրիգոր Խլաթեցին՝ որ Ցայսմաւուրքները ճոխացուց, և ուրիշ գիրքեր յօրինեց, որ և 1455 թըւականին Քրդերէն սպաննուեցաւ։

ԱՐԾՆ կամ ԱՐՁՆ. — Ի հնումն հռչակաւոր քաղաք և շահաստան Բարձր Հայոց Կարնոյ գաւառի մէջ, որոյ մնացորդներն և աւերակներն այժմ կը տեսնուին Գարարգ կամ Խարարգ հայաբնակ գիւղի շրջակայքը։ Կ'ինկնայ Կարնոյ հիւսիսային արևմըտեան կողմը $3^1/_2$ ժամ հեռու, և Սեաւ ջրոյ (Գարասու) աջակողմը, ծովու երեսէն բարձր է գրեթէ 6000'։ Ոչ կառուցման ժամանակն կը յիշուի և ոչ դէպք մը առաջին դարուց մէջ։ Ցոյնք կ'անուանեն (Արծէ Ἄρτξε), և Թուրքք Էրզն։ Կ'երևի թէ ԺԱ դարուն շատ ծաղկած է վաճառականութեամբ և ճոխութեամբ, վասն զի կ'ըսեն, թէ նոյն դարու կիսուն ունէր 300000 բնակիչ և 800 եկեղեցի, որոց տեսուչ կը յիշուի Դաւրուէ անուն քորեպիսկոպոս մը։ Կոստանդին Մոնոմախոս կայսրը հրամայեց Պետրոս կաթողիկոսի նստել այս քաղաքս, որ և մեծահանդէս կատարեց ջրօրհնեաց և Աստուածայայտնութեան տօնը։ Լաստիվերտցին՝ որ ականատես եղած է Արծնի ուրախ և տխուր օրերուն, և իրեն քաղաքը կ'անուանէ, մեծ գովեստիւք կը խօսի անոր վրայ, որուն խօսքերէն ի մէջ բերենք հետևեալքը. «...Հայակապ և ականաւոր էր (Արծն) ամենայն աշխարհաց, իբրև զքաղաք՝ որ ի վերայ լերին կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր... նման իմն էր նորահարսն կնոջ, որ գեղոյն վայելչութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն... վաճառականք՝ եկեղեցւոյ շինողք և զարդարիչք, կրօնաւորաց օթևանք և հանգուցիչք, և առ աղքատս ողորմածք և դարմանիչք... փառաւորք և օծողք թագաւորաց։ Եւ իբրև ակն մի պատուական լուսազեղ պայծառութեամբ փայլէր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեւին գեղեցիկ, ամենեւին զարդարուն»։ Իսկ Մատթէոս Ուռհայեցի (Ա. ՀԳ) քաղաքիս համար կ'ըսէ, թէ ունէր «...անհամար չափս ոսկւոյ և արծաթոյ և դիպակաց» որոց աւարառութեան համար 1049 թուականին Սելճուքեան Թուրքաց Տուղրիլ սուլտանի զօրքերն յարձակեցան քաղաքիս վրայ, «...և քաղաքացիքն տեսեալ զզօրս այլազգեացն՝ միաբան ի պատերազմ ելեալ, և խմբեցաւ շուրջ զեզերօք քաղաքին սաստիկ և ահաւոր պատերազմն. և զմեծ ժամս աւուրն զմիմեանս կոտորէին, և արեամբ լցան անդաստանքն... և ի բազմութենէ անօրինացն ձանձրացան զօրք քաղաքին և ի փախուստ դարձան, և այլազգիքն որով յարձակեցան ի վերայ քաղաքին». բնակիչներէն քիչեր խոյս տալով ապաստանեցան Կարնոյ քաղաքը, այլք կռուելով կոտորեցան, և ոմանք ալ տանիքներէն քարեր կը նետէին, անոր համար թշնամիք քաղաքին չորս կողմէն կրակ տուին և «օգոյն ձեռնտուութիւն եղև կործանման աւուրն. զի հողմ ուժգնակի շնչեցեալ՝ բորբոք արկանէր հրատին, մինչև ծուխն ծառացեալ յերկինս հասանէր... ամենայն քաղաքն լի էր զիակամբք անկելոցն. վաճառափողոցք, նրբափողոցք և ընդար-

ձակ սրահք»։ Նոյն օրուան ահաւոր պատերազմի մէջ 140 կամ 150000 հոգի ի սուր և ի հուր մաշեցան, յորս և 150 քահանայք. բոլոր քաղաքին ճոխութիւնը և եկեղեցեաց սպասներն աւարի առնուեցան։ Միայն Դաւրոշի քորեպիսկոպոսի հարստութեան համար կ'ըսեն, թէ «... 40 ուղտոյ բարձու գանձատուն նորա, և վեց գիհ եղանց եղանէին ի տանէ նորա»։ Այս ահաւոր կոտորածին համար կը կարծուի, թէ Արծն յայլազգեաց կոչուեր է Գարարզ կամ Գարա—Արզ, այսինքն Սեաւ Արծն, համագոյն Սերաստիոյ մօտ եղած Սեաւ—Հողերուն եւ Տիգրանակերտի մօտ Սեաւ—Աւերակին։ Վերյիշեալ պատերազմի ժամանակ, Յոյնք Հայոց հետ թշնամացած լինելով, բոլորովին անփոյթ եղան օգնելու։ Բայց Արծն կը թուի թէ քիչ տարի վերջ, վերստին աւան դարձած է փախստականներէ, վասն զի եօթ տարի վերջը, այլազգի ասպատակողները Բլուր գիւղի վրայ դիմած ժամանակ, հոն ապաստանած էին Արծն աւանի բնակիչք։ Քաղաքիս այնչափ թշուառութեանց ենթակայ լինելուն գլխաւոր պատճառն էր իր անպարիսպ և ոչ պաշտպանեալ դիրքը։ Մանրագննին քննութեան և հնախօսական պեղմանց կը կարօտին Գարարզ և մերձակայ Վաղաւեր և Ղուշճի գիւղերու սահմանքն։ — Լաստիվերտցի, 43, 53, 57, 62, 85, 109։ Սոորգր. Հին Հայ. 35—36։ Եւ այլն։

ԱՐԾՆԻ. Տես ԱՐԶՆԻ։

ԱՐԾՈՒԱԲԵՐ ՎԱՆՔ. — Վարդան աշխարհագիր կը յիշէ մենաստան Արճիշոյ գաւառի մէջ։ Կը գտնուի Սոսկուն գիւղի մօտերը։ — Այս անուամբ մատուռ մը կը յիշէ Հ. Ինճիճեան, Մշոյ Ս. Յովհաննէս վանքի մօտ, մէջը արծուէ մը բերուած հին աւետարան մը պահուելուն համար, այսպէս կոչուած է։

ԱՐԾՈՒԱՆԻԿ կամ ԱՐԾՈՒԵՆԻԿ. — Գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի մէջ, և գլխաւոր տեղի համանուն հասարակութեան։ Բնակիչք՝ 855, բաժնուած 98 տան, ամբողջ հայ։ Արծուենիկի հասարակութիւնն ունի հետևեալ երեք հայաբնակ գիւղերն. Միշքեյաճ, Զափնի և Սեւաքար։

ԱՐԾՈՒԱՔԱՐ. — Հին անուն այժմեան հայաբնակ Ղշլաղ գիւղի՝ որ կ'ինկնայ Սիւնեաց Գեղարքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի արեւմտեան կողմը, Նոր—Պայազիտ գիւղէն՝ երկու մղոն հեռու, գետաձորի մը արեւելեան եզերքը։ Ունի գրեթէ 1100 բնակիչ, բաժնուած 115 տան։ Գիւղիս եկեղեցին անշուք է, կը կոչուի Ս. Աստուածածին։ Յիշատակաց արժանի են Արծուաքարի հանդէպ, գետի միւս ափունքը՝ հին կամրջի մօտ գտնուած խաչքարերն, որոց վրայ կան հայկական արձանագրութիւններ ԺԶ դարու վերաբերեալ, և հնագոյններ՝ առանց թուականի։ Գիւղիս սահմանները, ծովի մօտ կայ Արծուաքարէլ անուամբ վանք մը, որոյ արձանագրութիւնն եղծուած լինելով, շինութեան թուականն յայտնի չէ։ — Գեղարքունի, 491—493։

ԱՐԾՈՒԻՔ. Տես ԱՅԾԵԱՑ ԲԵՐԴ։

ԱՐԾՈՒԻԿ. Տես ԴԱԼԱՐԻՍ։

ԱՐԾՍԱՆԱՅ ՋՈՐ. Տես ԵՄԱՆՈՒ ՋՈՐ։

ԱՐԾՐՈՒՆԻՔ. ARDZOUNIK. — Նշանաւոր նախարարական տոհմ՝ սերած Ասորեստանցւոց Սենեքերիմ թագաւորի Ադրամելէք որդիէն, որ իւր Սարասար եղբօր հետ զհայրն սպաննելով փախաւ ի Հայս։ Այս նախարարութիւնն հաստատեց Վաղարշակ Ա, և իրենց պաշտօնն էր արծիւ տանել թագաւորի դիմացէն, և ասկից ծագած կը համարուի իրենց անունն Արծրունիք կամ Արծիւ—ունիք, թէ և իրենց անուան ծագման ստուգաբանութիւնն ուրիշ կերպերով ալ կ'ըսեն։ Իրենց նախկին բնակութեան տեղն էր Աղձնեաց աշխարհի մէջ, որոյ Արգն գաւառի անուամբ Արգրունի կոչուած կը համարուին։ Այս նախարարական տոհմէն շատ անուանի և քաջ իշխաններ եղան, ինչպէս նաև թագաւորներ։ — Գագիկ Արծրունի իշխանը Ժ դարու մէջ շատ զօրանալով և Հայոց Բագրատունի թագաւորաց դէմ ելնելով՝ Վասպուրականի մէջ առանձին թագաւորութիւն հաստատեց 908ին, որ է Արծրունեաց թագաւորութիւնը։ Արծրունի թագաւորաց յաջորդութիւնն հետևեալ կարգաւ աւանդուած են մեզ պատմիչք. Ա. Գագիկ, Բ. Դերենիկ Աշոտ՝ որդի Գագկայ, Գ. Աբուսահլ Համազասպ՝ որդի Գագկայ՝ եղ-

բայր Դերենկան, Դ. Աշոտ Սահակ որդի Աբուսահլի, Ե. Գուրգէն Խաչիկ՝ եղբայր Աշոտի՝ որդի Աբուսահլի, Զ. Սենեքերիմ Յովհաննէս՝ եղբայր Գուրգէնի, որ 1021 թուականին երկիրը Յունաց տալով, փոխադրուեցաւ ի Սեբաստիա, ուր թագաւորեցին յետ Սենեքերիմայ՝ Դաւիթ Արծրունի, Ատոմ և Աբուսահլ։ Այս թագաւորութիւնս վերջացաւ 1070 ին։ Արծրունեաց տոհմի ծագման, անուան, պաշտաման, իշխանութեան, թագաւորութեան, երկրի, ոստանի, ձմերոցի, և երեւելի անձանց վրայ, փափաքող կարող են օգտաշատ տեղեկութիւններ գտնել, Հայաստանի Հնախօսութեան Բ հատորի 109–121 էջից մէջ։

ԱՐԾԻՒՈՒՏԻ կամ ԱՐՋՐՈՒՏԻ. — Այրարատայ Բագրեւանդ և Գաբեղէնք գաւառաց մէջտեղ բարձրացող Աղ–պուղաղ կամ Ծաղ–կոց կոչուած լերանց մէջ բարձր կատար մ'է։ Լերանս սահմանները կան շատ լքուած և ամայի գիւղեր։

ԱՐԿԱԴՈՒԿԵՐՏ. Տես ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐԿԱԶՆ կամ ԱՐԿԱԶԱՆ. — Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, Մալիշկա գիւղի հիւսիսային կողմը 5 վերստ հեռաւորութեամբ։ Շրջապատուած է ծաղկազարդ լեռներով, օդն առողջարար է և ջուրն պատուական։ Արկազու բնակիչք այժմ այլազգի են 50 տնուոր, և ըստ իրենց հնչման գիւղս կը կոչուի Արգեազ։ Գիւղիս մօտ է ի հնումն նշանաւոր Աւագ ակն կոչուած առատաբուղխ աղբիւրը, որ շատ արտեր և այգիներ կ'ոռոգէ, և ջրաղացներ կը դարձընէ Մալիշկայէն սկսեալ մինչեւ Մոզ գիւղաքաղաքի աւերակները։ — Արկազէն քիչ հեռու հարաւակողմը կը գտնուի Ս. Խաչ վանքը, որ հռչակաւոր ուխտատեղի է այս կողմանցս, և ծանօթ է Արգեազու Ս. Խաչ անուամբ։ Տեղական աւանդութիւնն կը համարի որ կենաց փայտի մէկ մասն՝ և այն Հացունեացը՝ զոր Սիւնեաց Բիւրեղ տիկինը ընդունած էր Հերակլ կայսրէն, թաղուած է վանացս եկեղեցւոյն որմոյն տակ։ Այժմ եւս թէ և կայ սուրբ Խաչի մասն պահուած հարաւային խորանի մէջ խաչքարի տակ, սակայն պատմական ստոյգ տեղեկութիւնք կը պակսին հաստատելու համար թէ, այդ մասունքն նոյն ըլլան Հացունեաց խաչի հետ։ Ծանօթ է նաեւ վանացս սկզբնական պատմութիւնն. միայն Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանցի ճանապարհորդութեան գրոց Բ հատորի 132 էջէն կը տեղեկանանք, որ 1857 թուականին, այժմեան վանքի տեղը կայ եղեր հին եկեղեցի մը. «Շինուածքն է միջակ՝ կառուցեալ ի կոփածոյ քարանց, որոյ երկայնութիւն վեշտասան քայլ, և լայնութիւնն՝ չորեքտասան։ Յաջմէ և յահեկէ սեղանոյն գոն աւանդատունք»։ 1868 թուին Գէորգ Դ կաթողիկոսի հրամանով սկսած են դրամ հաւաքել, կառուցանելու համար հին եկեղեցւոյ տեղ այժմեանը։ 1872 թուին նոր եկեղեցւոյ շինութիւնն աւարտելով Ս. Խաչի տօնին օրը հոկտեմբերի 10ին, խուռն բազմութեան ներկայութեամբ, կ'օծէ զայն Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանց։ Եկեղեցիս կառուցուած է կապտագոյն՝ բայց փխրուն սրբատաշ քարերով, զորս բերած են Մալիշկա գիւղի մօտի քարահանքէն։ Ինչպէս պատկերի մէջ կը տեսնուի (թ. 159), ունի բարձր գմբէթ, չորս ստուար սիւներու վրայ հաստատուած. երեք դուռն հիւսիսային, արեւմտեան և հարաւային կողմերը. 12 լուսամուտներ՝ իւրաքանչիւր կողմերը երեք երեք հատ։ Գմբէթն իր շուրջը ունի միաշար պատուհաններ, և ծայրը կայ երկաթեայ խաչ։ Աւագ խորանը մեծ է և բեմը լայն, որոյ աստիճանները երկու ծայրերէն են։ Երկու կողմնակի խորաններէն հարաւայնոյն մէջ զետեղուած են վերոյիշեալ Կենաց փայտի մասունքը։ Տանիքը ծածկուած լինելով աւազախառն կրամածով, անձրեւի ժամանակ ջուրը առաստաղէն կը կաթէ եկեղեցւոյ մէջ. թէ և սալաքարով ծածկելու խորհուրդ յղացուած է, սակայն գործադրութիւնը՝ կարծեմ տակաւին եղած չէ։ Թէ՛ ներքին և թէ արտաքին կողմը արձանագրութիւնք չկան։ Զանգակատուն չունենալով՝ Քեշիշքեանդու Գրիգոր քահանայի վանացս նուիրած միակ զանգակն, կախուած է եկեղեցւոյ արեւմտեան դրան առջեւ։ Եկեղեցւոյս գաւիթը փոքր է և քառակուսի, շրջապատուած հասարակ քարեայ պարսպով, տեղ տեղ բոլորովին քանդուած. պարսպի հարաւային մասը ի հնուց շինուած է։ Պարսպէն ներս կը մտցուի երկու գանե-

րով, մին հիւսիսային և միւսն արեւմտեան կողմէն։ Գաւթի մէջ հիւսիսային, արեւմտեան և հարաւային պարսպապատին կից կառուցուած են միայարկ, քարաշէն բայց խեղճ ու նորոգութեան կարօտ սենեակներ, ուխտաւորներու համար։ Այս սենեակներէն հա-



159. Արկածի վանքը Ս. Նշան եկեղեցին։

գիւ մէկ քանին կը ծառայեն ուխտաւորաց, ոմանք ալ դարձած են ախոռ կամ յարդանոց, իսկ մնացածներն ալ վանքի միաբանութեան, որ կը բաղկանայ վանահայրէ մը, մէկ երկու տիրացուէ և քանի մը ծառաներէ։ Հիւսիսային պարսպի կից արտաքուստ կառուցուած են բաւական թուով միաշար, փոքրիկ և խարխուլ խանութներ, որոնք վարձու կը տրուին վաճառականաց, Ս. Խաչի ուխտի հանդիսաւոր օրերը։ Հարաւային պարսպէն դուրս քարակոյտներու մէջ կայ խաչքար մը ՉԾԳ (= 1304) թուականաւ արձանագրութեամբ. այս խաչքարն է անշուշտ այն երեք գեղեցկաքանդակ խաչարձաններէն մին զորս տեսած է Ջալալեան հին եկեղեցւոյ արեւմտեան դրան մօտ։ Ըստ Ջալալեանի վանացս մէջ էր Սուրբ Քրիստափորի անյաղթ զօրավարի սենեակն, յորում

*ամփոփուած էր նոյն սրբոյն նշխարքը. նոյն սենեկի մէջ առ ժամանակ մի հանգուցած են նահատակ Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսի մարմինը, ԺԳ դարու վերջին քառորդի մէջ։*

*Վանքս Վայոց ձորի մէջ առաջինն է իր բազմաթիւ ուխտաւորներով՝ որոց թիւն կը հասնի մինչ 6000ի. ուխտագնացութեան օրն է Ս. Խաչի տօնի հոկտեմբերի 8ը կամ 11ը։ Ուխտաւորները կու գան մեծաւ մասամբ Վայոց ձորէն, Շարուրէն, Երեւանի, Էջմիածնի և Սուրմալուի գաւառներէն, Նոր Պայազիտի, Նախիջեւանի, Զանգեզուրի, Շուշւոյ և այլ կողմերէ։ Այս ուխտաւորաց հետ կու գան նաեւ ոչ սակաւ այլազգիք, ոչ այնչափ ուխտի որչափ կողոպուտի։ Քաջբերունին՝ որ տեղւոյս նկարագիրն ըրած է ընդարձակօրէն, ուխտագնացութեան վրայ խօսելով՝ կը յիշէ նաեւ ուխտաւորաց կրած նեղութիւններն, թէ՛ ի ճանապարհին և թէ վանքի շուրջն՝ պարիսպներէ դուրս բնակած ժամանակ։ Ուխտաւորաց նուէրներու մէկ մասն ամէն տարի կը ղրկուի յԷջմիածին։ — Արկազան գիւղի հարաւակողմը, բլրոյ մը գագաթը, կայ քարաշէն փոքրիկ եկեղեցի մը (7 քայլ երկ. 5 լայն) գեղեցիկ զրուագներով, որ այժմ քայքայած վիճակի մէջ կը գտնուի։ Ունի մի քանի արձանագրութիւններ ԺԳ—ԺԴ դարուց վերաբերեալ. անթուական արձանագրութենէ մը կը յայտնուի թէ այս մատրան տէրն կամ կառուցանել տուողն եղած է Պռոշ իշխանը։ — Սիսական, 118–119։ Արարատ ամսագիր, 1889, 165–183 և 227–233։ Հնութիւնք վանօրէից Թ. 274։ Եւ այլն։*

ԱՐԿԱԹԱԼՈՒ ՇԷՆ. — *Հայաբնակ գիւղ Արցախի Վարանդայ գաւառի, Շուշու գիւղի մօտ, հովտանման ձորակի մը մէջ։ Բնակիչք 250, ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը։*

ԱՐԿԵՆՑ. *Տես* ՅԱՐԿԵՆՑ։

ԱՐԿՆԻ, ԱՐՂԸՆԻ *կամ* ԱՐՂԱՆԱ. Գղ. ARGHANA. Թ. ارغنى. — *Ի հնումն նշանաւոր և ամուր բերդ Չորրորդ Հայոց Պաղին գաւառի մէջ. իսկ այժմ գլխաւոր քաղաքաւան Տիգրանակերտի համանուն գաւառին։ Ըստ հնախօսից բեւեռաքանդակներու մէջ Արքանա կոչուած է քաղաքս, և ըստ Լատինաց Արսինեա* (Arsinia)*։ Կառուցուած է Քօղաղ լերան կողին վրայ գեղեցիկ դիրքով. ծովու երեսէն բարձր է 2884', և կը նայի Տիգրանակերտի դաշտին վրայ։ Զառիվայր դրից համեմատ բաժնուած է Վերին, Միջին և Ստորին թաղերու կամ մասերու։ Բնակիչք են 6150, հետեւեալ կերպով բաժնուած.*

| | | |
|---|---|---|
| Հայք . . . . | Լուսաւորչականք | 2000 հոգի |
| | Բողոքականք . | 525 » |
| Մահմէտականք | Թուրքք . . . . | 1625 » |
| | Քիւրդք . . . . | 1000 » |
| Յոյնք . . . . . . . . . . . . . . | | 1000 » |
| | Գումարն . . . | 6150 հոգի։ |

*Հասարակաց շինուածներն են 3 մզկիթ, 10 մէճիտ, 1 եկեղեցի Յունաց, 3 պանդոկ, 1 բաղանիք, 30 աղբիւր, 10 սրճատուն, 60 կրպակ, 1 դեղավաճառանոց, և այլն։ Հայք ունին Ս. Սարգիս անուամբ կրկին եկեղեցիք, մին վերին թաղի և միւսն վարինի մէջ։ Կրթական և ուսումնական վիճակն խեղճ է։ Օդը առողջարար է և ջուրը պատուականագոյն, որ կու գայ Ակի—տաղը կոչուած լեռնէն։ Լերան ստորոտէն, այսինքն հիւսիսային կողմէն կ'անցնի Տիգրիսի Պաղենոյ—գետ ըսուած մէկ վտակը։*

*Թէ՛ լերան ստորոտը և թէ քաղաքաւանս զարդարուած են բազմաթիւ այգիներով, արտերով ու պարտէզներով։ Բերքերն են ցորեն, գարի, ամէն տեսակ բանջարեղէններ, մրգեր, մանաւանդ խաղող՝ յորմէ պատուական ընտիր գինի կը շինեն։ Այս կողմերը բամբակ եւս կը մշակեն։ Ըստ Հ. Ինճիճեանի, այս գիւղաքաղաքս գրեթէ 300 տարի առաջ չկար, և բոլոր լեռը անտառ էր՝ լի առիւծներով և ուրիշ գազաններով, իսկ շրջակայ գիւղերը աւերելէն վերջ, բնակիչները այս տեղ ժողովելով կառուցած են քաղաքս։ Կը յիշէ նաև աւերեալ գիւղերու եկեղեցիներէն Ս. Եղիաս, Ս. Մամաս, Ս. Լուս, Ս. Աստուածածին, և այլն, որոց ոմանք բոլորովին կործանած և ոմանք ալ կիսակործան դրից մէջ կը գտնուին։ Արկնիի*

*բնակիչք այդ եկեղեցիներու տօնի օրեր ուխտի կը գնան, իւրաքանչիւր ոք իրեն նախնեաց գիւղի եկեղեցւոյն:*

*Լերան ծայրը կը գտնուի ահեղատեսիլ հին բերդն կամ Ամուրն Արղնոյ՝ ինչպէս կը կոչեն մեր մատենագիրները: ԺԱ. դարու կիսուն, բերդիս մէջ ամրացած էին Հայկական իշխաններ՝ Հարել անունով մէկու մը որդիք. որոց անդրանիկը Հարպիկ կը կոչուէր և կը պահէր բերդս ընդդէմ Մոնոմախ կայսեր Պետրոս զօրավարին: Ուռհայեցին (Ա. 29.) Հարպիկ իշխանին համար կ'ըսէ, թէ «... տեսալ սրա և եղեալ պահէր զտեղին, և զաւուրս երեք ոչ իշխեաց ննջել ամենևին, (և վերջը ննջառորներէ խաբուելով) ննջեաց, զի ձանձրացեալ էր յոյժ, և իբրև քաղցրացաւ ի քուն իւր, յարուցեալ ազգականն իւր հատանէր զգլուխն Հարպկանն զառն հզօրի և քաջի, և զնոյն գիշերն հասուցանէին զգլուխն առ Պետրոս կատապանն. և սպանողքն ոչինչ օգտեցան՝ բայց միայն անէծս: Եւ հրամայեաց Պետրոս ի ձող ցցեալ զգլուխ Հարպկանն և տանել ընդդէմ դրան բերդին. ի լուսանալն տեսեալ եղբարցն նորա և ծանեան, և վաղվաղակի բացեալ զդուռն և արկեալ հող ի վերայ գլխոց իւրեանց, և լալով գային երեք եղբարքն (Դաւիթ, Լևոն և Կոստանդին), և անկանէին առաջի հատեալ գլխոյ Հարպկան. և այնչափ կոծ տեսալ նոցա, մինչև ողբս առեալ լային ամենայն զօրք բանակին: Եւ այսպիսի օրինակաւ տիրանայր Պետրոս ամուր բերդին Արկնոյ...»: Այս դէպքէն տասը տարի վերջ՝ 1062 թուականին, Տուղրիլ սուլտանի զօրքերը յանկարծ յարձակելով Արղնոյ գաւառին վրայ, զայն նուաճեցին մերձակայ միճակաց հետ, որոնց դարձեալ տիրեցին Յոյնք. յետոյ ալ ին Թուրքք. ԺԴ դարու վերջերը Եուսուֆ Գավրիմէն գալով տիրեց Արղնոյ և Ծոփայ կողմերուն, յետոյ ուրիշներ ևս փոփոխակի տիրած են այս կողմանց, և ի վերջոյ Օսմանեանք: Արկնիի մօտ է հռչակաւոր Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքը, որոյ նկարագիրն տես ի կարգին:*

*Արկնի կամ Արղանա գաւառի տարածութիւնն կը համարուի 8530 քառակուսի հազարամետր. բաժնուած է 3 գաւառակաց և 11 միճակաց. ունի 1083 գիւղ: Բոլոր գաւառի բնակչաց ընդհանուր թիւն է 134517, յորոց 20000ը Հայք են, և մնացածը զանազան ազգեր: Երկիրը ընդհանրապէս լեռնային է, և ունի պղնձի և երկաթի առատ բովեր. հանքեր ունեցող լեռներէն գլխաւորը կը կոչուի Բախուշ—մատեն բարձր է 4222՛. միւս լեռներն են Արղնոյ լեռ 3753՛, Բալաղ—տաղ, Ալի—տաղ:*

ԱՐԿՆՈՅ ՎԱՆՔ. *Տես* ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ:

ԱՐԿՈՒ. — *Այլազգաբնակ գիւղ Ակնայ:*

ԱՐԿՈՒ ԳԵՏ *կամ* ԱՐԳՈՒԳԵՏ. *Տես* ՃԱՀՈՒԿ:

ԱՐԿՈՒԽՈՒ. *Տես* ԱԿՈՌԻ:

ԱՐԿՐՈՒՍ. *Տես* ՅԱՐԿՐՈՒՍ:

ԱՐՀՆԻ *կամ* ԱՐԽՆԻ. — *Եղիշէի մէջ կը յիշուի Հայոց աշխարհի ամուր տեղերու հետ, զորս նախարարները Մեծին Վարդանայ հետ միաբանելով ազատեցին Պարսից ձեռքէն: Ինձ կը թուի, թէ սա լինի մեր վերոյգրեալ հինաւուրց և անառիկ Արկնի բերդը:*

ԱՐՁԱԽ. *Տես* ԱՐՑԱԽ:

ԱՐՁԱԽԱՄԱՅՐԻ. *Տես* ԿՈՎՍԱԿԱՆ.

ԱՐՁԱՆ. — *Լեռ Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ: Այսպէս կոչուած է Արձան քրմապետի անուամբ, որ լերանս վրայ սպանուեցաւ Անգեղ տան իշխանէն:*

ԱՐՁԱՆԱՁՈՐ. *Տես* ԲԱՂՔ:

ԱՐՁԱԽԱԿԱՑ ԳԻՒՂ. — *Հին գիւղ Վասպուրականի Անձաւացեաց գաւառի մէջ, զոր յիշէ Թ. Արծրունին:*

ԱՐՁԱՆԱԲԱՐ *կամ* ԱՐՁԱԽԱԲԱՐ. — *Սիւնեաց Արեւիք գաւառի մէջ կը յիշուի անունս, յայտնի չէ ինչ լինելն:*

ԱՐՁԻԽ. *Տես* ԱՐԾԻԽ:

ԱՐՁԻԽԱԿԱՏԱՐ. — *Հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գաւառի մէջ:*

ԱՐՁԿԱՂ. *Տես* ԴԱԼԱՐԻՍ:

ԱՐՁՆԻ. — *Հին գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Արածանիի օժանդակ վտակներէն միոյն մօտ: Մեր պատմութեան մէջ նշանաւոր է գիւղիս մօտ մղուած այն պատերազմն ընդ մէջ Հայոց և այլազգիներու, որ աւելի ծանօթ է Բագրեւանդայ կռիւն անունով, որուն գեղեցիկ նկարագիրն ըրած է Յովհաննէս Կաթողիկոսն: Ազգային*

մատենագիրներէն Ղեւոնդ Պատմիչ (Գլ. ԼԴ) մանրամասն կը նկարագրէ այս պատերազմը: — Այրարատ, 524—5:

ԱՐՂԱՆԱ. Տես ԱՐԿՆԻ:

ԱՐՂԱՆԱ կամ ԱՐՂՆՈՅ ՄԱՏԷՆ: — Աւան Արկնի գաւառի մէջ, նշանաւոր է հանքերովը. ի Թուրքաց կը կոչուի նաեւ Պաքըր Մատէնի: Արկնիէն հեռու է 18 հազարամետր հիւսիսային արեւմտեան կողմը: Գիւղը լեռնային է, եւ տուները լերան գագաթէն մինչեւ ստորոտը կը տարածուին, այսինքն մինչեւ ձորը, ուրկէ կանցնի ջուր մը: Գիւղիս բնակիչք ընդհանրապէս կ'աշխատին հանքերու վրայ, որոց թիւն երբեմն կը բազմանայ եւ երբեմն կը նուազի: Միջին հաշուով այժմ ունի 3155 բնակիչ, հետեւեալ կերպով բաժնուած.

| | | |
|---|---|---|
| Հայք (Լուսաւորչական). | 1000 | հոգի |
| Քիւրդք . . . . . . . . . | 1000 | » |
| Յոյնք. . . . . . . . . . | 750 | » |
| Հրեայք. . . . . . . . . | 405 | » |
| Գումարն. . . . | 3155 | հոգի: |

Հայք ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին եւ մէկ վարժարան: Յոյնք եւս ունին եկեղեցի մը. իսկ Մահմէտականք 3 մզկիթ: Իւրաքանչիւր ազգաց թաղերն զատ են, կան նաեւ արտեր եւ պարտէզներ: Օդն աղէկ չէ, ամառը սաստիկ տաք կ'ընէ. Ջուրն ալ լաւ չէ, բայց Տիգրիս գետի ջուրը կը գործածեն, որ գիւղին արեւելեան կողմէն կ'անցնի, ուր 10 կամ 15 կանգուն լայնութիւն ունի եւ ձուկեր ալ կը պարունակէ: Թէ՛ գիւղիս եւ թէ շրջակայ լեռներու մէջ առատ պղնձի հանք ըլլալով, լեռներուն վրայ շատ տեղ այրեր ու գուբեր փորած են, մանաւանդ Մաղարա լերան վրայ: Գիւղին ամէն թաղերուն մէջ խոշոր խոշոր պղնձախառն հանքային քարեր ձգուած են, յորոց շատեր գործածուած են նաեւ որմերու շինութեանց մէջ: Տեղւոյս հանքը շատ հարուստ է. տարին մինչեւ 2500000 հոխայ պղինձ կ'ելնէ: Այս բոլոր հանքատու լեռները՝ որ երբեմն երկնաբերձ ծառերով անտառացեալ էին, այսօր չոր ու լերկ ապառաժուտներ են. վասն զի դարերէ ի վեր հանքահանները հանած պղինձն զտելու համար՝ հալեցնելու կրակի տեղ զանոնք անխնայ կտրատած ու վառած են, առանց անոնց տեղ նոր ծառեր տնկելու: — Արղանա Մատէն գաւառակի ընդհանուր բնակչաց թիւն է 46500, յորոց միայն 7000ը Հայք են: — Ճնպրհ. ի Բաբելոն, 48: Վ. Քինէ, Բ. 480—485: Արեւելք, Թ 1193:

ԱՐՂԷՇ. — Այս անուամբ գաւառ մը կը յիշէ Թ. Մեծոփեցի Այրարատայ մէջ, որ թուի թէ վիճակ մի էր Ճակատք գաւառի, եթէ սխալ գրութիւն չէ՝ փոխանակ Արճիշոյ: Լէնկթիմուրի ասպատակախմբէն բոլորովին կողոպտուած է այս երկիրը:

ԱՐՂԸՆԻ. Տես ԱՐԿՆԻ:

ԱՐՃԷՇ. Ասոր. [illegible] Գղ. ARDJECH. Թ. ارجيش Լտ. Arsissa. Յն. Ἀρσες, Ἀρξες. — Ի հնումն մեծ եւ անուանի քաղաք Վասպուրականի Արճիշակովիտ գաւառի մէջ, համանուն՝ կամ Վանայ ծովակի հիւսիսային եզերքը: Քաղաքիս նախնական պատմութիւնն շատ ծանօթ չէ, բայց յայտնի է որ մեր աշխարհի հնագոյն քաղաքներէն մին էր: Սաէպ կը յիշէ քաղաքս Կոստանդին Պերփերուժէն կառավարութեան զրոց մէջ (Գլ. ԽԴ): Յովհան Կաթողիկոս քաղաքս կը դնէ Աղիովիտ գաւառի մէջ եւ գիւղ կ'անուանէ՝ ըսելով. «Յաջորդէ զաթոռ հայրապետութեանն Եղիա ի գեղջէ Արճիշոյ յԱղիովիտ յեպիսկոպոսութենէ Բզնունեաց»: Թ. Արծրունւոյ շարունակողը, Արճէշը կը դնէ Գնունեաց գաւառի մէջ, երբ Սրահանգայ Հագարացի ներքինւոյն համար կ'ըսէ, թէ ԺԱ դարու մէջ առաւ «զԱրճէշ քաղաք Գնունեաց գաւառին»: Իսկ Թ. Մեծոփեցի եւ Վարդան աշխարհագիր՝ Արճիշոյ սահմանքն կամ գաւառը կը կոչեն Քաջբերունի, նոյնանուն ցեղի մը անուամբ որ այս երկրի մէջ բնակեցաւ: Եօթներորդ դարու մէջ Հերակլ կայսրը Արճէշը այրեց, յորում կը բնակէին Պարսից զօրքերը: Ասողիկ, Բ. Գ: Սենեքերիմ Արծրունին, ուրիշ քաղաքաց հետ քաղաքս ալ տուաւ Յունաց Վասիլ կայսեր: Ժ դարէն վերջ մերթ Յունաց եւ մերթ Պարսից ձեռքն անցած է քաղաքս, եւ ապա զանազան ասպատակութեանց եւ տխուր դիպաց ենթակայ եղած է, յորոց շատերը կը նկարագրէ Թ. Մեծոփեցին:

Դարուս սկիզբը տակաւին չէր եր քաղաքս, և ունէր գրեթէ 1500 տուն բնակիչք, մեծամասնութիւնը Թուրքք և սակաւ Հայք՝ որք ունէին երկու եկեղեցիներ։ Մօտէն կ'անցնի վտակ մը, որ կը կոչուի Արճիշոյ գետ։ Գրեթէ 70—75 տարի առաջ այս պատմական և հին բերդաքաղաքն ծովու կատաղի ալեաց չկարողանալով դիմադրել, անոր ալեաց մէջ ծածկուեցաւ, այդ պատճառաւ բնակիչներն հետզհետէ քաշուեցան Արճիշոյ դաշտի գիւղերն։ Այժմ կիսաւեր և բոլորովին ամայի դարձած է, տխուր աւերակաց մեծամեծ բեկորներն ծովու աղային ջրերէն շրջապատեալ կը կենան, խորհրդաւոր երեւոյթ մ'ունին նաեւ բերդի կիսակործան պարիսպներն։ Արճէշ՝ երբեմն համանուն գաւառի ամենէն բազմամարդ տեղն եղած է, և վաճառականութեան մէջ խիստ յառաջացած։ — Աստորգր. Հիճ Հայս. 216

ԱՐՃԷՇ. — Գաւառ Վանայ նահանգի, կը համապատասխանէ հին Արճիշակովիտ կամ Բաջբերունեաց գաւառի։ Կ'ինկնայ Արծկէի, Մանազկերտի, Ալաշկերտի, Պայազիտի և Բերկրիի մէջտեղ, հարաւ արեւելեան կողմէն շրջապատուած է ծովով։ Հին Արճէշ քաղաքի անբնակ լինելէն վերջ, գաւառագլուխն եղած է Ականց աւանը։ Դիրքը դաշտային է և լեռնային. օդը բարեխառն, ջուրը առատ, հողը արգասաբեր։ Ունի այգեստաններ և ծառաստաններ։ Ցորենը, ձին, ոչխարը և արջառն անուանի են։ Գետերու մէջ յիշելու արժանի են Օրօրանայ և Արճիշոյ գետերը։ Զիլանայ ձորի մէջ կան ծծմբային ջերմուկներ, ուր կը նշմարուին հին մարմարեայ աւազաններու նշխարներ։ Զիլանայ ձորի մէջ կայ նաև պղնձահանք։ Բոլոր այս գաւառը տիրող լեռն է Ծաղկաց լեռը (Ալա—տաղ), որ յաճախ ցցլուխ պճնուած է պարարտ արօտներով և գոյնզգոյն տեսակ տեսակ ծաղիկներով։ Այս լերան մէջ կան շատ և ընդարձակ քարայրներ, որոց վրայ կան նաև յատուկ աւանդներ, Արեգար, Օձաքար, և այլն։

Վ. Քինէ գաւառիս բնակչաց թիւն կը դնէ 14774, որ խիստ քիչ է, և հետեւեալ կերպով կը բաժնէ.

| | | |
|---|---|---|
| Հայք (Լուսաւորչ. և Կաթողիկ.) | 9490 | հոգի |
| Մահմէտականք (Թուրքք և Քուրդք) | 5129 | » |
| Հրեայք և զանազանք . . . . . . | 155 | » |
| Գումարն... | 14774 | հոգի։ |

Ընդհակառակն 1882ին վիճակագրութեան մը համեմատ գաւառիս Հայոց թիւն էր 10569, ուրիշ տեղագրող մ'ալ կը համարի մինչև 26900։ Հայաբնակ գիւղերը հետեւեալք են.

| | |
|---|---|
| Ականց | Ցաղխովիտ |
| Բլուրման | Ասրաֆ |
| Խարկէն | Բերդ-աղ |
| Կտրած քար | Թոնդրաս |
| Սոսկուն | Տիրան, Տիլան |
| Բայ գիւղ | Գանձակ |
| Օրօրան | Արմիզոն |
| Ներքին Բիշատ | Ծայծակ |
| Վերին Բիշատ | Ճիւտկեան |
| Մաճատւս | Գրագոմ |
| Ցասքոնակ | Փիրօմար |
| Ցարութիւն | Ջիրաքլու |

Վերջին դէպքերու ժամանակ այս գիւղերէն ոչ սակաւք մեծ վնասներ ունեցան և շատերուն եկեղեցիներն աւարի առնուեցան, ինչպէս նաև գաւառիս 4 վանքերն, յորս հռչակաւոր է Մեծոփայ վանքը։ — Համով Հոտով, 96—97։ Մշակ, Ժ. 121։ Եւ այլն։

ԱՐՃԷՇ. — Այս անուամբ գետ և քաղաք մը կայ Ռումէնիոյ (Վալաքիա) մէջ, 3000 բնակչօք. ունի եպիսկոպոսական աթոռ և կղերանոց։ Եկեղեցին Վալաքիոյ եկեղեցիներու մէջ գեղեցկութեան կողմանէ առաջին կը համարուի։ Քաղաքս իւր անունն առած կը կարծուի Վասպուրականի Արճէշ քաղաքի անունէն, և կ'ըսուի թէ ԺԳ դարու մէջ Հայաստանի նոյնանուն քաղաքէն Հայեր գալով ի Ռումէնիա բնակած են այս տեղ։ Այս քաղաքիս վրայ քննական յօդուած մը հրատարակուած է 1888 տարւոյ Բազմավէպի 211—217 էջից մէջ։

ԱՐՃԷՇ. — Հայաբնակ գիւղ Արցախի Ղազախի գաւառի մէջ։ Բնակիչք 65 տուն, ունին Ս. Յակոբ եկեղեցի մը, և նոյն անուամբ հին մատուռ մը։

ԱՐՃԻԱՆ. — Լեռ Գուգարաց Ջաւախք գաւառի հարաւ արեւմտեան կողմը, Զըլտըր և Խողայքին լճերու մէջտեղ, բարձր՝ 8700'։

ԱՐՃԻՇԱԿՈՎԻՏ կամ ԱՐՃԻՇԱՀՈՎԻՏ. — Վասպուրականի հին գաւառներէն մին, որուն մասամբ մը կը համապատասխանէ այժմեան Արճէշ գաւառն։

ԱՐՃՇՈՒ ԾՈՎ. Տես ՎԱՆԱՑ ԾՈՎ.։

ԱՐՃՈՒՃՍ կամ ԱՐՃՈՒՃԱՆ ԱՄՐՈՑ. — Այս անուամբ գիւղ և ամրոց կը յիշէ Թ. Արծրունին, Վասպուրականի մէջ։

ԱՐՄԱՁ. — Լեռ Գուգարաց Տաշիր գաւառի մէջ, որոյ վրայ Քարթլաւ կառոյց Որբէր անուն բերդը։

ԱՐՄԱՇ. Գղ. ARMACH. — Ասլան Պէյի նման զուտ հայաբնակ և անուանի գիւղ Իզնիմիտի (Փոքր Ասիա) գաւառի մէջ. Նիկո-ղած է վանքի հիմնադիրը նոյն 1611 թուին, և Արմաշու վիճակին առաջին առաջնորդը, իրեն ներքեւ ունենալով Կէյվէ, Բազար, Սէօյէօզ, Կիւրլէ, Պանտրմա, Պալըքէսէր, Քիրմաստի և Պիղա իրենց թեմերով։ Վանքս իւր սկիզբէն մինչեւ ցայժմ ունեցեր է 21 առաջնորդներ, գրեթէ ամէնքն ալ եպիսկոպոսներ կամ արքեպիսկոպոսներ եղած են։ Բարթողիմէոս արքեպիսկոպոս Կապուտիկեանի առաջնորդութեան ժամանակ 1786ին կը սկսի Արմաշու համար նոր շրջան մը, կանոնաւոր միաբանութեան և ուսումնարանի հաստատութեամբ։ Նոյն ժամանակ տաճարը ի հիմանէ նորոգուեցաւ և վանքը նո-



160. Արմաշու Չարխափան Ս. Աստուածածնի վանքը։

միդիայէն հեռու է 6 ժամ՝ հիւսիսային արեւելեան կողմը։ Բնակիչք 1500 հոգի, կը զբաղին ընդհանրապէս շերամագործութեամբ և երկրագործութեամբ։ Ծանօթ է գիւղս իւր հռչակաւոր Չարխափան Ս. Աստուածածնի վանքովը (Թ. 160), որ կառուցուած է բլրի վրայ և շրջապատուած ու զարդարուած է զուարճալի պարտէզներով։ Թէ՛ գիւղի և թէ վանքի հիմնարկութիւնն եղած է 1611 թուականին, և բնակիչք սերունդք են 1608ին Պարսկաստանէն Փոքր Ասիա եկող հայկական այն մեծ գաղթին, որոյ մեծագոյն մասն հաստատուեցաւ Ադաբազար, և մէկ մասն ալ այստեղ։ Թադէոս եպիսկոպոս ե-րէն շինուեցաւ ընդարձակ և հոյակապ, բայց 1804ին վանքն ու եկեղեցին, ուսումնարանն և մատենադարանը պէտք ունեցան նորոգութեան։ Ուստի Պօղոս արքեպիսկոպոս Ղարախօչեան, 1820ին վերաշինութեան հրովարտակ առնալով չորս տարուան մէջ վերաշինեց եկեղեցին, նորոգեց նաեւ վանքն և ուսումնարանն բանալով վանքի զարգացումը աճեցուց։ Ստեփաննոս արքեպիսկոպոս Զաքարեան, որ աւելի ծանօթ է Աղաւնի մականուամբ, 1825ին առաջնորդ լինելով, ուսումնարանի զարգացման ջանքերը կրկնապատկեց, ի նորոյ շինեց վանքին փառաւոր Առաջնորդարանը և Միաբանութեան թաղը

և հիւսիսային հիւրանոցը՝ որք ցարդ կը մնան, նախկին ուսումնարանը և մնացեալ հիւրանոցները որք 1888ի հրդեհին այրեցան։ Ստեփանոս արքեպիսկոպոս Մաղաքեանի առաջնորդութեան (1856–1865) օրով, վերջին տարիներու մէջ խանգարուած վանքը, վերստին ծաղկեցաւ, բացուեցաւ Արմաշու ապարանն և սկսաւ հրատարակուիլ Ցոյս անունով դրական հանդէսը։ 1866 թուականին Արմաշու վանքը Նիկոմիդիոյ վիճակէն զատուեցաւ, իրեն թեմ պահելով միայն Արմաշ և Խասկալ գիւղերը. այնուհետև իր առաջնորդներն սկսան կոչուիլ վանահայր։ Աստի կը սկսի վանքիս երրորդ կամ նոր շրջանը, վիճակային խնդիրներէ ազատելով լոկ ուսումնական և կրթական զարգացման ծառայելու համար։ Խորէն արքեպիսկոպոս Աշըգեանի վանահայրութեան (1872–1888) ժամանակ, բացուեցաւ վանացս Ս. Ղեւոնդեանց գիշերօթիկ վարժարանը, և քանի մի տարի փայլուն կերպով յառաջանալէ վերջ, 1878ին ելեւմտական տագնապներով, նոյն վարժարանը փակուեցաւ և Ցոյս հանդէսի հրատարակութիւնն դադրեցաւ։ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանի ժամանակ (1889–1896), Արմաշու վանքը մեծաքայլ յառաջացաւ։ Անմիջապէս բացուեցաւ եկեղեցական վարժարանն, և այս առթիւ վանքն ալ կոչուեցաւ Արմաշու Դպրեվանք, և եօթնամեայ շրջանով 1889–96 տարիներու մէջ երկու դասարաններ աւարտեցին, և ազգն ունեցաւ դաս մը գիտնական վարդապետներ։ Վանքի վրայ եղան նշանաւոր նորոգութիւններ, տաճարն ներսէն և դուրսէն վայելչապէս նորոգուեցաւ և զանգակատունն աւելցաւ, ընդարձակ քարուկիր ուսումնարան մը կառուցուեցաւ, նոյնպէս երեք յարկանի հիւրանոց մը, ջերմատան յարմար ընդարձակ շէնք մը, փուռ մը, կատարելագործեալ ջրաղաց մը, և այլն։ Տնկուեցան նաև նոր թթաստաններ, և շերամասերմի պատրաստութեան ընդարձակ գործ բացուեցաւ։ Այժմեան Արմաշու վանահայրն է Եղիշէ եպիսկոպոս Դուրեան՝ որ կ'աշխատի Դպրեվանքին վանական և ուսումնական բարեկարգ ընթացքը կատարելապէս շարունակել և ևս քան զևս արդիւնաշատ ընել զայն։

Վանացս Ս. Աստուածածնի հրաշագործ պատկերը, որ անարուեստ բան մ'է և ոչ ալ հին, առաջ դրուած էր աւագ խորանին վրայ, և ի վերջոյ ուխտաւորաց դիւրութեան համար փոխադրած են դաւթին մէջ, իսկ աւագ խորանի վրայ դրած են Աստուածածնի ուրիշ պատկեր մը աւելի ճարտար նկարուած իտալացիէ մը։ Փոքր Ասիոյ ամէն կողմերէն բազմաթիւ ուխտաւորներ կը դիմեն այս հրաշագործ պատկերին. գլխաւորապէս ուխտաւորաց խուռն բազմութեամբ կը լցուի մենաստանս սեպտեմբերի մէջ Ս. Աստուածածնի ծննդեան և Վերափոխման խաչի տօներուն։ Մայիս և Յունիս ամիսներու մէջ ևս պակաս չեն ուխտաւորք։ Ամէն տարի այս ուխտաւորաց թիւն կը հասնի 6էն 7000ի։ Ուխտաւորք կու գան ոչ միայն Արմաշու շրջականերէն, այլ և Կոստանդնուպոլսէն, Ադրիանուպոլսէն, Փիլիպպուպոլսէն. Պրուսայի, Պիլէճիկի, Զմիւռնիոյ, Կուտինայի, Գաղատիոյ, և Իկոնիոյ նահանգներէն։ — Արմաշի Դպրեվանուց եկամուտները կը կազմեն հողային արտադրութիւնք, շերամասերմի հասոյթ, ուխտաւորութեանց արդիւնք, և յատուկ բարերարութիւնք։ Վերջերս աստ բացուած ազգային որբանոցն կը կառավարեն Դպրեվանուց խնամակալութիւնն և Վերատեսչութիւնը, Պատրիարքարանէ սահմանեալ նպաստով մը։ Դպրեվանուց շրջանաւարտ աշակերտներէն շատերը գաւառաց մէջ ուսուցչութեան պաշտօն կը վարեն, իսկ վարդապետներէն ոչ սակաւք զանազան քաղաքաց մէջ տեղապահութիւն կամ առաջնորդութիւն կ'ընեն։ — Ընդարձակ Օրացոյց Ազգ. Հիւանդանոցի, 1900, էջ 175–186։ Վ. Քիւճ, Դ. 364–367։ Տեղգր. Հայս. 36–38։ Եւ այլն։

ԱՐՄԱՒԱՇԷՆ. — Այս անուամբ Վերին և Ներքին երկու գիւղեր կան Սիւնեաց Ճահայօնք գաւառի մէջ։ Անունն թէև հայաձայն՝ սակայն գիւղերուս բնակիչք այլազգի են, որք և ծամածռելով Արմաւաշէնը ըրած են Խրամեշին։

ԱՐՄԱՒԻՐ. Գղ. ARMAVIR. — Հին և անուանի մայրաքաղաք Հայաստանի, որոյ աւերակներն կը գտնուին Այրարատայ Արագածոտն գաւառի Սարդարապատու վի-

ճակին, կամ Արմաւրայ դաշտի մէջ բարձրացող համանուն բլրակին վրայ։ Մեր հնաւանդ պատմութեան համեմատ՝ Հայկայ թոռը «Արմայիս (կամ Արամայիս) շինէ իւր ասն բնակութեան ի վերայ ասայ միոյ առ եզերբ



161 · Արմաւիր բերդը այժմ։

գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր, և զանուն գետոյն՝ յանուն թոռին իւրոյ Երաստայ՝ Երասխ»։ Խոր. Ա. ժԲ։ Խորենացիէն վերջ Սեբէոս՝ Արմայիր կը կոչէ քաղաքս, իսկ մեր պատմիչներէն աւելի հնագոյն՝ մեծ աշխարհագիրն և աստղաբաշխն Պտղոմէոս, Բ դարու մէջ, ասոր անունը յունարէն կը գրէ Արմաուխարա կամ Արմաւրիա ('Αρμαουΐάρα, 'Αρμαυροία)։ Արմաւրայ բլուրը բարձր է հարթածաւալ դաշտի երեսէն 300', և ծովու մակերեւոյթէն 2942'. գրեթէ երկու փարսախ հեռու է Երասխ գետէն՝ անոր հիւսիսակողմը, Թէփէ-

տեպի կոչուած Հայարնակ գիւղի մօտ, արեւմտեան կողմը։

Բլրոյն վրայ տակաւին կը տեսնուին բերդանման շինուածոց և պարսպաց աւերակներ, յորոց շատ քարեր տարած են ուրիշ նոր շէնքերու գործածելու համար, և մանաւանդ Սարտարապատ բերդաքաղաքի համար։ Դեռ շէն էր բերդս մինչեւ Ե դարու կէսը, զոր ուրիշ արքունի զօրանիստ տեղերու հետ առին և կործանեցին Վասակեանք։ Յայտնի չէ թէ մինչեւ այն ժամանակ կայի՞ն նաեւ պարիսպներու աշտարակաց խրոխտ գագաթներն։ Բայց Արամ Մարաց Մադէս Նիւքար կոչուած իշխանը ձերբակալելով քաղաքս բերաւ, և վերոյիշեալ աշտարակներէն միոյն ծայրէն՝ հրաման տուաւ որ երկաթէ ցցով ճակտէն գամեն։ Մարիբասեան պատմութեան համեմատ, սօսինեբու ծառաստան կար յԱրմաւիր, յայտնի է թէ բլրոյն ստորոտքը, և կը կոչուէր Արմենակայ անուամբ։ Ասկէ կը գուշակուի, թէ Արմայիսի քաղաքս կամ բերդս շինելէն առաջ, իւր հայրն Արմենակ բնակած է այս կողմերս։ Հեթանոսութեան ժամանակ այդ սօսիներն անցան կրօնի պաշտամանց կարգը, մինչեւ անգամ մարդիկ զիրենք կը նուիրէին սօսեաց, և անոնց տերեւոց շարժմանէն հմայութիւններ կ'ընէին։ Խորենացին (Ա. Ի) Արա Գեղեցկի Անուշաւան որդւոյն համար կ'ըսէ, թէ «... ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ, որ յԱրմաւիր. զորոց զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյ եւեթ ասաց շարժումն, սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց. և այս բազում ժամանակս»։ Այս պատճառաւ Սօսանուէր կը կոչուէր Անուշաւան։ — Բլրոյս արեւմըտակողմը ըստ աւանդութեան կողմանցս բնակչաց, երկիրը հերկած ժամանակ, գտած են ծառոց մեծամեծ արմատներ, զորս ոմանք կը համարին այն հնադարեան սօսեաց մնացորդները, որք մեր երկրի մէջ շատ կ'աճին և կը ստուարանան։



162 • Նիւքար իշխանը գամուած Արմաւրի աշտարակի ծայրէն ։

Հայկազանց հարստութենէ վերջ, Արշակունեաց նահապետն Վաղարշակ՝ Աղեքսանդրի յաջորդաց կողմնակալներն մեր աշխարհէն վանելու պատրաստուած ժամանակ, Արմաւրի մօտ՝ Երասխայ ափունքը, խմբեց իւր զօրքերը, և շատ օր հոն մնալով բոլոր աշխարհէն զինուորական զօրութիւնն միացնելով հասաւ մինչեւ Խաղտեաց սահմանները։ Թշնամին նուաճելէ և երկիրը կարգաւորելէ վերջ՝ մեհեան շինեց յԱրմաւիր, մէջը հաստատելով արեգական, լուսնի, և իւր նախնեաց արձաններ։ (Խոր. Բ. Ը)։ Վաղարշակի թոռան Արտաշիսի Յունաստանէն գերած կուռքերէն, Վահեւունի քուրմերը Արմաւրի մեհեններին մէջ կանգնեցին Արտեմեայ պղնձաձոյլ ոսկեզօծ անդրին՝ Ապողոնի անդրոյն հետ։ Արտաշիսի որդին Տիգրան՝ Հրէայ գերիներու մէկ մասն բնակեցուց քաղաքիս մէջ և մէկ մասն ալ մերձակայ Վարդգէսի աւանը՝ որ յետոյ Վաղարշապատ եղաւ։ — Արամայիսէն մինչեւ Երուանդ Բ՛ ժամանակ գրեթէ 20 կամ 25 դարուց միջոց, այրարատեան դաշտի վրայ շատ փոփոխութիւններ եղան։ Երասխ գետն ալ իւր ընթացքն փոխեց և սկսաւ հոսիլ Արմաւրէն գրեթէ 4 վերստ հեռու, որուն հին հունը մինչեւ ցարդ

կ'երեւի ըլլի ստորոտը, որուն այլազգիք Գուրու Արազ (Ցամաք Երասխ) անունը կուտան։ Երուանդ Բ՝ կ'երեւի ջրոյ նուազութեան կամ Երասխի հեռանալուն պատճառաւ և ուրիշ ամրագոյն տեղւոյ մը ի խնդիր ելնելով, կառոյց Երուանդաշատը և հոն փոխադրեց արքունիքը. նոյն ժամանակ Արմաւրի հռչակաւոր մեհենին կուռքերն ալ փոխադրեց ի Բագարան։ Չորրորդ դարու մէջ Արշակ Բ Արմաւրի մէջ կոտորել տուաւ Կամսարականաց ցեղն. այդ միջոցին Խորենացին (Բ. ԼԱ.) լքեալ արքունիք կը կոչէ քաղաքս։

Արմաւրայ բլրոյն վրայ և իր սահմանաց մէջ գտնուած են բաւական թուով բեւեռաձեւ արձանագրութիւններ, որոց տոյգ ընթերցմամբ միայն հնարաւոր պիտի ըլլի ճշգրիտ տեղեկութիւններ ստանալ քաղաքիս նախապատմական ժամանակի մէջ ունեցած հռչակին վրայ։ Ռուս հնագէտն Ուվարով, բլրոյն վրայ և ստորոտքը պեղումներ ըրաւ, այլ խիստ հնութեան նշաններ չգտաւ, բայց եթէ հողէ անօթներ. իսկ մերձակայ ցածուն հողաբլրոց մէջ գտաւ արծաթէ մանեակներ, մատանիներ և այլ այսպիսի իրեր, որոնք ըստ իր կարծեաց քրիստոնէական Գ–Ե դարուց կը վերաբերին. միայն բարձրաւանդակի մը փորուածքին միջէն գտաւ քարեղէն զէնքեր և դանակներ, որոնք խիստ հին ժամանակաց կը վերաբերին։ Քոնիպիր անգղիացի նոր հայագէտը, որ 1888ին այցելեց յԱրմաւիր, կ'ըսէ՝ թէ գեղացիները բլրոյն վրայ հաստ պարիսպ կամ պատ մը քակած ժամանակ, յայտնուեր է գետնուղւոյ մուտք մը, որ հողով լեցուած ըլլալով ինքը չէ կարողացած ներս մտնել, բայց կը համարի որ բլրոյն խորը գտնուին քարափոր սենեակներ՝ վանաց սենեկաց նման։ Ռուս գիտնականն Նիկոլսկի, իր հրատարակած Ռուսաց Հայաստանի բեւեռագիր արձանագրութեանց գրքի մէջ, ընդարձակօրէն կը խօսի Արմաւրայ վրայ։ Արմաւրայ բլրոյն արեւմտակողմը կը տարածուի երկարաձեւ առապար մը, յորում կը նշմարուին վաղեմի շինուածոց հիմունք, որոնք թերեւս ըլլին քաղաքին արուարձանքն կամ թաղերն։ Մէջ տեղը կայ Ս. Գաւրայ կոչուած ուխտատեղի մը, հաստատ քարերով հիւսուած, փոքր և ցած դռնով, ուսկից կը մտնեն ծնրադիր. ներսը կանգնած կայ սիւնակ մը, և կը կարծուի ըլլալ հին մեհենատեղի. այժմ ուխտի կ'երթան հոն Նոր կիւրակէին։ — Այրարատ, 148 – 152։ Ստորգր. Հին Հայս. 498 – 500։ Բազմավէպ, 1897, եջ 197 – 203 և 241 – 248։ Եւ այլն։



163 · Անուշաւան կը նուիրուի Արմաւրի սօսիներուն։

ԱՐՄԱՒԻՐ ՆՈՐ. — Հայաբնակ աւան կամ քաղաքաւան Ռուսիոյ Քուպան գաւառի մէջ, Քուպան գետին ձախ եզերքին վրայ, փրօչնօ–Օքօփ ըսուած ամրոցէն մէկ մղոնի չափ հեռու։ Քաղաքս հիմնած են Եգերահայք կամ Չէրքէզի Հայք 1848 Ռուսաց Զաս զօրապետին յորդորանօք։ Չորս կողմը ունի խորունկ խրամ և չորս դուռ. հիւսիսային կողմը թերակղզի մը կայ, և բնակիչները երբեմն հոն կը փախցնէին իրենց ստացուածքը, կանայքն ու տղայքը, եթէ յանկարծ Չէրքէզները վրանին յարձակէին։ 1852ին շինուած է քաղաքիս քարաշէն եկեղեցին, որոյ շինութեան համար Ռուսաց տէրութիւնը 40 հազար ֆրանկի չափ օգնութիւն

բրած է։ Բնակիչներու թիւն այժմ կը համարուի 6400։ Վաճառականութիւնը բանուկ է։ — Մասեաց Աղաւնի, Բ. 322։

ԱՐՄԵԱՆՍՔ կամ ԱՐՄԵԱՆՍՔԻ ՊԱԶԱՐ. — Գիւղաքաղաք Եւրոպական Ռուսիոյ Տաւրիոյ կուսակալութեան, 130 հազարամետր Քերսոնէն հեռու հարաւային արեւելեան կողմը, և 3 հազարամետր Փերեքոփի հարաւակողմը։ Բնակիչներու մեծամասնութիւնն կը կազմեն Հայք, որք մեծաւ մասամբ եկած են Նախիջեւանէն, և ունին կաթողիկէով եկեղեցի մը՝ Ս. Աստուածածին։ Բաց ի Հայոց կան նաև Թաթարք, Հրեայք, Ռուսք, և այլն։ Վաճառականութեան և անցուդարձի գլխաւոր կեդրոն է. վասն զի կը գտնուի Սիմֆերոպոլի և Մոսկուայի մեծ ճանապարհին վրայ։



164. Բեւեռաքանդակ Արմաւիր քարը։

ԱՐՄԵՆԱԿՍ կամ ՄԵՆԱԿՍ. — Այլ կերպ

գրուած անուն Արամմնեակ բերդի։

ԱՐՄԵՆԻԱ. Տես ՀԱՅԱՍՏԱՆ։

ԱՐՄԵՆՈՒՊՕԼԻՍ. Տես ԿԵՐԼԱ։

ԱՐՄԵՆՈԳԱԼԻՊՔ. Տես ԽԱՂՏԻՔ։

ԱՐՄԷՆ. — Այս անուամբ լեռ կը յիշուի Լեռնային Կիլիկիոյ մէջ, Լամբրոնի անառիկ ամրոցի մօտ՝ արեւելակողմը։ — Լեռանս հիւսիսային կողմը ի հնումն կար կրօնաւորաց Անապատ կամ Լաւրան մը, որ կոչուած է մերթ Արմէնի Անապատ՝ և մերթ Յովանիսի։ 1233 թուին Յակոբ անուն կրօնաւոր ոմն աստ օրինակած է աւետարան մը։ Վանացս մէջ գրուած ուրիշ գրոց յիշատակարաններէն կը յայտնուի՝ թէ տեղւոյս տաճարները կը կոչուէին Ս. Աստուածածին և Ս. Փրկիչ։ — Ալիշան, 96–97։

ԱՐՄԷՆՈԿԻԼԻԿԻԱ. Տես ԿԻԼԻԿԻԱ։

ԱՐՄՐՋԱՆ, ԱՐՄՐՃԱՆ կամ ԱՐՄՈՒՃԱՆ. — Գիւղ Բալուայ (Չորրորդ Հայք) առաջնորդական թեմի մէջ, 60 տուն հայ բնակչօք։

ԱՐՄԻՋՈՆ. — Գիւղ Վասպուրականի Արճէշ գաւառի մէջ. բնակիչք 250էն աւելի, ունին Ս. Սարգիս քարաշէն եկեղեցի մը։

ԱՐՄԻԿ. — Գիւղ Այրարատայ Ուրծ և Արած (Վէտի–Պասար) գաւառի մէջ, 560 այլազգի բնակչօք։

ԱՐՄՆԱԼ. կամ ԱՐՄՆԱՅ. Տես ՍՈԴՔ։

ԱՐՄՇԱՏ. — Հայաբնակ գիւղ Վանայ նահանգի Շատախ գաւառակի մէջ։ Բնակիչք 200, ունին Ս. Վարդան քարուկիր եկեղեցի մը։

ԱՐՄՈՒԹԱՂ. — Գիւղ Տիւրիկու, 50 տուն հայ բնակչօք, որք ունին Ս. Գէորգ եկեղեցի մը։ Արմութաղի մէջ կան նաև քանի մը տուն այլազգիք։

ԱՐՄՈՒՃԱՆ. Տես ԱՐՄՐՋԱՆ։

ԱՐՄՈՒՍԱՏ. — Այլ կերպ գրուած անուն Աշմուշատ քաղաքի։

ԱՐՄՈՒՏԱՆ կամ ԱՐՄՏԱՆ. — Այս անուամբ երկին հայաբնակ գիւղեր կան Բարձր Հայոց Դարանաղի (Կամախ) գաւառի մէջ։ Մեծ Արմուտան ունի գրեթէ 1400 բնակիչ, իսկ փոքր Արմուտան մօտ 600 բնակիչ։

ԱՐՄՈՒՏԼՈՒ կամ ՏԱՆՁՈՒՏ. — Այս անուամբ քանի մը գիւղեր կան մեր աշխարհի զանազան կողմերը։ — Մէկ հատ ունի Այրարատայ Արագածոտն (Սարտարապատ) գաւառը, 590 բնակչօք, յորոց 372 Հայք են և ունին Ս. Սահակ եկեղեցի մը, իսկ մնացածը այլազգիք։ — Ուրիշ մը, նոյն նահանգի Արեղեանք գաւառի մէջ, Պաշքէօյի արեւմտակողմը, 5390՛ բարձրութեան վրայ։ Ունի 70 տուն հայ բնակիչներ։ — Երրորդ մը նոյնպէս Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, 77 տուն հայ բնակչօք, որք գաղթած են Կարսի, Բասենի և Ալաշկերտի գիւղերէն։ Եկեղեցին կառուցած են 1859 թուականին, կը կոչուի Ս. Սարգիս։ Գիւղս շինուած է համանուն բլրակի մը տակ, երեք կողմը կան բաւական ընդարձակ դաշտեր։ — Այս անուամբ ուրիշ գիւղեր ևս կան Սպերի և Սեբաստիոյ մէջ, և այլուր։

ԱՐՆԱՐԻԳՈՄ. — Գիւղ Կարնոյ դաշտի, ունի 300 հայ բնակիչ և Ս. Աստուածամայր եկեղեցի մը։

ԱՐՇԱԿԱՒԱՆ. — Հին քաղաք Այրարատայ Կոգովիտ գաւառի մէջ, զոր հիմնեց Արշակ Բ, և մէջի բնակիչները շատցնելու համար հրաման հանեց որ ամէն չարագործ մարդիկ որ հոն ապաւինին ազատին։ Անով քիչ ժամանակի մէջ քաղաքը լեցուեցաւ ամէն տեսակ չարագործ մարդիկներով։ Շատ անգամներ նախարարները բողոքեցին այս բանին համար, բայց Արշակ ամենեւին միտք չըրաւ, և ոչ իսկ Ս. Խադայ՝ որ տեղապահ էր Մեծին Ներսէսի. ընդհակառակն հոն արքունի ապարանք ևս շինել տուաւ։ Մեծն Ներսէս Վաղէսի արգելանէն ազատած Հայաստան դառնալով, շատ յանդիմանեց զԱրշակ, որ այս չարեաց դիմացն առնէ, և երբ միտք չըրաւ, Ս. Հայրապետը անէծքով փոխադրական չարակեղ և ժանդ բուսած հիւանդութիւններն եկան Արշակաւանի վրայ և շատ մարդիկ մեռան։ Յետոյ նախարարներն ալ միաբան բազմաթիւ զօրքերով քաղաքին վրայ յարձակելով, երեք օրուան մէջ 18–20 հազար տուն բնակիչ կոտորեցին և քաղաքն կործանեցին։ Այս կոտորածէն ազատեցին միայն կաթնատուն տղաքը, զորս Մեծն Ներսէս նախարարներուն ձեռքէն առաւ, ու որթի ճիւղէ հիւսած կողովներու մէջ դնել տալով, դրկեց մօտակայ գիւղ մը, որ յետոյ աւան դառնա-

լով Որմք բռնեցաւ, այս դիպուածին համար: Արշակ այս դէպքս իմանալով, Վրացի գնդով դիմեց նախարարաց վրայ, իրեն ձեռակերտ Արշակաւանին վրէժը լուծելու համար. ահաւոր պատերազմ մը տեղի ունեցաւ և երկու կողմէն շատ մարդիկ ինկան, մինչև եկաւ Մեծն Ներսէս և մէջտեղ մտնելով խաղաղութիւն ըրաւ: Թէպէտև Արշակ յետոյ դարձեալ վրէժխնդիր եղաւ և նախարարներէն շատերը կոտորեց: Բայց անիծուած քաղաքը կամ աւանը աւերելով կործանեցաւ, և գրեթէ անհետացաւ: Այժմ Քրդերէն Խարապայ—Պաժառ (Աւեր քաղաք) կոչուած աւերակներն, որ կը գտնուին Որկովի և Մասեաց լերան մէջտեղերը, կը համարուին հին Արշակաւանի մնացորդները: — Ստորգր. Հին Հայս. 448–449: Այրարատ, 494:

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ. — Երկրորդ հարստութիւն Հայոց թագաւորաց, սկսած Արշակ Պարթև Պարսից արքայի Վաղարշակ եղբօրէն 149 թուին Ն. Ք: Այս հարստութենէն Հայք ունեցան 28 թագաւորներ, որոց վերջինը է Արտաշէս կամ Արտաշիր: Այս թագաւորութիւնը տևեց հինգ դարէն աւելի և վերջացաւ Ս. Սահակ հայրապետի օրով, Պարսից Սասանեանց ձեռքով՝ և հայ նախարարաց մատնութեամբ: — Հնախօս. Հայս. Բ. 6–34: Եւ այլն:

ԱՐՇԱՄՈՒՆԻՔ կամ ԱՇՄՈՒՆԻՔ. — Հին գաւառ Տուրուբերանի, սահմանակից Չորրորդ Հայոց Հաշտենից գաւառի: Դունայ ժողովոյն ստորագրութեանց մէջ կը յիշուի գաւառիս յատուկ եպիսկոպոս մը Թէոփիլոս: Աշմունեաց գաւառի այժմ համապատասխանող կը համարուին Վարդոյ և Խույթի վիճակները:

ԱՐՇԱՄՈՒՇԱՏ. Տես ԱՇՄՈՒՇԱՏ:

ԱՐՇԱՐՈՒՆԻՔ. — Այրարատայ գաւառներէն մին, որ կ'ինկնայ Ճակատք, Արագածոտն, Շիրակ, Վանանդ և Գաբեղէնք գաւառաց մէջտեղ, և է հին Երասխաձորի արևելեան մասը: Տրդատ թագաւորը գաւառս տուաւ Արշաւիր Կամսարականին՝ որ սիրելով այս երկիրը, «յիւր անունն անուանէր Արշարունիս, քանզի յառաջ Երասխաձոր կոչիւր»: Խոր. Բ. Ղ: Գաւառիս անունը ժամանակի ընթացից մէջ փոփոխութիւններ կրելով զանազան կերպերով գրուած կը գտնենք. ինչպէս Աշարունիս, Աշօրնիք, Արշակունիս, Արշունիք, թերևս սխալմամբ գրուած է նաև Աշոտաց երկիր փոխանակ Արշօրացի և ուրիշ տեղ մը Աշակերտաց երկիր. դարձեալ բնական գրից համեմատ՝ փոխանակ Երասխայ՝ Աշօրնեաց Ձոր: Գաւառիս մէջ ի հնումն նշանաւոր էին Երուանդաշատ և Երուանդակերտ քաղաքները, Արտագերս և Կապոյտ բերդերն: Գաւառիս մէջ բնակեցաւ Արշաւիրի ցեղն, որ յատուկ իրեն նախնոյն անուամբ Կամսարական կոչուեցաւ և առանձին նախարարութիւն մը եղաւ: Այս տոհմը իւր քաջագործութիւններով նշանաւոր եղաւ հինգ դար, թէ՛ Հայաստանի մէջ և թէ դուրսը՝ Յունաստանի, Իտալիոյ և Ափրիկէի մէջ: Արշակ Բ Արշարունիքը յարքունիս գրաւեց և Կամսարականաց ցեղը բոլոր ջարդել տուաւ. բայց յետոյ Արշաւիրի որդւոյն Սպանդարատին ձեռքով որ փախեր էր այս կոտորածէն, նորէն բազմացաւ Արշարունեաց կամ Կամսարականաց ցեղը, որ և եօթներորդ դարու մէջ խիստ ծաղկած էր գիտութեան կողմանէ և երևելի էր գաւառիս վարդապետարանը: Ութերորդ դարու վերջերը Բագրատունիք Արշարունեաց գաւառը գնեցին:

Արշարունեաց գաւառի եկեղեցական իշխանութիւնը առաջ Բագրևանդայ հետ մէկ էր մինչև Մ. Խորենացիի ժամանակ, բայց երբ Խորենացին մեռաւ, Արշարունեաց մէջ ալ առանձին եպիսկոպոս նստաւ: — Ստորգր. Հին Հայս. 389–391: Այրարատ, 55–57: Եւ այլն:

ԱՐՇԱԽԱՆ. — Հայաբնակ գիւղ Կարնոյ դաշտի, որոյ բնակիչք 1896ին մեծ քաջութիւն ցոյց տուին ընդդէմ այլազգեաց: Առաջին անգամ գիւղիս անուան կը հանդիպիմ 1896 տարւոյ Դրօշակ թերթի 208–209 էջերու մէջ:

ԱՐՇԷՆԻ կամ ԱՐՇՆԻ. — Հայաբնակ գիւղ Կարնոյ դաշտին մէջ: Ունի 30 տուն բնակիչք և Ս. Մինաս եկեղեցի մը:

ԱՐՇՈՒՆԻՔ. Տես ԱՐՇԱՐՈՒՆԻՔ:

ԱՐՈՍ. — Հայաբնակ գիւղ Տուրուբերանի Դամնաւորք գաւառի մէջ, Խնուսայ վտակին եզերքը:

ԱՐՈՍԻԿ *կամ* ԱՐՈՋԻԿ. — *Գիւղ Խարբերդու առաջնորդական թեմի մէջ։ Բնակիչք* 50 *տուն, ունին Ս. Գէորգ եկեղեցի մը։*

ԱՐՈՒԱԿԱՆ *Տես* ԱԴԱՀԷՃՔ։

ԱՐՈՒԱՆԹՈՒՆԻ. *Տես* ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՔ։

ԱՐՈՒԹԻՒՆԱՑ ՇԷՆ *կամ* ԿԱՐՄԻՐ–ՔԱՐ. — *Կը գտնուի Արցախի Խաչէն գաւառի մէջ, Վաղահաս գիւղի մօտ։ Բնակիչները տեղափոխուած են Վանք գիւղէն։ Գիւղիս մօտերը կան երեք ամայի գիւղերու տեղեր և եկեղեցիներ։*

ԱՐՈՒԹԻՒՆԱՑ ՍԱՐ. — *Արցախեան լեռնաշղթայի բարձրագոյն կատարն է, որ կ'ինկնայ Գարդման գաւառի մէջ, և բարձր է* 11085 *ոտք։ Ստորոտէն մինչև սարիս գլուխն բարձրանալն* 5 *ժամ կը տևէ։ Սարիս կատարը չորս կողաչափ մեծութեամբ տափարակ է. հոն կայ գերեզման մը և շուրջը շարուած են շատ քարեր։ Այս երևոյթն ենթադրել կու տայ թէ այստեղ ի հնումն եղած լինելու է մատուռ։ Ուխտանէս եպիսկոպոսը կը յիշէ այս լեռ՝ որոյ ստորոտն է Բարսղարքուշ՝ որուն այժմ Գրդուշ (Գապազ–թէփէ) անունը կու տան։ Աւանդութիւնը կ'ըսէ թէ Արութիւն անուն ճգնաւոր մը ձմեռներն կը բնակի եղեր սարիս կատարը իր անձն անտանելի սառնամանիքներով ճնշելու համար։ Սարիս լանջերէն և ստորոտներէն կը բղխեն Գանձակ գետի մէկ մասը, Արութիւնայ վտակն, Գարդման վտակն և փառիս վտակը։ — Արցախ,* 202–303։

ԱՐՈՒԾ. *Տես* ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐՈՒՃ. — *Հին աւան կամ գիւղաքաղաք Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Արագածի հարաւային ստորոտը, Համանուն գետակի մօտ։ Հինգերորդ դարուն այս աւանն ալ արքունի զօրաց ձմերոցներու կարգն էր, զոր տաւ Վասակ և աւերեց։ Հայոց անիշխանութեան և Բագրատունեաց հարստութեան ժամանակ, բարգաւաճած է աւանս Թալնայ նման. մանաւանդ եօթներորդ դարու մէջ կը յիշուի տեղւոյս մեծութիւնը, և այն ժամանակէն կը մնան հոյակապ զատատակերտաց մնացորդներ։* 605*ին կը յիշուի ուանիս վանաց երէցն, անմ Գրիգորիս։* 654*ին հոս կը նստէր Արաբացւոց Համիր անունով կուսակալը կամ զօրավարը։ Երբ Արաբացի բռնաւորաց հաճութեամբ մեր աշխարհի իշխանապետ եղաւ* (670) *Գրիգոր Մամիկոնեան, Արուճի մէջ շքեղ շինութիւններ բրաւ, զորս կարգաւ կը յիշեն ժամանակագիրք և պատմիչք։ Մէջ բերենք միայն պերճարան Յովհ. Կաթողիկոսի նկարագիրը. «Բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին՝ որ ի մեծ դաստակերտին Արուճ, շինէ գնա սափրով, երկնային իմն ճեմարան հաստատեալ ի վերայ երկրի։ Եւ ի հարաւոյ կողմանէ գնէ զարքունենիսն իւր՝ յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպ վիմարդ քարանցն, որ գեղերս ունի իբրև զպսակ պատուարի. և ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ»։ Թէ՛ այս հոյակապ եկեղեցւոյ և թէ պալատի աւերակներն տակաւին կը տեսնուին։ Եկեղեցւոյ մէջ կան ոչ սակաւ արձանագրութիւններ. գմբէթն որ երբեմն վեհեմ կերպով կը բարձրանար չորս կրկնակ սաւար կամարներու վրայ, այժմ կործանած է։ Արձանագրութիւններէն նորագոյնը ունի* 1275 *տարւոյ թուականն։ — Արուճ աւանը այժմ այլազգաբնակ գիւղ մի է և կը կոչուի Թալիշ, որ և համանուն Թալիշ վիճակի շինագլուխն կը համարուի։ — Այրարատ,* 143–145*։ Ստորգր. Հին Հայս.* 440–441։

ԱՐՈՒՃԱԴՐԱԿ *կամ* ԱԼԻՃԱԴՐԱԿ. — *Հայաբնակ գիւղ Այրարատայ Բասեն գաւառի մէջ։ Ընտիր է գիւղիս և սահմանակից վայրաց ցորենն։ Թավէրնիէ* 1655 *թուականին այս տեղէն անցնելով սաստիկ ձեան պատճառաւ ութ օր հոս մնաց։ Երասխ ունի գիւղիս անուամբ օժանդակ մը՝ Ալիճոշ գետակն։*

ԱՐՈՒՃԼՈՒՆ. *Տես* ԾՂՈՒԿ։

ԱՐՈՒՆԵՑ ԵԿԵՂԵՑԻ. *Տես* ՀԱՒՈՒՑ ԹԱՌ։

ԱՐՈՒՆՔ. — *Սակաւաբնակ գիւղ Հայոց, Տուրուբերանի այժմեան Բանաչէն վիճակի մէջ։*

ԱՐՈՒՔՍ. — *Հին գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի մէջ, զոր* 871 *թուականին Ջուան-*

չիր իշխանը տուաւ Սողոմոն եպիսկոպոսին և փոխարէն առաւ Կովսական գաւառի Բէխ գիւղը։

ԱՐՋԱՎԻՍ. — Հայաբնակ գիւղ Շապին Գարահիսարի, գրեթէ 100 տուն բնակչօք։

ԱՐՋ կամ ԱՐՋՔ. — Կը յիշէ անունս Զենոբ քրմաց պատերազմի պատմութեան մէջ, ըսելով. «Իսկ իշխանն Արջոյ փախուցեալ.. ընդ անտառն՝ կարօն փայտի էանց ընդ սիրտ նորա, և անդէն մեռաւ.... և անուանեցաւ տեղին Արջուց ձոր»։ Այս երկիրն կամ ձորն կ'իյնայ Տուրուբերանի Տարօն գաւառի մօտ։ Յովհան Մամիկոնեան (56–59) ևս կը յիշէ Արջուց իշխանը Գայլ Վահանի և Սմբատայ ժամանակ, ինչպէս որ գրուած է Ծիծառնէի խաչին պատմութեան մէջ։ Արջուց յատուկ եպիսկոպոս ևս կը յիշուի, որուն յանձնեց Վահան խաչափայտի մէկ մասն։

ԱՐՋԱ կամ ԱՐՃԱ. — Գիւղ Այրարատայ Բասեն գաւառի մէջ, Մանուգոմ գիւղի հարաւային արեւմտեան կողմը։

ԱՐՋԱԿ. Տես ՀԱՌՋԱԿ։

ԱՐՋԱԿԱՊ. Տես ԹԻՒԼԻՍ։

ԱՐՋԱՋՈՐ կամ ԱՃԻՋՈՒՐ. — Գիւղ Սիւնեաց Բաղք գաւառի արեւմտեան մասին մէջ, Ճհարջուկ գիւղի արեւելեան հիւսիսային կողմը։ Բնակիչները Հայեր են 510 հոգի, բաժնուած 57 տուն. ունին հին եկեղեցի մը։ Կը պարապին մշակութեամբ և խաշնադարմանութեամբ. երկիրը պտղաբեր է. ունին նաև Ղափանի կտաւ կոչուած ընտիր ձեռագործ։

ԱՐՋԱՆ. Տես ՅԱՐՋԱՆՑ։

ԱՐՋԱՌԵՐԵԿ կամ ՈՒՐԾԱՑ ԱՆԱՊԱՏ. — Այրարատայ Ուրծ գաւառի մէջ յիշուած միայնակ վանքն է սա, որոյ անունն գրուի նաև Աջառերեկ՝ ինչպէս յիշած ենք ի կարգին։

ԱՐՋԱՔԱՐ. — Արցախի Քուստի գաւառի մէջ օժանդակ վտակ Թովուզ գետակի. մօտը կայ գուտ և պատուական պղնձահանք։

ԱՐՋԻ ԿՈԽԵՐ. — Ձորի մը անուն, որ կը գտնուի Արցախի Քուստի գաւառի մէջ։

ԱՐՋԻԿ. — Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Կարնոյ։

ԱՐՋՈՅ ԱՌԻՃ. — Ի հնումն բաւական շէն գիւղ և վանք Այրարատայ Շիրակ գաւառի մէջ, Բագնայրի հարաւակողմը կէս փարսախ հեռու, Ալաճա լերան արեւելեան ստորոտը՝ բարձր դիրքով։ Այժմ ունի սակաւաթիւ այլազգի բնակիչներ, և կը կոչուի Ալաճա։ Հայակապ եկեղեցւոյն աւերակներէն կը տեսնուի որ ժամանակաւ բաւական բարգաւաճ և իշխանաշէն մենաստան մը կայ եղեր հոս, բայց կիսակործան վիճակի մէջ գտնուելով, և արձանագրութեանց քարերէն շատերն ինկած ըլլալով, չի յայտնուիր շինութեան թուականն և շինողի անունը։ Ծանօթ արձանագրութիւնները կը վերաբերին ԺԳ դարու։ Եկեղեցին Բագնայրի եկեղեցիէն քիչ մը փոքր է, և անոր պէս երկու մասանց բաժնուած է, տաճար և ժամատուն։ Ժամատունը կամարակապ է և անսիւն. տաճարի խորանին երկու կողմերը կան գմբեթայարկ վայելուչ փոքրիկ մատուռներ կամ աւանդատունք։ Եկեղեցիս 1844 թուականէն ի վեր կիսափուլ և օր աւուր քայքայման վիճակի մէջ է. արձանագրութիւններէն կը յայտնուի որ տաճարն նուիրուած է եղեր Ս. Աստուածածնի, և մատուռներէն մին կը կոչուի եղեր Ս. Լուսաւորիչ։ Արձանագրութեանց ծանօթ հնագոյն թուականն է 1207, և վերջինն 1289։ — Շիրակ, 121–123։ Տեղգր. Հայաստ. 190–192։ Ջալալեանց, Բ. 58–62։

ԱՐՋՈՆԻՑ ՎԱՆՔ. — Անշուք մենաստան Վասպուրականի Աղիովիտ (Արճէշ) գաւառի, Արմիզոնք գիւղի հարաւային արեւմտեան կողմը։

ԱՐՋՈՎԻՏ. — Այրարատայ Բասեն գաւառի մէջ նշանաւոր պատերազմի վայր, Կապուտրու բերդի մօտ։ Կեդրենոս Բիւզանդացին և մեր Ուռհայեցին (125) մանրամասն կը պատմեն այն պատերազմն, որ 1049 թուականին տեղի ունեցաւ այստեղ։

ԱՐՋՈՒՏ. — Հայանուն՝ բայց այլազգաբնակ գիւղ Այրարատայ Շիրակ (Ալեքսանդրապոլ) գաւառի մէջ։

ԱՐՋՈՒՑ ՁՈՐ. Տես ԱՐՋ։

ԱՐՋՐԱՅ կամ ԱՌՋՐԱ. — Սակաւաբնակ Հայոց գիւղ, Տուրուբերանի Խորխոռունեաց (Արծկէ) գաւառի մէջ։

ԱՐՍԵԱՑՓՈՐ. — Այլ կերպ գրուած ա-

նուն Տայոց Ասեացփոր գաւառի։ Տայոց աշխարհի այն գաւառին մէջ կը բարձրանան համանուն Արսեաց լեռները։

ԱՐՍԻՍ. — Գիւղ Տայոց աշխարհի Ասեացփոր Գաւառի մէջ։

ԱՐՍՈԽՍ. — Գետակ Ծովային Կիլիկիոյ, Հռոսոսի մէջ։ Տես ՀՌՈՍՈՍ։

ԱՐՎԱՃ. — Անուն կը յիշուի Այրարատայ Շիրակ գաւառի մէջ գտնուող Հոռոմոսի վանաց արձանագրութեանց մէջ։

ԱՐՏԱԲՈՅՆՔ կամ ԱՐՏԱԲԻՆ. — Հին գիւղ Հայոց, Սիւնեաց Վայոց ձոր գաւառի մէջ, Կիւմիւշ–պուլաղ վտակի մօտ։ Այժմ կը կոչուի Էրտափին, և ունի 45 տուն հայ բնակիչ։ Գիւղս կառուցուած է այգեւէտ և գեղեցիկ ձորի մը մէջ, ունի գեղեցիկ, փոքր և քարաշէն եկեղեցի մը։ Բնակիչները գաղթած են Խոյի սահմաններէն։ Արտաբոյնէն երկու ժամ հեռու կը գտնուին երկաթահամ հանքաղբիւրներ, և քարաժայռ լերան մը կատարը, կիսաւեր ընդարձակ բերդ մը։ — Այրարատ, 158։

ԱՐՏԱԳԵՏ. — Հին գիւղ Սիւնեաց Աղահէճք գաւառի, յիշուած հարկատուաց ցանկի մէջ։

ԱՐՏԱԳԵՐՍ կամ ԱՐՏԱԳԵՐԻՑ ԲԵՐԴ. — Հին և պատմական դէպքերով նշանաւոր և ամուր բերդ Այրարատայ Արշարունեաց գաւառի մէջ, Երուանդաշատէն ոչ այնչափ հեռու՝ հիւսիսային արեւմտեան կողմը։ Յոյնք զանազան կերպով կը գրեն բերդիս անունն, ինչպէս՝ Ἀρτάγειρα, Ἀρταγῆραι, Ἀρταγιγὰρτα, իսկ Լատինք Artagera կամ Artogerassa. Փրկչական երկրորդ թուականին, Հռովմայեցւոց մեր աշխարհը նուաճելու ժամանակ, բերդիս պահապանն Ադդոր կամ Ադոոն իշխանն զէմ կը դնէր թշնամեաց, բայց վերջապէս մատնեցաւ թշնամեաց ձեռքը և պարիսպները քանդեցան. սակայն այս կուսն մէջ Հայերէն անրուժելի կերպով վիրաւորուելով մեռաւ Գայիոս Կեսար՝ Օգոստոս տիեզերակալին սիրելի թոռը, որով և մեծ սուգ պատճառեց կայսերական տոհմին։ Ինչպէս ի հնումն, նոյնպէս և չորրորդ դարու մէջ Արտագերս մեր աշխարհի ամրագոյն բերդերէն մին էր, և կը պատկանէր Արշարունեաց գաւառի տէր Կամսարական նախարարներուն։ Յետոյ Արշակ Բ կամսարականաց տոհմն կոտորելով բերդիս տիրեց և մէջը արքայավայել շինութիւններ ըրաւ։ Ամմիանոս Մարկելլինոս ժամանակակից լատին պատմիչը, Խորենացւոյ և Բիւզանդի նման մանրամասն կը պատմէ բերդիս աղէտալի պաշարումն ի Պարսից, որ տեղի ունեցաւ Արշակայ գերի բռնուելէն և Խուժաստանի Անյուշ բերդի մէջ բանտուելէն վերջ։ Փառանձեմ թագուհին, մանուկն Պապ՝ զոր յետոյ ի Կոստանդնուպոլիս տարին, 11000 այր և 6090 կին, բերդիս մէջ պաշարուած մնացին տասնչորս ամիս, բայց խիստ ամուր և անմատչելի դիրք ունենալով Պարսիկները չկրցան տիրանալ։ Չորեքտասաններորդ ամսէն վերջը պաշարեալները սովէ և համաճարակ հիւանդութենէ սկսան մեռնիլ, և այնչափ բազմութենէն մնացին միայն Փառանձեմ թագուհին և երկու նաժիշտները։ Այս միջոցին Հայր մարդպետ ներքինին ծածուկ ճանապարհով մտաւ բերդս և մեծապէս թշնամանեց զթագուհին։ Հուսկ ուրեմն Պարսիկները մտնելով բերդին մէջ թագուհին բռնեցին, և մէջը ամբարուած Հայոց թագաւորի գանձերը փոխադրելու համար, ինն օր և ինը գիշեր աշխատեցան։ Բերդս միանգամայն այրեցին, սակայն ի վերջոյ նորէն նորոգուեցաւ, վասն զի հինգերորդ դարու մէջ Վարդանանց ժամանակ կը յիշուի արքունի զօրանիստ ամրոցաց հետ։ Րաֆֆի գեղեցիկ կերպով վիպասանօրէն կը նկարագրէ Արտագերսի պաշարման ժամանակ տեղի ունեցած դէպքերը, Սամուէլի (տպ. 1886) 461–577 էջերու մէջ։ Եօթներորդ դարուն Արտագերսը անցաւ Մամիկոնեան նախարարներու ձեռքը, իսկ տասներորդ դարու մէջ Բագրատունեաց ամուր բերդերէն մին էր։ Ոմանք Արտագերսը և Կապոյտ բերդը միեւնոյն կը համարին, բայց Եղիշէ յիշելով այն բերդերը զորս Ե դարու մէջ ուխտապահները աւերեցին, Արտագերս և Կապոյտ բերդերու անուններն առանձին առանձին կը յիշէ։ — Ստորգր. Հին Հայս. 396–298։ Այրարատ, 57–58։ Եւ այլն։

ԱՐՏԱՁ. — Վասպուրականի հին նշանաւոր գաւառներէն մին, որոյ հիւսիսային

կողմն կը գտնուի Մասեացոտն գաւառը, արեւմտակողմը Կոգովիտ, հարաւակողմը հին Մարդաստան գաւառը եւ արեւելեան կողմը Երասխ գետը։ Այժմեան Մակու գաւառն մասամբ մը կը համապատասխանէ հին Արտազ գաւառին։ Գաւառիս անունն զանազան ձեւերով գրուած կը գտնենք, ինչպէս Արտազական գաւառ, Արտազակէ, Արտաւազ։ Ի հնումն գաւառս կը կոչուէր Շաւարշան, եւ իբր Արտազ անունն առաջ. այն ժամանակ, երբ Արտաշէս Բ՝ հրամանով Սմբատ Բագրատունին հօն բնակեցուց Ալանաց երկրէն բերած գերիները, ինչպէս Խորենացւոյ (Բ. ԾԲ) հետեւեալ խօսքերէն յայտնի կը տեսնուի. «Հրամայեաց Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զանուն անուանն Արտազ. քանզի եւ աշխարհն ուստի գերեցանն Արտազ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»։ — Հին ժամանակներէն Արտազու մէջ հաստատուած կար եպիսկոպոսարան, բայց եպիսկոպոսները չեն յիշուիր գաւառիս անուամբ, այլ Թադէոս առաքելոյն անուամբ, ինչպէս ԺԳ դարուն՝ Տիրացու եպիսկոպոս, եւ ԺԴ դարուն՝ Զաքարիա արքեպիսկոպոս՝ Ծործորեցի մականուանուածը, եւ ուրիշներ զորս մի առ մի յիշելը աւելորդ է։

Արտազ նշանաւոր է իւր հին եւ նուիրական վայրերովը, որոց մին է Թադէոս առաքելոյ վանքը, որ մինչեւ հիմայ ալ կայ. հօս է նաեւ Վարդանանց պատերազմին վայրն Աւարայրի դաշտը եւ Տղմուտ գետը։ — Սուրբգր. Հին Հայս. 201–202։ Հիւսուածք, Գ. 16–17։ Եւ այլն։

ԱՐՏԱՀԱՆ. Գղ. ARDAHAN. Ռ. Ардаганъ. — Հին եւ ամուր քաղաքաւան Գուգարաց համանուն գաւառի մէջ, Կուր գետոյն հիւսիսային եզերքը, որ քաղաքիս անուամբ Արտահանի գետ ալ կը կոչուի։ Կառուցուած է բարձրաւանդակի մը կողերուն վրայ. ծովու երեսէն բարձր է 5500'։ Գետոյն հարաւակողմն ալ կան շինութիւններ՝ որ կը կազմեն քաղաքին մի փոքր մասը։ Փայտաշէն կամուրջ մը իրարու հետ կը միացնէ Արտահանի կրկին մասերն։ Քաղաքս ամրացած է 25 ոտք բարձր եւ 6' լայն պարիսպներով, ունի նաեւ քառակուսի մարտկոցներ եւ աշտարակ մը։ Բերդը կառուցուած է բարձր դարեւանդին վրայ հիւսիսային արեւելեան կողմը. ձեւով քառակուսի է. որ 30' բարձր պարիսպներով եւ աշտարակներով երբեմն ամրացած էր, բայց 1828ին Ռուսները բոլորովին խանգարեցին զայն եւ ամայացուցին։

Կ'ըսուի, թէ քաղաքս առաջին անգամ կառուցած է Ջաւախոս՝ Թորգոմայ թոռնորդին, եւ նուիրեր է Ուրուաց, անոր համար Հուր կոչուած է, կ'ըսէ Վրաց աշխարհագիրը. բայց նա շփոթած կը թուի թէ անունը եւ թէ դէպքը. վասն զի Վրաց հին պատմիչն Ջուանշէր՝ Արտահանը նուաճող Երուանդայ Արշակունւոյ համար կ'ըսէ, թէ «բնակեցոյց ի նմա մարդ գիւախօս եւ անուանեաց զնա Քաջատուն». որ կոչուեցաւ նաեւ Քաջաց քաղաք, եւ Վրացիներէն ալ Քաջաց Ցիխէ, այսինքն Քաջաց բերդ, եւ յայտնի է թէ հմայք եւ հարցուկներ եւ թերեւս Հայոց Տրիդից պաշտօնն հաստատեց աստ, վերջինեան Արշակունի թագաւորն։ Բագրատունեաց պայազատութեան ժամանակ Արտահանի մէջ կը նստէր Կողայ իշխանը։ — Ռուսաց 1828ին պատերազմէն առաջ, քաղաքս ունէր գրեթէ 400 տուն բնակիչ, որոց մէջ կային բազմաթիւ Կաթողիկեայ Հայք՝ որք մեծաւ մասամբ գաղթեցին Ռուսաց բաժինը։ Այժմ Արտահան ունի 800էն աւելի բնակիչ, յորոց 457ը Թուրք են, 172ը ռուս, 158 հայ եւ 48 յոյն։ Քաղաքիս Կաթողիկեայ Հայք՝ ըստ հոգեւոր իշխանութեան կը վերաբերին Արզրումի թեմին, եւ ունին յատուկ եկեղեցի եւ դպրոց, իսկ Լուսաւորչական Հայք, խիստ սակաւաթիւ են, հազիւ 15 հոգի։ Արտահանի գլխաւոր վաճառքներն են ցորեն, ընտաւներ, ոչխարի մոյ ապուխտ, փայտ, եւ այլն։ Հայկազնեայց պետութեան վերնալէն քիչ վերջ, քաղաքիս մօտ, Հայք եւ Վրացիք նիզակակցութեամբ Օսաց եւ Քաջաց եւ առաջնորդութեամբ Փառնաւազայ, յաղթեցին Աղէքսանդրի Ազոն կուսակալին եւ անոր հեծելազօրուն, եւ Մակեդոնացի Յունաց լուծը թօթափեցին։

Գուգարաց հին Արտահան գաւառի անունն այժմ սեփհականուած է համանուն շրջանակին առաջին միճակին, որոյ սահ-

մանքն են Հս.էն Էրուշէթ, Ամ.էն Շաւշէթ, Ար.էն Զախուրէթի և Ջաւախք։ Կուր գետը Կող գաւառէն գալով, կ'ընթանայ բոլոր վիճակիս մէջէն արեւմուտքէ դէպ ի հիւսիսային արեւելք, և դուրս կ'ելնէ Ախալքալաքի սահմաններէ, ընդունելով հիւսիսային կամ ձախ կողմէն բազմաթիւ գետակներ, յորս նշանաւոր է Էրուշէթի գետակն։ Երկիրն ընդհանրապէս տափարակ է. կազմութիւնն պլուտոնական է, շատ տեղեր կը տեսնուին կարմիր չեչաքարեր. արեւելակողմը Զախուրէթի սահմանները գտնուած հանի գաւառն ի հնումն նախ Վրաց ձեռքն էր, և ապա մերթ Հայոց և մերթ Վրաց. առնք մեր Արտաշէս Բ թագաւորին հաճութեամբ՝ առնելով, հարկատու եղան Հայոց։ Ռուսաց պատերազմէն առաջ խիստ բարգաւաճ էր վիճակս, բայց պատերազմի ժամանակ 1829ին ոտնակոխ եղաւ և շատ գիւղեր ամայացան. այժմեան գիւղերը գրեթէ բոլորն ալ այլազգաբնակ են։

ԱՐՏԱՄԵՏ կամ ԱՐՏԱՄԱՏ. — Ի հնումն պատմական և նշանաւոր քաղաք կամ աւան Վասպուրականի Տոսբ գաւառի մէջ,



165. Արտամետ։

խորաձորերը պորփիւրաքարէ են։ Լեռները սովորաբար ապառիկ են, և քիչերու վրայ կը տեսնուին նոճիներու և եղեւնեաց անտառներ։ Ձմրան երկարութեան և վիճակիս բարձր դրից պատճառաւ, դաշտաց բուսաբերութիւնը նուազ է. բայց բարեխառն կողմերն և մարգագետինք յուլթի և գալարաղուարճ են, յորս յաճախ կը տեսնուին կանդառներ, և գեղեցկագոյն ծաղիկներ. ինչպէս քաքուալ, երնջնակ, տերեփուկ, հրածաղիկ, շահոգրամ, նաւարատակ, եղնախոտ, և այլն։ Կուրի ճախճախուտ ափունքներն՝ պարարտ արօտք են անդէոց։ Արտավանայ հարաւային արեւմտակողմը, ծովակի արեւելեան եզերքը, և այժմ գրեթէ 500 տներէ բաղկացեալ գիւղ մ'է, յորոց 150ը Հայոց են և մնացածը Մահմէտականաց։ Կառուցուած է եռանկիւնաձեւ ապառաժ զառափի մը վրայ հրաշալի դիրքով և զմայլեցուցիչ տեսարաններով։ Արտաշէս Բ Արշակունին, իւր մանկութեան ժամանակ երբ հայրենի օրինաց նախանձախնդիր և քաջասիրտ Սմբատ իշխանի դաստիարակութեամբ, անհարազատ Երուանդ թագաւորի կատաղութենէն ի Պարսկաստան կը փախչէր, բուռական օր գիւղիս մօտ քարանձայ-

ներու մէջ պահուըտած մնաց, մինչև որ Երուանդայ խնդրակները ձեռնունայն ետ դարձան։ Եւ երբ Պարսից Դարեհ թագաւորի ձեռնտուութեամբ Արտաշէս կրկին իր հայրենի թագն ժառանգեց՝ բոլոր Հայաստանի միահեծան թագաւորելով, և Ալանաց պատերազմն ալ մեծ քաջութեամբ աւարտելէ և անոնց Սաթինիկ անուն չքնաղ օրիորդն հարս առնելէ վերջ, իր լայնածաւալ տէրութիւնը խաղաղացուցած, սկսաւ շինութեանց ձեռք զարնել, այս Արտամետու ծովահայեաց տեսարանով հրաշացած, որուն վիմամէջ այրերը իր փրկութեան ապաւէնն էին եղած, հրաման հանեց և բազմաթիւ աշխատաւորներով, ամենավայելուչ կերպով շինել տուաւ այս քաղաքը։ Թ. Արծրունին գեղեցիկ կերպով կը նկարագրէ Արտամետ, հետեւեալ տողերու մէջ. «...շինէ զքաղաքն ապարանս արքայանիստ աշնանայինս պայծառայարդս գեղեցկայարմար պարապատս ընդդէմ ծիծաղելով ծովուն ի հիւսիսի նայեցուածով, արեգակնային ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճեմականացն, յելս և ի մուտս ձկան իմն թռելով ի վերայ մկանաց ալեացն խաղալով, ընդդէմ նայեցածն ունելով զմեծ լեառնն Մասիք (Սիփան) կոչելով, բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ, իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական ալեօք զուարճացեալ ի մէջ ճոխ նախարարութեանց, առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ զաշտաձեւ ծովն. զատակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և զինեբեր որթովք և զանազան պտղովք. զշէնս պատրաստեալ, և շուրջ զամրոցաւն տնկախիտ բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. ոչ միայն ի տեսիլ խաղաման աչաց և ի զուարճումն հոտոտելեաց, այլ և ի կազմութիւն գեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն։ Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարագէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քարաք ամենայնից զհովիտն ամրացուցանելով։ Իսկ ի վերայ բլխեալ աղբերն, զարձեալ պարագէ զքարաբլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրապանիւք շինուածովք, և շէն մարգարիտ զքարաբլուրն յօրինէ պարըսպաւոր անկասկածելիս անմատչելի ձեռաց պատերազմողաց, հեշտալիր առ զգուշութիւն յօրինեալ՝ ի խորագոյնս ծովուն զպարիսպն յօրինեալ կազմէ։ Իսկ ի մէջ երեքարմատեան զոգաձեւ հովտին փոքու՝ որ յերից բլրոցն խոնարհի, շինէ աշտարակ բարձրաբերձ փարուածոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտուն զանձու պաշտպանութեան կարգն։ Կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառաց ամենայնիցս և բուռակառս։ Գտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէ աղբիւր սակաւարուղխ, որոյ ջրմուղս կազմեալ՝ ածեալ հասուցանէ ի մէջ հովտին։ Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց զաշտավայրին ի մուտս կոյս և առ եզերբ ծովուն պարապատս յօրինէ զգոյն, ընդ այգեստան անկախիտ պատրաստութեան ակնախիտս վայելչութեամբ։ Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին, և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց, կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն, ի վերայ պայծառայարդար պատրաստութեան շինուածոյն։ Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ զաշնանային եղանակն՝ յամարանոցն գեղադէշ ապարանս զարդարեալ բերդին։ Իսկ զանուն քաղաքին կոչեաց Արտամետ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի եկք, զի ըստ պարսիկ ձայնի Ամատ՝ եկք թարգմանի»...։

Այսպէս հիանալի կերպով նկարագրած քաղաքիս, այժմ ասա և անդ ցրուած կը գտնուին ոչ սակաւ տխուր մնացորդները։ Տներու շատերը կառուցուած են հին քաղաքի աւերակաց քարերով։ Թ. Արծրունին կը յիշէ նաև քրիստոնէութեան ժամանակ քաղաքիս եկեղեցին. «Գնաց անտի ժիրաք, և եկն եմուտ ի Վանտոսպ, և ի յանձին հրձիգ արար զմեծ եկեղեցին յաւանին Արտամետայ»։ Այժմ ևս Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ պարզ եկեղեցի մը և երկայարկ ու գեղեցիկ տեսարան ունեցող դըպրոց մը։ Հայոց բնակութիւնքն ամփոփ և իրարու վրայ սեղմուած են յիշեալ եանկին ապառաժին վրայ. իսկ Տաճկացը և-

գերբը կը գտնուին և ընդարձակ այգեստանեայց մէջ սփռուած են։ Տարւոյ չորս եղանակաց մէջ և մանաւանդ ամառը, անուանի Շամիրամայ պատուական ջուրը հարիւրաւոր ճիւղերու բաժնուած՝ այգիներու մէջէն և թուրք բնակութեանց իւրաքանչիւր թաղէն կարկաջասահ կ'ընթանան, և սաղարթագեղ ծառոց սքանչելի տեսարանին հետ միացած՝ մարդս կ'զմայլեցնեն։ Արտամետի մէջ հասարակաց ճանապարհի վրայ կը գտնուի այն աղբիւրն, որոյ մէջ Ս. Յակոբայ տօնին, անպարկեշտ աղջիկներ լուացուած ժամանակ՝ սրբոյն անէծքով սպիտակացան անոնց գլխոց մազերը։ Գիւղիս Հայ ժողովուրդը երկրագործ և միանգամայն այգեգործ է. իսկ մահմէտականք քիչ թուով երկրագործ են, կ'ապրին այգեաց պտուղներով։ Այգեաց մէջ հազիւ 2—3 հատ խաղողի են և մնացեալ 3—350 այգիները, բաց ի խաղողէն, ամէն տեսակ պտուղներ յառաջ կը բերեն, յորս նշանաւոր և համբաւուած է անուշահոտ խնձորն, որ պաղաբերած տարին թէ ծովով և թէ ցամաքով մեծ քանակութեամբ կը տանին վաճառելու ի Վան և ուրիշ կողմեր։ Վանի այգեստանի պտուղներէն զատ ունի նաև փաշեկի և մեճրապիկ կոչուած տարբեր տանձերն. կեռասն և բալն ևս առատ են, ինչպէս նաև ընկոյզն՝ որ նշանաւոր է հակիթի մեծութեամբն և բարակ կեղևովն։ Արտամետցի Հայոց մէջ, ժամանակ առ ժամանակ կը տեսնուին նշանաւոր տաղասացներ. տունք գուրկ չեն նաև վեհանձն ձիրքերէ։ 1870 թուականին կազմած են իրենց մէջ միութիւն մը՝ Արշակունեաց Ընկերութիւն, որոյ բուն նպատակն է գիւղացի աղքատաց նիւթապէս ապահովել։

Տեղւոյս նկարագիրն չաւարտած սրբավայրերու և հնութեանց վրայ ևս ակնարկ մը տանք։ Խանկին ապառաժին մէկ անկիւնն Բերդ կը կոչուի, որոյ վրայ յանուն Ս. Սարգիս զօրավարին շինուած կայ փոքրիկ մատուռ մը։ Երկրորդ անկիւնն կ'անուանեն Տէր Յուսկան որդւոյ պառէկ, ասոր վրայ ևս կառուցուած է փոքրիկ մատուռ մը։ Սա անշուշտ լինելու է ԺԳ դարուն ապրող Տէր Յուսկան՝ որդի Սահփանոս վարդապետի ուխտատեղին։ Այս մատրան շուրջը 2 քարընկէց հեռու տարածուած են Արտամետի հին ու նոր գերեզմանները, յորս կը գտնուին վիմագրի խաչքարինք. յիշատակարանք կը վերաբերին մինչև ԺԳ դարու, կան նաև հնագոյններ, որոնք անընթեռնլի դարձած են։ Երրորդ անկեան վրայ կը գտնուի այժմեան եկեղեցին, որ մութ է և ունի ցած ու նեղ պատուհաններ։ Եկեղեցիս տաճարաւոր է և շինութեան սոյն թուականն անծանօթ, սակայն շատ հին կը թուի։ Հին եկեղեցւոյն կից և շինութեամբ հազիւ 50 տարուան կայ ուրիշ եկեղեցի մը աւելի պարզ, և կիսաքաց, ուր ամառ եղանակի մէջ ժամասացութիւնք կը լինին։ Գիւղիս մէջ կան նաև հետևեալ սրբավայրերն, Ս. Շմաւոն, Ս. Թուխ մանուկ, Ս. Զօրք, Ս. Յակոբ, յորոց իւրաքանչիւրը անշուշտ ունեցած է իւր անցեալն։ Այգեստանի արևմտակողմը կը գտնուի Ս. Ստեփաննոս կիսաւեր եկեղեցին, որոյ քարաշէն պարսպաց հիւսիսային և արևելեան մասերն տակաւին կանգուն կը կենան։ Ըստ աւանդութեան. «Եկեղեցւոյս շէն եղած ժամանակ իւր մէջ պահուած է եղեր, Կիլիկիոյ Տարսոն քաղաքի Լևոն թագաւորի քեռորդի Վասիլ սպարապետի ժամանակը, հայկական ՋՃՀԴ (=1225) թուականին գրուած կէսս կէսս անուամբ աւետարան մը, որ երբեմն հրաշք գործած է»։ Աւետարանս կը պահուի այժմ Արտամետի մերձակայ Կանկու վանաց մէջ։ Այգեստանի մէջ կան նաև Պուտագ Պէկ, Կարմիր խաչ ուխտատեղիք և Ս. Թադէոս՝ որ ջղային հիւանդութեանց բուժիչ է։ — Արտամետի այգեստանի արևմտակողմը $^3/_4$ ժամ հեռաւորութեամբ կայ Կառեպանեց կոչուած գրեթէ ծովեզերեայ տեղ մը, ուր կը տեսնուին հին շէնքերու նախնական բեկորներ և աւերակներ։ Հոս փոքր անտառակի նման ծառոց մէջ կը գտնուի Ս. Յովհաննէս անուամբ ուրիշ ուխտատեղի մը։ Հռչակաւոր Շամիրամայ գետն կամ առուն ասկէ կ'անցնի սիգաճեմ։ Կառեպանցի մօտ Շամիրամայ առուի երկու եզերքը կան երկու մեծամեծ և տաշուած քարեր՝ քանդակուած բևեռաձև արձանագրութիւններով։ Տեղս

*քարընկէց մը հեռու կայ աՀագին լեռնակարկառ մը փորուած, զոր տեղացիք Թահմազու այր կանուանեն. քարէ զանալ մը կը մնայ մուրճով յատկապէս փորուած սենեակ մը, և ներսը մէջէ մէջ կան ուրիշ քարափոր սենեակներ: Այս արուեստական այրերու կամ սենեկաց համար կ'ըսեն, թէ Թահմազ Ղուլի խանին այս կողմերս աւերմանը և գերեալ արշաւած ժամանակ, բազմաթիւ խեղճ բնակչաց տեղի ապաւինի եղած են: — Սոտրզր. Հին Հայս. 187–190: Արծուշի Վասպուրական, 1859, էջ 13–18 և 39–43: Նկարագ. Ողուէոր. 229–240: Եւ այլն:*

ԱՐՏԱՆԴԱՆ ԴԱՇՏ. — *Բիւզանդ* (Ե. ԽԱ) *կը յիշէ այս անուամբ դաշտ մը. «Եւ էառ զկողմն մի զերկիրն Հայոց, և բանակեալ էր* յԱրտանդեան դաշտին»:

ԱՐՏԱՆԻՃ *կամ* ԱՐՏԱՆՈՒՃ. — *Գիւղ և գետակ Սիւնեաց Գեղարքունիք գաւառի Արեգունի վիճակի մէջ:*

ԱՐՏԱՆՈՒՋ *կամ* ԱՐՏԱՆՈՅՇ. Ռ. Арданучъ. — *Քաղաքաւան Գուգարաց Կղարջք գաւառի, և գլխաւոր տեղի այժմեան համանուն վիճակի: Կառուցուած է զառիվերի մը վրայ, որոյ արեւմտեան կողմը կը բարձրանայ աՀագին բարձրաբերձ ժայռ մը, և վրան կայ ընդարձակ տափարակ մը, որոյ տարածութեան տրամագիծը կը տեւէ գրեթէ քառորդ ժամ: Այդ բարձրատափի վրայ կը տեսնուին հսկայ պատերու, քառանկիւնի աշտարակներու, ամրաշէն աւազաններու, բանտերու, և այլ զանազան գետնափոր շինութեանց փլատակներ: Արտանուշ թէ և նշանաւոր է բնական անմատոյց դիրքովը, սակայն շրջապատուած է նաեւ բոլորակ և ամուր պարսպով մը: Ունի երկփեղկ բերդադուռ մը, որու բարաւորին վրայ կը նշմարուի եղծուած և անընթեռնլի արձանագրութիւն մը: Հիւսիսային կողմը զառիվայրին վրայ կան հին եկեղեցւոյ մը որմերը, մեծամեծ քառակուսի քարերով, որոց ամանց երկայնութիւնն է 10' և լայնքը 6', # զարմանք կ'ազդեն տեսողաց վրայ, թէ ինչպէս ճարտարութեամբ շինողներն՝ այդ բարձրու-*



166 · *Արտանուշ:*

 ԱՐՏԱՆՈՒՉ

*թեան վրայ հանած են վիմախարի քարերը։ Քաղաքաւանիս սոորատէն կը վազէ Ճորոխի օժանդակ Արտանուչի գետն՝ որոյ ափունքն գեղեցկապէս զարդարուած են վարդենիներով, ուռենիներով, փշատենիներով և այլ տեսակ ծառերով։ Գետոյն երկու կողմը՝ ահագին ժայռեր և բլուրներ կը բարձրանան, որոնք կարծել կու տան թէ գետն ատենօք շատ մեծ ըլլալով և ճիշդ ատոնց վրայէն հոսելով՝ զանոնք ողողեր և հեղահեղէ հարիւրաւոր կանգուն վար իջեր է։ Ասոր պարզ ապացոյցներ են ժայռերու կողմնակի երեսաց վրայ եղած անթիւ քարայրները, որոնց բերանին վրայ մարդկային ձեռօք շինուած ամուր պատեր և ցցուած գերաններ կը տեսնուին։ Տեղւոյս ժողովուրդք, աւանդութեամբ կը համարին, թէ այդ ծերպերու և այրերու մէջ թաղուած լինին հնագիտական թանկագին առարկաներ, բայց կը վախեն և չեն համարձակիր ներս մտնելու։ Ընդհանրապէս, Արտանուչ՝ իբրև հին բերդաքաղաք մը, ունի ոչ սակաւ հնութիւններ, թէ՛ մէջը և թէ շրջակայքը, որոնք քննութեան և ուսումնասիրութեան կը կարօտին։ — Արտանուչի հնաւուրց բերդը կը գտնուի բարձր քարաժայռի գագաթան վրայ՝ զոր այլազգիք Կէվերիք գալէսի կ'անուանեն, երկայնութիւնն է 400 ոտք և լայնութիւնը 120–130 ոտք։ Այս բերդը կ'ելլըցուի միայն մէկ նեղ և դըժուարագնացելի ճանապարհով՝ որ փորուած է ապառաժ լերան վրայ. մինչև կէսը կարելի է գրաստով երթալ, իսկ անկէ վեր ոտքով կ'երթըցուի։ Բերդին մէջ կան հին ջրամբար և շինութեանց աւերակներ. յիշատակաց արժանի է փոքր քարաշէն եկեղեցի մը. այժմեան աւերակներէն և մնացորդներէն կ'երևի, թէ ժամանակաւ խիստ ամուր և հոյակապ է եղեր բերդս։ Վախուշտ՝ ասոր կառուցանողն կը համարի Վրաց Վախտանգ Գուրգասլան կոչուած թագաւորն, Ե դարու վերջերը։ Մրաւան արաբացի զօրավարը Էրդ դարու մէջ Արտանուչը աւերեց, իսկ Աշոտ Կիւրապաղատը վերստին շինեց, և ինքն անոր մէջ նստաւ և մեռաւ։ Կոստանդին Պերփերուժեն քաղաքս կը յիշէ Ժ դարու կիսուն և կը գրէ Բերդ Ատրանոյչ* (Καστρος 'Αδρανουτζίον), *նոյնը կ'անուանէ նաև լայնախորամ և ամուր քաղաք և շահաստան Վրաց, Հայոց, Աբխազաց և Ասորւոց վաճառքներու։ Արտանուչի առաջին շինութիւնն և հիմնարկութիւնն, ըստ մեզ, աւելի հնագոյն կը թուի քան զՎախտանգ, և հաւանօրէն շինուած է ի Հայոց։ Քաղաքիս անունն՝ ըստ ոմանց կը թուի, աղաւաղութիւն Արտաւնոյշ կամ աւելի ճիշդ Վարդանոյշ անուան, որ մեր մէջ իգական անուն է։*

*Արտանուչի բնակչաց թիւն այժմ կը հասնի 1000ի, յորոց 960ը են Հայ կաթոլիկեայք, և մնացածը՝ 1828ի պատերազմի ժամանակ Ախալցխայէն գաղթող թուրքեր են։ Հայք ունին քարաշէն եկեղեցի մը Ս. Ստեփանոս՝ կառուցուած 1836ին. և վարժարան մը։ Բնակչաց մեծագոյն մասն վաճառականութեամբ կ'ապրին. դերձակք, կօշկակարք, զարբինք, ներկարարք, նպարավաճառք և այլ արհեստաւորք բոլոր Հայերն են, ոչ միայն քաղաքաւանիս մէջ, այլ և ամբողջ վիճակի մէջ։ Արտանուչի վիճակն ունի 51 գիւղ, յորոց միայն երկուքը, Նորաշէն (Եէնի–րաբաթ) և Տանձոտ հայաբնակ են։ Երկրի բարեբերութիւնը բաւական նշանաւոր է։ Քաղաքաւանն գտնուելով քարախիտ տեղ մը՝ կլիման այնչափ առողջարար չէ. ձմեռն կը տիրէ սաստիկ բեւեռային ցուրտ, և ամառն հասարակածի ջերմութիւն։ Գլխաւոր բերքերն են ցորեն, գարի, կորեակ, եգիպտացորեն, ընտիր ծխախոտ, բանջարանոցի ամէն տեսակ բոյսեր և բազմազգի պտուղներ։ Բայց ամենէն աւելի անուանի արդիւնաբերութիւնն է ամենապատուական գինի և օղի։ Այս կողմերը մասնաւոր խնամք կը տարուի նաև որթոց և թթենեաց, և եթէ գինեգործութեան արուեստն ևս լաւ գիտնային, կրնային ըսել, որ Արտանուչի գինին կրնայ մրցիլ աշխարհի ամենէն ընտիր գինիներու հետ։ Բաց ի վերոյիշեալներէն Արտանուչի վաճառականութեան գլխաւոր նիւթերն են նաև ընտիր ընկուզի կոճղ, երկանաքար, կտաւատ, բուրդ, եզի, կովի, այծի, ուլի, գայլի, աղուէսի, խոզի և զամշու մորթ։ Այս նիւթերէն կը ղրկուին Արդուին, Պաթում, Տրապիզոն, Կ. Պօլիս, Կարս, Կեօլա և փենէք քաղաքներն. մորթերն կ'ուղարկուին*

նաև մինչև Մարսիլիա և Փարիզ։ Արտանուշ ներմուծուած նիւթերն են կաւեղէն, մետաքսեղէն, չուխայ, ապակեղէն, զարդիներ, շաքար, սուրճ, բրինձ, բամբակ և այլն։ Տեղական արուեստներու մէջ նշանաւոր են մեծաւ մասամբ հայկական իգական սեռի ձեռագործները։ Հոս կը գործեն ազնիւ և փափուկ գենջակներ՝ մետաքսէ և բամբակէ,



167 · Գերմանիկոս։

ընտիր և գինացկուն կերպաս մը՝ ռանոզա կոչուած, նուրբ անձեռոցներ, մետաքսեղէն այլ և այլ գործուածներ, մազեղէն կապերտներ, և այլն։ — Մշակ, Փ. 136։

ԱՐՏԱՇԱՏ. Գղ. ARDACHAD. Լտ. Artaxata. Յն. Ἀρτάξατα կամ Ἀρταξιάσατα. — Հռչակաւոր և հին արքայանիստ մայրաքաղաք Հայաստանի, Այրարատայ Ոստան գաւառի մէջ։ Արտաքին և ընիկ պատմիչներն երկու Արտաշէս կը յիշեն որ այս քաղաքիս շինողն եղած լինին։ Մէկն է, ըստ արտաքնոց, Արտաշիսս հայկազն իշխանը որ մեծին Անտիոքոսի Ասորւոց թագաւորին կողմանէ, Արշակունեաց թագաւորութենէն առաջ, Հայաստանի մէկ մասին վրայ կուսակալ դրուած էր, որ և կը թուի, թէ յետոյ ապստամբելով Սելեւկիացիներէն առանձին կ'իշխէր։ Նոյն ժամանակները, Կարքեդոնացի հռչակաւոր զօրավարն Աննիբաղ, Անտիոքոսի Հռովմայեցիներէն յաղթուելէն յետոյ ուրիշ ասիացի թագաւորաց արքունիքները գեղերելէ վերջ, եկաւ Արտաշիսի մօտ, և իրեն շատ օգտակար խորհուրդներ տուաւ։ Կ'ըսեն, թէ Աննիբաղ գեղեցիկ և բարեբեր տեղւոյ մը վրայ, որ անմիջակ թողուած էր քաղաքի մը յատակաձևը գծեց, և զԱրտաշիսս նոյն տեղը տանելով, ցուցուց և յորդորեց որ նոյն յատակագծին վրայ քաղաք մը կառուցանէ։ Սա խնդրեց Աննիբաղէն՝ որ ինքը



168 ։ Դրամ Գերմանիկոսի և Արտաշիսայ։

այդ շինուածքին գլուխ կենայ։ Քիչ ժամանակի մէջ շինուեցաւ հոն Հայաստանի ընդարձակ և հոյակապ մայրաքաղաքը, որ Արտաշիսի անունով կոչուեցաւ Արտաշատ։ Ստրաբոն Արտաշատ քաղաքը ամրաշէն կ'անուանէ, շինուած այն կտոր տեղւոյն վրայ, որ երեք կողմէ Երասխ և Մեծամօր գետերով շրջապատուած էր. միայն չորրորդ կողմն կրնար մատչելի լինել, այն ալ ամրացուցին խրամատով և թմբերով։ — Նախ արտաքին մատենագրաց յիշած Արտաշատին հետ ծանօթանանք, և ապա սկսինք նկարագրել մեր Արտաշէս Բ. թագաւորին կառուցած քաղաքն։ Տիգրանայ պատերազմաց ժամանակ, Լուկուլլոս՝ Տիգրանակերտի առնելէն վերջ, կը փափաքէր առնել նաև Արտաշատի, և կը յորդորէր իր զօրքերը նուաճել զայն։ Իսկ Տիգրան մէջը ապահովելով կանայքը և մանկունքը, աճապարեց արգելուլ թշնա-

# ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ




1. Դղեակն կամ Միջնաբերդը. — 2. Արտաշատ գիւղը. — 3. Միջնաբերդի դուռը. — 4. Եկեղեցի. — 5. Բնակարանաց աւերակներ. — 6. Գերեզմանական կարկառներ. — 7. Մեծամօրի գետը. — 8. Հին խրամ և հիւսիսային դուռը. — 9. Բրնձնոց. — 10. Ագուգայք. — 11. Արեւելեան դուռը. — 12. Պարտէզք. — 13. Երասխայ ցամքած հունը:

միայն գալուստը ։ Անմատոյց և անառիկ մնաց Արտաշատ նաև Լուկուլլոսի յաջորդաց . Հռոմայ հռչակաւոր զօրավարները Պոմպէոս, Կրասոս և Անտոնիոս՝ որք Հայաստան արշաւեցին, բայց Արտաշատի երեսը չտեսան ։ Օգոստոս կայսեր ժամանակ, երբ Հայաստան ևս Հռոմայեցւոց մարզ եղաւ, կայսերական տոհմէն Գերմանիկոս (Թ. 167) ղրկուեցաւ ի Հայս, որ Արտաշատ գալով Հայոց թագաւոր պսակեց Պոնտոսի Պողեմոն թագաւորին Զենոն որդին, և նորընտիր թագաւորը քաղաքիս անուամբ Արտաշէս կամ Արտաշիաս կոչուեցաւ ։ Այս



169 · Դոմիտիոս Կորբուլոն ։

յաջող գործին համար, Հռոմայ մէջ Գերմանիկոսի յաղթական կամարներ կանգնեցան, և յատուկ դրամներ շինուեցան իրեն և թագաւորին անուամբ (Թ. 168) ։ Արտաշիասէն վերջը, երբ Պարթևաց Արտաւան թագաւորը իր Արշակ որդին Հայոց վրայ թագաւորեցուց՝ Հռոմայեցիք անոր դէմ հանեցին Վրաց Փարսման թագաւորի Միհրդատ եղբայրը, և եկան Արշակայ դաւաճան սպասաւորաց մատնութեամբ Արտաշատի տիրեցին, փրկչական 35 թուականին ։ Երբոր Միհրդատ սպանուեցաւ (51 թուին) Գառնոյ սահմանները, դաւաճանութեամբ իւր Հռադամիզդ եղբօրորդւոյն, Պարթևները Հայոց հաւանութեամբ մտան քաղաքս և Հռադամիզդը վռնտուեցաւ . բայց Պարթևաց հեռանալովը դարձեալ եկաւ, և երկրորդ անգամ հալածուեցաւ Հայերէն ։ փախչելու տագնապի ժամանակ՝ ողբերգական ծանօթ դէպքն կատարուեցաւ . որով զարկաւ իր Զենոբիա կինը՝ որ թշնամեաց ձեռքը չիյնայ, որ և յԵրասխ նետուելով, ազատուեցաւ հովուաց ձեռքով թէ ջրէն և թէ մահէն ։ Նոյն ատենները Վաղարշ Պարթև Հայոց թագաւոր դրաւ իր Տիրիթ կամ Տրդատ եղբայրը, որուն դէմ Հռոմայեցիք ղրկեցին իրենց ճարտար Դոմիտիոս Կորբուլոն (Թ. 169) զօրավարը, որ մի քանի բերդերու տիրելէ վերջ եկաւ Արտաշատայ վրայ ։ Տակիտոսի Տարեգրութեանց (ԺԳ . Խ) մէջ նկարագրուած է այս պատերազմն, որ վերջացած է բնակչաց անձնատուր լինելովը, և Արտաշատի այրուելովը և հիմնայատակ կործանելովը . բայց հիմնայատակ կործանուիլն մի քիչ չափազանցութիւն կը թուի ։ Յետոյ Ներոնի հաւանութեամբ և օգնութեամբ՝ հրկիզուած Արտաշատը վերանորոգեցաւ Տիրիթէն, և այս պատճառաւ առժամանակ մի կոչուեցաւ Ներոնիա ։ Այսչափ առժամն ծանօթ է մեզ արտաքին մատենագրաց Արտաշատի վրայ գրածներէն, դառնանք այժմ մեր պատմիչներուն ։

Արտաշատ քաղաքի երկրորդ շինողն է, ըստ պատմութեան Մովսէսի Խորենացւոյ (Բ. ԽԹ), Արտաշէս Բ Հայոց թագաւորը ։ Այս իշխանը մանկութենէ ի վեր Երուանդայ երկիւղէն արտասահման եղած, շատ աշխատանքով ու վտանգներով թագաւորութիւնը ձեռք ձգելէ վերջը, եկաւ իր հայրենատուր գաւառները պտըտելու, և երթալով այն տեղը, կ՚ըսէ պատմիչը, « .... ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն, շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ ։ Զեհնաւ լինի նմա և Երասխ փայտիւք մայրից . վասն որոյ անաշխատ և երագ շինեալ ... » ։ Քաղաքին չորս կողմը պարսպեց կրկնապարիսպ որմերով, պարարլուրին չորս կողմն ալ երկու կարգ պարսպով պատեց, և պարսպէն դուրս խոր խրամ բանալով բլուրը ամէն կողմէ ան-

կանգնելի բրաւ։ Այսպիսի ամրութեամբ պաշտպանուած բլրան ծայրը շինեց ամրոց, ուր իր յատուկ արքունիքը և գանձը շտեմարանեց։ Բլրան ստորոտ վրայ շինեց հոյակապ մեհեաններ իր հայրենի կուռքերուն համար. փոխադրեց հոն նաև հին Պարթևաց անդրիները՝ որ Վաղարշակ կանգներ էր Արմաւիրի մէջ ի պատիւ նոցա։ Իսկ Հայոց աշխարհի խնամակալ, երկրին բեղմնաւորիչ ու ծննդոց արգասաւորիչ Արտեմեայ աստուածուհւոյն համար շինեց տաճար, ու անոր անդրին Բագարանէն հոն փոխադրեց։ Բայց Ապողոնի մեհեանն ու արձանը կանգնեց մեծ ճամբուն վրայ, ուսկից որ քաղաք կը մտցուէր ու կ՚ելլուէր, որ պահպանողական աչքը ընդլայնած՝ իր հովանաւորութեան տակ կը պատսպարէր Թորգոմեան տոհմի բազդաւորեալ սերունդը։ Անոնցմէ զատ որչափ յաղթական սիւներ, կոթողներ, շիրիմներ, անդրիներ որ գտաւ Երուանդայ քաղաքին մէջ, Արմաւիրէն հոն տարած, ամէնը բերաւ Արտաշատ, և անոնցմէ շատ աւելի ալ իր կողմանէ աւելցնելով, բրաւ իբր ակրոպոլիս մը զարմանալի տեսքով և շքեղութեամբ։ Արդ այս այն Արտաշատն է, որուն ոսկեկամար դրանդիներուն տակը ոսկի փոշի տեղաց Արտաշէսի գլխոյն, որուն լուսահայեաց հովանոցին տակը տեղ մարգարիտ տեղաց Սաթինկայ գլխոյն։ Այս այն Արտաշատն է որուն դահլիճէն առաջին խրախոյս ու մրցանակ ելաւ աշխարհաշինութեան, բազմամարդելոյ, ուսումնասիրութեան, ճարտարութեան, երկրագործութեան և ընդ ծով ու ցամաք վաճառաշահելոյ։

Արտաշատ այլ և այլ կամուրջներ ունէր Երասխայ ու Մեծամօրի վրայ։ Մեծամօրի կամուրջը՝ յետոյ Վաղարշապատի կամուրջ անուանեցաւ, այսինքն այն որ ի Վաղարշապատ կը տանէր. իսկ միւսը յիշատակաց արժանի՝ կը կոչուէր Տափերական, որ կէս մղոնի չափ քաղաքէն հեռու էր։ Այս Տափերականը անուանի եղաւ նենգաւոր Անակով, երբ իր եղեռնաւոր ձեռքը խոռովային արեան թաթխելով ինք զինքը յԵրասխ նետեց արդար վրէժխնդրութենէն ազատելու համար։ Արտաշէսի որդին Արտաւազդ, խաւարչուտ մահուան խորխորատը հոսելէն առաջ, վերջին անգամ՝ անցաւ այս կամուրջէն։ Ուրիշ ոչ սակաւ յաղթական և տխրական դէպքերու հանդիպած է կամուրջս երկար ժամանակ։

Արտաշատ քաղաքը արքայանիստ եղաւ շինող Արտաշէսով և նոյն պատւոյն մէջ մնաց մինչև Տրդատայ Խոսրով որդին, գրեթէ 259 տարուան չափ ժամանակ։ Թէև Վաղարշապատ քիչ մը ժամանակ անոր թագաւորական աթոռը յափշտակեց, բայց ոչ երբէք կրցաւ ճոխութիւնն և փառքը վերցընել։ Այս մեծ քաղաքը քանի գնաց ընդարձակեցաւ, բազմամարդեցաւ, և խոսրովեան անտառներով արքայավայել ու զուարճալի դաստակերտ մը դարձաւ, ուր Արշակունեաց փառքը կը ցոլանար։

Մեր նկարագրած Արտաշատէն վեց մղոն դէպ ի հարաւ կ՚ինկնայ հռչակաւոր Խոր Վիրապը, ուր նետուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ որուն ձեռքով Քրիստոնեական կրօնից ճշմարտութեան սուրբ նշոյլը ծագեցաւ Տրդատ թագաւորին սիրտը, որ վառուած ու գրահուած «... խաղայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթեալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն անահտական դիցն». Ագաթանգ. ԾԲ։ Աստուածները կործան և պաշտօնատէր անձինք քաղաքէն հեռացան։ Նոյն ժամանակները թէպէտև Վաղարշապատի մէջ հիմնուեցաւ Հայոց մայր եկեղեցին, ուր էր նաև քահանայապետական աթոռ, բայց նշանաւոր և մեծ էր նաև Արտաշատի եկեղեցին։

Արտաշատ մեծ կորստեան ենթակայ եղաւ Պապ թագաւորի ատենը, Քրիստոսի 382 թուականին։ Բուզանդ (Դ. ԾԵ) մանրամասն կը նկարագրէ, ըսելով Շապհոյ զօրքերուն համար. թէ «Եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին և անտի զգանձս մթերեալս որ կային, և գերեցին զամենայն քաղաքն. և խաղացուցին ի յԱրտաշատ քաղաքէ ինն հազար տուն երդ Հրէայս, զոր ածեալ էր Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացւոց, և քառասուն հազար տուն երդ Հայ, (գրեթէ ամբողջ 500000 հոգի) զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին. և զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին՝ զփայտակերան և զքարակերան.

քանդեցին զպարիսպն ըստ ոմին օրինակի, և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմանս ապականեցին. և ոչ թողին քնաւ քար ի քարի վերայ, անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին»: Բուզանդայ այս նկարագիրն քիչ մը չափազանց կը թուի, վասն զի եթէ Արտաշատը բոլորովին հիմնայատակ կործանուած լինէր, այնչափ խուռն յաջորդող հարուածներու և նեղութեանց մէջ, չէին կարող Հայք վերականգնել զայն, և չէր կարող այնպէս շէն լինել, ինչպէս որ Վարդանայ և Վահանայ օրերը կը ցուցնեն մեր պատմիչները: Արտաշատու մէջ 449ին Յովսէփ կաթողիկոսը եկեղեցական մեծ ժողով գումարեց տասնեւհօթը եպիսկոպոսներով և բազմաթիւ եկեղեցականներով, Յազկերտ Բ Պարսից թագաւորին՝ Հայերը մոգութեան կրօնը դարձրնելու գրած հրաւիրանաց թղթին պատասխան գրելու համար:

Հինգերորդ դարու վերջերը սկսեր է Արտաշատ իր պայծառութենէն ինկնալ տեղի տալով Դուինայ. բայց դեռ այժմեան աւերականերուն վրայ չխօսած, ակնարկ մը տանք այս մեծ մայրաքաղաքին վաճառականութեան: Ինչպէս որ շքեղութեան, քաղաքական և կրօնական պաշտամանց առաջին հանգիստարանն էր բոլոր Հայաստանի մէջ, նոյնպէս էր նաև շահու և բազմաւաճ վաճառականութեան առաջին կեդրոն: Հռոմայ կայսրները Ե դարու սկիզբը (410ին) երբ իրենց սեփհականուեցաւ Հայոց մէկ մասը, Մծբնայ հետ՝ զԱրտաշատ կը յիշեն իբրև արեւելեան մեծ շահաստան, և կը վճռեն որ վաճառականութեան համար անկէց անդին չանցնին և Պարսից հետ տուրեւառ չընեն:

Մեծ քաղաքիս գէթ անուան յիշատակը, շատ դարեր վերջ կը լսուի տեղ տեղ. ինչպէս Յովհ. կաթողիկոս, յիշելով Ը դարու վերջերը, Խուզիմա ոստիկանի կաթողիկոսարանին կալուածները և դաստակերտները յափշտակելը, անոնց հետ կը դնէ նաև Արտաշատ. իսկ Թ. Արծրունին յաջորդ դարուն վերջերն, Դուինայ ժամը նշանակած ատեն, կ'ըսէ «հանդէպ քաղաքին Արտաշատու»: Թէ ե՞րբ բոլորովին աւերեցաւ և ամայացաւ Արտաշատ, ոչ ոք կը յիշէ, սակայն կը կարծուի որ կամ Թաթարաց աշխարհաւեր արշաւանքներէն և կամ Անւոյ նման մեծ և սաստիկ երկրաշարժէ մը կործանուեր է: Այլևայլ եւրոպացի հետախոյզ ճանապարհորդներ, Թաւեռնիէ, Շարտէն Մորիէ, Տիւպուա, և այլք, այցելած են աղետաւոր քաղաքիս աւերակներուն: Մեր ներկայացուցած յատակագիծը Տիւպուայի ուղեւորութեան գրքէն առնուած է: Գիտնական և հայասէր ճանապարհորդը հետեւեալ կերպով կը գրէ. «Վաղեցի դէպ ի աւերակները, աչքերս յառեցան անոնց ընդարձակութեամբը. վասն զի մեծութեան ու կործանման կողմանէ սոր նմանը տեսած չէի: Հայոց այս հին մայրաքաղաքը Մեծամօրին յԵրասխ մտած բերնին վրայ էր. այժմ զԵրասխ պատուարին չորս գին սլացած չանցնելով, ըսին ոմանք թէ այս ընդարձակ աւերակը չի կրնար Արտաշատինը ըլլալ, տանց անգամ մը տարակուսելու թէ Երասխ կրնայ նաև տեղը փոխած ըլլալ, ինչպէս իրօք ալ անանկ է: Վասն զի այս անհաստատ գետը յոգնած ամայի պարիսպներ թրջելէն, իր ընթացը ալիքները տարուէ հարիւր վերստի չափ դէպ ի հարաւ: Այս գետին համար չկայ անանկ դիւրին բան, ինչպէս իր նիստք կամ անկողինք տեղափոխել սեղանի պէս շիտակ դաշտավայրի վրայ, որ իր ջրերէն քիչ բարձր է և այլ և այլ խրամներով ու ակօսներով կտրատած, որ Երասխին սղոցած պահուն կրնան ջրերը մէկ կամ միւս կողմը խոտորիլ»:

Այս ընդարձակ աւերակը այն կողմը գըտնուած աւերակներուն մէջ հնագոյնն է: Հիւսիսային արեւելեան կողմը գրեթէ հարիւր ոտնաչափ բարձր հողաբլրակ մը կայ, որուն վրայ էր աղեղնաձև գիծով միջնաբերդը, աղեղը դէպ ի քաղաք դարձած և լարը յԵրասխ: Բլրին ոտքը երկու կարգ շրջապարիսպով պատած է, որ ներսի պատուարէն չափելով 1350 քայլ է: Այս պարիսպներն ու պատնէշները շինուած են մեծամեծ հողի աղիւսներով, որոց նմանը կը տեսնուի Ասորեստանի հնագոյն քաղաքաց աւերակներու մէջ: Պարիսպները շիտակ չեն, այլ տեղ տեղ կիսաբոլոր մարտկոցներ ունէին յիսնական ոտք իրարմէ հեռու: Մէկ պարիսպը միւսէն յիսուն ոտք հեռու է, և անոր դա-

*պաշտական, մարտկոցներն ալ առաջիններուն համապատասխան. միայն արտաքին պարըսպի բարձրութիւնը ներքինէն 15 ոտքի չափ ցած էր։ Արտաքին պարսպէն դուրս խիստ լայն խրամ մը կար, որուն խորութիւնը չենք կրնար գուշակել, որովհետև այժմ լեցուած ու մշակուած գետին է, մէկ մասն ալ բրընձնոց։ Միջնաբերդին մէջ անդր բլրակի մը ծայրը կը նշմարուի տակաւին թագաւորի ապարանքի աղիւսակերտ հիմը։ Շարտէնի յիշատակած թագաւորական պալատը որ երեսուն և վեց ահեղ ու սեաւ սիւներու վրայ կեցած է եղեր, ըլլայ թերեւս վերոյիշեալ ապարանքը։ Թաւեռնիէի ժամանակ ևս այս աւերակներու մէջ կը տեսնուին եղեր մեծ ապարանքի մը մնացուածք, բայց այժմ ամենայն ինչ փշրած ոչնչացած է։*

*Քաղաքիս շրջանակն ալ միջնաբերդի նման երկու կարգ պարսպով պատած է, բոլորաշէն մարտկոցներով, որք շինուած էին աղիւսով և խրամէն հանած կաւով։ Այս պարըսպին շրջապատը 7000 քայլ հաշուած են։ Այժմ այս մեծ քաղաքատեղւոյս վրայ ուրիշ հին շինուածոց մնացորդ չեն տեսնուիր, բայց եթէ քանի մը պատերու հիմունք և փոքրիկ եկեղեցւոյ մը աւերակ։ Քաղաքի կեդրոնին մօտ պատնէշներու հարաւային կողմը գտայ, կ'ըսէ Տիւպուա, տասը տասներկու հատ գերեզմանական կարկառներ, ձեւացած միայն հողէ անօթներու բեկորներով ու այրած ոսկերաց մնացորդով, որոց ամէն մէկը 15–20 ոտք բարձրութիւն ունին։ Քաղաքին լաւագոյն թաղը կ'երեւայ թէ այս կարկառներու և միջնաբերդին մէջտեղ կ'ինկնար։ Իսկ հարաւային կողմը պարտէզներ էին, որ Երասխին վրայ կը նայէին։*

*Գրեթէ 140 տուն հայ բնակիչք՝ որոնց թիւը 1400ի կը հասնի, կը բնակին այժմ հին Արտաշատի հիւսիսային ծայրի պատուարին ու միջնաբերդին մէջ։ Ասոնք մեծաւ մասամբ գաղթած են Սալմաստի կողմերէն, և իրենց այժմեան ձեւացուցած գիւղն ծանօթ է* Արտաշատ *կամ* Արտաշիր *անուամբ։ Աւերակաց մէջ կան նաև երկու առանձնակ քրդաբնակ թաղեր, որք կը կոչուին նոյնպէս Արտաշատ։ — Ստորագր. հին Հայ. 485–497։ Բազմավէպ, ԺԶ. 46–51։ Այրարատ, 395–404։ Հիւսուածք, Գ. 82–85։ Եւ այլն։*

ԱՐՏԱՇԱՐ. — *Գիւղ Այրարատայ Արագածոտն (Սարդարապատ) գաւառի մէջ, 50 տուն բնակչօք։*

ԱՐՏԱՇԱՒ. — *Գիւղ Արցախու Վայկունիք (Ջանգեզուր) գաւառի մէջ, 250 քուրդ բնակչօք։ Մօտը կայ համանուն սար մը։*

ԱՐՏԱՇԷՆ. *Տես* ՀԱԲԱՆԴ։

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ԱՒԱՆ. — *Թ. Արծրունին (Գ. ԺԷ) կը յիշէ անունս ըսելով. «Աշտ վերջանաւ եկն բանակեցաւ յԱրտաշէսեան աւանի»։*

ԱՐՏԱՇԻՆ. — *Հայանուն աւան Ճանիկու, Սեաւ ծովու հարաւ արեւմտեան եզերքը։ Պ. Մուշեղ Արծինեան, ճանապարհորդելով այս կողմերը, իբր թէ գտած է հայկական շինութիւններ և արձանագրութիւններ ԺԳ դարու վերաբերեալ. որոնց վրայ նկարագրութիւն մը հրատարակուեցաւ 1847 տարւոյ Հայաստան լրագրի 49 թուոյն մէջ. սակայն նոյն լրագրոյն 53 թուոյն մէջ ալ հրատարակուեցաւ այս նկարագրութեան ի հիմանց սուտ լինելը։*

ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ԳԱՒԱՌ. — *Վասպուրականի հին գաւառներէն մին, Պարսկահայոց սահմանաց մօտ։*

ԱՐՏԱՇԻՐ. *Տես* ԱՐՏԱՇԱՏ։

ԱՐՏԱ-ՁԱՅ. *Տես* ԳԵՏԻԿ։

ԱՐՏԱՍԱՄՈՒՂ. — *Ա՛յլ կերպ գրուած անուն Արտասամուղի։*

ԱՐՏԱՎԷԶ. — *Սակաւաբնակ գիւղ Հայոց, Վանայ շրջակայքը։*

ԱՐՏԱՍՈՒՊԱՆ. — *Գիւղ Վրահայաստանի հին Մանգլեացփոր (Տփղիս) գաւառի մէջ. Էնակէթ գիւղէն հեռու է 2 վերստ։ Բնակիչք են 25 տուն Հայք՝ որ գաղթած են Ղարադաղէն, կը հասնին հայերէն և մեծ մասը կը խօսին. ունին փոքրիկ քարաշէն եկեղեցի մը։*

ԱՐՏԱՐԱՍ. *Տես* ՎԱՅՈՑ ՁՈՐ։

ԱՐՏԱԽԱԶ. — *Ըստ հին պատմագրաց այս անունով քաղաք մը կար Այրարատայ Կոգովիտ գաւառին մէջ, Մասիս լերան մօտ, ուսկից էր, կ'ըսեն, Լէնկթիմուր։*

ԱՐՏԱԽԱԶԴԱՑ ԱՊԱՐԱՆՔ. — *Այս անունով ամայի վանք կամ անապատ մը կայ Այ-*